483 r
367

2004

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԼԵՐՈՅՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍԱՑ

ՑԵՂԱՎԱԳԻ

ՀԱՏՈՐ Գ.

9(38)

Printed in Turkey

1062 ԱԲ
3Ա5-Ա2

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԵՐՈՅՆ ԱՆԱՓՈՒՐՍԵԱՅ

ՅԵԼՔԱՊԱ

ԳՐՆԱԼ ԴԻՄԱԿՈՒԹԵԱՄԲ

Ի Յ. Յ. ՊԱՐԹԵԼՅԱՆԱՅ

ԵՒ ԹԵՐԳՄԱՆԵԱԼ

Ի Հ. ԵԴՈՒԱՐԴԱՅ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

9059-57
1062

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1845. ՌՄՂԴ

ՊԵՏ. ՀԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՊՈՒՇԿԻՆԻ ՕՐԵ
Ի ՀՈՒՍ-ՍՍՐ
Ա. ՄԱՍՏՈՑԻ
ԱՆՎԱՆ

Ист. мф.

9023-27

Printed in Turkey

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԼԵՐՈՅՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏԱՅ

ՅԵՂԼԸԴԸ

ԳԼՈՒԽ ԽԹ.

Չկրծիլ և զսծիլն սպարտացւոց։

ԿՐՕՆՔ 'ի Սպարտա ազգեն երկիւղած մեծարանս և անբարբառ լռութիւն. ոչ խնդիրս գնոցանէ օրէն է առնել, և ոչ յերկբայս անկանել. այլ պաշտել զդիս և մեծարել զդիւցազունս ըստ պարտական դէնին են պարտք։

Ի դիւցազունս, որոց նոքա կանգնեցին մեհեանս և բազինս կամ պատկերս, երևելիք են Հերակղէս, Կաստորը, Պոլիտեւկիս, Աքիլլէս, Ողիսեւս, Լիկուրգոս, և այլք ոմանք։ Օարմանք թուին որոց անտեղեակքն են աւանդութեանց ազգաց՝ տեսանել անդ զՀեղինէ փառա-

տորակից ընդ Մենեղաւէայ աստուածօրէն պաշտեալ[1], և զպատկեր Կլեոպատրեայ առ դրօշելովն Գամալիէլեանի կանգնեալ[2]։

Անարհաւատք են յոյժ սպարտացիք. ցնորս ինն շուրջ զգերեզմանաւ ուրեք տեսեալ ուրումն 'ի նոցանէ գիշերայն, և նիզակ 'ի վեր առեալ զհետ նորա աղաղակեր. Օ ուր ջանաս, միւսանգամ հարկ է քեզ մեռանել[3]։ Բաւական քան զբուրմն պարէտք յաձախեն գնաներարհաւատ պաշտամունս. անցուցանեն երբեմն զգիշերն ողջոյն 'ի Պասիփայեայ մեհենին, և 'ի վաղիւ անդր զամենայն անուրջս իւրեանց պատմեն իբրև զտեսիլս[4]։

Լիկուրգեայ ոչ կարելով իշխել կրօնական կարծեաց, խափանեաց զձախողակի արդասիս նոցա։ Եւ ուրեք այլ ուր օրէն է յանդիմանն լինել դից առանց զոհից ընտրելոց, և մերթ եւս առանց մեծաշուք սպասուց. իսկ 'ի Սպարտա մերթի զոյգն ինչ նուիրօք, հանդերձ սարկեշտութեամբ՝ որ վայելէ աղօթականին[5]։ Բայց ուր ժիտը և դատարկախոսքը յոգնաթախանձ բազմաբանութիւնք պարտասեցուցանեն զդիս. իսկ 'ի Սպարտա ոչ

[1] Եբոդոտ. գիրք Զ. գլ. 61։ Խակր. Նէրբ. 'ի Հեղինէ, հտ. 2. էջ 144։ Պաւսան. գիրք Գ. գլ. 15. էջ 244։

[2] Պաւսան. անդ. գլ. 19. էջ 258։

[3] Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 236։

[4] Նօրն յԱգիս, հտ. 1. էջ 307։ Պիկեր. յոյ. ըստ. գիրք Ա. գլ. 43. հտ. 3. էջ 36։

[5] Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 52։

այլ ինչ որ խնդրէ՝ ի նոցանէ, բայց զօրութիւն գործելոյ արութիւնս յետ գործելոյ զբարիս[1]. և է աղօթիցն ծայրայանգ այս, յորոյ՝ ի խորս խնամոտիցն քաջ խելամուտ լինին՝ որ խրոխտա-գոյնքն են բնաւորեալք. Ցուր մեզ, ասէ, զօ-րութիւն համբերելոյ անիրաւութեան[2]։ Ցե-սիլ մեռելոյ ոչ ինչ արհաւիրս ածէ անդ որպէս առ աղգս մերձաւորս. ոչ աւելի քան զմեռանան աւուրս տեւէ անդ սուգ[3]. զի եթէ Հնմարիտ ի-ցեն ցաւք, ոչ է պարտ սահմանել նոցա ժամա-նակ. իսկ եթէ սուտ, ոչ է պարտ կեղծեացն եր-կարատեւել։

Վասն որոյ թէպէտ և առ սպարտացիս իսկ որպէս առ այլ ազգս Յունաց ապականեալ են կրօնք մոլորութեամբք և մոռահաճութեամբք ըստ վարդապետութեանն, այլ՝ ի գործ անդր փայլէ գիտութիւն և հանճար բազում։

Լթենացիք վասն առ իւրեանս ունելոյ զՅաղ-թութիւն, դրօշեցին զնա անթեա[4]. նովին խոր-հրդով և սպարտացիք դրօշէն երբեմն զԼրեա և զԼստղիկ՝ ի շղթայս[5]։ Լցգն այն պատերազ-մող զգեցոյց զէնս Լստղկան, և նիզակ՝ ի ձեռս ետ դից և դիցուհեաց[6]. և զանդրի Լահոն

1 Պղատ. յԱղկիբ. հտ. 2. էջ 148։

2 Պլուտ. կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 239։

3 Նոյն՝ ի Լիկուրգ. հտ. 1. էջ 56։

4 Պաւսան. գիրք Ա. գլ. 22. էջ 52։

5 Նոյն անդ. գիրք Գ. գլ. 15. էջ 245 և 246։

6 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 232։ Նոյն կար-գադր. Լակոն. էջ 239։

առ անդրեաւ Տէնոյ կացոյց, առ 'ի սովորութիւն ալաց չխորհելոյ զնոսա 'ի միմեանց [1]։ Եւ Մուսայից նուիրեաց մեհեան, զի 'ի պատերազմունս դիմէ 'ի ձայն քաղցրանուագ սրնդի և քնարի [2]. կանգնեաց և երկրաշարժին Պոսիդեայ մեհեան, զի յաշխարհին ուր բնակէ՝ յաճախ պատահէն սասանութիւք [3]. և միւս եւս մեհեան կանգնեաց Եւրկիւղի, զի զոյ երկիւղ պիտանի, որպէս օրինայն [4]։

Ոպարապոյ Ժամանակս նորա ընուն տօնք յաճախաւորք. դէպ եղև ինձ 'ի բազումս 'ի տօնիցն տեսանել պարս երիս, որ գնային կարգաւ՝ հնչեցուցանելով նուագօքն զոդս։ Նոքքը երգէին.

Լղաք մեք մանկունք,
Յաւուրս որ անցին,
Դաջք և յանդգնունք։

Եւ պար մանկտացն պատասխանէր.

Բ զնոցն և մեք արդ
Ձայնատուրք հինից
Խիզախեմք 'ի մարտ։

Իսկ տղայոցն պար կցորդէր.

Եւ մեք նոյնպիսիք
Լցուք առ յապայ,
Եւ զերազանցիկք [5]։

[1] Պաւսան. դիրք Գ. գլ. 18. էջ 253։
[2] Նոյն անդ. գլ. 17. էջ 251։
[3] Քսենոփ. պատմ. Յուն. դիրք Զ. էջ 608։ Սոփոր. դիրք Ը. էջ 367։ Պաւսան. դիրք Գ. գլ. 20. էջ 260։ Եւսեբիոս. Յեղեակ. դիրք Բ. էջ 294։
[4] Պլուտ. Յանգիս. հա. 1. էջ 808։
[5] Նոյն 'ի Լիկուրգ, հա. 1. էջ 53։

Տեսի 'ի սպանդարանական տունն կանայս մեռեալսն յընթացս ասպարիզինն հատակեալ՝. և չոգայ զՀետ պարուց զոտեբաց սպարտուՀեաց, որք 'ի ցնծութեան հասարակաց եկեալք 'ի կառն՝ գնային 'ի Թաբասանէ սուն, մատուցանել նուէրս շիրմին Ա՝ենեղասոսի և Հեղինեայ [1]։

Ի տունս կարմեականն Ա՝ստղոնի, որ կատարին ամի ամի 'ի վերջ կոյս ամարայնոյ [2] զինն օր [3], առ ընթեր գոյց 'ի հանդէս մարտի քնարերգացն [4]։ Տեսի շուրջ զքաղաքաւն տաղաւարս հինն վրանաձեւս յօրինեալ 'ի սաղարթաց. օր ըստ օրէ հրաւիրեին անդր 'ի Ճաշ բազմականք նոր ուԹասուն և մի, հինն այր առ վրան. և սպայք ընտրեալք վիՃակաւ զգուշանային բարեկարգութեան [5], և ամենայն հինչ 'ի ձայն քարոզի գործէր [6]։ Հանդիսացն իմն էր բանակի հանդէսն, այլ ամենեքին զերծ 'ի պատերազմէ. զի ոչ իւիք սպառ է խաւփանել տունիցն. և Թէպէտ կարեւոր 'ի վերայ հասեալ կայցէ վտանգ, մնան տունիցն կատարելոյ, և ապա կազմին 'ի պատերազմ [7]։

1 Պաւսան. գիրք Գ. գլ. 13. էջ 239։

2 Պլուտ. յԱգեսս. հտ. 1. էջ 606։ Հիսիւք 'ի բառն Կանգնէ.

3 Խոկր. Նիբբ. 'ի Հեղինէ, հտ. 2. էջ 144։ Պաւսան. գիրք Գ. գլ. 19. էջ 259։

4 Տատուէլ տարեգր. Թուեկիդ. էջ 178։ Փիլոբէ յիշատ. բանտա. կաՃառ. հտ. 18։ Փոտիոնի տարեգր. տառիկ. հտ. 2. էջ 452։

5 Դիոմեար. առ. ԱԹենէոս. գ. էջ 141։

6 Հելլան. առ. ԱԹենէոսի, գիրք ԺԳ. գլ. 4. էջ 635։ Պլուտ. կարգագր. Լակոն. հտ. 2. էջ 238։

7 Հիսիւք. 'ի բառն Կարգատ.

8 Դիոմեար. անդ։

՝Լալին երկիւղածութեամբ խոսանին՝ ի պա-տերազմէ յաւուրս յակինթեան ոճսիցն՝ [1] որ կատարին՝ ի գարնանի [2], մանաւանդ բնակիչք Լիկիոյ քաղաքի [3]։ Լչ էր Յակինթոս որ-պէս պատմեն, որդի միոյ՝ ի Թագաւորացն սպար-տացւոց, սիրելի յոյժ Լպոլոնի. և Օէփիւ-ռի նախանձեալ ընդ դէզ նորա, ուղղեաց՝ ի նա զբոլորակն ձգեալ Լպոլոնի, և սպան զնա. և Լպոլոն վասն անմխիթար սգոյն այլակերպեաց զարքայորդին՝ ի ծաղիկն անուանակիր նորին [4]։ Լչ սահմանեցան ոճք խաղուց, որ ամի ամի կատարին. օրն առաջին և երրորդ՝ աւուրք արբա-մութեան էին և սգոյ, իսկ երկրորդն օր ցնծու-թեան։ Պարտս առ հասարակ ընկղմի յարբե-ցութիւն ուրախութեան. ազատութիւն է ամե-նեցուն, և ստրուկք սեղանակից լինին տերանցն։

Լմենայն ուրեք պարք մանկանց մեկնահան-դերձ, կէսք քնարաւորք՝ երգս վաղեմիս զՅա-կինթեայ հանդերձ սրնգաւնուագին, այլք կայ-թքս հարեալ՝ կաքաւս յօրինեն, և կէսք հե-ծեալք՝ ի ձի՝ հանդէս առնեն Ճարտարութեան իւրեանց՝ ի տեսարանի [5]։

[1] Երոդոտ. գիրք Է. գլ. 206։ Թուկիդ. գիրք Ե. գլ. 76։ Պարսպ. Թուկիդ. գլ. 54։

[2] Երոդոտ. գիրք Թ. գլ. 64 11։

[3] Քորսինի տարեգր. տարեկ. հա. 2. էջ 452։

[4] Քսենոփ. պատմ. Յունաց. գիրք Դ. էջ 528։ Սոփոր. գիրք Զ. էջ 278։

[5] Պոլիկր. առ Աթենէոս. գիրք Դ. գլ. 7. էջ 139։ Քսենոփ. Լանդես. էջ 661։

Այլա խաղաց հանդէսն կամ թափօր հանա-
խումբ դէպ ուղիղ Յ՚Ամիկղա, առաջնորդեալ՚ի
պարագլխէ ումենէ, որում անկ է հրեշտակօրէն
մատուցանել զնուէրս աղգաց՚ի մեհեան Պող-
ոնի՝։ Հասեալք անդր՝ կատարեն զհանդեր-
ձեալ զոհն մեծահանդէս, հեղլով նախ՚ի քա-
ւութիւն զենի և կամեն՚ի ներբին կողմն բաղ-
նին՝ զխարսխաւ զրօշելոյն. և բաղինն է շրջիմ
Յակինթեայ՝։ Շուրջ պարտ առեալ քսան կամ
քսանեւհինգ պատանիք, նոյնչափ և օրիորդք,
հնչեն երգս զմայլական առաջի բաղմութեան
աւագանւոյն Պարտայ՝։ Օ՚ի որպէս յամե-
նայն իսկ քաղաքս Լակեդայ՝ և անդ փոյթ մեծ է
պետութեան զկրթական պաշտամանց, և ար-
քայք և արքայորդիք պարտ անձանց համարին
երևել անդ շքով։ Յառաջ քան զաւուրս զոյսս-
սիկ Լ.զեսիդայոս յետ պայծառ յաղթութեանց-
ցն, եկաց անդ՚ի տեղւոջ սահմանեալ նմա՚ի
պարագլխէն, և իբրև զմի՚ի հատարակասատիս
քաղաքացւոց՝ խառն ընդ նոսա նուագեաց օրհ-
նութիւնս Պղոնի՚ի յակինթեան տօնսն։

Եւ այնպէս բարեկիրթք են սպարտացիք, զի
և՚ի խրախուն նոցա պարիզեշտութիւն իմն տե-
սանի. զի և՚ի տօնս սպանդարամատեանս, թէ-

1 Ցուրման սարտարդ. աբ-
քունի մատենադարանի։
2 Պաւսան. գիրք Գ. գլ.
19. էջ 257։
3 Ցուրման անդ։
4 Յեակոբս մատենիս՚ի տե-
ղեկութիւնսն. թիւ Ա։
5 Քսենոֆ. յԱգես. էջ
661։

պէտ 'ի քաղաքի և թէ 'ի բացի, ոչ ոք իշխէ անց-
ցանել զօրինաղրեալ սահմանաքն 'ի գինեբերուս [1]։

ԳԼՈՒԽ Ծ.

Զգինուորութենէ սպարտացւոց։

Ի ՔՍԱՆԱՄԵՆԻՑ մինչև ցվաթսուն պարտ է
սպարտացւոց զինուորել անդր քան զՀասակն զայն
ազատք են 'ի զինուորութենէ, եթէ ոչ թշնամին
հասեալ մտցէ 'ի Լակոնիա [2]։

Ի զօրաժողովոյն հասանել պահու, հրաման
տան պարէտք 'ի ձայն քարոզի՝ քաղաքացոց ամե-
նեցուն 'ի քսանամամենից մինչև ցՀասակն զոր
սահմանեն [3], զալ իսանիլ 'ի հետևակախումբն
սպառազէն կամ 'ի հեծելազունդն։ Լայն պա-
տուէր հրամանի ելանել սպասաւորաց բանակին [4]։

Ի՞նչ հնգից ցեղակարգութեանց 'ի հնգեակ
գունդս բաժանի հետևակազօրն սպառազէն, ո-
րոց մէն մի մանրապետք առաջնորդեն [5]. և գունդքն
իւրաքանչիւր 'ի չորս գումարտակս բաժանին,
յուրաքանչիւր 'ի վեշտասան դաստ [6]։

1 Պղատ. յՂ. օր. գիրք Ա. հա. 2. էջ 637։
2 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Ե. էջ 568։ Պլուտ. յԱգես. հա. 1. էջ 609 և 610։
3 Քսենոփ. անդ. գիրք Զ. էջ 597։
4 Նոյն յՂ. հա. սպարտ. էջ 685։
5 Արիստոտ. առ. Հարպոկրատայ 'ի ՄՀբտոտ. Դիոդ. գիրք ԺԵ. էջ 350։
6 Թուկիդ. գիրք Ե. գլ. 68։ Քսենոփ. անդ. էջ 686։
* Ցեակոյս մատենիս 'ի տեղեկութիւնան. Թիւ Բ։

Լ. զի փոխանակ խաղացուցանելոյ զբանա-
դակ գունդն 'ի պատերազմ, զօրահատոյց առնեն
գումարտակս ինչ. և յայնժամ կրկնապատկեալ
կամ քառապատկեալ զդասս, գումարեն երկերիւր
յիսուն և վեց կամ հինգ հարիւր երկուասան
այր 'ի գումարտակ մի [1]։ Օ արդիւնս իրաց ա-
ծեմ 'ի նեռքս, և ոչ զկանոն և զօրէնս. զի թիւ
զօրաց դասուցն իւրաքանչիւր ոչ միշտ նոյն է [2].
և զօրավարքն առ 'ի ծածկել 'ի թշնամեաց զզօրու-
թիւնս իւրեանց [3], փոփոխեն յաճախ զկազմած
բանակաց մերոց։ Բաց 'ի հնգից գնդացն՝ է և
խումբ մի վեց հարիւրոց արանց ընտրելոց, որ
Ակիրացիքն կոչին, և որք 'ի պատերազմունս ու-
ղեք նոքա պատսպարան եղեն յաղթութեանն [4]։

Գ. Զխաւորագոյն զէնք հետևակաց էն նիզակ
և վահան. զսուսեր ոչ ընդ զէնս համարիմ, զի
դաշնակ և եթ է նոցա 'ի գօտւոջ [5]։ Բ. Մնացեալ յոյս
նոցա 'ի նիզակն է, և ոչ զնեն զայն 'ի բաց ցար-
չափ 'ի բանակի էն [6]։ Ամն 'ի հիւրոց Եհարց զՊ.
գեսիղայոս արքայ իշխանասէր՝ թէ որ իցեն սահ-
մանք Լ ակոնիոյ. և նա ասէ. Տեգք նիզակաց
մերոց [7]։

1 Թուկիդ. գիրք Ե. գլ. 68։ Պարապ. անդ։
2 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 596։ Սուիդ. 'ի բառն Ἐνομοτ.
3 Թուկիդ. անդ։
4 Նոյն անդ։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 350։
5 Մեսրոպ խմբարան Լ ակոն. գիրք Բ. գլ 1։
6 Քսենոփ. յՊ. հաս. ապարա. էջ 687։ Պլուտ. առակ. Լ ակոն. հա. 2. էջ 236։
7 Պլուտ. անդ. էջ 210։

Պարածածկին 'ի վահան պղնձի [1], բոլորակ երկայն, երկուստեք կամ'ի միոջէ եւ թեթեւ կողմանմանէ հատեալ 'ի ձեւ մահկի, և սրաձեւ յերկոսին ծայրս առարտեալ, կրելով զդրոշմ սկզբնական տառից սպարտական անուանն [2]։ Այս այն նշանակ է ազգին. այլ է նոցա միւս ևս նշանակ իւրաքանչիւր զինուորի դրուագեալ 'ի վերայ վահանին. և որ վահանընկէց ոք դարձցի 'ի պատերազմէ, կեղտ վատութեան ածէ զիւրև։ Ուրումքն 'ի նոցանէ Ճանճ'ի նշանակ իւր ըստ բնական մեծութեանն դրուագեալ էր 'ի վահանին. և 'ի խաղ առնել զնա բարեկամացն իւրոց, ասէ. Հասպ այնքան 'ի թշնամիս անդր մատեայց, զի տեսցեն զնշանակն [3]։

Զդամիդ կարմիր արկանէն զիւրեամբք [4], որպէս զի մի տեսցէ զհոտումն արեան վերայն՝ զոր գործէ 'ի նոսա թշնամին [5]։

Խազաւորն զնայ առաջի բանակին, կարապետեալ 'ի գնդէ Ակիրացւոց, և 'ի հեծելոց արձակելոց 'ի լրտեսութիւն։ Յաճախ զոհս մատուցանէ, առընթեր պաշտամանն կալով զօրապետաց սպարտացւոց և Նիկակակից ազգաց [6]։ Փոխէ

1 Քսենոփ. յՂ. հաս. սպարտ. էջ 685։

2 Պաւսան. գիրք Դ. գլ. 28. էջ 348։ Եւսեբիոս. յԵ. գիրք. գիրք Բ. էջ 293։ Յիշաս. բանաս. կաՃառ. հտ. 16. էջ 101։

3 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 234։

4 Քսենոփ. անդ։

5 Պլուտ. կարգագր. Լակոն. հտ. 2. էջ 238։ Վարեր. Մաքս. գիրք Ի. գլ. 6։ Պարապ. Ալբիատոփ. 'ի խաղաղ. տող 1173։

6 Քսենոփ. անդ։

ստէպ զանակետդն առ 'ի պահպանել զսահմանս նիզակակցաց, և աւերել զթշնամեացն [1]։

Հանապազօր զօրականն կրթի յլսիչս մարտս, շուրջ զանակաւն սահմանեալ կուսանաց։ Օ էնի առաւօտին հրահանգաց, բազմեալ կան 'ի դեռ նի մինչև ցՀնաչ. և յետ երեկոյին կրթութեանցն ուտեն ընթրիս, նուագեն օրհնութիւնս զից, և ննջեն 'ի վերայ զինուցն։ Օ ժամն պարապոյ 'ի զբօսանս անցուցանեն [2]. զի նուազագոյն աշխատանք են նոցա անդ քան 'ի քաղաքի. որպէս զի ասելի է՝ թէ պատերազմ ժամանակ հանգստեան է նոցա [3]։

Յաւուր Հակատամարտին թագաւորն ըստ նմանութեան Հերակղեայ զենու այծ 'ի պատարագ, հնչեցուցանելով նուագածուաց զերգն Կոստորի սրնգաք [4]։ Լաւ ապա զպատերազմն կանն նուագեն զօրհնութիւն. և ամենայն զօրքն պսակ 'ի գլուխս զարդարեալ, կցորդեն միաձայն երգոցն [5]։ Լաւ յետ ցանկալի և ահաւոր պահուն, զհերն սանտրով յարմարեալ, զհանդերձն կազմիկ յօրինեալ, և զգէնսն սրբեալ, ստիպեն զզօրավարս իւրեանց դիմել վաղագոյն յասպարէզ

1 Քսենոփ. յԿ. հաս. սպարա. էջ 687։
2 Նոյն անդ. էջ 688։
3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 53։
4 Քսենոփ. անդ. էջ 689։ Պլուտ. անդ։ Նոյն յԿ. հաս. բաժշ. հա. 2. էջ 1140։ Պոլիաեկ. գիրք Դ. գլ. 10. յոգ. 78։ Պոլիենոս 'ի մարթեանն, գիրք Ա. գլ. 10.
5 Պլուտ. անդ։ Պոլիաեկ. գիրք Դ. գլ. 7. յոգ. 53։

փառաց, խրախուսեն զմիմեանս զուարթ բանիւք՝, և ասեմ կարգեալ խաղան 'ի Ձայն սընդաց՝ որ գրգռեն և ոգեքեն զքաջութիւն նոցա [2]։ Յառաջնումն ասեմի կայ թագաւորն շուրջ պատեալ 'ի պատերազմող մանկտւոյն, որք եթէ ոչ զանձինս 'ի վերայ կենացն նորա փոխանակիցեն՝ զկեղտս վատութեան ժառանգեն [3]։ Երկրորդ նոստ կան մարտակիցք արքայի և նահատակք ունեալք զուսարարայաղթք 'ի հանդէս խաղացն Հռոմայ, որոց քան զամենայն պատիւս փառաւորագոյն հանարի կալ մարտակիցք թագաւորի [4]։

Առեմ զՀանձարեզ ձեւս շարժմանց սպարտական զօրաց նախ քան զպատերազմն և յետ պատերազմին. հրահանգք նոցա պատերազմականք խառն 'ի խուռն իմն թուին 'ի սկզբան. այլ սուղ ինչ ուրուք միտ եդեալ՝ տեսանէ զՀանձարն որ 'ի նմա, յառաջատես ամենայնի, և զիւրութեանց ամենայնի տնօրէն, և խելամուտ ընդ՝ զի սահմանաւորութիւնք Հիւսուրգեայ պատերազմականք քան զայլոց աղգացն էն գեր 'ի վերոյ։

Ամենայն իսկ մարդկան նախատինք էն դասալիք փախուստ, իսկ սպարտացւոց և մտաբերելն իսկ յայն [5]։ Հայց թէպէտ և արիութիւն նոցա

1 Քսենոփ. յՀ. հաս. սպարտ. էջ. 689։

2 Թուկիդ. գիրք Ե. գլ. 70. Պղուտ. գիրք Դ. էջ 289։ Պլուտ. յՀ. բարկութեան, հտ. 2. էջ 458։

3 Եւսեբիոս. գիրք Զ. գլ. 56։ Խոսկ. Թուղթ առ Փիլիպ. հտ. 1. էջ 445։

4 Պլուտ. 'ի Հիսուրգ. հտ. 1. էջ 53 և 54։ Նոյն 'ի խրախճ. գիրք Բ. գլ. 5. հտ. 2. էջ 639։

5 Սենեկա խրատ. Բ. հտ. 3. էջ 16։

սաստիկ է և եռանդուն, այլ չէ յանդուգն կա-
տաղութիւն. մի ոմն 'ի նոցանէ 'ի խուռն սատա-
կացեալ պատերազմի լուեալ զձայն փողոց յետա-
դարձի՝ մինչ դեռ զսուսերն ի ջուրցանէր յոստին
առ ոտս իւր տապալեալ, կատեցաւ անդէն, կա-
րևորագոյն իւր պարտս համարեալ հնազանդել
զօրավարին [1]։

Պարզկան այսպիսւոյ անմարթ է զբաւել 'ի
Հզթայս. գոչէն առնոսս օրէնք հանապազ, զմտի
յանձն առնուլ քան զգերութիւն։ Թիւս զօրա-
վար պաշարեալ յանկարծ յԱփիկարատայ, յասել
զօրացն՝ թէ զի՞նչ առնել իցէ մեզ, ասէ. Զեզ
նահանջել, իսկ ինձ մնարանել և կորնչել [2]։

Լաւ համարին պահել զիւրաքանչիւր կայս,
քան բազմագոյնս զոծել մահուանս [3]։ Բրգելեալ
է նոցա ոչ միայն չմնանել զհետ թշնամեաց, այլ
և չկողոպտել զնոսա անհրաման. զի պարտ է նո-
ցա ուշ ունել յաղթութեան, և ոչ աւարառու-
թեան [4]. և սպարտացիք երեքարիւր 'ի պահպա-
նութիւն օրինացս այսոցիկ հսկէն [5]։ Բռ 'ի զեր-
ծուցանել և էթ զդիակունս անկելոց ոմանց 'ի
զօրականէն 'ի Ճակատամարտի ուրեք, պարտ է
զօրավարին միսանգամ Ճակատ մղել [6]։ Օ յի-

1 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 236։
2 Նոյն անդ. էջ 219։
3 Պաւսան. գիրք Դ. գլ. 8. էջ 300։
4 Թուկիդ. գիրք Ե. գլ. 73։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 54։ Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 228։ Եղիսան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 6։
5 Մեսրոպ. խմբարան Լակոն. գիրք Բ. գլ. 1։
6 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Գ. էջ 507։

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ ՀՍՍՀ-ՈՒՄ

նուազ, որ 'ի կայիցն իւրոց օգտէ, պարտ է նմա կանգնուն կալ յոտին առ ժամանակ մի յեց 'ի վա-հանն՝ 'ի տեսիլ ամենայն բանակին [1]։

Պատութիւն, որ երբեմն դուն ուրեք պատա-հէրն, ածէ զյանցուցելոյն դժնդակ նախատինս։ Օ՛ի ոչ եւս օրէն է նմա զատաղութեան թեին ածել. եթէ ամենացեալ իցէ, ոչ որ խնամա-թիւն առնէ ընդ նմա. իսկ եթէ ամուրի, ոչ որ տայ նմա զդուստր իւր հնութեան [2], իբր թէ կեղտ նախատանացն յամ զաւակն նորա սերիցի։

Նիկեալքն 'ի մարտի որպէս զմեռեալս 'ի քա-ղաքայնոց թաղին կարմիր հանդերձիւ, եւ ոստ ձիթենւոյ ընդ նոսա, որ առ սպարտացիսն նշա-նակ է պատերազմական առաքինութեանց [3]։

Լ՛թէ նշանաւորք ոմանք իցեն, անուն նոցա 'ի վերայ շերմացն արձանագրի, եւ մերթ եւս կեր-պարան առիւծու [4]. ապա եթէ որ 'ի զօրականէն 'ի զարձուցանել զթիկունս հարեալ 'ի թշնամեաց սպանանի, մնայ անթաղ [5]։

Ոչ զյաղթութիւնս կանգնեալս քաջութիւն՝ գերապանծ հանդերձին կանգնեալքն խոհականու-թեամբ [6]։ Ոչ նուիրին 'ի մեհեանս կողոպուտք

1 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Գ. էջ 481։
2 Պլուտ. Անգես. հտ. 1. էջ 612։ Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 214։
3 Նոյն կարգագր. Լակոն. հտ. 2. էջ 238։ Երոդոտ. գիրք Ը. գլ. 124։
4 Պլուտ. անդ։ Եղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 6։
5 Մէսրս. խմբարան Լա-կոն. գիրք Բ. գլ. 1։
6 Պլուտ. անդ. էջ 218։

թշնամեաց. զի արքայն Կղեմենէս ասէր՝ թէ նուէրք աւար առեալք 'ի վատաց՝ ոչ են արժանի առաջի աչաց դիցն կալոց, և ոչ մանկտուցս մերոց [1]։ Յառաջ ժամանակաւ յաղթութիւնք ոչ ցնծութիւն և ոչ զարմանս ածէին. իսկ առ մեզ ընդ յաղթութիւն Աբիդամայ որդւոյ Աղեսիղայոսի այնպէս ցնծացան սպարտացիք, զի ակնեբև ցուցաւ զառաջումն նոցա 'ի վատութիւն [2]։

Զարս անփորձս պատերազմի, և որոց չիք կորով և եռանդն, զնոսա 'ի հեծելագունդն զինուորեն. սոքա են փարթամք 'ի քաղաքայնոց, որք անձամբ անձին պատրաստեն զէնս և զդարման ձիոց [3]։ Ակ երբէք գունդս այս կալաւ յաղթութիւն առանց վարձկանացն հեծելոց օտարաց [4]. ցանկալի է սպարտացւոց զրեթէ առ հասարակ զինուորել՝'ի հետևակագունդն. և զստոյգ քաջութիւն ինքնաբաւ համարեալ, խնդրեն մատչել առ թշնամիս 'ի գիրկընդխառն կռիւ։ Մինչ դեռ կայի ես առ Աբիդամայ արքայի, ածին առ նա զձև կազմածոյ նետաձիգ գործւոյ՝ որ այն ինչ հնարագործեալ էր 'ի Սիկիլիա. և թագաւորն զննեալ զայն, ասէ. Ա՞ՀԱՐԵԱԼ է այսուհետև ըզքաջութենէ [5]։

Սաւական էր Լակոնիա 'ի զինուորել երիս

1 Պլուտ. կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 224։
2 Նոյն յԱգես. հտ. 1. էջ 614։
3 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 596։
4 Նոյն յղ. սպարտակաս. հեծելոց. էջ 971։
5 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 219։

բիւրս սպառազէն հետեւակաց, և տասն հազար և հինգհարիւր հեծեալս [1]. այլ կամ զի սակաւամարդ էր երկիրն, և կամ զի պետութիւնն չը-կամէր բանակս մեծամեծս կազմել, բազում անգամ սպարտացւոց աշխարհօրէն զիմեալ ընդդէմ սահմանակից ազգաց [2], սակաւ ինչ գունդս համ-ազգիս խաղացուցանեն յարշաւէն 'ի տար աշ-խարհս։ Լպսաքէն էին նոցա քառասուն և հինգ հազար այր 'ի պատերազմին Պղատեայ, այլ հինգ հազարք ևեթ 'ի նոցանէ էին սպարտացիք, նոյն-չափ և լակեդեմոնացիք. իսկ մնացեալ զօրք ե-ղոսացիք էին [3]։ Լյ 'ի պատերազմին Լեւկտրայ եօթն հարիւր ևեթ սպարտացիք էին [4]։

Լպա ոչ իւրով ինչ զօրութեամբ մեծացաւ Սպարտա. և զոր 'ի սկզբան պեղոպոնեսական մարտին զինուորեաց վեց բիւրս զօրաց ընդդէմ աթենացւոց, էին յոլովք 'ի բնակչաց Պեղոպո-նեսայ միաբանեալք ընդ նմա 'ի դարուց հետէ՝ որք գումարեցին զզօրս իւրեանց ընդ նորայն [5]։ Լակ 'ի յետին ժամանակս սակաւք ոմանք սպար-տացիք էին 'ի բանակի նորա, և գունդ մի նորա-մոյց կամ ստրկաց ազատելոց. յորս ըստ պիտոյից

1 Արիստոտ. յդ. հաս. գիրք Բ. գլ. 9. հա. 2. էջ 319։

2 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Է. էջ 643։

3 Էրոդոտ. գիրք Թ. գլ. 10 և 11։ Պլուտ. Լիկուրգ. հա. 1. էջ 328։

4 Քսենոփ. անդ. գիրք Զ. էջ 597։

5 Թուկիդ. գիրք Բ. գլ. 9։ Պլուտ. 'ի Պերիկլ. հա. 1. էջ 170։

ժամանակին յաւելան զօրք լակոնացիք, և բազմագոյնք ևս 'ի դաշնաւոր ազգաց '։

Յետ Լեւկտրայ պատերազմին Լպամինոնդ յազատութեան դարձոյց զՄեսենիա՝ որ 'ի բազում ժամանակաց կայր 'ի ծառայութեան սպարտացւոց, և ոչ ևս է նոցա դաւառն այն զօրապահանջ. և բազումք ևս յազգաց պեղոպոնեսացւոց քակեցան 'ի միաբանութենէ նոցա, և պետութիւն նոցա երբեմն մեծասաստ՝ անկեալ դնի արդ յայսմ հետէ անյարիր։

ԳԼՈՒԽ ԾԱ.

Ջատագովութիւն օրինացն Լիկուրգեայ, և պատճառք անկանելոյ նոցա։

ՓԻԼՈՏԱՍ ըստ նախասպատումն իմոյ բանիս *, մեկնեցաւ ՄԷՆԵՆԱՅ աւուրք յետոյ 'ի հասանել մեր 'ի Լակեդեմոն։ Մինկալեայ մնայի նմա, և ոչ ևս դառնայր. զարմանք թուէին ինձ, թէ որպէս համբերէր այնչափ ժամանակս դառն բաժանմանն։ Մայլ մինչ չև երթեալ 'ի խնդիր նորա, խորհեցայ զրուցատրել միւսանգամ ընդ Կամենաքսայ։ Յառաջնումն նուազի եցոյց նա ինձ զօրէնս Լիկուրգեայ յաւուրս զօրութեան իւրեանց. այլ իմ տեսանելով հանապազ զթուլու-

1 Քսենոփ. ՅՈՒՆԱՍ. ԿԷ 652, և այլուր։
* Ի դլուխն 41։

թիւն նորա, զի ոչ ընդդէմ դառնայր բազմա-
վտանգ նորաձևութեանց, կասկածէի զի ոչ ևս
էր օրինաց առաջին զօրութիւնն. և ինդրէի պա-
բաստ մերկանալոյ նմա զխորհուրդս իմ։

Միաւորնուագի յերեկոյին զուցատրութիւնս
Ճառք անկան մեզ զԼիկուրգեայ, և ես զզար-
մանահրաշ առնէին վեր 'ի վերոյ ինչ մեծարանօք
պատճառէի խօսել։ Թուի ինձ, ասեմ, զի բա-
զում ինչ յօրինաց ձերոց 'ի Պարսից և յեգիպ-
տացւոց ածեալ են։ Նա ասէ. Պարտապա-
սեսն որ զբաւիղն յԱզիպտոս կառոյց՝ ոչ ինչ
նուազ գովութեան է արժանի, զի զչինաղ կիճն
պարոսական 'ի տար աշխարհէ ածեալ՝ շքեղ ըզ-
մուտս բաւղին նովաւ յօրինեաց։ Ու 'ի խե-
լամուտ լինել հանձարոյն Լիկուրգեայ, զբաղ-
կացութիւն օրինաց նորա պարտ է նկատել։ Ա-
սեմ. Օգոյն իսկ հնարին այլք յափշտակել
պարծանս. աթենացիք[3] և կրետացիք[4] յամա-
ռեալ սնդղին, որպէս թէ սահմանադրութիւնք
իւրեանց՝ թէպէտ և այլանմանք 'ի միմեանց՝ նա-
խատիպք լեալ իցեն ձերոցն։

[1] Երոդոտ. գիրք Զ. գլ. 59 և 60։ Խոսկր. 'ի Բուլ. սիր. հա. 2. էջ 162։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 41 և 42։ Դիոդ. գիրք Ա. էջ 88։

[2] Պլին. գիրք Լ.Զ. գլ. 13. էջ 739։

[3] Խոսկր. համեմ. հա. 2. էջ 260։

[4] Երոդոտ. գիրք Ա. գլ. 65։ Պլատ. 'ի Մին. հա. 2. էջ 318։ Նոյն յդ. օր. գիրք Գ. էջ 683։ Քսենոփ. Եփոր. Կալլիսատ. Պոլիբիոսի. գիրք Զ. էջ 488։ Արիստոտ. յդ. հատ. գիրք Բ. գլ. 10. էջ 332։ Սոքրատ. գիրք Գ. էջ 477։

Դամոնաքս ասէ. Ա կայութիւն աթենացւոց խակամիտ անձնասիրութեամբ է միշտ զգածեալ. զի չկք ինչ 'ի մէջ զոր ոչ 'ի պարծանս իւրեանց շրջիցեն։ Խակ կրետացւոցն բանք հաստատագոյնք էին, զի բազում ինչ 'ի Մինովայ օրինադրութեանցն էառ Լիկուրգոս, և զկէսս 'ի բաց եթող[1]։ Այլ զառեալ օրէնսն այնպէս յերիւրեալ յարմարեաց իւրում կարգաւորութեանն, զի 'ի դէպ իսկ է ասել թէ ինքն հնարեցաւ զայն՝ զոր Մինովայ յառաջքան գնա, և այլոց իսկ թերևս նախ քան զՄինովն հնարեալ էր։ Այնէ զերկոսին պետութիւն ընդ միմեանս համեմատեսցես, տեսցես մերթ զհնարս մեծի հանճարոյ 'ի մեծագունեմ կատարելագործեալ[2], և մերթ զանազանութիւնս 'ի նոսա այնպիսիս կարևորս՝ զի հիացեալ զարմացիս թէ զնարդ մարթիցի չխըտրել զնոսա 'ի միմեանց[3]։ Մինչ քեզ օրինակ իմն նոցա հակառակ միմեանց դիտաւորութեանն. օրէնքք Մինովայ ներեն զանհաւասարութիւն ընչից[4], իսկ մերքս արգելուն զայն. և աստի հարկ է զանազանութեան մեծի յառաջ գալ 'ի սահմանադրութիւնս և 'ի բարս երկուց ազգացն։ Սակայն, ասեմ, ոսկին և արծաթի փլուզին ըզթումբ և զամբարտակ օրինացն՝ որք ոչ բաւեցին զդէմունել նոցա, և ոչ ևս էք դուք բարեբաստք

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. գիրք ի. էջ 381։
1. էջ 41։
2 Նփոր. առ Սպարտոնի.
3 Պոլիբ. գիրք Զ. էջ 489։
4 Նոյն անդ։

'ի չքաւորութեան, և զոգցես իմն կարօտութեամբդ փարթամք։

Եւ մինչ դեռ Զամենաքս պատրաստ էր 'ի պատասխանել, ասելի եղև բարբառ 'ի փողոցէ՝ զի ասէր ստէպ. Բաց, բաց։ Օ՛ի չէ օրէն 'ի Սպարտա բախել զդուռն։ Եւ ահա նա ինքն Փիլոտաս էր. ընթացայ զիրկս արկի զնովաւ, և նա զինև. և ածի զնա անդրէն առ Զամենաքս, որ յետ սակաւ միոյ 'ի բաց եկայ ըստ վայելուչն կարգի բարեձևութեան։ Հարց ցիս զնմանէ Փիլոտաս, թէ որպիսի ոք է։ Եւ ես ասեմ. Ա՛յր լաւ և համբոյր, և առաւել ևս սրտիւ քան արտաքին բարեձևութեամբ նազելի. բարուք պարզ, և առաքինի իմաստիւք։ Փիլոտաս համարէր զնա իբրև զմի յայլոց սպարտացւոց անուսումն։ Յաւելի և ասեմ. Հարեալ է նա 'ի սէր օրինացն Լիկուրգեայ։ Եւ զայն ևս դիտեալ էր Փիլոտայ, զի գեղջկագոյն քան յառաջնումն նուազի երեսելոյ մեր ընդ միմեանս ետ զողջոյնն։

Բայց Փիլոտաս կարի իմն ջատագով էր իւրոյ ազգին, արհամարհելով զայլ ազգս, և մանաւանդ ատելոյ էր սպարտացւոց։ Մի՛թերեալ նորա 'ի միտս իւր զամենայն որ ինչ ծաղու բանս արձակէն 'ի նոսա կատակերգուք աթենացիք 'ի թատերս, որ ինչ ձարտարախօսք աթենացիք յաձախեն ընդդէմ նոցա թշնամանս, որ ինչ վիպագիրք աթենացիք պատմեն զնոցանէ անիրա-

1 Պլուտ. կարգագր. Լակոն. հա. 2. էջ 239։

ւութիւնս, և որ ինչ խմաստասէրքն ասեն[1]նացիք կշտամբեն յօրինս Լիկուրգեայ յոռութիւնս, և սպառազինեալ նոքօք՝ յարձակեալ անդադար 'ի կուսակիցս սպարտացւոց։ Լ.ԺԼ. ես Ջանայի յա-ՀԱԽ ուղղել զԹերութիւն նորա, զի ցանկայի սի-բելոյ խմամանստգիւտ գոլ։

Զայր նա յայնժամ Լ.ՐԳՈՂԵԱՅ, ուստի մինչև 'ի Սպարտա ՀԱՆԱՊարՀն յոյժ դժուարին է և առապար. և նորա սպարտասէալ յաշխատութենէ ՀԱՆԱՊարՀին, նախ քան զգնալն 'ի քրեն՝ ասէ ցիս. Ոչ ինչ երկեայիմ, զի ըստ գեղեցիկ քումդ սովորութեան՝ լեցի մեզ սողոսկել ընդ մի ուրեք 'ի ժայռից առ 'ի գնին կալ շուրջանակի զմեծ կառույց քաղաքաւոր. զի ոչ պակասեն աստ լերինք առ 'ի մատուցանել ուղևորաց զզբօսանս զայս։ Լ.Ա ես ասեմ. Լ.վաղիւ երթիցուք 'ի Ա'ենեղայն բլուր յայնկոյս Լ.ԲՐՈՏԱՅ, և Զամենաքս աշխատութիւն յանձն առեալ՝ առաջնորդեսցէ մեզ։

Լ.Ա 'ի վաղիւ անդր անցաք ընդ Լ.ԱԲԷՔՍ, զի այսպէս կոչեն զկամուրջն Լ.ԲՐՈՏԱՅ[1]. և ահա էին անդ աւերակք տանց բազմաց կառուցելոց երբեմն յահեակ կոյս գետոյն, որ 'ի վերջնումն պատերազմի աւերեալ էին 'ի զօրացն Լ.ՍԱՄԻ-ՆՈՆԱՅ[2]։ Լ.ստի պատՀառս առեալ Փիլոտայ, սկսաւ ներբող գերասանն յօրինել զդժնէագոյն

1 Ասիաս. առ Պլուտ. 'ի 2 Քսենոփ. պատմ. Յուն. Լիկուրգ. հա. 1. էջ 43։ գիրք Զ. էջ 608։ Հիսիք. 'ի բառն Βαεῦκ.

թշնամւոյն սպարտացւոց. և վասն զի Ղամմնաքս լուս ևեթ կայր, զթացաւ 'ի նա։

Եւ մինչ դեռ գնայաք, ընդ առաջ եղեն մեզ երեք կամ չորք ոմանք սպարտացիք զգեցեալք հանդերձս ժապաւինեալս գունագոյն վերջաւորօք, և գերծեալք զմի 'ի ծնօտիցն միայն [1]։ Եւ ասէ Փիլոտաս. Արդեսո՞ւ ինչ խաղ կատակերգուքդ յանդիման առնիցեն։ Ղամմնաքս [2] ասէ. Որքա՞ն են ահաբեկքն անուանեալք վասն 'ի փախուստ դառնալոյ 'ի մարտէն, յորում զզօրս Եպամինոնդայ վանեցաք։ Ի կերպարանացն ծանօթք՝ առ յոյժ ամօթոյն շրջին յամայի վայրս, և ահա խուսեն յերեսաց մերոց [3]։

Եւ հայեցեալ տեսանէաք 'ի բարձուէ բլրոյն զանդաստանս գեղեցիկս որ տարածանին ընդ հարաւ, և զլերինս բարձրաբերձս որ սահմանեն յարևմտից զԼակոնիա. և բազմեցաք անդ հանդէպ քաղաքին սպարտացւոց, Ղամմնաքս յաջմէ իմմէ, և յահեկէ Փիլոտաս՝ որ հազիւ հարևանցի ինն 'ի խառնակերտ խուժան հիւղիցն ակնարկէր։ Ասէմ. Սակայն աղգն բնակեալ 'ի գծուծ օթևանիդ 'ի տղայ տիոց ուսանի զարուեստ հրամայելոյ, և զհնազանդելոյն դժուարագոյն արուեստ [4]։ Լակ Փիլոտայ խթեալ զիս արմկամբ,

1 Պլուտ. ՅԱգես. հա. 1. էջ 612։

2 Մեօրս. խմբարան Լակոն. գիրք Դ. գլ. 7։

3 Քսենոփ. յՊ. հաս. սպարտ. էջ 684։

4 Պլուտ. առակ. Լակոն. հա. 2. էջ 212։

նշանացի ազգ առնէր ինձ լռել։ Այլ իմ յառաջ մատուցեալ զբանս, ասեմ. Զգ որ ոչ ամբարհաւաճէ յաղթութեամբք, և ոչ սրտաբեկի յարկածից՝։ Յայնժամ Փիլոտաս ասէ ցիս յունկանէ. Արդ մնեցուցեալ զքեզ 'ի դիս, մի բռնադատեր զիս 'ի խօսել. տեսեր իսկ զի չկարէ դատալ պատասխանի։ Սակ ես դարձեալ յաւելեալ, ասեմ. Զգ միտայաղթ՝ որ զՊարսս եբեկ, եհար զզօրավարս աթենացւոց 'ի Ճակատս բազումս, և հաս կալաւ զբուն իսկ զմայրաքաղաք նոցա. ազգ՝ ոչ թեթեւամիտ, ոչ յեղյեղուկ, ոչ 'ի կաշառաբեկ Ճարտարախօսաց իշխեցեալ. որ ընդ բնաւ Աչլադա... Յայնժամ Փիլոտաս գոչեաց և ասէ. Որ ընդ բնաւ Աչլադա ատելին է բռնաւորութեամբ, և անգոսնի յոռութեամբքն։ Աւ անդէն զամենի հարեալ՝ ասէ ցՊամենաբս. Ալերեա սրտմտութեան մանկականի տիոցս հայրենասէր աշխուժից, որ չհանդուրժեն ընդ թշնամանս հայրենեացն։ Պամենաբս ասէ. Ա՛յա աւանիկ գովելի են ինձ այդ խմաստք, և զդոյն Լիկուրգոս սահմանէ 'ի մեզ յորդոր առաքինութեանց։ Որ սիրէ զհայրենիսն, որդեակ, հնազանդի օրինաց. և նոքին իսկ ընու անթերի զպարտսն։ Արժանի իսկ են հայրենիքդ սիրոյ քում. և ես մեղադրեի Ինաքարսեայ՝ զի ցայն վայր զերգիծանսն յառաջ մատոյց, եթէ ոչ այնու պատճառս 'ի ներքս ածէր զերկաքանչիւրոցս

1 Արիստ. առ Թուկիդ. գիրք Ա. գլ. 84։

բժշկելոյ զմտահաճութիւն։ Ի՞հաւասիկ ասպա-
րէզ բացեալ մեզ առաջի. զու զօրութեամբք
քաջակիրթ վարժիցդ յառաջ մատիցես, իսկ ես
սիրով ձեմարտութեան մեծագլնեալ։

Այլ Փիլոտաս դաշն ձայնիւ ասէ ցիս. Ո՞ զօ-
նամիտ է այրդ, ինչպէս չարտամեցուցանել զդա.
հնարեսջիր շրջել զխօսս։ Յայնժամ ասեմ ցԱա-
մենաքս. Փիլոտայ զնկարագիր սպարտացւոց է
արարեալ ըստ իմաստից մատենագրացն աթե-
նացւոց, ինդրեա 'ի դմանէ և ցուցցէ քեզ։ Այլ
'ի ցամնուլ Փիլոտայ 'ի վերայ իմ, աճապարեաց
Ամենաքս և ասէ ցնա. Զու թշնամանեցեր ըզ-
հայրենիս իմ, և ինձ անկ է պաշտպան կալնմս.
յանցաւոր ես, եթէ քեզէն խօսեցար. իսկ եթէ
'ի համբերեաց ոմանց 'ի կիր առեր զբանդ,
արդարացիս. այլ չկարծեմ թէ ամենեքին առ-
հասարակ զբար կարծիսդ բերիցեն զմէնջ։ Փիլո-
տաս արտաւուչս ասէ. Ամենեքին, զի են իսկ
'ինոսա ջատագովք ձեր, որ զձեզ առ դիւցազունս
ունին[1], և 'ի նմանութիւն ձեր նկրտին. այլ
չկարեմ լռել, զի իմաստունք մեր համարձակ է-
պերեն զօրէնս ձեր և զբարս։ Ամենաքս ասէ.
Իմաստունքդ այդոքիկ իցեն ապաքէն տեղեակք։
Փիլոտաս ասէ. Այլ իբր ոչ, գերահանձարք Այ-
լազգայ նոքին իսկ են. Զղատոն, Սոկրատ, Ա-
րիստոտէլ, և այլք բազումք։ Ինդ որ սպարտա-
ցւոյն պատճառելով զարմանս, կրկնեալ անդրէն

[1] Սոկր. համեմ. հտ. 2. էջ 201։

Փիլոտայ, և նեբու

՝ հայցեալ՝ ասէ.

Լիկուրգոս ոչ ծանեաւ զկարգ առաքինութեանց, և նախամեծար արար զքաջութիւն՝. անտի խուժան չարեացն՝ զոր կրեցին սպարտացիք և ածին՝ ի վերայ այլոց։ Ինդ վախճանել նորա, ցուցին նոքա զփառամոլութիւն իւրեանց՝ ի վերայ ազգաց մերձաւորաց[2]. այսմ՝ վկայէ վիպագիրն՝ զոր զուք ոչ ճանաչէք, և կոչի նա Լիդոգոս։ Տո՛ չարեալք՝ ի բոց բաղձից տիրապետութեան, հարեկեցան յանձին առ տկարութեան իւրեանց խոնարհել յամօթ ապարտ նուաստութիւնս և՝ ի գժողակ անիրաւութիւնս։ Օ՛ յ նոքա առաջինք եղէն՝ ի կաշառաբեկ առնել զզօրավարս թշնամեաց[3], և՝ ի մուրանալ զօգնականութիւն Պարսից զխուժադուժ ազգին՝ որում՝ յառաջքան զաւուրս զայսոսիկ խաղաղութեամբն Նտաղկիդայ վանձառեցին զազատութիւն Յունաց բնակելոց Ասիա[4]։

Լենգաւորք գոլով՝ ի բարս և զրժողք դաշանց[5], փոխանակ քաջութեան՝ ի պատերազմի՝ ի կիր արկանեն զդաւ[6]։ Ապասն ընդ յաղթութիւն

1 Պղատ. յդ. օր. գիրք Ա. հտ. 1. էջ 630. գիրք Դ. էջ 705։

2 Երոդոտ. գիրք Ա. գլ. 66։

3 Պաւսան. գիրք Դ. գլ. 17. էջ 321։

4 Խոսկր. նեբր. հտ. 1. էջ 184։ Նոյն համանի. հտ. 2. էջ 234։ Պղիբ. գիրք Զ. էջ 492։

5 Եւրիպ. առ Անդր. տող 446։ Արիստոտ. ի խաղաղ. տող 216 և 1067։ Նոյն՝ ի Լիսանդր. տող 630։

6 Պերիկլ. առ Թուկիդ. գիրք Բ. գլ. 39։

ազգի օտարի, և յարուցանէն նմա ոսոխս, և զրդռեն և Ճարակեն հերձուածս 'ի պառակտել զնա։ Յանցեալ դարու խորհեցան նոքա աւերել զԼԹէնս զփրկիչն Աղլադայ [1], և զրդեցին զպե-ղոպոնեսական պատերազմն՝ որ խուժան աւերա-նաց զքաղաքաւն էած [2]։

Օ՛ուր ջանացաւ Լիկուրգոս պահել զնոսա 'ի թունից մեծութեանց. ամբաւ գանձս ծածկէ Սպարտա 'ի ծոցի իւրում [3], այլ սակաւք ոմանք զրաւեալ ունին զայնոսիկ անյագուրդք [4]։ Նա-ռոքա միայն հասանեն առագութեանց, զրկելով արժանաւորացն՝ որք հեծեն 'ի կարօտութեան [5]։ Կանայք նոցա, զորոց Լիկուրգոս անտես արար զդաստիարակութիւն զբնաւից իսկ սպարտու-հեաց, կանայք նոցա ասեմ, որք իշխեն արանց իւրեանց մասն լինելով նոցա, հաղորդք են ա-գահութեան նոցա. և լկտութեամբ իւրեանց յաձախեն զհամաշխարհական զեղծումն բա-բուց [6]։

Սպարտացւոցն առաքինութիւն տխուր է և խիստ և յերկիւղ միայն հաստատեալ [7]։ Դաս-

1 Եղիան. զան. պատմ. գիրք Դ. գլ. 6։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 375։

2 Դիոն. աղիկ. հտ. 6. էջ 770։

3 Պլատ. յԱղիկ. հտ. 2. էջ 122։

4 Արիստոտ. յզ. հատ. գիրք Բ. գլ. 9. հտ. 2. էջ 331. գիրք Ե. գլ. 7. էջ 396։

5 Պերիկլ. առ Թուկիդ. գիրք Բ. գլ. 37։

6 Պլատ. յզ. օր. գիրք Է. հտ. 2. էջ 806։ Արիստոտ. յզ. հատ. գիրք Բ. գլ. 9. հտ. 2. էջ 328։

7 Պերիկլ. անդ։

տիարակութիւն նոցա անգութս զնոսա յարդա-
լէ, որպէս զի անկարեկիր 'ի զնին կալ հեղման
արեան որդւոց իւրեանց, և անխիղճ զստրկացն
իւրեանց հեղուլ զարիւն։

Այլ վախճանեալ Փիլոտայ զբանս իւր, ասէ.
Ծանուցեալ էն ամբաստանութիւնքս, և զինչ առ
այսոսիկ տացես պատասխանի։ Սպարտացին ասէ.
Զայն զոր մի յառիւծուց տեսեալ 'ի քանդակա-
գործ պատկերի զհամազգին իւր գազանն պար-
տեալ 'ի մարդոյ, ասաց և ես։ Բ՛սաղ զի չիք ոք
յառիւծուց ձեռագէտ արուեստին։ Փիլոտայ
զանակնկալ պատասխանին լսելով, ասէ ցիս 'ի
ծածուկ. Այլ իցէ զորա զՀայոսլայ առակն ըն-
թերցեալ։ Այլ ես ասեմ։ Ա՞ զիտէ, թերևս յա-
թենացոյ ուսեալ լուեալ իցէ զվէպսն։ Այլ
Սպարտացւոյն յառաջ մատուցեալ զբանսն ասէ.
Գոիտա, զի ոչ ինչ աւելի փոյթ է մեզ զբանիցն
որ խօսին 'ի հրապարակս Աթենայ, քան զերաց
որ անդր քան զՀերակղեայ արձանսն գործին '։
Արկնեալ անդրէն Փիլոտայ ասէ. Կամիցիք ապա,
զի անուանդ ձեր նախատ շրջիցի քաղաքաց 'ի քա-
զաքս և ազգաց յազգս։ Դամոնաքս ասէ. Բ՛ալ
օտարք 'ի մերում աշխարհիս և յայժմու ժամա-
նակիս, ոչ իշխեսցին դատապարտել զմեզ վկայու-
թեամբ ազգի որ միշտ նախանձորդն լեալ է մեր,
և յաձախ ևս թշնամի. արդեօք և ջատագովք
մեզ 'ի նոսա գտանիցին։ Փիլոտաս ասէ. Բ՛ալ,

1 Խոկր. համեմ. հտ. 2. էջ 312։

և ՝ն նկարագրիս զոր յանդիման արարի՝ գոցի դիմադարձ։ Զամենաքս ասէ. Զ՝հաւասիկ քեզ հաւատարմագոյն նկարագիր 'ի հանգուցեալսդ Հարտաբ մատանց գծեալ։

Զիք ուրեք բայց միայն 'ի Սպարտա և 'ի Արեւտ տիրապէս կարգ տեսչութեան. իսկ այլուր ամբոխ ինն քաղաքացեաց, որոց կէսք տեարք էն և կէսք ստրուկք [1]։ Ի Սպարտա չիք այլ ինչ խստիր ընդ թագաւորն և ընդ ռամիկ, ընդ աղքատն և ընդ մեծատուն, բայց զոր օրէնսդիրն սահմանեաց ազդեալ 'ի դիցն [2]։ Զոյն և 'ի սանձահարել զմեծազօր զօրութիւն թագաւորացն իշխանութեամբ ծերակուտին [3], 'ի դիցն ազդեցեալ։

Կարգս այս տեսչութեան՝ յորում իշխանութիւնք կան 'ի կշիռ [4], և որոց իմաստութիւն յամենեցունց Հանդէր [5], տեւեաց դարս չորս առանց մեծի փոփոխութեան, և առանց իրիք հերձուածոց 'ի քաղաքացիսն ծնանելոց [6]։ Այ ինչ 'ի բարեհնչեան աւուրսն յայնոսիկ զոր ծեաց հասարակապետութիւնն կորանաց արժանի [7], և ոչ ու-

1 Պլատ. յղ. օր. գիրք Դ. հա. 2. էջ 712։

2 Նոյն անդ, գիրք Դ. էջ 696։

3 Նոյն անդ, էջ 692։

4 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 6. հա. 2. էջ 321. գլ. 11. էջ 335։ գիրք Դ. գլ. 9. էջ 374։

5 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Բ. էջ 466։ Իսոկր. առ Նիկոկլ. հա. 1. էջ 96։ Պլատ. յղ. հաս. գիրք Ժ. հա. 2։

6 Թուկիդ. գիրք Ա. գլ. 18։ Լիւս. յոգնակ. էջ 521։ Քսենոփ. յԱգես. էջ 651։ Իսոկր. Համաթ. հա. 2. էջ 316։

7 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 611։

բեք երբեք տեսան որպէս զսպարտացուցն օրինաւ-
պահութիւն և անտեսութիւն իւրաքանչիւր օգ-
տի, սակաւապիտութիւն, մարդասիրութիւն,
մեծախոհութիւն, արիութիւն և չափաւորու-
թիւն[1]։ Որով նոքա հակառակ յոյնաթախանձ
յորդորանաց դաշնաւոր ազգաց չառին յանձն
կոչմանել յայնժամ Ղ[ա]թէնս[2], որ ասա...Լ-
մինչեւ նա զայս ասէր, գոչեաց Փիլոտաս. Օ ըս-
պարտացիս և եթէ ընթերցեալ լցէ քո անշուշտ
զվիպագիրս։ Դամոնաքս ասէ. Ոչիք մեր վիպա-
գիր։ Փիլոտաս ասէ. Լցէն կաշառաբերեալք 'ի
ձէնջ։ Դամոնաքս ասէ. Ա զոր կաշառեմք. գի-
տիցես այք են ինձ վկայք. գերահանձարք Լաչա-
դայ Պղատոն, Լիսուկիդիդէս, Խոսկրատ, Գրսե-
նոփոն, Ք[ր]իստոտէլ, և այլք բազումք. 'ի ստեպ
ուղղորդելն իմ երբեմն Ա[ղ]թէնս պատուիրանաւ
աւագանւոյն՝ մտերմացայ ընդ ոմանս 'ի նոցանէ,
և 'ի բանից նոցա և 'ի գրոց է յիս փոքր 'ի շատէ
հմտութիւն՝ որ քեզ զարմանալի թուի յայր ըս-
պարտացի։

Դամոնաքս զզարմանան եւեթ նկատէր 'ի կեր-
պարանս Փիլոտայ, այլ ես առաւել ևս զերկիւղն
տգիտ կամ անհաւատարիմ յանդիմանելոյ. բայց
մտահանութիւն եւեթ և թեթեւամտութիւն

[1] Պղատ. Ալգիբ. հտ. 2. էջ 122։ Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Ե. էջ 552։

[2] Անգոգ. յդ. խորհրդոց, էջ 18։ Քսենոփ. անդ, գիրք Բ. էջ 460. գիրք Զ. էջ 609 և 611։ Խոսկր. յդ. խաղաղ. հտ. 1. էջ 399 և 414։ Պղ-
ղեն. 'ի մարթմանն, գիրք Ա. դլ. 45. յոգ. 5։

էին 'ի նմա կշտամբելի։ Հարցի ես յայնժամ զ'Յամենաքս, թէ զինքդ մատեանդիրքդ ամենացուց այնպէս համարձակ և գունակս գունակս յեղյեղուն զբանն զսպարտացուց։ Յետ սակ. Պարթ է ինձ պատասխանել՝ թէ զի մերթ Հրշմարտութեան և մերթ աղգային ատելութեանն տեղի տան. այլ մի երկնչիր, Փիլոտաս, խնայեմ 'ի քո հայրենասիրութիւնդ։

Ժամանակս պատերազմի Հարտարախօսաք ձեր և քերթողք առ 'ի զրդռել զիսաժամուժն ընդդէմ մեր, առնեն ըստ օրինակի նկարչացն՝ որք զսոսիս իւրեանց առ քէն վերիժու դժնեատեսիլս յանդիմանն առնեն։ Յակ խնամատարքդ ձեր և վիպագիրքդ, խոհականագոյնք քան զնոսա, ետուն մեզ պարտաւ և գովութիւն. զի երկաքանչիւրոցն յայլ և այլ ժամանակս գտաք արժանի։ Ցմանողք եղէն նոքա Հարտարաց՝ որք զգիւցազունս իւրեանց մերթ հանդարտս նկարեն և մերթ սրամտեալս, և զի 'ի գեղ մանկութեան, և է զի խրշմերեսս յանգեղեայ ծերութեան։ Քրդ նկարագիրս այլ և այլ դու և ես 'ի տեսիլ ածաք, քո 'ի կիր առեալ զտիպս տգեղացուցիչս, իսկ իմ ըզգեղեցկարար մատուն կամեցեալ ժողովել 'ի նկարագիր անդր զոր խափանեցեր։ Քայլ երկաքանչիւրն ես ոչ զՀնգրիտ բերէ նմանութիւն։ Քայս պարտ է մեզ գանուել և հաւատել զկարծիս մեր յանժխտելի արդիւնս իրացն։

Օ երկուց առաջի կայ ինձ զդէմ ունել հա-

բուաձոց, զի և զբարս մեր և զկարգ տեսչութեան առ հասարակ հարկանեսս։ Խարք մեր ընդ դարս չորս անեղծ կացին ամենեքին, վկայեալ 'ի ձերոց իսկ մատենագրաց. և սկսան եղծանել յաւուրս պեղոպոնեսական մարտին, ոչ ժխտեմք։ Պարտաւէջիր ապա զայժմու յոռութիւնս մեր, այլ մեծարեա զնախին առաքինութիւնս։

Զարդ զմիջէն իրաւախոհ լեալ, երկրորդումն անմարթ է ինձ տալ տեղի. այլ մինչև 'ի սպառ վիճեալ պնդեցայց, զի 'ի կարգս տեսչութեան որ ծանօթք են մեզ՝ չիք որպէս զսպարտականն գեղեցիկ։ Զպաքէն Պղատոն, թէպէտ և հաւանեալ ընդ գերազանցութիւն սորա, զտանել 'ի սմա ինչ ինչ պարսաւելի[1]. և գիտեմ զի առաւելագոյն ևս Զրիստոսել ստգտանել 'ի սմա իրս. այլ զի թերութիւնքս այսոքիկ ոչ զկարևոր մասունս սահմանադրութեանն յոռեցուցանեն, ասեմ՝ Պղատոն. Զոր ուսուցեր զի Լն անակիզբն 'ի կազմել զտիեզերս 'ի նախադոյակ նիւթոյն, քանզի էին 'ի նմա ինչ ինչ անտեղի տալն, որով իւիք 'ի միջանջենակաց բնութենէն իւրմէ մարթէրն պիտանացու գոլ՝ 'ի նոյն ևեթ հաստատեաց[2]։ Զայս և ինձ իշխելի է ասել, զի և առընթերակաց Լիկուրգեայ նիւթն ապստամբ ինն էր և հաղորդ թերակատար բնութեան էիս,

[1] Պղատ. յՀ. տր. գիրք Ա. Է. էջ 806։
[2] Տես. 2. էջ 628 և 634. գիրք։ [2] Նոյն. 'ի Տիմ. հատ. 3։

այս ինքն է մարդն, յորմէ Լիկուրգոս որ ինչ մարթէրն արար։

Լաւ եթէ թերութեանցն որ յանդիմանին յօրէնս նորա՝ հարկ է զՀետ ձգել զկործանումն, յուշ լեցի Պղատոնի վկայեալն յամենայն մատենագրաց աթենացւոց՝, զոր և ինքն իսկ յետոյ զրեաց առ Դիոնեսիոս արքայ սիրակուսացւոց. զի օրէնք միայն իշխեն՝ի Պարտաս, և նոյն կարգ տեսչութեան՝ի բազում դարուց հետէ պահի անդ անսիոխոխ[2]։ Բ.ԷՐԴ զնա՛ղդ մարթէր կարգի տեսչութեան ընդակից և ինքնակործան յոռութեամբք կալ մնալ անդրդուելի և զերծ՝ի պատակտմանց՝ որք զայլս՝ի քաղաքաց Հելլադայ յաձախ աւերեցին[3]։

Յաւելի և ես. Զարմանալի և այնու է միաբանութիւնդ այդ, զի կիսք՝ի քաղաքայնոց ընդ օրինօք կան, այլք աղատ։ Զի որպէս իմաստասէրքդ աթենացւոց ասեն, օրէնք ձեր ոչ իշխեն կանանց. և սոքա տիրապետելով արանց իւրեանց, վարվաղեն և քան զև զգեղծումն[4]։

Դատմնաքս ասէ. Պարտ էր իմաստասիրացդ գիտել, զի դատէրքդ մեր՝ի նոյն հրահանգս ուսուցեալ դաստիարակին նոմին խստութեամբ. սո-

[1] Թուկիդ. գիրք Ա. գլ. 18։ Քսենոֆ. յԱգես. էջ 651։

[2] Պղատ. Թուղթ 8. հատ. 3. էջ 354։

[3] Լիւս. յոլովմպ. էջ 521։

[4] Պղատ. յդ. օր. գիրք Է. հատ. 2. էջ 806։ Արիստոտ. յԼ. հատ. գիրք Բ. գլ. 9. հատ. 2. էջ 328։ Նոյն յդ. Ճարտ. գիրք Ա. գլ. 5. հատ. 2. էջ 52։

վորին հանգոյն նոցին 'ի նոյն կրթութիւնս. ոչ խնդրի 'ի նոցանէ այլ օժիտ հարմնութեան՝ բաց 'ի գանձուց առաքինութեան [1]։ Այրը լեալ, պարտին կրթել ընդ երկար ըղձիս իւրեանց նախ ընդ արս իւրեանց, ապա ընդ աւագանին։ Ցեսուչք 'ի վերայ բարուց նոցա հսկեն հանապազ [2], և հոգք ստրկաց և անտեսութեան 'ի նոսա են ապատան [3]։ Լիկուրգոս նախահոգ զգուշութեամբ արգել նոցա զամենայն պանծանս զարդուց [4]. և յառաջքան զամն նուազքան զյիսուն զգեստս ձոխ բաւական համարէր առ նոսա եղծանելոյ զամենայն զեղ [5], և մինչև ցայսժամանս արատութիւն բարուց նոցա վկայեալ էր յամենեցունց [6]։ Այս զնոսին իսկ իմաստասէրսդ հարց, թէ իցէ երբէք հնար՝ զի յաղգի ուր կանայք վերջացեալ իցեն յառաքինութենէ, անդ արք իցեն առաքինիք։

Կրկնեալ անդրէն ասեմ. Զի դստերք ձեր սովորին 'ի մանկութենէ 'ի հրահանգս դժնդակս. գովէ զայդ և Պղատոն. այլ պարսաւէ, զի յամուսնանալն դադարեն 'ի հրահանգաց։ Բանդի 'ի ձերում կարգի պետութեանդ պարտ էր կա-

1 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 227։ Յուստին. գիրք Գ. գլ. 3։

2 Հիսիւք. 'ի բառն Ἀρμόσυν.

3 Պղատ. յղ. օր. գիրք Ի. հտ. 2. էջ 806։

4 Հերակղ. պոնտ. յղ. քաջական. Նախնի Յունաց, հտ. 6. էջ 2823։

5 Պլուտ. 'ի Լիւս. հտ. 1. էջ 434։

6 Նոյն 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 49։ Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 228։

նանց ըստ օրինակի Սաբբոմատաց լինել միշտ կազմն 'ի յարձակել 'ի վերայ թշնամեաց և 'ի վանել զնոսա [1]։ Եւ նա ասէ ցիս. Մեք զգաստերս մեր ոչ վասն այլ իրիք հրահանգեմք, բայց զի սնդակազմք ի ցՀն մարմնով. և ոչ այլ ինչ առաքինութիւնս 'ի նոցանէ պահանջեմք, բայց ըզպատկանեալսն ազգի նոցա զնոցաղականս։ Եւ ընդէր ի ցՀ տալ զէնս 'ի ձեռս նոցա, զի բաւական են բաղուկք մեր 'ի պաշտպանել զնոսա։

Յայնժամ Փիլոտայ լուծեալ զլռութիւն, և զգնեազոյն բարբառով ասէ ցԴամոնաքս. Զանազի ամենայն ուրեքն ձեր 'ի պատերազմունին զգիտաւորութիւն, ոչ ապաքէն կարեւոր էր յանձախել ձեզ զթիւ պատերազմողաց։ Դամոնաքս ասէ. Եւ երբ 'ի պատերազմ. զիտեմ զբարուս մտոնեազրաց ձերոց [2], զի իմաստնագունին և մարդասիրագունին քան զամենայն օրէնադիրս զանողոբմազոյնդ զայդ և զանմտազոյն հանարին ունել զիտաւորութիւն։ Զանողոբմազոյն, եթէ կամիցնա յաւելժացուցանել Հայլադա զգինուորութիւն պաքեալ արեան ազգաց և ազանց և ծարաւի աշխարհակալութեան. և զանմտազոյն, եթէ այն էր նորա ուշ նպատակին. զի ամենևին հակառակք այնմ զտանին հնարքն 'ի նմանէ առաջարկեալք [3]։ Նոց ընդ մտաւեան զինուորական

[1] Պղատ. յղ. օր. գիրք Է. հա. 2. էջ 806։

[2] Նոյն անդ. գիրք Ա. հա. 2. էջ 630. գիրք Դ. էջ 705։

Արիստատ. յղ. հա. գիրք Բ. գլ. 9. հա. 2. էջ 331։

[3] Պղտրք. գիրք Զ. էջ 491։

հրահանգաց մերոց, և տեսցես զի հրամանք նո-
ցա ըստ գրոյն ոչ յայլ ինչ ունին զակնարկու-
թիւն, բայց 'ի յարդարել զմեզ մեծախոհս, և
'ի սանձահարել զփառամոլութիւն մեր։ Լաւ,
զի ապախտ առնեմք զնոքօք. այլ ոչ թէ այնու
վիցենոքա զիտաւորութեան մտացն Լիկուրգեայ
յայտնիչք։

Օ՛յ ո՛րպէս մարթէր մեծանալ ազգի, որոյ
քաջութիւն յամենայն կողմանց կաշկանդեալ է.
զի ընդ ծով արգելուն նմա օրէնք զնաւաստիս և
զնաւս [1], առանց որոց ոչ է հնար ընդարձակել
նմա զիշխանութիւնն, և ընդ ցամաք ոչ է նմա ա-
զատութիւն պաշարելոյ զամուրս սահմանակաց
ազգաց որ շուրջ բնակեալ են [2]։ Օ՛յ ոչ է օրէն
նմա հալածել զփախստեայ թշնամին, և առնուլ
զաւար նորա [3]. զի խափանեալ չտալ յաձախ
ընդ նմին ազգի պատերազմ [4], ստիպի փոխանակ-
կել ընդ զինուց զհնարս դաշանց խաղաղութեան.
և արգելեալ մի՛ նախ քան զլրումն լուանի չու
առնել և մի՛ յաւուրս ինչ տօնից պատերազմ [5],
զտանի ստէպ 'ի վտանգի՛ 'ի դերև ելանելոյ յառաջ-

1 Պլուտ. կարգադր. Լա-
կոն. հա. 2. էջ 239։

2 Երոդոտ. գիրք Թ. գլ.
69։ Պլուտ. առակ. Լակոն.
հա. 2. էջ 228 և 233։

3 Թուկիդ. գիրք Ե. գլ.
73։ Պաւսան. գիրք Դ. գլ.
8. էջ 300։ Պլուտ 'ի Լիկուրգ.
էջ 54։ Նոյն առակ. Լակոն.
հա. 2. էջ 228։ Եզեան. զան.
պատմ. գիրք Զ. գլ. 6։

4 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա.
1. էջ 47։ Պոզիեն. 'ի մար-
թանան, գիրք Ա. գլ. 16։

5 Երոդոտ. գիրք Զ. գլ.
106. գիրք Է. գլ. 206. գիրք
Թ. գլ. 11։ Թուկիդ. գիրք
Ե. գլ. 76։

արկեալ խորհրդոյն. և զի դարձեալ յետին չքաւորութիւն ոչ երբէք կարէ ձեռնարկել՝ի մեծամեծ պատերազմունս՝։ Զ աշխարհակալաց պարարատեաց ածու զերկիր մեր Զ իկուրդոս, այլ խաղաղասէր զինուորաց ցանկացողաց խաղաղութեան, եթէ ոչ որ զանդրդր նոցա վրդովիցէ. և պատերազմի, եթէ որ երբէք իշխիցէ աղմկել զայն։

Արինեալ անդրէն Փիլոտայ ասէ. Սակայն հարկ իսկ է աղգի պատերազմողի վաղ կամ՝ անգամն փոխել յաղգ աշխարհակալ. և եկեալ ի բոլոր իսկ վիպէն, զի յանդգաստիցդ՝ի վերայ ձեր եհաս փոխոխումն այն։ Ամբաստանիք վաղու ևս երինեալ՝ի մտի և ոչ երբէք՝ի բաց եղեալ զխորհուրդ ծառայեցուցանելոյ զարիգաձայիս[2] և զարգիացիս[3]։ Զ ուեմ զպատերազմունս ձեր ընդ մեսենիացիս, զի համարիք ունել առ այն պատասխանի *։

Զամենաքս ասէ. Ամբացի իսկ զի չէն առ մեզ տարեգիրքդ. այլ աւանդութիւնքն խառն՝ի խուռն ցուցանեն մեզ, զի յոլովք եղեն մեզ գժտութիւնքն ընդ աղգս մերձաւորս։ Զ այլ մեք արդեօք իցեմք լեալ նախայարձակք, անծանօթ է այն քեզ և ինձ իսկ գլխովին. այլ գիտեմ՝զի յառաջ քան

[1] Պոլիբ. գիրք Զ. էջ 493։
[2] Երոդոտ. գիրք Ա. գլ. 66։ Պաւսան. գիրք Գ. գլ. 3. էջ 210։
[3] Երոդոտ. անդ. գլ. 82։
Խոսիր. հանութ. հա. 2. էջ 227 և 231։ Պաւսան. գիրք Գ. գլ. 4. էջ 211. գլ. 7. էջ 219։
* Ի Խն դլուխ գրոցս։

զդարս զայսոսիկ մի՛ ի թագաւորաց մերոց պարտեալ զարգիսայիս, և իբրև նիզակակիցք մեր յորդորէին զնա առնուլ զքաղաք նոցա, և պատեհ առաջի կայր և յաղթութիւն առձեռն, նա պատասխանէ ետ և ասէ. Վաւա լեցի ինձ առնել զանիրաւութիւնդ զայդ. զի մեք՝ ի պահել զսահմանս տէրութեան մերոյ զէն առաք, և ոչ՝ ի յափշտակել զպետութիւն որ ոչ անկ է մեզ և ոչ միով իւիք իրաւամբք՝։

Կամիցես խելամուտ լինել զիստաւորութեան սահմանադրութեանս մերոյ. հայեաց՝ ի գործս մեր արդիս, և հաստատեա զայսոսիկ ընդ գործս ամենացուց։ Յաղթանակեցին Հայքք՝ ի վերայ Պարսից, բայց չև և վախճան եղև մարտին, այլ հանապազորդեր յաջողութեամբ, և Պասսանիան զօրավար պատերազմին զեղծաւ իշխանութեամբն։ Կոչեցաք զնա յետս, և յանդիմանութեամբ յանցանացն դատապարտեցաք՝ ի մահ զյաղթողն Պղատեայ։ Բայց ազգք դաշնաւորքք զայրացեալք ընդ գոռոզութիւն նորա՝ ա թենացուց զզօրավարութիւնն յանձնեցին, կապտելով զմեզ յիրաւանց զոր մինչև ցայժամ՝ ժառանգիաք, և որ նախիշխան՝ ի մեջ ազգաց Լեռնականաց կացուցանէրն զմեզ։ Գրգռեցան պատերազմողք մեր, և յամառեալ պնդեալ կամիին զինուք ինդրել զիրաւունսն. այլ մի՛ ի ծերունեաց

՝ Պլուտ. առ՝ակ. Լակոն. հա. 2. էջ 231։

առաջի արար նոցա՝ զի 'ի տարաշխարհիկ պատե-
բազմունս ասպականին բարք մեր [1], և նոյն հե-
տայն հանդարտեցին՝ լաւ համարեալ հրաժարել
'ի փառացն քան յառաքինութեանց։ Այս արդ
այսպիսի ինչ ի ցեղն աշխարհակալացն բարք։

Աթէնք կամակարութեամբ մերով հզօրագոյն
'ի պետութիւնս Աղլադայ կացեալ, յաճախեր
օր ըստ օրէ զաշխարհակալութիւս իւր. չեր ոք որ
զդէմ ունէր զօրութեան նորա, և չգոյր յագուրդ
փառամոլութեան նորա. տոմիղք նաւաց նորա
և բանակք զօրաց հարկանէին համարձակ զազգս
բարեկամս և զթշնամիս։ Թողեր Աղլադայ զհա-
ւասարութեանն [2] ասեր մեզ [3], այլ 'ի վտան-
գաւոր ժամանակին հարկ եղև մեզ չգնել զայն
յունական. և ապա իբրև դիւր եղև մեզ, ոչ ևս հա-
գայաք ընդ այն։ Յորդեր հեղեղատն, և մինչև
'ի հին նիզակակիցս մեր 'ի Պեղոպոնես հասա-
ներ. պատրաստէին նոքա քակել 'ի միաբանու-
թենէ մերմէ [5], և թերևս 'ի վերայ մեր դար-
ձուցանել զայն՝ եթէ վայրիկ մի ևս յամէաք զա-
ռաջս առնուլ ուղևորին։

Ոչիք ընդ ստուգութիւն իրացս երկբայել, զի
յառնն աթենացւոյ զամենայն առեալ պատմեմ,
'ի հաւատարմագոյն 'ի Յոյնս 'ի հմուտս և յան-

[1] Թուկիդ. գիրք Ա. գլ. 95։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 38։ Պլուտ. յԱրիստիդ. հատ. 1. էջ 333։

[2] Թուկիդ. անդ. գլ. 101։ գիրք Գ. գլ. 10։

[3] Նոյն. գիրք Ա. գլ. 71։

աչառ վիպագրէ, որ և ակամատեսս իրացն լեալ[1]։ Ղեւ Թերցիր 'ի Թուկիդիդեայ մատեանսն զնոսա կորնթացւոյ պատգամաւորին[2] և զԹագաւորին սպարտացւոյ[3], տեղեկացիր ամենայնի որ ինչ յայնժամ գործեցաք 'ի պահել զիրաւունս[4]։ Եւ դու քեզէն տուր զկրաւն՝ թէ իցէ 'ի փառասիրութենէ և 'ի նախանձուէ մերմէ պեղծանեսցես պատերազմն զրդեալ, որպէս Թերևս յետ ժամանակաց համարեսցի՝ հաւատարիմ լինելով վկայութեան աչառոցաց ոմանց վիպագրաց[5]։

Զգ որ 'ի բնէ և խորհրդով իսկ յամբ և դանդաղ է յառաջարկութիւն և 'ի կատարումն խորհրդոյց[6], և ոչ իշխէ ձեռնարկեալ 'ի գործ, այլ հարկ է բռնադատել զնա 'ի գէն[7], չէ նա փառամոլ։ Ղեմք մեք նախանձոտք, քան լիցի, և ամենայն իսկ համարիմք լինել։ այլ 'ի սրտմտութիւն դրդեցաք 'ի տեսանել զգաւառսն գեղեցիկս զորս ազատեալս էաք 'ի ձեռաց Պարսից, պատրաստեալս 'ի մնանել ընդ ձեռամբ միոյ 'ի քաղաքաց։

Յերկայն և 'ի բազմաղէտ ժարտին երկուստեք ծանուցք գործեցան զերիպակք և ահագին անդԹութիւնք։ Ղեմնացիք բազում անգամ զփոր ձառին, զի մեք չեմք ինչ ինասակարագոյնք 'ի

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 118. գիրք Ե. գլ. 56։
2 Նոյն, գիրք Ա. գլ. 68։
3 Նոյն անդ, գլ. 80։
4 Նոյն անդ, գլ. 139. գիրք Բ. գլ. 12։
5 Դիոն. սղեկ. Թուղթ առ. Պոմպ. հտ. 6. էջ 770։
6 Թուկիդ. անդ, գլ. 70, 118 և 120։
7 Նոյն անդ, գլ. 118. գիրք Ը. գլ. 96։

թշնամիս նոցա՝ դանդաղելով յօգուտ 'ի կիր արկանել զյաղթութիւնս [1]. և յաճախ ևս զարմացան ընդ փոյթ մեր 'ի վախճան առնել աղեսից յերկարաձգելոյ քան զանկնկալութիւն մեր [2]։ Ի դարձս իւրաքանչիւր 'ի պատերազմ, և յիւրաքանչիւր արշաւանս վիշտ էր մեզ դժոխարբեր ընդ վրդովումն խաղաղութեան մերոյ։ Վրեթէ միշտ յետինք էաք 'ի զէն առնուլ, և առաջինք 'ի բաց դնել զզէնս. 'ի յաղթելն՝ մատուցանէաք, և 'ի պարտելն՝ խնդրէաք զխաղաղութիւն [3]։

Վասն ուրեք 'ի յօժարութեանց աստի վերջացեալ զտաք. և երանի էր մեզ, եթէ ոչ հերձուածք սպրդեալք 'ի Սպարտա [4], և փոյթ հաձելոյ զաղգս նիզակակիցս, խափանէին զմեզ 'ի հանապազորդելոյ 'ի նոցանս 'ի սպառ. այլ այսոքիկ ևս քան զևս յաճախեցին յառնուլ քաղաքին ա-թենացւոց։ Վասն թացիք և թեբացիք և այլ ևս ազգք յորդորէին զմեզ հարթ յատակ առնել զքաղաքն, այլ մերժեցաք զնոսրատ նոցա [5]. զի ոչ եթէ զտունս նորա և զմեհեանս պարտ էր անդէնս դասոյզ առնել, այլ զմեծագին առին և զգանձս անբաւս՝ զոր [illegible] զօրավար նաւատորմին մեթերեալ 'ի մարտս պատերազմի, տակաւ 'ի

1 Թուկիդ. գիրք Ը. գլ. 96։
2 'Նոյն. գիրք Ե. գլ. 14։
3 'Նոյն. գիրք Դ. գլ. 15 և 17։ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 177։ Պաթաս. Աբեսատփ. 'ի խաղաղ. տող 664։
4 Թուկիդիդէս. գիրք Ե. գլ. 36։
5 Աթդոկ. յլ. խոբնրդ. մասն 2. էջ 18։ Քսենոփ. պատմ. Յունն. գիրք Բ. էջ 460։ Խոսկր. Յուստին. և այլք։

քաղաք մեր եմոյծ՝ *։ Պատուկ էի յայնժամ, և յիշեմ, զի խոհականագոյնք 'ի քաղաքացոց հառաջեցին 'ի տեսիլ ՀԱՍՏԱԿԱՐ ԹՇՆԱՄՈՅՆ. և 'ի բոլոր նոցա զարթուցեալ ատեան պարետացն, առաջարկեցին տարագրել 'ի բաց զդանձն՝ սղբիւրս անապառս հերձուածոց և մատաղուտ անկարգութեանց [2]։ Յաղթեաց կողմն Լուսանդրի. և սահմանեցաւ փոխել զսիրին և զարծաթ 'ի դրամս առ 'ի պէտս հասարակաց, և մի իւրաքանչիւրոց [3]։ Յորհուրդ անհանձար և ՀԱՍՏԱԿԱՐ. զի 'ի յարդել պետութեանն զարծաթ և զոսկի, հարկ էր ժողովրդեան տալ նոցա ընդ հուսկ ըզյարդ անապայման։

Ասեմ. Այլ ոչ դժուարին եղև նոցա զեղծուցանել զձեզ, զի որպէս Պղատոն ասէ, օրէնք ձեր կազմին զձեզ ընդդէմ վշտաց, այլ ոչ ընդդէմ հեշտութեան [4]։ Պատմեսքս ասէ. Լեթէ զեղծումն 'ի նեղքս յաշխարհին է, խմաստասիրութեան անկ է պարսպել զմեզ անտի. այլ ցորչափ արտաքոյ կայ, օրէնսդրին պարտք են հաստատել և ամրացնա. զի էն ինչ վատանդք, յորոց ամրագոյն նոքա պատսպարին որք չՀանապէնն զայնս։

1 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Բ. էջ 462։ Դիոդ. գիրք ԺԳ. էջ 225։

* Յեսայեայ մատեանս 'ի տեղեկութիւնան. թիւ Գ։

2 Ամենն գիրք Զ. էջ 233։ Պլուտ. յԱգիա, հտ. 1. էջ 797։ Նոյն կարգագր. Լակոն. հտ. 2. էջ 239։

3 Պլուտ. 'ի Լիւս. հտ. 1. էջ 442։ Եղիան. զան. պատմ. գիրք ԺԳ. գլ. 29։

4 Պլատ. յՊ. գիրք Ա. հտ. 2. էջ 634։

Կրկնեալ անդրէն ասեմ. Յա վասն զի պարգևն ՚ի Աստուածոյ ՚ի Իսանդրէ ընդունելի եղև ՚ի ժողովի, ապա ոչ որ եբերն եղև սկզբնատատաՀաս զեղծանելոյ բարուց Հերոց։ Պասմանաբս ասէ. Ի հեռուստ ևս յառաջ եկին յաբրիքն։ Պատերազմն Պարսից արկ զմեզ յերկիր, ուստի Իկուրգոս զգուշացուցանէրն զմեզ. զամ իբր յիսուն ընդդէմ առաջնոց մերոցս կարգաց ածաք զգօրս մեր ՚ի տար աշխարհս. անդ կարևոր կցորդութիւնք լինէին մեզ ընդ բնակիչս աշխարհացս, և բաբք մեր խառնեալ ընդ բարս օտար ազգաց ապականէին իբրև զՀուրս յստակս, որ անցանեն ՚ի ՀանՀիձս աղտաղտուկս և ժահահոտս։ Օ՚ օրսովարքք մեր պարտեալ ՚ի կաշառոյ այնոցիկ որոց պարտ էր նոցա յաղթել զնոսաք, օր ըստ օրէ խառարեցուցանէին զփառս իւրեանց և զմեր։ Յա թէպէտ պատժէաք զնոսա, այլ պատիւ և քաջութիւն յանցաւորացն նուազեցուցին զգարշումն ՚ի յանցանաց, և օրէնք ՚ի ներկիւղ ևեթ այնուհետև ազդէին։ Պերիկղէս բաղում անգամ գնեաց արծաթով զլուութիւն ոմանց յառաջնորդս մերոյ, որոց համբաւ մեծ փակէր զաչս մեր առ ՚ի չտեսանելոյ զգործս անթէնացս ՚։

Օ՚ հետ այսր պատերազմի որ ծածկեաց զմեզ փառաք, և ածանցոյց ՚ի մեզ զբողջոջս ախտից, տեսաք առանց քստմնելոյ, մանաւանդ թէ և յան-

՚։ Ներիսոտոս. յղ. խաղաղ. տողբեաց ՚ի Պերիկղ. հտ. 1. տող 621։ Թէոփր. առ. Պլու. էջ 164։

ձին բերաք զմոլեկան կիրս երկուց հզօր հանձնաբանն՝ որ ըստ ջարաշուք բախտի երևեցան 'ի միջի մերում. զ Լուսանդրեայ սահմ և զ'Ղեսիզղայոսէ, որ ձեռն արկին ամբառնալ զ Լպարտա 'ի ծագ իշխանութեան, մին առ 'ի տիրել նմա, և միւսն առ 'ի տիրել ընդ նմա։

Զ'Թենացիք բազում անգամ հարան ընդ ծով, քսանևեօթն ամաց պատերազմին 'ի միում ժամու եղև վախճան։ առան Զ'Թէնք, քաղաքք բազումք ազատեցան 'ի դժնդակ լծոյ, այլոց դատաւորք 'ի մէնջ կացեալ հարստահարէին զնոսա։ Զուռ ևեթ կայր Զ'Լաղդա, և ստիպէր նախիշխան զ Լպարտա խոստովանել. այս ամենայն էն գլխաւորագոյն տիպք նկարագրին Լուսանդրեայ պայծառ իշխանութեանն։

Զրկու ևեթ օրէնք էին քաղաքավարութեան նորա, զօրութիւն և դաւ. 'ի լինել դժտութեանց ինչ ընդ մեզ և ընդ արգիացիս զտեղւոջէ սահմանաց, նորա 'ի մէջ բերին զիրաւունս իւրեանց. իսկ Լուսանդրի եղեալ զձեռն 'ի սուսեր, ասէ. Զ'հաւասիկ իմ առ այդ պատասխանի [2]։ Զ-էր նմա քան զամենայն առաձս սիրելի, թէ զմանկտին վիրաւոր և զարս ստերգիմութեամբ պարտ է խարել [3]։ 'Զ'մին իրի զհարստահարութիւն և զրկանս 'ի կիր արկանէր, ուր չգայր ինչ երկիւղ.

[1] Պլուտ. 'ի Լիւս. հտ 1. էջ 439։

[2] Նոյն անդ, էջ 445։

[3] Նոյն անդ, էջ 437։ Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 239։

զխորամանկութիւն և զկեղծիս, ուր չիշխէին գործել ինչ համարձակ զօրութեամբ. նմին իսկ և զիւրաքար ըստ իրաց ժամանակին զանձն յերիւրեր։ Ի զրուցս նախարարաց Մոսիա համբերութեամբ տանէր անբերելի գոռոզութեան նոցա՝. և զառ 'ի պարսկաց կրեալ արհամարհանսն հուպ ընդ հուպ 'ի Հոյոնս թափէր։

Ի ծովակալել իւրում, եղծ ամենայն ուրեք զնշխանութիւն ռամկին, որպէս սովորութիւն էր սպարտացւոց *։ Պնդագոյն զհետ եղև այսմ, առ 'ի կացուցանել 'ի վերայ քաղաքաց զկամարարս իւր՝ որոց ոչ այլ ինչ վաստակք էին։ Ընմանութեամբ էր փոփոխութեանցս այսոցիկ առանց ուղխից արտասուաց և արեան գործել. այլ նա չիրդՀՀեր և ոչ ընդ մի ինչ առ 'ի մեծացուցանել զձեռասունս իւր և 'ի ջաղխել զթշնամիս. քանզի թշնամիս կոչէր զամենեսին, որ կուսակից կային ռամկին։ Աստուածութիւն նորա էր անողոքելի, և ահագին վրէժխնդրութիւն նորա. և ընդ հասակին յաւելեալ 'ի նմա դառնութեան մտաղին [2], ընդ դոյզն ինչ հակառակութիւն կամաց իւրոց

1 Պլուտ. 'ի Լիւս. հտ. 1. էջ 434։

* Քան զամենայն ինչ առաւել յամենախ պարծանս ըստ պարտացւոց սովորութիւնս այս. քանզի ռամկին զկեղծանեղով ամենայն ուրեք իշխանութեամբ իւրով, զբանային յամ քաղաքս հերձուածք, և յամենախեին պատերազմունք Յելլադա։

2 Արիստոտ. առաջարկ. յօդ. 30. հտ. 2. էջ 815։ Պլուտ. անդ.

վայրենանայր [1]։ Ի միումիտուագի արս ուրբ հաբիւր 'ի միլետացւոց անտի եւ սրախողխող առնել, որոց յերդումն նորա յուսացեալ՝ համարձակեալ էին 'ի զուրս ելանել յամուր ապաստանէն [2]։

Սպարտա համբերեալ լուութեամբ զժնդակ անզթութեանցն։ Իսկ Իւսանդրի 'ի միջի մերում կուսակիցք բաղումք, յորդորեալք 'ի խրատմբէր բարուց նորա [3], 'ի հնազանդութենէ հրամանաց աւագանւոյն և 'ի պայծառ յաղթութեանցն. և յաւելան վասն առատաձեռնութեան նորա և ահաւոր անուան բազմագոյնք յօտար ազգաց, և համարէր նա որպէս ինքնիշխան տէր Լակեդայ [4]։

Բայց թագաւոր և 'ի Հերակղեանց անտի ինքն սերեալ [5], չիշխեաց անձամբ ելանել 'ի զահ՝ որ կարի 'ի բացեայ կայր յիւրմէ, այլ կացոյց 'ի նման զԼեսիղայոս՝ զոր յոյժն սիրէր, և որում էին իրաւունք թագաւորելոյ։ Յուսացեալ թագաւորել ընդ անուամբ արքայի մանկան՝ հրապուրեաց զնա 'ի փառասիրութիւն, և արբեցոյց զնա 'ի յոյս կործանելոյ զայնաւանաւալ պետութիւնն Պարսից։ Հասին նոյնհետայն հրեշտակք 'ի քաղաքաց բազմաց, յորդորեալք 'ի նմանէ գաղտ, ինդրելին զԼեսիղայոս յառաջնորդութիւն բա-

1 Պլուտ. 'ի Իւսանդր.
1. հա. էջ 443։
2 Նոյն անդ, էջ 443։
3 Նոյն անդ, էջ 434։
4 Նոյն անդ, էջ 445։
5 Նոյն անդ, էջ 434։

նակին՝ զոր կաղմէին ընդդէմ խուժադուժ ազգաց։ Եւ վաղվաղակի չու արար Թագաւորն, և ընդ նմա ատեան երեմեից խորհրդականաց՝ որոց գլուխ էր ինքն Լիւսանդր [1]։

Հասին Յոպպիա, և ամենայն պետք ինքնիշխանք սակաւազօրք՝ զորս կացուցեալ էր Լիւսանդրի 'ի քաղաքս մերձաւորս, բռնաւորք խժդժագոյնք յոյժ քան զմեծազօր պետութեանսն, քանզի անգթութիւն բռնագոյն է 'ի տկարագոյնս, ողջունէին զինամակալ իւրեանց, ստրկաբար յերկիր Թաւալէին 'ի դրան նորա, ոչ ինչ աւելի քան զպատշաճ՝ մեծարանսն առնելով Թագաւորին։ Գեսիղայոս վրէժխնդիր իւրում իշխանութեան՝ վաղ խելամուտ լեալ, զի զառաջին ունելով տեղի՝ ղերկրորդի կրէր զդէմս, անշնորհութեամբ ինն ետ պատճառս դժկամակութեան բարեկամին։ Սակ նորա մնչելով 'ի վրէժխնդրութիւն՝ եկեալ 'ի Սպարտա [2], ետ 'ի մտի կատարել զխորհուրդն՝ երկնեալ յառաջագոյն, և որոյ օրինակ կատարմանն գտաւ յետ մահու նորա ընդ Թղթեանն՝ նկարագրեալ 'ի նմանէ [3]։

Հերակղեան ազգատոհմին 'ի բազում ցեղս բաժանեալ, երկուց ևեթ 'ի նոցանէ անկ է ժառանգութիւն Թագաւորութեան։ Սակ Լիւսանդրը խորհեցաւ հասարակաց առնել զկիրառնսն, ոչ միայն ամենայն ցեղից՝ այլ և սպարտացւոց առ

[1] Պլուտ. 'ի Լիւս. հմ. 1. էջ 446։
[2] Նոյն անդ. էջ 447։
[3] Նոյն անդ. էջ 450։

հասարակ։ Բաքինութեան սահմանեալ միջոցնակ՝ իշխել աղատ մարդկան, մարթէր Լուսանդրի մեծաւ համբաւովն հասանել յաւուր միում գերազոյն իշխանութեանն. և քանզի չկարէր նա բռնութեամբ համարձակ գործել զայս, 'ի հնարս խաբէութեան ապաստան եղև։

Լուր եղև զի կին մի 'ի Պոնտոս ծնեալ էր Արպողնէ որդի, և զվաւորք աղգին ունէին զՀոգ մենդեան մանկանն, և անուն նորա էր Ամղենոս։ Օտարտամ զրոյցն էառ Լուսանդր 'ի Ճահ կազմածոյ մեքենայիցն՝ որ տեւեաց զամն բաւական, ներգործեալ 'ի ձեռն արբանեկաց՝ առանց զանձն 'ի նեղքս արկանելոյ։ Կէսք 'ի նոցանէ հուշակէին զՀրաշալի ծնունդ մանկանն, այլք բաղոքէին պատգամն վաղեմիս զոլ 'ի պահեստի առ քուրմն 'ի Դեղփիս, յորս ոչ էր օրէն նոցա հուպ լինել, այլ պարտ էր ըստ ժամանակի առանդել զայնս որդւոյ աստուածոյն՝ որոյ բաղնացն էին պաշտօնեայք։

Մերձենային եղք նորանշան տեսարանին. Ամղենոս երևեցաւ Յաչլադա, և ամենայն ինչ կազմեալ պատրաստեալ էր, գնալ նմա 'ի Դեղփիս, և քրմացն կաշառելոց քննել յանդիման բազմութեան զազգ և զծնունդ նորա, և հարկաւորեալք որդի Արպողնի զնա խոստովանել՝ առանդել նմա զՀին գուշակութիւնն, զի ընթերցցի զայնսոիկ լու 'ի լու յոգնախուսմբ ժողովոյ, և միոյ 'ի պատգամաց անտի սահմանել՝ զի մի ևս այնուհետև

սպարտացիք յարքունի ցեղից կացուցին Թագաւորս, այլ առաքինիս 'ի քաղաքացոց։

Ի Ժամ կատարմանն մի 'ի զլխաւորաց գործոնեից սակացեալ 'ի չարեացն՝ որ զհետ գալոց էին, ձեռնթափ եղև 'ի գործոյն[1]։ Եւ Լիսանդրի յուսահատեալ, հնարեցաւ յինքն ձգել ըզզօրավարութիւն զնդաց ոմանց՝ որ խաղային 'ի Ֆիոլոտիա, և անկաւ 'ի միում ուրեք ձակատու[2]։ Եւ սահմանեցաք փառս յիշատակի նորա[3], զոր պարտ էր շինուցանել զփառսն. զի նա առաւել քան զամենեսին ինասակար գտաւ՝ զառանցուցեալ զմեզ 'ի չափոյից և յանընչասիրութենէ։

Զգեսիդայոս պատշաճագոյն ևս կարգաւ զհետ եղև հնարից նորա առ 'ի մեծանալ։ Եռեմ զարութիւնս նորա, որ Ագեսլաոս և որ Սպիտա և որ Ագիպատոս. բայց վտանգաւորագոյն գտաւ նա քան զԼիսանդր, զի զնոյն նորին մատնոյն հանձնարոյ յանձին բերելով առաքինագոյն ևս էր քան զնա, և հանգոյն նմին փառասիրելով ազատ էր 'ի յանձնապաստանութենէ և 'ի մնա-փառ պերճանաց։ Ղեկառ երբեք յանձն, զի կանգնեացեն իւր անդրի[4]. իսկ Լիսանդր ինքնին իւր անդրի եդ 'ի դեղփական մեհենին նուէր, և բագինս իւր եթող կանգնել, և զոհս մատուցանել. և շուայլեր պարգևս քերթողաց՝ որք բազ-

[1] Պլուտ. 'ի Լիս. հտ. 1. էջ 448։
[2] Նոյն անդ. էջ 449։
[3] Նոյն անդ. էջ 451։
[4] Քսենոփ. ՅԱգես. էջ 673։

մացուցանէին նեբրոդս զնմանէ, և զմի 'ի նոցանէ ընդ իւր շրջէցուցանէր՝ դիտել և հռչակել և ըզդոյզն ինչ գործ քաջութեան [1]։

Այրկաքանչիւր մեծացուցին զձեռաստունս իւրեանց, և ինքեանք կեցին 'ի վերջին չքաւորութեան, անմատոյցք 'ի զրգանաց 'ի սպառ [2]։ Այ երկոքին ևս առ 'ի ձգել յիւրեանս զզօրավարութիւն՝ քծնեցան վատութեամբ առ պարէտս, մինչև մատնել զիշխանութիւնն 'ի ձեռս նոցա։ Լիւսանդր յառնուլ զԹէնս յղեաց առ նոսա, և ասէ. Թացի աթենացւոց՝ զի դուք էք իշխանք պատերազմի և խաղաղութեան [3]։ Իսկ Գէսիզայոս յառնէր յաթոռոյ իւրմէ առաջի պարէտաց [4]։

Այրկաքանչիւր զթիկունս իւրեանց 'ի նոսա հատ արարեալ, լցին զմեզ ցնորիւք արբեցութեան. և անդադար անիրաւութեամբք և բռնութեամբք [5] յարուցին ընդդէմ մեր զԱպամինոնդաս, որ յաղթեալ Ճակատամարտին Լեւկտրայ և յազատութիւն զմեսենիացիս դարձուցեալ՝ հասոյց զմեզ յայս սահման ողբալի։ Որդուեալ սասանեցաւ իշխանութիւն մեր ընդ առաքինութիւնս [6]. և ոչ ևս ազգք ողբ յազատու-

1 Պլուտ 'ի Լիւսանդր, հտ. 1. էջ 443։

2 Նոյն անդ, էջ 434։ Նոյն 'ի Սիլլա, հտ. 1. էջ 476։

3 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Գ. էջ 460։

4 Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 597։

5 Խոսկր. յդ. խաղաղ. հտ. 1. էջ 411։ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 234։

6 Պոլիբ. գիրք Դ. էջ 344։ Պլուտ. 'ի Նումա. հտ. 1. էջ 78։

թիւն ցանկան դառնալ՝ դիմեն 'ի Լակեդեմոն, խնդրել զոք 'ի պատերազմողաց նորա առ 'ի խորտակել զշղթայս իւրեանց '։

Սակայն մատռ և զայս վերջին մեծարանս օրինաց մերոց. զի այլուր 'ի մեղկութենէ սրտի ըստանի ապականութիւն, իսկ առ մեզ սկիզբն ապականութեան եղեն կիրք մեծամեծք և հզօրք, փառամոլութիւն, վրէժխնդրութիւն, նախանձ բարձաձգութեան, և մոլեգին իղձք համբաւոյ։ Բազգուշութեամբ իմն զոգցես մատչին առ մեզ յառութիւնք. չև և արծաթքաղցութիւն յամենայն կարգս տարածեցաւ, և հրապոյրք հեշտութեան դեռ և զսակաւս ոմանս ապականեցին։ Տեսաք զբազումս յաւագանւոյն և 'ի զօրավարաց [2] նախանձայոյզս նախնի հրահանգաց, և 'ի քաղաքացոց ոչ սակաւս՝ որք առաքինութիւնս արժանիս բարեհաճան դարուցն ցուցին։

Օ՞ր օրինակ ազգք՝ որք 'ի մէջ սահմանաց երկուց պետութեանց բնակին՝ խաւն իմն յերկոցունցն բարբառոյ և 'ի բարուց բերեն զնոսա և զբարս, հանգոյն իմն նոցին սպարտացիքս 'ի մէջ սահմանաց առաքինութեան և յոռութեան կամք։ Ա՛յլ 'ի բազմանտանգ կայսն ոչ յամենայնէ, զգամք հանապազ զի զօրութիւն իմն անդիմակաց ձգէ զմեզ 'ի խորս անդնդոց։ Ա՛յս ա-

[1] Քսենոփ. յՀ. հաս. Լիկուրգ. էջ 58։ սպարտ. էջ 690։ Խոսկր. ՅԱրբիդ. էջ 36։ Պլուտ. 'ի դիրք Ա. էջ 443։

[2] Քսենոփ. պատմ. Յուն.

ամենի զարհուրիմ, զփոքր իրացն ևս ինձէն յան-
ձին բերելով։ Օ զինչ արդեօք ասեր Լեկուրգոս,
եթէ տեսաներ զի մի յաշակերտաց իւրոց նստեալ
ճառս յուզէ և խնդիրս 'ի նեղբս ածէ, վիճի և
ձևս ճարտասանականս 'ի կիր արկանէ։ Բաղ,
զի ես կարի յաճախեցի ընդ աթենացիս, ոչ ևս
եմ բնիկ սպարտացի՝ այլ օտարախորթ եմ։

ԳԼՈՒԽ ԾՎԲ.

Ուղղորդել Անաքարսեայ յԱրկադիա։

Լոի ցեցս աւուրց ինչ թողեալ արտասուօք ըզ-
Պատմնաքս, որ և ինքն արտասուակցորդ լիներ
մեզ, յուզի անկաք երթալ յԱրկադիա։ Տեսաք
նախ զԱքիլլեայ մեհեանն որ փակեալ կայ հա-
նապազ, և զան մատուցանել առ նովաւ զոհս
մանկտին նախ քան զհրահանգս մրցանացն 'ի
Պղատանիստ՝ զորոց ասացի։ Ընդդէմ ևս տեսաք
զսիւնն զեօթանեսին, զորս 'ի պատիւ եօթանց
մարտակաց ասեն վաղ ուրեմն կանգնեալ. ապա
զՊելլանա քաղաք, և ապա զԱրվինա՝ որ կայ
'ի մէջ սահմանաց Լակոնիոյ և Արկադիոյ։ Բել-
մինա քաղաք ամուր, զորմէ յաճախ մարտք եղեն
ընդ երկոսին ազգսն, և զոր շուրջանակի ալիք
Նէրոտայ և հոսանք աղբերաց 'ի մերձակայ փեղ-

։ Պաւս. յԱգիս, հա. 1. էջ. 806։

կից լերանցն իջեալք ոռոգանեն [1], կառուցեալ կայ առ կրճիւն որ ածէ 'ի Մեգաղուսալիս, որ հեռի է 'ի Լեվինայ ինանուն ասպարիզաւ, և 'ի Լակեդեմոնէ ասպարիզաւ իբր երեքարիւր և քառասուն։ Օրն զամենայն տեսարան զուարճալի առաջի կայր մեզ, մերթ ուղղիցն՝ որ սրընթաց խոխոջիւք հոսէին առ մեզ, և մերթ հեղասահ ալեացն Յորդանանի և Լիբեայ։

Բարկաղիա կրնա 'ի միջակետ աշխարհին Պեղոպոնեսեայ կայ, բարձրագոյն քան զամենայն գաւառս որ շուրջ զնովաւ կան [2], և բազում գահաւանդիւք սեպացեալ [3] յորոց են ոմանք բարձրաբերձք յոյժ, և գրեթէ ամենեքին լի երկոսիք վայրի և անտառախիտք։ Դարտտվայրքն ջրարբիք խիտ ընդ խիտ 'ի հոսանայ գետոց և վտակաց բաշխեալ, որոց ուրեք ուրեք առ յոյժ յորդութեանն Հանդարտեալ 'ի դիւրի, թափ անկանին ընդ խոխոմն խորինս, և ընդ աներևութեարակ անցս ձիգ գետահետեալ, ապա սաստկապէս 'ի դուրս յարձակեալ անդրէն 'ի վեր երևին [4]։

Բայց թէպէտ և բնակչաց երկրին բազում ձորս հատեալ է 'ի գնացս ջուրցն, չև ևս բաւէն վաստակքն։ Մերձ առ անդաստանս պտղալիցս տեսաք այլ՝ որք 'ի յաձախս ողողմանէ ջուրցն

[1] Լիւ. գիրք ԼԸ. գլ. 34։ Պաւսան. գիրք Գ. գլ. 21. էջ 263։

[2] Արիստոտ. առաջարկ. յօդ. 26. հտ. 2. էջ 806։

[3] Սպարթ. գիրք Ը. էջ 388։

[4] Արիստոտ. անդ։ Սպարթ. անդ, էջ 389։ Պաւսան. գիրք Ը. գլ. 7, 22, 23, 44 և 54։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 365։

դատապարտեալ կան յանապատղութիւն 'ի սպառ [1]։ Այս բերքս անդաստանացն են ցորեան և սկլարմ՝ տիքս առատ [2]. և Ճարակ անդէոց 'ի լիութիւն բաւականի բազմահոյլ հօտից և նախրաց։ Այն անդ և արօտք յուռթիքս, մանաւանդ 'ի բուտ ի՝ շուց և ձիոց, որոց աղնուագոյն աղգք են ՀԱՅ՝ կագիս [3]։

Զոր զսեռս ախտաբոյժ բանջարոց [4], բերկ՝ երկիրն զբերթէ և զամենայն աղգս ծառոց ծա՝ նօթից։ Զնակիսք աշխարհին, որ յուսումն նոցա անդադար պարապին [5], յոլովից 'ի նոցանէ այլ՝ աղգ տան անուանս [6]. բայց զիւրաքանչիւրն 'ի նոսա մայրն և եղևին [7], նոՃն [8], կասկեանին, կընՃնին [9], կաղամանին [10], և աղգ մայրուց՝ որոյ զբերեամ ժամանէ պտուղ [11]։ Զբեամ զայլս բազումս հանգոյն սոցին սովորականս, և զայլսն եւս որ 'ի զարդ պարտիզաց են պիտանի։ Զեսաք 'ի հովտի ուրեք եղևինս ստուարս և բարձունս յոյժ քան զօրէն սովորական, և զիտացաք զի 'ի բարեբաս՝

1 Պաւսան. գիրք Ը. գլ. 7. էջ 611։
2 Քսենոփ. պատմ. Յունն. գիրք Ե՝. էջ 552։
3 Սարաք. գիրք Ը. էջ 388։ Վարրոն, յլ. գեղջ. իրաց, գիրք Բ. գլ. 1. յօդ. 14։
4 Թէոփր. պատմ. բուսոց, գիրք Դ. գլ. 6. էջ 367։
5 Նոյն անդ, գիրք Դ գլ. 6. էջ 130. գլ. 7. էջ 138. գլ. 10. էջ 159։
6 Պլին. գիրք ԺԶ. գլ. 10. հա. 2. էջ 9։
7 Թէոփր. անդ, գիրք Դ. գլ. 10. էջ 159։
8 Պաւսան. անդ, գլ. 41. էջ 684։
9 Թէոփր. անդ, գլ. 6. էջ 130։
10 Նոյն անդ, գլ. 5. էջ 124։
11 Նոյն անդ, գլ. 12. էջ 190։ Պլին. գիրք ԺԴ. գլ. 5. հա. 1. էջ 686։

տուԹենէ տեղւոյն ուռնացեալ էին, պատասպարեալ՝ի բռնութենէ հողմոյ և՝ի բոցակիզ տապոյ արեգական [1]։ Ի միում ուրեք յանտառաց մերձ՝ի Վանտինէա ցուցին մեզ երիս աղջա կաղնեաց [2], զայնատերևն, զխոզկաղինն, և զերրորդն ևս որոյ կեղևք ԹեԹևք են յոյժ՝ անընկրկելի՝ի ջուր, որով ձկնորսացն պատեալ ցանցք՝ կան յերեսս ջրոյց անխորասոյզ, և նաւավարք կապեն զայն՝ի վերայ խարսխացն նշանակ [3]։

Արկադացիք համարին իւրեանց ծնօղ զերկիր, զի միշտ՝ի նմին գաւառի բնակեալ և ոչ երբեք ընդ լծով օտար աղգաց մնեալ են [4]։ Այս զրոյցք այսպէս ունին զնոցանէ, զի՝ի սկզբանէ լեռնաբնակք գոլով [5] յետոյ ուսան տակաւ կաղամել իւրեանց հիւղս, զգենուլ զվարազենի, և քան զնոտ վայրի որ փնասակար իսկ էր նոցա յաձախ՝ նախամեծար առնել զխոզկաղինն, որով և՝ի յետին ժամանակս իսկ կերակրէին [6]։ Հաւատսի ևս քան զայսոսիկ Թուի այն, զի և յետ ուսանելոյ նոցա զպէտս առ միմեանս բնակութեան՝ չև ևս կցորդութիւն կենաց քաղաքանայր նոցա։ Յուրտ և բքայորդոր նահանգ նոցա [7] կորովի ըզ-

[1] Թէոփր. պատմ. բուսոց. գիրք Դ. գլ. 1. էջ 283։

[2] Նոյն անդ, գիրք Գ. գլ. 9. էջ 146։

[3] Պաւսան. գիրք Ը. գլ. 12. էջ 623։

[4] Թուկիդ. գիրք Ա. գլ. 2։ Դիոնիսիոս. պատմ. Յուն. գիրք Է. էջ 618։ Պլուտարքայ. հոգեվար. հատ. 2. էջ 286։

[5] Պարսաբ. գիրք Ը. էջ 333։

[6] Պաւսան. անդ, գլ. 1. էջ 599։

[7] Արիստոտ. առաջարկ. յոգ. 26. հատ. 2. էջ 806։

մարմին նոցա գործէ և խիստ վշտով։ Զի ամենքեցոյ զդաժան բարս նոցա իմաստունք գերահանձարք 'ի մեր եղեալ կրթել զնոսա անընդեղական զգացմամբ, աղդեցին 'ի նոսա զախորժակս բանաստեղծութեան և երգոց և պարուց և տօնից։ Ընդ ուրեք երբէք կրթութեան մնաց զործեալ էր 'ի բարս յեղափոխութիւն այսպիսի արագ և սպառնալուն. և արգասիք նորա տեսին ցարդ, զի արկադացիք ոչ երբէք զադարեցին 'ի պարապեալ յարուեստսն՝ որոց զյեղափոխութիւնն զայն 'ի նախնիսն նոցա գործեալ էր։

Հանապազօր 'ի Ճաշի հրաւիրին յերգս, և յառնթ համարի նոցա չգիտել զերաժշտութիւն կամ անփոյթ առնել զնոսա. զի պարտ է նոցա ուսանել զայն 'ի մանկութենէ և 'ի տիս պատանեկութեանն պարապել յուսումն 'ի նոցն։ Լոտնս և 'ի բանակս արնգօր ուղղին քայլք ոտին և շրջանք '։ Լաւ աւագանւոյն գիտելով զի միայն արուեստքս այսոքիկ թոլիչք պահպանեն զազգն յազդեցութենէ նահանգին, ժողովեն ամի ամի զմանկտին աշակերտեալ, և տան նոցա յօրինել պարս առ 'ի փորձ զարգացման նոցա։ Լաւ զի ոչ տարապարտ են խնամք նոցա, կենդեթացուցն օրինակ զայն յայտ առնէ. քանզի ժողովուրդս այս սակաւաւոր բնակեալ 'ի հիւսիսակողմն Լաւկադիոյ 'ի լերանցամէջս 'ի խիստ նահանգի, չէառ

։ Պոլիբ. գիրք Դ. էջ 200։ ԱԹԷՆ. գիրք ԺԴ. էջ 626։

երբէք յանձն զՀետ երթալ այլոց. և եկայ այն-
պէս վայրագ և անագորոյն, զի սոսկումն է յիշել
զանուն նորա [1]։

Բարկագոյնք մարդասէրք են և բարերարք, օ-
րինապահք ասպնջականութեան, երկայնամիտք
յաշխատութիւնս, և յամառք մինչև 'ի սպառ
յառաջարկութիւնս՝ յանձն առեալ զնոչ և զը-
վանդ [2]։ Ի պատերազմունս յաճախ յաղթողք
գտան, միշտ փառաւորեալք։ Ի ժամանակի խա-
զաղութեան զինուորին օտար ազգաց անխտիր,
որպէս զի վարձկանել նոցա երբեմն հակառակ
կողմանց, և զէն առնուլ ընդդէմ միմեանց [3]։
Բայց թէպէտ և սովորեալք 'ի վարձկանութիւն,
վնէժինդիրք են յոյժ ազատութեան. որք և ըզ-
հետ ճակատամարտին Արերոնեայ, ուր Փիլիպ-
պոս արքայ մակեդոնացւոց կալաւ զյաղթութիւն,
չառին յանձն տալ յաղթականին զմեծարանաց
անունն զսպարապետութեան զօրացն Յունաց [4]։
Ի սկզբանէ կային ընդ թագաւորաց, ապա 'ի
բազում հասարակապետութիւնս բաժանեալ կա-
ցին, որոց ամենեցուն իրաւունք են յղելոյ հրեշ-
տակս յաշխարհաժողովս [5]։ Անտիոխիա և Տե-
գէա գլխաւորք են նիզակակցութեանն. և ահա-
ւորագոյն յոյժ լինէր նիզակակցութիւն նոցա,

1 Պոլիբ. գիրք Դ. էջ 291։
2 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Է. էջ 618։
3 Թուկիդ. գիրք Է. գլ. 57։ Հերոդոտ. առ Ամենեսոս, գիրք Ա. էջ 27։
4 Դիոդ. գիրք Ժէ. էջ 488։
5 Քսենոփ. անդ, գիրք Զ. էջ 602։

եթէ հանդուսանք էին զօրութիւնք նոցա. քան-
զի բազմանարդ է յոյժ աշխարհն, և ստրուկք ևս
իբրև երեսուն բիւրք էն 'ի նմա [1]։ Այլ իշխա-
նասիրութիւն սպառակտէ հանապազ զմեծամեծ
և զփոքրիկ պետութիւնս։ Յաւուրս մեր այնքան
յաճախեցին հերձուածք, մինչև առաջարկել հա-
մօրէն ազգին նոր ինն նիզակակցութիւն, որում ընդ
այլ օրէնս խցէ և այս, յանձն առնել բիւրուց ա-
ռանց զիշխանութեան սահմանելոյ զենաղաղութիւն
և զպատերազմ [2]։ Առաջարկութիւնս այս խափա-
նեալ 'ի նորոց խռովութեանց որ անտի դրդե-
ցան, ապա յետ Հակատամարտին Լեւկտրայ
հզօրագոյն ևս կալաւ հաստատութիւն։ Ապա-
մինոնդ առ 'ի կաշկանդել յամենայն կողմանց
զսպարտացիս՝ դարձուցեալ 'ի Մեսենիա զհին
բնակիչս երկրին, խրատ ետ արկադացւոց կոր-
ծանել զքաղաքս փոքրիկս անպատսպարս, և կա-
ռուցեալ քաղաք ամուր յելս սահմանաց Լակո-
նիոյ՝ անդր զբնակիչս նոցա փոխել։ Յա յաւել
տալ նոցա հազար այր 'ի նպաստ գործոյն, և ար-
կին վաղվաղակի զհիմունս Մեգաղուպոլեայ [3],
հնգետասան ամաւ նախ քան զհասանել մեր 'ի
Յունաստան։

Զարմացաք 'ի տեսանել զընդարձակութիւն

1 Թէոպ. առ Ամենեսի. էջ 372։
2 Դիոդոր. գիրք Զ. գլ. 20. էջ 271։
3 Դեմոսթ. յդ. վրէպ. հրիչս. էջ 295։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 372։
5 Պաւսան. գիրք Դ. գլ. 27. էջ 654. գիրք Թ. գլ. 14. 739։

շրջաբերութեան [1] և զարձրութիւն պարսպաց նորա ամենք աշտարակօքն [2]։ Ընդտին յայտմ ժամանակ խէթ արկանէր նա ի սպարտացիս. որում և 'ի բանից ինչ Աքիդամայ արքայի, 'ի խօսել նորա ընդ իս, հասու լեալ էի։ Որ և յետ ամաց ինչ դիմեալ պատերազմաւ 'ի վերայ նոցոյ գաղթականին, ուխտիւ դաշանց դարձաւ յետս [3]։

Այլոց գաղթեալքն 'ի սկզբան անդ պատաղեալ 'ի հոգս օրինադրութեան, հրաւիրեցին առ իւրեանս զՊղատոն՝ տալ զգիր օրինաց։ Հաճոյ թուեցաւ իմաստասիրին պատիւն մեծամեծար. բայց գիտացեալ 'ի պատգամաւորաց քաղաքին, և 'ի ձեռն միոյ յաշակերտացն իսկ զոր յղեաց անդր՝ տեղեկացեալ զի բնակիչք քաղաքին չառնուին յանձն զհաւասարութիւն ընչից, հրաժարեաց 'ի թախանձանաց նոցա [4]։

Լղիսոն զետ փոքրիկ բաժանէ զքաղաքն յերկուս մասունս. յերկոսին ևս կառուցեալ էին, և զեռ ևս կառուցանէին տունք և շինուածք հասարակաց։ Ի հիւսիսային մասին էր հրապարակ շքեղ շրջափակ 'ի կղեայ սիւնակաց, և շուրջանակի մեհեանք և կամարակապք էին։ Աւագի մեհենին Աքամաղդայ զեռ այն ինչ կանգնեալ էր

[1] Պղտրք. գիրք Բ. էջ 140. գիրք Ե. էջ 432։
[2] Պաւսան. գիրք Ը. գլ. 27. էջ 657։
[3] Դիոդ. գիրք ԺԴ. էջ 437։
[4] Պլատիկ. առ Դիոգ. լայ. երտ. գիրք Գ. յօդ. 23։ Պլուտ. 'ի Կղոտտ. հատ. 2. էջ 1126։ Եղիան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 42։

պատկեր Աստուծոյն պղնձի մեծամասնութիւն, երկոտասան ոտնաչափ ի բարձրութիւն։ Այլ էր այն նուիրեալ ի փիգաղացւոց անտի, որք մատաղիւք ձեռն տային ի պայծառութիւն նորոյ քաղաքին[1]։ Օնոյն նախանձ և իւրաքանչիւր որ բերէր. և մի ի կամարակապ գաւթացն յանուն կառուցողին իւրոյ կոչեցեալ էր Աբիսանդր[2]։

Ի հարաւային մասին տեսաք շինուած մեծ, ժողովարան բիւրուն՝ որոց յանձն էր հոգ կալեւոր իրաց ազգին[3]. և ի մեհենի ուրեք Աստուածկղեպեաց ցուցին կնախս անարգիս, զոր միոյ ուրուք ի հսկայիցն ասէին թէ էր ոսկերոտին այն[4]։

Յաձախսէին անդրիկ ի քաղաքին. և տեսաք մեք անդ Ձարտարս երկու աթենացիս զԼեփիսոդոտ և զԼսենոփոն, որ գործէին կիցս անդրեաց՝ յորում Աստանդր բազմեալ կայր յաթոռ, Աստուածոյս յաջմէ, և Աստեմիս պահպանիչ ի ձախմէ։ Այլ կիձն ի քարահատաց Պենտելեայ լերինն էր հատեալ, որ է մերձ Աթենս[5]։

Արթ էր ինձ յաւելուլ և այլ զարմանալիս. այլ ի Ձառս իրաց ուղևորութեան իմոյ ըստ ըզյոլովս ի մեհենաց, ի բագնաց, յանդրեաց և ի շիրմանց, որ ամենայն ուրեք ի քաղաքս և յա-

1 Պաւսան. գիրք Բ. գլ. 30. էջ 662։
2 Նոյն անդ. էջ 663։
3 Փանոփ. պատմ. Յուն. գիրք Ի. էջ 671։ Պաւսան. անդ. գլ. 32. էջ 666։
4 Պաւսան. անդ. էջ 667։
5 Նոյն անդ. գլ. 30. էջ 664

ւանս և յանմարդի խակ վայրս ընդ առաջ լինէին մեզ։ Աստուծոյ՝ի բայ և զաղմնագոյնս՝ի հրաշից և յառաստղեայ անտեղեաց, զորս երկարապատումս առնէին մեզ. զի ուղղորայ որ հարկաւորին երկայնամտել՝ի լուր այնոցիկ՝ պարտ է խնայել յընթերցողս, և խնամ տանել ձանձրութեան նոցա։ Ի զուր է նոցա դարձեալ ջնջել միաբանել զայլ և այլ առանդութիւնս զդից և զնախնի դիւցազանց. զի ջանք նոցա ոչ առ այլ ինչ էն պիտանի, բայց՝ի յաւելուլ զշփոթ խառն՝ի խուռն անհասանելի վիպացս։ Զ.յլ հասարակաբար և ենկատելի է, զի առ ոմանս յաղագս յայլ անուանս պաշտին դիք, և այլ ազգ արարողութեամբք մատչին նոցա զոհք, և պատկերք նոցա՝ի տիպս այլ և այլ զօրութեանց դրօշին։

Զ.յլ պարտ է ուղղորին զկայ առնուլ՝ի յիշատակարանս, յորս երևին ախորժակք և գիտութիւն կամ տգիտութիւն դարուն և նկարագրել զտենս, զի ոչ է մնրթ առ թշուառայեղց մարդիկ ըստ արժան բաւականին յաձախել պատկերս բերկրալիս և զուարթս։ Պարտ է դարձեալ առաջի առնել զկարծիս և զսովորութիւնս որ պիտանի են յօրինակ կամ առ՝ի խրատ, ուր ուրեք հարկ իսկ իցէ նմա թողուլ ընթերցողն խելամուտ լինել՝ի նոսա։ �ատի՝ի պատմել խմբամ, զի՝ի միում ուրեք անկեան Զ.րկագիոյ Լ.ն գեղասուն պաշտի իբր բարի՝, յորդորի ընթեր-

1 Պաւսան. գիրք Ը. գլ. 36. եջ 673։

ցօղն 'ի սէր կերպարանն Լ֊ին։ Լ֊ս 'ի պատմել ի֊մամ դարձեալ, զի անդ 'ի նմին գաւառի մնոլորութեամբ կրօնից զենան երբեմն մնարդիկ 'ի զոհ '*, հեծեսցէ ընթերցօղն տեսանելով զի յորպիսի իրս սոսկման ընելեաց արժանաւորս մեզ մնոլորութիւն զազգ, որ պաշտէն զաստուած ըստ առաջելազանցութեան բարի։ Լ֊ոգ այժմ 'ի կարգ պատմութեանս դառնամ։

Լ֊ղև 'ի արտի մերում շրջել շուրջ զԼ֊քկաղեաւ. և թուի աշխարհն կուտակութիւն իմն պատկերաց, յորս բնութիւնն 'ի տեսիլ ածէ զամենայն մեծութիւն և զսքեղնաւորութիւն մնաց իւրոց, հարեւանցի իմն կցորդեալ գնոսա՝ առանց խտրելոյ զտեսակ։ Լ֊ՀՆ հզօր որ 'ի վերայ մրշոյնենաւոր հիմանց կառոյց զահագին քարաժայռն անշրդիս, ընդ խաղ իմն գոգցես առ ստոր բոտովք նոցա կամ յանշրջելոս նկարէ արօտս չքնաղագեղս՝ ասպնջական զովացութեան և հանգստեան. և ամենայն ուրեք վայրք իբր 'ի գեղեցկանկար պատկերի, այլակերպութիւնք անակնկալք և եղանութիւնք զարմանալիք։

Ոչ դուն ուրեք ժամանեալք 'ի ծաղ երկնաբերձ լերին, կայաք 'ի գնին զեռալոյ շանթից 'ի ստորև. և դարձեալ կառուցեալք 'ի մէջ ամպոց,

1 Պաւսան գիրք Ը. գլ. 2. էջ 600։ Պորփիւր. յղ. ժուժկալ. գիրք Բ. յօդ. 27. էջ 150։

* Ցնացեն թերդրոցք զերա 1 ի կայսին 'ի նախաշաւիղ գրոցս 'ի սկզբանն, և յետկոյս այսր շրջրոցդ մասանի 'ի տեղեկութեան. Թիւ. Դ։

տեսանէաք զլոյս տուընջեան փոխեալ յանկարծ 'ի մայր պայծառութիւն, թանձրացեալ զօդս և մրրկեալ՝ գործելով տեսիլ չքնաղ և ահաւոր Մա-ռախուղն որ ուղեսօրէն սրընթաց քերեալ առ մեօք հոսէր 'ի խորաձորս, և ուղիք հոսանաց ջուրց որ ահագին խոխոջմամբ գահավիժէին յանդունդս, լերինք յաղթք ողբ ընդ մէջն շուրջ զմեօք մածեալ 'ի թուխս թուէին համակեալք, կռիւք ողբաձայնք հաւուց, և տխուր հնչմունք հողմոց և մայրեաց, զ[illegible]մպեզոկղեայ զժոխոն 'ի տեղւոջն կացուցանէին. և անդ էր տեսանել ոլ-կիան իմն օդային նսեմ և գորշ, որ զմեղասպար-տիչն հոգիս վարեալ մղէր ընդ դաշտս երկնի և ընդ մէջ ցան և ցիր գնդացն արփայնոց '։

Մեկնեալք 'ի Մեգալուպօլեայ, և անցեալ ընդ Մլիեոս գետ, հասաք 'ի Լիկոսոր առ ստո-րոտով Լիկեայ լերին որ և Ոլիմպոսն կոչի [2]։ Մնտառախիտ է վայրն և բազմերէ։ Յերեկորին աստնջականքն մեր զլեսացուցին զմեզ 'ի վեպս քաղաքին իւրեանց՝ որ հնագոյն է քան զամենայն քաղաքս երկրի, և լերինն ուր Մքանաղ մնաս, և մեհենին և տօնից աստուածոյն, և մանաւանդ քրմին նորա՝ որ ջուր յերաշտի ելուցանէ յերկ-նից [3]։ Պատմեցին մեզ զարձեալ զվրս եղենն, որ յառաջ քան զամն երկերիւր կենդանի էր՝ կե-

[1] Պլուտ. յդ. զդուշ. յ. 38. էջ 678։ բարին ընչ. հա. 2. էջ 830։
[2] Պաւսան. գիրք Ա. գլ. 38. էջ 678։
[3] Պաւսան. գիրք Ա. գլ.

ցեալ աւելի քան զամն Եօթին հարիւր, ըստ վի-
պաց նոցա. և էր տակաւ ինչ ամօք նախ քան զՔ-
ստրովական պատերազմն կալեալ, որ և յանուր
պարանոցին նորա զրոշմեալ կայր Թուականն. և
որպէս սրբազան ինն երէին այն պահէր 'ի բակ
մեհենին [1]։ Աբիատարեալ յածելոյ ինամ երբեմն
նմա զայս 'ի զէմն, այն զի և Յաթոդ երկարա-
կեաց ևս յոյժ համարի զեղջն [2], ոչ հաւանեցաւ.
և 'ի փոյթ կերպաւորութենէ սաղմին և յարագ
անմանել որթուց եղանց ետ ինձ 'ի միտ առնուլ,
զի չէ մարթ նոցա այնչափ երկարակեաց լինել [3]։

Ի վաղիւ անդր հասեալք 'ի կատար Լիկեայ
լերին՝ ուստի տեսանի Պղեղոպոնես գրեթէ առ
հասարակ [4], 'ի գնին կացաք խաղուց որ կատա-
րին 'ի պատիւ զեցն Պանայ, մերձ 'ի մեհեան
նորա և յանտառակին մեհենական [5]։ Լրբև մըբ-
ցանակք սահմանեցան, և ահա մանկտի մերկ
գէզբիկ բարձեալ՝ զհետ մտանէին որոց և դի-
պէին [6]։ Ցեսաք և զայլս զրք խարազանաբախ
առնէին զպատկերս աստուածոյն, փոխանակ զի
զանուն նորա կարդալով յորոս յօգնականու-

1 Պաւսան. գիրք Ը. գլ. 10. էջ 620։
2 Եսիոդ. առ Պլինիոսի, գիրք Ի. գլ. 48. էջ 402։
3 Ամբիատուս. պատմ. կենդան. գիրք Զ. գլ. 29. հտ. 1. էջ 833։ Պիւֆոն, պատմ. կենդան. հտ. 6. էջ 93։
4 Պաւսան. անդ. գլ. 38. էջ 679։
5 Նոյն անդ. էջ 678։
6 Լիւ. գիրք Ա. գլ. 5։ Պլուտ. 'ի Հաւոմուլոս, հտ. 1. էջ 31։
* Լոպէ բկաղքն հնամէկականք 'ի ասենից ասասի առին սկիզբն։

թիւն՝ չէր նոցա յաջողեալ պատրաստել ամիձն էրէոց լուսի 'ի ձաշ [1]։

Բայց արկաղացիք ոչ ինչ նուազ պաշտօնասէրք էին աստուածոյն, և յանձնէին նմա մեհեանս և զբօշեալս և բազինս և անտառս մեհենականս [2], և 'ի զրան զպատկեր նորա տպաւորին։ Այս ըզկենդանիս վնասակարս հնձոց հալածէ յորսս, և ընդ լերինս ախորժէ դեգերել [3], ուստի պահպանեալ զհօտս բազմահոյլս անդէոց ձարակաւորս 'ի դաշտի [4]. և եօթնտիոզ սրնգաւն, որոյ ինքն է գտակ, ածէ նուագս՝ հնչեցուցանելով շուրջանակի զհոլիտս [5]։

Պայծառագոյն էս 'ի սկզբանէ էր բաղդ աստուածոյն. զի 'ի միում ուրեք 'ի մեհենաց իւրոց, ուր զտիւ և զգիշեր վառի ճրագ, նախատապատմէր զհանդերձեալն [6]։ Արկաղացիք դեռ էս այնպէս համարին, թէ նա բաշխիցէ մարդկան 'ի կենցաղումս զպատիժ և զվարձս ըստ գործոց [7]. և դաւեն զնա հանդոյն եգիպտացւոց 'ի կարգ վեհագունից դիցն [8]. և անուանն իսկ զոր կոչեն նմա Պան, թուի նշանակել զլիխանուն թիւն նորա համատարած 'ի վերայ ամենայն նիւթականացս

1 Թէոկր. 'ի գեղջուն 7. տող 106։ Պարապ. անդ։
2 Պաւսան. բաղում ուրեք։
3 Թէոկր. 'ի գեղջուն 1. տող 123։ Կալլիմ. 'ի Դիան. տող 88։
4 Պինդ. օդիմպ. 6. տող 169։ Ովիդաս. գիրք Դ. էլեգ. 12։ Վիրգիլ. Ծաղկաքաղ, տող 33։ Նոյն մէջակ. տող 17։
5 Պաւսան. գիրք Ը. գլ. 36. էջ 674։
6 Նոյն անդ. գլ. 37. էջ 677։
7 Նոյն անդ.
8 Նոյն անդ. գլ. 31. էջ 664։

Էից՝։ Այլ այս ամենայն փառքն նորա ամփոփեալ էն այժմ՝ի խնամակալութիւն որսորդաց և հովուաց։

Ուր ինչ հեռի՝ի մերձենէ նորա է տաճար Աստուծոյ՝ի բակի ուրեք, ուր անհնարին եղև մեղ մտանել[2]։ Արեաց՝ի տեղի անդր էն և այլ վայրք դիցանուէրք, յորս ոչ է օրէն մտանել բայց միայն կանանց[3]։

Ընտի չոգաք՝ի Փիղադելֆիա, որ Երևի՝ի բացուստ՝ի ժայռ տեսացեալ[4]։ Ի հրապարակ քաղաքին է անդրի կարևոր՝ի վէպս արուեստից. ոտք նորա գրեթէ կիցք առ միմեանս, և բազուկք նորա՝ի կողն և՝ի բարձս յարեալք[5]։ Օ՛ի այսպէս դրոշէին երբեմն առ Յոյնս անդրիք[6], և ցարդ իսկ ըստ սմին օրինակի դրոշին Հայկազունս։ Այս էր այն պատկեր Աքեղեանի մարտկի, որ՝ի յիսնեբորդի երիրորդի և երրորդի և՝ի չորրորդի ողնմիաղին կալաւ մրցանակ*։ Ուստի յայտ է զի յառաջ քան զերկուս դարս անդրիսգործք բազումք դեռ ևս եգիպտական ախորժակաց առ հասարակ պատկառ կային**։

1 Մակրոբ. Սատուրն գիրք Ա. գլ. 22։

2 Պլուտ. խնդ. յուն. հա. 2. էջ 300։ Պաւսան. գիրք Ը. գլ. 38. էջ 679։ Հիպոնոս քերթ. յղ. սատերաբաչիս. էջ 426։

3 Պաւսան. անդ, գլ. 5. էջ 608. գլ. 10. էջ 618. գլ. 31. էջ 665։

4 Նոյն անդ, գլ. 39. էջ 681։

5 Նոյն անդ, գլ. 40. էջ 682։

6 Դիոդ. գիրք Դ. էջ 276։

* Ն. Բ. 572, 568, 564 ամբ։

** Գուցէն խնդրոյզ է Լ. գլուխ գրոցս՝ի Հաւս Սիկիոնի, ասացեալ յաղագս սկզբան և զարգացման քանդակագործութեան։

Յայժմ քաղաքին երեսուն ասպարիզաւ հեռի, է Լդայոս լեառն. և յահեկէ քառասուն ասպարիզաւ 'ի բացեայ Կոտիզիոս լեառն։ Յառաջնումն է անձաւն Պէմերեայ անուանեալ Սեաւ. զի անդ 'ի սուզ կորստեան Պերսեփոնեայ եկաց աստուածուհին առ Ժամանակ մի, 'ի Թուխս հանմակեալ[1]։ Ի վերայ բաղնին որ կայ 'ի մուտս այրին նուիրին ոչ զոհք, այլ պտուղք և մեղր և գեղին անթափ[2]։ Յաւանն որ 'ի վերայ միւոյ լերին կառուցեալ՝ կարկեալ կացաք 'ի տեսիլ մեհենին Լպողոնի, որ մի 'ի գեղեցկագոյն մեհենացն է 'ի Պեղոպոնես, ոչ միայն վասն ընտրութեան վիմաց յարկին և մարմարապատ որմոցն, այլ և ըստ պատշաճ համեմատութեան ամենայն մասանց նորա։ Դարտարապետին Լեթանուն քաւական է 'ի փառս շինուածոյն, զի եր նա ինքն Լկտինոս՝ որ յաւուրս Պերիկղեայ կառոյց Լթենս զգերահռչակ զԼթենասայ մեհեանն[3]։

Ի Փիգալեայ դարձ արարեալ, հասաք 'ի տենն որ կատարեցան 'ի Ճաշ մեծ, ստրկաց ընդ տեարսն սեղանակից լինելով. և գովեալ փառաւորեր անդ որ զք 'ի կոչնականացն շատակեր քան զայլսն լիներ[4]։

Ի վաղիւ անդր դարձեալ ընդ Լիկասոր, ան-

[1] Պաւսան. գիրք Ը. Դ. 42. էջ 685։
[2] Նոյն անդ. էջ 688։
[3] Նոյն անդ. գլ. 41. էջ 684։
[4] Ալթէն. գիրք Դ. գլ. 13. էջ 149։

ցաք ընդ Աղիեոս՝ ոչ ինչ հեռի 'ի Ցրապիզոնէ, և ազաք ընդ Երեկս 'ի Պորտիս՝ որոյ դաշտք ոռոգեալ պարարտանան 'ի համանուն նմին գետոյ։ Ամ զՀանապարհայն դէպ եղև մեզ տեսանել վաճառականս և ուղևորս բազումս, որ երթային Աղիփեր քաղաք փոքրիկ՝ զոր թողաք 'ի ձախս մէջ, ուր էր հանդէս վաճառաց. բայց չեղև մեզ փոյթ գնալ անդր 'ի զնին, զի բազում անգամ տեսեալ էր մեր զՀանդէսն, և զի դարձեալ հարկ էր մեզ սողոսկել ընդ կողս լերինն 'ի վերեալս շրջապատեալ 'ի վախից [1]։ Այլ 'ի հովիտ մի փոքրիկ մերձ 'ի Ցրապիզոն մուտացան առաջնորդք մեր ածել զմեզ, ուր ասեն թէ երկիրն ժայթքէ բոց առ Ողիմպիաս աղբերքն, որ ամ ընդ մէջ ցամաքէ։ Յաւելուն դարձեալ՝ անտի հսկայից ընդ դիս մղեալ զպատերազմն, և թէ 'ի յիշատակ մարտին բնակիչք տեղւոյն երբէք երբէք զոհս մրրկաց և փայլատականց և շանթից մատուցանեն [2]։

Հռչակաւոր է առ քերթողս զուլութիւն ջուրց Կիւդնոսի որ 'ի Կիլիկիա, և Մեղասայն 'ի Պամփիլիա. բայց Պորտինեայն արժանագոյն ևս էր գովեստից նոցա. զի ոչ 'ի ցուրտ դառնաշունչ պաղին ջուրք նորա, և ոչ տօթ սաստիկ եղկացուցանէ զբարեխառնութիւն նոցա [3]. և են յարբումն և 'ի լուացումն ախորժելիք։

1 Պողիբ. գիրք Դ. էջ 340։ Պաւս. գիրք Ը. գլ. 26. էջ 652։
2 Պաւսան. անդ, գլ. 29. էջ 660։
3 Նոյն անդ, գլ. 28. էջ 659։

Լ՝ ոչ զսովութեամբն եւ եթէ են նշանաւոր ջուրք Մարկադիոյ, այլ ի աղտնայ գետոյն՝ ընդ որ 'ի վաղիւ անդր անցաք՝ այնպէս վճիռք են ալիք և ականակիռք, զի զկնք 'ի վերայ երկրի ջուր գեղեցկագոյն քան զնա '[1]։ Բ. ափամիջն նորա, ուր կաղամնիւք ամբարձուղէշք առնեն հովանի, տեսաք զօրիորդս մերձակայ վայրաց զի պարէին շուրջ զդամենեաւ միով բոլորս ծաղկանց կախեալ զնրմանեն։ Ակնտիա մի յօրիորդաց անտի երգէր քնաբաւ զսեր Դամենեայ դստեր Աղտնի ընդ Եւկիպպեայ որդւոյ արքային պիսացւոց[2]։ Զգոյր որ Մարկադիա գեղեցիկ իբրև զԴամենե, և Հոլնս իբրև զԵւկիպպոս։ այլ զիմարդ մարթեր նուաձել զսիրտ՝ զոր Մարտեայ ընդ օրինաւք իւրովք գրաւեալ էր, և Պղտղնի էր յաջողեալ արիանել զնա ընդ իւրովքն։ Եւկիպպեայ զգիսակն յօրինեալ, և զգեցեալ հանդերձ թեթև, և կապարձ 'ի յուս, ծպտեալ հետամուտ լինի ընդ Դամենեայ այծիոյ և այծեմանց 'ի դաշտի։ Օրիորդին զհետ նորա արշաւելով. մոլորի ընդ նմա յանտառին։ Դողացիկ բոցք բաղձից նոցա ոչ ծածկեցան 'ի նախանձայոյզ աչաց Պղտղնի, և իրազեկ արար նա զընկերս Դամենեայ, որք նեստահար սպանին զհէքն Եւկիպպոս։ Ակնտիա

[1] Նոյն անդ գլ. 25. էջ 651։
[2] Նոյն անդ գլ. 20. էջ 638։ Փիլոսոփ. վարք Նպղոդոց։ գիրք Ա. գլ. 16. էջ 19։ Պարապ. Յեղեկանն Հռոմերի. 1. տող 14։ Գեոպոն. գիրք ԺԱ. գլ. 2։

յաւէլցը յերգն, զի չհանդուրժեալ յաւերժա-
հարսին յերեսաց աստուածոյն որ հալածէրն
զնա անդադար, և 'ի լուսոյն զոր բաշխէ նա մա-
հացուցց, աղաչեաց զերկիր ծածկել զինքն 'ի
ծոց իւր, և այլակերպեցաւ 'ի սարդենի *։

Ուղևորեալ 'ի վերը կոյս Լ՝ադմայ գետոյն, և
յահեկակողմն խոտորեալ, դէմ եդաք 'ի Փոս-
փիս [1], անցեալք ընդ գիւղս բազումս և ընդ ան-
տառն Սորմնի՝ ուր որպէս և յայլ անտառս Լ՝ա-
կադիոյ են արջք և կենդանք, և կրաչք մեծամեծք
յոյժ՝ յորոց 'ի պատճենիցն կազմեն քնարս [2]։

Փոսփիս մի 'ի վաղնջուց քաղաքացն որ 'ի Պե-
ղոպոնեսս, է 'ի մէջ սահմանաց Լ՝ակոնիոյ և Ե-
ղեսական գաւառին։ Թէպէտ բարձրաբերձ պա-
տըսպարէ զնա 'ի հիւսիսային հողմոյ. յարևելից
հոսէ Լ՝ուրիմանթ գետ բղխեալ 'ի Համանուն լեռ-
նէ, ուր վարազուց և եղջերուաց յաճախագոյն
են որսք [3]. և յարևմտից պատի զնովաւ վերՀ յոր
ուղղն գահավիժեալ հոսէ ընդ հարաւ, և եր-
թեալ խառնի Լ՝ուրիմանթ [4]։

Յերկու ինչ ակնկառոյց լեալ, զկայ առաք 'ի
զնին։ Օ՛յ է անդ գերեզման Լ՝ակմենի, որ 'ի
հնազանդութիւն հրամանաց Լ՝ուրիմարաւեայ հօր
իւրոյ՝ սպանեալ զԼ՝ուրիփիլ զնայր իւր, հալածէր

* Թէպատաղցիք վիՀեալ սպն-
դենն՝ թէ Դաֆնէ էր գուսաղ
պենէանի, և թէ փոխեցաւ
նա 'ի սարդենի յեղջ գետոյն։

1 Պաւսան. գիրք Ը. գլ. 23. էջ 644։

2 Նոյն անդ։

3 Հոմեր. Ոդիս. գիրք Զ. տող 103։

4 Պոլիբ. գիրք Դ. էջ 333։

ժամանակս բաղումն յերեսաց ժանտիցն դժոխոց, և զերեսարգին կեանս իւր զրաւեաց Թշուառու-թեամբ։ Լաւ առ գերեզմանաւ նորա, որ չիք այլ ինչ զարդ՝ բայց միայն նոճիք գնոսաւ բարձրաբերձք յոյժ [1], ցուցին մեզ անդաստան փոքրիկ և հիւղ մի անձուկ։ Ընդ յառաջ քան զդարս ինչ կեայր մի 'ի քաղաքայնոց աղքատ և առաքինի, Արգայոս անուն նորա։ Սա աներկիւղ և ազատ յամենայն բաղձանաց, զանխուլ 'ի մարդկանէ, և անդէտ իրաց որ առ նոսա ինչ գործին, մնակեր խաղաղութեամբ զկալուած իւր փոքրիկ՝ ոչ երբէք ելեալ ըստ սահմանս նորա։ Յաւելուրեալ ծերութեան նորա՝ հրեշտակք 'ի մեծազօր աղբայէն լուգայցոց 'ի Պիւգեայ կամ 'ի Կրեսեայ արձակեալք 'ի Պետրիս, հարցանել զդիսն՝ թէ զոյր ոք 'ի մահկանացուաց 'ի վերայ երկրի բարեբաստ քան զԹագաւորն, պատասխանեաց հարցուն. Արգայոս փոսիեցի [2]։

Ի Փոսիեայ գնալով 'ի Փենէոս, լուաք զի 'ի կողմանն յայնոսիկ բաղում աղգք էին ջուրց՝ որոց նոցանչան զօրութիւնք էին։ Ալիտորացիք ասէին՝ զի էր նոցա մի յաղբերաց, ուստի որք ըմպէին՝ գինեատեացք լինէին, ոչ ևս բերել կարելով հոտոց գինւոյն [3]։ Հեռագոյն ևս ընդ

[1] Պաւսան. գիրք Ը. գլ. 24. էջ 646։

[2] Նոյն անդ. էջ 647։ Պլին. գիրք Ի. գլ. 46. հա. 1։ Վաղ. Մաքս. գիրք Ի. գլ. 1։

[3] Եւ գրքս. առ Սոսեփ. 'ի բառն Ա՛ՀՀՍ. Նոյն առ Պլին. գիրք ԼԱ. գլ. 2. հա. 2։

հիւսիս 'ի մէջ լերանց մերձ 'ի Ամակրիս քաղաք է քարաժայռ բարձր յոյժ, ուստի հոսէ հանապազ ջուր դժնդակ՝ զՄտիքն կազմելով վտակ, ահարկու դից և մարդկան։ Անցեալ վտակս այս զեռայ ընդ հովիտն մեծ, ուր արկաղացիք գնան հաստատել զբանս իւրեանց երդմամբք անլուծանելիօք՝. այլ ոչ երբէք ըմպեն 'ի ջրոյ անտի՝ պապաքեալք 'ի ծարաւոյ, և ոչ հովիւ զհօտս իւր ածէ 'ի վտակ անդր յարբուցումն։ Օ՚ի թէպէտ և վճիտ է ջուրն և անհոտ, այլ անառնոց և մարդկան մահարար. որք անդէն յըմպելն անկանին մեռեալ։ Ասրձեալ և զհրահալս զամենայն լուծանէ, և խորտակէ զանօթս, բայց միայն յայնցանէ որ 'ի կՀղակաց անառնոց ոմանց լցեն կազմեալ՝։

Ի ժամանակին յայնմիկ ասպատակէին կենեթացիք զկողմանքն, և չկարացաք գնալ անդր ակամատես լինել իրացն. այլ զՀանապարհայն հանդիպեալ երկուց ոմանց հրեշտակաց՝ որք 'ի միջէ 'ի քաղաքաց Աքայիոյ գնային 'ի Փենեհոս, և որոց բազում անգամ ուղևորեալ էր առ վտակսն, զնոսա հարցափորձեալ 'ի միտ առաք, զի յոլովք 'ի զարմանալեաց ասասի գերահռչակեալ

[1] Երոդոտ. գիրք Զ. գլ. 74։ էջ. 121. գիրք Լ. գլ. 16. [2] Վիտրով. գիրք Ը. գլ. 3. էջ 163։ Վարր. առ Սոքին. գլ. 7։ Սենեկա ինգրն. գիրք Գ. գլ. 25։ Պլին. գիրք Ը. գլ. 103. հատ. 1. հատ. 2. էջ 543. գիրք ԼԱ. էջ 550։ Պաւսան. գիրք Ը. գլ. 18. էջ 635։ Եւստաթ. յԻլիականն Հոմերի, հատ. 1. էջ 301. հատ. 2. էջ 718։

աղբերն 'ի դոյն ինչ քնին իրացն անհետ լինէին։

Այլ աղբն բազմահմուտք էին, և բազում այլ ինչ հարցուածս մատուցաք նոցա։ Այս ցուցին մեզ ընդ արևելեան հիւսիսակողմն զՎիլլենէ լեառն, որ մեծավայելուչ 'ի մէջ լերանցն Արկադիոյ ամբառնայ [1], հնգետասան և կամ քսան ասպարէզ՝ ուղղորդ բարձրութիւն նորա յերկրէ [2]։ Ընդ միայն յՀելլադա գտանին սարիկք սպիտակք [3]։ Հուպ 'ի Վիլլենէ է Մանտինիաղ լեառն, որ առ ստորոտով նորա են քաղաքն և լիճ և գետ 'ի նոյն նորին անուանն յորմէ՝ Արաղաքն այն էր երբեմն մի յերևելեաց քաղաքացն Արկադիոյ [4]։ գետն ելանէ 'ի լճէն, անդ 'ի գաւառին սիլիզն առեալ՝ ապա անհետանայ, և Արգոլիս կատարէ զընթացսն այլազգ յորմէ՝ [5]։ Յաւուրս մեր Իփիկրատ զօրավարեալ աթենական բանակէն, խորհեցաւ խափանել զընթացս գետոյն։ որպէս զի ընկրկելով ջուրցն 'ի լիճ անդր, և անտի 'ի քաղաքն՝ զոր 'ի նանիր պաշարէրն, ստիպեսցին քաղաքացիք անձնատուր լինել։ Այլ յետ բազում աշխատութեանցն, հարկ եղև նահ ձեռնթափ լինել 'ի գործոյն [6]։

Աղբնջուց զոյր աւանդութիւն, զի զերեսս

1 Պաւսան։ գիրք Ը։ գլ։ 17։ էջ 633։
2 Սարաք։ գիրք Ը։ էջ 388։
3 Արիստոտ։ պատմ։ կենդան։ գիրք Թ։ գլ։ 19։ հատ։ 1։ էջ 934։
4 Պլինիոս։ գրքոյ։ 6։ տող 169։
5 Երոդոտ։ գիրք Զ։ գլ։ 76։ Դիոդ։ գիրք ԺԵ։ էջ 365։ Պաւսան։ գիրք Բ։ գլ։ 24։ էջ 166։
6 Սարաք։ անդ, էջ 389։

լինն ծածկէին երբեմն հաւք գիշակերք՝ փնտռտ-
կարք բնակչաց կողմանցն, և զի Հերակղէս 'ի
հարուածս նեռոյ սպառեաց զնոսա, կամ 'ի զօ-
ղանչ անօթոց հալածեաց 'ի բաց [1]։ Յաճախե-
ցին քաջութեամբն այնուիկ փառք գիւցազնին,
և լիցն եղև անուանի, և ոչ ևս դարձան անդր
հաւքն. այլ 'ի դրան ստիմփալեցւոց դեռ ևս նո-
ցայն գրոշմին տիպք* ։ Զայսոսիկ մեզ ուղեկից-
քըն մեր պատմեցին ։

Փենէոս թէպէտ և մի յերևելի քաղաքացն է
Արկադիոյ, այլ չէք ինչ 'ի նմա նշանաւոր. բայց
'ի մերձակայ դաշտին է մի 'ի հրաշակերտից վաղ-
ժամանակաց ։ Ոչ է մարթ գիտել հաւաստեաւ
զժամանակն, այլ յայտ է զի անդ ուրեմն յառա-
ջին դարս ուղիք՝ որք 'ի շրջակայ լերանցն անկա-
նին՝ հեղեղատեալ անդր, կործանեալ էին զնախ-
նին Փենէոս 'ի հիմանց [2]. և որպէս զի մի միւս
անգամ աղէտքն հասցեն՝ խորտաձոր 'ի դաշտին
գործեալ էր յիսուն սապարէզ յերկայնութիւն,
երեսուն ոտնաչափ 'ի խորութիւն, և ընդարձա-
կութիւն ըստ նմին համեմատութեան, յընդու-
նարան ջուրց Ալփեայ գետոյ և անձրևացն անսա-
վոր հեղեղատից ։ Ա՛ռ հատանէր ձորն յերկոսին

[1] Ապոլոն. Արգոն. գիրք Բ. տող 1057։ Պարսպ. անդ։ Պաւսան. գիրք Ը. գլ. 22. էջ 640։ Սարաբ. գիրք Ը. էջ 371։

* Զայսմանէ գացեն իբն. գրողք 'ի գիրս գրոշմածաց Սփանհէիմեայ, Վայլանի և այլոց հնախօսից։

[2] Պաւսան. գիրք Ը. գլ. 14. էջ 627։

վիհն, որ դեռ ևս կան առ ստորոտով լերանցն, ընդ որովք անցք սնեալ ի բացեալ են։

Այսի բան, թէ ձեռակերտիցս այսոցիկ Հերակղէս եղև կառուցող. ապաքէն պայծառապէս յոյժ քան զմարտ նորա ընդ առասպելեալ Հաւսն բռնեալս 'ի Ստիմփալ այսոքիկ 'ի վերս նր զոր-ծիցն նմա փառս։ Այլ այս ոչ ևս իցէ, լցաւ ձորն տակաւ յանիրոյթ առնելոյ բնակչաց երկրին [1]. և ապա 'ի սասանութէ երկրի իցան գետնափոր անցք ընդունարանք ջուրց դաշտին [2]։ Իսկ բնակչաց ապաստանեալ 'ի բլուրս, կաղմեցին կամուրջս փայտակերտս 'ի կցորդութիւն իրեարաց, և 'ի յորդել օր ըստ օրէ հեղեղաց ջուրցն, յաւելան կամուրջք [3]։

Յետ ժամանակաց [4] բացին ջուրք 'ի ներքոյ երկրի անցս ընդ փլատակսն որ խափանէին զնոսա, և սաստկապէս 'ի դուրս զեղեալ 'ի շտեմարանացն անտերևութից, արկին արհաւիրս ընդ բազում գաւառս։ Լադն, զորմէ ասացի, գետն այն զեղեցիկ և խաղաղ՝ որ 'ի խնուլ գետնափոր ջրանցիցն ցամաքեալ էր [5], յորդեաց ուղղօրէն զայրագին Յաւիեռս, և ընդ ալեաք Ամիեայ ողողեցաւ երկիր Ողիմպոյ [6]։ Ի Փենեոս կամուրջք կազմեալք 'ի կեղևեալ եղևնափայտից անփուտ

[1] Պաւսան. գիրք Ը. գլ. 14. էջ 628։

[2] Սարաք. գիրք Ը. էջ 389։

[3] Թէոփր. պատմ. բուսոց. գիրք Ե. գլ. 5. էջ 520։

[4] Նոյն անդ. գլ. 3. գլ. 1. էջ 117։

[5] Սարաք գիրք. Ա. էջ 60։

[6] Երատոսթ. առ Սարաքոսի. գիրք Ը. էջ 389։

կային, զոր և ցուցին մեզ բնակիչք ՝ երկրին ըզ-
զարմանալիսն։

Ի Փենեայ չոգաք ՝ի Կափիէս, ուր առ աղբերբ
ուրեք ցուցին մեզ սօսի հինաւուրց՝ որ յանուն
Ա՝ենեղաւեայ կոչէր։ Քանզի նորին իսկ Թա-
գաւորին ասէին տնկեալ զայն մինչ չև երթեալ
էր ՝ի պաշարումն Ցրովադայ [2]։ Ի միում ՝ի մեր-
ձակայ գիւղից տեսաք անտառ դիցանուէր և մե-
հեան նուիրեալ Հեղձուցիկն Ադրամեայ [3]։ Ա-
ծերունի ոմն պատկառելի եցոյց մեզ գնորանշան
մականուանն զպատճառս. քանզի մանկուց խա-
ղալով անդ, պարան զդրօշելոցն արկեալ՝ ձգէին
զայն, գոչելով առ միմեանս ընդ ծաղր. Հեղձու-
ցուք զաստուածուհին։ Յայն վայր մարդիկն որ
՝ի վերայ հասին՝ ծանրացասումն լեալ, սպանին
զմանկտին քարկոծ առնելով։ Ոչ զգիցն հա-
մարէին խնդրել զվրէժ, իսկ դիք զանմեղութենն
խնդրեցին զվրէժ։ Ոչն ՝ի վերայ մեր բարկու-
թիւն նոցա. և հրաման պատասխանւոյ խնդրեալ
ընկալաք, կանգնել շիրիմ եղկելեացն տարապարտ
սպանելոց, և ամի ամի կատարել հանդէս դամ-
բանական ՝ի պատիւ նոցա [4]։

Ա՝ յառաջ մատուցեալ՝ անցաք առ թմբաւ
մեծաւ, զոր բնակչաց Կափեայ կառուցեալ է

1 Թէոփր. գիրք Ե. գլ. 5. էջ 522։
2 Պաւսան. գիրք Ը. գլ. 23. էջ 643։
3 Կղեմ. Ալեքս. յորդ. առ հեթ. էջ 32։
4 Պաւսան. անդ։

ընդդէմ յորդոլթեան հեղեղատին և ընկն մեծի՝ որ են յերկրին Ողբոմենայ [1] : Ողբոմենն քաղաք 'ի վերայ լերին է կառուցեալ, և 'ի հարևանցի եղև մեզ տեսանել զայն : Ցեսաք մեք անդ հայելիս 'ի սևորակ քարէ՝ որ մերձ 'ի տեղն անդր հատանի [2] . և կալաք զմի յերկուց Ճանապարհացն որ գնան 'ի Մանտինէա [3] :

Առաջնորդք մեր զկայ առին առ բլրակաւ ուրեք, զոր սովոր են ցուցանել հիւրոց . և մանտիանեայիք ոմանք ոչք անդ շրջէին՝ ասեն ցմեզ . Լուեալ իսկ էցէ ձեր զՊանելոպայ և զվշտաց նորա և զարտասուաց, և մանաւանդ զտմուտսն սէր ժուժկալութենէն : Մինչ այր նորա 'ի տաբ աշխարհս պանդխտեր, նա ընդ տարփաւորս իւր սիրտքեր՝ որ ոչ մեկնէին 'ի նմանէ . և իբրև դարձաւ այր նորա Ողիսևս, արտաքսեաց զնա 'ի տանէ, և առտ կատարեաց նա զկեանս իւր . և ահա գերեզման նորա [4] : Նա իբրև զարմացեալ կայաք ընդ բանս նոցա, ասեն . Ա՛ւ ինչ նուազ զարմացուսն առաջի կայր ձեզ, եթէ ընդ միւս Ճանապարհն ուղևորիքք . զի է անդ 'ի զառ 'ի վայր բլրի միոջ մեհեան Արտեմեայ, ուր ամի ամի կատարին տօնք աստուածուհւոյն : Հատարակայ է մեհեանն ողբոմենացւոց և մանտինէացւոց . է

[1] Պաւսան. գիրք Բ. գլ. 23. էջ 642 :

[2] Պլին. գիրք Լէ. գլ. 7. հտ. 2. էջ 779 :

[3] Պաւսան. անդ, գլ. 12. էջ 624 :

[4] Նոյն անդ :

նոցա անդ քուրմ, և սոցա քրմուհի. և մինչև ցկեանս է պաշտօն քրմութեան։ Արկոցունցն և սաստկագոյն խստակրօնութեան պարտք 'ի վերայ կան, չելանել ումեք յայց, և 'ի բաղանեաց և 'ի կարի խակ պատշաճ բերկրութեանց կենցաղոյս հրաժարել. միայնակ կան ազատք յամենայն զբաղանաց, և ընդ օրինաք խիստ ժուժկալութեան կապեալ[1]։

Օ Մանտինէա վաղ ուրեմն բնակիչք չորից կամ հնգից շրջակայ գիւղից կանգնեցին[2]. և է անուանի բազմամարդութեամբն և մեծութիւնք, և արձանաքն ողք յաձախեն զպայծառութիւն նորա[3]։ Այն նորա անդաստանք բերրիք[4]. և անդրատին 'ի քաղաքէն մեկնին ձանապարհք բազումք, որ գնան 'ի գլխաւոր քաղաքս Արկադիոյ[5]. են և որ յԱրգոդիս ածեն, յորոց մին կոչի ձանապարհ սանդղոց. զի ընդ զառ 'ի վեր բարձուլերին հատեալ են մատունք սանդղոց առ հեշտի հետևակաց[6]։

Բնակչաց քաղաքիս ասեն հնարեալ զգիրկ ընդ խառն կռիւ 'ի հրահանգս մրցութեանց[7], և զի նոքա նախ զգեցան զգեստ զինուորութեան,

1 Պաւսան. գիրք Ը. գլ. 13. էջ 625։
2 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Ե. էջ 553։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 331։ Սորաբ. գիրք Ը. էջ 337։
3 Պաւսան. անդ, գլ. 9. էջ 616։
4 Քսենոփ. անդ, էջ 552։
5 Պաւսան. անդ, գլ. 10. էջ 618։
6 Նոյն անդ, գլ. 6. էջ 610։
7 Երմիպպ. առ Աթենէոս. գիրք Դ. գլ. 13. էջ 154։

և ազգ իմն զրահից՝ որ յանուանէ քաղաքին Նոցա մանտինէական կոչին [1]։ Աջակոյսիք հանս-ին նոքա յարկադացիս [2]. և 'ի պատերազմին Պարսից յետ Ճակատամարտին հասեալ Նոցա 'ի Պղատիէս, ստրջացան յոյժ. և անձամբ զանձինս պատուհասեալ, հետամուտ եղեն փախստական գնդի մոյ Պարսկաց մինչև 'ի Թեսաղիա. և 'ի դառնալ յերկիր իւրեանց՝ տարագրեցին զզօրագլուխս, փոխանակ զի յուլութեամբն Նոցա զբրկեցան 'ի փառաց պատերազմին [3]։ Այս 'ի պատերազմունս որ յետ այնորիկ գործեցան, զարհուրեին սպարտացիք 'ի թշնամութենէ Նոցա, և խնդային ընդ Նիշակակցութիւն Նոցա։ Այս որոց մերթ ընդ սպարտացիս և մերթ ընդ աթենացիս միաբանեալ և մերթ ընդ այլ ազգս՝ ընդարձակեալ էր զպետութիւն իւրեանց զրեթէ ընդ ամենայն դաւառն [5], չկարացին ապա միայնակ պահ ունել բնիկ սահմանացն։

Վակուիկ մի յառաջքան զ Լևկտրայ պատերազմն սպարտացիք պաշարեցին զՄանտինէա. և քանզի յերկարէր պաշարումն քաղաքին, դարձուցին յաղիսեայ պարիսպ՝ յորոց քաղաքն շրջաջապատեալ էր՝ զջուրս գետոյն որ հոսէրն առ նովաւ։ Կործանեցան պարիսպքն, և քաղաքն գրեթէ առհասարակ աւերեցաւ, և ցրուեցան բնա-

[1] Եփոր. առ Ամենէոսի, գիրք Դ. գլ. 13. էջ 154։
[2] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 336։
[3] Երոդոտ. գիրք Թ. գլ. 76։
[4] Դիոդ. անդ։
[5] Թուկիդ. գիրք Ե. գլ. 29։

կիւք նորա յազարակս՝ յորս երբեմն բնակէին [1]։ Յետ սակաւ ժամանակի Անտիոնէա կանգնեալ 'ի կործանմանէն վերատին փառօք, ոչ ամօթ համարեցաւ միաբանել ընդ Սպարտայ, և յառնել ընդդէմ Պատամինոնդայ՝ որոյ օգնականութեամբն դարձեալ էր յազատութիւն [2]։ Ի եղև նմա այնուհետև խաղաղութիւն յարտաքնոցն հինից կամ յառտնին հերձուածոց։ Այսպիսիք էին 'ի յետին ժամանակս յայսոսիկ իրք քաղաքաց Հելլադայ, մանաւանդ յորս գերագոյն իշխանութիւն 'ի ձեռս ռամկին էր։

Վանդի այս կարգ տեսչութեան եկաց միշտ 'ի Անտիոնէա, բայց նախնի օրէնսդիրքն յաւելին բարեկարգել զայն և զառաջս առնուլ զվտանգացն։ Քաղաքացոյց ամենեցուն անկ էր 'ի հասարակաց ժողովս տալ զվարկ, այլ սակաւուց օրէն էր հասանել աւագութեան [3]։ Եւ այլ ևս կարգք սահմանադրութեան նոցա այնու իմաստութեամբ յօրինեալ էին, զի մինչև ցարդ ընծային յօրինակ [4]։ Եւ այժմ ռամկապետք կամ հազարապետք ժողովրդեան ունին զյանձանձանս կարևոր իրաց աշխարհին, և անուանք նոցա յարձանագրութիւնս նախ քան զծերակուտին և զդա-

1 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Ե. էջ 552։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 331 և 336։ Պաւսան. գիրք Ը. գլ. 8. էջ 615։

2 Քսենոփ. անդ, գիրք Զ. էջ 602։ Պաւսան. անդ։

3 Արիստոտ. յդ. հաս. գիրք Զ. գլ. 4. հտ. 2. էջ 416։

4 Պոլիբ. գիրք Զ. էջ 487։ Եղիսան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 22։

տաւորացն դրոշմին անուանս [1]։

Նմանեաք 'ի Մանտինէա արկաղացի զոմն Կնտիոքոս անուն, որ յառաջ քան զամս ինչ պատգամաւոր երթեալ էր ընդ Հրեշտակն՝ զորս բազումք 'ի քաղաքաց Լակեդայ յղեցին առ թագաւորն Պարսից, վիճել յանդիմանն նորա 'ի խրն զիր իւրաքանչիւր օգտին։ Կնտիոքոս խօսեցաւ 'ի զիմաց համազգեացն, և չէղև լսելի. և 'ի դառնալն իւրում այսրէն, զայս ինչ յատենի բիւրուն ասաց. Տեսի 'ի դրան Քրտաշիսի ամբոխ հացաբարաց և խահակերաց և մատուռակաց և բարապանաց. խնդրեցի զնուռոս որ կարող լցէն զդէմ ունել մերոցն, և ոչ զոք գտի. իսկ որ ինչ զմեծութեանց նորա համբաւին, մնափառ պերճանք են. և վկայ գերահռչակեալ սօսն ոսկի, զի և Ճպռան միում չառնէ նա հովանի [2]։

Ի Մանտինեայ յուղղ անկաք 'ի Տեգէա. յաջմէ Մենաղ լեառն, և 'ի ձախմէ էր անտառ մեծ [3]. 'ի դաշտին որ 'ի միջի սոցա՝ մղեցաւ Ճակատամարտն, յորում Լակեդայնոցդ կանգնեալ զյաղթութիւն՝ զբաւեաց զկեանսն։ Լդան նմա անդ արձանք կրկին, ախոյեան [4] և շիրիմ [5] մերձ առ միմեանս, խնամատարութեան զոզցես զետեղեալ զնոսա։

Շերիմն Լակամիոնդայ է սիւն լոկ, և զնմանէ

1 Թուկիդ. գիրք Ե. գլ. 47։ 11. էջ 620։
2 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Է. էջ 621։
3 Պաւսան. գիրք Ը. գլ.
4 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 396։
5 Պաւսան. անդ. էջ 622։

սասպար նորա կախեալ. այն զոր յաՃախ տեսեալ էր իմ 'ի սենեկին մերձ առ մահիՃն զոլմնվ 'ի վերայ աթոռոյն, ուր քաջազնն սովոր էր բաղմել։ Բ. յս ամենայն յանկարծ 'ի միտս իմ նկարեալ ընդ առաքինութիւնս նորա և ընդ բարութիւնս, և յիշելով զՀանՃարեղ բանս նորա՝ որոց ուրեք ականջալուր լեալ էի, և զժպիտսն՝ որոց այլուր ակամատես լեալ, և բիւր հանգամանս՝ որոց յիշատակաւն ախորժեն Ճարակել ցաւք, յայտսիկ և զդժոխքմբերն յաւելեալ տեսութիւն՝ զի առնն մեծի ոսկերոտին և եթ ցամաք գոյր 'ի միջի, որ ընդ ոտիւք իմովք կայր, և տակաւ ծախէր զայն երկիր, այնպէս յուզեցան զուՃք իմ, և 'ի փղձուկ հարեալ խանդաղատեցայ, զի բանի 'ի բաց տարան զիս 'ի գերեզմանէն՝ յոր ոչ հանդուրժէի նայել, և ոչ մերկնել 'ի նմանէ։ Զի դեռ դիւրագրգռել էի յայնժամ, որ արդ ոչ ևս եմ; 'ի տկարութենէ բանիցս իսկ 'ի միտ առնում զայս։

Բ. յլ աստանօր իցէ թէ կարիցեմ ինձ 'ի սիրփանս յաւելուլ նշոյլ ինչ 'ի պայծառութիւն փառաց մեծի առնն։ Բ. աղաքք երկք վիՃին ընդ միմեանս զչարաշուք պարծանաց ծննդեան զօրականին, որ զմահաւորեթ հարուածն ետ նմա։ Բ. թենացիք համարին զԿոտիլոս որդի Բ. սենեսիոնի, և այսպէս Լ. սիրանորի ետուն 'ի պատկերսն նկարել։ Բ. ամտիսենացիք համարին զԲաբ-

1 Պաս. գիրք Ը. գլ. 11. էջ 621. գիրք Թ. գլ. 15. էջ 741։

բիոն զմի 'ի քաղաքայնոց իւրեանց [1]. իսկ լակեդեմոնացիք զՊնտիկրատ սպարտացի, որում և պատիւս սահմանեցին և Թողութիւնս հարկաց, և զաւակի նորա յետ նորա [2], զարհաւիրսն յետ բեռաց Լպամինոնդայ առաւելագնց պարգևօքն յայտ արարեալ։

Տեգէա ոչ ինչ աւելի հեռի է 'ի Մանտինեայ քան զասպարէզս հարիւր։ Սոքա երկոքեան նախանձորդք և թշնամիք միմեանց մերձաւորութեամբն [3], բազում և բազմաղէտ պատերազմունս ետուն ընդ միմեանս [4]. և 'ի պառակտել ազգաց 'ի պատերազմունս, գրեթէ միշտ ընդ հակառակ կողմանս միաբանեցին [5]։ Ի Պղատեայ Ճակատամարտին, յորում վախճան եղև պատերազմին Յունաց ընդ Պարսս, տեգէացիք որ էին հազար և հինգհարիւր այր՝ [6] վիճեցան ընդ աթենացիս վասն զօրավարութեան միոյ 'ի թևոց յունական բանակին [7]. և թէպէտ չյաջողեաց ունել նոցա զայն, այլ պայծառ քաջութեամբքն ցուցան այնմ արժանի [8]։

Քաղաքք իւրաքանչիւր Լչլադայ ունին զոք 'ի դից առանձինն իւրեանց խնամակալ. և տեգէացւոց քաղաքին խնամակալ է Աղէական Ա-

1 Պլուտան. գիրք Ը. գլ. 11. էջ 621։
2 Պլուտ. ՅԱգես. հտ. 1. էջ 616։
3 Թուկիդ. գիրք Ե. գլ. 62 և 65։
4 Նոյն. գիրք Դ. էջ 134։
5 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 391։
6 Երոդոտ. գիրք Թ. գլ. 28 և 29։
7 Նոյն անդ. գլ. 26։
8 Նոյն անդ. գլ. 70։

թէնաս։ Բ.ռաջին մեհեան նորա ամօք ինչ յե-
տոյ քան զպեղոպոնեսական պատերազմն այրե-
ցաւ, և վերստին կանգնեցին նոնա մեհեան Ձար-
տարապետութեամբ և վերակացութեամբ Սկո-
պայ պարոսացւոյ, որոյ անդրիք բազումք են հրա-
շակերտք։ Որ զշուրջանակի սիւնս տաճարին յո-
նական կարգաւ Ձարտարապետեաց, և 'ի կա-
տար Ձակատուն քանդակեաց զԿաղիդոնեան վա-
բաղուն զորս, յորում կերպարանք բազումք են
երևելիք, որպէս Հերակղեայն, Թեսէոսին,
Պիրիթովայն, Կաստորին, այլովքն հանդերձ։
Եւ 'ի կատար յետակողման Ձակատուն յաւել
'ի զարդ զմեհնամարտն Բ.ելլեայ ընդ Ցելեփեայ։
Յերիս խմբարանս բաժանեն զմեհեանն կրկին
կարգք դորացի սեանց, և զնոքօք այլ կարգ կորին-
թականաց ամբարձեալ ցառաստաղ տաճարին՝ 'ի
վեր ունին զյարկն [1]։

Յորմն տաճարին կախեալ կան շղթայք, զորս
սպարտացւոյ 'ի միում ուրեք 'ի վաղնջուց պատե-
բազմացն պատրաստեալ էր 'ի կապանս տեգէա-
ցւոց, և որովք ապա ինքեանք կապեցան [2]։ Պատ-
մեն թէ 'ի պատերազմին յայնմիկ կանայք տե-
գէացւոց 'ի դարան մտեալ՝ անկան 'ի վերայ թըշ-
նամեաց, և կանգնեցին զյաղթութիւն։ Եւ Ա՛ար-
պեստա կին մի այրի այնպէս արիաբար անդանօր
շահատակեաց, զի դեռ և ս սպառազինութիւն նորա

[1] Պաւսան. գիրք Ը. գլ. 45. էջ 693։
[2] Երոդոտ. գիրք Ա. գլ. 66։

պահի 'ի մեհենին [1]։ Մերձ առ նոին են վրիժակը և մարթ կաղնդոնեան վարազուն՝ առարամանն զեզանաոյն Բյուզանդեայ տեգեսացոյ օրիորդին, որ զնախկին հարուածն ետ վայրագ գազանին [2]։ Տեսաք ապա և զառաջնին իսկ պղնձի, զոր տեգեսցիքը 'ի Պղատեայ Ճակատամարտին բարձին յասպասանեալ զօրավարին Պարսից [3]։ Բ։ աթոռս այսոքիկ մնափառ պարծանք ազգաց, է ուրեք՝ զի և յորդորք են նախանձու քաջութեան։

Ի տաճարի աստ, որ գեղեցկագոյնն է քան զամենայն մեհեանս որ 'ի Պեղոպոնես [4], սպասաւորէ մի յօրիորդաց, որ ընդ ժամանել յարքունս՝ հրաժարէ 'ի քրմութենէ [5]։

Տեսաք մեք և այլ մեհեան, ուր մի անգամ 'ի տարւոջ մտանէ քուրմն [6]. և սիւնս կրկին մեծամեծս 'ի հրապարակի, 'ի վերայ միոյն անդրիք օրէնդրացն տեգեսացոյ կանգնեալ, և 'ի վերայ միւսոյն անդրի հեծեալ գուպարայաղթ նահատակի՝ որոյ 'ի ձիարշաւս ողիմպիական խաղուց կալեալ էր զմրցանակն [7]։ Բայց թէպէտ և զնոյն պատիւ սմա և օրէնդրացն սահմանէցին տեգեսցիք, այլ 'ի դէպ է կարծել՝ զի ոչ 'ի նոյն մեծարանս ունէին զնոսա։

1 Պաւսան. գիրք Ը. գլ. 47. էջ 693։
էջ 695՝ գլ. 47. էջ 697։
2 Նոյն անդ. գլ. 45. 46 և 47։
3 Երոդոտ. գիրք Թ. գլ. 70։
4 Պաւսան. անդ. գլ. 45.
5 Նոյն անդ. գլ. 47. էջ 695։
6 Նոյն անդ. գլ. 48. էջ 696։
7 Նոյն անդ։

ԳԼՈՒԽ ԾԳ.

Ուղղորդել Անաբարեայ Արքդողիս։

Ի ՏԵԳԵԱՑ մնաք Արքդողիս ընդ կապանս բարձրաբերձ լերանց՝։ Այլ մերձ՝ի ծովեղը տեսաք զլինն Լերնա, երբեմն որք անձնուն վիշապին զոր Հերակղէս յաղթահարեաց։ Ինտի յուղի անկաք զնալ Արքդոս ընդ արօտ գեղեցիկ[2]։

Արքդողիս հանգոյն Արկադիոյ հատանի՝ի բրբրոց և՝ի լերանց, որ գործեն՝ի միջի հովիտս և դաշտս պտղաբերս։ Ել և ընդ անապարոյր զանազանութիւնս զարմանալաւք, այլ ստանօր այլ իմն բերկրութիւն էր մեզ. զի՝ի դաւառս յայս եղեն խանձարուրք Յունաց. քանզի սա եղև նախկին ասպնջական գաղթականացն օտարաց, որ եկին հաստատել անդ քաղաքական կարգս[3]։ Ինդ գործեցան երևելագոյնք յանցից, որք զվաղընջուց տարեգիրս Այլազգայ պանծացուցանեն. անդ եկաց Ինաքոս, տալով զանուն իւր գետոյն որ ոռոգէ զսահմանս Արքդոսի. և անդ կեցին Դանաուս, Ինպերմնեստրա, Լինկէոս, Ազկմէոն, Պերսէոս, Միթիտրիոն, Պեղոպս, Տրէոս,

[1] Պաւսան. գիրք Ը. գլ. 6. գումեն գրչագիր Արքդոսի։ էջ 610։

[2] Ֆուրմոն, Ճանապարհորդ.

[3] Դիոդ. գիրք Ա. գլ. 24։

Թովեստ, Գամաղիէլն, և որ այլ ևս արք առագք հռչակաւորք։

Ընդունաւք նոցա յաշխարհս պայծառացեալք 'ի զիրս քերթողաց, և ստէպ հնչեցեալք 'ի տեսարանս, առաւելագոյն ազգէն պատկառանս 'ի տօնսն և 'ի յիշատակարանս նուիրեալս նոցա։ Տեսիլ վայրացն մերձեցուցանէ զժամանակս, ըստ կեղծիսն արդիւնացուցանէ, և կենդանացուցանէ զանցեալս։ Զոր յայլոց յէից։ ՅԱրգոս յաւերակս ուրեմն ներքնատան, ուր Գլրիսեայ արքայի ասէն արգելեալ զԱնանայ դուստր իւր՝, Թուէր ինձ լսել զողբս նորա։ Զա Նանապարհաւ Լրմիոնի 'ի Տրեղէն Թուէր ինձ տեսանել զԹեսէոս բառնալով զվէմն լեռնաձև, ընդ որով աւանդեալ կայ ինն սուսերն և այլ ևս նշանակք՝ որովք պարտ էր նոմա ծանօթս տալ հօրն[2]։ Պատրանքս այսոքիկ են հարկք մեծարանաց՝ անկաւորք իրաց հռչակաւորաց, և յաղուրդ ցնորից մնաց՝ որ բառզումՙ այն է զի նարակ խնդրէ քան փաստս բառնականս։

Արգոս կառուցեալ մերձ 'ի բլուր մի՛, յորոյ վերայ միջնաբերդն կայ[3], է մի 'ի հնագոյն քաղաքաց Լիւդայ[4]։ Ընդստին 'ի սկզբանէ այն-

1 Պաւսան. գիրք Բ. գլ. 23. էջ 164։ Ագոզդ. գիրք Բ. էջ 89։

2 Պլուտ. 'ի Թես. հա. 1. էջ 3։ Պաւսան. գիրք Ա. գլ. 27. էջ 66. գիրք Բ. էջ 188 և 192։

3 Սարաբ. գիրք Ը. էջ 370։ Լիւ. գիրք ԼԲ. գլ. 25։

4 Երոդոտ. գիրք Ա. գլ. 1։ Դիոդ. գիրք Ա. գլ 24։

պէս պայծառացեալ, զի յանուն նորա կոչէին երբեմն Աբրահա և Պեղոպոնէս և Նշադա հատուբէն [1]։ Այսպա 'ի թագաւորել Պեղոպոնէսց 'ի Սիկիոն, քաղաքս այս մեծացոյց զպայծառութիւն փառաց ոսոխին [2]. Այլ զոր թագաւորեր Աշամենոն, և Դիոմեդէս և Ամենեղոս 'ի Սիկիոն [3]։ Յետ սակաւ ժամանակի Աբրոյս զարձաւ յառաջին փառս իւր [4], և ոչ ևս կորոյս զայն։

Տեսչութիւն իրաց աշխարհին 'ի սկզբան անդ յանձն էր թագաւորաց. այլ 'ի կոփելնոցա զժողովուրդն, թողաւ 'ի նոսա անուն ևեթ իշխանութեանն որով զեղծանէին [5]։ Նա ապա անուն ևս բարձաւ, և ընկերահաղտ ազատութիւն ելից միշտ յաշխարհին [6]։ Ազանին նախ քննել զամենայն, և ապա 'ի կամն ռամկին առնել ապատան [7]։ Այլ քանզի 'ի կատարումն իրացն ոչ ժամանել, ուրեմն այր յիւրոցն տքնին հանապազ 'ի փրկութիւն աշխարհին, և զնոցն կատարեն գործ՝ որ ինչ նահապետք Աթենս [8]։ Նա թէպէտ բազում անգամ և առ մերովք իսկ ժամանակաք գլխաւորք 'ի քաղաքայնոց փորձեցան զեր-

[1] Սարաք. գիրք Ը. էջ 369։ Պարապ. Պինդ. յիսեմնանս 2. տող 17։ Պլուտ. Ինդ. հռովմ. հա. 2. էջ 272։ Ա պոզոդ. գիրք Բ. էջ 75։

[2] Սարաք. անդ, էջ 372։

[3] Հոմեր. Եղիական. գիրք Բ. տող 564։

[4] Սարաք. անդ։

[5] Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 43։ Պաւսան. գիրք Բ. գլ. 19. էջ 152։

[6] Թուկիդ. գիրք Ե. գլ. 28, 31 և 41։

[7] Երոդոտ. գիրք Ի. գլ. 148։ Թուկիդ. անդ. գլ. 37։

[8] Թուկիդ. անդ. գլ. 47։ Դիոդ. գիրք ԺԹ. էջ 704։

ծանել 'ի բռնակալութենէ բազմութեան, և հաստատել զսակաւապետութիւն, այլ Միգն նոցա ոչ առ այլ ինչ եղև պիտանի՝ բայց 'ի Ճապաղիս արեանց [1]։

Դեռ ևս իրՁք վրէժինդրութեան 'ի սիրտս նոցա մնացեալ պահէին զտարապարտ Ճգնացն, զոր նոցա յառաջ քան զամն իբր չորեքտասան գործեալ էր։ Այլ ոչ ևս երկայնամտեալ ընդ զբաղարտութիւնս՝ որովք Ճարտարախօսք հաստատեաց չարահամբաւէին զնոսա անդադար 'ի բեմից, դարձեալ խորհուրդ կալան 'ի փոխել զկարգ տեսչութեան աշխարհին։ Յայտնեցաւ խորհուրդ նոցա, և արկան բաղումք 'ի նոցանէ 'ի շղթայս. և 'ի հարցփորձ մատուցեալ՝ կէսք դաւեցին անՁանց, իսկ մի ոմն չհանդուրժեալ տանջանաց՝ մատն եղև երեսնից ոմանց համախոհիցն իւրեանց։ Մինեքին նոքա սպանան առանց հարցափորձի, և ինչք նոցա ածան 'ի ձայն քարոզի 'ի վաՃառ։ ՅաՃախեցին չարախօսութիւնք, և ամբաստանութիւն ևեթ բաւական էր 'ի դատապարտութիւն։ Հազար և վեց հարիւր այր 'ի Ճոխագունից քաղաքացոց սրախողխող եղեն. և Ճարտարախօսաց առ ահի յեղափոխութեան կարգաց զինջուցանելով զարբառսն, հանդիսացաւ զնոսա Ժողովուրդն մատնիչս իւր, և զամենեսին զնոսա մոլեկան երկաթոյն ետ Ճարակ [2]։ Ա-

[1] Թուվիդ. գիրք Ե. գլ. էջ 127. գիրք ԺԵ. էջ 372։ 76 և 82։ Դիոդ. գիրք ԺԲ. [2] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 372։

ուրեք 'ի քաղաքաց Աղլադայ տեսեալ էր խժդը-
ժութիւն այսպիսի. ամենեցեքդ 'ի լուր համբա-
ւոյ իրացն 'ի ժողովի ուրեք համարեցան զան-
ձինս պղծեալ, և փութացան 'ի քաւել զանձինս
կրօնական պաշտամունքք [1]։

Աբգիսացիք անուանի են քաջութեամբ. բաղում
պատերազմունք եղեն նոցա ընդ աղգս շուրջ
բնակեալս, և ոչ երբեք երկեան նոքա զալ ընդ
սպարապետացիս 'ի վիզ [2], և բաղում անգամ սպար-
տացիք 'ի խնդիր եղեն նիզակակցութեան նոցա [3]։
Ի վերպ վարկնջուց իրաց նոցա, որպէս ասա-
ցաք, փայլեն աղք երևելիք և պայծառ արու-
թիւնք. իսկ 'ի յետին ժամանակս յերիսեալ նո-
ցա զայրս տիրելոյ ընդ Պեղոպոնես [4], վատթա-
բեցան ձախողակի արշաւանօք և առանին պա-
ռակտմամբք։

Հանգոյն արկաղացւոց ասպետս արարին նոքա
զգիտութիւնս, և արուեստից պարապեցին։
Մինչև Վասիլեայի Աղլադա արշաւեալ, հրամ-
տագոյնք էին նոքա յերաժշտութիւն քան զայլ
աղգս [5]. և ընդ ժամանակս ինչ այնպէս նախան-
ձայոյզք նախնոյն երաժշտութեան, զի 'ի տու-
գանս դատապարտեցին զմի ոմն յերաժշտաց,
որ իշխեաց բազմաղի քնարաւ 'ի պայքար մտա-

1 Պլուտ. օրէնք հաս. հտ. 2. էջ 804։ Եղլադ. առ. Փո-
տայ, էջ 1593։
2 Երոդոտ. գիրք Զ. գլ 77։
3 Թուկիդ. գիրք Ե. գլ 36։
4 Նոյն անդ. գլ. 28։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 123։
5 Երոդոտ. գիրք Գ. գլ 131։

նել՝ յաւելեալ զլարս առելի քան զեօթն, և ածել՝ի նուագ եղանակս՝ որ էին առ նոսա ընդունելի։ Յերաժիշտս արկադացիս երևելիք կացին Լասոս [2], Սակադաս [3] և Բրիստոնիկոս [4]. յանդրիագործս՝ Բգեղադաս [5] և Պողիկղետ [6]. իսկ՝ի քերթողս՝ Տելեսիլա։

Բռաջինք երեքին զերաժշտութեանն, և Բգեղադաս և Պողիկղետ զքանդակագործութեան փութացուցին զզարգացումն։ Պողիկղետ յաւուրս Պերիկղեայ կացեալ, ելից անմահական ձեռակերտօքն իւրովք զՊերզոպոնես և զամենայն Լակեդա։ Գերազանցեաց նա քան զԴիդիաս, գեղեցկագոյնս զմարդիկ քան զոր էին դրօշելով. այլ՝ի տալ զկերպարանս դից՝ չէհաս՝ի բարձրութիւն վսեմութեան մտաց ոսոխին [7]։ Լինն նորա նախատիպք երիտասարդութիւն և մանկութիւն. իսկ ծերութիւն զոգցես իմն ընդարմացուցաներ զմտաւնս նորա, որ սովորեալ էին յանդիման առնել գեղեցկութիւնս։ Բյամ կարի իմն փոյթ արուեստին ոչ՝ի Հայ պատահէ. նմին երի գովելի գտաւ Պողիկղետ, զի՝ի Հնգութիւն օրինակին ջանահնար եղև։ Օ՛ի է նորա պատկեր կերպարանաց մարմնոյ այնպէս

[1] Պլուտ. յՊ. երաժշտ. հատ. 2. էջ 1144։
[2] Նոյն անդ, էջ 1141։
[3] Նոյն անդ, էջ 1134։
[4] Ամենն. գիրք ԺԴ. էջ 637։
[5] Պաւսան. գիրք Զ. գլ. 8. էջ 472. գլ. 14. էջ 487։
[6] Պլատ. ի Պրոտագ. հատ. 1. էջ 311։
[7] Կուրմանկ. հրատ. Հայրա. գիրք ԺԲ. գլ. 10. էջ 744։

համեմատ պատշաձեալ, զի ձարտարք արուեստին ամենեցուն անժխտելի վկայութեամբ կոչեն զայն Կանոն [1]. և զնա ունին օրինակ որոց նոյնպիսի ինչ 'ի նոյն հանգամանս առաջի կայցէ դրոշել. զի ոչ է մարթ միակ հնարաւորել օրինակ պատկանաւոր 'ի պատկեր այլ և այլ տիոց և սերկոց և բարուց [2]։ Կակ որոց ստգտանեն զՊողիկղետ, ասելի է՝ զի Թէպէտ և չկցէ նորա 'ի բուն ծայր արուեստին հասեալ, սակայն մերձ անդր գտանի մատուցեալ [3]։

Կրկներ իմն ինքն իսկ զձարտարութենէ ձեռակերտիցն իւրոց. և ուր այլք 'ի ձարտարաց արձանագրէին 'ի վերայ ձեռակերտաց իւրեանց՝ այս ոք կամ այն արար, նա արձանագրեր յիւրն. Պողիկղետ առնէր. իբր թէ մնալով հասարակաց դատաստանին 'ի կոչել զայնս կատարեալ [4]։ Լսեր նա զկարծիս այլոց, և յօգուտ 'ի կիր արկանէր զայն։ Բարձր նա անդրիս երկու, զնոյն յանդիման առնելով պատկեր. զմին 'ի ծածուկ ըստ իւրումն ևեթ հանձարոյ և ըստ բուն կարգաց արհեստին գործեալ, իսկ զմիւսն 'ի գործարանի իւրում՝ 'ի 'ի տեսիլ ամենեցուն, ուղղեալ և փոփոխեալ որ ինչ ոք և ստգտանէրն 'ի նմա 'ի տեսողաց՝ ոչք շուայլէինն նմա խրատս։ Կամ իբրև կատարեաց ըզ-

1 Պլին. գիրք ԼԴ. գլ. 8. հտ. 2. էջ 650։ Յուն. յղ. նկար. էջ 68։

2 Յիշատ. բանաս. կաձառ. հտ. 25. էջ 303։

3 Կիկեր. յղ. քաջ ձարտ. գլ. 18. հտ. 1. էջ 351։

4 Պլին. գիրք Ա. ԺՀտ. 1. էջ 5։

պատկերն, ած զերկաքանչիւրն 'ի տեսիլ ժողովրդեան. և 'ի զարմանալ ամենեցուն ընդ առաջինն, և 'ի ծաղր առնել զերկրորդն, ասէ. Այդ զոր խոտէիր՝ չինած ձեր է, իսկ ընդ որ զարմանայիր՝ իմ[1]։ Այնուհետև մի զկենդանութեանն մեծ էր համբաւ նորա։ Պոլիկարպոս մի 'ի զլեռաւորաց աթենացւոց խորհէր ընծայել անդրի հայրենեաց իւրոց, և 'ի խրատել ուրումն զնա զի Պողիկրատեայ տացէ դրաշել զանդրին, ասէ. Մի լեցի այդ, զի զամենայն փառս նուիրին Աստուծոյ[2]։ Յաւելից ցուցանել ստորև, զի ոչ ինչ նուազ և 'ի Աստուածապետութենէ զերազանցեալ գտաւ Հանճարոին։

Տելեսիլա՝ որ եկաց յառաջ քան զամն իբր հարիւր և յիսուն, պայծառացոյց զՀայրենիս իւր զրովք իւրովք, և փրկեաց զնա քաջութիւնն։ Բանզի մինչ դեռ ահա Արդոս մերձ էր 'ի նուաճել ընդ ձեռամբ սպարտացւոց, և վեց հազար այր 'ի քաղաքայնոց անկեալ էին, ընդ որս և ընտիր մանկտին[3], յայնմ օրհասական վտանգի Տելեսիլայ ածեալ զնրև զկանանին կարող յօգնականութիւն խորհրդոց իւրոց, զինուորեաց զնոսա զինուք՝ զորս 'ի մերհեանս և 'ի տունս իւրաքանչիւր եղիտ, և զիմեաց նոքօք հանդերձ

[1] Եղիան. զան. պատմ. գիրք Ա. գլ. 8։
[2] Նոյն անդ, գլ. 16։
[3] Երոդոտ. գիրք Զ. գլ. 76. գիրք Է. գլ. 148։

'ի վերայ պարսպաց քաղաքին՝ հալածել անտի զԹշնամիս. որոց երկուցեալ 'ի նախատանաց յաղթութեանն և պարտութեան, ամիրսեցան յետս [1]։

Դերապանծ սահմանեցան պատիւք առաքինութիւնն. անկեալքն 'ի պատերազմի թաղեցան առ Ճանապարհաւն Աբգոսի, իսկ այլոց հրամանն եղև կանգնել Աբեայ անդրի [2]։ Պատկեր Ցեղեսիլայ եդաւ 'ի վերայ սեան առաջի Աստղկանն մեհենի. մնտեանք առ ոտս նորա զետեղեալ կան, այլ նորա զաչս 'ի նոցունց 'ի բաց դարձուցեալ, զինու զուարթահայեաց 'ի սաղաւարտն՝ որ 'ի ձեռին իւրում է, և ածէ զայն 'ի գլուխ իւր [3]։ Այս որպէս զի յաւերժական չքնաղ արութեանն կացցէ յիշատակ, սահմանեցան տօնք տարեկանք՝ յորս կանայք առնացի և արք կանացի զգեստն ձև [4]։

Որպէս յամենայն քաղաքս Աղլադայ, և Աբգոս բազումք են ձեռակերտք արուեստին, այլ հրաշակերտք կարի սակաւք. յորոց շատ լեցի յիշատակել զՊողիկղեսեայ և զՊրաքսիտեղեայ զրօշեալս ոչ սակաւս [5]։ Իսկ զորս առաջի կայ

1 Պաւստան. գիրք Բ. գլ. 20. էջ 157։ Պողիեն. 'ի մարթմանն. գիրք Է. գլ. 33։ Ղուկիան. յդ. սիրոյ, հտ. 2. էջ 431։ Կղեմ. Ալեքս. յանձնարարութեան. գիրք Դ. էջ 618։ Սուիդ. 'ի բառն Τελεσίλα.

2 Պաւստ. յդ. առաք. կանոնց, հտ. 2. էջ 245։

3 Պաւստան. գիրք Բ. գլ. 20. էջ 157։

4 Պաւստ. անդ։ Պողիեն. 'ի մարթմանն, գիրք Ը. գլ. 33։

5 Պաւստան. անդ. էջ 154. գլ. 21. էջ 160։

ինձ յիշատակել, այլ ինչ 'ի նոսա իրք զաչս մեր յուրեանս ձգէին։

Տեսաք զչիրիմ միոյ 'ի դստերացն Պերսեայ, որ 'ի մեռանել առն իւրոյ եղև հնութեան Լ-քաղեայ արքային սպարապետաց, նորա իշխեալ նախ յարգիացւոց առնել երկրորդ հարսանիս[1]։ Կարի յոյժ վաղնջականք են իրքս։

Տեսաք կիրս անդրեայ, յորում Պերիզայոս արգիացի սպանանէ զՊԹրիատ սպարապետացի[2]։ Բ-անզի սպարապետացիք և արգիացիք վիճեալ 'ի ժառանգութիւն քաղաքին Թիրեայ, միաբանեցին ընտրել երկուստեք երեքարիւր այր, որպէս զի նոցա մնարտիւն սահմանեսցի վէճն։ Բնկան առ հասարակ մնարտիկքն բաց յերկուց ոմանց արգիացւոց, որք իրք յաղթողք եկին տալ աւետիս աւագանւոյն ՅՊՂՊՈՍ։ Բայց ՊԹրիատայ տակաւին շունչ յլոնգունան էր, և խոց կարեվէր՝ ժողովեալ զզօրութիւնս իւր, կանգնեաց անդ 'ի Ճակատուն տեղւոջ ախոյեան, և արեամբն իւրով գրոշմեալ 'ի վերայ նորա զսուղ ինչ արձանագիրս զայս, ՍՊԱՐՏԱՑԻՔ ՅԱՂԹՈՂՔ ԱՐԳԻԱՑԻՈՑ, չոգաւ զիւրովին առ 'ի չտեսանել զարև յետ մահու զինուորակցացն իւրոց[3]։

Բ-ոգիացիք հանարին գիտել զՀանդերձեալսն, նախապատմելով նոցա զայս Բ-ոլոնսի 'ի միում

[1] Պաւսան. յղ. առաք. կանոնաց, գիրք Բ. գլ. 21. էջ 159։ Սուիդ. 'ի բառն ՕՏՉսաՆ. Սասք. Հատ. 7. էջ 92։

[2] Նոյն անդ, գլ. 20. էջ 156։

[3] Նոյն անդ։

ուրեք 'ի մեհենաց իւրեանց։ Արմուհին որում պարտ է յանձն առնուլ զժուժկալութիւն, մի անգամ յամենեան զենու ոչխար գիշերային 'ի զոհ, և Ճաշակեալ յարենէ զոհին՝ կրէ զՀոգի մարգարէութեան '։

Տեսաք զկանայս արդիացիս ժողովեալ զաւուրս բազումս 'ի խորան մի մեհենին Լամազդայ փրկչի, ուր ողբային զԼամնիս։ Խորհուրդ ինձ 'ի միտս գայր ասել ցնոսա, զոր երբեմն իմաստունքն 'ի դէպս յայսպիսիս ասէին. Ընդէր իցէ ողբալ զնա, եթէ իցէ աստուած. իսկ եթէ չիցէ, ընդէր մատուցանել նմա զոհս [1]։

Առաստուն ասպարիզաւ հեռի Լամբդասէ [2] է մեհեան Հերայ, մի յերևելի մեհենաց Լամազդայ [3], երբեմն հաստարակաց տեղի պաշտամանն արգիսացւոց և միկենացւոց [4]։ Զև ևս են ամբ հարիւր զի նախնին մեհեան այրեցաւ պղերգութեամբ քրմուհւոյն Արիսեայ, մոռանալով նորա անցուցանել զՀրդեհն՝ որ վառէր 'ի մէջ սրբազան նարօտիցն [5]։ Իսկ վերստին կանգնեալն 'ի ստորոտ Լեբեայ լերին առ եզը վտակի, ածէ 'ի տեսիլ զզարդացումն արուեստից, և յաւերժացուսցէ զանուն Ճարտարապետին Լեպողեմեայ արգիացւոյ '։

1 Պաւսան. գիրք Բ. գլ. էջ 165։
2 Պլուտ. առակ. լսկոն. հատ. 2. էջ 228։ Նոյն յիսիս. էջ 379։
3 Սպարթ. գիրք Ը. էջ 368։
4 Պաւսան. գիրք Բ. գլ. 17. էջ 147։
5 Սպարթ. գիրք Ը. էջ 372։
6 Թուկիդ. գիրք Դ. գլ. 133։ Պաւսան. անդ. էջ 148։
7 Պաւսան. անդ. էջ 147։

Բայց Պողիկրատայն գերահռչակ ևս կացցէ ձեռակերտօքն, որովք զմեհեանն զայն պայծառացոյց [1], և մանաւանդ հսկայաձև դրօշելովն Հերայ։ Բազմեալ կայ աստուածուհին յաթոռ, ածեալ՝ի գլուխ պսակ՝ յորում քանդակեալ կան Վասքն և Շ նորհք. յաջում ձեռին ունելով նուռն՝ որոյ էր խորհուրդ ծածկեալ յանսրբոց, և՝ի ձախումն գաւազան արքունի՝ դարեալ՝ի ծայր նորա կկու, նշանակ յաստուկ նմին՝ զորմէ բազում առասպելք յօդին խօլականք։ Մինչ դեռ՝ի զնին կայաք զարմացեալք ընդ քանդակին արժանի ոսոխին Փիդիայ, և ընդ աղնուութիւն նիւթոյն՝ զի է ոսկի ընդ փղոսկր յեռեալ, ցուցանէր ինձ Փիլոտաս ծիծաղելով կոնձղ մի տանձւոյ վայրի՝ դրօշեալ՝ի կերպարան կնոջ բազմելոյ, տգեղ և փոշոտ։ Օ՛ի է այն քան զամենայն պատկերս Հերայ վաղեմի [2], որ ժամանակս բազումս պաշտեցեալ՝ի մարդկանէ՝ կրէ արդ զբախտ պառաւելոյ և աղքատի, տարագրեալ յանկեան ուրեք, և ոչ ոք ուղերձէ նմա ուխտս։

Ի բազնի անդ երդնու աւագանին արգիացոց՝ի պահպանութիւն դաշանց խաղաղութեան. և ոչ է օրէն օտարաց մտանել անդ զոհս [3]։ Մի՝ի քրմուհեաց սպասաւորէ մեհենին՝ի սկզբանէ հետէ. որում պարտ է՝ի վերայ այլոց երաց և՝ի

[1] Սարաք. գիրք Ը. էջ 372։ 17. էջ 148։
[2] Պաւսան. գիրք Բ. գլ. [3] Երոդոտ. գիրք Զ. գլ. 81։

ձկանց ինչ հրաժարել՝։ Լ՚ը կենդանութեան նորա սովորութիւն է կանգնել նմա անդրի[1], և՝ ի մահուն արձանագրել՝ի նմա զանուն նորա և զժամանակ քրմութեանն։ Որոց յաջորդութիւն արձանագրութեանցն խառն ընդ անդրիս դիւցազանց բազմաց զետեղեալ՝ի Ճակատ մեհենին[2], ընծայէ զկարգ ժամանակաց, յորմէ վիպագիրք ոմանք առնուն ժամանակագրել[3]։

Ի կարգս քրմութեաց են և երևելիք ոմանք, որպէս Իպերմնեստրա դուստր Դանաուոսի, Մ՚զմեռ դուստր Լ՚ուրիստեայ արքայի[4], Կիդիպպէ՝ որ որդւովքն առաւել քան նախնեաքն փառաւորի։ Պատմեցին մեզ զվէպս նորա մինչդեռ տօնքն Հերայ կատարէին։ Որն այն, յորում դիմեալ խումի անդր ամբաւ բազմութիւն տեսողաց, երևելի ևս է մեծահանդէս թատրերն՝ որ գնայ Մ՚ՔՂոսէ՝ի մեհեան աստուածուհւոյն։ Դնան յառաջոյ եղինք հարիւր՝ բոլորիւք ծաղկանց զարդարեալք, որ ապա զեռեալ բաշխին առընթեր կայելոց հանդիսին[5]։ Շուրջ պահ ունին գունդ արդիացի մանկտւոյն վառեալք փայլակնացայտ՝ի զրահս, զոր՝ի բաց դնեն՝ի մերձենալն՝ի

1 Պլուտ. յԼ. հանձար. կենդան. հատ. 2. էջ 983։
2 Պաւսան. գիրք Բ. գլ. 17. էջ 149։
3 Նոյն անդ, էջ 148։
4 Թուկիդ. գիրք Բ. գլ. 2։ Պարսպ. անդ։ Եղեան. առ. Դիոնիս. սղիկ. յԼ. հնուն. Թեանց հռովմ. գիրք Ա. հատ. 1. էջ 181։ Պոլիբ. ծաղկաքաղ, էջ 50։ Ա.ԹԵՆ. գիրք Գ. գլ. 6։
5 Ֆրէրեր Ջատագով. ժամանակագր. էջ 75։
6 Պարսպ. Պինդ. յոգեմոլ. տող 152։

բազին անդր [1]։ Եւ 'ի վերջէ հանդիսին զայ քրմուհին հեծեալ 'ի կառս ընտիր յերկուց սպիտակափառ և 'ի չքնաղագեղ եզանց [2]։ Բարդ յաւուրս Կիղիպպեայ չու արարեալ հանդիսին, և եզանցն ոչ ժամանեալ, Փիտոն և Կղեովբիս ընտեցան 'ի կառս մօր իւրեանց, և ընդ ասպարէզս քառասունևհինգ ձգեցին զայն յաղթանակաւ 'ի դիւրի և մինչև 'ի կող իսկ լերինն՝ ուր մեհեանն կառուցեալ կայր [3]։ Եւ հասեալ անդր Կիղիպպեայ 'ի ձայն ցնծութեան և 'ի կայթս ձեռաց ամենայն բազմութեանն, 'ի հրճուանս սրտին խնդրեաց յաստուածուհւոյն շնորհել որդւոց իւրոց զգերազոյն քան զամենայն բարեբաստութիւն։ Եւ ասեն լսելի լեալ զհայցուածսն, և 'ի քուն քաղցրութեան նիրհեալ նոցա 'ի տաճարին, և խաղաղութեամբ փոխեալ 'ի կենաց 'ի մահ [4]։ Իբր այն թէ չգուցէ դիցն պարգև մեծագոյն քան կարձել զկեանս մարդկան։

Բայաքէն 'ի մեծամեծ ազգին չպակասեն ծնողասէր որդիք, այլ յիշատակք նոցա հաղիւ յաղագատհմի իւրեանց պահին. իսկ Յոյլադաքաղաքի ողջոյն հանդերձ իւր զնոսա, և զյիշատակ ա-

1 Եզեկա մեկն. արուեստ. զբրապետ. գլ. 17. էջ 13։
2 Պաղեփ. յոլ. անհաւատալ. գլ. 51։
3 Պաւսան. գիրք Բ. գլ. 17. էջ 148։
4 Երոդոտ. գիրք Ա. գլ. 31։ Աբսիոք առ. Պղատոնի, հտ. 3. էջ 367։ Կիկերք. տուս. կուլ. գիրք Ա. գլ. 47. հտ. 2. էջ 273։ Վալ. Մաքս. գիրք Ե. գլ. 4։ Սատք. Ճառ. 169. էջ 603։ Սերուս. և Փիլարգ. 'ի Վիրգիլ. մշակ. գիրք Գ. տող 532։

ռաքինութեան նոցա յաւերժացուցանէ, առաւել պանծացեալ՝ի նոսա քան՝ի յաղթութիւնսն կանգնեալս՝ի վերայ թշնամեաց։ Արդիացիք նուիրեցին՝ի Դեղփիս զպատկերս երկոցունց եղբարցն առաքինեաց՝, և՝ ի մեհենի ուրեք Ամբողջոյս տեսի կիցս անդրեաց՝ յանդիման առնելով զնոսա՝ի մայրենի կառսն ՀԵՍԼ[2]։

Յետ տեսանելոյ զայսպիսի ազնուական վարձս առաքինութեանն իւրաքանչիւրոց ոմանց ընդհեալ՝ի Յունաց, տեսաք հնդեւոսան ասպարիզաւ հեռի՝ի մեհենէ անտի[5] ցոր վայր վերժիմնդրութիւն իշխանութեան զառածանի առ նոսա։ Օ՛յ քան զաւերակսն, յորս հաղիւ նշմարին շիրիմք Աստրեայ, Աշամենեայ, Ովբեստեայ և Նէրկատրայ, չիք աւելի ինչ մնացուած նախնոյ և գերահռչակ քաղաքին միկենացւոց, զոր արդիացիք կործանեցին նախ քան զամն իբր հարիւր և յիսուն[4]։ Յանցանք նորա ոչ այլ ինչ էին, բայց զի չէաւ յանձն զլուծն ընդ որով նոքա ստիպին զրեթէ զամ Ամբողջոյս, և զի հակառակ հրամանաց նոցա զումարեցաւ ընդ Յոյնս ընդդէմ Պարսից[5]։ Ինակիչք քաղաքին Թշուառք պանդխտեցան՝ի տար աշխարհս, և բազմոց՝ի նոցանէ չգտեալ ուրեք ապաստան՝ անկան՝ի Ատեղոնիա[6]։

1 Երոդոտ. գիրք Ա. գլ. 31։
2 Պաւսան. գիրք Բ. գլ. 20. էջ 155։
3 Պաւսան. անդ. գլ. 17. էջ 147։
4 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 49։
Սարաբ. գիրք Ը. էջ 372։
5 Պաւսան. անդ. գլ. 16. էջ 146։
6 Նեյն գիրք Է. գլ. 25. էջ 589։

Ի վերս Յունաց յաՃախէ տեսանել զարկածս այսպիսի ահագին վտարանդութեանց, և ոչ ինչ էն զարմանք։ Օ յի 'ի յոլովագոյնս 'ի գաւառաց Լչլադայ էին 'ի սկզբանէ հաստատակապետութիւնք բազումք ինքնիշխանք, կէսք յաղնուապետութիւն և կէսք 'ի ռամկապետութիւն յօժարեալք. և ամենեցուն նոցա առ հեշտի գտանելոյ օգնականութիւն 'ի սահմանակից պետութեանց՝ ցանկալի էր պառակտել զնոսա 'ի միմեանց '։ Ի զուր ջանացան նոքա միաբանել ընդ միմեանս համաշխարհականնիզակակցութեամբ. զի հզօրագոյնք 'ի նոցանէ զտկարագոյնս ընդ իւրեամբք նուաՃեալ՝ խորհեցան ինքնակալել։ Այժմերթ և միումն 'ի նոցանէ զօրացեալ քան զայլս, գեղեցիկ պատՃառանօք ազատութեան տիրապետեալ քռնակալեաց. ուստի զրգռեցան թշնամութիւնքն և պատերազմունք համազգեաց, որք ընդ բազում ժամանակս ամսոյի կացուցին զՄեսաղիա, զԼիվոնիա, զԼակեդիա և զԼրգոլիս։ Բայց Լտտիկէ և Լակոնիա զերծ գտան յայնցանէ, զի ատտիկեցիք առ հատարակ ընդ նովին օրինաւք կան որպէս միոյ քաղաքի քաղաքացիք. և բնակիչք Լակոնիոյ միշտ 'ի հնազանդութեան կացին բազմահոգ զգուշութեամբ աւագանւոյն Սպարտայ, և վկայեալ յամենեցունց քաջութեամբն սպարտացւոց։

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 36 և 40։

Այսպէս դրժանք դաշանց ինչ և անիրաւութիւնք ընդդէմ իրաւանց ազգաց գործեցեալք ածան երբեմն 'ի ժողով Այմիկտիոնացն, որ 'ի վաղնջուց ժամանակաց սահմանեալ էր առ հիւսիսաբնակ ազգս Գալատայ. և դարձեալ բաղումք 'ի քաղաքաց բնակելոց Յունդոյն ինքն ատեան սահմանեցին առ իւրեանս [1]։ Այլ ժողովքս այսոքիկ ոչ միայն զսակաւուց ինչ իրաց ունէին զհամար, այլ և ոչ ընդ ամենայն Գալատա իշխանութիւն նոցա տարածանէր, և կամ չէր իսկ նոցա զօրութիւն կացուցանելոյ զվճիռսն։

Ի դառնալ մերում Յունդոս՝ ելաք 'ի միջնաբերդն. անդ 'ի մեհենի ուրեք Աթենասայ տեսաք զպատկեր Աքամազդայ, զորմէ ասեն՝ թէ յապարանս Պրիամու երբեմն պահէր։ Գրեակ աչք են նորա, երրորդն 'ի մէջ Ճակատուն. զտէրութիւն նորա ցուցանելով ընդ երկինս և ընդ ծով և ընդ դժոխս, և կամ զի նկատէ զանցեալն զմերձակայն և զհանդերձեալսն։

Այս յուզի անկաք գնալ 'ի Տիրինթոս, որ հեռի է Յունդոսէ ասպարիզաբ իբր յիսուն։ Պաբիսպք ևեթ վաղեմոյ քաղաքիս պահին [2] ստուարագոյնք աւելի քան զքսան ոտնաչափ, և բարձրութիւն նոցա ըստ նմին համեմատութեան. կառուցեալք յանհեթեթ ժայռից կուտակելոց զմիմեանսն, յորոց զփոքրագոյնս յայնցանէ հա-

[1] Սարաբ. գիրք Ը. էջ 374։
[2] Պաւսան. գիրք Բ. գլ. 15. էջ 145։

զիւ լուծք ջորեաց ձգել կարէն։ Այլ վասն զի ան-
տաշք են, զինզբունս կցուածոյ նոցա ընդ մի-
մեանս վասն անհարթութեանն այլովք մանրա-
գոյն վիմօք լցեալ է՝։ Պարիսպքս այսոքիկ 'ի
բազմահոլով դարուց հետէ կանգնուն կացեալ,
թերևս ընդ բիւրաւոր ամս և յայսմ հետէ ած-
ցեն զարմանս և հիացումն տեսողաց [2]։

Օնոյն ազգ շինուածոյ է տեսանել 'ի վաղեմի
ձեռակերտս Արգոսիս, և մանաւանդ 'ի պա-
րիսպս քաղաքին Միկենացւոց կիսաւերս, և 'ի
փոսն մեծամեծս զորս մերձ 'ի Նաւահանգիստն
Նաւպղեոյ տեսաք [3], փոքր մի հեռի 'ի Ցիրին-
թեայ։

Այս ամենայն շինուածոց Միկղոսպայք համա-
բին կառուցողք [4], որոց անուն զմեծութեան իմն
բերէ կարծիս. զի քերթողք հինք մերթ զՀըս-
կայս [5] և մերթ զծնունդս երկնի և երկրի զարբ-
բինս շանթից Արամազդայ Միկղոսպայս անուա-
նեն [6]։ Ուստի կարծի մանկանացուաց հասարա-
կաց անձեռնհաս գոլ 'ի շինուածսն հսկայաձևս.
ոչ զմնաւ ածեալ զի 'ի վաղնջուց ժամանակս 'ի

[1] Պաւսան. գիրք Բ. գլ. 25. էջ 169։

[2] Նոյն, գիրք Թ. գլ. 36. էջ 983։

[3] Սարաբ. գիրք Ը. էջ 373։

[4] Եւրիպ. Յունիսատ. տող 963։ Նոյն Յիփիգ. Յաւլ. տող 152 և 1301։ Նոյն Յելիկոբ. տող 1158։ Սարաբ. գիրք Ը. էջ 373։ Պաւսան. գիրք Թ. գլ. 36. էջ 983։ Եւստաթ. Յեղիականն Հոմերի, էջ 286։ Սատատ. Թեբ. գիրք Ա. տող 251։

[5] Հոմեր. Ոդիս. գիրք Թ։ Պուշար, սրբազան աշխարհագրութիւն գիրք Ա. գլ. 30։

[6] Ցիշատ. բանատ. կանճատ. հտ. 23. էջ 28։

շինել զընակարանս՝ ընդ ամրութիւն նոցա հոգային մարդիկ քան ընդ գեղեցկութիւն, և զի հզօրագոյն հնարս 'ի կիր արկին նոքա 'ի հայթայթել զերկարատևութիւն կարևորացն անհրաժեշտ շինուածոց։ Փորձին 'ի ժայռս ծերպս ընդարձակս՝ պատսպարանս իւրեանց 'ի կենդանութեան, կամ գերեզմանս 'ի մահուն. և քարաժայռս 'ի լերանց հատեալ, շուրջ զընակութեամբն իւրեանց ածէին։ Եւ այս ամենայն էին արդասիք զօրութեան նոցա, և յաղթանակ ընդդէմ խափանաց։ Արդիւք ժամանակին գործէին ըստ օրինակի բնութեան, որոյ գործք պարզք էն և կարևորք և երկարատևք։ Համեմատութիւնք ճշգրիտք և գեղեցկութիւնք ձևոց յետոյ մուծեալք 'ի ձեռակերտս՝ արդարև ախորժելիք թուին տեսողաց, այլ չգիտեմ թէ ազդեցութիւնք նոցա ի՞նչ էն տպաւորագոյնք։ Զի և յայնոսիկ իսկ որ ամենեցուն զարմանալիքն էն, և մեծավայելուչք ամբառնան 'ի վերայ երկրի, ձեռն արուեստին ծածկէ զընութեանն, և մեծագործութիւն փոխանակէ ընդ մեծութեան։

Արդարև 'ի Ցիրինթոս պատմէին մեզ, թէ ուրպէս արդիացիք սպառեալք 'ի բազում երկայն պատերազմաց՝ աւերեցին զքաղաքն զայն և զԱրդեա և զԱսիէս, այլոքն հանդերձ, առ 'ի փոխել զընակիչս նոցա առ իւրեանս [1], Փիլոտաս

[1] Պաւսան. գիրք Ը. գլ. 27. էջ 653։

ուաղէր յիշէլով զՏէն տիրինթացիս. և 'ի զվասն էրն յինէն հարցանել, ասէ. Ալ զի և նոքա իբրև զայլս 'ի բնակաց երկրիս զինեսէրքը էին', այլ զառանցանցն նոցա տարաղ զբօսացուցանէր զիս։ ՅաւելումՍ որ ինչ մի ոմն յարգիսցուց զայսմանէ պատմեաց ինձ։

Ապրպէս սովորեալ նոցա 'ի ծաղր, զի ոչ ևս զկարևոր իրաց կարող էին հոգ 'ի մտի ունել։ Տաղտկացեալ 'ի ծանծաղամտութենէ իւրեանց, դիմեցին առ հարցուէն Պղեղիեայ։ Նա յուսացոյց զնոսա յառողջութիւն, եթէ զուարակ մի զենեալ նախ Պիսիդեայ՝ և ապա անժպիտք ընկենուին զաստուածն 'ի ծով։ Յայտ է զի հարկ պայմանին չժպտելոյ 'ի վերայ եղեալ՝ անհնարին առնէր նոցա զյաջողութիւն փարձոյն. սակայն եկին ժողովեցան 'ի ծովեզրն, 'ի բաց կացուցեալ զմանկտին։ Բայց մի 'ի մանկանց սպրդեալ էր 'ի նոսա գաղտ. և 'ի վարեին 'ի բաց, աղաղակեաց և ասէ. Օ՜ երկնչիք, թէ գուցէ կլանիցեմ զզուարակդ։ Այ զայս իբրև ասաց, ամենեցուն քրքիջ բարձեալ Ճարճատէին ծաղու. և խնամուտ լեալ՝ զի անբժշկելի էր ախտ իւրեանց, հնազանդեցան բախտին հրամանի[2]։

Ա՛ռէնեալք 'ի Տիրինթեայ՝ չոգաք յեղը սահմանաց Բ՛ըգոդեայ, շրջեալ Լ՛ոմին և 'ի Տրե-

[1] Ա՛թէն. գիրք ԺԵ. 12. էջ 438։

[2] Թէոփր. առ. Ա՛թէնէոս. գիրք Զ. գլ. 17. էջ 261։ Եւսեբիոս. Յեղեսական հոմերի, գիրք ԺԲ. էջ 1839։

զեն։ ՅԱրմին ընդ այլ իրս տեսաք և անտառակ մի նուիրեալ Շնորհաց, և զմեհեան Աստղկան՝ ուր օրիորդաց ամենեցուն նախ քան զՀարսանիսն պարտ է զոհ մատուցանել[1], և զմեհեան Դեմետրեայ՝ առ որով ոմանց 'ի քրմուհեաց նորա կանգնեալ կան պատկերք։ Եւ կատարի անդ յատնարայնի տօն, որոյ գլխաւոր մասունք արարողութեանցն այսոքիկ են։

Յառաջագոյ հանդիսին գնան քուրմք այլ և այլ դից և աւազանին ժամանակին։ Օհետ նոցա գնան կանանին և արք և մանկտին սպիտակազգեացք առհասարակ և ծաղկապսակք, երգելով օրհնութիւնս։ Ապա գան չորք երիտասք, զորս մի ըստ միոջէ մուծանեն 'ի մեհեանն, և տիկնայք չորք զենուն զնոսա կարգաւ։ Եւ երիտասքն 'ի սկզբան անդ խեռեալ՝ ապա ողորբին 'ի ձայնէ նոցա, և ինքնին իւրաքանչիւր մատչին 'ի բազին անդր։ Այլ այսմ չեղալք մեզէն ակամատես, զի փակին զրանք մեհենին մինչև ցկատարումն զոհիցն[2]։

Յետոյս շինուածոյ մեհենին են հրապարակք երեք շրջափակեալք կՃեայ սիւնակօք։ Ի միումն բացեալ երկիր, և խոր անդունդք 'ի նմա տեսանին. ասեն է մի 'ի դրանց դժոխոց, զորմէ յիրս ուղևորութեան իմոյ 'ի Լակոնիա ասացի*։ Եւ

[1] Պաւսան. գիրք Բ. գլ. 34. էջ 193։
[2] Նոյն անդ, գլ. 35. էջ 195։ Եղիան. պատմ. կենդան. գիրք ԺԱ. գլ. 4։
* Ի հատ. Գ. յէջ 408։

պատմէին մեզ բնակիչք երկրին, զի Պղատոնի յափշտակեալ զՊերսեփոնէ՝ ընդ վիհն ընդ այն էջ 'ի դժոխս, զի անձուկ է անդ հուն գետոյն։ Եւ յաւելին դարձեալ պատմել մեզ, զի առ դիւրութեան անցիցն ապահարկ խակ են բնակիչք վայրացն 'ի վարձուցն նաւակին, և ոչ դնեն ըզդրամն 'ի բերան մեռելոց՝ որպէս յայլ ամենայն տեղիս 'ի հատուցումն Քարոնի [1]։

Ի Ցրեզէն հաճոյ թուեցան մեզ արձանքն, որ պահին 'ի նմա. այլ տաղտկացաք 'ի լուր երկայնապատում վիպացն, զոր ազգն պանծացեալ 'ի նախնիս իւր [2] պատմէր մեզ զթագաւորացն իւրոց և զգիւցազանց՝ որ վաղ ուրեմն 'ի գաւառի անդ կացին։ Յուցանէին մեզ զաթոռն, ուր Պիտեթէոս որդի Պեղոպայ բազմեալ՝ առնէր դատաստան [3], զտունն՝ յորում Լիմեսէոս թոռն նորա և սան ծնաւ [4], զապարանսն՝ ուր Լպպողիտոս բնակէր [5], և զմեհեանն՝ ուր օրիորդք տրեզենացիք զգիսակս իւրեանց նախ քան զհարսանիսն աւանդեն [6]։ Ցրեզենացիք աստուածական տանելով նմա պաշտօն, նուիրեցին Լստղկան զվայրն՝ ուր Փեդրա թագուցեալ կայր 'ի գնին 'ի վարել նորա զկաւան յատպարէզ։ Կէսք վիճեալ սնդէին՝ թէ ոչ ածաւ նա ընդ քարշ 'ի ձիոցն, այլ յատեղա-

1 Սորաբ. գիրք Ը. էջ 373։
2 Պաւսան. գիրք Բ. գլ. 30. էջ 181։
3 Նոյն անդ. գլ. 31. էջ 184։
4 Նոյն անդ. գլ. 32. էջ 188։
5 Նոյն անդ. էջ 187։
6 Նոյն անդ. էջ 186։

տունս անդը վերառեալ եղաւ. իսկ այլք 'ի գե-
րեզմանն անդը նորա ածին զմեզ, հուպ 'ի շիրիմն
փեղրայ [1]։

Յուցին մեզ և վերանաձև մի շինուած՝ ուր
Ովսեստ 'ի քաւելն կայր վտարանդի, և բացին
մի վաղեմի յայծ՝ ուր զոհք միանգամայն մնացին
Մուսայից և Բնոյ, վասն միաբանութեանն որ
'ի նոսա [2]։ Ասան ինչ քաղաքին 'ի զառ 'ի վայր
լերին կառուցեալ է, և միւս մասն 'ի գիւրի մինչև
'ի նաւահանգիստն տարածեալ։ Եղեալ 'ի դաշ-
տին Բրիսորրով գետ, և շուրջ փակեն զնա գրե-
թէ յամենայն կողմանց բլուրք և լերինք, զորս
այգիք և ձիթենիք և հոյլք նռենեաց և մրտե-
նեաց ծածկեն մինչև ցկողմն, և զարտեւանուն
նոցա պտակեն անտառք մայրեաց և եղևնափայ-
տից՝ յամենս զնորոնտ զաղաթունսն ծրարեալ [3]։

Եւ ոչ գեղեցկութիւն տեսարանիս կարաց
յամենցուցանել զմեզ 'ի քաղաքին. զի փառասակար
են անդ օդք յեղանակս ինչ տարբեր [4], և գինի
երկրին խոտան է [5]. և միակ աղբիւր է անդ ջրոց,
և ջուր նորա անապրոյգագոյն [6]։

Բերեալ առ ծովափանքք հասաք Յոպիդաւ-
րաս, որ 'ի խորշ մի ծովուն կառուցեալ է 'ի խոր [7],

1 Պաւսան գիրք Բ. գլ. 30 էջ 186 և 187։
2 Նոյն անդ, գլ. 31. էջ 184։
3 Գուրմեն, Ճանապարհորդ. դրչագիր Արգոդեայ։
4 Շինալբ. Ճանապ. յԵրուսաղեմ, էջ 216։
5 Թեոփր. պատմ. բուսոց, գիրք Թ. գլ. 20։ Պլին. գիրք ԺԴ. գլ. 18. հատ. 1. էջ 724։
6 Վիտրով. գիրք Ը. գլ. 3. էջ 159։ Պլին. գիրք ԼԱ. էջ 548։
7 Սարաբ. գիրք Ը. էջ 374։

հանդէպ Այվենայ կղզւոյն՝ որ երբեմն ընդ նովաւ էր [1]։ Պարիսպք ամուրք ի ժամանակս ժամանակս պահպանեցին զնա ընդդէմ հինից հզօր դրացեաց [2]. զերկիր նր պագեալ [3] շուրջ պատեն լերինք անտառախիտք կաղնեօք [4]։ Արտաքոյ պարսպաց քառատուն ասպարիզաւ հեռի [5], է մեհեանն Արկղեպեայ և անտառ մեհենական [6], ուր յամենայն կողմանց դիմեն անդր ախտաժեալք ի բժշկութիւն։ Յտեան հարիւրեւութսուն արանց քաղաքայնոց ունի զյանձանձանս տեսչութեան փոքու գաւառին [7]։

Արկղեպեայ կենացն հանգամանք չէն ինչ քաջայայտ, նմին իրի և բազումք բազում ինչ գնանեն վիպեն։ Այնմ ընակչաց երկրին արժան ուսմեք Թուեացի հաւատալ հովուի ուրումն կորուսեալ զգամիս և զմի յայծից՝ եդիտ զնոսա ի վերայ միոյ ի մերձակայ լերանց, կացեալս առ մանկամբ միով յորմէ նշոյլք լուսոյ հատանէին, այծն դիւեցուցանէր զնա, և շունն կայր առ նմին պահապան. և մանուկն էր Արկղեպիոս որդի Աբոլոնի և Կորնեայ [8]։ Ելուիրեաց նա զկեանս

1 Երոդոտ. գիրք Ե. գլ. 83։
2 Թուկիդ. գիրք Բ. գլ. 56. գիրք Ե. գլ. 55 և 56։
3 Հոմեր. Եղեակ. գիրք Բ. տող 561։
4 Սարաբ. գիրք Ը. էջ 374։ Պլին. գիրք Դ. գլ. 5. հատ. 1. էջ 194։
5 Լիւ. գիրք ԽԵ. գլ. 48։ Վաղ. Մաքս. գիրք Ա. գլ. 8. յոգ. 2։
6 Պաւսան. գիրք Բ. գլ. 26 և 27։
7 Պլուտ. խնդ. Յուն. հատ. 2. էջ 291։
8 Պաւսան. անդ. գլ. 26. էջ 170։

իւր 'ի սփոփումն տառապելոց. ոչ մինչ 'ի վտանգաւորագունից խոցուածոց և ախտից զոյր ապրստամբ 'ի հնարից դեղոց նորա և ներդաշնակաւոր նուագաց և կամ՝ զիւթութեանցն, զորս 'ի կիր արկաներ [1]։ Այլոյն ներելով յաջողէին զօրութիւնք նորա. այլ իբրև իշխեաց նա զմեռեալս վերածել 'ի կեանս, դատախազութեամբն Պրզուտոնի ամպահարեցաւ [2]։

Այն և այլ աւանդութիւնք՝ որք նշոյլս մինչ Ճրշմարտութեան բերին յինքեանս, և թէպէտ իմն մատուցանեն մեզ՝ որով մարթեմք վայրիկ մի ընդ բաւականաձև շաւիղն հետևել անմոլար։ Խնամատումն Աիրոն դաստիարակ Աքիլլեայ հարեանցի մինչ ուսեալ զախտաբոյժ զօրութիւնս բուսոց, և հմուտ իսկ զոլով զարմանոյ բեկելոց և խախտեալ անդամոց, աւանդեաց զգիտութիւնսն սեբընդոյ իւրոց, որ կան տակաւին 'ի Լեռաղիա՝ անձնամուէրքք յամենայն ժամանակի 'ի դարման ախտաժետաց [3]։

Սմա երևի աշակերտեալ Աիկղեպիոս [4], և աւանդապահ եղեալ գաղտնեաց նորա՝ ուսուցեալ զայնս որդւոց իւրոց Մաքաւոնի և Պոդալիրայ [5],

1 Պլին. գլուխ. 3. տող 92։
2 Նոյն անդ, տող 100։ Եւրիպիդ. Աղկեստ. տող 125։ Պղատ. յղ. հաս. գիրք Դ. հատ. 2. էջ 408։ Դիոդ. գիրք Դ. էջ 273։ Պլին. գիրք Իթ. հատ. 2. էջ 493։
3 Տիբերաբք յաշխարհագիրս, հատ. 2. էջ 30։
4 Պլին. գլուխ. 3. տող 80։ Նոյն, նեմ. 3. տող 94։
5 Հոմեր. Եղիակ. գիրք Դ. տող 219։

ոլբ յետ մահուն նորա թագաւորեցին 'ի քաղաք մի փոքրիկ 'ի Թեսալիա [1]։ Ի ժամանակի պաշարման քաղաքին տրովացւոց պայծառացան նոքա քաջութեամբ 'ի պատերազմի [2], և Ձարտարութեամբն 'ի դարմանել զվիրաւորս [3]. քանզի քաջ ուսեալ գիտէին զվիրաբուժութիւն, զբժշկանին կարևոր մասն, և որ միայն երևի ծանօթ լեալ 'ի վաղ ժամանակս [4]։ Պ'ապաւոն առ պարբսպօք Տրոյայ զրաւեցաւ 'ի կենաց, և զաձիւն նորա ած 'Լեստոր 'ի Պելոպոնես [5]։ Որդիք նորա 'ի հայրենի մակացութիւնն պարապեալք, բնակեցին 'ի գաւառի անդ. և կանգնեցին նախահօրն իւրեանց բագինս, և ինքեանք բարեբարութեամբն իւրեանց առ մարդիկ՝ արժանի եղեն բագնաց [6]։

Լ'ախահայր մեծարոյ ազգատոհմին վաղ ընդ փոյթ հանուրց եղև պաշտելի։ Բայց Հոմերոս իբրև զմի ոք 'ի մարդկանէ յիշատակէ զնա, յայտ է թէ յաւուրս նորա չև ևս 'ի կարգ դիցն աստուածարեալ էր. այլ արդ ամենայն ուրեք աստուածական ընծայի նմա պաշտօն։ Լ'ա պաշտօն նորա անց Լ'ապիդաւրոսի յայլ քաղաքս Լ'ակա-

1 Հոմեր. Եղիակ. գիրք Բ. տող 730։ Ստրաբ. գիրք Ը. էջ 339. գիրք Ժ. էջ 448։

2 Հոմեր. անդ. գիրք ԺԱ. տող 832։

3 Նոյն անդ. գիրք Դ. տող 219։

4 Պղատ. յլ. հատ. գիրք Գ. հա. 2. էջ 405, 406 և այլն։

5 Պաւսան. գիրք Գ. գլ. 26. էջ 278։

6 Նոյն, գիրք Բ. գլ. 11. էջ 136. գլ. 23. էջ 163։

դայ, և 'ի նահանգս իսկ հեռաւորս[1]. և և սքան զևս տարածեսցի այն[2], ախտաժետացն համար-ձակագոյնս հանապազօր հայցելով զգթութիւն աստուածոյն՝ որ նոցին ախտակրութեանցն գտաւ փորձ։

Լսիդաւրացիք սահմանեցին 'ի պատիւ նորա տօնս տարեկանս, յորս յաւելուն երբեմն և նո-բանոր տեսարանս[3]։ Լայց թէպէտ և մեծամայե-լուչք են տօնքն, այլ մեհեան աստուածոյն և շինուածքն շուրջանակի և տեսիլք որ 'ի նոսա՝ ա-ռաւել զբօսացուցանեն զուշ ուղևորին։

Ոչ զմեծագին նուիրացն ասեմ, զորս շնորհա-կալութիւն կամ յոյս ախտակրելոց աւանդեցին 'ի մեհեան անդր[4], այլ անդէն 'ի մուտն զար-մանացումն ածէ չքնաղ արձանագիրն զրոշմեալ 'ի վերայ դրան մեհենին. ԱՆՍՈՒՐԲ ՈՔ ՄԻ' ՄՏՑԷ ԱՑՍՐ[5]։ Պատկեր աստուածոյն զրօշեալ 'ի Ասիա-սիմեդեայ պարոսացոյ, որպէս 'ի խարխսին ար-ձանագրեալ կայ անուն Ձարտարին, է ոսկի ընդ փղոսկր յեռեալ։ Լսկղեպիոս բազմեալ յաթոռ, շուն առ ոտս նորա, 'ի միում ձեռին գաւազան, և միւս ձեռն նորա արկեալ զիժիւ՝ որ յարձակի

1 Պաւսան. գիրք Բ. գլ. 26. էջ 171 և 172։

2 Լիւ. գիրք ԺԱ։ Վաղ. Մաքս. գիրք Ա. գլ. 8. յօգ. 2։ Աբեղ. Վիկտ. յղ. ա-բանց հռչակ. գլ. 22։ Ոմկգ. տպար. և այլն։

3 Պղատ. 'ի Յոն. հտ. 1. էջ 530։

4 Լիւ. գիրք ԽԵ. գլ. 28։

5 Կղեմ. ազեքս. յարձակա-պատ. գիրք Ե. էջ 652։ Պորֆիւր. յղ. Ժուժկալ. գիրք Բ. յօգ. 19. էջ 136։

'ի նա։ Ի վերայ ամենայն քանդակեալ կան նա-
հատակութիւնք դիւցազանց ոմանց արդողեցւոց,
Ելլերոփոնի՝ զեղջերուաքաղն յաղթահարե-
լով, և Պերսեայ զգլուխն հատանելով զՄե-
դուսայ[1]։

Պողնկդետ գերազանցեալ քան զամենեսին՝
որ յառաջ քան զնա կային քանդակագործք, և
որում սակաւք 'ի ձարտարապետաց հաւասարե-
ցին, կառոյց 'ի մեհենական անտառին տեսարան
պերճ և վսեմ՝ 'ի կայս տեսողաց 'ի հանդէս տօ-
նից[2]։ Ընդարձակ առնին շինուած բոլորշի կձեայ,
որ զամենեցուն յինքն ձգէ զտեսանելս, զորոյ
Պաւսիաս յաւուրս մեր շքեղազարդ պայծառա-
յոյց զառ 'ի ներքոյս նորա նկարուք։ 'ի միում ու-
րեք 'ի նկարուցն ոչ և սպառնող զինուք պատե-
բազմողն յանդիման առնէ զՄեր, այլ զաղեղն և
զնետս ընկեցեալ 'ի բաց, և քնարաւն և ԵԹ՝ որ
'ի ձեռին իւրում՝ յաղթական։ Ի միւս այլ յան-
դիման առնէ զՆ.ՐԵՑՈՒԹԻՒՆ 'ի կերպարանս
կնոջ, որոյ տիպք երեսացն թափանցանց նկատին
ընդ սպակեաւն՝ զոր սպառէ։

Տեսաք շուրջ զվայրոքն բազմութիւն սեանց,
յորս դրոշմեալ կան ոչ միայն անուանք սպաքի-
նեղոցն, և ախտից նոց յորոց նեղեին, այլ և հան-
գամանք հնարիցն՝ որովք ստացան զառողջու-

[1] Պաւսան. գիրք Բ. գլ. [2] Նոյն անդ, էջ 174։
97. էջ 172։

թիւն [1]։ Բռնանողութիւնքս այսոքիսի՝ աւան-դապահք փոքանոյ դարուց՝ յամենայն ժամանակի ցանկալիք են, այլ նախ քան զնառս մատենից բժշկականութեան՝ կարեւորք էին։ Ահա քուրքն Ալեքսանդրոս սպահէն 'ի մեհեանս մանրապատում զհանգամանս դարմանոյ բժշկութեանցն զորս գործեն [2]։ Եւ քուրքն Սկղեպիադայ Ալեղադա մուծին ընդ այլ արարողութիւնս իւրեանց և ըղ-սո�ութիւնս զայս զրեթէ յամենայն տեղիս, ուր և հաստատեցան [3]։ Խպոկրատ քաջ գիտաց զյարգ նոցա, և զմանն ինչ վարդապետութեան իւրոյ յաղագս զգուշութեան հիւանդաց՝ 'ի կիր էառ յարձանագրութեանցն՝ որ կան 'ի տեսիլ առ մեհենաւն, զոր կոչացիք կանգնեցին Սկ-ղեպիադայ [4]։

Բայց և զայն պարտ է ասել, զի քուրքն աս-տուածոյն փառասիրելով 'ի գործել հրաշս քան բժշկութիւնս, խաբէութիւնս 'ի կիր արկանէն յաձնախ՝ առ 'ի մեծարոյ լինել առաջի ժողովրդեան։ Գոհանալ արժան է, զի արտաքոյ քաղա-քաց և 'ի լերինս կառուցին զմեհեանս իւրեանց [5]։ Խպիդաւրեայն է յանտառի ուրեք, յորում ոչ

1 Պաւսան. գիրք Բ. գլ. 27. էջ 173։ Սարաք. գիրք Ը. էջ 374։

2 Գալէն. յՍ. բժշկ. գիրք Ե. գլ. 2. էջ 246։

3 Սարաք. գիրք Ը. էջ 374։ Դրուտեր. Նկարագր. հտ. 1. էջ 71։

4 Սարաք. գիրք ԺԴ. էջ 657։ Պլին. գիրք ԻԹ. գլ. 1. հտ. 2. էջ 493։

5 Պլուտ. Խնդ. հռովմ. հտ. 2. էջ 286։

ումեք օրէն է ծնանել անդ կամ մեռանել. զի առ 'ի մերժել 'ի վայրացն զահարկու կերպարանս մահուն, 'ի բաց տանին զախտաժետս որ 'ի շունչ վախճանին հասեալ իցեն, և զկանայս որ յերկունս կայցեն [1]։ Զդէզ ստածիչք, կրթութիւն մարմնոյ չափաւոր, և դեղք յստուկք սահմանեալ են կարևորք յառողջութիւն. այլ քրմացն զայսոսիկ ոչ բաւական համարեալ, և առ 'ի կարծեցուցանել զգործս բնական արգասիս գերբնական պատճառաց, յաւելուն բազում ինչ մնոտի արարողութիւնս 'ի դարմանսն։

Ուրնթեր մեհենին է տրամ մեծ, ուր եկաւորքն 'ի հարցանել զաստուածն՝ ածեալ գնեն 'ի վերայ սրբոյ սեղանոյ փոխինդս և պտուղս և այլ նուէրս, և անդ զգիշերն զայն ննջեն 'ի վերայ անձուկ անկողնոյ [2]։ Այն 'ի քրմաց ազգ առնեն նոցա 'ի քուն լինել և լուս կալ, թէպէտ և թերդիւն ինչ ըիցեն, և միտ դնել երազոց՝ զոր աստուածն ազդեսցէ 'ի նոսա [3]։ Լաւ ապա անցուցեալ զձրագան, փութայ ժողովել զնուէրսն է դեալս 'ի վերայ սեղանոյն [4]։ Զետ սակաւ միոյ թուի հիւանդաց լսել զձայն աստուածոյն, ոչ գի-

1 Պաւսան. գիրք Բ. գլ. 27. էջ 172։

2 Արիստոփ. 'ի Պլուտ. տող 662։ Պաւսան. գիրք Բ. գլ. 27. էջ 173։ Արիսաթգ. Ճառք, հտ. 1. էջ 515։ Փիլոստր. վարք խնամատակ. գիրք Ա. էջ 535։ Պղատ. յղ. չբրջան. արար. 1. աեսկլ. 1. էջ 263։ Սոպին. գլ. 7։

3 Կիկերո. յղ. ըղձ. գիրք Բ. գլ. 59. հտ. 3. էջ 89։

4 Արիստոփ. 'ի Պլուտ. տող 662 և 676։

տեմ խորամանկ արուեստիւք ինչ հնչեցեալ, եթէ քրմին յետս դարձեալ և բարբառս ինչ մերձ առ մահիձն նոցա շշնջեալ, և կամ զի 'ի հանդարտել զգայութեանց նոցա՝ էանայցեն 'ի ցնորս մտաց նոցա լուեալքն յառաջագոյն և տեսեալք անդադար 'ի ժամէ հատանելոյ իւրեանց անդր։

Զայն աստուածոյն սահմանէ զդեղս առողջարարս նոցա, ոչ ինչ օտար 'ի սահմանելոցն յայլոց բժշկաց [1]. և պատուիրէ նոցա որ ինչ պաշտամունս կրօնից պարտ իցէ նոցա կատարել 'ի յաջողութիւն զօրութեան դեղոցն։ Եթէ հիւանդին չիցէ այլ ինչ չար, բաց յերկիւղէ ամենայն չարեաց, և յանձն առնու լինել գործի խաբէութեան, հրամայի նմա յանդիման լինել 'ի վաղիւ անդր 'ի մեհենին, և անցանել կողմանէ 'ի կողմն բագնին, դնել զաջ իւր 'ի վերայ նորա, և ապա 'ի վերայ ախտակրեալ անդամոյն, և քարոզել բարձրաձայն զբժշկութիւն իւր 'ի լուր յոգնախուռն բազմութեան տեսողացն՝ որ հիացեալ կան ընդ հրաշն [2]։ Եւ զի և հեռի ուրեք առաքեն զհիւանդն 'ի կատարումն հրամանացն, որպէս զի մի պատիւ աստուածոյն անկցի [3]։ Եւ մերթ 'ի կերպարանս օձի այց առնէ աստուածն հիւանդաց, և խաղապատելովն քաջալերէ զյոյս նոցա [4]։

1 Գալէրք. պատմ. բժշկ. գիրք Ա. գլ. 20. էջ 60։
2 Գրուաբ. սատրապք. հատ. 1. էջ 71։
3 Արիստիդ. Ճառք, հատ. 1. էջ 516 և 549։
4 Արիստոտ. 'ի Պլուտ. առջ 688։

Զ՝ որ առ հասարակ նուիրեալք էն Յսկղեսպեայ, վասն ախտաբոյժ զօրութեանցն նոցա որ 'ի դեղս խառնին [1], և վասն այլոց ինչ իրաց՝ զորս աւելորդ է ասել. այլ սիրելագոյնք 'ի նոցանէ են աստուածոյն երկրին Լսպիդաւրեայ օձք խարտեշագոյնք [2] և անթոյնք, զգոնք և հանդարտք և որք 'ի մարդամօտի սիրեն կեալ։ Զն զոր 'ի ներքս 'ի մեհենի անդ տաճեն քուրմք, մերթ գալարեալ պատի զնոքօք, և մերթ կանգուն 'ի վերայ տտանն կարկամեալ կայ՝ առնուլ զՋամբն 'ի սկաւառակէ [3]։ Զ՝ուն ուրեք թողուն զնա արտաքս. այլ 'ի թողուլն՝ շրջի ընդ փողոցս Ձոխաձեմ. և 'ի տեսիլ նորա ցնծան ամենեքին, զի աւետեաց է գուշակ երևումն նորա [4]։ Կէսք մեծարեն զնա որպէս զսիրելի խնամակալուին իւրեանց աստուածոյ, այլք յերկիր խոնարհին առաջի նորա՝ զնոյն ինքն աստուածն կարծելով։

Զ՝ այսպիսիք ընտելասէրք էն և այլ ուրեք 'ի մեհեանս Յսկղեպեայ [5], և 'ի Զիսխեսեայ մեհեանսն [6] և այլոց ոմանց դից. և յաՁախագոյնք 'ի Պելլս մայրաքաղաք մակեդոնացւոց, ուր ըշբօսանք էն կանանց տաճել զօձս. և 'ի սաստիկ տօթ ամարայնի ածեն զնոսա զպարանոցաւ իւ-

[1] Պլին. գիրք ԻԹ. գլ. 4. հա. 2. էջ 303։

[2] Պաւսան. գիրք Բ. գլ. 28. էջ 175։

[3] Ա՛յսպէս 'ի գրոշմածս բաղումս գտանին տպաւորեալ պատկերքս նոցա։

[4] Պաւսան. գիրք Բ. գլ. 11. էջ 137։

[5] Պարապ. Արիստոփ. 'ի Պլուտ. տող 690։

[6] Վաղ. Մաքս. գիրք Ա. գլ. 8. յօդ. 2։

բեանց որպէս զմանեակ, և 'ի սպանդարանն տա-
կան տօնսն 'ի մոլեգնելն խուբեանց՝ պատատեն
զնոսա զիւրեանքն առ 'ի զարդ, կամ ընդ օդս
ձօձեալ տատանեն։ Մինչ դեռ էի ես Ալեքսա-
դրա, լուայ զի Ղլեմենտիան կին Փիլիպպեայ արքայ-
ին մակեդոնացւոց նիրհեցուցանէր զմի յօձից
առ իւրև. և յաւելին՝ Բարմաղդայ զկերպա-
բանս զեռնոցն առեալ, և հայր լեալ Բզեքսան-
դրի '։

Դիւրահաւանք են եպիդաւրացիք, և առա-
ւել ևս քան զնոսա ախտաժէտք. խուռն դիմեն
նոքա Ասկղեպիադրոս, և բոլորով սրտիւ ընդունին
զդեղսն՝ յորոց ոչ ինչ օգտեալ է նոցա յառաջա-
գոյն, այլ քաջայոյս վստահութիւն նոցա զօրա-
ւորս երբեմն գործէ զնոսս 'ի բժշկութիւն։ Բա-
զումք 'ի նոցանէ պատմէին ինձ հաւատով զե-
բազսն, որովք Բսկղեպեայ այց արարեալ էր նո-
ցա. և կէսք 'ի նոցանէ այնպէս մոլորեալք մտոք,
զի առ զոյգն ինչ երկայս վայրենանային. և այլք
այնպէս զարհուրեալք, զի հզօրագոյն յորդորք
փաստից ոչ բաւէին փարատել 'ի մտաց նոցա զար-
հաւիրս չարեացն. ամենեքին պատմէին բժշ-
կութիւնս՝ զորոց չէր նոցա անձամբ զփորձ առեալ,
այլ բերան 'ի բերանոյ անցեալ՝ զհաւաստեաց առ-
նոյր համբաւն զօրութիւն։

Դարձ արարեալ ընդ Բզդոս, յուզի անկաք

։ Պլուտ. յԱղէքս. հա. 1. գլ. 7. հա. 2. էջ 215։
էջ 665։ Ղուկիան. յԱղէքս.

'ի Լեմեա քաղաք՝ հռչակաւոր վասն որ 'ի նմա հանդիսից խաղուցն 'ի պատիւ Լբանազդայ յեբրիր ամն կատարելոյ։ ԼՍՂ քանզի և սոքա զբեթէ զնոյն տեսարանս ողնմպիական խաղուցն ընծայեն, առելորդ համարիմ պատմել. բայց միայն գիտելի է՝ զի արդիացիք հանդիսադիրքն են խաղուցն[1], և յաղթողացն անդ լախուր է մրցանակ[2]։ Լնտի ընդ լերանցամէջս անկաք յուղի, և հնգետասան ասպարիզաւ հեռի 'ի քաղաքէն առաջնորդք մեր ցուցին մեզ ահիւ զքարանձաւն, զմնրի առիւծուն՝ որ ընդ լախտիւն Հերակղեայ անկաւ տապաստ[3]։

Լնտի դարձ արարեալ 'ի Կորնթոս, յուղի անկաք անդրէն ՍԼԹԷՆս. ուր ընդ հասանելն իմ՝ սկսայ վերստին խնդիր առնել զկարգաց տեսչութեան նոցա, և զկարծեաց իմաստասիրացն, և զբազմաստեղն բանասիրութեանն տեսակաց։

1 Պաւսան. գիրք Բ. գլ. 15. էջ 144։ Յուլիան. Թուղթ վասն Արգեայց. էջ 408։

2 Պաւսան. գիրք Ը. գլ. 48. էջ 697։ Պլին. գիրք ԺԹ. գլ. 8. էջ 179։ Ղուկիան. Յղ. մրց. գլ. 9. հա. 2. էջ 888։

3 Պաւսան. գիրք Բ. գլ. 15. էջ 144։

ԳԼՈՒԽ ԾԴ.

Յաղագս պղատոնեան հասարակապետութեան։

ԿՐԿԻՆ տեսութիւնք զիմաստասիրացն Յունաց զայ գրաւէն զմիտս. թէ ինքն տիեզերքն վարին, և թէ ինքն զմարդիկ պարտ իցէ վարել։ Խնդիրքս այսոքիկ, հաւասարապէս արդեօք դժուարալոյծք, տան նոցա պատճառս անսպառ. Ճառից և մտաենագրութեանց։ Տեսցուք ստորև* թէ Պլատոնի զկազմութենէ տիեզերաց զինչ կարծիք էին ըստ Տիմէի. այլ աստ ցուցից որ ինչ հնարս խորհեցաւ նա առ 'ի կազմել միաբանութիւն իմն քան զամենայն միաբանութիւնս մարդկան բարեբաստ։

Ուրեք ուրեք խօսեցեալ էր նորա ընդ մեզ զայնմանէ, այլ Ճոխագոյն բացատրեաց մեզ զայն 'ի միումն աւուրց յակադեմական վայրսն, ուր 'ի ժամանակաց ինչ հետէ դադարեալ էր 'ի դաս ասելոյ, ցուցանելով զի բարեբաստ այն է՝ որ արդարն է, թէպէտ և չիցէն նմա 'ի դիցն պատրաստեալ վարձք, և 'ի մարդկանէ երկիւղ ամենայն չարեաց 'ի վերայ կայցէ։ Ը. 'ի քաջ խելամուտ լինել արգասեաց արդարութեան յիւրաքանչիւր ոք, խնդրեաց զարդասիս նորա 'ի տես-

* Ի ԾԹ գլուխ գրոցս։

չութեան՝ յորում առաւել հոլանի նա յայտնա-
գոյն աղգեցութեամբն և երևելագոյն նշանօք։
Մշաւասիկ համառօտագիծ օրինակ վարդապե-
տութեան նորա. 'ի դիմաց իսկ նորին յարգա-
լեմ զնաւս, այլ ներեսցին ընթերցողք եթէ չկա-
րիցեմ յաւելուլ յիմաստս նորա զգեղեցկութիւն
պահեալս շրթանց նորա. անկ էր նոցին իսկ
Շ նորհաց շարժել ատ զգրիչ։

Ի զմիապետութիւնէ և ոչ զընկերհաշտութեան
առաջի կայ ինձ նկարագրել պատկեր, զի ոչ ինչ
փոյթ է՝ թէ մի ոք կամ բազումք իշխիցեն. այլ
պետութիւն իմն կազմեմ, յորում ժողովուրդն
ընդ իշխանութեամբ առաքինութեան երանա-
ւէտ կայցէ։

Յերիս դասս զքաղաքացիս նորա բաժանեմ.
դաս վարձկանաց կամ խաժամուժ ամբոխին, դաս
պատերազմողաց կամ պահապանաց աշխարհին,
և դաս դատաւորացն կամ իմաստնոց։ Դասջնումն
ոչ ինչ տահմանեմ, զի նմա անկ է հետևել ուր և
յայլոց երկոցունց դասուցն վարիցի։

Կարևոր համարիմ գունդ իմն պատերազմ-
ղաց՝, որոց հանապազ զէն 'ի ձեռին կայցէ, և
որոց զոր ինչ պահել յաշխարհին անշարժ ըզ-
խաղաղութիւն։ Մի խառն ընդ այլ քաղաքացիս
կացցէ նա, այլ բնակեսցէ 'ի բանակի, միշտ կազմ
'ի ցաժուցանել զաղմուկս նեբբինս, և 'ի հալա-

[1] Պղատ. յլ. հատ. գիրք Բ. հտ. 2. էջ 373։

ծել զՀԷնս արտաքինս [1]։

Եւ քանզի ազգ այսպիսիք սահաւոր մարթէն վնասակար լինել յոյժ [2], և զի բրին է նոցա յապիրշտակել զերկանութիւն աշխարհին՝ 'ի դերև առնելով զամենայն զօրութիւնս նոցա, սանձահարեսցուք զնոսա ոչ օրինօք՝ այլ զօրութեամբ սահմանադրութեան ուղղելով զկիրս նոցա և զառաքինութիւնս իսկ։ Արթեսցուք զմիտս նոցա և զսիրտ երաժշտական վարժիւք, և յաւելցուք զարիութիւն նոցա և զքաջղջութիւն ըմբշական հրահանգօք [3]։

Դաստիարակութէ նոցա անդստին 'ի տղայութենէ լոյսի սկիզբն. մի ընկալցին տպաւորութիւնս հակառակս այնոցիկ՝ զորս յաւագոյթ տիոցն ընդունելոց են, և մի տացին նոցա զբօսանաք մնոտի կերգեացն աւանդելոց 'ի գիրսն Հոմերոսի և Հեսիոդեայ և այլոց քերթողաց. զի հերձուածք և վրէժխնդրութիւնք դիցն ստայոզք զանձիրս մեծամեծս ածեն 'ի յարդ մեծ, և թշուառութէ յոյժ է սովորել 'ի մանկութենէ առ ոչինչ համարել զդժնդակ եղեռնագործութիւնս։

Մի նմանութեամբք այսպիսեօք զաստուածականն անարգեսցուք. բանաստեղծութեան անկ է յանդիման առնել զնա համբակաց զօրականին

1 Պղատ. յդ. հաս. գիրք Դ. հա. 2. էջ 415։
2 Նոյն անդ, էջ 416։
3 Նոյն անդ, էջ 376։
4 Նոյն անդ, էջ 377։

ոչ գեղով միայն, այլ և մեծարանաբ։ Ինդաղար յեղանակեսցեն զի աստուած բարեաց և եթ ա-բարիչ է [1], ոչ ումեք առնել չար, պատիժք նորա բարերարութիւնք են, և զի չարք ոչ յորժամ պատժիցեն եղկելիք են, այլ յորժամ յաջողէ նոցա զոլ անպատիժ [2]։

Ասցին նոքա արհամարհել 'ի սպառ զմահ և զսպառնալիս դժոխոց [3]։ Լկաքք ահարկուք և պաՀուՀեալք Լոկիտոնի և ստիւգեան վտակաց իցեն ուրեք պիտանի, այլ ոչ առ այնոսիկ՝ որոց չէ պարտ գիտել այլ երկիւղ, բայց զոր ինքեանք յայլս արկանեն։ Լեթէ խելամուտ իցեն նոքա՝ զի մահ ոչ է չար [4], և զի իմաստունն ինքն անձին իւրումբաւական է, տեսցեն շուրջ զիւրեամբք զաղգականս իւրեանց և զբարեկամս անշնա-ցեալս, և ոչ կաթիլ մի արտասուաց ցողեսցեն 'ի վերայ նոցա, և ոչ յոգւոց հանիցեն։ Լաւ է պարտ կրել նոցա կիրս առաւելագնոց սգոյ կամ ուրա-խութեան և կամ բարկութեան. մի գիտասցեն նոքա և զդղջն զոչաքաղութիւն, և զստութիւն զևս դուշնաբեայ՝ թէ իցէ հնար. ամաչեսցեն ընդ մեղկութիւնս և ընդ անգթութիւնս, զորս քերթողք ընծայեն նախնի պատերազմողաց [5]. և համարեսցին Ճշմարիտ քաջութիւն նուաճել

1 Պղատ. յզ. հաս. գիրք Գ. էջ 379։
2 Նոյն անդ. գիրք Բ. էջ 380։ Նոյն ի Գորգ. հտ. 1. էջ 472 և 509։
3 Նոյն. յզ. հաս. գիրք Գ. էջ 386։
4 Նոյն անդ, էջ 387։
5 Նոյն անդ, էջ 391։

զկիրսն և հնազանդել օրինաց։ Պրոշմեսցին 'ի հոգւոջ նոցա որպէս 'ի պղնձի՝ տիպք արդարու-թեան և ճշմարտութեան յաւէժականք. տպաւորեսցին 'ի նմա անջինջ, զի չարք թշուառք են և 'ի յաջողութեան [1], և առաքինութիւն բարեբաստ է 'ի հալածանս և 'ի մռայծնս իսկ։

Այլ է պարտ զճշմարտութիւնս զայսոսիկ յանդիման առնել սեթևեթիւք, որ այլայլեն զշուք նոցա [2]։ Այ բաց կացցեն գուսանք, որք անարգեն զայնոսիկ 'ի տեսարանի՝ յաւելեալ 'ի նոսա զտիպս կերպարանաց ծանծաղամտութեան և բնաւորական ախտից մարդկան։ Զարտարութիւն նոցա աղդ 'ի մանկտին մեր ախորժակս նմանութեան, որք 'ի տղայ տիոց տարբացեալ 'ի նոսա՝ փոխին 'ի բարս, և յամենայն դէպս կենաց 'ի վեր երևին։ Այլ է պարտ նոցա բերել յանձին շարժուածս և խօսս՝ որ ոչ 'ի ձահ պատահեն զիմանցս զոր կրեն, այլ ձևով և բանիւ 'ի դէմն ածել զարբութիւն առաքինութեան, և կրել առ 'ի զարդ զանպատմելի պարզութիւն։ Այնթե սպրդեսցի 'ի ներքս 'ի քաղաք մեր մտանել մի 'ի քերթողաց անտի՝ ձարտարաց յարուեստ փոփոխելոյ զկերպարանս և զիսօս, և յանձին բերելոյ անխտիր զամենայն զդէմս, հեղցուք իւղս անուշունս 'ի գլուխս նորա, և 'ի հրաժեշտի կացուսցուք զնա [3]։

1 Պղատ. յղ. հաս. գիրք Դ. էջ 392։
2 Նոյն անդ, էջ 394։
3 Նոյն անդ, էջ 398 և 399։

Ի բաց մերժեսցուք զոլորակս ողջականս լի-
դացի նուագաց, և զմեղկութիւն յոնիական երգ-
ոց։ Զդրդականն ընկալցուք զեղանակ, որոյ
առնացի աղդումն յորդորեսցէ զպատերազմ-
դացն մերոց խրախոյս. և զփութգականն, որոյ
հանդարտ և երկիւղած աղդմունք յարմարես-
ցին ընդ խաղաղութեան հոգւոց նոցա։ Զյլ զեր-
կոցունց ևս այսոցիկ եղանակաց զսպեսցուք զկը-
լորմունս, և բռնադատեսցուք զնոսա 'ի նաղելի
գնացս՝ պատշաՀեալ ըստ հանգամանաց, և 'ի
ՀաՀ առաջիկայ նուագացն, և բառից երգոցն՝
որոց պարտի հպատակել'։

Ի քաջագէպ յարմարութենէ աստի բառից
ընդ գաղնակս նուագաց և ընդ թիւս՝ յառաջ գայ
պատշաՀն, և նոքին իսկ գեղեցիկն՝ զորոյ զտիպս
պարտ է համբակաց մերոց ունել հանապազ 'ի
միտս։ Կարգութիւն և Հարմարապետութիւն
և բնաւ ամենայն արուեստք ընծայեսցեն զայն
նոցա 'ի տեսիլ, որպէս զի շուրջ պատեալ նոցա 'ի
պատկերաց գեղեցկութեան, և ամենուստ կրե-
լով 'ի նոցանէ յարձակմունս, և 'ի մէջ նոցա կե-
լով՝ որպէս 'ի ջինջ և 'ի պարզ օդս, թաթաւեսցին նոքօք մինչև ցոգիս, և սոսրեսցին յառաջ բերել զնոյնս 'ի գործս իւրեանց և 'ի բարս [1]։ Մնեալք աստուածազան սերմամբքս, զայրագնեսցին 'ի տեսիլ ախտից՝ ոչ տեսանելով 'ի նոսա զվը-

[1] Պղատ. յզ. հաս. գիրք գ. էջ 398։ [2] Նոյն անդ, էջ 401։

սեմ տիպն, զոր կրեն 'ի հոգւոջ։ Յնծայսցեն 'ի բարբառ բանին և առաքինութեան, զի տեսցեն 'ի նոսա զծանօթ և զընտանի կերպարանս։ Ա-ւրեսցեն զգեղ զմայլմամբ սիրոյ, այլ ոչ զառանցանօք։

Այլոյն խնամոյք ուղղեսցեն և զմանն դաստիարակութեան, որ 'ի պէտս և 'ի կրթութիւն մարմնոյ պատկանեալ։ Մի լիցի աստանօր կարգ կենաց հաստատուն և միօրինակ. զի որոց առաջի կայ 'ի բանակի վարել զկեանս և զնուրբական պարապել գործոց, պարտ է սովորել 'ի տակ քաղցի և ծարաւոյ, ցրտոյ և տօթոյ, և բնաւ ամենայն կարեաց և աշխատութեանց և յեղանակաց տարւոյ։ Յանպատճոյռ պարէնս գտցեն ըզգանձ առողջութեան, և 'ի հանապազօր հրահանգս զյաւելուած արիութեան քան կորովոյ [2]։ Որք լիցեն 'ի բնէ պնդակազմք, մի խնդրեսցեն նպաստիւք արուեստի կազդուրել զբնութիւնն։ Հանգոյն վարձկանաց, որոց չիք պարապ դարմանելոյ զմարմինն վասնեալ յաշխատութենէ [3], ամանչեսցեն երկարաձգել խնամովք զկիսամեռ և զանպիտան հայրենեացն զկեանս իւրեանց։ Օ յեղակարծ ախտից զդէմ կալցին պարզ և առձեռն պատրաստ դեղովք. անծանօթ լիցին նոցա որ 'ի շուայտութենէ և 'ի զեղխութեանց հիւանդութիւնք, իսկ զոր որոց 'ի ծնէ ոք բերէ յան-

1 Պղատ. յոլ. հատ. գիրք Գ. էջ 403։
2 Նոյն անդ, էջ 410։
3 Նոյն անդ, էջ 406։

ձին զբողջոջ՝ 'ի դէպս բախտին լոցի ապատան [1]։ Ա. յսու օրինակաւ հալածեացի բժշկականութիւն 'ի բաց, որ ոչ այլ ինչ հնարի՝ բայց յանձնել զցաւս մեր, և երկարատև զմահ մեր գործել։

Լուեմ աստանօր զհրահանգս որսոց և զկաքաւս և զբմբշամարտս [2], լուեմ և զանլուծանելի պարտս մեծարելոյ զծնօղս և զալիս [3], և զբազմապատիկ կարգաց պահպանութիւնս, որոց մանրապատում չնաւք արտաքոյ հանեն զիս յառաջարկութենէս։ Ա. յլ զընդհանուր կարգս ասացից, և ըստ մանանեայք ինքնայորդոր 'ի նոցունց յառաջ գայցեն, և ըստ հանգամանաց իրաց պատշաճեսցին։ Կարևոր այն է, զի երաժշտութիւն և բմբշամարտ ձեռն տացեն երկաքանչիւր 'ի դաստիարակութիւն, և հրահանգք մարմնոյ կացցեն ընդ կրթութեան մտաց 'ի կշիռ. զի երաժշտութիւն ինքնին միայնակ մեղկէ զբարս ամբքելով [4], իսկ բմբշամարտքն խիստ և վայրագ առնեն զբնութիւն կազդուրելով։ Ը. երկոսին զայսոսիկ ընդ միմեանս կցորդեալ արուեստս, և իրերօք գնոսա բարեխառնեալ, մարթ ասցուք ձգտել և թողացուցանել ըստ Ճիշդ համեմատութեան զբնութիւնս հոգւոյ զկարի տկարն և զյոյժ սաստիկ. որով մարտկաց մերոց զկորով և զարիութիւն խառն ընդ հեզութեան և հանդարտութեան

[1] Պղատ. յոլ. հաս. գիրք Դ. էջ 410։
[2] Նոյն անդ. էջ 412։
[3] Նոյն անդ. գիրք Դ. էջ 425։
[4] Նոյն անդ. գիրք Դ. էջ 410։

յանձինս բերելով, ահարկուք քան զամենայն մարդիկ թուեսցին յաչս թշնամեաց, և սիրելիք յաչս քաղաքացոց[1]։ Լաւ զգուշալի է, առանց նորաձևութեան ինչ 'ի կանխակալ սահմանադրութիւնն մուծանելոյ՝ յառաջ ածել զարգասիս զայսոսիկ։ Այլ ոչ միայն 'ի փոխել կարգաց երաժշտութեան՝ խախտին հիմունքք օրինաց առաջնորդութեան, ըստ կանխասաց մերոցս բանից[2], այլ և փոփոխումն խաղաց և տեսարանաց և դուշնաբերից իսկ սովորութեանց զնոսն ածէ վնասանգ[3]։ Վասնզի առ ազգս, որք սովորութեամբ ուղղին քան օրինօք, դոյզն ինչ նորաձևութիւն բազմավտանգ է. զի 'ի խափանել միոյ իրիք 'ի սովորութեանց, անկանին կարծիք իմաստութեանց. և 'ի սպրդել միոյ իրիք զեղծման, թոյն ընդ աշխարհն ծաւալի։

Յմենայն ինչ 'ի հասարակապետութեան անդ հպատակեսցէ դաստիարակութեան մարդկայ[4], և դաստիարակութիւն նոցա խստութեան հրաւանգաց։ Օպարհպանութիւն դոյզն իսկ կարգի պարտ համարեսցին անձանց, և զգոյշն ինչ անպարհպանութիւն՝ ոճիր։ Եւ մի ոք զարմասցի զի այսքան զօրութիւն վարկանիմ ունել գործոց՝ որ դուշնաբերացք թուին. զի թէպէտ և ուղղակի առ օգուտ հասարակաց ոչ բերեին, կարևոր էր

1 Պղատ. յզ. հաս. գիրք Բ. էջ 376։
2 Նոյն անդ. գիրք Դ. էջ 424։
3 Նոյն յզ. որ. գիրք Է. էջ 797։
4 Նոյն յզ. հաս. գիրք Դ. էջ 423. և այլն։

յոյժ զգուշութիւն 'ի կատարումն նոցա. զի հա-
կառակք են և բռնադատիչք յօժարութեան։
Բ. Յոյժն է ամբաստանալ զՀոգիս 'ի ծագ կատարե-
լութեան իւրեանց և օգտակարութեան հայրե-
նեաց. որպէս զի 'ի ձեռանէ առաջնորդաց լիցին
բաւական 'ի յանձանձանս թեթևագունից և
կարևոր իրաց, ընկալեսցեն հանապազ զկամս իւ-
րեանց, և դժկամակաց ժուժկալութեամբ ուս-
ցին՝ ոչ ևս խորհել, ինչ կամ առնել կամ ցանկալ
իմիք, բայց միայն յօգուտ աշխարհին։ Իսկ որք
հրաժարել 'ի կամաց իւրեանց ոչ կարեն, մի
մնցեն 'ի դաս մնարակաց, այլ ընդ արուեստա-
ւորս և ընդ աշխատաւորս դասեսցին '. զի ոչ է
մարթ պետութեանց ազնուականութեամբ ազ-
գատոհմի ուղղել, այլ յաջողութեամբք հոգւոյ։
Մ. Ինչ չև յառաջ ևս մատուցեալ՝ տացուք համ-
բակաց ակնարկել 'ի կեանսն որ առաջի կայ նո-
ցա, որպէս զի մի պակիցեն 'ի խստութենէ կար-
գացս, և յօժարագոյն կազմեսցին 'ի բարձրա-
գոյն պայման կենացն որ ինայ նոցա։
Լ. Թէ զօրականն կալուածս և տունս ժառան-
գիցէ, եթէ ոսկի և արծաթ ժանգոտիցեն միան-
գամ զձեռս նորա ², ոչ յամենեսցեն ապրիլել 'ի սիրտ
նորա փառամոլութիւն և ատելութիւն և ամե-
նայն իսկ կիրք, զորս զՀետ իւրեանց առեալ ձգեն
մեծութիւնք, և այնուհետև լիցի նա իբրև զմի

¹ Պղատ. յՊ. հաս. գիրք ² Նոյն անդ, գիրքն. էջ 416։
Գ. էջ 415։

'ի սինկքոր մնարդկանէ։ Օ երծուացուք զնա յա-
մենայն երկրաքաղաղ հոգոց աստի. հասարակաց
լիցի զօրականին ձաղ 'ի գանձուց աշխարհին.
հայրենիքն՝ որում նուիրէ նա զամենայն զիսոր-
հուրդս իւր և զիւղձս, յանձն առցէն զՀոգ սի-
տոյից նորա՝ որ 'ի կարևորսն սահմանեսցին։ Այ-
եթէ զայն ինչ որ ինձ 'ի դէմն ածիցէ, զի 'ի բա-
բերբախտութենէ այլոց քաղաքացոց վերջացեալ
զտանի զօրականն կարօտութեամբքն, գիտասցէ
զի ոչ է պարտ օրէնսդրին 'ի բարեբաստութիւն
դասուց իւրաքանչիւրոց՝ ուշ ունել, այլ 'ի բոլորիցն
առ հասարակ '։ Որ ինչ հնարս և 'ի կիր արկա-
նիցէ, եթէ միայն յաջողեսցի, հայթայթէ զո-
զուտ իւրաքանչիւրոց՝ որ 'ի հասարակացն յե-
ցեալ կայ։ Պարձեալ և քաղաքն զոր կառուցա-
նեմք՝ ոչ թէ զեղցի փափկութեամբք, այլ այն-
պէս ուղղեսցին 'ի նմա վաստակք՝ զի աղքատութի-
անտի 'ի բաց տարագրեսցի առանց 'ի նեղքս մը-
տանելոց փարթամ ՀՈՒՐԹԵԱՆ '. և ոչ այլով
իւիք ընդհատ իցէ 'ի նմա զօրականն յայլոց քա-
ղաքացոց, բայց միայն առաւելագոյն առաքինու-
թեամբ և նուազագոյն պիտոյիւք։

Հնարեցաք պարսպել զնոսա 'ի զօշաքաղու-
թենէ, որ զՀետ իւր առեալ ձգէ ոՀիրս տմբաւ.
այլ արժան է խլել 'ի սրտէ նոցա, կամ մանաւանդ
ուղղել 'ի նոսա զաղղմունս բնութեան, և միա-

1 Պղատ. յղ. հաս. գիրք 2 Նոյն անդ. էջ 421։
Դ. էջ 420։

բանել ընդ իրեարս նովին իսկ իրօք՝ որ արկանեն 'ի նոսա հերձուածս։ Մոտանեմ արդ 'ի նոր ասպարէզ, յոր ահիւ յառաջ մնատչիմ. զի խնամոյ, զորս առաջի կայ ինձ յանդիման առնել, օտարացուցիչք թուեսցին և մնացածինք։ Այլ և ես իսկ կասկածեմ ընդ բանս իմ. և կասկածանքս այս, եթէ արդարև սխալեմ, աստստին արժանի ներելոյ կացուսցեն զակամայ սխալանս իմ։

Կանանին, զոր մեք 'ի պարապու�ն անշան և առանին և եթէ գործոց ամիսիեմք, չիցէ արդեօք յաղնուագոյն և 'ի բարձրագոյն գործս ձեռնհաս։ Չիցէ երբէք 'ի վեր երևեալ առ նոսա արիութիւն և խնամտութիւն և 'ի բնաւ ամենայն առաքինութիւնս և յարուեստս զարգացումն [2]։ Վերևս զի առաքինութիւնք նոցա բնաւոր տկարութեամբն նոցա զգածեալ են և խոնարհագոյնք քան զմերսն, իցէ՞ն այնու անպիտանք հայրենեացն։ Ոչ բնաւ. բնութիւնն չընձեռէ ինչ հանճար անարգասուր. և օրէնսդրին հանճարտարութիւն մեծ այն է, 'ի գործ արկանել զամենայն զօրութիւնս բաշխեալս 'ի նմանէ՝ զորս մեք անգործ առնեմք։ Զ՝ օրականն մեր բաժանեսցի ընդ հարսին իւրում զհոգ պահ ունելոյ խաղաղութեան քաղաքին, որպէս շուն հաւատարիմ 'ի յանձնեալ նմա պահն օգնական իւր ունի զընկերն [3]։ Արկաքանչիւր 'ի նոյն վարժս դաստիա-

[1] Պղատ. յՀ. հաս. գիրք Ե. էջ 452։

[2] 'Նոյն անդ, էջ 455։

[3] 'Նոյն անդ, էջ 451. գիրք Է. էջ 537։

բակեսցին, 'ի նոյն տեղիս, և առ ոտս նոցին վաղ-
ժամեսցայ։ Վնկալցին 'ի միասին երկաքանչիւր
ընդ նախակրթութեան գիտութեանց զիսրատս
իմաստութեան. և 'ի կռուանոցս օրիորդք 'ի բաց
եղեալ զհանդերձս իւրեանց, և զգնեալք պա-
տուականագոյն քան զգեստիւք առաքինութեան,
գուսպարեսցին 'ի հրահանգս, խրել 'ի նախան-
ձողդ մանկուսոյն զմիջանակն։

Համեստութիւնս մեր և ապականութիւն բա-
ղուց կրէ ոստի վտանգ, այլ երկար սովորութիւն
և սրբութիւն բարուց նուազ արասցեն զվտանգն։
Բայց դատաւորաց լիցի հոգ խափանել զգեղծ-
մունս [2]. 'ի տնս սահմանեալս յօրինաւոր և 'ի
սուրբ զուգութիւն՝ արկցեն 'ի սահիսք զանուանս
այնոցիկ, որ հանդերձեալ են տալ ախոյեանս աշ-
խարհին։ Ասատերաց չափ հասակի յերեսնամե-
նից մինչև 'ի յիսուն և հինգ սահմանեսցի ամ,
իսկ դստերաց 'ի քսանամենից մինչև ցքառասուն [3]։
Թէ ուրեմն վերնակեղեցոյն համեմատեսցի պակասելոցն
աշխարհին. զի պարտ է յերկուցն և անչափու-
թեանց խոյս տալ, յանմարդութենէ և 'ի բազ-
մամարդութենէ։ Բախտն վեր 'ի վերոյ թուեսցի
ընտրոյն անօրէն, այլ դատաւորք ճարտար
հնարիւք ուղղեսցեն զիսառն 'ի խուռն բաշխս
նորա, և ընտրեսցեն միշտ յուստերաց և 'ի դստե-
րաց զայնոսիկ՝ որք անխառն զտոհմ զօրականին

1 Պղատ. յդ. հատ. գիրք Ե. էջ 452 և 457։
2 Նոյն անդ, էջ 458։
3 Նոյն անդ, էջ 460։

մերոյ պահեսցեն։ Ի ժամ վիճակացն արկանելոյ քուրմք և քրմուհիք հեղցեն զարիւն զոհիցդ 'ի բաղինս, և օդք հնչեսցեն յերգս հարսանեկանս[1]. և ժողովուրդն վկայ եղեալ և երաշխաւոր կապանացն զոգելոց վիճակաւ, խնդրեսցէ յերկնից ծնօղացն առաքինեաց առաքինագոյն որդիս։

Որդիք 'ի հարսանեաց ասսի ծնեալք զատուցեալ անդէն յաղգականացն, առանդեսցին 'ի տեղի ուրեք՝ ուր մարք նոցա երթիցեն դիեցուցանել զնոսա անխտիր ի ումեք և դիպեսցի յանծանօթս, և մի լիցի նոցա օրէն պահել զկաթն 'ի ջամբ որդւոց ևեթ իւրեանց[2]։

Յորրանս անդ զօրականին մի երևեսցին տղայք արատաւորք 'ի ծնէ, այլ հեռի յանկեան ուրեք ծածկեսցին։ Մի զացին անդ և մանկունք ծնեալք 'ի հարսանեաց կատարելոց առանց վեհափառ արարողութեանցս զոր ասացի. և մի այնոքիկ, որոց ծնօղք 'ի տարաժամ հասակի վաղ կամ անագան քան զսահմանեալ ժամանակն ամուսնանայցեն[3]։

Ի կատարել ամուսնաց զլիզն հայրենեացն՝ մեկնեսցին 'ի միմեանց, և կացցեն ազատ, մինչև իշխանք միաբանգամ կոչեսցեն զնոսա 'ի հարսանիս, և վիճակն սահմանեսցէ նոցա այլ զոդ։ Այսոքիկ զհետ միմեանց հարսանիք և ապահարզանք ընդ բաղումս 'ի զօրականէն կցորդեսցեն

[1] Պղատ. յՊ. հատ. գիրք Ե. էջ 459։
[2] Նոյն անդ. էջ 460։
[3] Նոյն անդ։

զկանայս [1]։

Ա. Յլ յանցանել երկաքանչիւրոց ըստ հասակն սահմանեալ առ օրինադիր հարսանիսն [2], ազատք լցեն ամուսնանալ. բայց միայն թէ մի ծնանիցին որդիս, և մի ընդ այնոսիկ՝ որոց տուեալ լցեն կամ ընկալեալ 'ի նոցանէ զկեանս՝ խառնակեսցին։

Զ. քանզի չէ մարթ ձանաչել նոցա զմիմեանս, համարեսցին ուստերս և դստերս իւրեանց զամենայն մանկտին ծնեալ ընդ հարազատ որդիս իւրեանց. և պատրանքս այս լիցին պատճառք միաբանութեան, անծանօթք առ այլ ազգս [3]։ Զ. 'ի իւրաքանչիւր ոք 'ի զօրականէն ազգականս իւր զգինուորակիցսն համարեսցի. որով այնքան յաճախեալ 'ի նոսա կցորդութիւնք արեան, զի ամենայն ուրեք հնչեսցեն և սրբազան անուանք գորովոյ հօր և մօր, ուստեր և դստեր, եղբօր և քեռ։ Պ. ութք բնութեան ոչ ևս ամիտիեսցին յոմանս, այլ զեղեալ ծաւալեսցին ընդ ազգատոհմն մեծ՝ զնոյն հոգի յամենեսին 'ի նոսա ներգործելով։ Ա. մենայն ոք գիւրաբար լցցի ըզպարտս իւր սիրայորդոյ. և յիւրաքանչիւր ըզձից 'ի բաց մերկացեալ, թեթևացուսցեն զվիշտս իւրեանց՝ վշտակից լինելով միմեանց, և յաճախեսցեն զբերկրութիւնս՝ հաղորդելով իրերաց։ Լցեսցին բոլորովք հերձուածոց սատանու զվիսա-

1 Պղատ. յղ. հաս. գիրք Ե. էջ 457։
2 Նոյն անդ. էջ 461։
3 Նոյն անդ. էջ 463։

ւորաց, և ամենայն բռնութիւն կաշկանդեսցի երկիւղիւ թշնամանելոյ զընութիւն [1]։

Այս նախանձելի գութ գորովոյ, որ զոգէն զնոսա ընդ միմեանս 'ի ժամանակի խաղաղութեան, զօրաւորագոյն և զարթիցէ 'ի նոսա 'ի պատերազմի։ Ինցցէ 'ի Ճակատ գունդ քաջամարտիկ մանկտւոյն, լի արիութեամբ [2], փարձ 'ի պատերազմունս 'ի մանկութենէ, և ժամանեալ 'ի կէտ պայծառացուցանելոյ զմթերեալ առաքինութիւնսն, զվստութիւն նախատինս հանարելով, զարութիւն զերասանձ փառս, և զմահ արժանի բաղնաց. անդ բարբառ հայրենեացն հասցէ 'ի լսելիս նոցա, խրախուսելով զնոսա 'ի պահ աշխարհին. և յաւելցին 'ի նոյն բարբառք կերգերջականք սիրոյ, ցուցանելով ընդ կարգս Ճակատուն զսիրելիս նոցա դիմագրաւեալս 'ի վտանգ. և առ ազդելոյ 'ի սիրտ նոցա զՀզօրագոյն և յորդորանս քաջութեան՝ յաւելցին անդր և կանայք և որդիք նոցա, կանայք առ 'ի պատերազմակից լինել նոցա և զօրավիգն ձայնիւ և ակնարկութեամբ, և որդիք՝ զի պարտք են հայրենի կրթել զնոսա 'ի վարժս քաջութեան, և զի թերևս դիմեն 'ի Ճակակ բազմախողխող երկաթոյ թշնամւոյն։ Այդ իցէ հնար, զի բանակ այսպիսի իբր հրով ծաստղականաւ վառեալ այսքան հզօր յորդորանօք՝ երկմտիցէ ամենայն զօրութիւն իւրով

[1] Պղատ. յղ. հաս. գիրք Ե. էջ 465։ [2] Նոյն անդ, էջ 471։

և սրտմտութիւն անկանել իբրև զշանթ 'ի վերայ թշնամեաց, և ջաղխել զգունդս նոցա անընդդիմակաց թափով։

Բ. յոքան մեծամեծք լիցին արգասիք միաբանութեանն հաստատելոյ 'ի մերում զօրականին։ Այիս և առաքինութեանն և էթ նոցա իցեն արգասիք՝, չզեղծանել յաղթութեամբն՝ քաղցունք գթածք և մարդասէրք գոլով։ Յարբերցութեան իսկ յաջողուածոց մի մնարերեսցեն 'ի շղթայս արկանել զթշնամին պարտեալ, և մի զդիակունս անկելոց նորա թշնամանել 'ի ձակատուն տեղւոջ, մի զզէնս նորա կախել 'ի մեհեանս դից՝ որ չէն իսկ այնպիսի նուէրքն ընդունելի, և մի յաղարտ վարել զանդաստանս, և մի զտունս հրձիգ առնել։ Զի հազիւ թէ ընդ ազգս խուժադուժս օրէն իցէ առնել զանդթութիւնս զայսոսիկ, թող թէ յԱղլատդա ընդ համազգիս բարեկամս, որոց հերձուածք ոչ է պարտ թէ պատերազմ 'ի նեերքս ածիցեն, այլ աղմուկս վաղանցուկս՝ որպէս որ երբեմն 'ի համաքաղաքացիս յուզին շփոթք[2]։

Զարեբաստութիւն զօրականին թուի ինձ լիով պատրաստեալ[3]. զի հրաժարելովն յընչից զտցին ձոիք, և ոչ ինչ ժառանգելովն վայելեցեն զամենայն. չիցէ ոք 'ի նոսա որ չկարիցէ ասել. Զամենայն ինչ ունիմ։

1 Պղատ. յղ. հաս. գիրք Ե. էջ 469, և այլն։

2 Նոյն անդ, էջ 465։

3 Նոյն անդ։

Յայնժամ Աբիստոտել, որ անդ լուռ ևեթ կայր, զնովիմբ ածեալ՝ ասէ. Սակայն չիցէ և ոչ այն որ՝ որ չյաւելուցու, թէ ոչ ինչ իսկապէս ունիմ։ Ով Պղատոն, ոչ հատարակաց զոյք յոր վայելեալն, այլ իւրաքանչիւր ուրուք սեփականք սիրելագոյնք են մեզ։ Մի այլ իմիք 'ի զօրակա-նեդ քումմէ ակն ունիցիս, եթէ չիցէ ինչ նմա ժառանգութիւն սեփական, բայց անեռանդն փութոյ՝ որոյմ չիք ուշոյ նպատակ։ Պութքնոցս ոչ կարելով յենուլ 'ի հոյլս այնչափ բազմութեանէ որդւոց, որ շուրջ պատեալ կան զնովաւ, նուա-զեալ անկցին։ Աբ յընկեր իւր ապաստան ա-բասցէ զհոգ լինելոյ նոցա յօրինակ և 'ի յորդոր, որպէս որ 'ի տունս սպասաւորէն ստրուկք զհա-սարակաց պարտս պաշտաման 'ի միմեանս թող-լով[1]։

Պղատոն ասէ. Լրկու ինչ եղիր 'ի սիրտ զօրա-կանին, որոց 'ի միասին պարտ է յորդորել զնա անզաղար 'ի նախանձ. զզգայութիւն ասեմ և զառաքինութիւն։ Բռաջնումն ոչ միայն հատարա-կաբար քաղաքակիցս իւր զամենեսին համարեա-ցի, այլ և ազգատոհմ իւր. և նսեմութիւն ծննդեան ոչ նսեմացուսցէ նմա զիրաւունս ազ-գականութեան։ Եթէ աստանօր պատրանք ոչ որպէս զարդիւնս իրաց ազդողականք իցեն, սա-կայն ընդարձակատարածք են քան զնոսա և օգ-

[1] Աբիստոտ. յՊ. քաղաք. հտ. 2. էջ 314, և այլուր։ Քաւաբ. դիրք Բ. գլ. 3 և 4.

տակարագոյնք աշխարհին։ Օ՛յ ոչ ինչ է փոյթ նմա թէ իւրաքանչիւր ոք խանդաղակաթ զիւրովքն գորովիցն, այլ զի 'ի սիրտս ամենեցուն ծաւալիցի գութ բաւական 'ի կցորդել զնոսա հասարակաց զօդիւ։ Այլ եթէ սա տկար իցէ և անբաւական 'ի յարդարել զզօրականն մեր զգոյշ և ժիր, է մեր և այլ յորդոր, զառաքինութեանն ասեմ վեհագոյն զօրութիւն՝ որ մղեսցէ զնոսա անդադար 'ի վերս քան զպարտսն։

Արկնեալ անդրէն Աբիստոտելի՝ հակառնառել կամէր, այլ մեք խափանեցաք զնա. բայց միայն ասէ ցՊղատոն. Լաւ վկայիցէ՞ն միտք քո թէ մարթիցի հասարակապետութեան այդպիսւոյ կալ։

Պատասխանի ետ Պղատոն հեզութեամբ և ասէ. Լսեա՛ զինձ զդիտաւորութիւն առաջարկութեանս '. զի զբարեբաստութիւն անմեկնելի յարդարութենէ կամք են ինձ ցուցանել, և՝ վասն այնորիկ խնդրեմ զլաւագոյնն 'ի կարգս տեսչութեանց, որպէս զի ցուցից ապա զի նոյն ինքն և բարեբաստագոյնն է 'ի նոսա։ Լինի՝ եկարիչ ոք մեզ յանդիման առնիցէ զգեղեցկութիւն 'ի վերս քան զամենայն որ 'ի միտս մեր գոյանան տեսակս, էպերիցէ՞մք զնա այնու զի չիք ինչ հանգոյն նմին ընդ տիեզերս։ Այդ և ես զպատկեր կատարելագոյն հասարակապետութեան յանդիման առնեմ, նախատիպ՝ ընդ որում այլ և այլ կարգք

1 Պղատ. յզ. հատ. գիրք Ե. էջ 472։

սեսչութիւն Հաստատմատեալ ըստ առաւելագունեալ նմանութեանն այնմ, դատեսցին առաւել կամ նուազ բարեբաստք։ Այլ ոչ ստոյգ զկայ առեալ, յաւելում և ևս՝ զի թէպէտ և եղջերուաքաղ թուիցի առաջարկութիւնս, այլ մարթի սմա յեղանակաւ իմն գալ յարդիւնս, ոչ միայն առ մեզ՝ այլ և ամենայն ուրեք, եթէ յանձանձանաց իրաց աշխարհին փոփոխեսցին կարգք։ Այլ որ այն կարգաց փոփոխումն իցէ. զի խմաստասէրքն թագաւորեսցեն, կամ թագաւորք խմաստասիրեսցեն։

Ցոտարացուցիչս իմն թուեցայց բերել սովաւ 'ի ըստելիս այնոցիկ, որոց անծանօթ է Ձնմարիտն խմաստասիրութիւն. բայց այլք խելամուտ լիցին, զի առանց այսորիկ չիք դեղ դարմանոյ չարեացն՝ որովք տուայտի մարդկութիւնս։

Յամէ արդ զկարևորագոյնէն զերրորդ դասուէ քաղաքացոյցն կարգել զՆառս. զաւագանս ոչ մերոյ ասեմ զսակաւուց արանցն ընտրելոց 'ի գնդէ առաքինեաց, զպետացն՝ որք 'ի կարգէ զօրականին առեալ, այնչափ 'ի վերք քան զզօրականն գերապանծ վաստակաք անցեալ կացցեն՝ որչափ սա 'ի վերք քան զարուեստաւորս և զաշխատաւորս։

Ա՝եծի զգուշութեան պէտք են յընտրութի արանց այսպիսեաց զարմանալեաց, բազմախոյզ քննութեան 'ի Ձանաչել զնոսա, և ժիրաժիր

[1] Պղատ. յՊ. հատ. գիրք Ե. էջ 473։

խնամոց 'ի կրթել։ Ա՝տցուք 'ի սրբարան անդր, ուր հրահանգի մանկտին զօրականին, և ուր մանկունք այլոց քաղաքացոց արժանի լինին ընդունելոյ։ Ալբ միանգամ ընդ գեղ կերպարանաց և ընդարձակս բարեձևութիւնս յանձին բերելով՝ փայլեն 'ի մենդակիս իւրեանց մանկտին կրթութեամբք մարմնոյ և մտաց', 'ի նոսա զանկն կառուցուք. տեսցուք եթէ 'ի դէմս նոցա և 'ի զբոյցս նշողիցեն անդստին 'ի մատաղ տիոց ցանկութիւն գիտութեան և սէր բարւոյ. եթէ ըստ զարգանալ մտացն՝ մտադիւրագոյն ևս խելամտեսցեն 'ի պարտս իւրեանց, և ըստ աճել յաւագոյթ հասակին՝ յաւելցեն տալ զբարեբարութեանն ցոյցս։ Լարս ձգեսցուք զդեռաւարժ մտաց նոցա. եթէ յիմաստիցն ուսելոց ոչ ժամանակաւ և ոչ ներհակ իմաստիւք դրդուիցին, յաւելցուք փորձել զնոսա սպառնալեաց վշտաց և հրապուրանաց հաճոյից, և՝ եամ՝ ազգի ազգի բրնութեամբք և մարդելուզութեամբք[2]։ Կացուսցուք սպա զմանկտիդ 'ի ճակատ թշնամոյ, ոչ սա 'ի դիմագրաւել 'ի մարտ՝ այլ 'ի զնին ճակատամարտի, և տեսցուք զմինչ ազգմանն նահատակութիւնք և վտանգք 'ի զգայութիւնս նոցա գործիցեն։ Լրա գտեալ զնոսա յամենայնի փորձ որպէս զոսկի 'ի բոլս[3], և ստուգեալ զընտաւորա-

[1] Պղատ. յլ. հաս. գիրք 413։
[2] Նոյն անդ. գիրք Գ. էջ 485 և 486. գիրք Է. էջ 535։
[3] Նոյն անդ. գիրք Գ. էջ 503։

պէս խորշումն նոցա 'ի հանգից զգայութեանցն և զոսկումն 'ի ստութենէ [1], զարդարախոհութիւն մտաց նոցա և զանշուակութիւն խնամատից, զաժխոյժս երևակայութեան և զանցեալ լի բարս [2], զգուշացոյն ևս միտ դիցուք ուղղութեան կենաց նոցա և յառաջադիմութեան 'ի հրահանգս։

Օ. խնամատիցն՝ որոց պարտ է ուղղել զբարս նոցա, վաղ իսկ ասացաք. խնդիր է արդ զդիտութեանցն, որովք մարթ է հանձարոյ նոցա ընդարձակել։ Այցին սակի են հանմարողականն և երկրաչափական մակացութիւնք [3], հզօրք երկաքանչիւր 'ի յաւելուլ զգօրութիւն և զարագութիւն մտաց, և երկաքանչիւր պիտանիք զօրականին յուղղութիւն պատերազմական գործոզութեանցն, և անհրաժեշտ կարևորք խնամատարիցն՝ զի ուսցի յաւել մտաց և ամբառնալ 'ի ճշմարտութիւն անդր։ Աստեղաբաշխութիւն, երաժշտութիւն, և ամենայն գիտութիւնք որ վնոյն արգասիս յառաջ ածիցեն, լիցին սահմանադրութեանս մերոյ մասն [4]։ Այլ պարտ է մանկիրտուցն մերոյ անձիրգն անբռնադատ և առ 'ի զբօսանս իմն պարապել յուսմունս յայսոսիկ [5], և յութեատասնամենի դադարեալ յուսմանէ՝ յլմբշական հրահանգս ևեթ պատաղել։ և յետ

[1] Պլաս. յդ. հաս. գիրք 522, 526։
[2] Նոյն անդ, էջ 503։
[3] Նոյն անդ, գիրք Ի. էջ 485։
[4] Նոյն անդ, էջ 527 և 530։
[5] Նոյն անդ, էջ 536։

այնորիկ զառնալ յուսումն գիտութեանց, առ 'ի քաջ խելամուտ լինելոյ համեմատութեանց նոցա ընդ միմեանս[1]։ Որք զայսոսն բարեհնչեան տըՀեալ 'ի մանկութենէ դարձեալ հաստատիցեն, ընկալցին զօրհնս պատուոյ. և յերեմտամենի ընծայեսցին յուսումն խոկման, 'ի բանական վսեմ գիտութիւն՝ որ ամենայն նախակրթութեանցն նոցա է եղը, և որոյ զործ է էութեան իրաց քան զոյութեան նոցա խելամուտ լինել[2]։

Նշանաց մեղադրեսցուք, եթէ ցարդ անզործ եկաց գիտութիւնս այս. քանզի մանկունք մեր վաղ 'ի տարաժամ հասակի պարապեալ յայն, և ոչ կարելով հասու լինել 'ի խորս ՀՀմարտութեցն զոր ուսուցանէ, առ 'ի զբօսանս զղէնս նորա 'ի կիր արկանեն։ և ձայնատուր լեալ միմեանց 'ի պայքար, մերթ յաղթեալք և մերթ պարտեալք, ոչ այլ ինչ ստանան՝ բայց երկբայս և մոլորութիւնս։ Այսոքի թերութիւնքն յամենայն կեանս նոցա հանապազորդեալք, ոգի հակաՀՀառութեան, և արՀամարՀութիւն ՀՀմարտութեանց՝ որոց ոչ բաւեցին ՀատագՀով կալ, և մեծարանք ՀարտարմտութեանցՀ՝ որովք կալան ըզյաղթութիւն։

Ի մտոքի և 'ի ՀՀասակաւ յաղթութեանց առ-

1 Պղատ. յՀ. հաս. գիրք Դ. էջ 537։

* Յաւուրս Պղատոնի բանական արուեստս բովանդակէր զարտաքանութիւն, ըՀ բնականն աստուածաբանութիւն և զբնազանցութիւն առ հասարակ։

2 Պղատ. յՀ. հաս. գիրք Դ. էջ 539։

տի մի վտանգեսցին համբակը մեր, որոց լուծն առնեմք կրթութեանն։ Հառագայթք եւ քան զեւ պայծառագոյնք հմտութեանց. լիցին արգասիք Հառից նոցա և պարապմանց։ Խոսկացեալք 'ի զգայութեանց, և ընկղմեալք 'ի մտախոհութիւն, զմայլեսցին տակաւ կերպարանօք բարւոյն, որում մեքս ըղձիւք տենչացեալ՝ և խառն 'ի խառն ինչ զտիպս նորա նկարեմք 'ի միտս. այնր գերագոյն բարւոյ՝ որ աղբիւրն է ամենայն ճշմարտութեան և արդարութեան, և որոյ պարսն է բազմելումն 'ի ծագ իշխանութեան սրտապլնդել, և կորովել անաչառապէս զարդարութիւն[1]։ Լաւ ուր իցէ տեղի հանգստեան նորա, և ուր արդեօք խնդրելի։ Ի ցանկութիւնս՝ որ արբեցուցանեն զմեզ, եթէ 'ի գիտութիւնս՝ որ հըպարտացուցանեն, և կամ թէ 'ի պայծառ փառս՝ որ շլացուցանեն։ Լաւ ոչ ուրեք 'ի նոցանէ. զի ամենայն որ ինչ փոփոխելի է և յեղյեղուկ, ոչ է իսկապէս բարի։ Քցուք զերկիր, և զստուերս որ ծածկեն զսա. ամբարձցուք զմիտս մեր յօթևանսն լուսոյ, և պատմեսցուք մահկանացուաց զՀշմարտութիւնս՝ որոց չէնն գիտակ։

Երկու են աշխարհք, գոյաւոր և մտաւոր[2]։ Բաջինն յերկրորդին կազմեալ 'ի տիպ, այն իսկ՝ յորում բնակեմքս։ Ի սմա ամենայն ինչ ներքոյ անկեալ ծննդեան և ապականութեան, փոխոխի

[1] Պղատ. յզ. հաս. գիրք [2] Նոյն անդ, էջ 509։ Զ. էջ 505 և 508։

հանապազ և անցանէ · ոչ ինչ 'ի սմա է տեսա-
նել, բայց տիպս և մատունս էակաց փախստա-
կանս։ Իսկ մատաւորն բովանդակէ յինքեան զէու-
թիւնս և զնախատիպս ամենայն զգալեացս · և
սոքա են Հշմարիտ էակք, զի անփոփոխք են։
Զազատաղոյն երկու, մին արբանեակ և ստրուկ
միւսոյն, սիրէն զՀառագայթս իւրեանց զերկո-
քուսքն · 'ի բարձանց եթերին արեգակն զոյա-
ցուցանէ և մշանջենաւորէ զկաս, և երևելի
առնէ զնոսա աչաց մերոց · 'ի բարձուէ իսնացա-
կան աշխարհին գերարքուն բարին յառաջ ածէ
և պահպանէ զէութիւնս, խմանալի առնելով
զնոսա մտաց մերոց [1]։ Արեգակն Հառագայթիւքն
իւրովք լուսաւորէ զմեզ, իսկ գերագոյն բարին
Հշմարտութեամբն իւրով · և զոր օրինակ աչք
յառեալք 'ի նիւթականքս յորս ծագէ արև՝
տեսանեն յստակ, այսպէս և միտք մեր Հաւաս-
տեաւ 'ի վերայ կան նկատելոց էիցն՝ յորս Հշմ-
արտութեանն ցոլանայ լոյս։

Կամիցես գիտել թէ քանի խորը ընդ պայծա-
ռութիւն և ընդ գեղ զգալեցոյս այսորիկ և ընդ
խմանալի լուսոյն կայցէ։ Համարեաջիր եթէ 'ի
վերՀ խոր ամբոխ մարդկան 'ի շղթայս ծանուցս
կաշկանդեալ կայցեն անշարժք ամենևին՝ զՀան-
դիպակայսն և զեթ տեսանելով [2], և յետուսէ
նոցա Հեռագոյն ուրեք 'ի բարձունս Հրատ բոր-

[1] Պղատ. յդ. հաս. գիրք 2 Նոյն անդ. գիրք Է. · էջ
Զ. · էջ 508։ 514։

բաբեալ կայցէ՝ որպ նշոյլք 'ի վերՀ անդր ծաւալեցին. և ընդ հրատն և ընդ վերՀ որմ՝ 'ի միջի կացցէ՝ առ որով մարդիկ երթևեկիցեն, կէսք լաւեսան և այլք զուցատրեալ ընդ միմեանս, և 'ի ձեռս իւրեանց կերպարանս մարդկան և անասնոց և ազգի ազգի կահս բարձեալ բերիցեն՝ որոց ստուերքն 'ի կողին վերին հանդէպ կապելոցն նակարիցին։ Լա՛ 'ի տեսիլ պատկերացն շարժականաց պատրեալ նոցա, կարծիցեն զստուերսն էակս գոյաւորս, և նոցին իսկ զշարժմունսն և զկենդանութիւն և զձայնսն համարեսցին։ Կալցուք արդ զմի 'ի կապելոց աստի՝, և առ 'ի փարատել զպատրանս նորա՝ խզեսցուք զկապանսն, և յարուցեալ զնա՝ հայեցուցուք յետս։ Ի տեսիլ նորոց իրացն ասրեալ, յերկուասցի նա ընդ ձՀմարտութիւն նոցա. և շլացեալ յանկանխտիղ նշուլից հրոյն, դարձուցէ զաչս 'ի բաց յանդոյ երևելոյթ սրն՝ յորս յառաջագոյն պչուցեալ կայր։ Ի՛ն. դրէն միւսանգամ մատուցուցուք զնա 'ի փորձ. բերանի 'ի վեր ձգեսցուք զնա 'ի վերՀն, թէպէտ և ձՀիցէ, թէպէտ ընդդէմ կքրիցի և տաժանաբայլ յառաջ մատիցէ։ Հասեալ 'ի վերայ երկրի՝ ընկՀեսցի անդէն 'ի պայծառութենէ տուընջեան, և յաՀախս զփորձ առեալ՝ հաղիւ ապա նշմարել կարասցէ զստուերս և զմարմինս և զաստեղս գիշերոյ, հայել յարեգակն և խելամուտ լինել զի նա

1 Պղատ. յղ. հաս. գիրք Է. էջ 515։

փոխոխէ զյեղանակս և արդասաւորէ զզգալիքս ամենայն [1]։

Արդեսի ինչ արդեօք Թուեցին նման այնու-հետև գովութիւնքն 'ի խորատոր անձաւին ընծայեալք, որոց նախ տեսանիցեն և նկատիցեն զստուերսն անցաւորս. զի նչ խորհիցի զնոսապարծութեանցն և զատելութեանցն և զնախանձայուզութեանց, զորս զնոսութիւնք ստուերաց դրդեն 'ի խաւարարգել ամբոխ եղկելեացն։ Պ-ութ գորովոյ ստիպեսցէ զնա դիմել յօգնութիւն նոցա, և նշաւակել զնոսոր իմաստութիւնն և զծաղրելի գիտութիւն. այլ քանզի 'ի միջ-օրեայ պայծառութենէն 'ի խոր խաւարն իսկոյն անցանելով ոչ ինչ 'ի սկզբան անդ տեսանել կարէ, յարիցեն նաքա ընդդէմ նորա, և կշտամբեսցեն զիարիսատիումն նորա, և համարեսցի նա առ նոսա օրինակ ահաւոր 'ի ցոյց վտանգին՝ որ պահի 'ի վերնագաւառ անդր երթելոցն [2]։

Ահաւասիկ մերոյս գԺնդակ պայմանի Ճըշդրիտ պատկեր. անկեալ գնի ազգ մարդկան 'ի լայնատարը վհի շղթայակապ, պատաղեալ 'ի ըստուերս ունայնս և պատրողականս [3]։ Այսր բերկրութիւնք դառնութիւնս ձգեն զհետ, ընչից խաբուսիկ է Ճաճանչ, առաքինութեանց խարխուլ են հիմունք, և նիւթականացս իսկ պատրիչ է գոյութիւն։ Պարտ է մեզ երանել 'ի խա

1 Պղատ. յղ. հաս. գիրք Ի. էջ 516։

2 Նոյն անդ, էջ 517։

3 Նոյն անդ։

ւարէ աստի, խորտակել զշղթայս, ամբառնալ անխոնջ Ձգամբջ 'ի գեր աշխարհն խմանալի [1], մեծաւել տակաւ 'ի գերաբուն խմացութիւնն, և նկատել զաստուածային էութիւն նորա անխառով 'ի զգայութեանց և 'ի կրից։ Հայնժամ լիցի մեզ տեսանել՝ զի յաթոռոյ նորա ինքանեն 'ի բարձրա-կան աշխարհն արդարութիւն և գիտութիւն և Ճշմարտութիւն, և 'ի բնականն՝ լոյս արեգական և արդասիք երկրի և գոյութիւն ամենայն էից։ Այնք որ 'ի բարձրութիւնս յայս գամ մի ժա-մանեալ, զիարձ առնուցու զյուզմանցն և զիսան-դից և զմայլմանց՝ զոլոս տեսիլ գերաբուն բարւոյն ներդործէ 'ի նմա [2], ոչ ևս խոնարհեսցի յանձն առնուլ զՀգուենս մեր և զպատիւս. և կամ թէ խոնարհեսցի ևս առ մեզ, հարկ լիցի նմա մինչև սովորեալ 'ի խաւար մեր՝ պատուել զարդարու-թիւն որոց զստուերս ևեթ նորա Հանապէն [3]։ և նորալուր բանք նոր այնպէս անհեթեթք թուեսցին և ինասակարք, մինչև ծաղր առնել զնա ա-մենեցուն իբրև զյիմար ոք, կամ որպէս զյան-դուքն պատուհասել։

Սակայն այսպիսիս պարտ է զոլ իմաստնոցն մերոց՝ ոլոր 'ի գլուխս հասարակաւորութեանն կացցեն, և այսպիսիս պարտ է բանականին կրը-թել զնոսա մանկացութեամբ։ Օրան հինգ պարա-

[1] Պղատ. յղ. հաս. գիրք Զ. էջ 485։ Ի. էջ 517։
[2] Նոյն 'ի Փեդր. հա. 3. էջ 517։
[3] Նոյն յղ. հաս. գիրք Ի. էջ 250։ Նոյն յղ. հաս. գիրք

պեալ նոցա յուսումն նորին [1], խոկացեն յԵՒ թէ ճշմարտութիւն և արդարութիւն և պատշաճից։ Զի զտարտամ և զանեստոյգ զայժմու որ առ մեզ ծանօթութիւն շատ համարեսցին, այլ զբուն զսկիզբն նոցա հետազօտեսցեն. մի ընթերցմամբ պատուիրանաց մարդկան ուսցին զպարտս իւրեանց, այլ 'ի հրահանգաց՝ զոր անդստին յանակիզբն էին ընդունին. և իբր անընդմիջ ընդ նմա խօսակցութեամբ ընկալցին զանսխալ գիտութիւն հասու լինելոյ ճշմարտութեան, զարիութիւն անդրդուելի 'ի կորովել զարդարութիւն, և զգեղեցիկ յամառութիւնն առնելոյ զբարի՝ որում ոչ ինչ կարէ յաղթել, և որ ամենայնի յաղթէ 'ի սպառ։

Զ. Յլ մինչ նոքա բոլորովին ընդ գերաբուն բարոյն միացեալ, և զճշմարիտ կեանսն կելով [2], զերևելիքս ամենայն 'ի մոռացօնս դարձուցին, հասարակապետութիւնն որ իշխէ առաքինութեանց նոցա՝ կոչեսցէ զկէս 'ի նոցանէ 'ի գործ պատերազմի, զայլս 'ի պատշաճս իւրաքանչիւր հասակին [3]։ Զարձեալ վերստին փորձեսցէ զնոսա մինչև հասցեն 'ի յիսուն ամ տիոցն. և ապա վերառեալք ակամայ 'ի բարձրագոյն աստիճանս, և սա քան զևս մերձեսցին ըղձիւք յէն գերբարուն, և 'ի նմանէ ուղղեսցին։ Զ. յետ հետև խնամատարութեամբ ընդ երկինս կցորդեալ, և

1 Պղատ. յղ. հաս. գիրք 490։
2 Նոյն անդ, գիրք Զ. էջ 539։
3 Նոյն անդ, գիրք Ի. էջ 539 և 540։

առագութեամբն ընդ երկիր, լուսաւորեսցեն զքաղաքացիս իւրեանց, և բարեբաստս զնոսա յարդարեսցեն. և յետ մահուն իւրեանց կեցցեն 'ի յաջորդս հրաշանգեալս բանիւք և գործովք նոցա, և աշխարհն շնորհապարտ կանգնեսցէ նոցա շիրիմս, և կարդասցէ զնոսա շահապետս իւր [1]։

Այսպա ուրեմն իմաստասէրքն, զորս կացուցուք իշխանս 'ի վերայ հասարակապետութեանս մերոյ, մի իցեն որպէս զնամարտակողն անգործս և իբրև զիմաստակն արհամարհս յաչս ժողովրդեան՝ անկարողք առաջնորդելնմա [2]։ Այլ իցեն անձինք արիասիրտք, մեծախոհք, պարապեալք յօգուտ ևեթ աշխարհին, քաջահմուտք ամենայն մասանց առաջնորդութեան երկար վարժիւքն և վեհ և վսեմ տեսականաւն նորին գիտութեամբ, և առաքինութեամբքն իւրեանց և մեկացութեամբք՝ պատկերք և թարգմանք դիցն 'ի վերայ երկրի։ Այս վասն զի հասարակապետութեանս մերոյ անձուկ լիցին տահմանք [3], կարասցեն նոքա 'ի կշիռ ական ունել զամենայն կողմանս նորա։ Սատ իշխանութեան նոցա մեծարեալ յամենեցունց, պատասարան իւր կալցի 'ի կարևոր ժամանակի զգունդ անպարտելի և խաղաղասէր զօրականին, որ ոչ այլ ինչ իւր պարծանս իմդրեսցէ՝ բայց միայն պահ ունել օրինաց

[1] Պղատ. յդ. հաս. գիրք Գ. էջ 414. գիրք Է. էջ 540։ [2] Նոյն գիրք Զ. էջ 493։ [3] Նոյն անդ. գիրք Գ. էջ 423։

և Հայրենեաց [1]։ Սոդոմորդն կեցցէ, երանաւէտ 'ի միջատահման այլ յանկապուտ բախտի. զոբականն զերծ յառանին հոգոց, և փառաւորեալ 'ի մարդկանէ արութեամբքն իւրովք [2]. և աւազանին 'ի բերկրանս բարերարութեան, և ունելոյ այնմ վկայ զգերաբուն էն։

Ի յորդորանս յայսոսիկ յաւել Պղատոն և միւս ևս հզօրագոյն յորդոր, զնկարագիր բարեաց և չարեաց՝ որ յայլ կեանս պահին յոռութեանց և առաքինութեանց։ Այս Ճառս մեծաձիգ զանմահութենէ հոգւոյ յօրինեալ և զփոփոխմանց նորա մարմնոց 'ի մարմինս [3], եցոյց ապա 'ի հաբևանցի զգլխաւոր թերութիւնս կարգաց տեսչութեան հաստատելոց առ մարդիկ, և վախճան արար Ճառիցն՝ զսահմանադրութիւն պաշտամանց դիցն զեղծեան հարցկին համարելով անկ։

Այս իբրև լուեաց նա 'ի խօսելոյ, աշակերտք նորա կախարդեալք Ճարտարախօսութեամբն՝ հիացեալ զարմանային ընդ բանս նորա. բայց այլք յունկնդրաց զգօնագոյնք ասէին հոյակապ զբնութեանն գոլ քան հաստահիմն [4], և ցնորս հիմն այլ այլելոց մտաց և բանդագուշանս առաքինի հոգւոյ համարէին զսահմանադրութիւնն։ Այլք խստագոյն ևս դատեալ, ասէին՝ թէ Պղատոն ոչ յիւրմէ ինչ զկարգաւորութիւնն զայն հնարէ-

[1] Պղատ. յղ. հատ. գիրք Դ. էջ 395։
[2] Նոյն անդ. գիրք Ե. էջ 468։
[3] Նոյն անդ. գիրք Ժ. էջ 608։
[4] Արիստոտ. յղ. հատ. գիրք Դ. գլ. 4. հատ. 2. էջ 367։

ցաւ, այլ յօրինացն Լիկուրգեայ առեալ և 'ի գրոց Պրոտագորայ՝ յորս գրեթէ բովանդակի այն ամ[1]։ Մինչդեռ էր նա 'ի Ակիլիա, իսորհեցաւ յարդիւնս իսկ ածել զայն յանկեան միում 'ի կղզւոջն. և կրտսերն Դիոնեսիոս արքայ սիրակուսացւոց հրաման ետ նմա, այլ ապա արգել զնորհուրդն[2]։ Յայնմհետէ զգուշացոյնս իմն առաջարկէ զիրսն որպէս մտածութիւն անզգոյ. այլ յաձախ 'ի բանս իւր 'ի ներքս ածելով զհնարտաւորութիւն իրացն[3], նշաւակէ զնորհուրդս իւր։

Լսէ դարձեալ ասէին. իմաստունք՝ որք երբեմն ուղղել ջանացան զկարգս տեսչութեան, փոքձուք անձանց և կամ այլոց հմտացեալք, գիտացին զի դեղք սաստիկք փոխանակ դարման առնելոյ չարեաց աշխարհին՝ և եւս զայրացուցանէն զայնս. իսկ զարդիս իմաստասէրքն ոմանք հանձարեղքեան հմուտք, հնարին հաստատել կարգս տեսչութեանց անթերի, և յարդարել զմարդիկ ամենակատարս։ Լսեսցուք զմիւսացի, անմանն 'ի յանձանձանաց իրաց աշխարհին, նա նախ երկնեաց 'ի մտի նորաձև իմն կարգ տեսչութեան[4]. և Պրոտագորաս[5] և այլք 'ի մատենագրաց նմին հետեւողք եղեն, և լիցին եւս այլք։

1 Արիստոտ. առ Դիոգենէս լայերտ. գիրք Գ. յոգ. 37։
2 Դիոգ. լայերտ. գիրք Գ. յոգ. 21։
3 Պղատ. յՂ. հատ. գիրք Ե. էջ 471 և 472. գիրք Զ. էջ 499. գիրք Է. էջ 540։
4 Արիստոտ. յՂ. հատ. գիրք Բ. գլ. 8. հատ. 2. էջ 325։
5 Դիոգ. լայերտ. գիրք Թ. յոգ. 55։

Օ՛յ չէք ինչ դիւրագոյն քան զյարդարել՝ի մեր զբարեբաստութիւն ժողովրդոց, և չէք դժուարին ինչ քան զկատարելն զայն։ Այլ, և ո՞ այսմ առաւել իցէ խելամուտ քան զՊղատոն, որ ոչն իշխեաց գնորաձև կարգն առաջարկել ազգաց՝ որ խնդրէին զայն՝ի նմանէ, և որոց առաջարկեացն՝ չկարացին վարել նովաւ[1]։ Այեառ նա յանձն տալ զայն բնակչաց Սեգաղուպոլեայ, պատճառանօք եթէ թէ չկամէին նոքա ընդ հաւասարութիւն ընչից և պատուոյ[2]. և ոչ կիւրենացւոց ետ զայն, զի ճոխք էին յոյժ, և չէր մարթ նոցա հնազանդել իւրոց օրինացն[3]։ Սակայն եթէ երկաքանչիւր առաքինիք էին և անընչասէրք և անփառասէրք՝ որպէս նայն պահանջէր, չէին իսկ պէտք խրատուց նորա։ Այլաքէն պատճառանքս այսոքիկ ոչ արգելին զնա առ՝ի չտալոյ խրատս սիրակուսացւոց, որք՝ի մեռանել Պիսոնի՝ հարցին զնա վասն կարգի տեսչութեան քաղաքին իւրեանց[4]։ Այլ թէպէտ դիւրագոյն ևս քան զհասարակապետութեանն նորա էր թելադրեալն՝ի նմանէ կարգ, այլ չէրև նոցա ընդունելի։

Օ՛այս այսպէս, յիրաւի արդեաք եթէ առ նա խմանձու՝ ոչ գիտեմ, բազումք՝ի լսողաց անտի խոսէին զքաղաքավարական կարգաց իմաստասիրին։

1 Պլուտ. յղ. զօրութեան Ելդէքս. հտ. 2. էջ 328։

2 Պամփիլ. առ Դիոգէնեայ լայերտ. գիրք Գ. յօդ. 23։ Եղիան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 42։

3 Պլուտ. ի Ղուկուղղոս. հտ. 1. էջ 492։ Եղիան. անդ գիրք ԺԲ. գլ. 30։

4 Պլատ. Թուղթ 8. հտ. 3. էջ 352։

ԳԼՈՒԽ ԾԵ.

Յաղագս վաճառականութեան աթենացւոց։

Ղանդ ոչ միայն Յունաց, այլ և ազգացն զոր նոքա խուժադուժս կոչեն՝ 'ի նաւահանգիստսն Պիրէոսի զիմեալ խանին[1]։ Բազմագոյնք ևս զիմէին անդր, եթէ աթենացիք առատել ևս յօգուտ արիանէին զպատերազմութիւն վայրաց աշխարհին, զգիպող նաւակայս, զքաջահմուտ նաւաստականութիւն, զլաւս արծաթոյ, և զայլ ևս քաջամանութիւնսն զոր ժառանգեն, և եթէ վարձատրէին զվաճառականս՝ որոց ճարտարութիւն և ժրութիւն յոլովեր զմեծութիւնս աղգին[2]։ Այլ նոքա ընդ առնուլ 'ի միտ զկարևորութիւն նաւաստականութեան՝ զհետ զակատեալք աշխարհակալութեան, ոչ վասն այլ ինչ իրիք հնարեցան ծովակալել՝ բայց առ 'ի բռնակալել զցամաք. և ամենայն վաճառականութիւն նոցա ամփոփեցաւ 'ի հայթայթանս վաճառաց և բերրոց օտար աշխարհաց, կարևորացն 'ի պարէնս իւրեանց։

Ընդ ամենայն Այլազգս օրէնք խոչ ընդ ոտն էին վաճառականութեան. իսկ կարքեդոնականքն է զի և երկրագործութեան։ Անզի կարքեդո-

[1] Դեմոսթ. 'ի Լակրիտ. էջ 948։

[2] Քսենոփ. պատմ. նահանջ. էջ 922։

նայիք 'ի նուաՃել զկողմն մի Սարդինիոյ, և յաՃել անդր նոր բնակիչս [1], արդեալին նոցա չսերմանել զերկիր, այլ վաստակօք Ճարտարութեան իւրեանց հայթայթել զպարէնս՝ որոց բաղմանատ էին 'ի մայրաքաղաքին գիւղք [2]։ Այլ հաստուածք 'ի Յունաց գաղթեալք ոչ այսպիսիք. զի սոքա գրեթէ առ հասարակ բաւականք են 'ի մատակարարել պարէնս մայրաքաղաքին իւրեանց, քան կարօտք նմին։

Պղատոն զոսկի և զառաքինութիւն նմանեցուցանէ կշռոյ՝ որ դնին 'ի նժարս, և ոչ է մարթ միումն ամբառնալ՝ առանց հակելոյ միւսումն [3]։ Այսր այսմ նմանութեան պարտ է քաղաքի բնակել հեռի 'ի ծովէ, և մի կարի և մի նուազ Հզել յինքն զվաՃառս. զի այսպէս անեղծ կացցեն բարք նորա, և կէսք յօրինաց այլոց պետութեց բաւականք լիցին նմա. զի ըստ բարգաւաՃել վաՃառականութեան, առաւելագոյն պէտք իցեն օրինաց [4]։ Բազմապատիկ օրէնք են աթենացւոց վասն ստաւազինութեան նաւաց և վաՃառականութեան և մաքսից և վաշխից, և պէսպէս դաշանց՝ որ նորոգին յաՃախ 'ի Պիրէոն և առ սեղանաւորս։

Բազումք յօրինաց աստի սահմանեալ են առ

1 Պոչար սրբազան աշխարհագր. գիրք Ա. գլ. 31։
2 Արիստոտ. յզ. սքանչ. ունկնդր. հա. 1. էջ 1159։
3 Պղատ. յզ. հաս. գիրք Ը. հա. 2. էջ 550։
4 Նոյն յզ. օր. գիրք Ը. հա. 2. էջ 842։

'ի խափանել ըստ կարի զզատս և զիսոչս խռովիչս վաճառականութեան։ Զուգակք հազար զրամակշռոց՝ և մերթ ևս բանտարգելք հասանեն զատախազից, որոց զոք 'ի վաճառականաց ամբաստանեալ 'ի յանցանս ինչ՝ չկարիցեն ցոյցս յառաջ բերել 'ի հաստատութիւն[1]։ Այս քանզի սահմանեալ ժամանակ է ծովագնացութեան վաճառական նաւաց 'ի մինչեւ ամսոյ մինչև ցբոյզրոմիան[*], վէճք վաճառականաց ածին 'ի դատաստան յետ դարձի նաւացն մինչև 'ի չու նոցա անդրէն ընդ ամիսս վեց[2]։ Ի հանձարեղ սահմանադրութիւնս յայսոսիկ Պասենոփան խրատս տայր յաւելուլ և վարձս զատաւորաց, որք վաղագոյն սահմանիցեն զվէճս ածեալս յատեան իւրեանց[3]։

Բայեանս այս, որում այսոցիկ ևեթ իրաց անկ է զատաստան, բազում խնամակալութեամբ հսկէ 'ի վերայ վաճառականաց։ Այս քանզի տուրբևառիկ շահաւետութեանցն հաստատութիւն 'ի փոխատուս յենու քան 'ի պարտատերս, տեսի զմի 'ի քաղաքացոց՝ զօրավարի անթենա-

1 Ովրատ· 'ի Թէոկր· առ Դեմոսթենեայ, էջ 850։

* Ըստ մեռանեան շրջանին՝ սկիզբն մինչեւ ամսոյ հանդիպի 'ի քսանուութերորդ օր մարտի յուլիսան ամին, և ոչ վաղ քան զայն· իսկ սկիզբն բոյեդրոմիոնի 'ի քսանեւերորդ օր օգոստոսի· որով ժամանակ նաւարկութիւնն տեւէր 'ի սկզբանէ ամենեան տարբերի մինչև 'ի վաճառականատեսմբերի։

2 Դեմոսթ· յԱպատ· էջ 937։ Պեսիս· յդ· օր· առ սիկ· էջ 423։

3 Քսենոփ· պատմ· նահանջ· էջ 592։

ցոյց որպէ՝ դատապարտեալ 'ի մահ, փոխանակ զի 'ի փոխ առեալ արծաթ բաղում 'ի սեղանաւորէ՝ չէր տուեալ զրաւականս նմա որչափ պարան էր [1]։

Լուտիկէ սակաւաբեր է ցորենոյ, նմին իբրև չէ օրէն հանել զայն յերկրէն [2]. և որք 'ի տար աշխարհայ բառնան ցորեան, պատիժս կրեն ծանուցեալ՝ եթէ այլ ուրեք 'ի քաղաքաց թափեսցեն զայն [3]։ Եւ բառնան Եգիպտոսէ և 'ի Աղեքսանդրիայ [4], և առաւել ևս յոյժ 'ի Պանտիկապէայ և 'ի Թէոդոսիոյ՝ որ են 'ի Բերսոն Տաւրոսի. զի իշխան երկրին ունելով ընդ իւրև զկիմմերեանն Պոտոր, ապարհարկ արձակէ զնաւս աթենացւոց յերեսնորդացն՝ զոր մնքսէ 'ի ցորենոյ։ Պան այսր թողութեան հարկայ նաւարկեն նոքա առաւել ընդ Պոտոր կիմմերեայ, և անտի ամի ամի գան Յ'Թէնս քառասուն բիւր կեղեք ցորենոյ [5]։

Ի Պանտիկապէայ և 'ի կողմանց կողմանց եւքսինեանն Պոնտոսի ածեն փայտս 'ի շինուած, բաստուկս, աղանդերս, մեղր, մամ, սոր, կաշի և գազաթայծենի [6] *. 'ի Ի'բերազանդիոյ և այլ ուստէք 'ի կողմանէ։

1 Դեմոսթ. 'ի Փորմ. էջ 947։

2 Ռուզգ. 'ի Հաան Դեմոսթ. ընդդէմ Տիմակր. էջ 822։

3 Դեմոսթ. 'ի Լակրիտ. էջ 956։ Նոյն 'ի Փորմ. էջ 945։ Լիբան. 'ի Դեմոսթ. ընդդէմ Թեոդոր. էջ 848։

4 Դեմոսթ. 'ի Դիոնիս. էջ 1122։

5 Նոյն 'ի Լեպտին. էջ 545։

6 Նոյն. 'ի Լակրիտ. էջ 953 և 954։ Նոյն 'ի Փորմ. էջ 941։ Պոլիբ. գիրք Դ. էջ 306։

* Նոյն վաճառականութիւն տեսէ ցարգ. զի 'ի Պափլակ, որ է հին Թէոդոսիա, և 'ի

մանց Թվակիոյ և Մակեդոնիոյ աղծեալ ձկունս և փայտս ի զոլծ հիւսան և ի շինուածս [1]. ի Փռիւգիոյ և ի Միլետեայ գորգս և վերմակս, և զասոր ընտիրս՝ յոլոց ասուիքն անկանին [2]. ի կղզեաց և յեղեան ծովէ զինի և պտուղս ազգի ազգի զբերս նոց. և ի Թվակիոյ, ի Թեսաղոնոյ, ի Փռիւգիոյ և յայլոց աշխարհաց ամբոխս ստրկաց։

Օձէթ միայն հրաման եւ Սողոն փոխանակել ընդ վաճառս այլոց աշխարհաց [3]. զայլ ամենայն բերոյց Պտոլոմեայ արգելեալ զբերս, և ոչ է մարթ հանել յերկրէն առանց ծանուցանելոյ մաքսից զփայտ շինուածոյ, զեղևին, զնռձի, զասսի և զայլ ամենայն ծառս՝ որ անձին մերձ յԱթենս։

Ինակչաց աշխարհին յաճախեն յոյժ շահք ի բոլոր արծաթոյ. քանզի սովորութիւն լեալ ազգաց բազմաց այլայլել զդրամս իւրեանց, ասենացուցին դրամք յարգուցեալ քան զայլոցն՝ շահաւետագոյն հայթայթեն նոցա փոխանակութիւնս [4]։ Ի կղզեաց եգիպտոս ծովուն կամ՝ ի ծովեզերաց Թվակիոյ սովորութիւն է նոցա գնել զինի. զի վաճառս այս գլխաւորագոյն առևտուր վաճառ-

շրջակայ վայրաց ամի ամի աստեղն առատապէս աղծեալ ձկունս և ցորեան և կաշի և սար, այլովքն հանգերձ։ (Ուղղորութիւն Շառուենի. հատ. 1. էջ 108 և 117։)

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 108։ Թէոփր. պատմ. բուս. գիրք Ե. գլ. 3. էջ 106։ Ասիենն. գիրք Դ. էջ 117 և 120։

2 Աբիստոփ. ի Հաւան, տող 493։ Նոյն ի Լիւսիսարդ. տող 730։ Նոյն ի Գորգունան, տող 549։

3 Պլուտ. ի Սողոն, հատ. 1. էջ 91։

4 Դեմոսթ. ի Ցիմոկր. էջ 805։ Պոլիբ. Դամպսքաղ. հիբեշտ. էջ 833 և 842։

ականութեան նոցա է ընդ ազգս բնակեալս յԵւրոպիեանն Պոնտոս շուրջանակի [1]։ Պործառքք Ճարտարութեան նոցա խնդրին ամենայն ուրեք, վասն կիրթ ախորժակաց նոցա 'ի ձեռակերտսն փայլեցս։ Աչեն յարևելս հեռի սուսերս և ազ- զի ազգի զէնս, սասուխ և անկողնոս և այլ կահս. և մատենից իսկ առնեն վաճառականութիւն [2]։ Այ էն նոցա շահակիցք գրեթէ ընդ ամենայն տեղիս, ուր յոյս շահու ձգէ զնոսա. գաղձեալ և բազումք յազգաց Աղլադայ շահակիցս իւրեանց ընտրեն Ամէնս խնամակալս վաճառաց իւ- րեանց [3]։

Յեկաց՝ բնակացելոցն Լեթ 'ի քաղաքին օրէն է գին և վաճառ առնել 'ի շուկայն [4], հատու- ցեալ զհարկն սահմանեալ նոցա. այլոց պարտ է անդէն 'ի Պիրէան սփռել զվաճառս իւրեանց։ Այ որպէս զի մի յամախեսցեն գինք ցորենոյ քան զսովորականն՝ որ էն հինգ դրամակշիռ առ կեղթ [5], արգելեալ է մահու սպառնալեօք մի ու- մեք 'ի քաղաքացոյց գնել ցորեան աւելի քան ըզ- յայսմանի ինչ չափ [6]։ Այլոյն պատուհաս 'ի վերայ

1 Դեմոսթ. 'ի Լակրիտ. էջ 949 և 954։ Պոլիբ. գիրք Դ. էջ 306։

2 Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Է. էջ 412։

3 Դեմոսթ. 'ի Կալլիպ. էջ 1099։

4 Նոյն Յնէբուլ. էջ 887։

5 Նոյն 'ի Փորմ. էջ 946։

6 Լիւս. 'ի Դարգան. էջ 388։ Պեսիտ. յղ. օր. սատ- տիկ. էջ 420։

* Բնագիրն Լիւսիայ ունի այսպէս. Πεντήκοντα φορμῶν զոր մարթ է թարգմանել յե- ռոտ լոյնս. այլ հաւաստաւ- չափ նոցա ոչ է գիտելի։

կայ և ոստիկանաց ցորենոյ, եթէ ոչ զգուշանայ-ցեն խափանել զմենաւանառ [1], որ արգելեալ է ամենայն ուրեք իւրաքանչիւրոց, և դուն ուրեք 'ի կիր արկեալ 'ի պետութենէն՝ առ 'ի յոլովել զմուտս գանձուն [2]։

Յոլովագոյնք յաթենացւոց յարգեն զարծաթ իւրեանց վաճառականութեամբ, և չէ օրէն նոցա տալ զայն 'ի վաղիսի այլ ուրեք 'ի քաղաքաց՝ բայց միայն Յ'ԱԹԵՆՍ [3]։ Ընդ ինչ յորինեաց սահմանեալ սակ տոկոսեաց, այլ ըստ իւրաքանչիւր դաշանց սահմանին մուրհակ պայմանացն աւանդեալ 'ի սեղանաւորն [4], կամ 'ի ձեռս միոյ ուրուք հաստատակաց բարեկամի։ Օրինակ ինն՝ եթէ նաւարկել 'ի կիմիերեանն Ոստոր առաջի կայցէ, արձանագրին 'ի մուրհակին ժամանակ ելից նաւուն, նաւահանգիստք՝ յորս պարտ է նմա զկայ առնուլ, պարէնք՝ զորս պարտ է նմա բառնալ անտի, սակ վաճառմանն նոցա 'ի Ոստոր, և վաճառք՝ զորս պարտ է նմա բարձեալ բերել անտի Յ'ԱԹԵՆՍ [5]։ Այս քանզի տեղոյն ԱԹԵՆՆԱՑ արկութեանն ոչ է գիտելի, կէսք թողուն 'ի դարձին պահանջել զշահ արծաթոյն. այլք զգուշագոյնք, փոքու շատացեալ՝ պահանջեն զայն 'ի Ոստոր 'ի վաճառել իրացն [6], ինքնին երթեալ

[1] Լիւս. 'ի Դարդան. էջ 392։ էջ 957։
[2] Արիստոտ. յղ. հաս. գիրք Ա. գլ. 11. հա. 2. էջ 309։
[3] Դեմոսթ. 'ի Լակրիտ.
[4] Նոյն 'ի Փորմ. էջ 941։
[5] Նոյն. 'ի Լակրիտ. էջ 949։
[6] Նոյն 'ի Փորմ. էջ 943։

անդը և կամ հաւատարիմ զոք 'ի դիմաց իւրեանց յղեալ՝։

Փոխատուն ցուցանէ զրաւս փոխատուին 'ի մեթերից վաճառաց իւրոց կամ ընչից[1]։ Մայր քան-զի վտանգաց ծովուն հաղորդ է փոխատուն[2], իսկ փոխառուին մարթ է յաջողել շահավաճառ մեծ, նմին իրի օրէն է տոկոսեաց յաւելուլ մինչև ցերեսուն առ հարիւր, աւելի կամ նուազ ըստ երկայնութեան և վտանգաց ճանապարհին[3]։

Տոկոսիքս զորոց ասացաք, կոչին ծովայինք. են և ցամաքայինք անիրաւագոյնք ևս, և ոչ ինչ նուազ փոփոխելիք։

Ոչք միանգամ առանց վտանգաց ծովուն կամին արգասաւորել զարծաթն, արկանեն զայն 'ի սեղմանաւորս կամ այլոց ոմանց տան 'ի վաշխի, պահանջելով 'ի տարւոջ երկոտասան առ հարիւր[5], կամ մի առ հարիւր 'ի ծնունդս իւրաքանչիւր լուսնի[6]։ Մայր քանզի օրէնք Աստուծի ոչ արգելուն պահանջել տոկոսս որչափ և կամք իցեն[7], են[8] ոչք աւելի քան զվեշտասան առ հարիւր պահան-

1 Դեմոսթ. 'ի Փորմ. էջ 944։

2 Նոյն 'ի Լակրիտ. էջ 950, 951, և այլն։

3 Նոյն 'ի Փորմ. էջ 940 և 944։

4 Նոյն անդ, էջ 943։ Նոյն 'ի Լակրիտ. էջ 949։ Նոյն 'ի Պանտէն. էջ 988։

5 Նոյն, ՅԱֆոբ. էջ 900։ Նոյն 'ի Պանտէն. էջ 988։ Եսքին. 'ի Կտեսիփ. էջ 444։

6 Արիստոտ. ՅԱմսան, տող 17։ Պարապ. անդ։ Ցիւփոռ. 'ի Թէոփր. Նկարագիրք, գլ. 10. էջ 349։

7 Լիւս. 'ի Թէոմն. էջ 179։

8 Պղատ. յդ. հատ. դիրք Բ. հատ. 2. էջ 555։

ջեն յամենեսն [1]. և այլք՝ մանաւանդ 'ի ռամկէն, որք օր ըստ օրէ զքառորդ գլխոյն պահանջէն վաշխիս [2]։ Նշիրաւութիւն սոցա յայտնի է, այլ անպատուհաս. կարծիք հատարակաց դատապարտեն զնոսա [3], այլ ոչ որպէս արժանն է անգոսնելի զնոսա առնեն։

Ազանառակնութիւն յաձախէ զչրջան գանձուց. և չրջանս այս ետ պատճառս սեղմանաւորաց՝ որք դիւրացուցանեն զայն և էս։ Լուղաւորել ուրուք կամեցեալ, և կամ ոչ իշխելով պահել առիւբ արծաթ բաղում, մատուցանէ զայն նոցա մերթ իբրև աւանդ՝ առանց պահանջելոյ շահս, և մերթ պայմանաւ բաժանելոյ յիւրեանս զշահն։ Որքա հայթայթեն զօրավարաց արծաթ առժամայն 'ի չու առնել նոցա զօրօք [4], և իւրաքանչիւրոց ոմանց 'ի կարիս նոցա։

Ի դաշինս որ կուին ընդ նոսա, դուն ուրեք ածին վկայք [5]. այլ ըստ յաձախ սովորութեան՝ արձանագրեն ևեթ 'ի մատենի, եթէ այս որ աւանդեաց արծաթ այսչափ, և թէ ում 'ի վախճանել աւանդողին պարտ իցէ նոցա հատուցանել զայն [7]։ Պատահէ ժխտել նոցա զառեալ ա-

1 Պէտիա. յղ. օր. ատարկ. էջ 403։

2 Թէոփր. Նկարագիրք. գլ. 6։ Կատաբ. անդ։

3 Դէմոսթ. 'ի Պանթէն. էջ 934։ Արիստոտ. յղ. հատ. գիրք Ա. գլ. 10։

4 Հերոդ. իրաւ. 'ի Սաղմաս, էջ 178 և 182։

5 Դէմոսթ. 'ի Տիմոթ. էջ 1074։

6 Խոսկր. 'ի Տրապեզ. հատ. 2. էջ 449.

7 Դէմոսթ. 'ի Կալլիպ. էջ 1098։

ւանդն, այլ յամբաստանել նոցա միանգամ և միւս անգամ՝ կորուստնն զհամբաւ հաւատարմութեան, յոր հաստատեալ է յաջողութիւն իրաց նոցա[1]։

Յարգելով զարծաթն աւանդեալ նոցա, և զառեալն 'ի վաշխի 'ի շահաւետագոյն տալով վաշխս[2], մինչերեն զանձս[3], և խոտացուցանեն իւրեանց նոքօք բարեկամն, զնոց առեալ զպաշտպանութիւն նոցա հանապազօր սպասաւորութեամբք[4]։ Այլ ամենայն ինչ նոցա 'ի դերև եւանէ, եթէ երբէք չկարացեալ շահել զգլուխ դրամոցն՝ չիցեն ձեռնհաս 'ի ինուլ զդաշինսն[5]. հարկ է նոցա ոչ ևս երևել, և չկարեն խուսափել 'ի խստութենէ դատաստանաց՝ բայց միայն թողլով պարտատերացն զամենայն ինչս իւրեանց[6]։

Որոց զգրաւն օտարս հաստանէ փոխանակել, որպէս զգարեհեանս և զկիզիկեանս այլովքն հանդերձ, քանզի և սոքա յարգունք էին 'ի տուբեանս[7], զիմեն առ սեղանաւորս[8], և պէտպէս հնարիւք 'ի փոքձաքարս և 'ի նեժարս տան փոքձել զորակ նոցա և զկշիռ զի մի իցեն այլայլեալ[9]։

1 Խոսկ. 'ի Տրապեզ. հա. էջ 194։

2. էջ 458։ Դեմոսթ. 'ի Փորմ. էջ 965։

2 Հերոդ. իրաւ. 'ի Պաղմաս. էջ 182։

3 Դեմոսթ. 'ի Փորմ. էջ 959 և 965։

4 Խոսկ. անդ, էջ 449։

5 Դեմոսթ. 'ի Տիմոթ. էջ 1083։

6 Նոյն 'ի Փորմ. էջ 966։

7 Լիւսանգր, Յնրատոսթ. էջ 194։

8 Մենանդր 'ի Գրքինք. Ծաղկաբաղ, էջ 192։ Լիւս. առ Պոլիտակ. գիրք Ի. գլ. 33. յօդ. 170։ Թէոկր. 'ի գէղջնան, 12. տող 37։ Պոլիտակ. գիրք Գ. գլ. 9. յօդ. 84։

9 Թէոկր. անդ։ Լիւս. 'ի Թէոպոմ. էջ 179։ Ղուկիան. 'ի Հերմոտ. հա. 1. էջ 810։ Պոլիտակ. անդ։

Լ.թենական դրամոց երրեակ ազգք են. երևի արծաթի հատեալ նոցա նախ դրամ, և ապա ոսկի. և ոչ ինչ աւելի է քան զամն հարիւր, յորմէ հետէ պղնձի հարկանեն դրամ[1]։ Լ.ըծաթիքն յաձախագոյն վարին 'ի զոր ծ. և հարկ եղև փոփոխեալ զնոսա ըստ փոփոխել ռոճկի զօրականին, և առ 'ի բաշխս՝ որ տակաւ սահմանեցան ժողովրդեան, և յետ քան զետ դիւրութիւն վաճառականութեան։ Լ.ռաւել քան զդրամակշիռն, որ արժէ վեց դանկ, է երկդրամեանն՝ կրկին դրամակշիռ, և չորեքդրամեանն՝ քառեակ դրամակշիռ։ Յա նուազ քան զդրամակշիռն են կշիռք չորից և երից և երկուց դանկաց[2]. որոց թէպէտ և խուն ինչ են արժէք, այլ զի չէին բաւական 'ի դիւրաբար առեւտուր ռամկին, մեծան դրամք պղնձիք յաւուրս պեղոպոնեսական մնային[3], և կոփեցան փոքք ուեթերոդ մասին դանկի հաւասարք[4]։

Աշխա մեծագունին 'ի դահեկանաց ոսկւոյ երկու դրամք են, և արժէ արծաթի դրամակշիռս քսան[5]։ Ի հասանել իմում Ալեքսադա՝ դժուարաւ գիւտ էր յոյժ անդ ոսկի, և հայթայթէին զայն

1 Գ.ոլոմնի տաբեգր. տա. տիկ. հտ. 2. էջ 224։

2 Պոլիսեկ. գիրք Թ. գլ. 6. յոդ. 62։

3 Արիստոտ. 'ի ժողովն, տող 810։ Նոյն 'ի Գ.ոլոտոնն, տող 737։ Կալլիմ. առ Ա.թենն. գիրք ԺԵ. գլ. 3. էջ 669։ Գ.ոլոմնի տաբեգր. տա. տիկ. հտ. 3. էջ 219։

4 Փիլեմ. առ Պոլիսեկ. գիրք Թ. գլ. 6. յոդ. 65։

5 Հեսիւք. 'ի բառն Χρυσ.

'ի Լիւդիոյ և 'ի գաւառաց գաւառաց փոքուն Ասիոյ, և 'ի Մակեդոնիոյ՝ ուր շինանք ժողովին հանապազօր զիրշին և զկոտորակս ոսկւոյ, որ անձրևախառն 'ի մերձակայ լերանց իջանեն [1], և 'ի Թասոսսն՝ ուր բովքն գտեալք երբեմն 'ի փիւնիկեցւոց բերեն տակաւին յինքեանս զցոյցս անբաւ աշխատութեանցն, յոր հնարագէտ ազգին ձեռնարկեալ է անդ [2]։ Ի քաղաքս ուրեք մնան ինչ 'ի պատուական նիւթոյն սահմանեալ էր 'ի հատուցն զրամոց. իսկ յայլս զրեթէ առ հասարակ 'ի զարդս մնանուս կանանց և 'ի նուէրս զից 'ի զոյծ ածին։

Դէպք կրկին որոց եղէ ես ականատես, յաճախեցին Աղլաղա զոսկի։ Փիլիպպեայ աղբարին մակեդոնացւոց զիտացեալ զի էին յաշխարհին իւրում բովք՝ ուստի 'ի վաղնջուց ժամանակս կղկղէր ոսկի, որ յայնժամ անտես լեալ էին, ետ պեղել զգտեալսն մերձ 'ի Պանգէոն լեառն [3]։ Լաք իրացն ըստ ակնկալութեան նորա յաջողեցին. և որոյ յառաջագոյն բաժակիկ մի ևեթ էր ոսկի՝ զոր ընդ մնարիւքն ծածկէր գիշերի [4], այնուհետև ամի ամի քանքարք աւելի քան զՀազար դային նմա 'ի բովուց անտի։ Այնու ժամա-

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 105։ Արիստոտ. հտ. 1. էջ 1153։ Սոքրատ. գիրք Ե. էջ 331։

2 Երոդոտ. գիրք Զ. գլ. 46 և 47։ Թուկիդ. գիրք Ա. գլ. 100։ Պլուտ. 'ի Կիմոն, հտ. 1. էջ 477։

3 Պլինիոս, խնդ. քն. գիրք Ե. էջ 773։ Սոքրատ. անդ։

4 Ատենն. գիրք Զ. գլ. 4. էջ 231։

նակաւ և փովկիսացիք յարիւտակեցին 'ի գան-
ձուց Դեղփեայ զնուէրս ոսկիս, զորս Թագաւո-
րաց Լիւդիոյ նուիրեալ էր անդր 'ի մեհեան Լ.
պողոնի [1]։ Լաւ 'ի սուղ ժամանակի այնչափ յա-
ճախեաց ոսկի, զի որ հարիւր ամաւք յառաջ աբ-
ժէր երեքտասան կշիռս արծաթոյ [2], և յետ ժա-
մանակաց ինչ կշիռս երկոտասան [3], ոչ ինչ աւելի
այնուհետեւ արժէր քան զտասն կշիռս [4]։

ԳԼՈՒԽ ԾԸ.

Զհարկաց և զգանձուցն ասթենացւոց։

Ասուցեալ զանձուց աշխարհին յաւելան երբեմն
մինչև ցերկու հազար քանքար [5]։ Լաւ մտիցս այ-
սոցիկ երկեակ ազգք են. այն որ անդստին յաշ-
խարհէն, և այն որ 'ի հարկատու ազգաց։
Յառաջնումն բովանդակին՝ նախ որ 'ի հաս-
տատուն գոյից հաւք, այս ինքն է 'ի վարձուց
տանց և անդոց և անտառաց [6]։ Երկրորդ՝ քսանև-
չորրորդք 'ի բովուց արծաթոյ վարձելոց 'ի պե-
զումն [7]. երրորդ՝ հարկք հատուցեալք ամի ամի

1 Ալթեն. գիրք Զ. գլ. 4. էջ 232։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 456։
2 Երոդոտ. գիրք Գ. գլ. 95։
3 Պլատ. Լիպպարք. հատ. 2. էջ 231։
4 Մենանդր, առ. Պոլիսակ. գիրք Թ. գլ. 6. յոգ. 76։
5 Աբիատոփ. Լիժան, տող 658։
6 Աղդոկ. յլ. խորհրդ. էջ 12։ Քսենոփ. պատմ. Նահանջ. էջ 926։ Դեմոսթ. Լեւբուղիդ. էջ 891։
7 Սուիդ. 'ի բառն. Ἀγράφ.

'ի ստրկաց ազատելոց և յեկաց բնակելոց Մա-
տիկ. չորրորդ՝ տուգանք և գրաւումն ընչից,
որոց առաւելագոյն մասն հատանի 'ի գանձս աշ-
խարհին [1]. հինգերորդ՝ յիսնորդք ցորենոյ և այ-
լոց վաճառաց եկելոց 'ի տար աշխարհաց, և յո-
լովից՝ որ 'ի Պիրէտնէ ածին 'ի բաց [2] *. վեցերորդ՝
բազում և սյլ իրք դուզնաքեայք, որպէս բաժք
սահմանեալք 'ի վերայ սպարենից ինչ՝ որ 'ի շու-
կայս ածին 'ի վաճառ [3], և 'ի կապենաց՝ որոց
բոլոր սրածէն առ տնին [4].

Զ բազում 'ի հարկահանութենէ ասսի տան
'ի վարձու, աւանդելով որոց առաւելագոյն խոս-
տանան վարձս, յանդիման տասանց դատաւորաց
'ի ձայն քարոզի հրապարակաւ 'ի վաճառ ածեալ
զայնս [5]: Ի միում նուագին կացի 'ի զնին խորա-
մանկ հնարից խնդրողացն. և տեսի զի կէսք առ
'ի խել զայնոսիկ 'ի ձեռաց ոսոխացն՝ սպառնա-
լիս կամ խոստմունս 'ի կիր արկանէին, և այլք
'ի վերին երեսս գրգռեալք ընդ միմեանս՝ զմիա-
բանութիւն նենգութեանն ծածկէին։ Ա՛ս յետ

1 Դեմոսթ. 'ի Տիմոկր. էջ 791։ Նոյն 'ի Մակարտ. էջ 1039։ Պլատ. յոգ. օր. տա-տիկ. էջ 392։

2 Թէոփր. Նկարագիրք, գլ. 23։ Կասաւբ. անդ. էջ 160։ Դոնատ. 'ի Տերենտ. Փորմ. տող 100։

* Յեսոկրատ մատենիս 'ի սեղեկութիւնսն. թիւ Ե։

3 Դեմոսթ. Ընդդէմ գիդ. էջ 887։

4 Եսքին. 'ի Տիմարք. էջ 278։ Պոլլուկ. գիրք Ը. գլ. 33. յոգ. 202. գիրք Թ. գլ. 5. յոգ. 29։

5 Հարպոկր. և Սուիդ. 'ի Πολητ. Պոլլուկ. գիրք Ը. գլ. 9. յոգ. 99։

տակաւ յաւելուածոյ առաջարկեալ գնոցն՝ մինչ 'ի նոցն յառաջին հարկապահանջս անկանելին ի բաւունքն, այլ ոմն անծանօթ յաւել 'ի գինն քանքար մի։ Իսկ նոցա խոտվեալ՝ խնդրեին 'ի նմանէ երաշխաւորութիւն, զի մի և այս 'ի կարեւոր պայմանաց էր. և նա եցոյց իւր երաշխաւորս։ Այնուհետեւ ոչ եւս կարացեալ 'ի բաց մերժել զնա, միաբանեցին ընդ նմա 'ի ծածուկ՝ հանգանակել 'ի միասին[1]։

Հարկահանաց աշխարհին պարտ է նախ քան զինեալորդ ամիս տարւոյն աւանդել զպայմանեալ կշիռ արծաթոյն 'ի գանձաւորս. ապա թէ ոչ, մատնին 'ի բանտ՝ դատապարտեալք տուժել կրկնապատիկ, և անկեալք յազատութեանց ինչ քաղաքացւոյ՝ մինչև հատուցեն զպարտսն։ Ի նոյն անկանելին վտանգ և երաշխաւորք նոցա[2]։

Լրկրորդ և գլխաւոր աղգ մտից գանձուն է 'ի հարկաց, զորս հատուցանեն աթենացւոց բաղմութիւն քաղաքաց և կղզեաց՝ որ ընդ իշխանութեամբ նոցա են[3]։ Օ եղծանելով իշխանութիւն իւրեանց գրաւեցին նոքա զերբաւունս զայս. զի յետ պղատեան Ճակատամարտին[4] խորհուրդ կալեալ յաղթականացն խնդրել զվնաս թշնա-

[1] Անդոկ. յդ. խորհրդ. էջ 17։ Պլուտ. յԱղկիբ. հա. 1. էջ 193։

[2] Ուլպիան. 'ի Ճառն Դեմոսթ. ընդէմ Տիմոկր. էջ 812։

[3] Արիստոտ. յՀոմն, տող 705։

[4] Թուկիդ. գիրք Ա. գլ. 19 և 96։ Պլուտ. յԱրիստիդ. հա. 1. էջ 333։ Նեպոս յԱրիստիդ. գլ. 3։ Պաւսան. գիրք Ա. էջ 705։

մանացն Լաչադաց 'ի Պարսից, բնակիչք կղզեաց՝ որ ընդ նոսա միաբանեալ էին 'ի նիզակակցութիւն՝ յանձն առին տալ ամի ամի կշիռ մեծ արծաթոյ 'ի ծախս պատերազմին։ ՅԹենացւոց յայնժամ յանձն եղև հոգ զրանժողովոյն, և ժողովեցին ստի և անտի քանքարս չորեքարիւր և վաթսուն. որոց հաւատարմութեամբ եղին առանդարարքն ցորչափ ոչ զերազանցեին զորութեամբ։ Իսկ 'ի զօրանալ իշխանութեան նոցա՝ զկամակար նուէրս նիզակակից քաղաքաց դարձուցին 'ի հարկս ծառայութեան, և պարտս 'ի վերայ եղին կիսոց պատրաստել նաւս՝ յորժամ պահանջիցին [1], և այլոց չխոտանել զտարեւոր հարկն՝ զոր յանձն առեալ էր նոցա։ Զնոյն հարկս արկին և 'ի վերայ քաղաքաց յետոյ նուաճելոց, մինչև միահամուռ ամենայն հարկաց որ գային արտաքուստ, գումարել 'ի սկզբան պեղոսպնեական մարտին 'ի վեց հարիւր քանքար [2], և 'ի միջոցս մարտին՝ 'ի հազար երկերիւր կամ երեքարիւր քանքար [3]։ Մինչդեռ էի ես Աղեղադա, Փիլիպպոսայ 'ի չորեքարիւր քանքար զգումարս զայս նուազեալ էր աշխարհակալութիւնքն, այլ յուսային յաւելուլ զայն զարձեալ յառաջին չափն [4]։

[1] Թուվիզ. գիրք Զ. գլ. 85. գիրք Է. գլ. 57։
[2] Նոյն գիրք Բ. գլ. 13։ Պլուտ. Արիստիդ. հտ. 1. էջ 333։
[3] Անդրոկ. յղ. խոսքոց. էջ 24։ Պլուտ. անդ։
[4] Պլուտ. հտ. 2. էջ 842։
* Ցեակոյս մատենիս 'ի սակրութիւնսն. թիւ Զ։

Ասայց թէպէտ և այսչափ մուտք են դանձուցն, այլ եղիցն ոչ բաւէն [1]. և հարկ է նոցա 'ի նորանոր հնարս ստէպ ապաստանել, 'ի կամակար և 'ի բռնի դրամաժողովս։ Այլ զի աւագանին առաջի առնէ հասարակաց ժողովոց զպէտս կարևորս աշխարհին. յորմէ կիսոց խուսափել հնարեալ և այլոց լուռ և ևթ կալով, բազմութեանն կշտամբանօք յամենի լինին ընդ ազահութիւն իւրեանց կամ ընդ չքաւորութիւն։ Իսկ այլք 'ի ձայն բարձր յայտ առնեն զկիր արծաթոյն զոր մատուցանեն աշխարհին, և այնչափ անդամօր հրինչեն դրուատիք՝ զի առատաձեռնութիւն պարգևողացն մնայ յերկրայս [2]։ Այլ է զի պետութիւնն ինքնին հարկս արկանէ ցեղիցն տասանց և քաղաքացեաց ամենեցուն ըստ իւրաքանչիւր գոյից. որպէս զի եթէ ուրուք 'ի վիճակս այլ և այլ ցեղից իցէ ժառանգութիւն, պարտ է նմա ըստ այլ և այլ զլսոց հատուցանել հարկս [3]։ Որ-ժուարութիւնք ծանուցք յաճախ պատահէն 'ի պահանջ հարկացս. էր երբեմն՝ զի զինու զօրութեամբ պահանջէին զայն, այլ խոփանեցաւ բռնութիւնս այս հակառակ իսկութեան կարգի տեսչութեանն. և բազում այն է՝ զի ժամանակ սահմանեալ 'ի վճարել ժամադրութեանն՝ գրա-

1 Դեմոսթ. 'ի Տիմոկր. էջ 788։

2 Թէոփր. Նկարագիրք, գլ. 22։ Կատաբ. անդ. էջ 155։ Պլուտ. Լանկիր. հա. 1. էջ 195։

3 Դեմոսթ. 'ի Պոլիկլ. էջ 1085։

ւէն զինչ, և 'ի ձայն քարոզի ածէն 'ի վա-
ղնառ '։

Ծանրագոյնք իսկ քան զամենայն իրաց աշ-
խարհին հոգս են ծախք սպառազինութեան նա-
ւաց։ Յառաջ քան զսակաւ ժամանակս երկու
կամ երեք ոմանք 'ի մեծատանց սպառազինէին
հանդանակաւ զմի մի 'ի պատերազմիկ նաւաց [2].
ապա սահմանեցան օրէնք, որ և կային 'ի հասա-
նելն իմում Յելլադա, 'ի տան դասս ըստ տաս-
նեցունց ցեղից բաժանել քաղաքացոցն ամե-
նեցուն՝ որոց իցեն կալուածք կամ շինուածք կամ
արծաթ 'ի տուրևառս կամ առ սեղանաւորս. և
վասն զի 'ի ձեռս նոցա էն զրեթէ ամենայն մե-
ծութիւնք Յունիկեայ, նոցա զամենայն հարկս
հատուցանել, և մանաւանդ զնաւական զօրու-
թիւնս աշխարհին պահել և յաւելուլ ըստ պի-
տոյից։ Իւրաքանչիւր ումեք 'ի դասուց զերկեամ
մի հասանէր հանդանակել զբաժին իւր [3]. և հան-
դանակողացն, որ էին հազար և երկերիւր այր,
որոշեալ յերկուս դասս մեծամեծս վեցհարիւրոց
արանց՝ յորոց երեքարիւր Ճոխագոյնք էին և ե-
րեքարիւր խոնարհագոյնք քան զնոսա, առաջինք
երաշխաւոր լինէին վերջնոց, և 'ի ստիպել հար-
կին՝ հատուցանէին և սփոխանակ նոցա առժա-

1 Թուկիդ. գիրք Գ. գլ. 18։ Դեմոսթ. յԱնդրոտ. էջ 705 և 707։

2 Լիս. 'ի Պոլիեւք. էջ 327։ Դեմոսթ. 'ի Միդ. էջ 628։

3 Դեմոսթ. 'ի Ղեպտ. էջ 542։ Նոյն 'ի Պոլիկլ. սակ. Պեսիա. յղ. որ. սատիկ. էջ 274։

մայն զՀարին [1]։

Լրեմ բանակ առաջի կայր կազմել, իւրաքանչիւր զբ 'ի տասանց ցեղից զրամաժողով առնէր 'ի վիճակէ իւրմէ քանքարս ըստ թուոյ նաւացն՝ զոր պարտ էր սպառազինել, պահանջելով զայնս 'ի նոցունչափ դասուց՝ յորոց մէն մի կազմէին երբեմն 'ի վերտասան արանց հանգանակողաց [2]։ Լաշխէին ապա զգումար արծաթոյն 'ի տրիերարապետս, զի այսպէս կոչին զօրապետք եռաթիոց պատերազմիկ նաւաց [3]։ Լրկու 'ի նոցանէ կային 'ի նաւս իւրաքանչիւր, զամիսս վեց փոխանակաւ իշխելով [4]. և պարտ էր նոցա հայթայթել զպարէն զօրականին [5], զի աշխարհին սովորութիւն էր զսարիս և էթ նաւուն և զնաւաստիս պատրաստել [6]։

Բ. յս կարգաւորութիւն թերի էր այնու՝ զի զոյծ սպառազինութեանն յապաղէր յոյժ, և զի դարձեալ ոչ խորհելով զբաւականութիւն հանգանակողաց իւրաքանչիւր՝ և կարի իսկ փարթամագունիցն ոչ ինչ աւելի քան զվերտասանեորդ մասն սպառազինութեան միոյ 'ի պատերազմիկ նաւաց հասանէր կազմել։ Ի վերջին ասն ուղևո-

1 Դեմոսթ. վասն Նաւատորմ. էջ 135։ Նոյն 'ի Փենիպ. էջ 1023։ Ուլպիան. յոլնեթ. 2. էջ 33։

2 Դեմոսթ. վասն պսակ. էջ 490։

3 Նոյն 'ի Միդ. էջ 628։

Ուլպիան. յոլնեթ. 2. էջ 682։

4 Դեմոսթ. 'ի Պոլիկլ. էջ 1089, 1093, և այլն։

5 Պլուտ. յլ. փառաց Աթենս. հտ. 2. էջ 349։

6 Դեմոսթ. 'ի Միդ. էջ 628։

բութեամբ իմն յԱշլադա Դեմոսթենէս ետ հանել հրովարտակ, որով դիւրաբար և արդարադոյն ևս կարգաւ կատարին հարկահանութիւնք։ Եւ այս էին հրամանք հրովարտակին։

Զ. Որ քաղաքացի որոյ իցէն տան քանքարք, սպառազինեսցէ 'ի կարևոր Ժամանակի մի 'ի նաւաց պատերազմի. և որոյ իցէն քսան քանքարք, սպառազինեսցէ երկուս. իսկ որոց մեծութիւնք բազումք իցեն, նոքա երիս նաւս պատերազմի մեծամեծս սպառազինեսցեն, և միւս ևս փոքր [1]։

Հարկս այս, յորմէ ինեակ իշխանք [2] միայն են ազատ, համեմատի ըստ կարի գոյից իւրաքանչիւր 'ի վերայ փարթամագունեցին ծանրաբեռնեալ միշտ ըստ օրինացն, զի 'ի վերայ գոյից և ոչ անձանց պարտ է անկանել հարկաց [3]։ Եւ քանզի երևէջք են բախտի, ոչ երարձ Դեմոսթենէս զօրէնս փոխանակութեան. զի ծովամարտիկ զօրութեանցն վերակացուք ամի ամի տեղի տան հանգամանողաց դատախազել զքաղաքացւոյ, որոյ փարթամագոյն լեալ 'ի սկզբանէ և կամ՝ յաւելեալ յետոյ 'ի մեծութիւնս՝ նուազագոյն մնասցանէ հարկս։ Եւթէ ամբաստանեալն խոստովանի զյաձախել մեծութեանցն իւրոց և զելևել բախտին իւրոյ քան զմիւսոցն, փոխանակէ 'ի տեղի նորա 'ի կարգ հանգամանողաց. իսկ

1 Դեմոսթ. յոլ. պսակ էջ 490։
2 Նոյն 'ի Ղեպտին. էջ 545։
3 Նոյն Ընդդրոտ. էջ 707։

եթէ չառնուցու զայն յանձն՝ քննութիւնք լինին, և բազումայն է՝ զի պարտաւորի ամբաստանեալն փոխանակել զինչս իւր ընդ զոյից դատախազին՝։

Պարտք զորս ընդունէին զօրականք պատերազմիկ նաւացն 'ի պէտութենէն և յիւրաքանչիւր ցեղէ, ոչ բաւէին նոցա՝ եթէ նախանձ փառաց ոչ ընայր զթերին։ Օ՛ի ցանկալի է նոցա գերազանցել քան զսոխան, նմին իրի ամենայն հնարիւք գուն գործեն թեթևագոյն ունել նաւս և քաջ սպառազինեալ՝։ և կէսք յաւելուն յինչից իւրեանց 'ի թոչակ նաւաստեաց, որ են ըստ յաձախ սովորութեան երեք դանգք յաւուրն։ Պարտանաս այս յորդորեալ ակնկալութեամբ փառաց և վարձուց՝, օգտակար է յոյժ 'ի պէտութիւնս, զի 'ի թեթև ինչ պատերազմունս սպառին գանձք նորա և խափանին մուտք։ Պանզի ցորքան ժամանակս տեւէ պատերազմն, աղքք հարկատուք նեղեալք անդադար 'ի թշնամեաց կամ՝ նուաձեալք՝ չկարեն օգնել նմա, մանաւանդ զի ստիպին խնդրել 'ի նմանէ օգնութիւն։ Պ կարիս անդ նաւաստուքն նորա խուժան աւերանաց զծովեզերքք տարաշխարհաց զեղեալ, դառնան երբեմն լի աւարաւ։ Պս եթէ յաջողէ նոցա ուղղել զկիրձն Պլեսպոնտեայ՝, յամենայն վաձա-

1 Դեմոսթ. Փիլիպպ. էջ 52։ Նոյն 'ի Փենիպ. էջ 1073 և 1027։

2 Նոյն 'ի Պողիկդ. էջ 1084։

3 Լիս. յընդուն. ընծ. էջ 378։

4 Բաներոֆ. պատմ. Յուն. գիրք Ա. էջ 430։ Դեմոսթ. 'ի Ղեպտին. էջ 549։

ական նաւաց՝ որ երթևեկէն յեւքսինեանն Պոնտոս՝ պահանջէն տասանորդս զվաճառացն բարձելոց, և որ անտի նպաստքն՝ յաճախագոյնս փրկեցին զպետութիւնն։

Պարտք ապառազինութեան նաւաց և հարկատուութեան դադարէ ընդ պատերազմին. բայց սովորութիւն է փարթամաց 'ի քաղաքայնոց տալ յաւուրս ինչ ճաշ իւրաքանչիւր համացեղիցն, հանդանակել 'ի ծախս կրթարանաց, և 'ի հանդէսս խաղուց պատրաստել զպար կաքաւչաց և երաժշտաց 'ի գուպար [1]։ Վէսք կամակար յօժարին 'ի տուրս յայսոսիկ, այլք բըռնադատին դատաստանաւ համացեղիցն, և ոչ է մարթ նոցա հրաժարել՝ եթէ չիցեն վասն վաստակոց ինչ մատուցելոց աշխարհին 'ի հարկաց աստի 'ի բաց արձակեալ [2]. և որք միանգամ առ 'ի պայծառացուցանել զտօնս տնանկանան, ընորհս առաջի ժողովրդեանն գտանեն՝ որ հատուցանէ նոցա փոխարէն աւագութիւնս և պատիւս։

Ժողովք բազումք հարկահանաց ընտրեալք 'ի ժողովրդենէ ունին զհոգ գանձուց, և իւրաքանչիւրոց 'ի տասանց ցեղիցն էն գործակալք 'ի բազումն 'ի ժողովոց անտի։ Վէսք զմաքս 'ի վարձու տան [3], կամ զբոլս հրահալական նիւթոց

1 Լիւս. յընդուն. ընծ. էջ 374։ Դեմոսթ. 'ի Միդ. էջ 603 և 628։ Հարպոկր. 'ի բառն Ἐσιατ.

2 Դեմոսթ. 'ի Ղեպտին. էջ 545, և այլն։

3 Հարպոկր. 'ի բառն Πολητ. Պոլիտեկ. գիրք Ը. գլ. 9. յօդ. 99։

աւանդեն այլոց՝ պայմանս ինչ 'ի վերայ նոցա ե-
դեալ, և կամ ընչից գրաւելոց 'ի գանձ աշխար-
հին վերակացու լինին, և որ սոցին սակի հոգը։
Այլ կէսք արձանագրեն որ ինչ իւրաքանչիւր ու-
մեք 'ի քաղաքացոց պարտ է հանգանակել 'ի
կարեւոր Ժամանակի [1]։

Զգ աղգ մտից աշխարհին յայլ և այլ գանձս
Ժողովին ուրոյն ամ ըստ ամի, և գանձուց իւրա-
քանչիւր տան պահպանք են կամ գանձապետք։
Ընդ որս աւագանին մատակարարել զայնս յոր
ինչ սահմանեալն են [2] ըստ հրամարտակաց Ժողո-
վարդեան, յանդիման երկուց դիւանագրաց՝
որ արձանագրեն զամենայն, մին 'ի դիմաց աւա-
գանւոյն, և միւսն գանձապետաց [3]։

Հարկահանք պաշտօնեայք հաստատակաց գան-
ձուն ունին զցուցակ սակին, զոր իւրաքանչիւր
ումեք 'ի քաղաքացոց պարտ է հատուցանել [4]։
և Ընդ յանդիման աւագանւոյն զանուն հա-
տուցողացն, և ամբաստանեն զնա ևս հատուցո-
ղացն։ Այլ կացուցանեն ատեանն քննիչս [5], դատել
զնոսա ըստ սովորական օրինաց։ որք 'ի չառնուլ
նոցա յանձն զհատուցումն, գրաւեն զինչս նոցա։
Բայց կարեւոր եւեթ իրք ածին յատեան, իսկ

1 Հարպակր. և Պատուգաբան. մատեան 'ի բառն Ե'ուտր. Պոլսեակ։ գիրք Ը։ գլ։ 9։ յօդ։ 103։

2 Հարպակր։ 'ի բառն Ա'ոբձեկտ.

3 Նոյն, 'ի բառն Ադուտր.

4 Նոյն և Պատգ։ 'ի բառն Ադոձեկտ. Ամբաստատ։ յոլ հատ։ գիրք Զ։ գլ։ 8։

5 Դատաստան։ 'ի Տիմակր։ էջ 775։

զուշնաքէլոյն հոգ հարկահանաց է յանձն, և նոքա գտանին որ ինչ վէճք 'ի զորձ իշխանութեանէ իւրեանց պատահէն [1]։

Որք 'ի վերայ տուգանացն կան հարկահանք, նոցա տուեալ է իշխանութիւն քննելոց զվճիռս առաջնոյ ատենին, և թեթևացուցանելոց կամ թողլոյ զտուգանսն՝ եթէ առաւելագունց թուեսցին նոցա կամ անիրաւ։

Ծախիք պատերազմի և կարևորաց ամենայնի 'ի տեսչութիւն աշխարհին, նշանակեալ կան 'ի վերայ գանձուց իւրաքանչիւր, զորոց ասացի. և 'ի հասանել պատերազմի՝ զյաւելուած այլոց գանձուցն հրամայեն օրէնք արկանել 'ի զինուորականն [2]. այլ առանց հրովարտակի ժողովրդեան ոչ է մարթ փոփոխել զկարգ սահմանեալ ծախուցն։

Այսմ ամի աւանդի կշիռ բաղում արծաթոյ 'ի մի 'ի գանձուց, ուստի գանձապետք սահմանեալք քաշեն հրապարակաւ չքաւորաց 'ի քաղաքայնոց, որպէս զի կարասցեն վարձել իւրաքանչիւր տեղի 'ի տեսարանս [3]։ Ժողովուրդն վրէժխնդիր է պահպանութեան գանձուն, և յաւուրս մեր սահմանեաց պատուհաս մահու Ճարտարախօսի՝ որ յանդգնիցի տալ խրատ 'ի կիր արկանելոյ զարծաթեն զայն 'ի նպաստ աշխարհին 'ի սպառել գանձուց նորա 'ի բաղում երկայն պատերազ-

1 Պողնակ. գիրք Ը. գլ. 9. յոգ. 97։
2 Դեմոսթ. 'ի Նեար. էջ 861։
3 Հարպակր. 'ի բառն Θεωρ.

մնոց [1]։ Յնորք անմոռութեան անօրինակ յարձանագրութիւնս ազգաց։

ԳԼՈՒԽ ԾԵ.

Ի նոյն մատենադարան աթենացւոյն յաղագս արամաբանութեան։

Մինչեւ շրջեալ ընդ զաւառս Լեղադայ, եղէ զաւուրս բազումս 'ի մատենադարանին Լեկղիդեայ. և 'ի դառնալ իմում անդրէն, միւսանգամ նստաք անդ ընդ նմա։

Լաւ եցոյց ինձ 'ի կարգ մի տետրակաց զգիրս տրամաբանութեան և Ճարտարախօսութեան, յեռեալ առ միմեանս վասն երկուց մանկացութեանցն կցորդութիւն բազում ընդ միմեանս ունելոյ [2], և ասէ ցիս. Վակաւ է զբեանս, զի չէն ինչ աւելի քան զամս հարիւր՝ յորմէ հետէ սկիզբն եղև ջանից առ 'ի կատարել զարուեստ խորհելոյ և խօսելոյ. և հնարհատարտ եմք վասն այսր Յունաց բնակելոց Յոտալիա և 'ի Սիկիլիա, և այս արգասիքք եղեն սլացմանն մնաց 'ի թեւս պիւթագորեան իմաստասիրութեանն։

Այսպէս Օ Էնոնի եղեայցւոյ, որ նախ նա հա-

[1] Ուրբիան. յողնեթ. 4։ Դեմոսթ. էջ 13։ Լիբան. Նախագր. Նմին Ճառի։

[2] Արիստոտ. Ճարտ. գիրք Ա. գլ. 1. հա. 2. էջ 512։ Սեքստ. Եմպիրիկ. ընդդէմ ազատաբան. գիրք Է. էջ 370։

մառօտ ինչ գրեաց գիրս զբանական արուեստէ[1], արժան է հատուցանել զգովութիւնս զայս. այլ զենոքհակալութեան մեծարանս պարտ է յաւելուլ Աբրիստոտելի, որ յայն ձշգրտութիւն զբանականին ած զոչ ուղղախոհութեան՝ զի զնա ինքն օրէն է համարել հնարագիւտ իրացն[2]։

Ի սովորութենէ ուսանիմք բաղդատել ընդ իրեարս երկուս կամ բազում՝ այլ և այլ իրս, առ 'ի գիտել և յայտնել այլոց զհանգիստութիւն նոցա կամ զանհանգիստութիւն։ Այս է տրտմաբանութիւնն բնական. և այս բաւական իցէ ազգի, որոյ ոչ կարելով ընդարձակել զմտացուածս իւր՝ զամենայն ինչ ընդ տիեզերս և 'ի քաղաքական կենցաղումն ուրոյն նկատէ։ Լոյսն նմա սխալել յաձախ յառածմն, զի տգէտ է ամենևին. այլ 'ի հետևանսն գտցի ուղիղ, զի պայծառ էն գիտութիւնք նորա, և յատուկ բառիւքն միշտ բացատրեալ։

Այլ առ բարգաւաձեալ ազգինս միտք մարդկան սովորեալ 'ի խորհել հանրաբար և անկցորդ յիրաց, ստեղծին աշխարհ իմն մտացածին, ոչ ինչ նուազ դժուարահաս քան զիրականն։ Յանբաւ բազմութիւն իմացուածոցն, զորս ընդ զգայութիւնսն ընդունին, յաւելուն և բազմապատիկ բաղադրութեանցն հոյլք՝ զորս կազմեն 'ի մեզ

1 Դիոգ. լայերթ. յառաջ. արկ. յօդ 18։ Աբրիստոտ. առ Նմին. գիրք Ը. յօդ. 57. գիրք Թ. յօդ. 25։

2 Աբրիստոտ. յՂ. խմաստակ. գլ. 34. հա. 1. էջ 314։

միտք անտահման արգասաւորութեամբ։

Իսկ 'ի նկատել զյոլովագունիցն յիմացուածոց մտաց մերոց զընդ միմեանս նմանութիւն այնքան՝ որ զի նոյնք թուին, և զդոյզն ինչ անտեղեակութիւնս՝ որովք զանազանին իսկապէս 'ի միմեանց, հիացեալ զարմանայցեմք ընդ արիութիւն և ընդ խորագնին տեսութիւն այնոցիկ՝ որք նախ խորհեցան և 'ի կատարումն զխորհեալն ածին, սահմանելով կարգ և աստիճանս այնքանեաց անբաւից իմացուածոց՝ զորս մինչև ցայսժամ երկնեալ էր մարդկան 'ի մտի, և զորս մարթէրն երկնել նոցա։ Յայնմհետէ։

Ոչ է տեսանել զմի 'ի հզօրագոյն զօրութեց մարդկեղէն մտաց, կամ զմի 'ի մեծամեծ հնարագիտութեանցն՝ յորս 'ի դէպ է Յունաց պանծալ։ Եգիպտացիք և քաղդէացիք, և ազգ թերեւս հեռաւորագոյն քան զնոսա, աւանդեցին մեզ զսկզբունս զրեթէ ամենայն գիտութեանց և արուեստից. այլ որ առ յաստպ գալոց էն ազգք, մեզ լսցին ընդհակալ յաղագս ոչնչ որոյ հնարք ձարտարութեան արկանեն զտրամաբանութիւն ըստ կանոնաց։ Ցեսցուք արդ 'ի հարևանցի զկարեւոր մնասունս նորա։

Եւ ինչ զոր ցուցանեմք և էթ, առանց հաստատելոյ կամ ժխտելոյ. որպէս յասեն՝ ՄԱՐԴ, ՁԻ, ԿԵՆԴԱՆԻ ԵՐԿՈՏԱՆԻ, և այլն։ Եւ եւ զոր ցուցանեմք՝ հաստատելով ինչ զայնմանէ կամ ժխտելով։

Բ՛ԷՐԴ զառաջինն, թէպէտ և բազումք էն յոյժ, մարթ եղև բաշխել՝ի տասն դասս։ Զառաջնումն բովանդակեալ զգայացութիւնս, որպէս ՄԱՐԴ, ՁԻ, և այլն, [1]։ յերկրորդումն ըզքանակս ազգի ազգի, որպէս զթիւ, զժամանակ, զտարածութիւն, և այլն [2]։ յերրորդումն զորակս, ընդ որով անկանին նախ՝ ունակութիւնք, որպէս առաքինութիւնք և գիտութիւնք։ երկրորդ՝ բաւականութիւնք, որովք ոք քան զոք յարմարագոյն գտանի՝ի բնէ՝ի հրահանգս ինչ։ երրորդ՝ զգալի որակք, որպէս քաղցրութիւն, դառնութիւն, ցուրտ, տօթ, գոյն, և այլն։ և չորրորդ՝ տեսակ և ձև, որպէս բոլորշի, քառակուսի, և այլն [3]։

Լոկ յայսմ՝ի դասուց բաշխին պէսպէս առինչք, ներգործութիւնք, հանգամանք, ստացութիւնք, և այլն։ որպէս զի՝ի տասնեակ յայսոսիկ դասս իրաց բովանդակել ամենայն էից և եղանակաց ելոյ։ Այս կոչին ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆՔ կամ ՄԱԿԱԳԻՐՔ, զի չէ մարթ ենթակայանալ իմիք՝ որ չեցէ կամ զգայացութիւն կամ որակ կամ քանակ, այլովքն հանդերձ։

Ա՛ՆԾ էր յոյժ զամենայն խմացուածս մտաց՝ի սուղ ինչ կարգս յայսոսիկ բովանդակել, այլ ոչ աստ զկայ առին իրքն։ Զթէ՝ի ստորոգութիւնսն իւրաքանչիւր քաջ միտ դիցուք, գտանեմք՝ի նո-

1 Արիստոտ. յզ. մակդրաց. գլ. 4. հտ. 1. էջ 15։
2 Նոյն անդ. գլ. 6։
3 Նոյն անդ. գլ. 8. էջ 26։

սա կարգս բաղումն ստորաբաժանելս ընդ մի-
մեանս։ Օրինակ իմն յառաջնմէ ստորոգու-
թենէ.

Մի՛տք մեր 'ի մանկութեան ոչ ինչ տեսանեն
և ոչ ինչ ըմբռնեն, բայց զանհատս *. զորս մեք
արդ առաջին գոյացութիւնս կոչեմք ', զի սոքա
նախ զաչս մեր ձգեն յիւրեանս, և զի իսկագոյնք
են 'ի գոյացութիւնս։

Այլ որոց առաւել զգալի են ընդ միմեանս
նմանութիւնք՝ համատեսակք երևելով մեզ, այս
ինքն 'ի նոյն ձև 'ի նոյն կերպարանս, զնոսա 'ի
բաղումս դասս բաժանեցաք ², զոր օրինակ ըստ
այսմ և այնմ մարդոյ, և ըստ այսմ և այնմ ձիոյ
կազմեմք զտեսակարար տիպս մարդոյ և ձիոյ։

Այսպէս այլ և այլ ՃԻՒՂք ազգատոհմի ԼԾՈՐՂԻՆ
'ի մի բուն, ըստ նմին օրինակի բաղումս այլ և
այլ տեսակք համատիպք միմեանց ընդ նոսին
սեռիս բովանդակին ³։ Օրոր օրինակ տեսակա-
բար տիպք մարդոյ և ձիոյ և եզին, և բնաւ ա-
մենայն էակաց՝ յորս են կեանք և զգայուն,
յառաջ ածեն զտեսակարար տիպս ԿԵՆԴԱՆՈՅ՝ որ
'ի մեր բարբառ նշանակէ ՈՒՆԵՍՆ։ Կնդար-
ձակագոյն քան զտեռս զայս իմանամք այլս, որ-
պէս ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆ այլովքն հանդերձ. և երթեալ

* Զորս յոյնն ասէ ἄτομος, այս ինքն անբաժին։ (Արիս-
տոտ. յդ. մակդրաց, գլ. հա-
1. էջ 15։)

¹ Արիստոտ. անդ, գլ. 5.

² Նոյն յդ. պերճախօս.
գիրք Ա. գլ. 7. հա. 1. էջ 184։

³ Նոյն յդ. բնագանց. գիրք
Ե. գլ. 28. հա. 2. էջ 901։

հասանելոք մինչև 'ի ծայրագոյնն սեռ, որ է Էակ։

Ի սանդուղքս յայս, որոյ է ծայր Էակն, և ի ներքսանելոք ընդ այն յանհատս, մարթ է զաստիճանս իւրաքանչիւր հանդերձել սեռ խնդարհագուն անբնդմէջ, և տեսակ բարձրագունին։ Ի խորժելի է իմաստասիրաց կարգել զերծունդս զայսոսիկ էից բնաւից և զընդունմանց մտաց, զի սաքօք գիւրաբար հետազօտեն զծնունդս կերպաբանաց իրաց 'ի միտս, և այլմէ յայլ ընդ դասակարգութիւնս նոցա անցանել որպէս ընդ ռազմն զօրաց 'ի բանակի։ Այս է՝ զի նկատելով նոցա զսեռ որպէս զմիաւոր կամ զսահմանաւոր, զտեսակս որպէս բազումս, և զանհատս որպէս զանսահման, յուզեն խնդիրս զսահմանաւորէն և զանսահմանէ, զմիոջէ և զբազմաց. ոչ այլ ինչ խնդրելով, բայց զիսկութիւն սեռին և զտեսակաց և զանհատից [2]։

Տեսակ իւրաքանչիւր զանազանի 'ի սեռէ իւրմէ մնկդրիւ իւիք էականաւ՝ որ որոշէ զնա յայլոց, և կոչի զանազանութիւն [3]։ Որպէս բանականութիւնն, զի գեղեցիկ է քան զանմեծայն բաբեմնութիւնս մարդոյ և անհաղորդական, ոչ որոշէ զնա յայլոց կենդանեաց *։ Յաւէլ ապա 'ի սեռական տիպ կենդանւոյ զբանականութեանն,

1 Պղատ. յզ. հաս. գիրք խս. գիրք Զ. գլ. 4. հա. Ի. հա. 2. էջ 534։ 1. էջ 245. գլ. 6. էջ 248։

2 Նոյն 'ի Փիլեբ։ Նոյն 'ի Պարմ։

3 Արիստոտ. յզ. պերճաբան. գլ. 6. էջ 248։

* Յեակոյս մասնիս 'ի տեսակութիւնն. թիւ Ի։

այս ինքն է զզանազանութիւն նորա, և գայլս զանազանակարգաւ տիպ մարդոյ՝։ Դժուարին է յոյժ, այլ կարելոր, տարմանել զզանազանութիւնս որ են ընդ նոսին սեռիս, և զզանազանութիւնս տեսակաց՝ որ սերին՝ի նմանակից սեռից։ Բ. յոսոցիկ միտ դնելով, վաղ հասու լինիցք յատկութեանց՝ որ յարակիցք են տեսակաց իւրաքանչիւր, և պատահական հանգամանաց նոցա։

Բայց յատկութիւն մի զերութիւն իրաց ասասանօր խմասցիս, այլ զանազանեալ՝ի նմանէ[2]. այս ինքն է մակդիր պատկանաւոր տեսակաց, յառաջ բղխեալ յէական ստորոգելոյն՝ զոր կոչեցաքն զանազանութիւն։ Արդ զի ընդունակ է մակացութեանց, այս մի՝ի յատկութեանցն նորա է՝ յառաջ եկեալ՝ի բանական զօրութենէ նորա, և պատկանի համատեսակաց ևեթ նորին։ Բ. յլ զի կարէ ենջել և շարժել, այս չէ՝ի յատկութեանցնորա, զի և այլոց կենդանեաց է պատկանաւոր[3]։

Պատահումն է մի՝ի հանգամանաց՝ զոր միաբ զիւրաւ՝ի բաց առնուն յիրաց. զոր օրինակ պատահումն է մարդոյ՝ի Դէսպ ֆալ, և մարմնոյ սոֆոկոնիան[4]։

Տեսցք իրաց, զորոց ցայսմայր ասացաք, անկցուցք՝ի հաստատութիւն և՝ի ժխտելոյ՝ ոչ ճշշ-

1 Պորփիւր. Նեբած. առ. Արիստոտել, հատ. 1. էջ 7։
2 Արիստոտ. յդ. պերճաբան. գիրք Ա. գլ. 4 և 5։
3 Նոյն անդ։
4 Նոյն անդ. գիրք Ա. գլ. 5. էջ 183։

մարիտք են և ոչ սուտք [1]. անցցուք արդ յայնս, որք զմի յերկուց ասասի կերպարանաց բերեն։

Սուտիւն է բան, որ հաստատէ ինչ կամ ժխտէ [2]. ապա ստութեան ևեթ է պատկանաւոր ճշմարտութիւն կամ ստութիւն, զի այլ ձևք բանից՝ որպէս աղաչանք կամ հրաման՝ ոչ ճշմարտութեան և ոչ ստութեան են ընդունականք։

Յամենայն ասացուածս իրք ինչ կցորդին կամ զատանին 'ի միմեանց. և երեք ինչ զանազանին 'ի նոսա, էնթակայ, բայ, և մակդիր. զոր օրինակ յայսմ բանի՝ Սոկրատ է իմաստուն. էնթակայ է Սոկրատ, է բայ, և իմաստուն մակդիր։ Էնթակայ նշանակէ զկացեալն ընդ իւիք. և կոչի այսպէս, զի յայտնէ զկրն՝ զորմէ է բանն, որպէս թէ 'ի նեղքոյ կալով աչաց. թերևս և վասն այն, զի ոչ որպէս զմակդիրսն զոր ընդունի՝ է հանրական, և յեղանակաւ իմն անկանի ընդ նոքօք [3]։

Էնթակայն մերթ ցուցանէ իրս հանրականս պատկանաւորս անհատից բազմաց, որպէս մարդ, կենդանի, և այլն. և մերթ եզական ինչ՝ միումն ումեք անհատի պատկանաւոր, որպէս Կալլիաս, Սոկրատ, և այլն [4]։ Եւ ըստ էնթակային հանրական գոլոյ կամ եզական, բանն բովանդակիչ նոցին՝ համարի հանրական կամ եզական։

1 Արիստոտ. յղ. մեկն. գլ. 1. հա. էջ 37։
2 Նոյն անդ գլ. 4 և 5։
3 Նոյն յղ. մակդրաց. գլ. 5. հա. 1. էջ 17։
4 Նոյն յղ. մեկն. գլ. 7. հա. 1. էջ 39։

Բ. անպարոյր նշանակութիւն հանրականին՝ հարկ է յաւելուլ զբառքս ամենայն կամ ոչ ոք. զոր օրինակ մարդ է հանրական. եթէ ասիցեմք ամենայն մարդ կամ ոչ ոք 'ի մարդէնանէ, իմանամք զայն ըստ ամենայն ընդարձակութեան մարդկան սեռի, զի չառնումք զոք 'ի բաց. իսկ եթէ ասիցեմք մարդէն ոմանք, պարուրեմք զհանրականութիւն նորա։

Բայ է նշանակ, որ զմակդիր ինչ ցուցանէ պատկանաւոր ենթակայի իմիք [1]։ Կարեւոր է զոր կցորդութեան նոցա ընդ միմեանս. և է զոր այս բայն Է, մերթ ազդմամբ և մերթ զօրութեամբ յաւելեալ. զօրութեամբ ասեմ, զի նայն և յայլ բայս բովանդակի. զոր օրինակ յասելն գնամ, իմանի գնայուն է մ [2]։

Իսկ մակդիրն, որպէս յառաջագոյն տեսաք, է մի 'ի ստորոգութեանց՝ որ զամենայն ազգի ազգի մակդիրս կամ ստորոգելիս բովանդակէն յիւրեանս [3]։

Ընդ դատումն մեր ոչ այլ ինչ է, բայց ներդրոյծութիւն մնաց՝ որով հաստատեմք կամ ժխտեմք ինչ զիմիքդ, կամ մանաւանդ հայեցուած մնաց՝ որ զայս ինչ կամ զայն յատկութիւն տեսանել պատկանաւոր կամ անպատկան այսմ իմիք ենթակայի. քանզի իմացումն որ նկատէ զայս՝ այն-

[1] Արիստոտ. յդ. մեկն. գլ. 3. էջ 37։

[2] Նոյն անդ. գլ. 12. էջ 46։

[3] Նոյն յդ. պերճախօս. գիրք Ա. գլ. 9. հա. 1. էջ 185։

պէս ունի առ հոգի, որպէս տեսութիւն առ աչս[1]։

Եւ ասացուածոց բազում աղգք զանազանին. այլ մեք տեսցուք զայնոսիկ, որք զնովին յաճեալ ենթակայիս՝ հակառակք են իրերաց, հաստատութեամբ և մերժմամբ։ Զոմի ինն այնպէս, զի Աշմարտութեան միոյն զմիւսոյն պարտ իցէ ցուցանել զստութիւն. այլ չէն օրէնքս այս անվրէպք, զի բազմօրինակ ներգործի 'ի նոսա հակադրութիւն։

Եթէ յերկաբանչիւրումն հանրական իցէ ենթակայն և անպարտոյը, ներհականք կոչին ասացուածքն, և մարթ է երկոցունցն ևս զոլ սուտ[2]. զոր օրինակ. Մէնայն մարդ է սպիտակ. Ոչ ոք 'ի մարդկանէ է սպիտակ։ Եթէ ենթակայն հանրական 'ի միումն անպարտոյը և 'ի միւսումն իցէ պարտուրեալ, հակասականք կոչին ասացուածքն, զի մին Աշմարիտ է և միւսն սուտ։ Զոր օրինակ. Մէնայն մարդ է սպիտակ. Մանչ 'ի մարդկանէ չէն սպիտակ։ Եւ կամ. Ոչ ոք 'ի մարդկանէ է սպիտակ. Մանչ 'ի մարդկանէ սպիտակ էն։[3] Այսոքն հակադրութիւն է և հակասութիւն և եզականացն ասացուածոց, և հարկ է ամենևին միումն Աշմարիտ զոլ և միւսումն սուտ. զոր օրինակ. Ամէնքեան է սպիտակ. Ամէնքեան ոչ է սպիտակ[2]։

Ասացուածք կրկին մասնականք, մին հաստատ-

1 Արիստոտ. յղ. պերճախոս. գիրք Ա. գլ. 17. էջ 192։
2 Նոյն յղ. մեկն. գլ. 7. հա. 1. էջ 39։
3 Նոյն յղ. մակդրաց. գլ. 10. հա. 1. էջ 33։ Նոյն յղ. մեկն. անդ. էջ 40։

տական և միան ժիտական, ոչ հակադրին մի-մեանց տիրապետ՝ այլ ըստ բաւից միայն։ Զի յասել ուրուք՝ թէ Ոմանք 'ի մարդկանէ են արդարք. Ոմանք 'ի մարդկանէ չեն արդարք. ոչ զնոցունց ամենից ասիցէ '։

Այս ամենայն խելամտութիւնք, զորս փոքր 'ի շատէ ասացաքս, եղեն արգասիք ընդերկար հետազօտութեանց։ Այլ ոչ յամենայ գալ 'ի ծանօթութիւն, զի բազմազոյնք 'ի մոլորութենց մերոց առնուն պատճառս յանհաւատութենէ իմացուածոց մերոց և յայտարար նշանաց նոցա։ Զի որովհետև զարտաքին իրաց զգայութեամբք ևեթ առնումք զչափ, և չկարեմք զանազանել զնոսա՝ բայց միայն ըստ երևմանն, յաճախագոյնս աղմկեալ շփոթեմք զէութիւն նոցա ընդ յատկութիւնս և ընդ պատահմունս։ Իսկ 'ի մտաւոր իրաց բազումք այնոքիկ են, որ աղօտ ծագեն նշոյլք 'ի միտս, և տարտամ և յողդողդ տպաւորեն պատկերս։ Հաւելու և ևս շփոթն 'ի բազմութենէ երկդիմի և այլասացիկ բառից՝ որ յորդեն 'ի լեզուս իւրաքանչիւր, և մանաւանդ 'ի յաճախութէ հանրական բառից՝ որոնք վարիմք ստէպ, առանց գիտելոյ զնշանակութիւն նոցա։

Ուշոյ մտաց է մերձեցուցանել զկրս, զորս խաւարն այն գոգցես իմն հեռացուցանէ 'ի մէնջ. որով ընդ ներհուն և ընդ ծանծաղ միտս ոչ այլ

։ Արիստոտ. յղ. նախկին լուծ. գլ. 15. հտ. 1. էջ 117։

ինչ է զանազանութիւն, բայց զի մին ոչ յոյժ 'ի բացեայ տեսանէ զկրս, միւսն 'ի հեռուստ [1]։

Սարեբախտք այսուիկ զտանիմք, զի առ 'ի միաբանական կցորդութիւն չէն մեզ այլոց իրիք պէտք՝ բայց միայն համեմատութեան տպաւորութեանց իրաց 'ի միտս, և նմանութեան բարբառոյ։ Ի տուրեւառս խմաստից միտք արդարակորովք 'ի կիր արկանեն դրամն յարդունս, այլ բազում՝ այն է զի առանց ճանաչելոյ զյարդ նոցա. այլք դրամն տարագիծս, որ գնան անխտիր 'ի շահավաճառս։

Պարտ է խմաստասիրի 'ի կիր արկանել ասացուածս սոլորականս [2], այլ զանազանելով զնշանակութիւնս նոցա՝ եթէ իցեն բազմանշանակք. և դարձեալ պարտ է նմա սահմանել զիմաստս բառից իւրաքանչիւր որովք վարի։

Սահմանել ինչ՝ է ծանուցանել զիսկին նորա յատկութեամբք, որովք զանազանի յայլ ամենայն իրաց [3]։ Ոչ գոյին երբեմն օրէնք հասանելոյ 'ի ճշգութիւնս յայս, կամ զհասանելն գիտելոյ հաւաստեաւ։ Նախ քան զհաստատութիւն օրինացն ծանուցաւ, զի միակ ճշգրիտ սահման է իրաց իւրաքանչիւր [4]. զի սահմանն այն սահմանելումն եւեթ պարտի պատկանել [5]. զի պարտ

1 Արիստոտ. յղ. խմաստակ. գիրք Ա. գլ. 1. հա. 1. էջ 281։
2 Նոյն, յղ. պերճախօս. գիրք Բ. գլ. 2. հա. 1. էջ 196։
3 Նոյն անդ, գիրք Ա. գլ. 5. էջ 182։
4 Նոյն անդ, գիրք Զ. գլ. 14. էջ 260։
5 Նոյն անդ, գիրք Է. գլ. 5. էջ 264։

է նմա բովանդակել զամենայն յատկութիւնս սահմանելոյն [1], և զամենայն հանմտեւական նմին էակս, զոր օրինակ՝ սահմանի մարդոյն պարտ է բովանդակել զամենայն մարդիկ [2]. զի պարտ է նմա գոլ ճիշդ, որպէս զի ամենայն բան՝ զոր մարթի իցէ բառնալ 'ի բաց՝ աւելորդ է [3]. զի պարտ է նմա գոլ բացայայտ, որով ամենայն երկդիմի և այլաբանական և անսովոր ասացուածք արտաքսին 'ի բաց [4]. և զի դարձեալ առ իմացուած նոցին չիցէ հարկ առ սահմանեալն դիմել, որպէս 'ի վաղնջուց նկարագրած պատկերս՝ զորս առանց անուանցն առընթեր դրոշմելոց ոչ է մարթ ճանաչել [5]։

Այս որպէս զայս ամենայն պայմանս մարթի իցէ բովանդակել։ Տեսաք վերագոյն զսանդուղսն, որ յանհատից 'ի սեռական էակս վերաձեն. և զայն ևս նկատեալ տեսաք, զի տեսակաց իւրաքանչիւր 'ի վերոյ կայ անընդմէջ սեռ՝ յորմէ որոշին զանազանութեամբն։ Արդ ճշգրիտ սահմանին պարտ է բաղկանալ յանընդմէջ սեռէ և 'ի զանազանութենէ սահմանելոյն [6], որով և բովանդակել զերկուս կարևոր մակդիրս իւր։ Զոր օրինակ 'ի սահմանել զմարդն՝ կենդանի բանաւոր [7], սեռն

1 Արիստոտ. յոգ. պերճախոս. գիրք Զ. գլ. 5. էջ 245։
2 Նոյն անդ, գլ. 1. էջ 241։
3 Նոյն անդ, գլ. 3. էջ 243։
4 Նոյն անդ, գլ. 2. էջ 242։
5 Նոյն անդ, էջ 243։
6 Նոյն անդ, գիրք Ա. գլ. 8. էջ 185. գիրք Զ. գլ. 1. էջ 242։
7 Նոյն առ Յամբղիկոսի յոգ. վարուց Պիւթագորայ. գլ. 6. էջ 24։

էնդրանի խառնել զնա ընդ էակս՝ որոց է կենդանութիւն, իսկ զանազանութիւն բանաւոր որոշել զնա։

Այսպա ուրեմն ամենայն սահման ցուցանել զբազմամ այլ և այլ իրաց նմանութիւն ըստ սեռին, և զանեմանութիւն ըստ զանազանութեանն։ Այդ չիք ինչ կարևորագոյն քան հասու լինել նմանութեանս այսմիկ և զանազանութեան՝ ի հրահանգս արուեստին ուղղախոհութեանն և տրամաբանելոյ[1]։

Լուեմ զխորաքննին տեսութիւնս բազումս զսեռից և զզանազանութեանց, և զաղգս ազգս ասացուածոց՝ որ ՝ի տրամաբանելն վարին։ Զի ինձ առաջի կայ վերՀ՝ի վերոյ ևեթ ցուցանել ըստ զարգացումն մարդկեղէն մտաց, և ոչ զամենայն շաւիղս լուսոյ թողեալս ՝ի նմանել՝ հետազօտել։ Այլ՝ի գիւտս շարաբանութեան արժան է մեզ վայրիկ մի զկայ առնուլ։

Արդեաս յառաջագոյն ասացաք, ՝ի բանս յայս՝ Սոկրատ է էմասոռն, ենթակայ է Սոկրատ, և մակդիր էմասոռնն. և զի էական բային կցորդեալ զնոսա, հաստատէ՝ զի իմաստութիւն պատկանի Սոկրատայ։ Այլ իբր մարթ իցէ գիտել զՀնարտութիւն կամ զտութիւն բանին, ուր մակդրին ընդ ենթակային պատկանաւորութիւն չիցէ յայտնի։ Պարտ է անդ ՝ի ծանուցելոյն յանծանօթն անցանել[2], և գիտել առ երրորդ իմն՝ որոյ պատ-

[1] Արիստոտ. յզ. պերճաբան. գիրք Ա. գլ. 13, 16 և 17։

[2] Նոյն. յզ. բնազանց. գիրք Է. գլ. 4. հա. 2. էջ 909։

կանառորութիւն առ Էնթակայն և առ մակդիրն յայտնագոյն իցէ։

Բ. բացայայտ իմացուած, զՀաստատականն և Էթ բան 'ի քնին առցուք։ Օ որ օրինակ Էթէ երկբայիցիմ թէ Ա հաւասար իցէ ընդ Բ, և զի տիցեմ զի Ա հաւասար է ընդ Գ, և Բ նոյնպէս հաւասար ընդ Գ, 'ի միտ առնում անեարկբայելի՝ զի Ա հաւասար է ընդ Բ[1]։

Պարտ առ 'ի ցուցանել զի արդարութիւն է ունակութիւն՝ բաւական է գիտել, զի արդարութիւն է առաքինութիւն, և զի ամենայն առաքինութիւն է ունակութիւն[2]։ Պարտ առ 'ի ձև շարաբանութեան ածել զասացեալն, զբառն ա-ռաքինութիւն դիցուք 'ի միջի ընդ Էնթակայն և ընդ մակդիրն, ունելով կարգին այսպէս. արդարութիւն, առաքինութիւն, ունակութիւն։ Ընդ այն որ 'ի միջի՝ Դէնոդդ կոչի, 'ի միջաստհմանին կալով, և զի դարձեալ միջնորդաւ նորա զօդին ընդ իրեարս այլքն երկոքին՝ որ ծայրն կոչին[3]։ Պարքէն պարտ է միջնորդին գէթ միանգամ Հանրական ունել նշանակութիւն 'ի շարաբանութեան, և միում յասացուածոցն զոլ Հանրական[4]։ Պարտ պարտ է գնել նախ,

1 Արիստոտ. նախկին լուծ. գլ. 4. հտ. 1. էջ 54։

2 Նոյն յղ. բարոյ. գիրք Բ. գլ. 1. հտ. 2. էջ 17. գլ. 4. էջ 21։

3 Նոյն նախկին լուծ. անդ։

4 Նոյն, յղ. պերճախօս. գիրք Ը. գլ. 1. հտ. 1. էջ 267. գլ. 14. էջ 280։

Յամենայն առաքինութիւն է ունակութիւն. և ապա զնովքեմբ ածել,

Բարդ արդարութիւն է առաքինութիւն.

Պարզ ուրեմն արդարութիւն է ունակութիւն։

Ոստի 'ի միտ առնուլ է նախ, զի շարաբանութիւն յերից բառից յօդի, յորոց է երրորդն մակդիր երկրորդին, և երկրորդն առաջնոյն [1]։ Որպէս ասա ոռնակոռնիւն մակդիր է առաջինորնեան, և առաջինորնիւն արդարորնեան։ Այլ քանզի ամենայն մակդիր 'ի ստորոգութեանց ուստեք առեալ է, կամ 'ի դասակարգութենէ էից՝ յորոց ստորոգութիւնքն կազմին, վասն այնորիկ ունի միջնորդն առ երկաքանչիւր ծայրս մերթ իբր զոյացութի՞ կամ որակ կամ քանակ և այլն, և մերթ իբր սեռ կամ տեսակ կամ յատկութիւն և այլն [2]։ Որ՞ զայնասասացեալ օրինակիս ունի իբր սեռ և տեսակ. զի ոռնակոռնիւն է սեռ առաջինորնեան՝, և առաջինորնիւն արդարորնեան։ Այլ զի այնմ՞ամենայնի որ պատկանի հանրագոյն սեռի՝ պարտ է պատկանել բովանդակելոց ընդ նովաւ սեռից և տեսակաց, այն յայտ իսկ է [3]։

Այլ է դարձեալ 'ի միտ առնուլ, զի ամենայն շարաբանութիւն յերեցունց առաջարկութեանց կազմի. յերկուս առաջինսն բաղդատի միջնորդն

1 Արիստոտ. Նախկին լուծ. գլ. 4. հա. 1. էջ 186։
2 Նոյն յոլ. պերճախօս. գիրք Ա. գլ. 9. հա. 1. էջ 185։
3 Նոյն անդ. գիրք Դ. գլ. 1. էջ 213. գիրք Զ. գլ. 5. էջ 247։

ընդ երկաքանչիւր ծայրս, և յերրորդումն սահմանի՝ զի միւմ'ի ծայրիցն հարկ է զոլ մակդիր միւսոյն, որ այն իսկ է խնդիրն։

Եւ ևս 'ի միտ առնուլ է, զի ամենայն շարաբանութիւն է խօսք՝ յորում 'ի յայտնի առաջարկութեանց ոմանց իմաստասիրեմք այլ ինչ'։

Այլ և այլ համեմատութիւնք երից բառիցն՝ այլ և այլ ազգ շարաբանութեան յառաջ ածեն, յորոց բազմազգութիւնք ընդ յառաջադրեալ օրինակաւս անկանին[2]։

Օ անազանին հետևանքն և ըստ հաստատական կամ ժխտական ձևոյ առաջարկութեանցն, և ըստ առաւել կամ նուազ հանրականութեան նոցա և բառիցն. և աստի յաձախեցին կանոնք, որ անդէն և անդ յայտ առնեն զնշդրտութիւն կամ զթերութիւն տրամաբանութեանն։

Յորդորակք և օրինակք պիտանի են 'ի համոզել զամբոխն, իսկ շարաբանութիւն 'ի հաւանեցուցանել զմիտաստաւէրս[3]։ Զիք ինչ հզօր և մեծատաստ քան զվճիռն յառաջ ածեալ յերկուց ճշմարտութեանց, որոց ստիպի հակառակորդն հաւանել[4]։ Այս հանձարեղ կարգ զներգործութիւնս մտաց մերոց հոլանեալ յանդիման կացու-

1 Արիստոտ. յլ. պերճախոս. գիրք Ա. գլ. 1. էջ 180։ Նոյն յլ. խմաստակ. գիրք Ա. գլ. 1. հա. 1. էջ 281։

2 Նոյն նախկին լուծ. գիրք Ա. գլ. 7. հա. 1. էջ 60։

3 Նոյն յլ. պերճախոս. գիրք Ա. գլ. 12. հա. 1. էջ 188. գիրք Բ. գլ. 2. էջ 269։

4 Պղատ. 'ի Մենն. հա. 2. էջ 75։

ցանկ։ Արդեւ յառաջագոյն ասացաք, բաց 'ի սկզբնական առաձիգ՝ որ ինքնին յայտ առնէին զՀնամարտութիւն[1], այլ ամենայն վՀիւք մեր էին հետեւութիւնք. և յառաջ գան 'ի տրամաբանութենէ՝ որ անՀաս երագութեամբ 'ի միտս մեր ներգործի։ Օ՛ի յասել խմամ՝ թէ Բ՛ըդարութիւն է ունակութիւն, ներգործէր 'ի միտս իմ շարաբանութիւնն՝ զոր վերագոյն եդի։

Բ՛ զի լուեմք զմի յառաջարկութեանց՝ դիւրին 'ի զուշակել, և կոչի շարաբանութիւն այն եզառած. որ թէպէտ և թերի է[2], այլ ոչ ինչ նուազ զօրաւոր։ Օրինակ իմն. Բ՛ենայն առաքինութիւն է ուռնակութիւն, ապա արդարութիւն է ուռնակութիւն. կամ Բ՛ըդարութիւն է առաքինութիւն, ապա ուրեմն է ուռնակութիւն։ Օ՛նոյն յառաջ ածէ հետեւանս, եթէ որ պարզագոյն ևս ասիցէ. Արդարութիւն քանզի առաքինութիւն է, է ուռնակութիւն. և կամ Արդարութիւն ուռնակութիւն է, ոչ ամենայն առաքինութիւն է ուռնակութիւն։ Բ՛այլիսի է և ուրումն 'ի քերթողացն մերոց ասացուած.

Բ՛ահկանացուդ, մի զքեզն պահեր զու անմահ[3]։
Օ՛ի 'ի ձև շարաբանութեան ածել զայն կամելով, ասելի է. Ոչ է պարտ մահկանացուս պահել

1 Արիստոտ. յՊ. պերճախօս. գլ. 1. հա. 180։
2 Դեմոսթ. Փաղէր. յՊ. պերճախօս. գլ. 32։
3 Արիստոտ. յՊ. Ճարտ. գիրք Բ. գլ. 21. հա. 2. էջ 571։

չէն անմահ. իսկ արդ դու մահկանացու է, ապա ուրեմն, և այն։ Իսկ յեզառաց կամելով փոխել զշարաբանութիւնդ, լուելի է զմի յառաջարկութեանցդ։

Արդ այսպէս ամենայն վճիռ կամ խելամտութիւն, թէպէտ ընդ իւր ածեալ ձգիցէ զապացոյցն և թէ ոչ, տիրապէս շարաբանութիւն է. բայց միայն զապացոյցն ընդ իւր ունելով, միջնորդաւ նորա կցորդի մակդիրն ընդ էնթակային կամ մերժի 'ի նմանէ. իսկ առանց ապացուցի ածեալ 'ի մէջ, հարկ է այլ միջնորդ 'ի նեղքս մուծանել։

Մանաւանդ ապարապով խոկմամբ յիմացուածս մտաց՝ զտին զարուեստ երևելի առնելոյ զապացոյցս քանի, և քօղանիդրեալ հոլանեցին և 'ի կարգ ածին զշարաբանութիւնս թերիս՝ որովք վարիմքն անդադար։

Տեսս ինձ քանի յամառ երկայնամտութեամբ պէտք էին 'ի յաջողութիւն ելից իրացն, և որպիսի խորագնին հանճարոց. զի թէպէտ և ոչ հնարագիտութիւնք առաջի կային նոցա, զի ոչ ինչ յաւելին նոքա 'ի բնութիւն անդր, այլ պարտ էր նոցա նկատել 'ի նմին զայն ինչ՝ որ անտեսն է 'ի հասարակաց մտաց։

Ամենայն ապացոյց է շարաբանութիւն, այլ ոչ ամենայն շարաբանութիւն է ապացոյց[1]։ Օրի շարաբանութիւն անդ է ապացուցական՝ ուր

[1] Արիստոտ. Նախկին լուծ. գլ. 4. հա. 1. եր 54։

'ի սկզբնական առաձս յէնու, կամ յայնս՝ որ 'ի սկզբնականաց անտի յառաջ բղխեն։ Իսկ որ յէնուն 'ի կարծիս հաւանականս հասարակաց մտաց և կամ զէթ իմաստնոց և գիտնոց, այնոքիկ հակաձառականք կոչին. 'և վիճաբանականք դարձեալ հետևութիւնքն յառաջ ածեալք 'ի բանից, որ իբր հաւանականք առաջարկին՝ ոչ այնպիսիք զոլով։ Առաջինն զէն 'ի ձեռս տայ իմաստասիրաց, որ պատկառ կան ճշմարտութեան. երկրորդն հակաձառից, որոց հարկ է յաճախ պարապել 'ի խնդիրս ճշմարտատիպս. իսկ երրորդն իմաստակաց, որ զնշմարանս և զթ ճշմարտութեան շատ համարին[2]։

Այս քանզի բազում այն է զի կարծեաք տրամաբանեմք քան հաւաստեաք, մանկտին 'ի տղայ տիոց պարապէ 'ի հակաձառութիւն. զի այսպէս կոչի տրամաբանութիւնն՝ որ 'ի հաւանականաց և զթ յառաջ ածէ հետևանս[3]։ Արթին նոքա 'ի պէսպէս խնդիրս և յառաջարկութիւնս բնաբանականս՝ բարոյականս և տրամաբանականս,[4] հանդէս առնել զօրութեան մտաց իւրեանց, կշռել զկարծիս, հաստատել փոխանակաւ զներհակս[5],

1 Արիստոտ. յղ. պերճախոս. գիրք Ա. գլ. 1. հա. 1. էջ 180։

2 Նոյն անդ. գլ. 14. հա. 1. էջ 189։ Նոյն յղ. իմաստակ. գլ. 1. էջ 282։ Նոյն, յղ. բնազանց. գիրք Դ. հա. 2. էջ 871։

3 Նոյն, յղ. պերճախոս. գիրք Ա. գլ. 11. հա. 1. էջ 187։

4 Նոյն անդ. գլ. 14. էջ 189։

5 Նոյն, յղ. ճարտ. գիրք Ա. գլ. 1. հա. 2. էջ 514։

և 'ի պատ 'ի պատ մոլորութիւնս խնամատարութեան միջամուխ լեալ՝ զիարձ առնուլ։

Եւ զի դարձեալ յաձախագոյն պատճառաք վիճից անտի են, զի կէսք խաբեալք յօրինակաց ինչ՝ հանրագոյն քան զիրսն դատին, և այլք անձկագոյն՝ 'ի հակառակաց նոցին օրինակաց պատրեալք. նմին իրի նոքա ուսանին մի 'ի մանանկանաց յառաջ ածել վճիռ հանրական՝, իսկ սոքա մի առ սխալանաց ինչ եղծանել զկանոն։

Հարցուածոց և պատասխանւոց պայմանաւ առնին երբեմն խնդիրք[2]. և վասն զի 'ի փարատումն երկբայութեանց և 'ի հրահանգս դեռակիրթ բանին այնոքիկ սահմանեալ են, պարտ է լուծմանն նոցա ոչ կարի յայտնի և ոչ յոյժ դժուարին գոլ[3]։

Խնամով զգուշալի է չհաստատել առաջարկութիւս անհաւանելիս՝ որ վաղ յանտեղութիւնս զառաջանին՝. և մի խնդիրս առնել զիրաց, զորս վտանգ է արկանել յերկբայս. որպէս զպարտոն զից և զսէր ծնողաց[4]։

Եւ թէպէտ կասկածելի է, զի միտք սովորեալք 'ի խիստ ճշդութեամբ՝ ախորժեսցեն միշտ ընդ այն, և զհակառակաբանութեանն եւս յաւելցեն 'ի նոյն զախորժակս, այլ և ոչ ընդ այն երկբայե-

1 Արիստոտ. յդ. ճարտ. 11. հտ. 1. էջ 187։
գիրք Ա. գլ. 1. հտ. 2. էջ 317։
2 Նոյն յդ. սերճախօս. 9. հտ. 1. էջ 275։
գիրք Ը. գլ. 1. հտ. 1. էջ 268։
3 Նոյն անդ. գիրք Ա. գլ. 11. հտ. 1. էջ 187։
4 Նոյն անդ. գիրք Ը. գլ.
5 Նոյն անդ. գիրք Ա. գլ.

լն է զի կարևոր պիտանութեամբ իւիք գերագոյնք քան զայլս գտանին։ Օն 'ի վարժս մտացուութեանց յարմարագոյնք են 'ի խնդիրս առնել, և 'ի կենաց կցորդութեան 'ի նշաւակել զվրիպակս խօսից։

ԳԼՈՒԽ ԾԸ.

Դարձեալ 'ի նոյն մատենագրութեան, յաղագս Հարատարխօսութեան։

ԱՅԻ ՑԱՒԵԼԵԱԼ Լուսղիդեայ 'ի բանս իւր, ասէ. Մինչ գեռ տրամաբանութիւնն շինուած ամբակառոյց կազմէր, ամբառնայր առնմին և հռետորականն ընտիր ևս և հոյակապ, թէպէտ և ոչ որպէս զմիւսն հաստատիմն։

Լու ես ասեմ. Բազմինն կարևոր արդեօք իցէ, այլ առ ինչ երկրորդն պիտանի. ոչ ապաքէն Հարատարխօսութիւն ի՞նչեր 'ի սկզբանէ յաղագս Լուսղայ, և 'ի ժամանակս դիւցազանց ընդ զօրութեան բազկի անցանէր 'ի գուպար։ Զիցէ՞ն բնաւ ամենայն գեղեցկութիւնք 'ի գիրսն Հոմերի, զոր և Հարատասանից համարելի է հայր որպէս քերթողաց, ոչ նոյնք և 'ի գիրս հանՀարեղ մարդկան զնորին գՀետ եկելոց գտանիցին։ Լու ուր այսչափ բազմութիւն օրինակաց առաջի կան, առ ինչ այդքան պատուէրքդ հռետորականք իցեն

։ Կիկեր. յղ. քաջ Հարտ. գլ. 10. հա. 1. էջ 344։

պիտանի։ Յակղեղէս ասէ. Յայլ պարտ էր ընտրել ընդ օրինակսդ, և այս հռետորականին է գործ։ Պսեմ. Մինթէ Պիսիտարատ և Սոդոն և այլք 'ի Ճարտասանից, որք 'ի համախուսմբ ժողովս ազգին կամ յատեանս դատաւորաց բնաւորապէսն Ճարտարախօսէին՝ սիսալէին յընտրութեանն։ Յս ընդէր թոյլ փոխանակել զարուեստ ընդ հանՃարոյ բանին։

Արկնեալ անդրէն Յակղեղեայ ասէ. Պատուէրքն յաւելան, զի մի լեցի հանՃարոյն բացայայտալ. այլ 'ի չափուն ստիպեցի ամփոփել զգօրութիւնս իւր։ Դու զիմարդ երկբայիս ընդ պիտանութիւնս հռետորականին, որ գիտեաղ զի Արիստոտել հակառակ իսկ արուեստին գոլով[1] զպիտանութիւն նորա ոչ ժխտէ[2], դու՝ որ Դեմոսթենեայ ականջալուր լեալ ես Ճառիցն։ Պատասխանեալ ասեմ. Դեմոսթենէս և առանց վարժապետացն իւրոց հրահանգաց կարող էր ամենայն ուրեք իշխել սրտից. և Այսքինէս առանց նպաստից վարժապետացն գուցէ 'ի գեղ ատացուածոցն և եթէ չլայնողէր։ Յակղեղէս ասէ. Այս ուրեմն վկայես և դու, զի արուեստ 'ի գեղեցկագոյն ածէ կերպարանս զհանՃար. և ես հանգոյն քումդ անկեղծութեան խոստովանիմ՝, զի հռետորականին արուեստի գրեթէ յայն բովանդակի պիտանութիւն։

[1] Կիկեր. յղ. Ճարտ. գիրք Բ. գլ. 38. հա. 1. էջ 229։

[2] Արիստոտ. յղ. Ճարտ. գիրք Ա. գլ. 1. հա. 2. էջ. 14։

Յայնժամ մերձեցեալ 'ի տեսարայն, ասէ ցիս. Հաւասիկ մատենագիրքն տուիչք օրինաց Աստարխասութեան, և որ զայնոցիկ թողին մեզ օրինակս։ Գրեթէ ամենեքին սոքա յերկուս յայսոսիկ դարս կացին. յառաջնումն Կորաքս սիրակուսեցի, Ցիսիաս, Թրասիմաքոս, Պրոտագորաս, Պրոդիկոս, Գորգիաս, Պօղոս, Լիկիմնիոս, Աղկիդամաս, Թփոդոր, Լեւենս, Կալիպպոս, այլովքն հանդերձ. յերկրորդումն արժանիք համբաւոյն Լիսիաս, Ինտիփոն, Անդոկիդէս, Իսեոս, Կալլիստրատ, Խոկրատ. և որ արդ իսկ սկսանին պայծառանալ, Դեմոսթենէս, Աքինէս, Խպերիդէս, Իկուրգոս, այլովքն հանդերձ։

Ասեմ դարձեալ. Զ Աստարխասուսաց ընթերցեալ է իմ զգիրս, այլ Զհռետորացն ոչ եւ։ Աշխատութիւն յանձն առեալ յառաջ քան զայս, ուսուցեր ինձ զմասանց ինչ բանասիրութեան զգաղգացումն և զարդի պայման, մի դանդաղիր զնոյն առնել ընդ իս բարութիւն և յաղագս հռետորականին մակացութեան։

Ասկղեդէս ասէ. Յառաջադիմութիւն ստոյգ գիտութեանց գիւրաւ Ճանաչի. զի ընդ մի շաւիղ գիմելով նոցա 'ի նպատակն, մարթ է յանկարկեալն եւեթ տեսանել ուստի մեկնեալ և ուր հասանեն։ Այլ երևակայութեան արուեստից զարգացումն ոչ այսպիսի. զի ախորժակք դատաւորք նոցին են կամահաճոյք, առաջարկութիւք

նոցա բաղում այն է զի երկրայականք [1], և սա-
պարէզն ընդ որ ընթանան՝ 'ի բազում հեռս
բաժանեալ կիցս առ միմեանս, և անհնարին է և
կամ գէթ դժուարին յոյժ զիտել հաւատեաւ
զչափ զօրութեանն նոցա և զյառաջադիմութեան։
Օ՛ի որպէս մարթ իցէ հետազօտել զառաջին
քայլս աջողութեան մնաց, և քանն 'ի ձեռին
զհետ շրջել հանդարոյ՝ 'ի հատանել անցանել
նորա ընդ անհուն ասպարէզն. և երբ զբակ
շուրջանակի նուազ նշուլիցն որոշել 'ի նմանէ, և
սահմանել զաղօտ գեղեցկութիւնն՝ որ 'ի քնարէն
անհետանան, և ցուցանել զշաբ վսեմ գեղեց-
կութեանն՝ որ 'ի սեռս իւրաքանչիւր յարդարէ
զկատարելութիւն [2]։ Ի՛հաւասիկ եմ, զի ինդրե-
ցեր յինէն, տալ քեզ հմտութիւնս պիտանիս 'ի
վէպս հաւատոցականին. այլ 'ի ձառս, որոց վայել-
չութիւն զարդուց կարի յոյժ 'ի ձահ գայ, մի
այլ ինչ ակն ունիցիս յինէն ընելոյ բայց արդիւնս
իրաց սակաւս և տեղեկութիւնս սովորականս։

Ա՛ստենագիրքս մեր ընդ դարս բազումս գրեին
'ի բարբառ բերթողական, զի արձակն բան թուէր
նոցա ընդհանրական յոյժ և ազքատ՝ անբաւական
'ի ընալ զպէտս մնաց կամ մնասանդ երևա-
կայութիւն. քանզի առաւելագոյն յայնժամ այսմ
զօրութիւն մնաց խնամտանէին։ Խմոստասէրն Փի-
լեհիդէս սիրոսեցի, և Կադմոս վիպագիր միլետա-

[1] Աբիստոտ. յդ. Ճարտ. [2] Պիկեր. յդ. Ճարտ. գլ. գիրք Ա. գլ. 1. հա. 2. էջ 514։ [11] հա. 1. էջ 428։

ցի, ոչքա նախ իբր երկերիւրո

զեն առ 'ի կերպարանելոյ արձակ բանին և առ 'ի գիւտս օրինաց Հարտասանութեան։

Ի Միկիլիա երախայրիք արուեստիս ընծայեցան[1]. զի ամբք իբր հարիւրամբք զինի վախճանելոյ Կադմեայ, Որաքս ոմն սիրակուսացի[2] աբար իւր աշակերտս, և յօրինեաց յաղագս հռետորականին Հաւս, որ և արդ մեծարին[3]. Թէպէտ և զՀարտարութիւն արուեստին կացուցանէ նա 'ի խաբուսիկ հաշիւ հաւանականաց ինչ իրաց։ Օրինակ իմն, այսպէս յառաջ ածէ նազբանան. Կասկած մեծ լեալ զումեքէ հարկանելոյ զայլ ոք, ածի յատեան. տկարագոյն է նա կամ զօրաւորագոյն քան զդատախազն. եթէ տկարագոյն, զինարդ մարթի իցէ հանդրեալ զնա մեղապարտ. իսկ եթէ զօրաւոր, զինարդ մարթէր նմա դատապարտեալ 'ի նմանէ[4]։ Օ՞ստն և զՀանդգոյն սմին Հնարս Տիսիաս աշակերտ նորա Հոիագոյնս աւանդեաց 'ի գիրս որ դեռ ևս կան[5], և նոյնին իսկ վարեցաւ Հնարիւք առ 'ի զրկել զվարժապետ իւր 'ի վարձուց՝ զոր պարտէրն նմա[6]։

Ա.յսպիսի Հնարք Հարտարմանութեան վաղ իսկ

1 Դիմեաց. փաղեր. յղ. պերՀանոս. գլ. 12։ Սարաք. գիրք Ա. էջ 18։

2 Արիստոտ. առ Կիկերոնի. յղ. քաջ Հարտ. գլ. 12. Հա. 1. էջ 345։ Կիկեր. յղ. Հարտ. գիրք Ա. գլ. 20. էջ 150։ Կուինտիլ. գիրք Գ. գլ. 1. էջ 141։

3 Արիստոտ. Հարտ. առ Ազեքս. գլ. 1. Հա. 2. էջ 610։

4 Նոյն յղ. Հարտ. գիրք Բ. գլ. 24. Հա. 2. էջ 381։

5 Պլատ. 'ի Փեդր. Հա. 3. էջ 273։

6 Սեքստ. Եմպիրիկ. ընդդէմ Հարտ. գիրք Բ. էջ 307։

մուծեալ էին 'ի տրամաբանութիւն, որոյ յայնժամ 'ի մի գիրս հաւաքէին օրէնք. և յարուեստէն խորհելոյ անցին անխափան յարուեստ խօսելոյ, որով և 'ի սմա 'ի վերջ երևեցան ախորժակք իմաստակութեան և ոգի հակասութեան՝ որ իշխէին 'ի զառանցանս տրամաբանութեան։

Պրոտագոր աշակերտ Դեմոկրիտեայ, մինչ էրն 'ի Ամիկլիա, եղև ականատես փառացն որով պայծառանայր Կորաքս։ Այս մինչև ցայնժամ խորագնին հետազօտութեամբք բնութեան էիցս անուանի լեալ, յաւել յետ այնորիկ 'ի համբաւն մատենիւք՝ յորս գքերականութենէ և զայլ և այլ մասանց Ճարտարիւսութեանաւանդ էր Ճառս։ 'Նմա ընծային պարծանք 'ի մի վայր ժողովելոյ զՀանուրց Ճառից յարմարական բանս՝ որ հասարակ ԲԵՂԷՆ կոչին, [1] պիտանիք Ճարտասանին 'ի յաՃախութիւն փաստից [2] և 'ի դիւրութիւն Ճառելոյ զամենայն ազգի ազգի իրաց։

Տեղիքս այսոքիկ բազմապատիկք 'ի սակաւ ինչ գլուխս ամփոփին։ Զոր օրինակ քննելով զգործ ինչ ըստ պատՃառացն, ըստ արգասեաց, ըստ հանգամանաց, ըստ անՃանց, և այլն, 'ի համեմատութեանց անտի յառաջ ածին այլ և այլ կարգք առածից և հակասութեանց հանդերձ ապացու-

[1] Կիկերո. յղ. քաջ Ճարտ. գլ. 12. հա. 1. էջ 345։ Կուինտիլ. գիրք Գ. գլ. 1. էջ 142։

[2] Արիստոտ. յղ. Ճարտ. գիրք Ա. գլ. 2. հա. 2. էջ 518. գլ. 6, 7։ Կիկերո. յղ. պերՃախոս. հա. 1. էջ 483։

ցիւքն, որպէս բացատրեալ գտանին գրեթէ առ հասարակ հարցուածոյ և պատասխանւոյ պայմանաւ [1] 'ի գիրս Պրոտագորայ, և այլոց հռետորաց՝ որ զերկոսն նորա շարայարեցին։

Երինադրեալ նախ զյօրինուած յառաջաբանին և զկարգ պատմութեանն և զդատաւորացն յորդորակս [2], տարածեցաւ ապա իշխանութիւն Ճարտասանութեան՝ որ մինչև ցայնժամ ամիոփէրն 'ի սահման հրապարակին և ատենի։ Այլ ոսոխ կացեալ բանաստեղծութեան՝ ներբողէր 'ի սկզբան զդիս, զդիւցազունս, և զքաղաքացիս անկեալս 'ի պատերազմի։ Այլ Խոկրատ յօրինեաց ներբողս զերևելեաց ոմանց [3]. և տակաւ արարան ներբողք անխտիր զամենայն մարդկանէ զպիտանեաց և զանպիտանեաց աշխարհին։ Յաձախեցին ամենայն ուրեք մարդահաձութիւնք, և սահմանեցաւ գովութեանց և պարսաւանաց չդնել պայման [4]։

Այլ ինչ աւելի քան զդար մի զանազան փորձք հանդիսիցն տուեալ, 'ի նմին ժամանակի և Ճիգն մեծ գործէր 'ի կերպարանել զոՃ Ճառից։ Պահելով 'ի նմա սկզբնական Ճոխութեանցն՝ որ 'ի բանաստեղծութենէ առեալ, յաւելուին օր ըստ օրէ նորանոր էրանգովք և ներդաշնակու-

1 Արիստոտ. յղ. խնամատակ. գիրք Բ. հտ. 1. էջ 314։
2 Նոյն յղ. Ճարտ. գիրք Ա. գլ. 1. հտ. 2. էջ 513։
3 Խոկր. յԵւագ. հտ. 2. էջ 73։
4 Գորգ. առ Կիկեր. յղ. քաջ Ճարտ. գլ. 12. հտ. 1. էջ 346։

թեամբ պերճացեալք։ Օնիլեթս պատուականս, որք իբրև զբարիս շեղջակուտեալս 'ի կառուցումն շինուածոյ՝ անկեալ կային յառաջագոյն խառն 'ի խուռն զմիմեանսք[1], ազդումն բնութեան և զգայութիւն խնամ կալան 'ի զետեղել և 'ի յանդիմանս առնել զնոսա 'ի կարգ զեղեցիկ։ Պոխանակ հատուկիրը ասացուածոյն, որք անզոդ և անսեցուկ՝ զրեթէ ընդ բառս իւրաքանչիւր գթեալ անկանէին, կուտակութիւնք ընտիր բացատրութեանց յեռեալ առ միմեանս՝ կազմէին 'ի մի բոլոր, ունելով մասանցն զիրեարս անձիգն։ Լսելիք ամենապատիւք հիացեալ կային 'ի լուր ներդաշնակութեան արձակ բանին, և միտք ամենաձիգրիտք 'ի նկատել զմեծամայելուչ պարզումն իմաստիցն միահետ։

Օ չքնաղ ձևն զոր հնարաւորեցին հռետորք արդոյք՝ Պորգիաս, Լ'ցկիդամաս և Թվասիմաքոս, 'ի կատարումն ած Լսոկրատ աշակերտ առաջնոյն[2]։ Լ'յնուհետև դարձուածք բանից 'ի հաւասար տունս տրոհեցան. և անդամք իւրաքանչիւր կապակցեալք էին և հակադրեալք միմեանց՝ շաբամանութեամբ բառից և իմաստից. և բառք իսկ յաձնսխ փոխադրութեամբն՝ թուէին զեռալ 'ի սահմանն եղեալ նոցա, բայց միայն անդստին 'ի մեջ ասացուածոյն զերն տային իմանալ ուշիմ

1 Դեմեթր. փաղեր. յղ. կեր. յղ. Ճարտ. գլ. 52. հա. պերճախօս. գլ. 13։ 1. էջ 464։

2 Նոյն անդ, գլ. 12։ Կիր.

մնաց՝։ Որոց յոյժ էր բերկրալի արուեստս այս Հարտարութեամբ՝ի կիր արկեալ, այլ՝ի յաՀախեն՝ աշխատ առնէր զնոսա. մինչև՝ի ժողովս մեր դէպք լինէին նախ քան զկատարել Հարտարախօսին զդարձուած բանիցն Հոխաբանելով՝ փութալ ըստ ոգեցն աւարտել զայն[1]։

Ի յաՀախել և ևս Հգանց, յարդարեցան Հառք ներդաշնակաւորք՝ քաղցրընթացք՝ ախորժալուրք, պատկանաւորք ամենայն իմաստից, և ընտանականք ամենայն կրից. և զանազանեցան երբեակ լեզուք առ Հոյնս քերթողականն՝ աղնուական և մեծաշուք, խօսակցութեանն՝ պարզ և ցաՀուն, և արձակ բարձրագոյն Հաւոցն՝ առաւել կամ նուազ կցորդեալ ընդ միումն կամ ընդ միսում՝ ըստ պատշաՀի իրացն՝ զորոց Հառէ։

Օ անազանեցան և երկեակ ազգք Հարտասանից։ Նկեսք պարապէին յառաջարկութիւն օգտի ժողովրդեան՝ի ժողովս, ոմն Պերիկղէս, կամ՝ի ջատագովութիւն ամբաստանելոց յատենի, որպէս Նատիփան և Լուսիաս, և կամ՝ի գեղերեսել զիմաստասիրութիւն քերթողական ձևովք, որպէս Դեմոկրիտոս և Պղատոն[3]։ Իսկ այլք առ զօշաքաղութեան ևեթ կամ առ մտաքան պերՀանաց պարապելով՝ի Հարտարիսօսութիւն, Հրապարակախօս լինէին զկարգաց տեսչութեան

1 Դեմոսթ. փագէր. յՂ. պերՀախօս. գլ. 11։
2 Նոյն անդ. գլ. 15։
3 Պիկեր. յԺ. Հարտ. գլ. 20. Հտ. 1. էջ 436։

կամ զօրինաց կամ զբարուց կամ զգիտութեանց և զարուեստից՝ յօրինելով ձառս շքեղս, յորս ձևք բանիցն մթացուցանէին զիմաստսն։

Խազմագոյնք 'ի յեռանոց աստի, իմաստակք անուանակոչեալք, սփռեալ ընդ Աղլադա՝ շրջէին քաղաքաց 'ի քաղաքս, մեծարեալք ամենայն ուրեք, և պար առեալ յամբոխէ աշակերտաց, որք ցանկութեամբ ամբառնալոյ 'ի բարձրագոյն աւագութիւնս 'ի ձեռն ձարտարիսօսութեան՝ հաստուցանէին վարձս բազումս ընդ վարժիցն, և զհետ գնալով նոցա՝ պաշարապինդք կազմէին հանրական տեղեկութիւնք կամ հասարակ տեղեաքն, զորոց ասացի։

Նոքա նոցա որ հաւաքեալ կան աստ առ իս, այնու չափակցութեամբ և ընտրութեամբ բառից յօրինեալ էն և առաւելեալք գեղով մինչև պարտասել ընթեռնլեաց հանգոյն զրողացն։ Ա՛ռ ուրեք զի պատրեն, այլ ոչ երբեք շարժեն զսիրտ. զի նորանշան ասացուածք զձնմարտութեան ունին 'ի նոսա զտեղի, և ցնորք երևակայութեան զհոգւոյ։

Հռետորականն արուեստ համարեցաւ առ նոսա մերթ գործի համոզելոյ[1], յորոյ 'ի շարժումն առաւելագոյն պէտք էն մնաց քան զգայութիւն. և մերթ իբր հրահանգ ինքն ուղղական, առ 'ի կուտակել զբազմութիւն բառից, 'ի ջոկել զնո-

1 Պղատ. 'ի Գորգ. հա. 1. էջ 459։

սա և 'ի տարածանել, պատսպարել զնոսա իրեւոք և յանդուգն 'ի վերայ ոսոխին խաղացուցանել։ Այն նոյ և դաւք և գունդք պահեստի. այլ գլեա-ւորագոյն զօրութիւն նոցա է 'ի շկահիւն և 'ի փայլիւն զինուց[1]։

Յաձախագոյնք են ցոլմունք 'ի ներքոյոց Հեբակղեայ և դիւցազանց, զորոց առաւելապէս յօրինեն զուսասանութիւնս. և այնքան զսկատեալք 'ի զուսասանել, մինչև զիրս անկենդանս առնուլ նոցա 'ի զուսեստ[2]. զի ընթերցայ ես գիրս մանկագրեալ Ալեքսանդրեան աղի, և ամենայն զանձք ցնորից մնաց սպառեալ էին 'ի պանծացուցանել զըսպասաւորութիւնս՝ զոր մատուցանէ մարդկան աղ[3]։

Յոլովագոյնք 'ի ձառից սատի ածեն կարձմտութիւն ընթերցանելեաց, մինչև զրգռել զնոսա 'ի ցասումն, հրապուրանօքն և ջանիւք ցուցանելոյ իբր թէ պարտ է ձարտասանին յաղթող կացուցանել առ հասարակ զոձիր և զանմեղութիւն, զտուութիւն և զձշմարտութիւն[4]։ Այս բնաւ իսկ տաղտկալի են 'ի հաստատելն զաղացոյցս իւրեանց 'ի հակաձառական նրբութիւս։ Հանձարեղագոյնք իսկ առ 'ի հանդէս առնել զօրութեան մնաց իւրեանց կամակար բերեին 'ի ստա-

1 Կիկերո. յդ. Ճարտ. գիրք Բ. գլ. 22. հա. 1. էջ 214։
2 Աբիստոտ. յդ. Ճարտ. գիրք Ա. գլ. 9. հա. 2. էջ 530։
3 Պլատ. 'ի Թրաախ՝. հա. 3. էջ 177։ Խոսք. Ներբ. 'ի Հելինէ, հա. 2. էջ 119։
4 Պլատ. 'ի Փեդր. հա. 3. էջ 261։

պատիր Ճառս յայսոսիկ։ Քանզի սպասս որդի Պե-
րիկղեայ բերկրեր 'ի պատմել, զի 'ի հանդիսի
ուրեք խաղուց յանկարծուստ տեգ արձակեալ
սպան զմի յերիվարաց, և հայր իւր և Պրոտա-
գորաս զօր մի ողջոյն հակաճառեցին 'ի հետազօ-
տել՝ եթէ տէգն արդեօք թէ տեգընկէցն կամ
թէ հանդիսադիրք խաղուցն եղեն պատճառք սպա-
նութեանն[1]։

Յաւելից քեզ օրինակ մի, և 'ի միտ առցես
թէ քանի հիացումն երբեմն գործէ Ճամարտա-
կութիւն։ Յաւուրս պեղոպոնեսական պատերազմին
եկն 'ի քաղաք այսր սիկիլիացի ոմն, որ հրաշալի
զարմացմամբ ելից զԱլլադա[2]. և էր նա Գոր-
գիաս, զոր քաղաքացեաց նորա լեւոնտացւոց ա-
ռաքեալ էր խնդրել 'ի մէնջ օգնութիւն[3]։ Լկաց
նա 'ի բեմի, և արար առեղնաբանութիւն՝ յե-
ռեալ 'ի նմա զձեւս յանդգնագոյնս և զՃոռոմա-
գոյն բացատրութիւնս. զնոսի զարդն բաշ-
խեալ 'ի տունս, զկէս չափաւ, զայլս ծայրայան-
գոք զանազանեալ[4]։ Ոչք յարտասանէին 'ի լուր
ամբոխին այնպիսի սփռէին Ճաճանչ, զի շլացեալ
նոքօք ամենացւոց՝[5] ետուն օգնութիւն լեւոն-

1 Պլուտ. 'ի Պերիկղ. հտ. 1. էջ 172։
2 Ցիշատ. բանաս. կաճառ. հտ. 15. էջ 168։
3 Պղատ. յերեցն Խպպ. հտ. 3. էջ 282։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 106։
4 Կիկերո. Ճարտ. գլ. 43. հտ. 1. էջ 461։ Դիոն. ա-ղիկ. Թուղթ առ Ամմ. գլ. 2. հտ. 6. էջ 792. գլ. 17. էջ 808։
5 Դիոն. ասիկ. յղ. Լիւս. հտ. 5. էջ 458։

տացւոց, և զՀարտարախօսն կալեալ առ իւրեանս՝ Ճեպէին առ ոտս նորա 'ի վարժս հաւատարակա-նին [1]։ Որ և յոյժ զրուատեցաւ 'ի զուարճանել զքաղաքացիս անկեալս 'ի վերայ հայրենեաց [2], և յորժամ երևեալ յատ էին՝ խնդրեաց տալ ա-ռաջարկութիւն Ճառից [3], և յարտասանել զար-ձեալ 'ի հանդէս խաղուց Ճաաս յորդորական՝ 'ի միաբանութիւն ամենայն ազգաց Լեղադայ ընդ-դէմ բարբարոսաց [4]։

Դարձեալ և այլ երբեմն 'ի հանախմբել Յու-նաց 'ի պիւթիական խաղսն, սահմանեցին նմա անդրի՝ որ 'ի տեսիլ նորա կանգնեցաւ 'ի մեհ-նին Պպոլոնի [5]։ Լու 'ի թեսաղիա գերեալ ած և յաջողութեամբ պակեցաւ հանձար նորա. զի բնակեաց աշխարհին չև և այլ ինչ պարծանք էին, բայց միայն նուաձել զերիվար և մեծանալ վանճաւորութեամբ. այլ ընդ երևելի Պոլիա-սայ 'ի միջի նոցա՝ զհետ եղեն մտաւորական քա-ջութեանցն պարծանաց [6]։

1 Յիշատ. բանաս. կանառ. հտ. 15. էջ 169։

2 Փիլոսոփ. յլ. վարուց ի. մատուակ. գիրք Ա. էջ 493։

3 Պղատ. 'ի Գորգ. հտ. 1. էջ 447։ Սիկերո. յլ. կատաբ. գիրք Բ. գլ. 1. հտ. 2. էջ 101։ Նոյն յլ. Ճարտ. գիրք Ա. գլ. 22. հտ. 1. էջ 153։

4 Աբիստոտ. յլ. Ճարտ. գիրք Գ. գլ. 14. հտ. 2. էջ 599։ Պաւսան. գիրք Զ. էջ 495։ Փիլոսոփ. անդ։

5 Սիկերո. յլ. Ճարտ. գիրք Գ. գլ. 32. հտ. 1. էջ 310։ Վաղ. Մաքս. գիրք Ը. գլ. 15։ Պլին. գիրք ԼԳ. գլ. 4. էջ 619։ Փիլոսոփ. յլ. վարուց իմաստասէր. էջ 493։ Հերմիպպոս առ Աթենս. գիրք ԺԱ. գլ. 15. էջ 505։

6 Պղատ. 'ի Սիմն. հտ. 2. էջ 70։ Փիլոսոփ. Թուղթ առ Յաւլ. էջ 919։

Ոստ մեծի համբաւոյն յաջողեցին Պորգիասայ դէպք [1]. այլ յեղափոխութիւնն զոր արար նա 'ի միտս, էր արքեցութիւն ինն վաղանցիկ։ Ո՞առք նոր անհամք, ձգտին 'ի բարձունս ձգամբք՝ որ 'ի վայր մղեալ արկանէն զնոսա, և պերճութիւնք բացատրութեանց նորա նշաւակէն յաձախ զամբութիւն մնացն [2]։ Սակայն ընդարձակեաց նա զսահմանս արուեստին, և թերութիւնք իսկ նորա պիտանի եղեն 'ի վարժս։

Այ եցոյց ինձ Այեկղիդէս զատենաբանութիւս բազումն Պորգիասայ, և ձառս յոլովս յօրինեալս յաշակերտաց նորա 'ի Պօղայ, 'ի Լիկիմնեայ, Ալղկիդամայ և յայլոց, և ասէ ցիս. Զան զչքեղ հանդերձանս զոր սոքա 'ի գիրս իւրեանց տարածանէն, մեծարոյ է ինձ ընտիր և պարզ ձարտարիսօսութիւնն Պրոդիկեայ կէացւոյ պահեալ [3]։ Կախարդէ սա զարդարակորով միտս, ընտրէ զձշգրտագոյնս 'ի բառից, և խելամտէ զանազանութեանց նրբից 'ի կարծեցեալ փաղանութեանս [4]։

Իսկ ես ասեմ. Ո՞չմարտիւ այդ այդպէս է, այլ չթողուն նա և ոչ մի 'ի բառից՝ զոր ոչ ստուգաբանէ ձգձիմ և ծանրատաղտուկ ձշգութեամբ։ Յիշեցէս զոր երբեմն ասէրն ցՍոկրատ և ցՊրո-

1 Պղատ. յերեցն Խպպ. հա. 3. էջ 282։
2 Յիշատ. բանատ. կատաբ. հա. 19. էջ 210։
3 Նոյն անդ, հա. 21. էջ 168։
4 Պղատ. 'ի Ցեն. հա. 2. էջ 75։ Նոյն 'ի Լաք. հա. 2. էջ 197։

տագոր, կամելով համոզել 'ի մէջ նոցա. Պարտ է ձեզ, ասէ, վիճաբանել ընդ միմեանս և ոչ բանակռուել. զի վիճաբանէմ[1] ես բարեկամն, և բանակռուիմ ընդ թշնամիս։ Օ՛ի այսու ոչ ծանուցանէ՞ 'ի մէջն, և ոչ գովէ՞. զի ոչ ծանուցանէ՞ 'ի սրտէ յառաջ գան, իսկ գովելն բազում այն է՝ զի 'ի շրթանց ելեալ։ Լանգի այս հաճէ՞ լցցի մեզ և ոչ խորհիցէ՞. զի հաճէ՞ միտք 'ի հասանելն իմիք, և խորհիցեն զգայութիւնք 'ի վայելելն ինչ։

Լուկղիդէս ասէ. Լթէ Պրոդիկեայ այսպիսի էին ճառք, ո՞ երբէք հանդուրժէր 'ի լուր և լընթերցումն նոցա։ Լ՞նոյ ընդ գիրս նորին[2], և հիացցիս ընդ խնստութիւն նորա և ընդ տիպս կերպարանաց բանիցն։ Պղատոն զպատասխանիդ զայդ գնէ 'ի բերան նորա, զի և Պրոտագորայ և Պորգիասայ և այլոց երևելի հռետորաց ժամանակին ճշտակար լինէր նա ըստ հաճոյս իւր[3], մուծանելով գնոսա 'ի տրամախօսութիւնս իւր ընդ վարդապետին իւրում՝ 'ի պայքար, և 'ի մտացածին խօսակցութիւնս՝ թատերս զաւեշտականս գործելով։

Լ՞սպա ուրեմն և ո՞չ զՍոկրատայ բանսն հաւատարմութեամբ 'ի ներքս ածէ Պղատոն։ — Լ՞է և՝ զի ինձ այնպէս թուի, թէ յոլովագոյնք 'ի

1 Պղատ. 'ի Պրոտագ. հտ. 1. էջ 337։ Ցիշատ. բանաս. կաճառ. հտ. 21. էջ 169։

2 Քսենոփ. յիշատ. գիրք Բ. էջ 737։

3 Պղատ. 'ի Պրոտագ. 'ի Գորգ. Յիպպ. և այլն։

ձառից անտի և ոչ խոսեցեալ երբեք ուրեք ի նոցն[1]։ — Այլ իբր ոչ ոք զբարբանացն բողոքէր։ — Վեդան յընթեռնուլ զզրուցատրութիւնն որ յանուն իւր մակագրեալ, ժխտեաց զի ոչ իւր էին բանք՝ զորս Պղատոն տայ նմա բարբառել[2]. զնոյն և Պորփիրաս արար յընթեռնուլ զիւրն, և յաւել՝ թէ մանկանն մատենագրի էր հանձար երգիծական, և հատանէր նմա ընդ հուպ յաջորդել Քրիստոսի[3]։ — Այլ և ոչ կենդանագիրքն որ 'ի նմա գէթ աղօտ ինչ զնախատապացն բերիցեն զնմանութիւն։ — Որպէս ոչ է մարթ 'ի կատակերգութեանցն Արիստոփանեայ զՊերիկղեայ և զՍոկրատայ զպատշաճ բերել կարծիս, այսպէս և ոչ 'ի տրամախօսութեանցն Պղատոնի զերեցունց իմաստակացն՝ զորոց ասացի, 'ի միտ առնուլ զնկարագիր։

Յիրաւի էր նմա արդեօք յառնել ընդդէմ վարդապետութեանց նոցա. այլ չէր օրէն ցուցանել զնոսա անմիտս և անխմաստս, անբաւական 'ի տրամաբանել և բազմագայթս 'ի թանձրագոյն պատրանս, և զերկունս մտաց նոցա անգոտնելիս։ Այթէ չէին նոցա աջողութիւնք հանձարոյ, ոչ այնչափ ՀԱՍԱԿԱՐՔ լինէին. իբր ոչ էթէ նախանձեցաւ նա ընդ համբաւ նոցա, որպէս թերևս գայցէ ժամանակ՝ զի կասկածեսցեն ոմանք

1 Պիկեր. յղ. Ճարտ. գիրք 15. էջ 505։
Գ. գլ. 32. հտ. 1. էջ 310։
2 Ասթէն. գիրք ԺԱ. գլ. գիրք ԺԱ. գլ. 15. էջ 505։
3 Հերմիպպ. առ Ասթէն.

զնամնէ [1], այլ թուի թէ 'ի մանկութեան իւրում կարի ինն զակատեալ էր նա զՀետ ստայօդ կերգիծեաց և երգիծանաց [2]։

Այլ այս որպէս և է, այլ զերգիծմունք յաւուրս նորա մուծեալք 'ի Ճարտարախօսութիւն՝ արկին խտրոց ընդ խմաստասիրական և ընդ հռետորական մակացութիւնս, որք յառաջագոյն երկաքանչիւր նոցին անուամբ յորջորջեալ և 'ի նոյն պարապէին գործ. և խտրոցն այն կայ և մնայ 'ի միջի [3], զրկելով զնոսա 'ի նպաստից բազմաց՝ զոր մարթէր նոցա մատուցանել իւրեանց [4]։ Խմաստասիրութիւն յանդիմանէ, է զի և ստատէ Ճարտարախօսութեան, զի յարիշտակէ սա զիրաւունս նորա և յանդգնէն Ճոխանայ 'ի Ճառս կրօնից և քաղաքավարութեան՝ առանց խելամուտ գոլոյ այնոցիկ [5]։ Այլ 'ի դէպ է պատասխանել նմա, զի որովհետև ինքն բարձրագոյն իմաստիւքն և վՃռական բանիւք չկարէ սահմանել զվէՃս մեր, պարտ է նմա ներել ոսոխին՝ զի լեցի նմա թարգման, և զեղազարդեալ զնա ընտրագոյն մեզ գործեսցէ. զոր և արարին յառաջ քան զաւուրս զայսոսիկ Ճարտարախօսք. որոց 'ի կիր արկեալ զզարդացումն և զնպաստս երկաքանչիւրոցն՝ նուիրեցին զՀանՃար իւրեանց յօգուտ հասարակաց։

1 Դիոն. ապիկ. Թուղթք առ Պոմպ. հա. 6. էջ 756։
2 Տիմ. առ Ամէն. գիրք ԺԱ. գլ. 15. էջ 505։
3 Կիկերո. յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 16 և 19. հա. 1. էջ 294 և 296։
4 Նոյն Ճարտ. գլ. 3. էջ 422։
5 Նոյն յղ. Ճարտ. գիրք Ա. գլ. 13. էջ 143։

Ել ինչ Երկբայիմ 'ի գլուխ նոցա դասել զՊերիկղէս. զի սա վարժիւքն առ ոտս հռետորաց և իմաստասիրաց՝ ստացաւ զկարգն զայն և զպայծառութիւն, որք օժանդակութեամբ աջողութեան մտաց նորա ածին զՀարտարխօսութիւն հուպ 'ի ծայր կատարելութեան [1]։ Ապկիբիադ, Ալբիտիաս, Թերամենէս [2], և սորա զհետ շաւղաց նորա գնացին. և որք զհետն նոցա եկին, 'ի նմանութիւն նոցա կրթեալ՝ կէաք հաւասարեցին նոցա, և կէաք զանցին զնոքօք. և իշխեմ ասել, զի կիրթ ախորժակք ստոյգն Հարտարխօսութիւն սահմանեալ էն արդ յամենայն ազգի ազգի իրս։

Ել ինչ անծանօթ էն 'ի քէն մատենագիրք որք յաւուրս մեր պայծառացան. և քեզէն իսկ կարող ես դատել զնոցանէ։ Իսկ ես ասեմ. Զանազի զգայութիւն ևեթ է յիս դատաւոր, ցանկալի է ինձ գիտել՝ եթէ իցէ համանձայն հռետորական կանոնաց որ 'ի զգայութենէ ներգործեալն յիս ազդումն։ Լուկղիդէս ասէ. Կանոնքս այսոքիկ, արդասիք բազմամանակեայ փորձոյ, յերիւրեցան ըստ մատենից և ըստ աջողութեանց քաջաց քերթողաց և առաջնոց Հարտասանից [3]։

Հռետորականիս մակացութեան ընդարձակ է յոյժ իշխանութիւն. մանաւ 'ի համաշխարհական

1 Պղատ. 'ի Փեդր. հա. 3 էջ 269։ Կիկերո. յղ. քաջ Հարտ. գլ. 11 և 12. հա. 1. էջ 345։

2 Կիկերո. յղ. Հարտ. գիրք Ա. գլ. 22. էջ 214։ Նոյն յղ. քաջ Հարտ. գլ. 7. էջ 342։

3 Նոյն յղ. Հարտ. գիրք Ա. գլ. 32. էջ 161։

ժողովս՝ ուր զիրաց կարևորաց ազգին լինին խորհուրդք, յատեանս՝ ուր իւրաքանչիւրոց քննին դատաստանք, 'ի Հառս՝ ուր պարտ է զյոռութիւն և զառաքինութիւն որպէս էնն յանդիման առնել, և բնաւ իսկ ամենայն ուրեք՝ ուր ուսուցանել լինչ այլոց առաջի կայցէ[1]։ Վասն որոյ երրեակ ազգք Հարտասանութեան զանազանին, բաղխոհական, ատենական, և կացրդական[2]. զի է Հարտասանին գործ պանծալի՝ յորդորել կամ խափանել զՀիոս ժողովրդեան, ջատագով կալ անմեղին կամ դատախազել յանցաւորին, և գովել զառաքինութիւն կամ պարսաւել զյոռութիւն։ Այս երբ մարթի իցէ կատարել նմա զայսոսիկ, բայց Համոզելով։ Այս որպէս Համոզել։ Իմաստասէրքդ պատասխանեն՝ թէ խորագոյն մակացութեամբ, իսկ հռետորք՝ թէ 'ի ձեռն կանոնաց Հարտարիօսութեան[3]։

Այսր առաջնոցն՝ հռետորութիւն ոչ բարեյարմար կապակցութիւ յառաջաբանութիւ ընդ վէպսն և ընդ այլ մասունս Հառին կազմի[4], և ոչ քաջարուեստ ոճով բանիցն կամ առոգանութեամբ կամ շարժուածով, որովք պատրի ամբոխն զերծ. զի այսոքիկ զարդք են, է զի պիտանիք, և բա-

1 Պղատ. 'ի Փեդր. հա. 3. էջ 261։

2 Արիստոտ. յղ. Հարտ. գիրք Ա. գլ. 3. հա. 2. էջ 519։ Նոյն յղ. Հարտ. առ. Աղէքս. գլ. 2. էջ 610։

3 Պղատ. անդ, էջ 267։

4 Նոյն անդ, էջ 266։ Ա. Արիստոտ. յղ. Հարտ. գիրք Ա. գլ. 1. էջ 512։

5 Արիստոտ. անդ, գիրք Գ. գլ. 1. էջ 583։

զուտ այն է՝ զի մնասակարք։ Օ ինչ ապա իմաղրն ի Ճարտարախօսէն. յաւելուլ ի բնական կարգ Ճառիցն զգիտութիւն և զխելամտութիւն։

Այնմ բնութիւնն զքեզ ի զործ Ճարտարախօսութեան սահմանեալ, համբէր զի իմաստասիրութիւն անդր զքեզ հանդարտաբայլ ածցէ[1]։ Ցուցցէ նա քեզ, զի որովհետև անկ է հռետորականին նախ քան զՀամոզելն խելամուտ առնել՝ պարտ է նմա ի բանականէն առնուլ յարուեստէ զիւր զօրութիւն[2]. նմին իրի և ուսուցցէ ողջամիտ ունել իմաստս, և բացատրել զայնոսիկ քաջայայտ, հաստատ լինել ամենայն հաճեմատութեանց և հակադրութեանց իրաց, Ճանաչել և ծանուցանել այլոց զեռութիւն իրաց իւրաքանչիւր ինքնին գլխաւին[3]։ Այս հանապազորդեալ ի հրահանգս, ուսցիս ի նմանէ զամենայն՝ որ ինչ անկ է առն քաղաքավարի և անաչառ դատաւորի և քաջի քաղաքացւոյ[4]։ Այս վարժեսցիս առ ոտս նորա ի գիտութիւն զանազան կարգաց տեսչութեան և օրինաց, և ի միտ առցես զբերմունս ըղձից ազգաց իւրաքանչիւր, զընութիւն մարդկան, և զզրգիչ կրից նոցա[5]։

Այլ գիտութիւնս այս, բազմաչխատ Ճգանց արգասիք, դիւրաւ տեղի տայ ի հնչել հողմոյ

1 Կիկերո. Ճարտ. գլ. 4. էջ 423։
2 Արիստոտ. Ճարտ. գիրք Ա. գլ. 1. էջ 513։
3 Պլատ. ի Փեդր. հա. 3. էջ 277։
4 Արիստոտ. անդ. գլ. 4, 9, 10։
5 Պլատ. ի Գորգ. հա. 1. էջ 481։

խորշակի կարծեաց՝ եթէ ոչ զայն պատսպարեսցես, ոչ միայն վկայեալ լաւութեամբ քով և կատարեալ խոհականութեամբ՝ այլ և ջերմեռնեռանձու արդարութեան, և խոնարհ երկիւղածութեամբ 'ի դից՝ որոց առաջի մերկասպարանոց կան ամենայն խորհուրդք մեր և բանք[1]։

Օր այսպէս Ճառք քո բերան եղեալ Աշմարտութեան, լցին պարզք՝ աղղողականք՝ եռանդունք և մեծասաստք, զտիպս կերպարանացն բերելով։ Պայծառադոյնք պՀնեսցին նոքա առաքինութեամբք քոյովք, քան Ճաճանչիւք պերճախօսութեան[2]. և ամենայն հարուածք քո յաջողեսցին, զի գիտասցեն ամենեքին թէ յանենդ ձեռանէ ելանեն։ Այլ լցի քեզ այնուհետև ոչ ինչ այլ բացատրել 'ի բեմէ, բայց որ ստուգիւ օգտակարն է. ոչ ինչ այլ յատենի, բայց որ Աշմարտիւ արդարն է. և ոչ ինչ այլ 'ի Ճառս դամբանականս արանց երևելեաց և 'ի ներբողեանս բարուց, բայց որ արդարև պատշաՃն է[3]։

Խնամասիրացն զՀոգեորական արուեստն այս կարծիք են. մնայ արդ նկատել մեզ զկէտ նպատակին՝ յոր ուշ ունին Ճարտասանք, և զկանոնս սահմանեալս 'ի նմէ։ Այլ Աբիստոտելի բուռն հարեալ է 'ի ժողովել զայնոսիկ 'ի մատեան մի[4],

[1] Պղատ. 'ի Փեդր. հտ. 3. էջ 273։

[2] Արիստոտ. Ճարտ. գիրք Ա. գլ. 2. էջ 515.

[3] Պղատ. անդ, էջ 274։ Ա. Արիստոտ. անդ, էջ 519։

[4] Արիստոտ. անդ, հտ. 2. էջ 512։ Պիկեր. յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 35. հտ. 1. էջ 313։

յորում ոչ ինչ ընդհատ 'ի գերազանց ոմն բա-
նից առաջնոց մատենագրութեանցն իւրոց յօրի-
նեսցէ Խառս [1]։

Որք յառաջ քան զնա կացին, կէսք 'ի նոցանէ
ոչ այլ ինչ առանձինցին՝ բայց զՀանՀարեղ բա-
խումն մասանց Հառին՝ անտես արարեալ զՀաս-
տատութիւն նորա [2], որ 'ի կրօնին ցուցակու-
թեանցն. և կէսք պարապեցին 'ի հաւաքել և եթ
զմասնս հանրականս կամ զՀատարակ տեղիս [3].
այլք 'ի թողուլ օրէնս զոմն [4] կամ զյումանէ
կրից [5], և այլք դարձեալ 'ի յաւելուլ զՀնարս
ցուցանելոյ յաղթող Հնմարտին զՀաւանականն [6]։
Մինեցուն առ Հասարակ անփոյթ արարեալ էր
զկարևոր մասանց, զձևոյ շարժմանցն ասեմ և
զարտասանութենէ [7]։ Մինեցուն կէտ առաջի ե-
դեալ էր կրթել զդատասաց, առանց և ոչ մի ինչ
իրատ տալոյ հրապարակախօս Հարտասանին։

Զարմանք թուին ինձ, ասեմ, քանզի սորայս
օգտակարագոյն է զործ և ամենաւականագոյն և
զժուարին քան զմիսոցն [8]։ Լուկղիդէս ասէ. Խոր-
հեցան արդեօք, զի 'ի ժողովի՝ ուր ամենեցունցն
ինչքիր օգտի է՝ շատ իցէ Հարտարախօսին պար-

1 Կիկերո. յզ. Հարտ. գիրք Բ. գլ. 38. հտ. 1. էջ 229։
2 Արիստոտ. Հարտ. գիրք Ա. գլ. 1. հտ. 2. էջ 513։
3 Նոյն անդ, գլ. 2. էջ 518։
4 Նոյն անդ, գիրք Գ. գլ. 1. էջ 584։
5 Նոյն անդ, գիրք Ա. գլ. 2. էջ 515։
6 Նոյն անդ, գիրք Բ. գլ. 23. հտ. 2. էջ 577. գլ. 24. էջ 581։
7 Նոյն անդ, գիրք Գ. գլ. 1. էջ 584։
8 Նոյն անդ, գլ. 17. էջ 605։

զաբանել զկրան, և զօգտակարն առաջի առնել խորհուրդ. այլ առ 'ի զուտ շարժել զդատաւորս, որոց ոչ ինչ փոյթ է զօտարսուի իրացն որ ա-ծին յատեան նոցա, ամենայն հնարիւ հռետո-բական արուեստին պէտք են'։

Բ. Զի զկրա Աբիստոտելի ամենեցուն սոցա կարծիք յարգարեալ, յոլովք 'ի նոցանէ հերքեալ, և զրեթէ առ հասարակ պայծառ տեսութեամբք և կարեւոր զեկուցմամբք կցորդեալ բովանդակեա-ցին։ Բ. Զերդդ թուի ինձ այլ ևս ինչ ասել զայն-մանէ, զի լցցի քեզ 'ի ժամանակի ընթերցուլ զայն։

Բակ ես 'ի զուր թախանձէի զ Ակղեդէս. զի հաղիւ հարցուածոցն իմոց տայր պատասխանի։ Հարցի զնա, և ասեմ. Ա. Զի իցէն խմաստասիրացդ բանք ընդունելի առ Ճարտարախօսս։ Ակղե-դէս ասէ. Խոտորին յայնցանէ յաՃախ, և մանա-ւանդ 'ի նախամեծարն առնել զհանանականն բան զՃշմարիտ[1]։ Բ. Ասեմ. Օ ինչ կարեւորագոյն անկ է Ճարտարախօսի։ Ակղեդէս ասէ. Լինել քաջ տրամաբան։ Բ. Ասեմ. Օ ինչ կարեւորագոյն գործ։ Բ. Ասէ. Ցուցանել զի այս այսպէս է կամ ոչ։ Բ. ասեմ. Ա. զինչ կարեւորագոյն փոյթ։ Բ. Ասէ. Գտանել ամենայն ուրեք հնարս քաջագէպս 'ի հան-զել[2]։ Բ. Ասեմ. Զանսի մասունքս են Ճառք։ Բ. Ի

1 Արիստոտ. Ճարտ. գիրք Ա. գլ. 1. էջ 513։
2 Պլատ. 'ի Փեդրա. հա. 3. էջ 267։
3 Արիստոտ. անդ. հա. 2. էջ 513։
4 Նոյն անդ. էջ 512։
5 Նոյն անդ. գլ. 1 և 2։

բազումն բաժանեն զայն հռետորք [1], այլ չորք են գլխաւոր մասունք նմի. յառաջաբան, առաջարկութիւն, հաստատութիւն, և վերջաբան. յորոց մարթ է զառաջինն և զվերջին թողուլ 'ի բաց [2]։ Այլ մինչդեռ չդադարէի 'ի հարցանելոյ, խնդրեաց նա հրաժեշտ. և ոչ ևս եհան ինձ պատասխանի, բայց միայն տեղեկութիւնս ինչ զբացատրութենէ։

Սեմ. Թէպէտ և ճոխ իցէ հելլէն բարբառ և բազմատարութամբ, այլ քեզէն իսկ զիտիցէ առնուցուս՝ զի ոչ միշտ բառական է 'ի բացատրութիւն իմաստից։ Ակղլիդէս ասէ. Հնարտիւ այդ այդպէս է, այլ նոյն իշխանութիւն է մեզ՝ որ ինչ հարանց իւրաքանչիւր լեզուաց [3]. զի օրէն իսկ է մեզ նորանոր յաւելուլ բառս, ստեղծմամբ կամ յայլոց բառից ածանցմամբ [4]։ Վերթ ևս 'ի նկարագրականն իմաստ սահմանեալ 'ի սովորութենէ յաւելումք այլաբանականս, և կամ երկուս 'ի մի զոդեալ բառս՝ երբորդ իմն կազմեմք. այլ այս հանարձակութիւն պահի առաւել քերթողաց [5], և մանաւանդ յերկդմանեանին տաղս [6]։ Իսկ յայլ նորաձևութիւնս բազում

1 Պղատ. 'ի Փեդր. հտ. 3. էջ 267։
2 Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 13։
3 Կուինտիլ. գիրք Ը. գլ. 3. էջ 486։
4 Դեմետր. փաղեր. յդ. պերճախօս. գլ. 95 և 96, և այլն։
5 Նոյն անդ. գլ. 93։ Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 2. էջ 585։
6 Արիստոտ. անդ. գլ. 3. էջ 587։

զգուշութեան պէտք են, զի եթէ ոչ ըստ օրինաց լեզուին իցեն, չէն հասարակաց ընդունելի։

Օ գեղեցկութիւն բացատրութեան յօրինեն հնչումն ձայնին և իմաստն 'ի նմա բովանդակեալ. որով 'ի բաց պարուրելի է զամենայն բան տգեղ կամ անհաճոյ կիրթ ախորժակաց։ Ամն 'ի ձեռոց մատենագրաց, ասեմ, զամենայն նշանակս իմաստից անխտիր հատորի. և վիճեալ պնդէ, զի որով օրինակաւ և բացատրեսցին իմաստք՝ զնոյն ազգումն զործիցեն։

Լ. Կղեմէս ասէ. Խալէ նա. զի յերկուց բառից որ առաջի կայցեն քեզ, միումն մարթի պարկեշտագոյն և վայելչագոյն գոլ, առաջի առնելով զպատկեր իրին, զոր միւսն յայտ յանդիման ցուցանէ[1]։

Օ՝ի են 'ի բառից մերոց որ յատուկք են, և են որ այլաբանականք. են որ պարզք, և են որ բարդք. են որ բնիկք, և են որ եկամուտք[2]։ Ակաք ազնուագոյնք են կամ ախորժելիք քան զայլս, բարձրագոյն կամ զուարթագոյն բերելով իմաստս[3], և այլք դարձեալ անարգք կամ անախորժք լսելեաց, զորս պարտ է տարագրել 'ի շարագրաց ոգոյ և 'ի քերթութեանց[4]։

Ի պէտսպէս շարագրութենէ բառից կազմին

1 Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 2. էջ 586։

2 Նոյն յդ. քերթ. գլ. 21 և 22. հտ. 2. էջ 668 և 669։

3 Դեմետր. փաղեր. յդ. պերճախօս. գլ. 175. 176. և այլն։

4 Թէոփր. առ Դիոգենէսայ ապիկ. յդ. շարագր. բառից. գլ. 16. հտ. 5. էջ 105։

տունք. և տանցն մերթ մի անդամ է[1], և մերթ աւելի մինչև ցքառեակ անդամն. և ոչ է պարտ աւելի քան զչորս ունել նոցա անդամն[2]։

Օ գոյր լեր, մի 'ի ձառս քո բերել տունս բո-լորակս և համաչափս, հանգոյն Պորգիատայ[3] և Յառկրատայ. և մի հատուկտիր և անկցորդ շա-բայարել քանս, ըստ նախնեացն նամուռեան[4]։ Օ 'ի առաջինն պարտասեցուցանել զմիտս, և եր-կրորդն անսխորժ է ունկան[5]։ Պոտխրեսնիր ստէպ զչափս տանց, և իցեն քանք քո քաջարուեստք միանգամայն և անպաճոյնք[6]. և մեծամայելուչ եւ յարդարեսցին, եթէ զվերջինն անդամն տանց ընդարձակագոյն քան զառաջինն կազմեսցես և կատարեսցես զնա 'ի մի յերկար վանկից. յորս հանգչի ձայն 'ի դադարելն[7]։

Լրկու ինչ կարևորագոյնք են 'ի բացատրու-թեան[8]. առաջին՝ համեմատութիւն բառիցն ընդ իմաստս։ Վաղ ծանուցաւ, զի զիմաստս մեծա-մեծս անարգ բառիւք բացատրել, և զգուշա-քեայս պերճ բանիւք, այնպէս է՝ որպէս թէ ոք զրգլեակս պատառատունս թագաւորաց զգե-ցուցանիցէ, և ծիրանիս սինկքոր ռասինն։ Նոյա-

1 Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 9. հատ. 2. էջ 592։
2 Դեմետր փաղեր. յդ. պերճախօս. գլ. 16։
3 Նոյն անդ, գլ. 15։
4 Նոյն անդ, գլ. 4։
5 Կիկերո. յդ. Ճարտ. գիրք Գ. գլ. 49. հատ. 1. էջ 326։
6 Դեմետր. փաղեր. անդ, գլ. 15։
7 Արիստոտ. յդ. Ճարտ. գիրք Գ. գլ. 8. հատ. 2. էջ 591։
8 Նոյն անդ, գլ. 2. էջ 584։

նուցաւ դարձեալ, զի հոգւոյ զանազան լեզուք են ըստ կրիցն յուզմանն և հանդարտութեան. և զի ծերոյ զրոյց ոչ նոյն է ընդ երիտասարդի, և ոչ զեղջկացն ընդ քաղաքացոց։ Ի,մին իրի պարտ է փոփոխել ասացուածոյն ըստ բնութեան խօսողին և զորոց խօսի, և ըստ խօսելոց իրացն, և ըստ սուժամանցն հանդամանաց։ Պարտ է դարձեալ, զի տիպք կերպարանաց բանից քերթութեան և ճարտարիսօսութեան և պատմութեան և զրուցատրութեան զանազանիցին 'ի միմեանց ամենևին[2], թէպէտ և բարք և հանճար մատենագրին զանազանութիւն մեծ զործիցեն յասացուածն ըստ ազգս զրոց իւրաքանչիւր[3]։

Այլ ինչ կարևորագոյն բացատրութիւն է պայծառութիւն։ Պարտ է ճարտասանին կամ մատենագրի զոլ ներհուն 'ի բնիկ բարբառ իւր. զի 'ի զանցանել նորա զքերականական կանոնաց, բազում ուրեք դժուարին իսկ է հասու լինել մտաց նորա։ Ի կիր արկանել բառս երկդիմիս կամ տարապարտ շրջաբանութիւնս, յաւելուլ անճահ զշաղկապս 'ի կապակցութիւն անդամոց բանին, զեզական ընդ յոգնականի այլ ընդ այլոց փոխանակել, և ապախտ առնել զանազանութիւն ապրական անուանց և իգականաց սահմանեալ 'ի յետին ժամանակս, նշանակել նուիրեալ բառիւ

[1] Աբիստոտ. յդ. Ճարտ. դիբք Գ. գլ. 7. էջ 519։

[2] Նոյն անդ. գլ. 1. էջ 584։

[3] Դեմոսթ. փաղբ. յդ. պերճախօս. գլ. 19։ Կիկերո. Ճարտ. գլ. 20. հտ. 1. էջ 436։

[3] Կիկերո. անդ. գլ. 11. էջ 428։

զաղգմունս երկուց զգայութեանց, և ընծայել տեսութիւն աչաց և ականջաց*, և հանգոյն Հրակղիտեայ առ խուռն կուտակել զբառս՝ մինչև չկարել ընթերցողին գուշակել զտրոհմունս բանին. այս ամենայն թերութիւնք մթին առնեն զբացատրութիւն[1]։ Այլ յաճախէ մթութիւնս այս, ուր սեթևեթք և երկայնութիւն տանց յաճեցուցանեն ընդ վայր զմիտս ընթերցողին, և չտան նմա հանգիստ[2]. և ուր կարի իմն 'ի հաբևանցի խուսափեն 'ի նմանէ իմաստք, որպէս որ յասպարիզին ընթանան՝ 'ի քթթել ական անտեսք լեալ[3]։

Այլ իւիք մարթ է պայծառագոյն յօրինել ըզձառս, որպէս սովորական ասացուածովք[4]. այլ եթէ բնաւ ամենևին չփոփոխիցես զհասարակ կարգն, լիցին բանք քո ընտանեկանք և հետևակք. այլ նորանոր դարձուածովք և այլասացիկ ձևովք յօրինեսցես զբանն[5]։

Շարադրածոյն պարտ է լինել գիւրաքայլ 'ի չափ ամենակին, և մի ըստ տաղաչափական ոտից արուեստաւոր։ Բառաբերագոյնք տարագրեն 'ի բաց զչափ ոտից, և տարագրութեանս այսորիկ

* Ոչ արարն Եպիկուրոս ('ի Պրոմեթ. տող 24.) զի ասէ անդ Հեփեստոս զՊրոմեթեայ, մի ևս տեսանել նմա զ բարբառ կամ զկերպարան մարդոյ։

1 Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 5. հտ. 2. էջ 588։ Նոյն, Ճարտ. առ Ալէքս. գլ. 26. էջ 632։

2 Դեմետր. փաղեր. յզ. պերճախօս. գլ. 208։

3 Նոյն անդ. գլ. 202։

4 Արիստոտ. անդ. գլ. 2. հտ. 2. էջ 585։

5 Նոյն անդ։

պատճառք հաստատին յօրէնս՝ զոր պարտ է ա-
ռաջի ասացուցանել հանապազ. այս ինքն է՝ զի պարտ
է թաքչել արուեստին [1], և զի որ յորդորէն զոք
կամի կամ համոզել՝ ոչ է պարտ նմա նշանակել
զհնարսն։ Այլ ոտանաւոր չափ աստ անդ 'ի շարա-
գրածս խառնեալ, յերեւան ածէ զձիգն և զդի-
տաւորութիւն բռնադատութեան։ Այսեմ. Իսկ
զինչ, եթէ յանկարծ յեռանդն ճառիցն սպրդիցի
չափ ինչ ուրեք 'ի ներքս, պարտ իցէ մերժել զայն
'ի բաց, և զզօրութիւն իմաստիցն 'ի վտանգ տկա-
րութեան արկանել։ Այսպէս. Լաթի թերակատար
բերիցէ չափ ընդունելի է, և յաւելու զգեղ բա-
նին [2]. իսկ եթէ չափ կատարեալ պարտ է բեկտել
զայն, և զկոտորակս նորա 'ի կիր արկանելի, ո-
րով ախորժալուր և յօրինի տունն [3]։ Խաղումք
'ի մատենագրաց, և Խոկրատ ինքնին, ստգիւտ
յինքեանս ձգեցին՝ ոչ զգուշացեալ այսմ օրի-
նաց [4]։

Ի՞նչ ինչ առաւել յերին երանգոցն միտ դնել
Պղիկերա 'ի յօրինել պսակս, քան 'ի յարմա-
րութիւն հնչմանց մատենագիր՝ որոյ փափուկ ի-
ցեն լաւիք։ Յոլովք են յաղագս այսորիկ կանոնք,
զորս լաւ. բայց է ինչ խնդիր, զորմէ յառնախ

[1] Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 2. հտ. 2. էջ 585։ Պիկեր. յդ. Ճարտ. գիրք Բ. գլ. 37. հտ. 1. էջ 228։

[2] Դեմետր. փաղեր. յԴ. պերճախօս. գլ. 184։ Հերմոգ. յդ. կազմ. Ճառի, գիրք Բ. հտ. 1. էջ 122։

[3] Դեմետր. փաղեր. անդ, գլ. 183։

[4] Նոյն անդ. գլ. 118։ Հերմիմ. առ. Պիկեր. Ճարտ. գլ. 56. հտ. 1. էջ 468։

լուեալ է իմ վիճելոյ բազմաց՝ թէ արժանն իցէ զՀետ բառիս, որ 'ի ձայնաւոր աւարտին տառս, յարել զբառ՝ որ նոցին ձայնաւոր տառիւ սկսանիցի։ Խոկրատ և աշակերտք նորա ամենայն ուրեք խորշին 'ի յարաձայնութենէ աստի. Պեմանթենէս բազում ուրեք, իսկ Աւկլիդիդէս և Պղատոն ուրեք ուրեք.[1] 'ի քննաբանից կէսք տարբերին զայն 'ի բաց խստիւ[2], այլք ամիոփեն զօրէնսն՝ վնասակար շքոյ Հառիցն համարեալ զխափանելն ամենայն ուրեք անխտիր[3]։

Յաւելի և ասեմ. լուեալ է իմ եթէ բազմակերպ ոճք ասացուածոյ են, է որ ընտիր և է որ վրօեմ. որ պարզ. և որ գեղեցիկ, այլովքն հանդերձ[4]։ Աւկլիդէս ասէ. Ասղցուք հռետորաց զայլ և այլ տիպս նկարագրին նոցա տալ. այլ ես ցուցի քեզ զնա՝ 'ի հարևանցի։ Եթէ Հառք քո պայծառք իցեն և համեմատք լիցին բառք քո, և իմաստք և պատՀառք Հառիցդ գեղեցկայարմարք ընդ միմեանս[5]. և աւելի ինչ քան զայն ոչ խնդրի։ Խելամուտ լեր 'ի դմին, և ոչ ևս զարմացիս ընդ առաջիկայ բանքս։

Պատասացութի ամենայն իրօք զանազանի 'ի բեմբասացութենէ։ Երբեմն են Հարտարախօսի

1 Պիկեր. Հարտ. գլ. 44. հտ. 1. էջ 457։
2 Արիստոտ. Հարտ. առ Ադեքս. գլ. 26. հտ. 2. էջ 632։
3 Դեմեար. փաղեր. յգ. պերՀախօս. գլ. 322 և 323։
4 Արիստոտ. Հարտ. գիրք Գ. գլ. 12. հտ. 2. էջ 598։ Դեմեար. փաղեր. անդ. գլ. 36։
5 Արիստոտ. անդ. գլ. 7. էջ 590։

թերաբանութիւնք և կրկնաբանութիւնք, որ մատենագրի յեղեռն համարին[1]։ Զ՝առք դրուատեալք յաշխարհախուսմբ ժողովն՝ անգոսնելի եղեն յընթեռնուլն, զի արտասանութիւն արգոյ առնէր զնոսա. և այլք դարձեալ բազում՝ ջանիւք ճահագրեալ, արհամարհեին արդեօք՝ ի լուր հասարակաց, եթէ ոչ օգնէր նոցա արտասանութիւն[2]։ Պերճախօսութիւն որ շլացուցանէր զմեզ հնարի ճանանչիւքն խրովք, ծանրատաղտուկ է առանց ներդաշնակութեան, և ուր դիտաւորութիւնք գրչին ակներև կայցեն. և զի Մոտիկդեայն՝ ի կիր առից զիմաստ, ուր մատենագիրն թռալիր զթուշն այտուցանէ առ՝ ի փչել ընդ սրինգ փոքրիկ[3]։ Ամենց՝ ի ճարտասանից անբերելի է ոՀ բանիցն, մա յաճախութեՀ չափոյ ոտից և բարդ բառից՝ ղորս՝ ի քերթութենէ առնուն՝ ի կիր[4]։ Դարձեալ և Ղկիդասան անախորժելի է վասն շռայլելոյ տարապարտ զմնկդիս, և Դորգիաս մթութեամբ դժուարիմաց փոխաբերութեանցն[5]։ Հոլովագոյնք՝ ի ձևոց աւելաբանութեան ազգին՝ ի սիրտ սարսուռ անբերելի։ Օգիծաղելիս ընդ մատենագիրս՝ որք ընդ կորովն ոՀոյ զբռնազբօսն խառնեն, և՝ ի դառն երկունս ՀԳնին առ՝ ի մնացածին ատացուածս։ Ամն

1 Արիստոտ. Հարս. գիրք Գ. գլ. 12 էջ 597։
2 Նոյն անդ։
3 Դիոգին. յՂ. վանմի. յոգ. 3։
4 Դեմոսթ. փոքր. յՂ. պերճախօս. գլ. 117։
5 Արիստոտ. անդ գլ. 3։ հա. 2. էջ 587։

'ի նոցանէ 'ի խօսել զբլրաձև վիմէն, զոր Պողիֆեմոս ընկէց զՀետ նաւուն Ոդիսեայ, ասէ թէ այծք ձարակաւորք 'ի վերայ ժայռին ոտաձէին 'ի հերձանել նորա սլացմամբ զօդս[1]։

Յայնժամ ասեմ. Եւ ինձ իսկ բազում ուրեք անտեղութիւն ձևացեալ ազգի. պարտ էր արդեօք բնաւին իսկ ոտտաքսել զդոսա 'ի շարագրածոց. որպէս ոմանք յարդեաց աստի մատենագրաց առնեն[2]։ Եւ Կլիդէս ասէ. Նուանք բնականք կազմեն զբարբառ բանականութեան, իսկ այլաբանականք զբարբառ կրից։ Ասեն զծագրէ զպատկեր, և միտք յաւելուն 'ի նա զարդս ինչ զուզնաքեայս. այլ կրից է տալ նմա շարժումն և կենդանութիւն։ Զոգի, որ խնդրէ բռնադատել ըզմեզ 'ի կցորդութիւն կրից իւրոց, կոչէ զտիեզերս առ հասարակ յօգնութիւն իւր, և կազմէ իւր բարբառ նոր։ Եւ 'ի հոյլս էից, որ շուրջ զմեզ կան, նկատելով տիպս նմանութեան և ներհակութեան արագ արագ շեղջակուտ, զձևս, յորոց գլխաւորք բովանդակին 'ի մի, զոր ինձ 'ի զէպ թուի կոչել հանգիստութիւն։ Զի յորժամ ասիցեմ. Յարդարէ Աբելեա էբրա զաւրծ համեմատութիւն է։ Եթէ ասիցեմ. Յարդարէ աւրծն այն փոխաբերութիւն է[3]։ Եթէ ասիցեմ. Աբելեա ընբնաց դան գնոզմ. աւելաբանութիւն է։ Սակ եթէ զարութիւն նորա ընդ վատութեանն Ոմերոս

1 Դեմեար. փաղեր. յղ. պերճախօս. գլ. 116։
2 Նոյն անդ, գլ. 67։
3 Աբիսաուա. ձարա. գիրք գ. գլ. 4. հա. 2. էջ 588։

սիտեայ բաղդատեմ, լինի հակադրութիւն։ Դպա տես ինձ, զի համեմատութիւն մերձեցուցանէ երկուս իրս առ իրեարս, փոխաբերութիւն միաւորէ զնոսա ընդ միմեանս. իսկ աւելաբանութիւն և հակադրութիւն բաժանեն զնոսա մերձեցուցանելով։

Համեմատութեան ձևք պատշաձագոյնք են քերթութեանքան շարագրածոյ[1]. աւելաբանութիւն և հակադրութիւն՝ դամբանական ձառից և ներբողենից քան ատենաբանութեան և դատաստացութեան։ Իսկ փոխաբերութիւնք կարևոր են յամենայն ազգի ազգի ձառս և յոռն բանի։ Սոքա այլակերպին զասացուած, և իմաստից կարի իսկ սովորականաց կերպարանս իմն նոր ընծայեն[2]։ Կարկեալ կայ առ վայր մի ընթերցողն. այլ անդէն թափանցանց լեալ մտայն ընդ նուրբ քօղն, նկատէ զամենայն, որ ոչ առ այլ ինչ ծածկին 'ի նմանէ՝ բայց առ 'ի տալ նմա զբերկրութիւն իւրովի հասու լինելոյ իրացն։ Յառաջ քան զաւուրս զայսոսիկ ուրումն 'ի մտաբերագրաց յարգի նմանեցուցեալ զծերութիւն[3], որ սակաւիկ մի յառաջ հասկանաւ զՀատան բերելով ցորենոյ, ապա անպտուղ՝ մնայ մծաղուտ դարձին 'ի փոշի, նորանշան իմն թուէր բերել 'ի լեալիս։ Բայց խորհրդաւորս այս նմանութիւն ընդունելի եղև,

[1] Դեմեար. փաղեր. յԼ. Գ. գլ. 2. էջ 585։ պերճախօս. գլ. 90։

[2] Արիստոտ. Ճարտ. գիրք 2. էջ 593։

[3] Նոյն անդ. գլ. 10. հա.

զի միանգամայն յանդիման առնէ զիսխուսն ծաղկաւէտ մանկութեան յանապատաւոր և 'ի բեկանուտ զառամութիւն։

Բայլքանզի բերկրութիւնք մտաց յանակնկալ իրաց առնուն պատճառս, և կարձատեւք են, ոչ յաջողեսցի քեզ լինել բերկրալի 'ի կրկնել զնոյն ձև։ Օ՛ի վաղվաղակի խառնեսցի փոխաբերականն ընդ սովորական բառս, որպէս բաղում այնպէս փոխաբերութիւնքն՝ զորս յանձնեցին պէտք յամենայն լեզուս, և առաւել 'ի մերումս։ Օ՛ որ օրինակ փոխաբերութիւնքս այսոքիկ՝ Զայն պայծառ, Խիստ բարք, Մկն որթոյ 'և այլն, յանձնեսս սովորութեանն ոչ և առ ձև ինչ հանարին։

Պարտ է փոխաբերութեան ազդումն տալ իւրին, որքան է հնար։ տես զիարդ ամենայն ինչ ընդ նեարպագործ զբաւն Հոմերի կենդանանայ։ ծարաւէ է նիզակ արեան թշնամւոյն, և նետ անծոյծ 'ի հարկանել զնա[1]։

Կնարելի են ուրեք ուրեք փոխաբերութիւնք, որ ածեն խնդաստս զուարթս։ Որպէս Հոմերոս վարդամատն կոչէ զարշալոյս վասն այն արդեօք, զի բնութիւն զմատունս գեղեցիկս վարդագոյն երբեմն վայելացուցանէ։ Կանսի զուարթագոյն տայր խնդաստս, եթէ ծիրանեմատն զնա կոչէր[2]։

Պարտ է նմանութեանն ունել Հշգրիտ և քա-

[1] Դեմեար. փաղեր. յղ. Գ. գլ. 11. էջ 595։ պերճախօս. գլ. 87 և 88։
[2] Արիստոտ. Հարտ. գիրք էջ 586։
[3] Նոյն անդ. գլ. 2. հտ.

ջայայա Համեմատութիւն ընդ իրացն Հնմարտութեան։ Յուշ լինիցին քեզ արհաւիրքն, զոր Պերիկղէս արկ յաթենացիս յասելն, Մանկոնն մեր Հոբեսա՝ ի մարդի, և Մեզնոյ որդեն զամ կապեալ՝ ի փարնայոյ[1]։ Պատանօր է տեսանել Համեմատութիւն կատարեալ. քանզի մանկութիւն այնպէս ունի առ այլ և այլ Հասակս կենաց, որպէս զաբուն առ սիլ յեղանակս տարւոյ։

Հիրաւի ստգտանի բանն Լուբիպիդեայ. Ամէնակ որբոհի ծուղոյ. զի մակդիրս այս գերապանծ ոչ՝ ի ձահ պատահէ անարգ զոգուցն[2]։ Լա Պորգիասայն դարձեալ եպերի բան, ուր ասէ. Հնչէ որբոհութեամբ, ղոր ամօնռէն սերմանեցի. և այս յայն սակս արդեօք, զի մինչև ցայժմ՝ սերմանէն և հնչել՝ ի քերթողաց և ի կիր արկեալ փոխաբերութեամբ։ Լա Պղատոն դարձեալ ստգտանի զի փոխանակ ասելոյ թէ՝ բարեկարգ քաղաքի չեն պէտք պարսպաց, ասէ. Պարդ է պարսպաց նորա ղէնոնեալ կալ՝ ի Նէրկ[3]։

Լա ապա Լակղիդէս բազում ինչ խօսեցաւ ընդ իս զզարդուց պերճաբանութեան. և օրինակս՝ ի ներքս էած լուութեան ձևոյ, Ճարտար ակնարկութեանց, Հանճարեղ խմաստից և գեղապատշաճ ասացուածոց[4]։ Լա խոստովաներ՝ զի բազ-

[1] Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 10. էջ 584։

[2] Նոյն անդ. գլ. 2. էջ 586։

[3] Պլատ. յղ. օր. գիրք Զ. հտ. 2. էջ 778։ Ղենդին. յղ. վանմի, յօդ. 3։

[4] Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 11. հտ. 2. էջ 596։ Դիմեռոր. փաղեր. յղ. սիրաՀաքոս. գլ. 272։

մնգոյնք 'ի ձևոց աստի չուսուցանեն ինչ, բայց միայն յայտ առնեն զժամանել մնաց արագ յուշ նպաստակին՝ առանց յամենայ 'ի շաղկապական իմաստս։ Եւ ոչ զայն ժիտեր, զի ձևք ինչ բանից յոմանց գովին և յոմանց պարսաւին 'ի զուգապատիս ներհուն քննաբանից։

Եւ յետ ցուցանելոյ համառօտիւ զօրէնս առգամանութեան և շարժուածոյ, յուշ ածեալ և զայն զի Դեմոնթենէս առաջին և երկրորդ և երրորդ կարևոր պայման Ճարտարախօսին զարտասանութիւն համարէր, յաւել ապա և ասէ. Ճարտասանութիւն ամենայն ուրեք ընդ բարուց աղգաց իւրաքանչիւր վիճակեցաւ։ Յոյնք կարիացիք և միւսացիք և փռիւգացիք զի դեռ ևս խաղաղ են բարուք, և ոչ այլ ինչ առնոսա զբի 'ի պարծանս՝ բայց զերդութիւն նախարարացն, ընդ որոյվք կան 'ի ծառայութեան, Ճարտարախօսաք նոցա արտասանեն զօրութեամբ ուժոյ Ճառս կուտակեալս ծանրատաղտուկ Ճամարտակութիւ՝։ Իսկ սպարտացիք զի խստակրօն բարուքն իւրեանց և ողջմտութեամբ արհամարհին 'ի ըստ պատ զամենայն պերճութիւն, 'ի մի բառ բովանդակեն երբեմն Ճառս բարոյականս և քաղաքավարականս։

Օտարի ուրուք լուեալ զՃառս քաջաց Ճարտարախօսացն մերոց, կամ՝ զընտիր մատենագրաց

՝ Պիկեր. Ճարտ. գլ. 8. հա. 1. էջ 425. գլ. 18. էջ 433։

մերոց ընթերցեալ զգիրս, զիտասցէ անդէն զի 'ի մէջ բարգաւաճեալ՝ զիտնաւոր՝ բազմագործով՝ լեա հանճար և բարեախորժ ազին գտանի։ Յամենեսին 'ի նոսա տեսցէ զնոյն փոյթ առ 'ի գտանել զեղեցկութիւնս պատշաճս ըստ ճառից իւրաքանչիւր, և զնոյն ճարտարութիւն 'ի յեռուլ զնոսա. և զրեթէ ամենայն ուրեք գտցէ զբարեմասնութիւնս զայսոսիկ և և պայծառացեալ իմաստիւք՝ որ զարթուցանեն զմիտս, և ընդոստուցիչ վայելչութեամբք՝ որ զեղազարդեն զբան[1]։

Լա 'ի կարի պարզագոյն գիրս իսկ հիացեալ զարմացցի ընդ զեղ բարբառոյն, որ թուի զհասարակաց բերել խօսս՝ թէպէտ և զանազանեալ յոյժ 'ի նմանէ։ Լա յաւելցին զարմանք նորա 'ի նկատել զգեղեցկութիւնսն որ 'ի նոսա զօշտիչս, զորոց ոչ իսկ կարիցէ զչափ առնուլ՝ բայց 'ի ջանալն 'ի զուր յիւր գիրսն փոխել զնոսա[2]։

Հարցի զնա, և ասեմ. Օ՞ 'ի մատենագրաց տաս յօրինակ։ Լա կղնդէս ասէ. Լա ոչ զոք միայնակ, այլ զամենեսին առ հասարակ[3]։ Ա՛ զոք յանուանէ տամ. զի ահա և մերձաւորագոյնք 'ի մերոց մատենագրացս մատուցեալք 'ի կատարելութիւն, Պղատոն՝ Պլեմոնթենէս, յանցանեն ուրեք ուրեք. մին առաւելութեամբ զարդուց[4], իսկ

1 Պիկեր. Ճարտ. գլ. 9. հա. 1. էջ 426։ Նոյն յլ. քաջ Ճարտ. անդ, էջ 541։ Պուենաիլ. գիրք Զ. գլ. 3. էջ 373 և 395։

2 Պիկեր. Ճարտ. գլ. 23. հա. էջ 438։

3 Նոյն անդ, գլ. 9. էջ 426։

4 Դիոն. ասիկ. Թուղթ առ Պոմպ. հա. 6. էջ 758։

միսն նուազութեամբ ապուսականութե՛ն։ Այլ զամենեսին առ հասարակ տամ. զի խելամուտ լինելով՝ի գիրս նոյ, և համեմատելով զայնոսիկ ընդ միմեանս, ոչ միայն ուսանիցի որ ըստ նոցին զտիպս կերսարանաց բանիցն իւրոց յերիւրել[2], այլ և զկիրթ և զանասակ ախորժակս նոցա յինքն բերցէ, զուղղիչն և զդատաւոր արդասեաց հանձնայոյ. զգացումն արագամէտ, և այնպէս յաձախեալ առ մեզ, մինչև թուել ընդաբոյս ազգիս։

Դու ինքնին գիտես՝ թէ քանի արհամարհանօք մերժէնա՛ի բաց, եթէ անկիրթ ինչ և տգեղ՝ի Ձառս ուրեք նշմարիցէ. և թէ որպէս՝ի ժողովս՝ի լուր սիտակ ինչ ասացուածոյ կամ անասլուեստ ոլորակի բոզոք բառնայ նոյնհետայն, և թէ զիսդ ատենաբանք մեր Ձգնին՝ի հաձել զփափուկ և զանաչառ լսելիս նորա[3]։

Լակ ես ասեմ. Սարանուն այո՝ լսելիք նոցա ընդ թերութիւն ներդաշնակութեան, այլ ընդ անպատեհս ոչ ևս. զի ահաւասիկ հանապազօր անոգորոյն կշտամբանօք յարձակին յիրեարս, և բրտագոյնս և տգեղ բանիւք թշնամանեն զմիմեանս։ Այլ կէսք՝ի նոցանէ թէ իւիք ածեն զարմանս. ո՞չ ապաքէն յաձախութեամբ աւելաբանութեանց[4], և Ձանմրտակութեամբ՝ի ձև հա-

1 Եսքին. յղ. վեպ հրեշտ. էջ 412։ Կիկեր. Ձարա. գլ. 8. էջ 426։

2 Կիկեր. յղ. Ձարա. գիրք Բ. գլ. 14. հա. 1. էջ 205։

3 Նոյն Ձարա. գլ. 8. հա. 1. էջ 425։

4 Արիստոտ. Ձարա. գիրք Գ. գլ. 11. հա. 2. էջ 597։

կաղրութեան և ամենայն ազգի ազգի Ճարտասա-
նական պերճութեանց[1], և շարժուածոց և մոլե-
գին աղաղակի[2]։

Լուկղիդէս ասէ. Լ.յլ յիմանանոց ամենե-
ցունց էպերին զառանցանքդ։ Լ.յս ասեմ, այլ է-
պերիցին յազգէն. ոչ ապաքէն քերթածք թա-
տերականք նոգկալիք մեծարին ամի ամի քան զընտ-
տիր ընտիրս։ Լսէ. Յաղթութիւնք վաղանցիկք,
յանկարծակի կամ դաւով իմն կալեալք, ոչ
յաւէժական ընծայեն համբաւ մատենագրի։ Լ.
սեմ. Օ՛ի ոչ յամենեսին՝ ի ձեզ են կիրթ ախոր-
ժակք՝ և անտի իսկ յայտ է, զի են ձեր և յոռի
մատենագիրք. ոմն ըստ օրինակին Պորգեայ շա-
լեալ յորդէ՝ ի շարագրի զամենայն գանձս քեր-
թութեանն. այլ ոք յղկէ, կոկէ, տաշէ և երկայ-
նէ զտունս, մինչև մոռանալ ընթերցողին զսկիզբն
նորա չև հասեալ՝ ի վախճան[3]։ Լ.ս այլք դար-
ձեալ զարուեստակութիւն մինչև՝ ի ծաղր հասու-
ցանեն. և վայ բանիս այն որ զԱնտաւրոս կոչէ՝
Լ.յր ձիաւորեալ՝ ի վերայ իւր[4]։

Լուկղիդէս ասէ. Պոռքա են իբրև զզեղծմունս,
որ ամենայն ուրեք սպրդեալ մտանեն. և յաղթա-
նակ գոցա իբրև զանուրջս, որ վիշտս և եւթ թո-
ղուն զՀետ։ Օ՛ գոսա ընդ զարմացեալն ընդ գիրս
գոցա՝ ի բաց հանեմ յազգէն, զորոյ ցուցի զա-

[1] Խորհ. հանմի. հտ. 2. էջ 528։
[2] Եպրին. ի Տիմոթ. էջ 181։
[3] Դեմիտր. փաղեր. յՀ. պերճախօս. գլ. 4։
[4] Նոյն անդ, գլ. 191։
[2] Եպրին. ի Տիմոթ. էջ 264։ Պլուտ. ի Նիկ. հտ. 1.

խորժակին պանծալն. զի սա յիմաստնոց և եթ քաղաքացոց կաղմի, որք եթէ վաղ և թէ ա նագան զվՀիս բազմութենն տանին[1]. և հարկ է զեզ խոստովանել, զի սոքա բազմագոյնք են առ մեզ քան այլ ամենայն ուրեք։

Լինձ այսպէս թուի, զի Ճարտարիսօսութիւն 'ի ծայր բարձրութեանն հասեալ կայ[2], և զինչ և այսու հետև ինայ նմա։ Լսեմ. Ոչ ինչ դժուարին է գուշակել զայն. զի եթէ իշխանութեն օտար տիրեսցէ 'ի վերայ ձեր, մեղկեսցի[3]. իսկ եթէ իմաստասիրութիւն, 'ի չիք դարձցի։ Լ.յլ ըստ բախտի յերկրորդս աստի ազատք էք 'ի վտանգէ։ Լ.չ ոչ կարացեալ Լ.չկղեղեայ համբրէն 'ի վերայ կալ բանիցս, ինդրեաց զմեկնութիւն նոցա. և ես ասեմ. Մեկնեցից զայն, բայց նեբեսջիր ինձ՝ եթէ առաւելահրաչս ինչ խօսեցայց կամ հիացութեան բանս։

Իմաստասիրութիւն իմա ինձ զիտս ծայրայեալը 'ի բարձրագոյն գիտութիւն. զի ոչ ապաքէն հնարքդ պատրողականք մուծեալք 'ի խօսս և 'ի կիրս մեր յերեսաց նորա 'ի չիք դառնայցեն, որպէս ստուերքը և առ աչօք երևոյթք 'ի ծագել տուրնջեան։

Կալցուք դատաւոր զմի յերկնաբնակ հոգւոցն,

1 Ղուկիան. 'ի Հերմոտ. հտ. 1. գլ. 2. էջ 853։
2 Թէոփր. առ. Փոտայ մաս. անենագար. էջ 394։
3 Կիկերո. յզ. քաջ Ճարտ. գլ. 9. հտ. 1. էջ 344։ Նոյն յզ. Ճարտ. գիրք Բ. գլ. 23. էջ 214։

որոց Ճարակ մնաց է սոսկ Ճշմարտութիւն։ Այս-
ցէ նա 'ի միջի մերում, և եդիր նմա առաջի խօսս
ինչ բարոյական։ Զոսվէ նա զօրինացն որ 'ի
նմա զՀաստատութիւն, զպայծառութիւն իմա-
ցուածոց, զզօրութիւն փաստից, և զաւուրց Ճշգրիտ-
տութիւն։ Իսկ ես ասեմ ցնա. Սակայն ոչ ու-
մեք Ճառս այս Հաճոյ թուեսցի առանց փոխելոյ
զսա 'ի բարբառ Ճարտասանական։ Այսր ուրեմն
պարտ է Համեմատել զանդամս տան, և անդ
փոխադրել զբառդ՝ առ 'ի քաղցրալուր ևս դաշ-
նակել զՀնչումն։ Այլ ամենայն ուրեք ըստ պատ-
շաՃաւականին Ճշգիւ բացատրեալ են իմաստքս,
և կեղակարծիք զկիրթ ընտրութենէ ունկնդրաց
զրեսցին ինձ 'ի յանցանս անմեղելի։ Կարի գծուծք
են կերպարանք Ճառիցս. պարտ էր ինձ յաւելուլ
տիպս լուսափայլս 'ի պայծառութիւն[2]։— Այս ո՞ր
լուսափայլ տիպքն իցեն։ — Գեղեցկութիւնք,
Համեմատութիւնք, փոխաբերութիւնք, և այլ
ևս ձևք սահմանեալք առ 'ի ցուցանել զերս գեր
'ի վերոյ կամ յոյժ 'ի վայր քան զոր են։

Զարմանացիս արդեօք ընդ այս. այլ մարմնաւո-
ր ացս մեզ Հարկ է զպատրանս 'ի կիր արկանել և
'ի պաշտպանութիւն Ճշմարտութեանն։ Այլ ինչ 'ի
ձևոց ստի ահաւասիկ ածեմ, առեալ գրեթէ

[1] Դեմեար. Փաղեր. յլ. պերՃախոս. գլ. 139։
[2] Պիկեր. յլ. Ճարտ. գիրք Դ. գլ. 25. հա. 1. էջ 303։
Կոյն, Ճարտ. գլ. 25. էջ 440։ Կոյն, յլ. քաջ Ճարտ. գլ. 79. էջ 402։

զամենայն 'ի քերթողացն տաղից՝ յորս տպաւորագոյն գծագրին, և 'ի նոցունց Ճարտարախօսք ումանք 'ի շարագրածս Իւրեանց 'ի կիր առնուն զայնս։ Ընդունակ իմն, սկսանելով զՀաւ գովասանական այսպէս.

Ո՛ դրեացալինն իմոյ առաջի կայ ինչ անմահացուցանել զյիշատակ առ ամենայն ազգս փիլիսոփայից։ Լաւ ասէ ցիս Հոգին. Դադարեա վայրիկ մի. և գիտիցես հաւաստեաւ՝ թէ Ճառդ քո այդ ծանիցի և գովեսցի մինչև 'ի սպառ յամենայն տեղիս։ Լաւ, ասեմ. այլ ձեզ քանից են այս. Լսեսցէ նորա, ասէ Իսկիլիոյ[2], բնակիչն մերոյ 'ի լեառն Լիբանա՝ հասարակաբար երկնից[3]։ Լաւ Հոգին ասէ զաշն ձայնիւ. Ո՛վ անտեղուիթս. երկինք ուրեմն յենուցուն 'ի ժայռ մի փոքրիկ փոքու այսր գնդի՝ որ կոչի երկիր։ Դարբասուք տաղցրագոյնք քան զմեղր կաթնեն 'ի շրթանց նորա[4], և ինչանչն անդադար որդէս զարարքս յեան, որ անկանին յերկիր։ Լաւ դարձեալ Հոգին. Ո՛հ ինչ միաբանութիւն բարբառոյ ընդ մեղու և ընդ ձեան։ Հաստատեաց նա զգաղիկ երաշխաւորեալ[5], և զնար նորա զհրաբորբոք շիջուցանէ շանթս[6]։ Լակ Հոգին կարկեալ այնուհետև ակնկառոյց կայ յիս, և ես յառաջ ածեմ զբանս. Ընդարձուցեն նորա և ինասպուրեան հանգոյն Ընդամաղդայն. գեսիլնը ահարկու

1 Խաղը. յԵւագ. հա. 2. էջ 71։
2 Պինդ. ողիմպ. 2. տող 17։
3 Նոյն, պիւթ. 1. տող 36։
4 Հոմեր. Եղիակ. գիրք Ա. տող 249։
5 Պինդ. ողիմպ. 1. տող 22։
6 Նոյն, պիւթ. 1. տող 8։

տեսիլ Լաբիսին, և զբորոնիսն Պլեսիդոնի՝ փեղեցիսոնիսն նոսուանձելոյ ի նմանէ բաղումս են իբրև զարերս ծառոց, և որպէս զալիս՝ որ զնէր դիմանց անիսանն ընկասպատ ի ծովեղր [2]։ Զայսոսիկ ասելով՝ անարեւոյթ լեալ հոգին, սանայ յօթեւանս լուսոյ։

Արդեսեալ անդրէն Լուկիանոս ասէ. Մարթի իսկ զկարի յոյժ կուտակումն ձեւոցդ ստգտանել. այլ ես ոչ ժիտեմ զի աւելաբանութիւնք պատրեն զմիտս մեր և զզգայութիւնս, և զի միտք՝ անսովորք ի նոսա՝ սարսռնուն. այլ յուսալի է, զի բանականութիւնս մեր ոչ ի սպառ կայցէ մնասցէ ի տգայութեան։ Պատասխանի ետու և ասեմ. Լայմ մի՛ յուսայցես. ոչ ևս ընդ այլ յեկից մտանէր մարդ ի հաւասարութիւն, եթէ ստեղնայր զկատարելութիւնս՝ որոց կարծի ընդունակ։

Զի զոր օրինակ եթէ զգայութիւնքս մեր էին ամենատարափուկք, լեզու ոչ ևս հանդուրժէր ազգման կաթին և մեղու, և ոչ ձեռն յենուլ ի մարմին՝ առանց ցաւոց, և բուրումն վարդի՝ ցնցումն ջղաց և գեղումն և ձգտումն սաստիկ զմեօք արկանէր, և դոյզն շառաչ հերձոտէր զցուլս ըստ լեաց, և աչք մեր նկատէին խորշ ակօսաձեւս ի մարթ ողորկագոյն, զնոյն իսն ինձ և զզօրութեաց մնաց։ Զի եթէ էր նմա խորաշնին ևս տեսութիւն, և ճշգութիւն խիստ, յոյժ դժկամակեր ընդ տկարութիւն և ընդ ստութիւն նշա-

[1] Հոմեր. Եղիակ. 2. տող 169 և 478։ Եւստաթ. հմ. 1։

[2] Ընակր. տաղերգ. 32։

նայն՝ որ զխորհուրդս մեր յանդիմանն առնէն. և ոչ ինչ է երկայնելի՝ զի այլ իմն կաղմէր իւր այնուհետև բարբառ։ Այլ զինչ յայնժամ կրիցն լիներ բարբառ, և կիրքն իսկ բնաւ զինչ լինէին ընդ ամենիրեանն տերութեամբ անասակ և աներաւաւ մնաց. շինչանէին արդեօք առ հասարակ ընդ երևակայութեան, և բնութիւն մարդոյ կերպարանափոխ լիներ՝ ի սպառ։

Ի կենցաղումն յորում է նա արդ, ամենայն ինչ որ՝ ի մտաց նորա յառաջ գան և՝ ի սրբոտ և՝ ի ձեռաց՝ յանդիմանն առնէն զանբաւականութիւն նորա և զկարօտութիւն։ Փակեալ կայ յանձուկ սահմանի, և թէ երբէք անցանել կամի ըստ սահման՝ պատուհասք զնա խստիւ բնութիւն։ Կարծիցես թէ քաղաքականութեամբն յառաջադէմ յոյժ գտաւ՝ ի կատարելութիւն. և զինչ օգուտ եղև նմա։ Փոխանակ աստուածադիր բնական կարգաց, եմոյծ՝ ի հասարակաց միաբանութիւն օրէնս եդեալս՝ ի մարդկանէ, փոխանակ առաքինութեան զկեղծաւորութիւն՝ ի բարս, և՝ ի բերկրութիւս փոխանակ իսկականին զպատիրն, և փոխանակ բարեգործութեան՝ բարեձևութիւնս՝ ի կենակցութեան։ Այսորժակքն նորա առ յոյժ յատակութեանն այնպէս լեղաշրջեալ, մինչև յարուեստս նախամեծար առնել զկնաձոյն քան զօգտակարն, և՝ ի ձարտարիսօսութեան զընտրութիւն ոձոյ քան զլնմնտից՝, և յամե-

1 Արիստոտ. ձարտ. գիրք Գ. գլ. 1. հտ. 2. էջ 584։

նայնի իսկ զնարտարութիւն քան զՀմարտու-
թիւն։ Համարձակիմ իսկ ասել, զի ազգք բար-
գաւաճեալք ոչ այլ իւիք առաւելուն քան զմեզ,
բայց զի կատարեալ է առ նոսա արուեստ կեղծեաց, և
զի հմուտք են ածելոյ դիմակս զերեսաց ամենեցուն։

Լա յամենայն իսկ 'ի բանիցդ քոց 'ի միտ առ-
նում, զի հռետորականին չիք այլ ինչ ուշ նպա-
տակի, և զի ոչ այլով իւիք հասանել անդր՝ բայց
ողբակս և երանգս ախորժելիս ածելով զաւաիւք։
Վասն որոյ չէն ինձ պիտոյ սահմանդդ այդոքիկ,
այլ միշտ իսկ որպէս ցայժմ՝ Քրիստոնելի բանին
պատկառ կացիլ. զի հարցի զնա՝ թէ ո՞ր նշանք
իցեն քաջ մատենագրութեան, և ասէ. Նա զի
չիցէ մարթ յաւելուլ ինչ յայն, և ոչ դոյզն ինչ
յասպաւել անտի 'ի բաց։

Լա վախճան արարեալ խնդրոցս ընդ Լեկղե-
դեայ, ելաք 'ի ՃեմՃդեմ եղեալ 'ի Իկեոն։ Լա
եցոյց ինձ զՀանապարհայն զկիր հասեալ նմա 'ի
կնոջէ ուսումնեմ ծանօթեմ իւրմէ, և ոչ ուղիղ
թուէր ինձ դպրութիւնն. զի ուրեք ուրեք փո-
խանակ տասիս է զրեր ԻԷ, և փոխանակ Գայէ
ՂՅ։ Լա ասեմ ցնա. Վ'ինչ իսկ զարմացեալ եմ
ընդ անսիրելի առնել ածենացուցդ զներկուս
դպրութիւն. Պատասխանի ետ ինձ Լեկղիդէս,
և ասէ. Կանայքդ ըստ խօսիցն իւրեանց և որպէս
երբեմն վարէրն 'ի խօսս՝ այնպէս և գրեն[2]։ Լ-

[1] Աբիստոտ. յՂ. բարոյ. [2] Պղատ. 'ի Կրատիլ. հա.
գիրք Բ. գլ. Ե. հա. 2. էջ 22։ 1. էջ 418։

սեմ. Այսպա ուրեմն փոփոխումն լեալ է առոգանութեան։ Այսէ. Այլ բազում իսկ. օրինակ իմն՝ հինք 'ի սկզբանէ ասէին էՀ՛ՐԵ օր, յետոյ ասացին ԷՀ՛Ր՝, և ապա ԷՀ՛Ր՝

Այլ 'ի քաղցրահնչիւն և մեծավայելուչ գործելոյ զբառս, սովորութիւն է յապաւել զտառս ինչ կամ յաւելուլ այլս. և այսու անդադար փոփոխութեամբ բառնի ամենայն յոյս յաջողութեան, որոց 'ի բուն անդր բարբառոյն մատչել կամիցին։ Այլ ոչ այսչափ միայն, այլ և 'ի նմին սովորութենէ խատիանեալ՝ կան 'ի մոռացօնս ասացուածք ինչ որովք վարէին երբեմն ամենեքին, և զորս լաւ էր արդեօք դառնալ 'ի կիր առնուլ։

Այլ 'ի մեւոս առաջնոյ դաւթին Իկէոնի զկայ առաք 'ի շուինդն աղաղակին՝ որ հնչէր 'ի միջէ 'ի սրահից կրթարանին. քանզի Եւոն հռետոր և իմաստակն Պիթոդոր պայքարէին ընդ միմեանս 'ի վէճս սաստիկս։ Հազիւ կարացաք ձեղքել զամբոխն. և ասէ ցմեզ Եւոն. Ատիք յառաջ, զի ահա Պիթոդոր վիճեալ պնդի՝ թէ չիցէ ինչ խտիր ընդ երկաբանչիւրոցս արուեստ, և ինձ և իւր ոչ այլ ինչ գործ առաջի կայցէ՝ բայց խաբել զունկնդիրս։ Ցէս ինձ զխրոխտումն առնդ, որում շառագունեալն պարտ էր՝ զիմաստակի կրելով զանուն։

1 Լիւս. 'ի Թէոն. էջ 18։ Պղատ. 'ի Կրատիլ. հա. 1. էջ 414։ Սեքստ. Եմպիրիկ. ընդդէմ քերական. գիրք Ա. գլ. 1. էջ 234։

Պատասխանի ետ Պիթոդոր, և ասէ. Ընտնդ այդ պատուական էր երբեմն, և պերճանային դովաւ որք 'ի Յոլոնէ և այսր մինչև ցՊերիկլէս պարապեցին յուսումն իմաստութեան. զի և ոչ այլ ինչ անուանն ինքնին նշանակէ։ Պղատոնի ծաղը կացուցեալ զմանս՝ որք անուամբն այնուիկ զեղծանէին [1], արհամարհ արար զայն յաչս աշակերտաց իւրոց։ Բայց ահա և Յոկրատ, զոր և դու արդեօք մեծարիցես, և նա իմաստակ անուանի [2]. և ոչ միայն նա, այլ և Ընտիփոն Ճարտարախօս՝ զորոյ դու պարծանս քեզ համարիս զյարգութիւն [3]։ Այլ ասա ոչ զգիտակ անուանէ մեծարանաց է խնդիր. զի աւասիկ հրաժարեալ յայնմանէ առաջի քո, և ոչ այլ ինչ խնդրելով՝ բայց զՀնարտութիւն, առանց այլ ինչ փաստից՝ բայց միայն բանականաց, ցուցից քեզ զի հոգետոր և իմաստակ զնոցն հնարս 'ի կիր արկանեն առ 'ի հաստատել 'ի նոցն նպատակ։

Արկնեալ անդրէն Լեւոնի ասէ. Ոչ ունիմ ժոյժ 'ի սրտմտութենէ. զվարձկանս ուրեմն անարգս և զբանտավաճառս ոմանս՝ որք մարգեն զաշակերտս իւրեանց՝ զինուորել երկդիմի բանիւք և Ճարտարմտութեամբք, և ձեռնարկել անխարիր 'ի հաստատութիւն և յեղծումն նոցին բանից,

1 Պղատ. 'ի Գորգ. 'ի Պրոտագ. Յիպպ. և այլն։
2 Եպիքն. 'ի Ցիմաքք. էջ 287։
3 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 729։
4 Մնեսարք. առ Կիկէր. յոլ. Ճարտ. գիրք Ա. գլ. 18. հտ. 1. էջ 148։

իշխես հաւատարել արանցն պատկառելեաց՝ որք ուսուցանեն ջատագով կալ անմեղութեան յաստեանս, և պատասպարան օգտի աշխարհին 'ի համբաւսմբ ժողովս, և գովասան առաքինութեան 'ի Ճառս զորս նուիրեն նմին։ Պիլթոդոր ասէ. Ա՛յ զարս համեմատեմ, այլ զարուեստից նոցա են ինձ Ճառք. և խելամուտ լիցիս ընդ հուսպ, զի արքդ պատկառելիք առաւել քան զմնասակարարդոյս յիմաստակաց են երիկուդալիք։

Ա՛յ ապաքէն աշակերտք քո և իմ, թէ արահոդք 'ի ժամանել 'ի Ճշմարտութիւն անդր, 'ի հաւանականն սովոր են զկայ առնուլ'։ Լեւոն ասէ. Ա՛յո, այլ իմոցս Ճառք յեռուն 'ի հաւանականս խակասէս, իսկ քոյոցդ յերևելեաց մատիս։ Պիլթոդոր ասէ. Այ՛ դ՝ որ հաւանականքն իցեն, աղէ ասա։ Լեւոն ասէ. Ա՛ր ինչ այնպէսն թուին առնեցուն կամ առաւելագունից 'ի մարդկանէ[1]։ Պիլթոդոր ասէ. Օ՛գոյշ լեր բանիդ քոյ. զի վկայես ուրեմն՝ թէ հաւանականք էին բանք իմաստասէրացս, որոց Ճանաչութիւն զբոլոր ազգին ձգէր յինքն զհաւանութիւն։ Լեւոն ասէ. Ա՛յլ նոքա զամենին շլացուցանէին, իսկ իմաստունքն ոչ ըմբռնէին 'ի պատրանն։ Պիլթոդոր ասէ. Ա՛յս ուրեմն ատենի իմաստնոյն է զատել, թէ իցէ՞ ինչ հաւանական կամ ոչ։ Լեւոն ասէ.

[1] Արիստոտ. Ճարտ. գիրք Ա. գլ. 2. հա. 2. էջ 514 և 517. գիրք Գ. գլ. 1. էջ 584։ [2] Արիստոտ. յալ. պերճախօս. գիրք Ա. գլ. 1. հա. 1. էջ 180։

Լ,ա կարի իսկ քաջ. այլ և զայն յաւելում 'ի տրւեալս սահման, զի ուրեք ուրեք հաւանական այն է՝ զոր բազմագոյնք յիմաստնոց համարին այնպէս, և կամ գէթ իմաստնագոյնք 'ի նոցանէ'. ինդրիցեմ ինչ այլ։ Պիւթագոր ասէ. Ա՛յսպէս է ուրեք զի այնպէս գժուարին է գիտել զհաւանականն՝ զի և բազմագոյնք յիմաստնոց անգիտանան զայն, և իմաստնագոյնք և գէթ հասու լինին այնմ։ Լ՝եւն ասէ։ Ա՛յդպէս իցէ։ Պիւթագոր ասէ. Ա՛ռդ դու յորժամ երկբայիս զհաւանականոց ինչ, անհասից զրեթէ ամենեցուն՝ թէ իցէն իսկապէս հաւանական, երթայցեմ հարցանել զսակաւսն ոմանս խոհականագոյնս յիմաստնոց։ Լ՝եւն ասէ. Ա՛ռ և զայլ ինձէն տամ զվճիռն. բայց զինչ զծանրատաղտուկ ինդրոցդ նրբից կամիցիս զհետ բերել։

Զ՝այս ինչ, ասէ Պիւթագոր, զի դու ոչ խղճես զհետ գնալ կարծեաց՝ որոց դու ելեթ վկայես հաւանականութեանն, և զի խաբկանք հաւանականք բաւականք են գրաւել զմիտս Ճարտարասիրսն և զիմաստակին[1]։ Լ՝եւն ասէ. Ա՛յլ առաջինն յանեղեալ մտաց բարբառի, իսկ երկրորդն ոչ։ Պիւթագոր ասէ. Ա՛յս ուրեմն գիտաւորութեամբ ելեթ մտացն ընդհատք են 'ի միմեանց, որպէս զայս և իմաստասէրքն մատեանս

[1] Արիստոտ. յղ. պերճախօս. գիրք Ա. գլ. 1. հա. 1. էջ 180։

[2] Նոյն, Ճարտ. գիրք Բ. գլ. 24. հա. 2. էջ 581։

գիրք խոստովանին [1]. այլ և ոչ գայթութիւնդ զայդ թողում քեզ։

Իմաստասէս զիմաստակս, զի հաստատեն և եղծանեն զնոյն բան. այլ աղէ ասա, ո՞չ ապաքէն և Ճարտասանութիւն և հակաճառութիւն օրէնս տան պաշտպանելոց զօրութեամբ զներ-հակս [2]։ Լե�ասէ. Լայ, այլ խրատեն զՀամբակն չզեղծանել հնարիւքն [3]. պարտ է նմա հրամուտ գալ, որպէս զի մի շաղեսցի 'ի լարս՝ զոր թշնամին Ճարտար ձգէ զնովաւ [4]։ Պիտոզոր ասէ. Որպէս թէ ոք սուսեր և դաշոյն 'ի ձեռս մանկան տուեալ, ասիցէ. Խրատ թշնամին 'ի վերայ քո հասանէ, և օգտի և փառաց և վրիժուց խնդիր դրդէ զքեզ, միով ևեթ 'ի զինուցս հարցես զնա, և մի զմիւսն 'ի կիր արկանիցես՝ թէպէտ և յայրթութիւն քեզ նովաւ պատրաստիցի [5]։ Զարմանալի արդեաք թուէր ինձ մանկանն ժուժկալութիւն. այլ առ 'ի զփորձ առնուլ իրացն՝ եթէ յայնոցիցի մանկանն ժուժկալել, ելցուք զհետ նորա 'ի մարտ. կամ մանաւանդ թայլ արա ինձ, զի ես ածից զքեզ անդր։

Համարեսջիր թէ առաջի կացցէ քեզ դատապարտել զուսումնիս, որոյ ոչ ստուգիւ յայտնի իցեն յանցանք, և ինձ օրէն իցէ յիշեցուցանել քեզ

1 Արիստոտ. Ճարտ. գիրք Ա. գլ. 1. հա. 2. էջ 514։

2 Նոյն անդ։ Կիկերո. յդ. Ճարտ. գիրք Բ. գլ. 7 և 53. հա. 1. էջ 199 և 243։

3 Պատ. 'ի Գոբգ. հա. 1. էջ 457։

4 Արիստոտ. անդ։

5 Կիկերո. յդ. Ճարտ. գիրք Գ. գլ. 14. հա. 1. էջ 293։

զնոսատս զորս վարժապետք ազգին Հանապազօր համբակաց, և ասացից քեզ. Կարևորագոյն գործ է քո հանգիզ. և առ'ի յաջողել'ի դոյն, պարտ է քեզ հաձել և յորդորել զլսելիս[1]։ Հանձնար և աջողութիւնք մնաց չպակասին քեզ, և ոչ բարեհամբաւութիւն[2]։ Պատրաստ իսկ են նոքա 'ի հաւատալ քեզ[3], այլ յաձախեսցիր զվստահութիւն նոցա՝ յեռեալ'ի յառաջաբանիդ և ուրեք ուրեք 'ի Ձառիդ իմաստս արդարութեան և ուղղութեան[4]. և մանաւանդ յանկուցեսս զդատաւորս 'ի քեզ, գովելով զգիտութիւն նոցա և զարդարակրթով միտս[5]։ Մի անփոյթ արասցես և զաւեանն ածել զքև, և դիւրաւ յաջողեսցի քեզ այս։ Օ՛ի չիք դիւրագոյն ինչ, ասէր Սոկրատ, քան գովել զաթենացիս Մ՛թենս. լաւ ախորժակաց նոցա յերիւրեալիր զբանս քո, և զամենայն որ ինչ մեծարի 'ի նոցանէ ցոյց՝ պատշաձ[6]։

Լ՛սա պիտոյից առաջիկայ դատիդ՝ Համեմատեալիր զՀանգամանս կողմանցն երկաքանչիւր ընդ միմեանս, զբարեմանութիւնս և զյոռութիւնս՝ որովք Հաղորդին. պանծացո զՀնչմարիտ կամ զկարծեցեալ պիտանութեան այնորիկ, որում

[1] Արիստոտ. Ձարտ. գիրք Գ. գլ. 1. հտ. 2. էջ 584։ Կիկերո. յԼ. քաջ Ձարտ. գլ. 1. հտ. 1. էջ 541։

[2] Արիստոտ. անդ. գիրք Ա. գլ. 2. էջ 515։

[3] Նոյն անդ, գիրք Բ. գլ. 1. հտ. 2. էջ 547։ Նոյն, Ձարտ. առ Ղեքս. էջ 650։

[4] Նոյն, Ձարտ. գիրք Ա. գլ. 9. հտ. 2. էջ 530, և այլն։

[5] Նոյն, Ձարտ. առ Ղեքս. գլ. 37. հտ. 2. էջ 643։

[6] Նոյն, Ձարտ. անդ, էջ 532։

ջատագովէին. անբասիր արա զթերութիւնս նորա, կամ մանաւանդ երևեցո զնոսա ծայրայեղ խոտորմունս առաքինութեան։ Օ ընթերցողութի կերպարանեա'ի մեծախոհութիւն, զյանդգնութիւն 'ի քաջութիւն, զշռայլութիւն յառատաձեռնութիւն, զմոլեգնութիւնս ցասման 'ի ցոյցս աղատութեան. և շլացեալս 'ի Հայհայչ Հաւրից քոց դատաւորք '։

Լաւ քանզի պերճադոյն պարծանք հռետորաքանին էն՝ գեղանի և տգեղ, մեծարգի և անարգ զամենայն ինչ ցուցանել [2], մի երկնչիր նկարագրել զոսոխն քո տիսուր երանգօք. ներկեա զգրիչ քո 'ի լեղի, ջանասջիր ստուարացուցանել զթերութիւնս նորա դուշնաբերայս, և նսեմացուցանել զպայծառագոյն առաքինութիւնս նորա [3], և ստուերածս ածել զբարուք նորա. որպէս զի թէ զգոյշ ոք է և խոհական, ցուցցէ զնա կասկածոտ և խորամանկ [4]։

Մանաւանդ 'ի Հարտարախօսաց պատակէն զզոնն նախ քան զհարկանելն զայն և տարպատ արկանել առ ոտս իւրեանց։ Կոչէն նախ զոսոխն, և 'ի փարատել զամենայն կասկած նենգութեան, պատեհ առեալ՝ սուր 'ի կող արկանէն [5]։ Լթէ

1 Արիստոտ. Հարա. գիրք Ա. գլ. 9. հա. 2. էջ 532։
2 Խոսիր. Համեմ. հա. 1. էջ 123։ Պղատ. 'ի Փեդր. հա. 3. էջ 267։ Սէքստ. Եմէ պիրիկ. ընդդէմ Հարա. գիրք Բ. էջ 298։
3 Արիստոտ. Հարա. առ Աղէքս. գլ. 4 և 7. հա. 2. էջ 617 և 620։
4 Նոյն Հարա. գիրք Ա. գլ. 9. հա. 2. էջ 532։
5 Նոյն անդ. գիրք Գ. գլ. 15. հա. 2. էջ 602։

չարարուեստ նենգութիւնս այս զքեզ սարտուցանել, ահաւասիկ քեզ միւս այլ զենոյ ինչ նուազ ահարկու։ Յընկնել զքեզ ոսոխին զօրութեամբ փաստից, փոխանակ պատասխանւոյ՝ հնգ 'ի վերայ նորա ծաղը, և ընթերցցիս 'ի դէմն դատաւորաց զվնիռ պարտութեան նորա՝։ Եթէ հրապուրեալ եղեալ իցէ նորա զոք յանիրաւութիւն, ցոյց զնա մերդապարտ քան զանիրաւեալն. իսկ եթէ խոտորեալ եղեալ իցէ 'ի հրապուրանս, ցոյց դժնդակագոյն զկատարումն քան զհրապուրանս չարեաց։ Ոչ բազում ինչ աւուրք են, զի ակամայ տես իսկ եղէ զայս այսպէս գործելոյ ուրումն 'ի մերոցս Ճարտարապետաց *, որոյ զերկուց հակառակ դատից յանձին կալեալ էր զՀատագովութիւն ²։

Եթէ օրէնքք գրաւորականք հակառակ կայցեն քեզ, 'ի բնական օրէնս լեր ապաստան, և ցոյց արդարագոյնս զնոսա. իսկ եթէ նպաստաստոյգք իցեն քեզ, զիր յայտ յանդիման դատաւորաց՝ զի ոչ է մարթ լուծանել զնոսա և ոչ իւիք պատճառանօք ³։

Եթէ զմեղանս յանձն առեալ ոսոխն, այլ առ

¹ Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 18. հա. 2. էջ 606։ Պիկիր. Ճարտ. գլ. 26. հա. 1. էջ 441։ Նոյն, յդ. Ճարտ. գիրք Բ. գլ. 54. էջ 244։

* Լէւոդամաս՝ որ նախ կալեստրատէայ Ճարտարապետի. և ապա Քաբրիսատայ զրաւաբի եկայ դատաստաւոր։

² Արիստոտ. անդ. գիրք Ա. հա. 2. գլ. 7. էջ 527։

³ Նոյն անդ. գլ. 15. հա. 2. էջ 543։ Սիքսա. Եմպիրիկ. ընդդէմ Ճարտ. գիրք Բ. էջ 296։

անգիտութեան կամ ըստ դիպուածոյ իմն ասիցէ անկեալ՝ի յանցանան, ցոյց նմին՝ զի երկնեալ և մնաածեալ էին չարիքն [1]։ Եթէ երդումն տայ՝ի ցոյց անմեղութեան իւրոյ, ասա՛ աներկմիտ՝ զի ստերդմնութեամբ խնդրէ խուսափել՝ի սպառնացեալ պատուհասէն։ Իսկ եթէ երդմամբ առաջի կայցէ քեզ հաստատել ինչ, ասա՝ զի չիք բարեպաշտագոյն ինչ և ազնուականագոյն քան՝ի դիան ապաստան առնել զիւրաքանչիւր դատ [2]։ Եթէ չիցեն քեզ վկայք, ջանա ցուցանել տկար զզօրութիւն վկայութեան. իսկ եթէ իցեն, ցոյց զայն ամենայն ջանիւք զօրաւոր [3]։

Եթէ լաւ իցէ քեզ՝ի խոշտանգանս հարցափորձի մատուցանել զստրուկս ոսոխին, ասա՝ զի չիք յայտնագոյն քան զայն ապացոյց. իսկ եթէ զքոյսդ զերծուցանել կամիցիս՝ի հարցափորձէ, ասա՝ զի քան զամենայն ապացոյցս կեղակարծ և բազմավտանգ այն է [4]։

Այս ամենայն հնարք զօրավիգն լինին յաղթութեան, այլ պարտ է աներկեւան առնել զայն։ Յարտասանելն քում՝ի դատաւորս առաւել քան՝ի դատ քո ուշ կալջիր. մինչև զնոսա տապաստ արկեալ, ոչ յաղթանակեացես՝ի վերայ ոսոխիդ։ Շարժեսջիր զնոսա՝ի նախանձ և՝ի գթութիւն

1 Արիստոտ. Ճարտ. առ Աղեքս. գլ. 5. հտ. 2. էջ 618։
2 Նոյն, Ճարտ. գիրք Ա. գլ. 15. հտ. 2. էջ 546։ Կուինտիլ. գիրք Ե. գլ. 6։
3 Արիստոտ. անդ. էջ 544։ Կուինտիլ. անդ. գլ. 7։
4 Արիստոտ. անդ. էջ 545։ Կուինտիլ. անդ. գլ. 4։

'ի վերայ Ջատագովելոյն. ազէտք յաչս քո և յո-
լորակս ձայնիդ տպաւորեսցին։ Այլեւ 'ի փղձուկ
հարկանին, և դեղեալ կրիւ 'ի ձեռս նոցա, ան-
կիր գնաքօք ամենայն զօրութեամբ Ճարտարիսս-
սութեան, և կցորդեալ կրիւ նոցա զքոյսդ՝ զբը-
զբուեա զարհամարհանս՝ զզայրոյթ և զսրտմտու-
թիւն նոցա ընդդէմ ոտոխիդ [1]։ Այլ եթէ նշա-
նաւոր ոք իցէ իշխանութեամբք կամ մեծութիւ-
գնախանձ և նոցա զարթո, և լեր ապաստան
յատելութիւնն՝ որ կիս գնայ ընդ նախանձուն [2]։

Արդ լուր ինձ Եւան, ըստ թուոյ հրահան-
գաց էն գլուխք ամբաստանութեանց զքումմէ
արուեստդ. և զարգասիս սոցա 'ի միտ առցես
յահագին բանից բիւզանդացւոյ ուրումն փաս-
տաբանի, որում յառաջ քան զաւուրս զայսոսիկ
հարցանելով իմ՝ թէ զինչ իւրոյ աշխարհին օ-
րէնք յայս ինչ և յայս դէպս սահմանիցեն, ա-
սէ. Որ ինչ հաճոյ է ինձ։

Այլ երբև կամէր Եւան զամենայն ստգտանս
Պղեթոդորի զհաւատոլականէն զՃարտարապետսիւք
և եթ արկանել նա զայրագին ասէ. Այն և, 'ի
զուր. աստանօր զյարակից դժնդակ արուեստին

[1] Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 19. հմ. 2. էջ 607։ Նոյն, Ճարտ. առ Ալեքս. գլ. 37. էջ 646։ Կիկերո. յղ. Ճարտ. գիրք Բ. գլ. 44. հմ. 1. էջ 234։ Նոյն, Ճարտ. գլ. 37 և 38. էջ 451։ Սեքստ. Եմպիրիկ. ընդդէմ քերականաց. գիրք Բ. էջ 290։

[2] Արիստոտ. Ճարտ. գիրք Բ. գլ. 10. հմ. 2. էջ 562։ Նոյն, Ճարտ. առ Ալեքս. էջ 648։ Կիկերո. յղ. Ճարտ. գիրք Բ. գլ. 51. էջ 240։

զեղծմանց են բանք. ոչ այլ ինչ մինչև ցայս վայր 'ի նեղբս ածի, այլ որ ինչ յամենայն Հառս հռետորականս սփռեալ կան, որ ինչ հանապազօր Հարտարախօսք գերահամբաւեալք 'ի կիր արկանեն, որ ինչ զօրհանապազ վարժապետք հըմտութ պատուիրեն մեզ առնել, և որ ինչ քո և իմ ուսեալ է 'ի մանկութենէ։

Ա՛տցուք 'ի վարժարանս՝ ուր հանդիպի մանկըտին յարուեստ Հարտարիւսութեան, որպէս թէ գկաքաւչաց և զթատերախաղից և զըմբշաց խըզիլք առաջի կայցեն։ Ցեռ քանի խնամով կըրթեն զհայեցուածս նոցա և զձայն և զձև և ըզշարժուած։ քանի տաժանաւոր աշխատութիւն ուսուցանեն նոցա, մերթ լեսուլ զդիւրեղծ եբանգսն առ 'ի գունագեղել նոքօք զբարբառ իւրեանց, և մերթ զբարանենգ դեղն խառնել ըզդաւոյ և զբնութիւն։ Ա՛վ խաբէութիւն, ո՛վ անգթութիւն. այս իցեն պերճանք Հարտարիւսութեան, այս սպաս անմեղութեան և Հշմարտութեան։ Ա՛ռուէի յասպաւէն նոցա մտանել, և զբանախիտ յորջ ահագին՝ ուր դառնագոյն քամին թոյնք, և ուր սպանողագոյնք դարբնին զէնք. և այն ևս անակնկալ չարիք, զի զէնքս այսոքիկ և թոյնք վաՀառին խնամակալութեամբ իշխանութեան, և որոց անողորմագոյնս վարին նոքօք՝ զարմացումն և Հանբաւ են վարձք։

1 Աբիսաղա. Հարս. գիրք Պիկեր. Հարս. գլ. 18. հա. Գ. գլ. 1. հա. 2. էջ 584։ 1. էջ 434։

Ել զամենայնն ժողովեցի, որ ինչ գրեթէ յամենայն իրատս հռետորաց մերոց դարանեալ կան թողեալ. այլ ասա ինձ, որ իցէ սահմանն զոր մէ եղեն մեզ բանք, յոյր վերայ հռետորականին կատուցեալ կայ շինուած. ոչ ասպաբէնն յուզել զկիրս դատաւորաց։ Այլ աղէ, և առ ինչ իցէ յուզել. պարտ այն իսկ է հանդարտել զյոյզս նոցին, ուր առաւել քան յամենայն ժամ կարևորն է դատաւորաց խաղաղութիւն զգայութեանց և մտաց։ Բրկածք անակնկալ. զիտէ ամենայն աշխարհ՝ զի կիրք պղտորեն զդատումն և կերպարանափոխ առնեն զիրս յաչս մեր [1], և սահմանի Ճարտարախօսին յուզել զկիրս իւր և զունկնդրացն և զդատաւորաց [2], և էն իսկ՝ որ համարձակին վիճեալ պնդել, թէ յայնչափ սասարիկ և աղմկեալ կրից մարթիցի յառաջ գալ վէճիս արդարակրով։

Ընցցուք յատեանս, ուր կարևորաց իրաց աշխարհին լինին քննութիւնք։ Այս զինչ իցէ անդ տեսանել. փայլատակումն և շանթս արձակեալ 'ի բարձուէ բեմին՝ առ 'ի բորբոքել զեռանդն կրից, և զորձել ահագին աւերածս։ Ամենայնդ կարձամիտ դիմէ անդր 'ի ինդիր զոլութեանց՝ որ 'ի ստահակութիւն կրթեն զնա, և յուզմանն սրտի՝ որ յանիրաւութիւն զնա զառաջանէ։ Այս

[1] Արիստոտ. Ճարտ. գիրք Ա. գլ. 2. հմ. 2. էջ 515. գիրք Բ. գլ. 1. էջ 547։

[2] Նոյն անդ, գիրք Գ. գլ. 7. էջ 590։ Կիկերո. Ճարտ. գլ. 38. հմ. 1. էջ 451։

Ճարտարախօսք անդ ազգ առնեն անդադար՝ ըղ-
գոյշ լինել անձանց 'ի պերճախօսութենէ ասո-
խայն իւրեանց. ապա ուրեմն ինքնակար է Ճար-
տարախօսութիւն. սակայն նա ուղղէ զիրս աշ-
խարհիս, և պատրաստէ սմա զանշուշան կորուստ՝։

Եւ այլ ազգ Ճարտասանութեան, յոր պա-
տրաստին Ճարտարախօսք ոմանք՝ որոց սահենայն
քաջութիւն այն է պաճուճել զկարի իսկ նշա-
ւակ ստութիւնս՝ և զտարապայման աւելաբանու-
թիւնս, առ 'ի նեղբողել զարս դուշնաքեայս, և
զարհամարհս իսկ 'ի մարդկանէ։ Եւ մնանել 'ի
նեղբս այսր մարդահաճութեան, հարկ եղև ա-
ռաքինութեան հրաժարել 'ի զովութեանց մարդ-
կան։ Եւ զգծուծ շարադրածոց նոցա լուել լաւ
համարիմ, թողեալ զգովուն այնոցիկ կամ զպար-
սաւ որոց երկայնամտիցեն ընթեռնուլ զայնս։

Եւ չարեաց աստի արդարութիւն հանապազօր
թէնամանի 'ի սրբարանի անդ իւրում յատենի,
և պետութիւն 'ի ժողովս մեր համախուռքս, և
Ճշմարտութիւն 'ի զովասանական և 'ի գերեզ-
մանական Ճարտասանութիւնս։ Զիրաւի ապա 'ի
ծայր կատարելութեան համարի ածեալ Ճարտար-
խօսութիւն առ մեզ. զրպէս զի իշխեմ ձայնա-
տուր լինել առ յապայ դարուց, զի չկարասցեն
յաւելուլ 'ի դժնդակ ապիրատութիւնս նորա և
ոչ ինչ։

1 Պղատ. 'ի Գորգ. հա. 1. էջ 466։

Ինդ ոմն յաթենացւոց, որ 'ի բազում ժամանակաց պատրաստեր հրապարակախօս լինել առ ժողովուրդն, ժպտեալ արհամարհանօք՝ ասէ. Պատասպարտէ ուրեմն Պլիթոդոր զհարստարխօսութիւն։ Պատասխանի ետ Պլիթոդոր և ասէ. Ոչ զհարստարխօսութիւն դատապարտեմ, այլ զհռետորականն զայն արուեստ, որ հարկաւ զհետ իւր առեալ ձգէ զղեղծումն հարստարխօսութեան։ Աթենացին ասէ. Յոչն քեզ արդեօք պատշաւոք 'ի բաց տարագրելոյ զզարդս լեզուի. սակայն համարեցաւ միշտ և համարեսցի կարևորագոյն փոյթ հարստարախօսի յինքն յանկուցանել զատեանն՝ պարարելով զլսելիս։ Պլիթոդոր ասէ. Այս ինձ, մանաւանդ թէ հիմարութիւնն իսկ և ուղղութեան, այս այսպէս թուի՝ զի պատշաճագոյն գործ հարստարախօսի և միակ պարտք նորա էն տալ տեղեկութիւնս դատաւորաց։

Ինդուստ չհանդուրժեալ միւս այլ ոմն աթենացի, որոյ հարստարութեամբ փաստաբանին բազում անգամ յաղթեալ էր 'ի դատաստանի, ասէ. Այս որպէս պարտ իցէ նոմս տալ տեղեկութիւնս։ Պլիթոդոր ասէ. Որպէս յԱրիսպագին, ուր հարստարախօսն անշարժ և անկիրթ արտասանէ զդատն պարզ և անզարդ ամենևին[1]. և որպէս 'ի Կրետէ և 'ի Սպարտա և յայլ պետութիւնս,

[1] Կիկերո. յՊ. քաջ հարստ. Ա. Արիստոտ. հարստ. գիրք Ա. ԳԼ. 1. հտ. 1. էջ 541։ ԳԼ. 1. հտ. 2. էջ 512։

[2] Լիս. 'ի Սիմոն. էջ 88։

ուր ոչ է օրէն Հարտարախօսի յորդորել զլսելս[1]. և որպէս առ մեզ իսկ՝ յառաջ քան զամն նուազ քան զՀարիւր՝ տեղեկանային գատաւորք, մինչդեռ գատաստանն և ամբաստանեալ անձամբ զդատ իւրեանց վարեին, և չէր մարթ նոցա արտասանել Հառս շարամանեալս 'ի Հարտարախօս գրչաց[2]։

Բ. Ըդ միւսանգամ յառաջինն մեր բանն դարձցուք։ Բ. սացի թէ հռետորականն արուեստ ըստ կարևորագոյն մասին ոչ ինչ ընդ հատ է յիմաստասացն արուեստէ[3], և ցուցի զայն, յայտ արարեալ զի ոչ գործոյք ևեթ իւրեանց, այլ և ըստ սահմանի, զիմեն 'ի նոսն կէտ երկոքին ևս ընդ շաւիղ կամակոր։ Բ. չ. ևեթ իցեն ինչ իւիք ընդհատք 'ի միմեանց, այնու ևեթ են՝ զի Հարտարախօսն ջանայ զրգել զկիրս, իսկ իմաստասէն հանդարտել[4]։

Բ. այց տեսանեմ զ[5] եւն պատրաստեալ հռետորականին սպառնալից և պերճ սպառազինութիւնք 'ի վերայ իմ. այլ 'ի սահման խնդրոյս կալ աղաչեմ, և զմնաս ածել՝ զի հարուածք զորս ուղղէ յիս, անկցին 'ի վերայ գերահանձար իմաստասիրաց բազմաց։ Բ. արթէր առնուլ ինձ պատսպարան զՊղատոն և զԱրիստոտել[6], այլ

1 Ա. Ելիստոտ. Հարտ. գիրք Ա. գլ. 1. էջ 512։ Սիքստ. Եմպիրիկ. ընդդէմ Հարտ. գիրք Բ. էջ 292։

2 Կիկերո. յոլ. քաջ Հարտ. գլ. 12. հտ. 1. էջ 346։ Գուինտիլ. գիրք Բ. գլ. 15. էջ 123։

3 Պղատ. 'ի Գորգ. հտ. 1. էջ 520։

4 Կիկերո. Հարտ. գլ. 19. հտ. 1. էջ 434։

5 Պղատ. 'ի Գորգ. հտ. 1. էջ 463. և այլն։ Ելիստոտ. Հարտ. գիրք Բ. գլ. 24. էջ 581. գիրք Գ. գլ. 1. էջ 548։

վկայութիւնք նոցա անհերքելիք ոչ ինչ են պի-
տոյ՝ ուր ապացոյք մերձ կան հաստատունք։

Լաւ իբրև լսեաց նա 'ի խօսելոյ, խօսել կալաւ
Լեւոն 'ի ջատագովութիւն հաւատոցականին։ Լ.յԼ
օրն տարաժամեալ էր, և մեկնեցաք 'ի բաց։

ԳԼ ԼՈՒԽՍ ՆՈՅՆ

Շրջել Ինքաբարայենգ Լատիկէ, և յարգաց մխիթարեան,
և որ 'ի Սուրբն բովքն. և Պղատոնի զլինելութենէ աշխար-
հիս Ճառք։

Ի ԲԱԶՈՒՄ ուրեք ամարաստան ապարանս ե-
ղէ բազում անգամ զգարունն և զաշունն 'ի բուն,
և անցի բազում անգամ ընդ Լատիկէ. և որ ինչ
'ի շրջելն իմում անդ տեսի զարմանալիս, ասատ-
նօր համառօտեմ։

Նդաստանք իւրաքանչիւր ցանկովք կամ որ-
մովք բաժանեալ են՝. և ըստ հանՃարեղ սահ-
մանադրութեանն, զբաւականելոցն 'ի նոցանէ նշա-
նակք հաստատեալ կան սիւնակք՝ արձանագրեալ
'ի նոսա պայմանք դաշանցն եղելոց ընդ առաջ-
նումն փոխատուի։ Հանգոյն սոցին և առաջի
տանց սիւնակք կանգնեալք յայտ առնէին ամե-
նեցուն, զի 'ի գրաւի եղեալ են տունքն[2]. և չկք

1 Լիս. յԴ. սրբազան Ձի-
թենեայն. էջ 144։ Դեմոսթ.
'ի Կալլիկ. էջ 1116։ Հար-
պոկր. և Սուիդ. 'ի բառն Λ՝ ἐρχτ.
2 Հարպոկր. 'ի բառն Λ՝ στιχτ
Պոլխակ. գիրք Դ. գլ. Ս։

երկիւղ փոխատուին, թէ զուցէ արծաթ իւր յանձնաւոր թից ուստէք փոխատուութեանց վը-տանգիցի։

Տէր անդոյն եթէ ջրհոր կամիցի անդ փորել, և կամ տուն կամ պատուար կառուցանել, հեռի 'ի սահմանակից անդաստանացն պարտի առնել զամենայն. և զչափ հեռաւորութեանն սահմա-նեն օրէնք։ Այս առաւել չէ օրէն նմա դարձու-ցանել յերկիր դրացւոյն զուղիս ինքեալս 'ի բլրոց, որ շուրջ զանդովք իւրովք կայցեն, այլ մարթ է նմա 'ի հասարակաց ուղին ածել զայն[1], և տե-ղանց սահմանակից անդաստանացն է անկ պահել զերկիր իւրեանց յողողմանէ ջուրցն։ Զորք ու-ղիք ուրեք կազմեալ կան յառուս անձրևաց, որ զջուրսն ածեն 'ի բաց[2]։

Այպողոդորայ էր կալուած մեծ մերձ Այդեւ-սիս, և անդր էած զիս 'ի Ժամանակի հնձոց. ծածկեալ էր դաշտն 'ի խարտեաշ հասկաց, և բազմութիւն ստրկաց ընդ սայրասուր մանգաղաք արկանէին զոնն, և խուռնեբամ մանկտին բար-ձեալ զայն 'ի գիրկս, ածէր առ այնոսիկ որ զը-բայսն կապէին[3]։

Այնդ այգն սկսեալ էր նոյ վաստակել[4], և ամե-նայն ընտանեացն պարտէր վաստակակից լինել[5]։

1 Դեմոսթ. 'ի Կալլիկլ. ԺԲ. տող 535։ էջ 1119։
2 Նոյն անդ, էջ 1118։
3 Հոմեր. Եղիակ. գիրք ԺԲ. էջ 1162։
4 Եպիփ. գործք, տող 578։
5 Եւստաթ. Եղիակ. գիրք

Յանկեան միում՝ ի դաշտին ընդ հովանեաւ լայնատարած ծառոյ պատրաստեին արք զիսորտիին[1], և կանայք եփէին զոսպն[2], և արկանէին զալիւրն յամանս ի ջուր եռացեալ ի ձաշ հնձողացն[3], որ քաջալերէին զիրեարս յաշխատութիւն, և հնչէր դաշտն յերգոց նոցա։

Հ՝ասպա բարեկամք
Սփռեսցուք ի դաշտ,
Յամէ արդ, զի կամք։
Խիտ ընդ խիտ վաղվաղ
Հասկք ի Ղեմետրեայն
Ընկցին ի մանգաղ։
Ղոս ի յերկս ի ժիր
Ղփցուհիդ հընձոց
Մեզ հովանացիր։
Հընձեսջիք ատոք
Ամանորաբեր
Ամանորաբեր
Երայս լի հասկօք,
Թէ զհունձս ձեր արդ
Փութայք ժողովել
Ծածանեալս ընդ արտ,
Յա ըզվականակ
Թէ հոսէք զօրան
Ի հողին հիւսիսակ։
Օ՛ն, առէք խրախոյս,

1 Պարապ. Թէոկր. ՝ի գեղջնան 10. տող 54։

2 Թէոկր. անդ։

3 Հոմեր. Եղեակ. գիրք ԺԸ։

Բարուտին զարթեաւ
Ծագէ արշալոյս։
Անցելոյ չէ ժամ
Մինչև նա ի քուն
Դարձցի միւսանգամ՝։

Յայլ տունս երգոյն՝ մերթ զորտոցն նախանձին բախտի, զի է միշտ նոցա ըմպելի առատ. և մերթ զստրկապետին ծաղր առնէին զանտեսութիւն. և է զի քաջալերեն զգործաւորս կասուլ զցորեան 'ի միջօրէի, զի դիւրագոյն յայնժամ 'ի քստոյն հատքն զատանին[2]։

Օրոյան ածեալ 'ի կալ, շուրջ օրան կազմեն բարդ 'ի բարդ. և մի 'ի գործաւորաց կացեալ 'ի միջի, յաջուն զաւազան և 'ի ձախուն փոկ՝ երասանակել նովաւ զեզինն կամ զձիս կամ զեզ-ջորիս, ընթացուցանել զնոսա շուրջ զիւրև։ Լա-ռմանք 'ի գործակցացն վեր 'ի վայր դարձուցեալ զյարդս՝ ընթադրեն արջառոցն կամ զրաստուց, մինչև 'ի փշրել նոցա 'ի սպառ[3]։ Այլք հոսեն ընդ օդս զկասեալն հեծանոցաւ[4], և հողմ քաղցրասիք 'ի ժամանակի հնձոց 'ի նմին ժամու հնչեալ, տա-նի զյարդն և զմեղեղն վայրիկ մի 'ի բաց, և յա-

1 Թէոկր. 'ի գեղջնան 10. տող 54։
2 Նոյն անդ։ Ցիշատ. բա-նաս. կաճառ. գիտութեանց, հտ. 9. էջ 350։
3 Հոմեր. Եղիակ. գիրք Ի. տող 493։ Փլինիոս. յիշատ. գիրք Ե. էջ 863։
4 Հոմեր. Ոդիս. գիրք ԺԱ. տող 127։ Եւստաթի. անդ, էջ 1675։

բեանն տեղայ 'ի վայր. և շտեմարանեն զայն 'ի թրծեալ ամանս [1]։

Եւ յետ ամենայ դարձեալ ելաք 'ի վիճակ Ա. պողոդորայ յայգեկուլթս. և կթեցին մշակք զողկոյզսն կախեալս 'ի ձողաբարձ օրթոց [2]։ Ապայդ մանկտին և մնտաղերամ բաղմութիւն օրիորդաց զկողովսն ուռենիս լցեալ, ածէին 'ի հնձան [3]։ Այնաք 'ի վարձուորայ տերանց նախ քան զկոխել զկուլթսն, առ իւրեանս տան ածել զլաւագունակս ողկուզալից [4], և յարևի դնեն զայն խնամով զաւուրս տասն, և 'ի հովանւոջ զաւուրս հինգ [5]։

Այն օրք 'ի կարասս փայտակերտս պահեն զգինին, և են որ 'ի տիկս կամ յանօթս խեցեղէնս։

Եւ 'ի հնձան հարկանեալ նոցա՝ քաղցրանային 'ի լսելիս մեր երգք հնձանացն, զի այսպէս յեղանակեալ անդ 'ի նոցէ նուագքն կոչին։ Լուաք մեք և այլ երգս 'ի ձաշել կթողացն. և երբեքէ երբեքէ ընդ ժամն տուընջեան՝ յորժամ պար ընդ նուագս խառնէր [6]։

Հնձոց [7] և կթոց [8] ուշադրութեամբք լինի վախճան, յորս առատութիւն ինքնայօրդոր ածէ

1 Եսիոգ. գործք, տող 475։ Պրոկոպ. անդ։

2 Հոմեր. Եղիակ. գիրք ԺԲ. տող 563։

3 Նոյն անդ։ Եւստաթի. հտ. 2. էջ 1163։

4 Աքնակր՝ տաղերգ 50։

5 Եսիոգ. գործք, տող 610։ Հոմեր. Ոդիս. գիրք Ի. տող 123։

6 Հոմեր. Եղիակ. գիրք ԺԲ. տող 572։

7 Թէոկր. գեղջն 7. տող 32։ Քօրսէնի, տարեգր. տաղտիկ. Ճառ. 13. հտ. 2. էջ 302։

8 Թէոփր. Դկարագիրք, գլ. 3։

եռանդն, և ընդ այլեայլ դիցն 'ի նոսա պաշտե-
լեաց՝ զանազանին տնկեն։ Վասնզի ցորեան ու-
բու�ն յաստուածոյ հեաց որ խնամէ զպէտս մարդ-
կան, համարի պարգև. իսկ զինի պարգևեալ
յումեմնէ 'ի դիցն՝ որ խնամէ զբերկրութիւնս.
նմին իբրև Դեմետրեայ մատուցանեն զոհութիւնս
եռանդումն և զգաստ տնտեսութեամբ, իսկ
Դիոնիսեայ ամենայն զառանցանաքն ցնորից։

Մատչին և 'ի ժամանակի սերմանեալ և հնձոց
դալարաց զոհք. և 'ի կութս ձիթենեաց և այ-
լոց մրգաբեր ծառոց երախայրիք և նուէրք յերկ-
նատու պարգևացն ընծային 'ի բաղինս։ Վասն-
զի պարտ համարին հոգոյնք 'ի դէպս յայսոսիկ
զեղուլ եռանդեան սրտի, և ուղղիանել պաշտօն
առ տուիչս պարգևացն։

Բաց 'ի հասարակաց տնտիցս, առանաց իւրա-
քանչիւր Մոտիկէ են տնկք առանձինն. յորս
նուազ է շուք, այլ ցնծութեան առաւել ևս քան
'ի տնտս մայրաքաղաքին. զի դաշտականացն ոչ է
կեղծաւորեալ խնդութիւն։ Հրճուին և ցնծան
համնխմբեալ 'ի տեսարանս գեղջուկս և 'ի խաղս
անմեղս։ Տեսի զնոսա բազում անգամ շուրջ
ժողովեալ, և 'ի միջի տիկ զինւոյ՝ օծեալ ձի-
թով. և մանկտին ոստուցեալ 'ի վերայ նորա
միոտանի, յաձախս զլորմանքն ծաղր ածէր ա-
մենեցուն։ Ընդ առընթեր այլք 'ի մանկանց հա-

1 Հիւսիսք. Երեան Ա՛ՀԵՈՆ. էջ 1646։
Եւսեբի. Յոգիս. գիրք Ա. Պուրնաս. յշ. բն. գլ. գլ. 30։

լածէին զմիմեանս վազվազելով միոտանի[1], այլք դար և կոձատ խաղային[2], և այլք աչակապս[3]։ Եւ այլք դարձեալ անուօրէն ձախր առնուին, մերթ 'ի ձեռս և մերթ յոտս յեցեալ[4]։ Եւ մերթ գլուխ ձգեալ 'ի գետնի, և երկգնդեալ կային ասսի և անսի՝ խաղալ Ցիւ կամ գիշեր[5]։ Կողմն պարտեալ փախստական դառնայր, և յաղթականն զհետ մնանէր՝ առնել իւր գերի[6]։ Զբօսանքս այսոքիկ տղայոց են խաղք 'ի քաղաքին, այլ 'ի գեղջ ոչք կատարեալք ոչ ինչ տոթի համարին գալ զնոքօք։

Եւ թիմենեայ ուրումն 'ի բարեկամաց մերոց զանտեսութիւն ստացուածոց իւրոց յանձնեալ էր 'ի հոգս, և 'ի հաւատարմութիւն միոյ 'ի ստրկաց իւրոց, կացուցեալ զնա 'ի վերայ այլոց[7]։ Այլ յետոյ ուրեմն խելամուտ լեալ, զի աչք տանուտեառն առաւել հսկէն քան զոստիկանացն[8], խորհուրդ կալաւ մեկնել յամարաստան ապարանս իւր Ա՛ՀքարնԷս գիւղ, հեռի 'ի քաղաքէն վաթսուն ասպարիզաւ։

Եւ յետ ամաց ինչ եկաք նմա յայց. և էր նա

[1] Պղտմակ. գլուխ Թ. գլ. 7. յօդ. 121։

[2] Ա՛ՀՀօրա. յղ. խաղուց յանանց. 'ի բառն Ա՛ՀՀուշ.

[3] Նոյն անդ, 'ի բառն Μύια.

[4] Պղատ. 'ի խրախճ. հատ. 3. էջ 190։

[5] Խաղս այս հանգոյն ինն էր այնմ, զոր արդ ուրեք ուրեք խաղան՝ դրամ ընդ օդս ձգելով, և զպատկերն կամ զգիր գուշակելով։

[6] Պլատոն. անդ, 'ի բառն Ο՛στρακ.

[7] Քսենոփ. յիշատ. գլուխ Ե. էջ 855։

[8] Թուկիդ. գլուխ Բ. գլ. 21։

[7] Նոյն անդ, էջ 854։

[8] Թուկիդ. գլուխ Բ. գլ. 21։

առողջացեալ յերբեւեան տկարութենէն, և կին նորա և որդիք կցորդք բարեկենդանութեան նոր՝ յանձնեցին զայն։ Եւ ասէ ցմեզ. Վասն էն կեանք մեր և անցեալ 'ի հոգոց. հեռի է 'ի մէնջ տաղտկութիւն, և վայելեսք յոր կամս։

Եւ շրջեցոյց զմեզ ընդ տուն իւր նորակերտ, և հայէր այն ընդ հարաւ, որպէս զի 'ի ձմերանի տաղտանայր յարեւգալնէ, իսկ յամարայնի 'ի բարձրանալ արեւգալանն՝ պահպանէր 'ի նմանէ [1]։ Ընդ կանանոցն և ընդ առնանոց էին բաղանիքն, որ բառնային զամենայն հաղորդութիւն ստրկաց՝ ծառայից և աղախնայց։ Ամենայն մնաստնս տանն ըստ իւրաքանչիւր անկիցն էր զետեղեալ. զչտեմարանս ցորենոյ 'ի կողմն ցամաք, և զգինետունն 'ի հով տեղւոջ։ Կահք 'ի նմա անսեթեւեթք, այլ ամենայն ինչ կազմիկ և վայելուչ. պատկեր և խունկք վասն նուիրաց, հանդերձանի վասն տօնից, սպառազինութիւն մարտի, վերմակք ըստ այլ և այլ յեղանակաց, սպասք խոհանոցին, աղօրիք ցորենոյ, տաշտք 'ի թրեալ զալիւր, պաշար տարեւոր և ըստ ամենոյ իւրաքանչիւր ամբարեալ. և ամենայն ինչ զիւրագիւտ էր, զի ամենայն յիւրում տեղւոջն կայր՝ ըստ պատշաճ համեմատութեանն զետեղեալ [2]։ Եւ ասէր Լեթիմն, թէ զժպհի թռուի քաղաքացոց անփոփոխս այս կարգ, այլ ոչ զիտեն՝ զի կարձէ սա զկրպուստ

1 Գ.սեռնոմ. յիշատ. գիրք 2 Նոյն անդ. գիրք Ե. էջ Գ. էջ 777. գիրք Ե. էջ 844. 843։

ժամանակի 'ի խնդիր պիտոյից, և իմաստուն մա-
կի պարտ է ամենեսեալ զժամանակ իւր նովին
խնայութիւն՝ որով զշահս վաստակոցն ամենեսին։

Յաւել ապա և ասէ. Ամն մի հանձարեղ և
ժրաջլուխ ամենես 'ի տան իմում կացուցեալ է
իմ, փորձեալ նախ զպարկեշտութիւն նոր. և տը-
ւեալ է իմ 'ի ձեռս նորա ճիշդ համարով զամենայն
կահ և կարասի։ Լակ ես հարցի զնա և ասեմ.
Յա զինչ հատուցանեսնամ վարձս։ Ասէ. Յարգ
և մեծարանս. յորմէ հետէ հաղորդ եղև նա
յանձանձանաց ստացուածոցս մերոց, իւրս հա-
մարի զայնոսիկ՝։ Օ՜նոյն խնամ ունիմք և զարբ-
կաց՝ որ տիրասէրքն իցեն և հաւատարիմք, զի
լաւագոյն մեք քան զայլս ջերուցեալ և զգեցեալ
կան առ մեզ։ Օ՜ամանգամութիւնքս այսոքիկ
խնամոյ՝ երանեալն ածենոցա պատուոյ՝, և 'ի հնա-
զանդութեան ունին զնոսա առաւել քան զսպան-
նալիս պատուհասից։

Բաժանեմ ընդ կնոջ իմում զյանձանձանս,
զամենայն առանին հոգս 'ի նա թողեալ, և ինձ
զարտաքինն պահեալ՝։ Մշակեմ և բարգա-
ւաձեմ զերկիրն զոր հարքն իմ թողին ինձ։ Յա-
լի և մտի, շտեմարանելոյ և բաշխման ցորենոյ
և գինւոյ և ձիթոյ և ամենայն պտղոյ մատակա-
բար նա ինքն է Լաւոդիկ, և նման առանդի ա-
մենայն։ Յա գերդաստանին նա ինքն է վերակա-

1 Փանոփ. յիշատ. գիրք Ե. էջ 845։
2 Նոյն անդ. էջ 855 և 857։
3 Նոյն անդ. էջ 838։

ցու. զկէսս առաքէ 'ի զաշտ՝ գործել զերկիր, այլոց զկտուրս բաշխէ՝ ուսուցանելով նոցա գործել զասր 'ի նիւթ հանդերձից[1]։ Զնականութիւնն նորա քաղցրանան նոցա վաստակք. և եթէ խօթութիւն ինչ ումեք պատահէ, 'ի խնամոց նորա և յիմոցս թեթևանան վիշտք նոցա։ Զորովիւք ընդ բախտ ստրկացն. քանի փոխարինեալ սրժանի են, և իրաւունք են նոցա բողոք ունել։

Զոր անցեալք ընդ բակ մի, ուր էին բազմութիւն մարեաց և բաղից և այլոց հաւուց ընտանեաց Ճարակաւորք[2], շրջեցաք ընդ ասպաստանն և ընդ գոմս անդէոց, և ընդ բուրաստանն՝ ուր պաղպաջէին նարկիս և յակինթ, հողմաճաղիկ, հիրիկ և մանուշակ երփնագոյն[3], վարդք գունակ գունակ[4], և ամ՚ազգք բուսոց հոտեւանաց[5]։ Զոր ասէ ցիս Զուիմեն. Մի ինչ ընդ հոգ մշակութեան ծաղկանցս զարմանացիս, զի սոքօք զմեհեանս մեր և զբաղինս և զպատկերս դից զարդարեմք[6], սոքօք 'ի Ճաշս և 'ի կրօնական պաշտամունս պատկիմք, և զսոսա 'ի սեղանս մեր և յանկողինս սփռեմք, և դիցն իսկ մերոց զհաճոյագոյն նոցա ծաղկունս նուիրեմք։ Զարձեալ զի և

1 Գաւենոփ. յիշատ. գիրք Ե. էջ 839, և այլուր։
2 Հիսիք. 'ի բառն Κόσκινος։
3 Ուիմեն. գիրք ԺԵ. գլ. 9. էջ 683։
4 Թէոփր. առ Ուիմենէոսի, էջ 682։
5 Թէոփր. բուսաբան. գիրք Զ. գլ. 6. էջ 643։
6 Գաւենոփ. անդ, էջ 831։

չէ պարտ մեկկին զդուշանալեայս իսկ ապախտ առնել զշէս . 'ի յղել Յ[Ա]թէնս 'ի շուկայն փայտ և ածուխ[1], մրգ և պարէնս, յաւելում միշտ ընդ նոսա և կողովս ինչ ծաղկանց դալարից։

Լաւ ասա տարաւ զմեզ Լաթիմէն յանդամանս իւր, որ շրջաբերեր ասպարէզս աւելի քան զքառասուն[2]. ուստի հերուն հանեալ էր աւելի քան զՀազար քոռ գարւոյ և քան զուլթ հարիւր մանր գինւոյ։ Վինոորա զրատոր բեռնաբարձք վեց, որ զօր ամենայն ածէին 'ի շուկայն փայտ և այլ աղգի աղգի ատաղձս, և օր ըստ օրէ շահէր 'ի նոցէ երկոտասան դրամակշիռ*։ Լաւ 'ի տրամանջելն նորա զյորդուլթենէ ջուրց՝ որ ողողանէին երբեմն զանդաստանս նորա, ասեմք. Լաւ ընդէր ոչ ընտրես քեզ բնակուլթիւն 'ի կողմանս, որ մեկուսի կան յարկածիցդ։ Լսէ. Դազումք առաջի եղան ինձ փոխանակուլթիւնք շահաւէտք, այլ ասացից ձեզ արդ վասն որոյ իրաց չառի յանձն։ Լաւ ահա բացայա առաջի մեր դուռն, և էր 'ի նեղքս արօտ շուրջ պատեալ 'ի նոմանեաց. և ասէ ցմեզ. Լսա. սասիկ են գերեզմանք հարցն իմոց[3]. ասասանօր՝ ուր կակաչքդ ծաղկեն՝ տեսի զպեղել գերեզմանի հօր իմոց, և առընթեր նորին զմօրն իմոց. և այսր

[1] Արիստոտ. յԱՔարն. տող 212։

[2] Դեմոսթ. 'ի Փենիպ. էջ 1023։

* Յեսայոյս մասանեաս 'ի սեղկութիւնսն. Թիւ ԺԲ։

[3] Դեմոսթ. 'ի Կալլիկլ. էջ 1117։ Դոյն 'ի Մակարտ. էջ 1040։

ստէպ եկեալ՝ կամ ընդ նոսա, և թուիմ տեսա-
նել զնա և խօսակից լինել ընդ նոսա։ Մի՛ և մի
լոյր ինձ մեկնել՝ի սուրբ վայրացս։ Այլ զարձեալ
՝ի պատանեանն՝ որ զայրն զՏեառն նորա, ասէ. Բա՛ստ,
որդեակ, և զիս ընդ ծնողս իմ թաղեսցես. և
յորժամ հասցեն քեզ արկածք վախճանի մօր քո,
հանգուսցես և զնա ասա առ իս. յուշ լիցին քեզ
բանք իմ։ Այս մնասուին. Բ. յդպէս արարիցէ հայր։
Այս արտասուէր։

Արքունեաս զիւղ այգեւէտ է՝. և ձիթաստանք
ծածկեն զՄտրիկէ, զի քան զամենայն ծառս
առաւել մշակի անդ ձիթենի։ Ային և Աթի-
մենեայ բազումք յոյժ, մանաւանդ յեղերս սահ-
մանաց իւրոց. ենն ոմնաչափ հեռի՝ի միմեանց
սնկեալ էր զնոսա, վասն շուրջանակի՝ի բաց
արձակելոյ նոցա զարմատս։ Այ է օրէն ումեք
խլել ձիթենիս յերկրէ իւրմէ աւելի քան զեր-
կուս՝ի տարւոջ, բայց միայն՝ի պէտս դիցն պաշ-
տամանց։ Այ օրինազանցք տուժին ամբաստանո-
զայն հարիւր դրամակշիռ առ մէն մի ոմնաչափ
ձիթենւոյ, և հարիւր դարձեալ՝ի գանձ աշխար-
հին, հանելով տաստանորդս՝ի գանձ մեհենին
Աթենասայ[3]։

Այն բազում ուրեք ձիթաստանք ցանկով պա-

1 Աբիսատ. յԱքարն. տող 511։
2 Քանդոփ. յիշատ. գիրք Ե. էջ 865։ Պլատ. ՝ի Պոլ-
զան, հտ. 1. էջ 91։
3 Դեմոսթ. ՝ի Մակարտ. էջ 1039։ Պեսիս. յդ. օր. ատոմիկ. էջ 391։

տեալ, որոց չէին տեսեալք, այլ Լիթենասայ էին վիճակք[1]։ Օրս 'ի վարձու տուեալ, զհասս նոցա 'ի պաշտամունս աստուածուհւոյն Ծախեն. և եթէ 'ի վարձուորսաց ոք կամ 'ի ձիթենեաց անտի հատանիցէ, թէպէտև զբուն և եթ ծառոյն զկոճղ անպիտան, պատուհասի յաքսորս, և կամ ինչք նորա 'ի գանձ աշխարհին հատանին։ Լսատ ազգի ազգի ձիթենեաց ոճիրքք գործեալք դատին յատեան Լրիսպագին, և նա ի ժամանակս ժամանակս յղէ ոստիկանս 'ի խնամն պահպանութեան նոցա[2]։

Լս մինչդեռ շրջէաքն, և ահա անցանէին առ մեզ հօտք խաչանց, և գամիս առաջի նոցա և գամիս զկնի՝ հալածել զգայլս[3]։ Լս էին խաչինքն ծածկեալք մանկաւ, 'ի մեզարացոց անտի այսպէս հնարաւորեալ՝, առ 'ի պահել զգեղմն նոցա յաղտեղութենէ, և որպէս զի մի 'ի մնցառաց բրդգզեսցին։ Լթէ նրբագոյն այսուիկ ասին գործիցի, չունիմ ասել. բայց սար աստի կեցի, ազնիւ է յոյժ, և զարձեալ ներկարարութիւն անդ յայն ձարտարութիւն ածեալ՝ մինչև անջնջելի տարբացուցանել 'ի գեղմն զերանգս։

Ընդ տեղեկացեալ ուսայ, զի խաչինքն որչափ առաւել ըմպէն այնչափ ևս առաւել գիրանան.

[1] Լիւս. ՅԱրիսպագն, էջ 133։
[2] Նոյն անդ, էջ 136 և 143։
[3] Գեոնդոփ. յԵլեսա. գիրք Բ. էջ 757։
[4] Դիոգ. Լայերտ. գիրք Զ. յոգ. 41։

և առ 'ի ծարաւեցուցանել զնոսա՝ խառնեն ստէպ աղ 'ի Ճարակ նոցա, և մանաւանդ յամարայնի միանգամ 'ի հնգեկի աւուր ջամբ ենն նոցա աղ չափով, կեղեթ մի առ հարիւր ոչխար։ Ուստի զարձեալ զի և կաթն նոցա առատանայ աղիւ [1]։

Ի ստորոտ միոյ 'ի բլրակաց յերեզ արօտոյ 'ի մէջ խնկուտեաց և կենխստայց զետեղեալ կային մեղուանոցք բազումք, և ասէ ցմեզ Աբեթիմն. Տեսէք քանի ժրութեամբ Ճեալն մեղուքդ 'ի հրամանն զշխոյին իւրեանց. զի չեթողու նա կալ դոցա մնգործ, այլ արձակէ զդոսա ծաղիկաքաղս ընդ մարգդ գեղեցիկ, հաւաքել զնիւթն առատ՝ զոր 'ի բջջիջս ապա տայ զետեղել. և ինքն խնամ ունի 'ի գործած մանկերտ գբոց մանուցն, և 'ի մնուցեալ նորածին մեղուաց. յորոց և այլ յօրինեալ պարս [2], արձակէ զնոսա գաղթականս՝ առաջնորդ նոցին տուեալ պարտնայր ընտրանաւ [3]։

Հեռագոյն ևս 'ի բացեայ 'ի մէջ այգեւէտ բլրոց տարածանէր դաշտ. յորում զայգք զայգք եզանց, կէսք զսայլս աղբոց պարարտութեան ձգէին, այլք ընթալ յարօր՝ զտաժանաւոր ակօսն պատառէին [4]։ Աբ ասէ Աբեթիմն. Ուստանօր գարշ է արտ, և արմնիս այս յոյժ ամնիւ է Ամտիկէ [5]։ Ուրաքէն և ցորեան երկրիս է աղ-

1 Աբիստոտ. կենդան. գիրք Ը. գլ. 10. հա. 2. էջ 906։
2 Գալենոսի. յիշատ. գիրք Ե. էջ 837 և 839։
3 Յեսայեայ մատենիս 'ի առ. զեկուցեալեանն. թիւ ԺԳ։
4 Եզեկիել. զան. պատմ. գիրք Ե։
5 Թեոփր. բուսաբան. գիրք Ը. գլ. 8։

նիւ, և հայ նորա ախորժաճաշակ, այլ ոչ որ-
պէս զբիովտացւոց աշխարհին ստածիչ։ Այ 'ի
փորձոյ իսկ իրացն բազում անգամ ցուցաւ, զի
ամենեքեան բիովտացիք երկուս հնգեերիր մնասուն ա-
ւելի ուտեն ստ ցորեան քան յաշխարհին Իս-
ռեանց[1]։ Այսց սակայն Պիովտիա սահմանակից է
մեզ. տես ինձ քանի սակաւ ինչ զնահանգին
փոխէ զօրութիւն։ Լաւպէտ և այլուր իսկ զնոյն
է տեսանել. զի Սաղամինա գրեթէ Թեւակոխէ
Պոտիկէ, և անդ ցորեան վաղագոյն յոյժ 'ի
հունձս հասանէ քան առ մեզ[2]։

Տակաւ քաղցրանային առ իս ամենայն զոր լսէի
և զոր տեսանէի. և հասու լինէի տակաւ, զի եր-
կրագործութիւն արուեստ ոչ 'ի տիսմար վարժս
հաստատեալ էր, այլ 'ի բազմաժամանակեայ զնն-
նութիս։ Այ ասէր ցմեզ Աբիմեն. ՅԱրիստո-
սէ թուին ածեալ այսր առ մեզ նախակրթու-
թիւնք արուեստին[3], և 'ի մէնջ առ այլ ազգս
Աշխարհ տարածեալ. նմին իրի և բազումք 'ի
նոցանէ զերբախայրիս հնձոցն ամի ամի ածեն մեզ
'ի նուէր հնորհակալութեան[4]։ Պիտեմ զի այլք
յազգաց Աշխարհ իւրեանց համարին զայս պարտ-
ծանս[5], այլ առ ինչ իցէ վիճել զպարծանաց. կա-
բեւորագոյնք յարուեստից ծնան առ հնագոյնս

[1] Թեոփր. բուսաբան. գիրք Ը. գլ. 4. էջ 932։
[2] Նոյն անդ. գլ. 3. էջ 913։
[3] Դիոդ. գիրք Ա. էջ 13. 14 և 25. գիրք Ե. էջ 336։
[4] Խոսք. Նեբրդ. հտ. 1. էջ 133։ Յուստին. գիրք Բ. գլ. 6։
[5] Կոսէ. յղ. սկզբ. օրինաց. հտ. 2. էջ 177։

յաղգաց, և սկիզբն նոցա այնչափ առաւել է գերապանծ՝ որչափ է աղօտ։

Ա՛շակուլթեանն արուեստ փոխեալ Յունաղայ, բարգաւաճեաց 'ի փորձ կրթութեան. և մատենագիրք բազմ ժողովեցին զհրահանգս արուեստին 'ի գիր։ Զերահուչակ իմաստասէրքն, Զենոկրիտոս և Ա՛ռքիտաս և Յակիբարմ, աւանդեցին մեզ զվաստակոց երկրի տեղեկութիւնս պիտանիս[1]. և յառաջ քան զդարս բազումս Եսիոդոս 'ի մի 'ի քերթուածոցն իւրոց երգեաց զայնասիկ[2]։ Ա՛յլ երկրագործի ոչ է պարտ կարի իմն պատկառ կալ վճռոց նոցա, այլ ուսանել ինչ և 'ի բնութենէ, և յաւելուլ ինչ յօրէնս նորա։ Ա՛ռ սեմ. Ա՛պա ուրեմն եթէ էր ինձ երկիր 'ի մշակութիւն, չբաւէին ինձ խրատք մատենագրացդ՝ զորս ասացեր։ Ա՛սէ. Այ. զի թէպէտ և խրատս գերազանցս աւանդեն, այլ ոչ ամենայն երկրի և ոչ ամենայն նահանգաց այնոքիկ անխտիր պատկանին։

Եթէ երբէք զաշխուատանս զայս լիցի քեզ յանձն առնուլ արուեստ, նախ քան զամենայն ջանացայց խելամուտ առնել զքեզ՝ զի զամենայն խնամն և զժամանակ քո պարտ է քեզ տալ երկրի, և զի որչափ առաւել հոգասցիս դու զնմանէ նոյնչափ և նա հոգասցի զքէն[3]. զի արդարակորով է

1 Ա՛ռքիտաս. յղ. հաս. գիրք Ա. գլ. 14. հա. 2. էջ 308։ Վարդ. յղ. գիրք. Ի. բաց. գիրք Ա. գլ. 1։

2 Եսիոդ. գործք և տիւք։

3 Քսենոփ. յիշատ. գիրք Ե. էջ 868։

նա, և վասն այն և եթէ բարերար։ Յաւելից ա-
պա 'ի պատուէրս յայս զօրէնս հաստատեալս 'ի
փորձոյ բազմահոլով զարուց, և խնդիրս զօրս
դու քեզէն լուծանիցես կամ յայլոց ուսեալ. և
ասացից. Ինտրեա քեզ վայր բարեբաստ [2], և
միտ դիր գոյութեան երկրիդ, և ըստ բերոյ իւ-
բաքանչիւր պատշաճ պարարտութեան [3]. ուստի
թէ երբ զաղգի ազգի հողս խառնել պարտ իցէ
ընդ միմեանս [4], և երբ հող ընդ աղբ կամ զաղբ
ընդ սերմանս խառնել [5]։

Լաւ եթէ ցորենոյ առաջի կայցէ վաստակ, յա-
ւելից. Յաճախեա զաշխատութիւն. մի զհատ
դեռահատաք աւանդեսցես երկրի, այլ զ'ի հերուն
ժողովեալն [6]։ Սերմանեսջիր կանուխ կամ անա-
գան ըստ փոփոխել յեղանակին [7], և խիտ կամ
անհոծ ըստ անօսրութեան երկրին. այլ միօրի-
նակ ընդ ամենայն երկիրն սերմանեսցես [8]։ Լինի
ամբառնայ վաղագոյն դալար ցորենոյդ, հնձես-
ջիր զայն կամ մանանանդ արածեսջիր խաշն 'ի
դալարսոջ անդ զի առաջնումն փնասի երբեմն
ցորեան, երկայնին ոճք, և հասակքն լինին ոսկիք։
Լինի ցօղունքն իցեն ամեցունք, մի մատ առ կա-

1 Քսենոփ. յիշատ. գիրք Ե. էջ 832։
2 Թէոփր. յղ. պատճ. բուս. գիրք Գ. գլ. 1։
3 Նոյն, բուսաբան. գիրք Ը. գլ. 8. էջ 946։
4 Նոյն, յղ. պատճ. բուս. գիրք Գ. գլ. 25։
5 Նոյն, բուսաբան. գիրք Ի. գլ. 3. էջ 792։
6 Նոյն անդ, գիրք Ը. գլ. 11. էջ 962։ Պլին. գիրք ԺԸ. գլ. 24. հա. 2. էջ 127։
7 Քսենոփ. անդ, էջ 861։
8 Նոյն անդ։

Հնման հնձեսցես. զի թէ այրես ապա զխոզանն, պարարտասցի երկիրն։ Լցին շտեմարանք քո անխոնաւք, և առ՝ի պահպանել՝ ի նոսա ընդ երկար զցորեան՝ զգոյշ լեր մի տարածանել զայն, այլ շեղջակուտեսջիր, և ջուր զնովաւ սրսկեսցես՝։

Բազում և այլ ինչ խրատս զվաստակոց ցուրենոյ մանրամանամաբար ետ մեզ Լուքիմեն. և ապա առաւելագոյն ևս զմշակութենէ այգեաց խօսեցաւ, և ասէ.

Վիտելի է զորակ որթոյն զոր տնկեալք, թէ որպիսի ինչ խնդրիցէ խնամն, և զինչ առ՝ի բարուք պտղաբերութիւն։ Բազում ազգի ազգի հնարքք յայլ և այլ մասունս յայտսիկ մշակութեան պատկանաւորք, և յոլովք խակ յայնցանէ հաւկառակք միմեանց, մանաւանդ էն՝ի կողմանս կողմանս Լչլադայ։

Զրեթէ ամենայն ուրեք՝ի խեչակս հաստատին որթք[2]. մի անգամ՝ի քառեակ և յաւելի ևս ամն արկանելի է զնորոք աղբ, զի յաճախագոյնն քան զայն խանձէ զարմատս նոցա[3]։

Լրիցագոյն խնամն՝ի յատուցն նոցա պարտ է ունել մշակին. զի գործ առաջի կայնմա զօրաւոր և պարարտ և տեղոյ յարդարելոյ զայգին[4]։

Որթ նորատունկ յերկիրս անգործ մի յա-

1 Թէոփր. յղ. պատմ. գիրք Բ. գլ. 25։ բուսոց. գիրք Դ. գլ. 15։ 3 Թէոփր. անդ. գիրք Գ. 2 Քսենոփ. յիշատ. գիրք գլ. 13։ Ե. էջ 866։ Թէոփր. անդ. 4 Նոյն անդ. գլ. 19։

տանիցես յառաջ քան զերիր սմ, իսկ յերկիր վաստակեալ 'ի բզմի ժամանակաց՝ անոգան եւս[1]։ Իսկ յաղագս ժամանակին յօտելոյ կէաք պատուիրեն կանխել քան զգարունն, զի եւ 'ի ձմերայնի և 'ի գարնայնի վնասակար է յօտելոյ. քանզի դժուարին է յառաջնումն սպիտանալ վիրացն, և վտանգ է ականց որթոյն ցրտակէզ ցանաքելոյ. իսկ յերկրորդումն սպառելոյ հիւթոյ արտասուացն, և ականցն որ մերձ 'ի վիրաբերանն կան՝ ողողմամբն ապականելոյ[2]։

Իսկ այլք ընդ զորութեան երկրին սահմանեն զժամանակն. զի եթէ ազազուն է երկիրն և անջրդի, յաշնայնի պարտ է յատել զորթս. եթէ ջրարբի և ցուրտ, 'ի գարնայնի. իսկ եթէ ոչ անջրդի և ոչ ջրարբի, 'ի ձմերայնի։ Այսու օրինակաւ առաջինք ոչ կորուսանեն զհիւթն կարևոր, իսկ յետինք զաւելորդն և եթէ կորուսանեն. և ամենեքին առհասարակ բերեն զինի ազնիւ։ Այս հաւաստիս առ այն՝ թէ պարտ է յերկիր ջրարբի յապաղել զյատումն մինչև ցգարուն որպէս զի հոսեսցէ մասն ինչ 'ի հիւթոյն, ածէն զայն՝ զի սովորութիւն է ընդ անջրպետս որթոց սերմանել գարի և բակլայ՝ որ ծծեն զխոնաւութիւն երկրին, և խափանեն զաճումն աւելորդ ուռոց նոցա։

Դարձեալ և 'ի չորին[3], թէ երկայն եթէ

[1] Թեոփր. յԺ. պատմ. բուսոց. գիրք Դ գլ. 18։
[2] Նոյն անդ. գլ. 20։
[3] Նոյն անդ. գլ. 19։

կարէ՞ պարտ իցէ յատանել զուռս, երկպառակին մէջքէ։ Վասն զի ասեն զօրութեան տեսկոյն կամ երկրին զործեն զյատումն, այլ զի ասեն զաղղոյ բաւնակացն. զի եթէ ուղղելոյ են բարունակք, բազմագոյն թողլի է 'ի նոսա ուռս և կարճագոյնս յոյժ, որպէս զի առատ բերցեն ողկոյզս. իսկ եթէ սակաւ իցէ 'ի նոսա ուղիղ, նուազ և երկայնագոյնս թողլի է։

Որթք որ բազում արձակեն բարունակս և բերին ողկոյզ սակաւ, զուռս ծայրից նոցա բարձանց փոքր ինչ յապաւելի է, իսկ զնոսարհագոյնս՝ աւելի. որպէս զի մերձ յարմատն զօրացի որթն, և բարունակք ծայրիցն բազում արասցեն պտուղ։

Օ՞նորատունկ որթոց պարտ է կարճատել յոյժ զուռս, որպէս զի ուռճասցին. քանզի որ նուազ յապաւին որթք՝ ապաքէն առատ պտղաբերին, այլ վաղ կոմնչին[1].

Ռեմզազգի ազգի ինանն կարևորս այգեաց[2], թողում և զայլս բազումս՝ որոց յայտ է պիտանութիւն 'ի փորձոյ։ Սովոր են մէջքէ թեթև ինչ փոշի 'ի վերայ ողկուզացն ածել՝ առ 'ի պահպանելոյ 'ի կիզմանէ արեգական, և վասն այլոց իրաց՝ որ երկայնագոյն կարօտին ճառից[3]։ Զի զի և զնոսն ինչ 'ի տերևոցն կապտեն, առ 'ի վաղագոյն ժամանումն խաղողոյ 'ի տապոյ արեգական[4]։

1 Թէոփր. յՀ. պատմ. բուսոց. գիրք Դ. գլ. 20։
2 Նոյն անդ, գլ. 21։
3 Նոյն անդ. գլ. 22։
4 Քսենոփ. յԻշատ. գիրք Ե. էջ 866։

Լեթէ 'ի մանկութիւն անդրէն դարձուցանել կամիցես զբիթ զառամեալ մերձ 'ի ցամաքել, բրեսջիր առնուաւ փոս 'ի կողմանէ, հատ սրբեա զարմատս նորա, արկ 'ի բրած անդր աղբ և պարարտութիւնս, և ծածկեսջիր զայն հողով։ Յամին առաջնում զբեթէ ոչ ինչ պտղաբերեսցէ, այլ յետ երից կամ չորից ամաց յառաջին կորովն դարձցի։ Լաւ 'ի տկարանալ նորա դարձեալ, բաժակեա 'ի միւս կողմն. և 'ի լրումն տասնեկի ամաց արարեալ նոյնպէս, անծերանալն զործեսցես զայգին։

Զբ 'ի զործել զհատս խաղողոյ անկուտ, առցես զմի յուռոյ, և ձեղքեսցես սուղ ինչ զստորոտն. և զուղղն 'ի բաց հանեալ՝ կցեսցես դարձեալ զձեղքուածն, և թաց թղթով պատեալ զայն անկեսցես յերկիր։ Նոխալ ևս յաջողէ փորձն, եթէ նախ քան զանկել զուռն՝ պատրաստեալ զստորոտ նորա ըստ օրինի դնցես 'ի սոխ ծովային։ Այն և այլ ևս հնարք առ 'ի գործել անկոբիլ զխաղող[2]։

Կամիցես անդատին 'ի նմին որթոյ առնել ողկոյզս խաղողոյ սպիտակ և սեաւ և խառն յերկոցունցն[3]։ Զգցես ուռս յերկաքանչիւր տեսակէ, և ջաղխջախեալ զվերին ծայրս նոցա՝ խառն

[1] Թէոփր. բուսաբան. գիրք Դ. գլ. 14։

[2] Նոյն. յղ. պատճ. բուսոց. գիրք Ե. գլ. 5։ Կոլում. յղ. ծառոց։ Պլին. գիրք ԺԷ. գլ. 21։

[3] Թէոփր. անդ։

'ի միասին կապեսցես միատարը, և սնկեսցես զածան երկաքանչիւր յերկիր։

Այսպա հարցաք զ[1]չեթիմեն զանձարոց և զծառոց մրգաբերաց, և ասէ ցմեզ. Անձարքք վաղագոյն բուսանին յերկամեայ և յեռամեայ սերմանց[2], և են՝ որոց ստածիչ է ջուր աղի[3]։ Ապրընգեանի* քաղցրագոյն առնէ պտուղ, եթէ սերմն նորա թրմեսցի զաւուրս երկու 'ի կաթն[4]։ Աչեցուն է յերկիր ջաղբի 'ի բնէ, քան 'ի պարտեզս ստեպ ոռոգեալ[5]։ Կամիցիս և ևս վաղվաղել զբոյս սերմանն. սերմանեա յաղկր, և եղկ ջրով ոռոգեա զայն. բայց գիտասջիր զի ոռոգեայն 'ի ջուր ցուրտ համեղագոյն առնէ պտուղ։ Ի՞նչ 'ի ստուարագոյն գործել զվարունգ, խնամ կալցիս 'ի կերպարանել պտղոյն՝ ծածկել զայն անօթով, կամ՝ 'ի խողովակաձև ուրեք մուծանել։ Լաւ առ 'ի պահել դալար զպտուղն, յանօթ փակեալ կախեսցես զայն 'ի ջրհորի[6]։

Օձառս յաշնանի կամ մանաւանդ 'ի գարնանի սնկեսցես։ Հառաջագոյն աւելի քան զամ մի պարտ է զփոն պատրաստել[6], և թողուլ զայն բաց ընդ երկար առ 'ի բեղնաւորելոյ զայն օդոց։

1 Արիստոտ. առաջարկ. յօդ. 20։
2 Թէոփր. յղ. պատմ. բուսոց, գիրք Բ. գլ. 7։
* Յեռակոյս մասանէս 'ի տեղեկութիւնսն. թիւ ԺԹ։
3 Թէոփր. անդ, գիրք Գ. գլ. 12։ Կոլում. յղ. գեղ. երաց, գիրք ԺԱ. գլ. 3։
4 Արիստոտ. առաջարկ. հա. 2. էջ 776։
5 Նոյն անդ, էջ 773։ Թէոփրաստ, յղ. պատմ. բուսոց, գիրք Ե. գլ. 6։
6 Թէոփր. անդ, գիրք Գ. գլ. 5։

Ի՝սա ցանաքուտ կամ ըստ խոնաւ գոյութեան երկրին գործի չափ փոսցն. ունելով ըստ յաչախ սովորութեան երկու ոտնաչափ և կէս 'ի խորութիւն, և երկու ևեթ յընդարձակութիւն[1]։

Օ՝գոստիկ Լեթիմենեայ ձառելով, յաւել. Ի՝նչ զվաստակս բարգաւաճելոց ևեթ ազգաց պատշաճս և զսովորակսն 'ի մէջ բերեմ։ Լեռ ասեմ. Վասն իրի և ոչ յոյժ առ նոսա զարմանալս։ Ի՝սաբէ, քանի ժամանակաց, և քանի գնուութեանց մնաց իցեն արդեաք լեալ արգասիք դիտել և գիտել զպէտս և զարտուղութիւնս և զդարմանս բնութեան, առնել զնա հնազանդ, և զարդիւնս նորա այլակերպս և կատարելագոյնս գործել։ Ի հասանելն իմ Յեռլադա, զարմացայ ընդ աղբել մշակաց զծառս և ընդ յօտել զնոսա. այլ յոյժ առաւել կալան զնս զարմանք 'ի տեսանել պտուղս՝ զորոց փոքրկագոյն զկորիզս հնարաւորեալ է նոցա և յաւելեալ զթամբն[2], և 'ի տեսանել դարձեալ զայլս 'ի պտղոց և մանաւանդ զնուռն ստուարացեալ անդէն 'ի վերայ ծառոյ փակեալ յանօթ թուրծ, և ծառս՝ ազգի ազգի բերելով պտուղս, և օտարածին բերովք զկողերս նոցա ծանրացեալս։

Լեթիմեն ասէ. Պատուաստիւ գործի այդ, որով և զտիպ և զդաժան պտուղս անտառային

[1] Քսենոփ. յիշատ. գիրք Ե. կէ 864։

[2] Թէոփր. յղ. պատմ. բուսոց, գիրք Ա. գլ. 18։

ծառոց անուշելոյ զտան հնարք՝։ Որպէսզի ա-մենայն ծառք պարտիզաց առին զփոքր հնարիցն, այլ յառաջագոյնս ծառք հանեսցեն. զի թզենի՝ի թզենւոջ սովորաբար պատուաստի, և տանձի՝ի խնձորենւոջ, նմանապէս և այլք։

Պաղաղոյն պտղախոյծի թզենի հարեալ՝ի մեղրակաց, որ գոյանան՝ի պտուղս վայրի թզենւոյ. նմին իրի և անկեն զայն առընթեր ընտանի թզենեաց[2]։ Որայց ազնուագոյն է իւրովի խայծեալն. զոր և պտղավաճառք ազգ առնեն՝ի շուկայս[3]։

Օնոնենւոյ ասեն թէ քաղցրագոյն պտղաբերէ ոռոգեալ՝ի ջուր ցուրտ, և պարարտացեալ յաղբ խոզի. և թէ նշենի հասեղագոյն առնէ պտուղ, բեւեռաւ ընդ բունն հարեալ, և հոյզս առժամանակ մի՝ի բաց ծորեալ՝. և դարձեալ թէ ձիթենի ոչ պտղաբերէ հեռի՝ի ծովէ աւելի քան զերեքարիւր ասպարէզ[5]։ Յաւելուն և եւ՝ զի ոմանց՝ի ծառոց յայտնի ինչ ազդեցութիւն է՝ի վերայ այլոց ծառոց. զի ձիթենւոյ մերձ՝ի վայրի նռնենիս հաճոյ է կալ[6], և ընտանի նրբնենւոյ մերձ՝ի մրտենի[7]։ Այս զի դարձեալ հարկ

1 Արիստոտ. յդ. բուսոց, գիրք Ա. գլ. 6. հտ. 2. էջ 1016։

2 Նոյն անդ. էջ 1017։ Թուրքիոր. ուղեւոր. յաբանելս, հտ. 1. էջ 338։

3 Թեոփր. յդ. պատմ. բուսոց, գիրք Բ. գլ. 13։

4 Արիստոտ. անդ, գլ. 7. հտ. 2. էջ 1017։

5 Թեոփր. բուսաբան. գիրք Զ. գլ. էջ 550։

6 Արիստոտ. անդ. գլ. 6. էջ 1017։

7 Թեոփր. յդ. պատմ. բուսոց. գիրք Բ. գլ. 9. էջ 243։

է թէ և 'ի ծառս և 'ի բոյս իցեն արու և էգ ։ Բանզի այս ոչ միայն 'ի համեմատութենէ կէնդանեաց ընդ այլ յեկից յայտ է, այլ և յարմանենեաց՝ որոց էգք բեղուաւորին յաղուամանզիցն կամ 'ի փոշւոյն, որ 'ի ծոց ծաղկան արուին զոյանայ [2] ։ Այս Հելլադիոս և 'ի մերձաւոր անդր աշխարհս է տեսանել. զի Հելլադա արմատենիք ամբարձուղէշ առ 'ի զարդ պարտիզաց ուռենայեալք, ոչ պտղաբերին. և կամ թէ բերեն և պտուղ, ոչ երբէք ածեն 'ի ժամանումն [3] ։

Պտուղք Հիտիկէ քաղցրագոյնք են առ հասարակ քան յայլ մերձաւոր գաւառս [4]. և այս ոչ այնչափ Ճարտարութեան բնակչացն արդասիք են, որչափ նահանգին աղդեցութեանն։ Ո՞զիտէ զի թերևս նոցն և զթթութիւն կիտրմիցդ գեղաւորաց կախելոց զկողէրց ծառոյդ քաղցրացուցցէ, զի դեռ և ածաւ դա յաշխարհէն Պարսից Հելլէնս [5] ։

Այս ամենայն Լեթիմեն մատգիւրագոյնս Ճաւէր մեզ զվաստակոց երկրի, զմայլեալ քաղցրութեամբ շինական կենաց։ Յաւուր միում ընդ երեկս բազմեալ էաք առաջի տան նորա 'ի սեղան ընդ հովանեաւ սօսեաց խոնարհելոց ըզ-

[1] Աբիստոտ. յդ. բուսոց, գիրք Ա. գլ. 2. 1011։ Թէոփր. բուսաբան. գիրք Գ. գլ. 3. էջ 146։

[2] Թէոփր. անդ. գիրք Բ. էջ 113։

[3] Նոյն անդ. գիրք Գ. գլ. 5. էջ 124։

[4] Աբիստոտ. առաջարկ. հա. 2. էջ 774։

[5] Ընտիրսն. առ Ալեն. գիրք Գ. գլ. 7. էջ 84։ Սալմասն. հրահանգք 'ի Պլին. էջ 956։

մեօք, և ասէ ցմեզ. Յորժամ ընդ անդաստանս իմ Ներմիմ ամենայն ինչ զուարթ և գեղածիծաղ է յաչս իմ։ Հունձքս այսոքիկ և ծառք և բանջարք վասն իմ են, մանաւանդ թէ վասն կարօտելոց՝ զորոց խնամեմ զպէտսն։ Այլ պատրաստս ինձ քաղցունս երբեմն հնարիմ առ'ի յաձախել զբերկրութիւն վայելչութեան կենացս. թուի ինձ յաւելուլ երկրի զինաման իւր մինչև 'ի զորով, և զի կանխեն քան զպտուղս ծաղիկք՝ որպէս զի բարեբարութեանցն առ մեզ զուարթ առատս պարտ է գոլ։

'Այսոքանձ առանց հակառակութեան է ընդ իս և ընդ դրացիսն իմ. զան յաձախս առ իս, և բաղմին ընդ իս 'ի սեղանս՝ որ բարեկամաց եւեթ իմոց պատրաստեալ է։ Վասահք և անկասկածք ձառս արկեալ խօսիմք ընդ միմեանս, և յայտնեմք ի բերաց զհնարագիտութիւնս մեր. զի իւրաքանչիւր ումեք 'ի մէնք, յոյժ այլ աղգ յայլոց ձարտարագոյն հնարագիտաց, այնչափ փոյթ է 'ի հրամտութիւն այլոց որչափ անձին'։

Այս ասա դարձաւ առ աթենացիս ոմանս՝ որ այն ինչ եկեալ էին 'ի քաղաքէն, ասէ. Հանրիք զուք կեալ ազատք 'ի շրջապատ պարսպաց ձերոց. այլ զաղատութիւնդ զայդ, զոր շնորհեն ձեզ օրէնք, բառնայ անխնայ բռնաւորութիւն քաղաքաժողով կենակցութեան։ Որոգն հատանելոյ աւագութեանց և զպարտս այնոցիկ կատա-

1 Գաղենոս. յիշատ. գիրք Ե. էջ 858։

բելոյ, հնարք շնորհս գտանելոյ առաջի հզօրաց, զգուշութիւն առ 'ի զերծանել յասպիրատուութեանց, պարտք և պատշաճք խստագոյնք քան զկարգաց բնութեան, հարկ հանապազորդ 'ի զգեստս, 'ի գնացս և 'ի խօսս, անբերելի ծանրութիւն անգործութեան, յամր հալածանք ծանրատաղտուկ մարդկան, և զի՞ մի՞ թուիցեմ, չիք ինչ 'ի գերութեանց որ ոչ զձեզ կաշկանդեալ ունիցի։

Շ քեզ էն տօնք ձեր, այլ մերքս զուարթք. բերկրութիւնք ձեր վեր 'ի վերոյ և վաղանցուկք, մերքս իսկականք և կայունք. և բնաւ իսկ աւագութիւնքդ ձեր կացուցանիցէն զոք 'ի գործ ազնուականագոյն քան զՀրահանգս արուեստիս, առանց որոյ ամենայն ճարտարութիւն և վաճառականութիւն կործան անկանիցի[1]։

Շ նշիցէք երբեք յոսկեձեղուն ապարանս ձեր զօդս զայս զուարար, որ ընդ գալարագեղ կամարաւս փարի. և ճաշք ձեր բազմածախք իցէն լաւագոյնք քան զտաշտս փրփրագեղ կաթինդ՝ որ արդ իսկ ահա կթեալ, և քան զախորժահամ մրգունքս ձեռօք իսկ մերովք քաղեալ։ Այլ զոր համ՝ զ յաւելուցուն 'ի կերակուրս մեր վաստակք, որ և 'ի սառամանիս ձմերայնոյ և 'ի բոցակեզ տօթ ամարայնի ցանկալի են մեզ[2], և զորոյ ըստ խնջ աշխատութեանն քաղցր է բժշկել մերթ 'ի

[1] Քսենոփ. Յիշատ. գիրք Ե. էջ 831։
[2] Նոյն անդ. էջ 832։

թանձրախիտ մայրիս անտառին 'ի շունչ զեփիւռից՝ որ 'ի դալարոց 'ի քուն հրաւիրէին, և մերթ առ ձարձատիւն հրատին՝ որում արկանեմ ձարակ զկոճեղս ձեռատունկ խնցս ծառոց. ուր մանկունքս իմ հանդերձ մարքն իւրեանց կան առ ինև, միշտ իակ ցանկալիք խանդակաթ սիրոյ. և ուր պատսպարիմ անքոյթ 'ի բքայոյզ մրրկաց, որ շուրջ զընակութեամբս իմով մնչեն։

Դաբէ. զինչ է բարեբաստութիւն, եթէ ոչ առողջութիւն հոգւոյ. և եթէ այսպէս իցէ, ուր այլ մարթիցի գտանել զայն, քայց ուր պէտք ընդ ցանկութիւնս 'ի կշիռ հաւասարութեանն կան, ուր աշխատութեան յաջորդէ միշտ հանգիստ, և ընդ հոգս կցորդէ միշտ խաղաղութիւն։

Դազում և այլ ինչ խօսակցութիւնք եղեն մեզ ընդ Լեթիմնեայ. և զայն ևս յիշեցաք նմա, զի Վեսեոսիան ուրեք ուրեք 'ի գիրս իւր ' առաջի գնէ ձարտար մշակաց վարձս ոչ արծաթոյ, այլ գգուանաց պատուոյ. և ասէ ցմեզ. Արթէր արդեօք վարձուցդ այդոցիկ խրախուսել զմշակութիւն, այլ պետութեանն այնպէս զլաղեալ 'ի վարձատրել զանգործ և զհզօր որեարն, զի չիք նմա պարապ խորհելոց զքաղաքացեաց պիտանեաց անուշանիցս։

Լաւ մեկնեալք Դաքարնեայ գեղջէ, ելաք անդրէն 'ի Դիոլտիա. և տեսաք զՀնանապարհայն բերդս ամրապարիսպս բարձրաբերձ աշտարա-

1 Քսենոփ. Երր. էջ 916։

կօք՝ զՓիւղէ, զԴեկեղիա, զՀռամնոն, այլովքն հանդերձ։ Այսմանք աշխարհին ատտիկեցւոց ա մենայն ուստեք 'ի հզօր ամրոցաց ատտի պատրաստ պարեալ պահին։ և զօրք 'ի նոսա պահակապանք կան, և յարշաւել թշնամեաց յաշխարհն՝ հրամանն է դաշտականաց անդր ամրանալ[1]։

Հռամնոն յեզր ծովու կառուցեալ է, և 'ի վերայ միոյ 'ի մերձակայ բլրոց ամբառնայ մեհեան անողոքելոյն[2] Լեմեսեայ դիցն վրէժխնդրութիւն։ Պատկեր նորա տասն կանգուն 'ի բարձրութիւն, փիդիասայ է ձեռակերտ, և արժանի Հաղտարին՝ գեղջին։ Ի պարոսպական վիմէն մեծէ, զոր Պարսից 'ի կողմանն յայնոսիկ ածեալ էր կանգնել նշան յաղթութեան, անտի դրօշեաց Փիդիաս զպատկերն զայն. և արձանագիր 'ի նմա ոչ զիւր անունն եդ, այլ զՄ՝գորակրիտեայ աշակերտին իւրոյ, զոր կարևորն սիրէր[3]։

Ընտի ինքաք 'ի Մարաթան տան. բնակիչք տեղւոյն փութային պատմել մեզ զանցս երևելիս յաղթութեանն, զոր տեղեկացիք զօրավարութեամբն Միլտիադեայ կանգնեցին անդ ընդդէմ Պարսից։ Լաչ այնպէս մեծի այնր պատերազմին շրջունն 'ի հոգւոջ նոցա տպաւորեալ, զի թուի նոցա 'ի մեան գիշերոյ զխրախոյս պատերազմն

1 Դեմոսթ. յՍ. վեհպ հրեշտ. էջ 312։ Նոյն, յՍ. պատկի. էջ 479։

2 Պաւսան. գիրք Ա. գլ. 32. էջ 80։ Պլին. գիրք Լ՚Ջ. գլ. 5. էջ 725։ Սուիդ. և Հի. ւսիք. 'ի բառն Բ՚ամբ. Մեսրոպ. յՍ. Ժողովոգ. ատտիկ. 'ի բառն Բ՚ամբ.

զայն և զխրխինջ երիվարացն լսել՝։ Յուցին մեզ զշիրիմն անկելոցն 'ի պատերազմին Յունաց, և են սիւնակք փոքրիկ և անուանք ևեթ իւրաքանչիւրոցն գրոշմեալ 'ի նոսա. խոնարհեցաք առաջի շիրմին, զոր աթենացւոց 'ի յիշատակ զօրավարին կանգնեալ էր՝ յետ թողլոյ մեռանել նմա 'ի խաւարչուտ բանտին. և ոչ այլով իւիք յայլոցն շիրմաց նորայն զանազանի, բայց մեկուսի 'ի նոցանէ կալով [2]։

Լոյս 'ի մերձենալն 'ի Պտաբրոն՝ լուսաք, և ահա հնչէր աղաղակ ցնծութեան. զի էր տօն մեծ Պատեմեայ դիցն խնամակալի աւանին [3]։ Պատկեր նորա թուեցաւ մեզ վաղեմի յոյժ, և պատմէին մեզ զի նոյն այն է զոր Պսիդենիա ած 'ի Պաւլիժէ [4]։ Օրիորդացն ամենեցուն աթենացւոց պարտ է նուիրել նմա զանձինս 'ի հնգամենից և 'ի վեր, մինչև անցեալ ընդ տասներորդ ամ տիոցն [5]։ Պաղմութիւն 'ի նոցանէ ածեալ 'ի ծնողացն, և պարագլուխս նոցա կալով օրիորդի քրմուհւոյն Պատեմեայ, կացին առընթեր պաշտամանն՝ յաւելեալ զշուք հանդիսին. և հագնելոցուք անդ երգէին հատուածս Պղիսականէն։ Ապա այսր ինքնանուէր ընծայման դառնան անդրէն օրիորդք և նախ քան զհարսանիսն, մատու-

1 Պաւսան. գիրք Ա. գլ. 32. էջ 79։

2 Նոյն անդ։

3 Մեծաս. յոյ. Ժողովրդ. առասիկ. 'ի բառն Βραυρ.

4 Պաւսան. գիրք Ա. գլ. 23. էջ 55։

5 Արիստոտ. 'ի 1 խնդրոյ. տող 644։ Հարպոկր. և Հիսիւք. 'ի բառսն Ἄρκτ և Δεκατ.

ցանել զոհս աստուածուհւոյն՝։

Լաւ ստիպէին զմեզ կալ անդ այլ ևս աւուրս ինչ, և տեսանել զսպանդարամատական տօնսն՝ որ կատարին անդ՝ ի լուսին հնգից ամաց[2], անդր ժողովելով յոլովից յանհամատ կանանուոյն ա-թենացւոց, հաւասարեալ պայծառութեան տօ-նիցն ընդ համարձակ ցոփութեան։ Լ.յլ՝ ի նկա-բազիր ևեթ նոցին գաղջեցեալ՝ մեկնեցաք անտի, և չոգաք՝ ի քարահատս Պենտելիկոնի լերին՝ ուստի գեղեցիկ կիճն սպիտակ հատանի անուա-նին ընդ Լլլադա, և յաձախագոյնս՝ ի քաջաց անդրիազործաց դրօշեալ[3]։ Լրևի հաձոյ լեալ բնութեանն յաձախել անդ ընդ արս երևելիս և զձարտարս արուեստին, և զնիւթ քաջ պատկա-նաւոր առ՝ ի յաւերժացուցանել զերկաքանչիւրոյն զյիշատակ։ Լն քարահատք հանգոյն նոցին և Լ.ուժեռ լեառն, և յայլս՝ ի լերանց Լ.ստիկէ[4]։

Ղոգաք երեկոթեալ՝ ի Պրասիէս աւան փոքրիկ ծովեզերեայ։ Լաւահանգիստ նորա, որ անուա-նեալ կոչի Պանորմոս, անդորր և անբոյթ ապա-ւէն է նաւաց, շուրջ պատեալ՝ ի հրաշագեղ հովտաց և՝ ի բլրոց՝ որք անդստին յեղեալաց ծո-վուն աստիճանեալ ամբառնան որպէս զկրկիսիցն շուրջ տեսանելեաց տեղիս, և կատարին՝ ի լե-

1 Սուիդ· ՝ի բառն Λρκτ.
2 Պոլիբիոս· գիրք Ը· գլ· 9· յոգ· 107։
3 Թէոփր· յդ· քարանց, յոգ· 14։ Սորաբ· գիրք Թ· էջ 399։ Ելթեն· գիրք ԺԳ· գլ· 6։
4 Բաեռնոսի· պատմ· նահանջ· էջ 920։ Լիս· գիրք ԼԱ· գլ· 26։

բինս Հովանացեալը 'ի մայրեաց և յաղգի աղգի ծառոց '։

Ինտի մնաք 'ի դաշտ մի գեղեցիկ 'ի կողմն աշխարհին, որ անուանեալ կոչի Պարաղոս [*]։ Շուրջանակի ամբառնան գօտիք բլրոց, որոց բոլորաձիր գագաթունք անծրպետեալք 'ի միմեանց ոչ բնութեանն ինչ՝ այլ արուեստին թուին ձեռագործք [1]։ Լաւ անցեալք ընդ դաշտն, հասաք 'ի Լաոբիկ ամրոց հզօր յեղը ծովու [2]. և յոյժ ուրախ եղաք, լուեալ զի մերձ էր անդ Պղատոն առ Լաէոփիլեայ ուսմանն բարեկամի իւրում վաղեմի, յամարաստան ապարանս նորա 'ի բազում Ժամանակաց հրաւիրեալ 'ի նմանէ թախանձանաբ։ Ինդ նմին և ոմանք յաշակերտաց նոր եկեալ էին, փախուցեալք յամբոխէ։ Ընդիտեմ որպիսի ինչ գոռով խանդաղատելի անակնկալ դէպքս այսոքիկ զարթուցանէն 'ի սիրտ. այլ հանդիպելը մեր միմեանց եղև որպէս զբարեկամաց անծանօթելոց վերստին զմիմեանս ճանաչումն, և Լաէոփիլոս ընդերկարեաց զինքուութիւնս մեր՝ հիւրընկալեալ զմեզ առ իւր։

Ի վաղիւ անդր ընդ ծագել արեգական՝ եղաք 'ի Լաբիրին լեառն, ուր բովքն են արծաթոյ. ուստի 'ի վաղնջուց անյիշատակ ժամանակաց և այսր հատանեն զարծաթն, և յեղը անսպառելի է-

1 Ձինաքը. ուղղոր. Յուդասա. էջ 157։

* Ամբոխին է ծովի զբեայ πεφαλιος.

2 Թուկիդ. գիրք Բ. գլ. 55։

3 Ուիլքը. պրպտ. էջ 447։

4 Գալենոսի. պատմ. հանք. էջ 928։

բակացն ոչ հաստատեն [1]։ Մարթեր բազմագոյն և սպեղել անդ գուբս, եթէ ոչ գանձք անբաւք ինդրեալին 'ի գործն. զի բաց 'ի ծախուցն 'ի գինս գործեաց և 'ի կազմած բնակարանացն և հաղորդեաց, գերեաց և բազմութեան սպեղք են, որոց ստեպ փոփոխին գինք։ Ըստ զօրութեան նոցա և ըստ տիոց են գինք նոցա երեքարիւր կամ վեց հարիւր դրամակշռեալ, և և առելի [2]։ Այլ ոչ բուք չիցէ ձեռն բառական 'ի գնել, 'ի վարձու ունի յայլոց՝ որոց իցեն բազմութիւն սարկպց, հատուցանելով վարձ առօրեայ դանկ մի առ ստրուկ։

Ար առանձինն որ կամ միաբանեալ ընդ իւր բազմութեամբ կամիցի հատանել արծաթ, պարտ է նմա գնոց առնուլ նախ հրամանն 'ի պետութենէ [3] 'ի ձեռն վերակացուաց բովուցն։ Այլ 'ի լինելն լսելի՝ արձանագրի անուն նորա, և պարտ է նմա՝ բաց 'ի գնոց հրամանին՝ հատուցանել և զքսանեբոլոր ջրրորդ մասն շահիցն [4]։ Այլ եթէ ոչ հատուցանիցէ զպարտսն, հրամանն անդրէն 'ի դանձ աշխարհին դառնայ, և 'ի ձայն քարոզի ածի 'ի յառնախագին վաճառ [5]։

Յառաջագոյն արծաթն 'ի վաճառմանէն և 'ի պատահական հարկացն դանձեալ բաշխեր ժողովրդեան. բայց Թեմիստոկլ 'ի համախսուրբ

1 Քսենոփ. պատմ. նահանջ. էջ 324։
2 Դեմոսթ. յԱֆոբ. էջ 896։
3 Հոյն 'ի Պանտեն. էջ 992։
4 Սուիդ. 'ի բառն Ἀγράφ.
5 Դեմոսթ. 'ի Վենիպ. էջ 1022։

ժողովն արար ընդունելի, զի յայնմհետէ 'ի կա-
ռոյց նուաց ծախեսցին գանձքն՝. և օգնականու-
թեամբս այսուիկ յաւուրս պերզամնեսական մար-
տին ոչ նուազեաց զօրութի ամենայցոց ընդ ծով։
Ի ժամանակին յայնմիկ եղէն ոմանք, որք մեծա-
ցան յոյժ 'ի բովուց. Ալիկիաս, ձախողակի գերա-
հռչակեալն 'ի նուաճարտին Ալիկիլիոյ, ստրուկս
հազար վարձկանեաց ումեք 'ի բովս, և զայր
նմա անտի օրըստօրէ հազար դանկ, կամ հարիւր
վաթսունեւվեց դրամակշիռ և երկու երիր մանն
դրամակշռոյ։ Ի նմին ժամանակի և Լպպոնիկեայ
վեց հարիւր ստրուկք էին, որք ըստ նմին առ-
օրեայ վարձուց՝ բերէին նմա յաւուրն վեցհա-
րիւր դանկ, կամ հարիւր դրամակշիռ[2]։ Ըստ
այսմ հաշուոյ Քսենոփոն խրատ տայր պետու-
թեան վարձկանել ստրուկս 'ի բովս. զի բաւական
էր գնել նախ հազար և երկերիւր, և ապա յա-
ւելուլ տակաւ զթիւ նոցա ցբիւր մի. և զայնն
'ի նոցանէ ամի ամի հարիւր քանքարք յօգնու-
թիւն աշխարհին[3]։ Այլ խորհուրդս այս ոչ կատա-
րեցաւ, առ 'ի չզլխաւորելոյ զայնոսիկ որ 'ի բովուց
անտի շահէին. և մերձ 'ի վախճան պատերազ-
մին նուազ քան 'ի սկզբանն բովուցն գտան բերք[4]։

Արկածք բազումք խաբեն զյոյս պարապե-

1 Պլուտ. 'ի Թեմիստ. հտ. 1. էջ 113։
2 Քսենոփ. պատմ. Նա-հանչ. էջ 925։
3 Նոյն անդ. էջ 926։
4 Նոյն յիշատ. գիրք Գ. էջ 773։

լոյն 'ի շահ անդր . տեսի զբաղումն 'ի նոցանէ մնանկացեալ առ պակասութեան դրամոց կամ մնացն անաջողութեան [1] ։ Այլ օրէնք ամենայն ինքք քաջալերեն զնոսա . զի որ 'ի բովուցն շահք՝ ոչ յաւելուն զհարկ քաղաքացոց 'ի պէտս աշխարհին , և պատուհաս սպառնացեալ է այնոցիկ , որոց առեալ հրաման պեղելոյ զբովս՝ խափանիցեն զայլս 'ի նոցն բովս աշխատելոյ , բառնալով 'ի բաց զգործիս և զկազմածս նոցա , կամ հրձիգ առնելով զշինուածս և զնեցուկս հաստատանս գետնափոր շաղացն , և կամ ոչ կալով 'ի պայման իշխանութեանն , զի սահմանեալ ժամանակաւ իւրաքանչիւր ումեք լինի հրաման , և չէ օրէն անցանել ըստ սահմանն [2] ։

Այլ մնեալք 'ի խոնաւուտ և 'ի մղձկուտ վայրսն [3] , ակամատես եղաք՝ քանի տաժանաւոր վաստակօք կորզին 'ի խորոց անտի հրահալակաւն նիւթքն , որոց և գիւտք և ստացուած պահի գերեաց ։

Ի կողս լերինն մերձ 'ի գուբան [4] կազմին դարբնոցք և հալոցք , ուր զհրահանն ածեալ բաժանեն զարծաթ 'ի գղձոյն , ընդ որում խառն է ։ Բազում այն է զի գտանեն զայն խառն ընդ նիւթ աւազեղէն չէկ և փայլուն , յորմէ յառաջ քան

1 Դեմոսթ . 'ի Փենիպ . էջ 1022 և 1023 ։

2 Նոյն , 'ի Պանտենէ . էջ 992 ։

3 Քսենոփ . յիշատ . գիրք Գ . էջ 773 ։

4 Պ խարուվ . գիրք Ի . գլ 7 ։

զաւուրս զայսոսիկ հանաւ խրուկն արուեստա-
կան՝ *։

Արկուց դասուց երկրագործաց այլատարազ՝ ի
միմեանց վաստակք զարմացումն ածէն ուղևորին
ընդ Ասորիկէ։ Անգլ կէաք աներ կիւղ և ան-
վտանգ ժողովէն յերեսաց երկրի զցորեան, զգինի,
զձէթ և զայլ ազգի ազգի պտուղս, որոց հաղորդս
մարթ է նոցա լինել։ Այս են նոքա զրեթէ առ
հասարակ յոյլք և բարեզգեստք. ժամանակ է
նոցա զբօսանաց, և յաշխատելն իսկ ընչեն զօդ
արձակ, և վայելեն՝ ի պայծառութիւն երկնից։
Իսկ այլք՝ ի քարահատս և յարծաթահանս
թաղեալք, իբր թէ հանապազ գերեզմանք՝ ի
վերայ նոցա փակին. և տխրատեսակ ջահիցն
ևեթ ծագէ՝ ի նոսա լոյս, և օդ թանձր և մա-
հաշունչ պատի զնոքօք։ Ասուերք չարաբաստք,
յորս չիք ազգումն՝ բայց միայն առ՝ ի վշտակրել,
և ոչ զօրութիւն՝ բայց՝ ի յաւելուլ զպերճանս
տերանցն իւրեանց բռնաւորաց։ Այդ դու ընդ
իրեարս զերկոսին համեմատեալ՝ ի միտ առցես
ինձ՝ թէ ո՛ր ՀՀմարիտ մեծութիւնքն իցեն պատ-
րաստեալ մարդկան՝ ի բնութենէ։

Պղատոնի ոչ ազգ արարաք յառաջագոյն
զգնալն մեր՝ ի բովս. այլ՝ ի հրուանդանն Ասնիո-
նի, որ՝ ի քաղաքէն աթենացւոց հեռի է առ-

։ Թեոփր. յղ. քարանց, էջ 262։
յոդ. 104։ Պլին. գիրք ԼԳ.
ԳԼ. 7. հտ. 2։ Քորսինի.
տարեգր. առաջիկ. հտ. 3.

* Գիւոքս այս հանգիպին
405 ամաւ Ն. Ք։

պարիզոք իբր երեքարիւր, յանձն էառ գալ ընդ մեզ՝։ Եւ անդ Լեթենասայ մեհեան հոյակապ 'ի սպիտակ կնճռ, զորացի կարգաւ ճարտարապետեալ, և սեամբք շրջապատեալ հանգոյն Թմեսեայ մեհենին՝ զնոցայն վերբ 'ի վերոյ բերելով զնմանութիւն, սիւնք վեց 'ի ճակատուն և երեքտասան շուրջանակի[2]։ Եւ ծայրէ հրուանդանին տեսանի 'ի ստորոտ լերինն նաւահանգիստ և աւանն Սունիոն, մի 'ի հզօր ամրոցաց ատտիկասան աշխարհին[3]։

Մեծագոյն ևս տեսարան ձգէր զմեզ անդ 'ի զարմացումն։ Մերթ յածեալ զաչս ընդ ծայրածաւալ դաշտս ծովուն, և 'ի նկարաձև տեսիլս մերձակայ կղզեացն ակնկառոյց կայաք. և մերթ քաղցր յիշատակ մերձեցուցեալ յանդիմանն առնէր մեզ զկղզիս՝ որ ծածկէին յաչաց մերոց։ Ընդ միմեանս. Յայսկոյս անկանի Տենոս՝ ուր հովիտքն են բարեբերք, և Դելոս՝ ուր տօնախմբութիւնքն լինին զուարճալիք։ Եւ Ալեքսիս դաշն ձայնիւ ասէր ցիս. Ահա Կէոս, ուր զԱղկիբեա զառաջինն տեսի. և Փիլոքսենն հառաչանօք ցուցանէր ինձ զկղզին անուանակիր Հեղինեայ, ուր յառաջ քան զամն տասն 'ի մէջ մրտենեաց և նոճեաց կանգնեալ էր նորա իւրով խակ ձեռամբ շիրիմ տարփալոյն իւրում Կորմնեայ։ Ընդ 'ի տասն ամաց հետէ գնայր 'ի սահմանեալ

[1] Սարաք. գիրք Թ. էջ 390։ [2] Ռուտ. յդ. աւերակ. էջ 479։ [3] Պաւսան. գիրք Ա. Յունասա. մասն Ա. էջ 24։ [3] Դիոմեդ. յդ. պսակ. դէ. 1. էջ 2։

աւուրս , Թանալ արտասուօք զաչիւնն ցուրա՝ որ դեռ ևս սիրելի էր նմա։ Իսկ Պղատոն, յոր տպաւորագոյն ազգէին տեսարանք մեծամեծք, պշուցեալ հայէր 'ի յորձախոր վիշտ՝ զոր բնու- Թեանն յանդուգնդս ծովուն գործեալ էր։

Լչ ահա Թանձրանայր շուրջանակի մեզ մթին հրախառն. արեգակն շառագունեալ, և մկանունք ծովուն հարթ և անծածան, և տխրատեսակ ալեայն գոյնք յար 'ի փոփոխման կային։ Լռկինք Թանձրամած պարածածկեալ, գմբեթարդ խա- ւարին և բոցաձանձանչ յենայր զերկրաւ։ Ցիե- զերք ամենայն յանչշունչ լռութեան ակնկա- լեալ կային կասկածանօք, 'ի սիրտս մեր ազդելով զերկիւղ։ Պատսպարեալք անդէն յանդաստակ մեհենին՝ տեսաք, և ահա 'ի խիտ առ խիտ հա- րուածս շանթից պատառեցաւ մածուած հրին- կեց միգին զմեզ։ ամպք Թանձունք դիզադէզ զմիմեանսք Թաւալեալք ընդ օդս, անկանէին յուղիս անձրևաց յերկիր։ Հողք սանձակոտորք յարձակեալք 'ի ծով, մրրկէին զանդունդս։ Դը- բընդիւնք որոտմանց, մանչիւն հողմոց, կոծմունք կոհակաց, գանգիւն անձաւոց, գղջդումն լերանց, խառնեալ ընդ միմեանս 'ի շրմիդ ահեղ՝ աւերածոյ տիեզերաց Թուէին գուժկանք։ Լչ ասպա զօրա- ցեալ հիւսիսի՝ վարեաց զդայրոյթ մրրկին 'ի բո- ցակէզ նահանգս Լիբիկեայ։ Հայեաք զհետ նր, և ազդեր յուսկն մեր 'ի հեռուստ մանչիւն նորա։ Պայծառագոյն ևս պարզեցան երկինք. և ծովն,

որոյ մինչև յամսոյ վերջադէզ ամբառնային կոչակք, հապիւ զալիսն յեղերս վարէր։

Ի տեսիլ յեղակարծ և արագ փոփոխմանցն՝ վայրիկ մի կարկեալ կացաք անշարժք. այլ անդէն յուշ եղեն մեզ խնդիրքն 'ի բազմահոլով դարուց և այսր հետազօտեալք, թէ ուստի յուզմունքս այսոքիկ և յեղմունք բնութեան ներգործիցեն, մինթէ դիպաց ինչ իցեն արգասիք։ Այլ ելբ շղթայք որ միախուռն զտիեզերքս պինդ ունին, անդադար մերձ 'ի խորտակումն լեալ, և կայցեն հաստատուն. իցէ թէ յիմանալեաց ոք յարուցանիցէ և ցածուցանիցէ զմրրիկսն, և առ ինչ. ընդէր զանազատս ամենահարեալ, և յայգս եղեռնագործս խնայիցէ։ Այլ յայսցանէ 'ի գոյութիւն դիցն 'ի վեր ելանէաք, և 'ի փարատումն համապարփակ աշխարհական միգին և 'ի լինելութիւն տիեզերացս։ Այլ զանդաչեալք մնաք, թախանձէաք զՊղատն՝ զհաւատին ստուգաբանել մեզ։ Իսկ նա խորասուզեալ կայր 'ի մտաց տեսութիւնս, և զոգեսս իմն հնչէր տակաւին յունկն նորա բնութեանն ձայն ահարկու և մեծասատ։ Այս ուր ուրեմն ստիպեալ 'ի յոգնաթախանձ մաղթանաց մերոց, և յիմաստից որ յուզէին 'ի միտս նորա, բազմեցաւ 'ի գերջուկ մի աթոռ, և բազմեցուցեալ զմեզ աստի և անտի, խօսեցաւ և ասէ.

Արդիւք մահկանացուք և տկարք եմք[1], և

[1] Պղատ. 'ի Տիմ. հա. 3. էջ 29։

կարիցեմք աստուածպատարանին խելամուտ լինել զաղտնեաց. զի իմաստութիւնս մեր այնպէս է առ նորայն, որպէս կապիկաւ բանաւորս մարդ[1]։ Այսն որոյ տարածեալ առ ոտսնորա, պաղատիմ տալ ինձ բան 'ի բերան՝ առ 'ի խօսել զհաճոյս նորա, և համաձայնս բանի։ Լցեալ զսկզբնապատճառէն էից և զլինելութեանէ արարչիս, և զաբեացն պատճառէ 'ի լուր բազմութեանէ առաջի կայր ինձ ճառել, հարկ էր այլաբանութեամբ սքօղել ըզբանս[2]. այլ աստանօր ոչ և բարեկամք իմ լեռն ինձ, և մարթի է ինձ զհնարտութիւն անելիւղ դաւանել։

Աստուած, զոր պատմեմ ձեզ, միակ է անփոփոխ և անսահման[3]. 'ի նմանէ ամենայն կատարելութիւնք բաշխին, և աղբիւր է նոա անսպառելի իմաստութեանէ և գոյութեան[4]. որ էին 'ի սկզբանէ նախ քան զարիւզերաց առնել, և յառաջ քան զերկնել զօրութեան նորա. զի չիք նորա սկիզբն[5]։ Նոքա յինքեանս և 'ի սկզբանց յաւիտենից միշտ էակ։ Այլ չքաւեն բանք բազմադակել զիսորհուրդս մնաց իմոց, և ոչ միաբ իմ բաւանդակել կարեն զանծութիւն իրացն։

Հանգոյն նմին և նիւթն 'ի յաւիտենից 'ի

1 Հերակլ. առ Պղատ. յերեցն Խալդ. հտ. 3. էջ 280։

2 Պղատ. Թղթ. 2. առ Դիոնիս, հտ. 3. էջ 312։ Նոյն 'ի Տիմ. հտ. 3. էջ 28։

3 Նոյն 'ի Փեդոն. հտ. 1. էջ 78։

4 Նոյն 'ի Կրատիլ. հտ. 1. էջ 396։

5 Տիմ. յղ. հոգւոյ տիեզերաց առ Պղատոնի. հտ. 3. էջ 96։ Պղատ. 'ի Փեդոն. հտ. 1. էջ 78։

յորձանան յահագինս կայր , բովանդակելով յինքեան զսերմանս ամենայն չարեաց . և խառն 'ի խուռն օգտելով երթևեկէր՝ առ 'ի միաւորել զմնաւնս իւր , և եղծիչքն որ 'ի նմա իրք՝ ցրուէին զայնս անդէն : Ամենայն կերպարանաց ընդունակ էր , և ոչ 'ի միումն յարատևակ . և խորշումն և հերձուած գնային 'ի վերայ յորձնեռանդն աղեաց նորա [1] : Խառնակութիւնն ահագին , զոր արդ իսկ տեսէք 'ի վերայ երկրի , աղօտ ինչ պատկեր է այնր որ 'ի տիեզերական վէրին ներգործէր :

Ստուած 'ի յաւիտենից ըստ անբաւ բարութեան իւրում սահմանեաց առնել զտիեզերս ըստ նախատպին , որ միշտն առաջի նորա կայր [2] անփոփոխ , անստեղծ և կատարեալ , հանդոյն այնմ՝ զոր Ճարտարապետ երկնէ 'ի միտսն 'ի կազմել յանհարթ վիմանց զշինուած հոյակապ . աշխարհ իմացական , որոյ երևելիս այս պատկեր է և բացատրութիւն [3] : Ամենայն որ ինչ ընդ տիեզերս մնելի է զգայութեան և որ անմնելի 'ի նոցանէ , 'ի նախատիպն յայն գծագրեալ էր նկար գերահրաշ . և վասն զի գերաբուն էին ոչ է մարթ երկնել ինչ 'ի մտի անեակ , ասելի է թէ ստեղծնա զաշխարհս նախա՛ք գերևելի առնել զայս Ամբա 'ի յաւիտենից էին աստուած արարիչ ա-

1 Տիմ. յդ . հոգւոյ տիե. գերբաց առ Պղատոնի , հա . 3 . էջ 94 : Պղատ . 'ի Տիմ. հա . 3 . էջ 30 :

2 Տիմ. անդ , էջ 93 :

3 Պղատ. 'ի Տիմ. անդ , էջ 28 :

մենայն բարւոյ, և նիւթն սկիզբն ամենայն չարի, և նախատիպն այս՝ ըստ որում տահմանեալ էր աստուծոյ կերպարանել զնիւթն [1] *։

Այլ երբեմն Հայր ժամանակ մեծի զործոյն, իմաստութիւնն անսկիզբն հրամանն ետ հանապարտակ վէրին, և զղորդեալ յուղեցաւ զանգուածն մեծամարմինն որպանչն իմն և բեղնաւոր շարժմամբ։ Պատուէր նորա, յառաջագոյն անհաշտելիք ընդ միմեանս, եկին յիրեարս 'ի գրկախառն համբոյր։ Ընդ նախ փայլեաց բոց 'ի խաւարի, և օդք զատան 'ի հողոյ և 'ի ջրոյ [2]. և 'ի քառից տարերացս կազմեցան նիւթականքս ամենայն [3]։

Այլ առ ուղղելոյ զարժմանն նոցա, աստուած զՀողի ** յիւրմէ աստուածեղէն էութենէն և 'ի նիւթական զոյացութենէ խառնեալ [4], եդ 'ի սիրտ երկրի և ծովու և թանձր օդոց, յորոց և անդր ծառալին անտարատք երկնից։ Զիմացաստնէս աստի յէէ, որ 'ի միջակէտ տիեզերաց կառուցեալ [5], մեր երկին Ճառագայթք բոցոյ առաւել կամ նուազ հեռաձիգք, որ ընդմտեալ 'ի մարմնոս

1 Տիմ. յԼ. Հոգւոյ սրբեզերաց առ Պղատ. Հա. 3. էջ 94։ Պղատ. յՊ. խաղալ. Խմաստաս. գիրք Ա. գլ. 11. Հա. 2. էջ 882։

* Եւ նախ քան զՊղատոն Ալբինոս Երրեակ սկզբունս էգ. զատաւուած, զնիւթն, և զկերպարան։ (Ալբինոս. առ Պատր. Ծաղկաբաղ բնաբան. գիրք Ա. էջ 82։)

2 Պղատ. 'ի Տիմ. Հա. 3. էջ 53։

3 Նոյն անդ, էջ 52։

** Յեռակոյս մատնիս 'ի ամենազեկութիւնն. Թիւ. ԺԷ։

4 Տիմ. անդ, էջ 93։ Պղատ. անդ, էջ 34։

5 Տիմ. անդ, Պղատ. անդ, էջ 36։

կենդանացուցանէն զմտաւնս նոցա. և հաստատել 'ի սահմանս երկրի, ընդ ոլորտս նորա սփռին՝ լուսեղէն գնովաւ ածեալ պարունակ'[1]։

Հոգին տիեզերական այն ինչ ընկղմեալ յանդունդս նիւթոյն՝ որ ծածկէ զնա յաչաց մերոց[2], զօրութիւն ուժոյ շարժելեալ դողացոյց զբոլորս զայս մեծատարած, և արագ արագ հոլովեալ զիւրև հնաղանդեցոյց զօրութեան իւրում զտիեզերս ամենայն դիմադարձ։

Լինէ հոգիս այս աստուածեղէն գոյացութենն ևեթ էր հաղորդակից, ազգումն նորա պարզ և անփոփոխ՝ միօրինակ յամենայն զանգուածն ներգործէր զշարժումն. այլ զի հաղորդ է և նիւթոյ, այլ և այլ գործէ շարժմունս։ Օ՛ի մինչ ազգումն հանրական՝ ներգործեալ յաստուածեղէն մասնէ տիեզերական հոգւոյն՝ հոլովէ զամենայն յարևելից յարևմուտս 'ի քսան և չորս ժամս, ազգումն ըստմասնեայ՝ ներգործեալ 'ի նիւթական մասնէ նորին հոգւոյ՝ մղէ յարևմտից յարևելս ըստ յայտնի ինչ չափոյ երագութեան զպարունակն երկնից, յորում՝ շրջին մոլորակք[3]։

Ա՛ռ 'ի խելամուտ լինել երկուց այսոցիկ հակառակ շարժմանց, գիտելի է՝ զի աստուածեղէն մասն տիեզերական հոգւոյն ընդ նիւթականի

[1] Յիշատ. բանաս. կաճառ. հա. 32. էջ 19։

[2] Պղատ. 'ի Տիմ. հա. 3. էջ 36։

[3] Տիմ. յղ. հոգւոյ տիեզերաց առ Պղատ. հա. 3. էջ 96։ Պղատ. անդ. էջ 38։

մասին յար 'ի կռիւ կայ, և զի առաջինն 'ի սպառուածս տիեզերաց առատագոյն է, իսկ երկրորդն 'ի պարունակս օդոց որ փարին զերկրաւս[1]. և զի դարձեալ 'ի շարժել տիեզերացս՝ ոչ զօրելովն նիւթականի մասին հոգւոյն խափանել 'ի սպառ զհանրական շարժումն նորա ներգործեալ յաստուածեղէն մասնէն, ժողովեաց յինքն զմնացուած խառն 'ի խուռն զօրութեանն՝ որ շարժէրն զնա 'ի համապարփակ անդունդսն, և տարաւորեաց զայն 'ի պարունակս որ պատին զերկրաւս։

Այս ահա կենդանացան տիեզերք. միածինն այն որդին, աստուածն ծնեալ[2], զկատարելագոյն քան զամենայն ձևս էառ զլոլորականն[3], և շարժումն շրջապար՝ զպատշաճագոյնն ձևոյ իւրում[4]։ Այն գերաբուն ետես զոր արարն, և ահա բարի էր[5]. և համեմատեալ զայն նախատիպին՝ ըստ որում գործէրն, եգիտ համանման 'ի կարևորագոյն տիպս կերպարանացն, և հաճեցաւ ընդ այն։

Այլ էր ինչ 'ի նախատիպն՝ անհաղորդելի գործոյն, այս ինքն է յաւիտենականութիւն՝ իմացական աշխարհին էական տիպ, որում երևելիս այս աշխարհ չէր ընդունական։ Այս քանզի չմարթէր երկոցունց աշխարհացս զնոյն ունել

1 Տիմ. յՀ. հոգւոյ տիեզերաց առ Պղատ. հտ. 3. էջ 96։
2 Նոյն անդ, էջ 94։ Պրուքք. պատմ. խմաստաս. հտ. 1. էջ 705։
3 Պղատ. 'ի Տիմ. հտ. 3. էջ 33։
4 Նոյն անդ, էջ 34։
5 Նոյն անդ, էջ 37։

կատարելութիւնս, եւ նոցա աստուած հանգուն-
նատիպ կատարելութիւնս։ Բարս պատկեր շար-
ժական[1] անշարժ յաւիտենին* զժամանակն՝ որ
անդադար սկիզբն առնելով և կատարած շրջանի
տուընջեան և գիշերոյ, ամոց և տարեաց, թուի
անսկիզբն և անվախճան յընթացս իւր, և
զզգալի աշխարհիս չափ զտևողութիւն՝ որպէս
յաւիտեանք զիմացականին. զժամանակն ասեմ,
որ և հետք անցիցն ոչ մնային՝ եթէ չէին սահ-
մանեալ ածանցական մասանց նորա նշանակք է-
լեւելիք, որ գոգցես իմն արձանագրէին զշարժմունս
նորա[2]։ Ամին իրի եղոյց էն գերաբուն զարեգակն[3],
և արկ զնա ընդ մոլորակս 'ի ծայրածաւալ ան-
ապատս օդոց. ուստի արձակէ նա զՀառագայթս
իւր համասփիւռ ընդ երկինս, և լուսաւորէ զընդ-
թացս մոլորակաց, և սահմանէ զտարեաց՝ որպէս
լուսին զամսոց բոլորմունս։ Փայլածուն և Բ-
րուսեանն ճգեալք ընդ պարունակն՝ յոր նայն
վերանստի, ընթացակից լինին նմա. և Հրատն
և Լուսնթագ և Լուսեակ հոլովին ըստ պարունակս
որ անծանօթք էն ռամկին[4]։

Բայց արարչին էից շահապետս 'ի վերայ աս-
տեղացն կացուցեալ, խօսեցաւ առ նոսա և ասէ.

[1] Տիմ. յԼ. հոգեոյ տիե-
զերաց առ Պղատ. Հա. 3.
էջ 37։ Պղատ. 'ի Տիմ. էջ 37։
* Ինուսոյ 'ի տարն իւր առ
Եշխանն Եւգինէսս զիմաստս
զայս 'ի Պղատոնէ 'ի կիր ա-
ռեալ յեռաս։

[2] Պղատ. անդ, էջ 38։

[3] Նոյն անդ, էջ 39։

[4] Տիմ. անդ, էջ 96։ Պղատ.
անդ։

Դէք որ յինէն ծնեալք, լուարուք զպատգամս իմ[1]. Զէք դուք անմահք, այլ եղէջք յաչխարհս կեալ կամաց իմոյ՝ որ հզօրագոյնք են քան զզօրս կցորդութեան մնասանցդ 'ի ձեզ։ Ի բովանդակութիւն տիեզերացս մնայ ընդ ակչաւք զծով և զերկիր և զօդս։ Այնթէ յինէն ինքեանք ընկալցին դրբա զկեանս զերծեալք յիշխանութենէ մահու, լցին հաւասարք դից. ձեզ ասա յանձին՝ ստեղծուլ զնոսա։ Զգեալ յինէն իշխանութիւն, խառնեցէք ընդ մահկանացու մարմինս զբողջոջս անմահութեան՝ զոր տամ ձեզ. և արասջիք էակ՝ որ տիրեսցին այլոց կենդանեաց, և հնազանդեսցին ձեզ. որ ծնցին որդիս 'ի հրամանաց ձերոց, և աճեսցին և բազմասցին բարեբարութեամբ ձերով. և 'ի մեռանելն՝ միասցին ընդ ձեզ, և հաղորդք լցին երանութեանն ձերում։

Այս զայս ասացեալ, 'ի բաժակին յորում հաստատեալն էր զՀոգի տիեզերաց՝ եհեղ զմնացուած այնորիկ, և արար անտի զառանձնական հոգիս. և 'ի մարդկայինսն խառնեալ մնան ինչ յաստուածեղէն գոյացութենէն[2], եղ 'ի վերայ նոցա բաշխս անհրաժեշտս։

Զնդ սահմանեցաւ ծնանել մարդկան բաւական յաստուածածանութիւն և յաստուածպաշտութիւն, և առն տիրել կնոջ. արդարութեան գով յաղթանակութիւն 'ի վերայ կրից, և

[1] Պսաս. 'ի Տիմ. էջ 40 և 41։ զերբաց առ Պսաս. հտ. 3։
[2] Տիմ. յղ. հոգւոյ տիե. էջ 99։

անիրաւութեան նուաճումն ընդ նոքօք. արդա-
րոց վայելել յաստեղս յանվախճան երանութիւն,
իսկ այլոց փոխակերպել 'ի կանայս. և 'ի յա-
մառելն յանիրաւութիւն՝ 'ի կերպարանս անաս-
նոց խոտաճարակ լինել. և մի ևս 'ի նախաստեղծ
քնութեանն դառնալ 'ի փառս՝ մինչև հնազան-
դեալք բարբառոյ բանին [1]։

Օ այսոսիկ անցեալ սահմանեալ վճիռս, սրբ-
ոեաց ապա էն գերաբուն հոգիս 'ի մոլորակս. և
հրամանն տուեալ արքանեկաց իւրոց դիցն՝ զգե-
ցուցանել նոցա տակաւ մարմին մահկանացու,
խնամել զկետս նոցա, և առաջնորդել նոցա,
հանդեաւ անդրէն հանգիստ յաւիտենական [2]։

Եւ վաղվաղակի երկրորդ պատճառացն առեալ
'ի նիւթոյ զմանկունս ջրից տարերաց՝ խառնե-
ցին ընդ միմեանս անբաւ զոգիսք [3], և ածին
շուրջ զհոգւովք զայլ և այլ մասունս մարմնոյ
պատկանաւորս 'ի սպասաւորութիւն նոցա՝ զորիսն
իմն կառաց տեղւոջէ 'ի տեղի փոխել զնոսա [4]։

Հոգին անմահ և բանաւոր եղաւ յուղեն,
'ի բարձրագոյն մասն մարմնոյ, ուղղել զշարժմունս
նորա։ Այլ ընդ աստուածեղէն մասինս այսմիկ
հաստատեցին ստորակայ դիք շունչ մահկանացու և
անբան, յորում՝ դաղարեն հեշտութիւն՝ որ ա-
ռեալ ձգէ զհետ իւր զչարիս, ցաւք՝ որ խսփա-

[1] Պղատ. 'ի Տիմ. հտ. 3. էջ 42։
[2] Նոյն անդ։
[3] Նոյն անդ, էջ 43։
[4] Նոյն անդ, էջ 69։

նեն զվայելս բարեաց, յանդգնութիւնև երկիւղ՝ որ անխոհականութեան են խորհրդակիցք, բարկութիւն անողոքելի, յոյս դիւրահրապոյր, և համազգի ազգի կիրք կարևորք՝ կցորդք բնութեան։ Զրաւէ նա 'ի մարդկեղէն մարմնի երկուս գաւառս անջրպետեալս 'ի միմեանց։ Յասմնականի մասին զգեցեալ զզօրութիւն և զարիութիւն՝ 'ի կուրծս զետղ առեալ կայ մերձաւորագոյն անմահ հոգւոյն, առ 'ի դիւրագոյն լուր բարբառոյ բանին. և անդր ամենայն ինչ զիմէ առ 'ի նուաճել զամենեսի բերմունս նորա, օղք՝ զոր շնչեմքս, ըմպելիք՝ որ զծարաւ մեր բժշկեն, և երակք իսկ՝ որ ընդ անդամն մարմնոյս բաշխեն զհիւթս։ Այլ սոյին իսկ միջնորդաւ խմացեալ բանին զխլրտումն ցասման, զարթուցանէ զամենայն զգայարանս սպառնալեօք և աղաղակաւ, և սաստէ նոցա մի սպասաւորել զառանցանաց սրտին, և բանի հնազանդէ զնա '։

Հեռագոյն ևս 'ի գաւառ ախոնդանաց կապեալ կայ միւս մասն հոգւոյն մահկանացուի, ըզթանձր կարեօք կենացս ստորաքարշ պատաղեալ։ Կենդանի անյաղ և վայրենի, տարամերժեալ 'ի կայից անմահ հոգւոյն՝ որպէս զի մի մենչիւն և աղաղակ իւր աղմկեսցէ զներգործութիւնս նորա։ Բայց և 'ի հեռուստ անտի իշխէ անմահն մահկանացուին. և ոչ կարացեալ բանիւ զնա ուղ-

1 Պղատ. 'ի Տիմ. հտ. 3. էջ 70։

ղել, նուաձել երկիւղիւ։ Քանզի մահկանացուին 'ի լերդակողմն կալով, 'ի գործարան անդր յո-ղերկ և 'ի ջինջ նկարէ հոգին սնմանէ զևս ահա-գին տեսակս[1], երևեցուցեալ հոգւոյն մահկա-նացուի 'ի հայելւոջ անդ խորշս դժնեայս և սպառ-նալից, և խուճապս խոժոռադէմս՝ որ ընուն զնա վշտաք և դառնութեամբք։ Լաւ մերթ դժնդակ պատկերացն յաջորդէն ախորժ և զուարթ տե-սիլք. խաղաղութիւն տիրէ զնովաւ, և անդ լի-նի նման տեսանել 'ի քուն զհանդերձեալս։ Քանզի զիցն ստորակայից խնամ կալեալ ներգործել 'ի մեզ զամենայն կատարելութիւն՝ որոց եմքս ընդունակք, կամեցան մասին այսմիկ թան-ձու և զաչացուի ընդունել նշոյլ ինչ ճշմարտու-թեան, անհաղորդելի անմահ հոգւոյն։ Քանզի հանդերձեալքն ծածկին 'ի բանէն, և յանուրջս ևեթ և 'ի խօթութեան և 'ի հիացմունս յայտ-նին[2]։

Լաւարդ եթէ զհանգամանաց նիւթոյ ճառել կամիցիմ, և զշրջից բնութեան, և մանաւանդ զիմաստութենէն որ փայլէ 'ի յօրինուած և 'ի պէտս իւրաքանչիւր մասանց մարդկեղէն մարմնոյ, և զբիւրուց այլոց իրաց որ արժանի են նկատե-լոյ, յանհունս վարեսցին ճառքս. դարձայց ա-պա յառաջարկութիւնս իմ։

Զմարթեր աստուծոյ թերի ինչ ստեղծանել,

[1] Պղատ. 'Ի Տիմ. հա. 3. [2] Նոյն անդ։
էջ 71։

և ամենակատար զաշխարհս ստեղծ որչափ էր հնարաւոր[1]. քանզի ներգործէր 'ի նիւթ անկերպարան և խառն 'ի խուռն, որ անսաստէր կամաց նորա անընկալելի. որ և անսաստէ իսկ ցարդ[2], և 'ի ստահակելոյ նորա պատահէն մրրիկք և սաստնութիւնք երկրի և բնաւ ամենայն անհարթութիւնք ընդ արեգականն։ Զնոյն և ստորակայից դիցն հարկ եղև 'ի կիր առնուլ 'ի կերպարանեալն զմեզ[3]. և աստի ախտակրութիւնք մարմնոյ, և հոգւոյն և սա վտանգաւորագոյնք։ Այլ ամենայն որ ինչ ընդ տիեզերս առ հասարակ և 'ի մարդումն բարի ինչ է, այն 'ի գերաբուն էէն է. իսկ որ թերի ինչ, 'ի նիւթոյն ընդակից յոռութենէն[4]։

ԳԼՈՒԽ Կ.

Որ ինչ նշանաւոր անցք 'ի Յունաստան և 'ի Սիկիլիա անցին յերեսին ամեն, սկսեալ յերեքարիւր յիսուն և եօթներորդ ամէ նախքան զթուականութիւն փրկչին. և վասն արշաւանացն Դիոնի, և գատապարտութեան զօրավարացն Տիմոթեայ և Իփիկրատեայ։ Վախճան նիզակակցաց պատերազմին, և մեհենական մարտին սկիզբն*։

ԴԻՈՆ ըստ նախապատումն իմոյ բանիս** տարագիր 'ի Սիրակուսայ, ուստի Դիոնեսիոս

1 Պղատ. 'ի Տիմ. հտ. 3. էջ 30 և 56։ Սենեկա, Թուղթ 65։

2 Նոյն 'ի Թեետ. հտ. 1. էջ 176։

3 Պղատ. 'ի Տիմ. հտ. 3. էջ 44։

4 Նոյն անդ. էջ 47։ Նոյն 'ի քաղաքավար. հտ. 2. էջ 273։

* Առ իշխանութեամբն Ա-գաթոկղի, 356 ամաք Ն. Փ։

** Յերեսունեւերրորդ գլուխ գրոցս։

արքայ քեռորդի և եղբայր կնոջ իւրոյ Հալածեաց զնա, խորհեր ազատել զՀայրենիս իւր 'ի լծոյ ընդ որով հեծէրն։ Մեկնեալ նորա 'ի քաղաքէն աթենացւոց գնայր 'ի Օակինեթոս, զի անդ էր զօրաժողով զօրացն, զոր ժողովէր 'ի Ժամանակայ հետէ։

Լաւ եգիտ անդ արս երեք հազար. բազմագոյնք 'ի Նոցանէ պեղոպոնեսացիք, առ հասարակ արք պատերազմփորձք և որոց զվտանգս յաչս եղեալ էր՝։ Զի և զիտէին նորա զդէմ արշաւանին. և իբրև ծանեան զի գնային 'ի վերայ պետութեան՝ որում՝ տան բիւրք հետևակաց էին և բիւր մի հեծելոց, ջրեբաբիւր նաւք պատերազմիկք, ամուրք հզօրք, գանձք անբաւ և նիզակակիցք ահաւորք[2], ոչ ևս ինչ յառաջարկեալ պատերազմն նկատէին՝ բայց զյուսահատութեան տարագրելոյ ուրուք, որ զամենայն ինչ ընդ վրէժխնդրութեան իւրում փոխանակէր։ Բայց Գիսն եցոյց նոցա զի ոչ 'ի վերայ միոյ ուրուք 'ի հզօրագոյն պետութեանց Լաբրպայ արշաւէին, այլ տկարագունին և անգոմնելոյ քան զամենայն թագաւորս[3]։ Յաւել և ասէ. Օ՛ի և ոչ զօրաց ինձ պէտք են, քանզի ընդ հուպ զինուորեացին ընդ ինև գունդք

[1] Պղատ. Թուղթ 7. հա. 3. էջ 333։ Արիստոտ. յդ. Ճարտ. գլ. 9. հա. 2. էջ 623։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 420։

[2] Դիոդ. անդ, էջ 413։ Եղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 12։ Նեպոս 'ի Դիոն. գլ. 5։

[3] Արիստոտ. յդ. հատ. գիրք Ե. գլ. 10. հա. 2. էջ 404։

Դիոնեսեայ։ Ի զօրավարութիւն եւեթ ընտրեցի զձեզ, առ 'ի տալ նոցա օրինակ քաջութեան և վարժս հրանգաց զինուորութեան[1]։ Այս այնպէս վստահ եմ ընդ վտարանչութիւն նոցա, և որ անտի յաճախեացեն մեզ փառք, զի թէ և մահ առաջի կայցէ ինձ ըստ հասանելոյն 'ի Սիկիլիա՝ երանելի զանձն համարիմ, եթէ միայն ածիցս զձեզ անդր[2]։

Մինչդեռ այն ինչ 'ի բանից ասացն զօրքն քաջալերէին, դէպք խաւարման լուսնի զարձեալ խռովեցուցին զնոսա ահիւ*. բայց Դիոն փարատեցոյց զերկիւղ նոցա արիութեամբն իւրով, և պատասխանեաւ գուշակի բանակին. զի նա հարցեալ զարփայլն երևմանէն, 'ի մօտալուտ խաւարումն իշխանութեան արքային Սիրակուսայ ասաց ունել նմա զակնարկութիւնն[3]։ Մինչև վաղվաղակի զօրքն 'ի նաւ, ութհարիւր այր[4]. զի այլոց առաջնորդութիւն Հերակղիդեայ սահմանեալ էր գալ։ Դիոնի երկու եւեթ բեռնարձ նաւք էին, և երեք այլ և նաւք թեթևընթացք, կազմեալք առհասարակ ամենայարդար պատրաստութեամբ զինուց և պաշարոյ[5]։

Ապատոմն փոքրիկ վարեալ 'ի սատակ մրրկէ

1 Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 967։

2 Արիստոտ. յՊ. հատ. գիրք Ե. գլ. 10. հտ. 2. էջ 405։

* Ցեակոյս մատենիս 'ի ամբոխութիւնն. Թիւ ԺՁ։

3 Պլուտ. անդ, էջ 968։

4 Նոյն անդ, էջ 967։

5 Նոյն անդ, էջ 968։

յեղբս Պիրիկեայ 'ի ժայռս, և մաղապուր 'ի նաւաբեկութենէ զերծեալ՝ եհաս 'ի նաւահանգիստն Պինովայ 'ի հարաւակողմն Սիկիլիոյ։ Այս էր Պինովա քաղաք ամուր կարբեդոնացւոց. և քաղաքապետն քանզի բարեկամ էր Դիոնի, և թերևս առ 'ի տածել իսկ զՀերձուածս յօգուտ Կարբեդոնի, հոգացաւ զսկտս զօրացն վաստակելոց 'ի տաժանաւոր նաւարկութենէն։ Ընդ կարևոր համարէր Դիոն հանգուցանել ըզզօրականն. այլ լուր եղև՝ զի Դիոնեսիոս յաոաջ քան զաւուրս ինչ մտեալ էր 'ի նաւ խաղալ Յոտալիա, և աղաչէին զօրքն զԴիոն՝ փութալ վաղագոյն 'ի Սիրակուսա[1]։

Այս վաղվաղակի համբաւ գալստեան նորա տարածեցաւ առ հասարակ ընդ Սիկիլիա, և արհաւիրք և յոյս զՀետ նորա։ Ընդարգանդացիք գեղացիք և կամարինացիք նոյնհետայն ընդ զունդս նորա խառնեցան. և սիրակուսացիք և ընակիչք շրջակայ դաշտացն խուռն առ նա ընթանային։ Այս բաշխեաց նա հինգ հարիւրոց 'ի նոցանէ զՀնս, ածեալ ընդ իւր 'ի Պեղոպոնեսայ[2]։ Մեծամեծք մայրաքաղաքին պայծառաղդեացք ընդ առաջ ելին նմա 'ի դրունս քաղաքին[3]։ Զմուտ նա անդր հանդերձ զօրօքն՝ որ խաղային զային անբարբառ, և հինգ բիւր այր զՀետ իւր՝

[1] Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 969։

[2] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 414։

[3] Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 970։

որոց աղաղակաւ հնչէին օդք՝։ Ի հնչիւն ահեղա-
գոչ փողոցն՝ լռեաց աղաղակն. և քարոզն որ ա-
առաջի երթայր, կարդաց ազատութիւն Կիրա-
կուսայ, և բռնաւորութեան կործանումն։ Ի
լուր քարոզին ամենեքին առ հասարակ՝ ի փղձուկ
հարեալ արտասուեցին. և ոչ այլ ինչ ասել լի-
նէր, բայց խառնաձայն բարբառ սրտառուչ հա-
ռաչանաց ընդ մաղթանս՝ որ ուղերձէին յեր-
կինս։ Ոչխէին՝ ի մեհեանս և՝ ի փողոցս խունկք
զոհից. և ժողովուրդն խելայեղեալ ի մեն առ յոյժ
խնդութեանն, անկանէր առ ոտս Դիոնի, մա-
տուցանէր նմա մաղթանս որպէս աստուծոյ բա-
րերարի, և լիաբուռն սիրէր ծաղիկս զնովաւ։
Եւ ոչ այնու յագ եալ, դիմեաց զայրագին՝ ի վե-
րայ ատելի ամբոխին լրտեսաց և չարախօսաց՝
որովք ապականեալ էր քաղաքն, հաս, թացաւ
յարիւն նոցա. և տեսարանքն սոսկալիք յաձա-
խեցին զցնծութիւն հասարակաց [1]։

Իսկ Դիոն յառաջ խաղայր մեծափառ յաղ-
թանակաւ. և ընդ ամենայն տեղիս, ընդ որ ան-
ցանէրն, սեղանք կանգնեալ էին նմա աստի և
անտի։ Իբրև եհաս՝ ի հրապարակն, զկայ էառ.
և՝ ի բարձուէ խօսեցաւ առ ժողովուրդն, եդ
դարձեալ առաջի նոցա զազատութիւն, յորդո-
ւեաց զնոսա ձգնել՝ ի վերայ նորա, և աղաչեաց
կացուցանել՝ ի վերայ աշխարհին արս որ բաւա-

1 Դիոդ. գիրք ԺԴ. էջ 415։ 1. էջ 970։
2 Պլուտ. Ի Դիոն. հա.

կան իցեն 'ի բազմամտանգ ժամանակին յանձնել զիրս նորա։ Լաւ կացուցին զնա և զ[1]Եղակ-զէս զեղջայր նորա. բայց թէպէտ և յոյժ էր պանծալի իշխանութիւնն զոր տային նոցա, նո-քա ոչ կամեցան յանձն առնուլ զայն՝ բայց իշ-խանակցութիւն արանց քանիից 'ի մեծամեծացն սիրակուսացւոց, յորոց բազմագոյնք հալածեալք էին 'ի Դիոնիսեայ։

Նոցան ուրեմն յետ աւուրց զգոյժ առեալ Դիոնիսեայ՝ զի Դիոն 'ի Սիրակուսա հասեալ էր[1], եկն եհաս անդր ընդ ծով, և եմուտ 'ի միջ-նաբերդն, զորով պարիսպ ածեալ պաշարեալ էր սիրակուսացւոց։ Հրեշտակս արար վաղվաղակի առ Դիոն[2]. իսկ նա արձակեաց զնոսա առ ժո-ղովուրդն։ Եւ զբան ընկալեալք 'ի ժողովն համա-խումբ, հնարէին պատրուակական խոստմամբք յիւրեանս ձգել զնա. նուազութիւն հարկաց, ազատութիւն 'ի զինուորութենէ 'ի պատերազ-մունս՝ որ ոչ լսեր կամաց նորա զորժիցին, և զա-մենայն ինչ խոստանալոյ նոցա Դիոնեսիոս. այլ ժողովուրդն զմիայն կարևորագոյն պայման ուխ-տին խնդրեաց 'ի նմանէ զբարձումն բռնաւորու-թեան։

Իսկ թագաւորն քանզի զնենգութիւն մենքե-նայիլ, յերկարաձգեաց զերթեւեկս պատգա-մաց, և համբաւ եհան՝ իբր թէ կամիր հրաժա-

[1] Պլուտ. 'ի Դիոն. հատ. 1. էջ 415։
էջ 969։ Դիոդ. գիրք ԺԶ.։ [2] Պլուտ, անդ. էջ 971։

ՐԵԼ ՅԻՇԽԱՆՈՒԹԵՆԷ ՝։ Եւ կոչեցեալ առ ինքն զպատգամաւորս Ժողովրդեան, կալաւ զնոսա առ իւր զամենայն զգիշերն. և ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց զօրացն յարձակել։ Մերդա-կալքն այլազգի զօրք զիմեալ 'ի վերայ շուրջանակի պարսպացն, խրամատեցին զայն. և հաւաձեցին զգունդս սիրակուսացւոց, որք յուսով առաջիկայ հաղթութեանն անպատրաստ դտան։

Դիմանի զմտաւ ածեալ՝ զի յօրհասական պատերազմն յայն բախտ պետութեանն յեցեալ կայր, չեգիտ այլ հնարս քաջալերելոյ զահաբեկ զօրականն՝ բայց 'ի յանդգնութիւն զքաջութիւն փոխել։ Կոչեաց զնա 'ի խուռն մարտին, ոչ ձայն տալով, որ ոչ և ես լսելի էր նոյ, այլ օրինակաւ՝ ընդ որ հիացեալ կային, և ոչ սրտատենդելին 'ի նեմանութիւն։ Յարձակեցաւ նա միայնակ 'ի գունդս թշնամեաց, և զբազումս 'ի նոցանէ դիտապատ յերկիր կործանեաց. վիրաւորեցաւ, անկաւ յերկիր և բարձեալ 'ի սիրակուսացի զօրականէն, որ վերատին արծարծեալ յարիութիւն՝ յաւելոյր նմա խրախոյս, անդրէն 'ի ձի աշտանակեաց։ Եւ Ժողովեալ զփախստեայս, և տիզախոց ձեռամբն ցուցանելով նոցա զասպարէզն անհրաժեշտ՝ ուր անդէն առ ետեղ սահմանելոց էր ծառայութիւն նոցա կամ ազատութիւն, սլացաւ 'ի բանակեալ պեղոյսնեսացւոց զօրացն, և խաղացոյց

1։ Պլուտ. 'ի Դիոն. հա. էջ 416։ Պոլիբն. 'ի մարթան. 1։ էջ 971։ Դիոդ. գիրք ԺԶ. ոլն. գիրք Ե. գլ. 2։ յոգ 7։

զնոսա 'ի պատերազմ։ Լսուժաղուժքն վաստա-
կաբեկք ոչ ևս կարացեալ դիմակալել ընդ եր-
կար, խուսեցին 'ի միջնաբերդն ծածկել զկորանս
իւրեանց։ Այլ սիրակուսացիք բաշխեցին այլազ-
գի զօրականին հարիւր մնաս առ այր, և նոքա
միաբարբառ պակ ասկի զօրավարին իւրեանց
սահմանեցին՝։

Լսելասուտ եղև Գոմեսիոս, զի ոչ ևս այլազգ
մարթէր նմա յաղթել թշնամեաց՝ բայց միայն
պառակտելով զնոսա. և եդ 'ի մտի կասկածելի
առնել զՎիոն առաջի ժողովրդեան նովին հնա-
րիւք, որովք երբեմն այլք զբպարտեցին զնա առ
իւր։ Այսոքի շշունջքն զոր սփռէր նա ընդ Սիրա-
կուսա, մենաբենայք և կասկածանք՝ որովք խռո-
վէր զաղգատոհմն, դաշինք նենգաւորք, և դա-
ւաղ նամականին՝ զոր մերթ առ Գոմեսն և մերթ
առ ժողովուրդն գրէր։ Մենայն թուղթք նորա
ընթեռնուին 'ի համախսամբ ժողովի. եհաս մի 'ի
թղթոց, որոյ էր երեսագիր Այ- հայրն էմ, Սիրա-
կուսացւոց կարծեալ այնպէս՝ զի Խպարինոս որ-
դի Գոմեսի գրեր զայն առ հայրն իւր, ոչ իշխե-
ցին ընթեռնուլ զայն. այլ Գոմեսն իւրովն եբաց
զայն։ Այլ այնպէս թագաւորին յօրինեալ էր գրիրն, զի եթէ չընթեռնայր զայն Գոմեսն 'ի լուր
ամենեցուն՝ կասկած տայր զանձնէ, իսկ եթէ
ընթեռնայր՝ ահ արկանէր 'ի նոսա։ Իւրով իսկ
ձեռամբ գրեալ էր զայն թագաւորին, և Ճարտար

1 Պլուտ. 'ի Գոմեսն. հտ. 1. էջ 971։

'ի նմա զամենայն զբանն յերիւրեալ։ Օ՚ա-
մենայն պատճառս անդր 'ի նեղբս ածէր բաժա-
նելոյ զգուտ Գովհան յօգտակարաց ժողովրդեան։
Օ՚ի կին նորա և որդի և քոյր արգելեալ կային
'ի միջնաբերդին, և սպառնայր թագաւորն 'ի
նոցանէ հանել զքէն վրէժն։ Սպառնալեայն
զՀետ գային աղերսական յանդիմանութիւնք և
ողբանք, որ բաւական էին շարժել զսիրտ բա-
րեգորով և արի։ Ա՚յլ դառնագոյնք 'ի թունից
դարանեալ կային 'ի բանն, զոր յաւելոյր։ "Յուշ
լեցի քեզ նախանձն, որով պաշտպանէիր բռնաւո-
րութեան մինչ առ իսն էիր։ Մի՛ տար ազատու-
թիւն մարդկանդ, որ ատեան զքեզ յիշելով
զչարիսն՝ որոց դու պատճառ եղեր և գործի. և
զգոյշ լեր իշխանութեանդ՝ զոր ետուն դրա քեզ,
զի դա միայն մնայ քեզ պատսպարան, և ընտա-
նեաց քոց և բարեկամաց՝ ,,։

Ընդ մարթ թագաւորին յաղթութեամբ
մարտի այնպէս յաջողել, որպէս թզթոլս ա-
սուին։ Զուտ այնուհետև Գովհան յաչս ժողովուր-
դեան հարկաւորեալ անհրաժարելի՝ ձեռնտու լի-
նել բռնաւորին և կամ՝ յաջորդել 'ի տեղն նորա։
Յայնմհետեւ հանդերձ նա զանձն անկեալ 'ի հա-
ւատարմութենէ. զի իբրև այն ինչ կուսան կա-
կաճանաց 'ի նմա զործեցան՝ կործանումն հասա-
նէր նմա։

1 Պլուտ. 'ի Գովհան. հատ. 1. էջ գիրք Ե. գլ. 2. յօդ. 8։
972։ Պողբեն. 'ի մարթանան.

Լսրև այս իրք էին, Եհաս միւս ևս գունդ զբ-
բաց պէղոպոնեսացւոց՝ առաջնորդեալ՝ի Հերակ-
ղեղայ։ Այս այր մեծարոյ առաջի սիրակուսա-
ցւոց՝ ոչ յայլմէջ թուէր պիտանացու, բայց՝ի
յաձախել զաղմուկ աշխարհին։ Փառամոլու-
թեամբն մտաբերեր՝ի գործս, զորս յողդողդու-
թեամբն՝ի դերև հանէր. երկաքանչիւրոցն ևս
կողմանց մնան լիներ, առանց յաղթական կա-
ցուցանելոյ զիւրն. աջողակ՝ի դարանագործու-
թիւն ևեթ՝ առանց և ոչ մի ինչ օգուտ՝ի կատա-
րումն խորհրդոց իւրոց գործելոյ։ Ի աւագագոյն
իշխանութիւնս կալաւ նա փառօք՝ի բանակի
յաւուրս բռնաւորաց. ապա միաբանեալ ընդ
Պոմպի, ելիք զնա և դարձեալ յարեցաւ՝ի նա։
Վերջացեալ յառաքինութեանց նորա և՝ի հան-
ձարոյ, յաղթեր նմա ձարտարութեամբ յինքն
ձգելոյ զսիրտս[2]։ Բանզի Պոմպն սարտուցաներ
զնոսա դժուարամատոյց բարուքն, և խստութիւ-
տարազուցն և մտաց։ Ի զուր բարեկամք նո-
րա խրատէին զնա՝ լինել համբոյր և դիւրամա-
տոյց. ընդունայն և Պղատոն գրեր առ նա, զի
առ՝ի պիտանի լինել մարդկան՝ պարտ է գոլ նո-
ցա հաձոյ[3]։ Իսկ Հերակղիդեայ ընտելասեր և
նեբրոդ էին բարք, և վասն զի ոչ ինչ սուրբ եր ա-
ռաջի նորա, կաշառեր զձարտարախօսս առատ

[1] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 419։ [3] Պղատ. Թուղթ 4. հա.
[2] Պլուտ. ի Դիոն. հա. 1. [3]. էջ 321։
էջ 972։

պարգևօք, և զամբոխն՝ շողոմելով։ Հաստատե-
ցաւ ժողովուրդն անձնատուր լինել 'ի նա, և յա-
ռաջնումն համախումբ ժողովի կացոյց զնա զօ-
րավար ընդ ծով։ Ի վերայ հասեալ Դիոն, բո-
ղոք կալաւ՝ զի իշխանութեամբն Հերակղիդեայ
եղծանէր իւրն, և ետ դարձուցանել զվճիռն.
այլ ասա 'ի միւս ևս ժողովի, զոր ինքն համախումբ
բեաց, ետ հաստատել զնա անդրէն ծովապետ։
Յաւել ևս խնդրել, զի և առաւելութիւն ինչ
իշխանութեան ասոյին հնարէսցի. բայց միայն
առանձինն արար նմա աղերսական յանդիմանու-
թիւնս[1]։

Հերակղիդէս 'ի վերին երեսս հաճ և հաւան
ցուցեալ ընդ բարերարութիւն Դիոնի, խոնար-
հէր հանապազ առաջի նորա, կանխէր երագէր
կատարէր զհրամանս նորա հնորհապարտ փու-
թով. այլ 'ի ներքոյ չարահնար դաւով արկա-
նէր խոչ և խութ անյաղթելի ընդդէմ խորհրդ-
ոյ նորա։ Օ՛ի եթէ իրաւախոհ կամէր լինել
նա ընդ Դիոնեսեայ, համախոհ կարծէր ընդ
բռնաւորին. իսկ եթէ լռէր, վասն չանկանելոյ
յիշխանութենէն թուէր երկարաձգել զպատե-
րազմն[2]։

Լա՛ յաձախեցին անտեղի ամբաստանութիւնքն
'ի հալածել նաւատորմին սիրակուսացւոց ըզ-
տորմիղ նաւաց թագաւորին, որոց հրամայէին

1. Պլուտ. 'ի Դիոն, հա. 2 Նոյն անդ, էջ 973։
1. էջ 972։

Փիղիստոս*։ Վասնզի նաև զօրավարին խրեալ 'ի ծուլեզին, դէպք 'ի չարիս ելին նմա անկանել 'ի ձեռս մոլեգնեալ խուժանին՝ որ չարաչար կոփահարութեամբ սպան զնա, մինչև 'ի քարշ ածել զնա անարգաբար ընդ փողոցս։ Այլն աղէտք և Պիսնեսեայ հասանէին, եթէ ոչ թողեալ զմիջնաբերդն 'ի ձեռս Պոլոկրատայ որդւոյ իւրոյ՝ զերծանէր հնար իւրով և զանձիւք Յոտալիա։ Իսկ Հերակղիդեայ յանցաւոր գտեալ, զի նմա անկ էր պահ ունել ընդ ծով և խափանել զփախուստ բռնաւորին, իբրև ետես զայրացեալ զսիրակուսացիս ընդդէմ իւր, հնարեցաւ դարձուցանել զաղմուկն 'ի վերայ Պիսոնի՝ առաջի արարեալ անդէն բաշխս կալուածոց։

Բաջարկութիւնս այս, աղբիւր անսպառ հերձուածոց 'ի բազում հասարակապետութիւնս, ընդունելի եղև խնդութեամբ ամբոխին՝ որոյ ոչ էս սանձէրն ստահակութիւն։ Այլ 'ի հակառակել այնմ Պիսոնի՝ յարեաւ խռովութիւն, և ամենայն բարերարութիւնք նորա նոյնհետայն անյիշատակ եղեն։ Հաստատեցան բաշխք կալուածոց, և սահմանեցաւ նորոգել զկարգս պեղպտնեսացի զօրականին, և կացուցանել տեսուչս իրաց աշխարհին քսանև հինգ այր, ընդ նոսա և

* Առ իշխանութեամբն Եղ սպենեայ, որ հանդիպի 356 և 355 ամաւ Ն. Ք։ (Դիոդ. գիրք ԺԶ. էջ 419։)

1 Պլուտ. 'ի Դիոն, հա. 1. էջ 974։ Դիոդ. անդ։

2 Պլուտ. անդ։

զՀերակղիդէս[1]։

Այնայր ընկենուլ յիշխանութենէ զԱվոն և դատապարտել. և քանզի երկիւղ էր յայլազգի զօրացն որ շուրջ կային զնովաւ, ջանացան հրապուրել զնոսա մեծամեծ խոստմամբք. այլ առաքինի զօրքն, զորս յառաջագոյն անարգեալն էին զսակ ռոճինկ նոցա խափանելով, և ևս առաւել անարգէին զնոսա համարելով զիւրապատրաստ 'ի մատնութի, առին զզօրավար իւրեանց 'ի մէջ, և ածին զնա 'ի բաց ընդ մէջ քաղաքին՝ հալածեալք և մղեալք 'ի խառնէ ամբոխին ոչինչ տալով թշնամանաց նոցա պատասխանի, բայց կշտամբեալ զապերախտութիւն և զդրժանս նոցա. և Ավոն աղերս և գութ արկանէր առ 'ի ցածուցանել զնա։ Այրակուսացիք յամօթ լեալ փախստեամբն նորա, յղեցին զՀետ նորա զօրս 'ի նեղել զնա. այլ 'ի տալ նորա նշան մարտի, զօրքն 'ի փախուստ դարձան։

Լու ամրացաւ նա յերկիր լեռնդացւոց[2]. որք ոչ միայն պարծանս իւրեանց համարեցան ընդունել զնա իւրովքն հանդերձ 'ի քաղաքացիս, այլ և աղնուական արիութեամբ յայտնապէս զվրէժ նորա կամեցան խնդրել։

Ուրաքեցին հրեշտակս 'ի Այրակուսա, բողոք ունել զանիրաւութենէն զոր ընդ ազատարարն Ակկիլիոյ արարեալ էր. և ընկալեալ անտի պատ-

1 Պլուտ. 'ի Դիոն, հա. 1. էջ 975։ 2 Նոյն անդ։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 420։

զամուրս՝ որ գայլին ամբաստան լինել զՅովհան, կուլեցին զնիզակակիցս իւրեանց 'ի ժողով։ Յինեցաւ զատն, և զատապարտեցան սիրակուսացիք յամենեցուն առհասարակ։ Բ. այլ նոքա ոչ միայն չհաւանեալ ընդ վճիռն, այլ և ուրախ լինէին՝ իբր յերկոցունցն և բռնաւորաց զերծեալ. և յաւելաւ ուրախութիւն նոցա յաղթութեանն ընդդէմ նաւաց թագաւորին, որոց պաշար 'ի միջնաբերդն ածեալ էր և զօրս՝ առաջնորդութեամբ Լիխեայ նեապօլեցւոյ '։

Յոտաց քաջ զօրավարն, զի ժամ էր նուաճելոյ զապստամբս. քանզի դուշնաքեայ յաջողութեամբքն, և առաւել և ստահակութեամբ իւրեանց յանդգնեալ, թօթափեալ էր նոցա 'ի սպառ զլուծ հնազանդութեան և պատկառանաց։ Օ. օրն 'ի բուն պարապէին 'ի շուայտել, և զօրավարք նոցա զառածեալք յանկարգութիւնս անսանձելի։ Յարձակեցաւ Լիխիոս 'ի միջնաբերդէն, և կործանեալ զպարիսպն զոր վերստին շուրջ ածեալ էր սիրակուսացւոց, կալաւ զկողմն մի քաղաքին, և մատնեաց զայն յաւար. հալածեաց անտի զզօրս սիրակուսացիս, զընակիչս կոտորեաց, և զկանայս և զորդիս նոցա կապեալս ած 'ի միջնաբերդն։ Յաղողեցան քաղաքացիք, խորհուրդ 'ի մէջ առին խուճապաւ. ահիւ պակեան սիրտք նոցա, և յուսահատութիւն ոչ ևս

։ Պլուտ. 'ի Դիոն, հատ. 1. էջ 976։ Դիոդ. դիրք ԺԲ. էջ 420

գտանէր եւ վտանգին։ Յայն վայր ձայն բարձին ոմանք կոչել զՈՎՒՈՆ հանդերձ զօրօքն. և նոյն հետայն միահամուռ ամենայն ժողովուրդն զաղաղակ բարձեալ, խնդրէին զնա և ասէին. Թ՝ նորհեսցէն մեզ զնա դիք, դարձցի եկեսցէ ածել մեզ եռանդն արիութեամբն իւրով՝։

Պնդադեսպանք արձակեալ, նոյնօրին նախ քան զմուտս արեւու հասին 'ի Լեւոնտիոն. և անկեալ առ ոտս ՈՎՒՈՆԻ արտասուալից դիմօք, 'ի գութ շարժեցին զնա՝ ցուցանելով նմա զվիշտս հայրենեացն։ Եւ զլխաւորք 'ի նոցանէ երկուք յանդիման լեալ ժողովրդեան, պաղատէին փրկել զքաղաքն որ վրէժխնդրութեան նոյն և զթութեան նոցա արժանին էր։

Եւ իբրև վախճանեցին զբանն, տխուր լռութիւն եղև 'ի ժողովին. խօսել կամէր ՈՎՒՈՆ, այլ արտասուք գելուին զխօսս նորա. ապա քաջալերեալ յարտասուակցորդ զօրականէն, ասէ. Օ՞զրականք պեղոպոնեսացիք և նիզակակիցք հաւատարիմք լուարուք. Լսցի ձեզ խորհել զանձանց, այլ ես ոչ ևս եմ ազատ խորհելոյ զանձնէ։ Ա՞հա կորնչի Ալիրակուսա, և ինձ պարտ է փրկել զնա Թէպէտ և ընդ փլատակօք նր առաջի կայցէ ինձ Թաղել. ընդ հրեշտակս նորա առ ձեզ պատգամաւորեալ, յաւելում. Ա՞նմտացաք քան զամենայն մարդիկ, և Թշուառագոյնք քան զամենայն

1 Պլուտ. 'ի Դիոն, հա. էջ 422։
1. էջ 976։ Դիոդ. գիրք ԺԶ.

մարդիկ գտանիմք. ողորմեցարուք ընդ զիրՀ մեր, և փութացարուք օգնել քաղաքին՝ զոր դուք փրկեցիք զնա յառաջագոյն։ ԼԹե անիրաւութիւնք մեր շարժեն զձեզ 'ի վրէժ, այլ ՀնարՀեսցեն դիք վարձանախանձումն և Հաւատարմութեան ձերոյ՝ զոր արարէք ընդ իս զԹութեամբ. և մի երբէք մոռասջիք զ'Լիսոն, որ ոչն եթող զձեզ յանիրաւել առ ձեզ քաղաքայնոցն, և որ ոչն Թողու զքաղաքացիսն 'ի Թշուառութեան նոցա։

Լբ մինչդեռ նա զայն խօսէր, ձայն բարձին ամենայն զօրքն 'ի զութ խանդաղատեալ, և ասեն. Լ'ուաջնորդեա մեզ, և երթիցուք փրկել զ)Լիսոսա։ Լսկ Հրեշտակք սիրակուսացուց լի ցնծութեամբ և զոհութեամբ զիրկս արկեալ նոցա, բիւր օրՀնութիս տային 'Լիսոնի. և 'Լիսոն ժամ՝ ետ զօրացն առնուլ փութանակի զոյզն Լինչ կերակուր[1]։

Լբ ընդ երանեն 'ի ՃանապարՀ, ահա այլ Հրեշտակք ընդ առաջ եղեն նմա. կէսք 'ի փութացուցանել զնա, և կէսք 'ի դադարեցուցանել։ Լ'ուաջինք 'ի դիմաց ողջամտագոյն մասին քաղաքայնոց, այլք յերեսաց Հակառակ կողմանն. զի յամՀ փոփել յետս թՀնամեաց, Ճարտարախօսք անդրէն 'ի մէջ անցեալ արկանէին Հերձուածս 'ի քաղաքացիս։ Լամենին մղեալ աղաղակաւ Ճառից նոցա, կամէր իւրովի զբռամբ ածել զաղատութիւն, և

[1] Պլուտ. 'ի Դիոն, Հա. 1. էջ 977։

ունել զդրունս քաղաքին՝ առ 'ի չտալոյ մուտս օ-
տարաց գալոյ յօգնականութիւն. իսկ զգօնապոյնք
զարհուրեալք 'ի յանդուգն յանձնապաստանու-
թենէն, ստիպէին մեծաւ թախանձանօք զդարձ
պեղոպոնեսացի զօրականին[1]։

Ի դէպ թուեցաւ Պիոնի՝ ոչ կասել և ոչ ա-
ձնապարել, այլ հանդարտագոյնս ածէր զբուն։ Այ-
իբրև ոչ ինչ աւելի հեռի էր 'ի Սիրակուսայ քան
զվաթսուն ասպարէզս, հասին առնա հրեշտակք
յամենայն խմբից և յամենայն կարգաց քաղա-
քացոց, եւ և 'ի դիմաց Հերակղիդեայ ոսկերիմ
թշնամւոյ իւրոյ։ Զանգի բերդականացն անդրէն
'ի դուրս յարձակեալ՝ կէսք զպարիսպն շրջապատ-
նէր 'ի սպառ կործանէին, և կէսք իբրև զվագերս
կատաղիս անկանէին 'ի վերայ բնակչաց՝ առանց
խնայելոյ 'ի կանանին իսկ և 'ի մանկտին։ Այ-
այլք դարձեալ առ 'ի կանգնել խոչ անտեղիտալի
եկամուտ գնդաց, խանձողս և նետս հրավառս
արձակէին 'ի տունս՝ որ շուրջ զմիջնաբերդաւն
կային[2]։

Իբրև զայն ամենայն լուաւ Պիոն, ձեպեցոյց
զբուն. և ահա բոց և ծուխ մրրկեալ յամպս դի-
զանէր, և յաղթականացն յանդուգն խրախոյս և
սրտառուչ կոծ բնակչացն լսելի լինէին։ Ինդ է-
րևէլ Պիոնի, հուչակ համբաւոյ նորա հնչեաց ընդ ա-
մենայն կողմանս քաղաքին. ժողովուրդն զծնգովք

1 Պլուտ. 'ի Դիոն, հա. 2 Նոյն անդ։
1. էջ 977։

նորա փարէր, և Թշնամիք նորա պակուցեալ՝ 'ի ստորոտս միջնաբերդին Ճակատեցան կացին[1]։ Բանզի պատսպարէին անդ զրեթէ անմատչելի յաւերակաց այն ինչ կործանեալ պարսպին, և առաւել ևս 'ի բոցածաւալ ահարկու շրջապատէն՝ զոր մոլեգնութիւն ած զնոքօք։

Մինչդեռ սիրակուսացիք զնոյն զառաջին դրրուատիս տային զօրավարին, և նովին մեծարանաց անուամբք փրկիչ զնա և աստուած կարդային որպէս յառաջնումն յաղթանակին, զօրք նորա 'ի բազում առաջս բաժանեալ, և զհետ նորին խրախուսեալ, յառաջ խաղային կարգաւ ընդ մեխին հրախառն և ընդ խանձողս բորբոքեալս, ընդ Ճապաղիս արեան, և ընդ դիակոյն որով ծածկէին փողոցք և հրապարակք, ընդ ահագին խաւարն թանձրամած ծխոյն, և ընդ ահագնագոյն նշոյլն ամենածախս հրդեհին, և ընդ աւերակս տանց՝ որ սոսկալի դղրդմամբ առընթեր և 'ի վերայ գլխոց իւրեանց փլուզեալ անկանէին։ Եւ հասեալք 'ի վերջին պատնէշն, նովին արիութեամբ անցին ընդ այն՝ յաղթեալ յամառ և մոլեգին դիմակալութեան զօրացն Լիսիսեայ, խորտակեալ զնոսա, և հալածեալ 'ի միջնաբերդն։

Ի վաղիւ անդր սիրակուսացւոց խափուցեալ զհրդեհին ծաւալումն, զտան յանդորր խաղաղու-

[1] Պլուտ. 'ի Դիոն, հա. 1. էջ 978։

թեան։ Իսկ Ճարտարապետքն և այլ խոտորիչք փա-
խեան 'ի քաղաքէն ինքնահաճութիւն, բայց 'ի Հերա-
կղեայ և 'ի Մեծոդոտեայ հօրեղբօրէ նորա.
զի նորա քաջ Ճանաչէին զԴիոն, և գիտէին զի
յանձն առնուլ իւրեանց զմեղանն՝ զէնրնկէց
առնէին զնա։ Այլ թէպէտ և բարեկամք Դիո-
նի զրգռէին զնա թախանձանօք խլել արմատա-
քի յաշխարհէն զոգին խոտորութեան զարա-
գոյնն քան զլռնաւորութիւն, և մատնել զեր-
կոսին եղեռնաւորն սրտմտութեան զօրակա-
նին՝ որ խնդրէին սպանանել զնոսա, այլ նա ա-
սէր քաղցրութեամբ. Այլք 'ի զօրավարաց զա-
մենայն կեանս իւրեանց պարապէն 'ի վարժս պա-
տերազմի, առ 'ի կանգնել զյաղթութիւն որ բա-
զում ուրեք դիպաց են արգասիք. այլ ես 'ի վար-
ժարանին Պղատոնի կրթեալ՝ուսայնուառնել զկիրս
իմ. և առ 'ի կանգնել զյաղթութիւն որ յիսն
ևեթ է ապաստան, պարտ է ինձ նեբել և անցի-
շաչար լինել։ Պարտ իցէ ինչ, փոխանակ զի Հե-
բակղեդէս անկղնոտացաւ 'ի դրժանս և յապի-
ատութիւն, զուռածանել ինձ 'ի սրտմտութիւն
և յանարժան վրէժինդրութիւն։ Ոչ Հանձնա-
ւոյ և իշխանութեամբ կամիմ զեր 'ի վերայ լինել
Հերակղեդեայ, այլ առաքինութեամբ. և բարե-
բարութեամբք ածել զնա 'ի զգաստութիւն։

Այս պնդէր Դիոն զպաշարումն միջնաբերդին.

1 Պլուտ. 'ի Դիոն, հտ. 1. էջ 978։

և ամիսականայն նեղեալ 'ի սովոյ, ոչ էս հպատակէին հրահանգայ։ Հարկ եղև Լ՝պողոկրատայ խոնարհել 'ի դաշնադրութիւն, և եթող նմա Պիսոն մեկնել գնալ 'ի քաղաքն՝ պռեալ զմայրն իւր և զքոյս, և զամենայն ինչս իւր բարձեալ 'ի հինգհնաւս պատերազմիկս։ Պիսմեայ ժողովուրդն 'ի ծովեզը՝ տեսանել զցանկալի տեսիլն, և ցնծալ խաղաղութեամբ Ը՝ ծագումն բարեհաջող աւուրն, որ զհետ բազմամեայ ծառայութեան ածէր Ամբակումայ ազատութիւն, 'ի բաց հալածելով զգաւակ հարստահարողաց իւրոց, և կոծանելով 'ի սպառ զմեծազօր բռնաւորութիւնն։

Իսկ Լ՝պողոկրատ չոգաւ առ Պիսոնեսիոս հայր իւր, որ էր յայնժամ Յիտալիա. և ընդ մեկնել նորա, եմուտ Պիսոն 'ի միջնաբերդն։ Լ՝բիստոմաքէ քոյր նորա և որդի նորա Լպպարինոս եկին ընդ առաջ նորա, և ողջագուրեցան նախ 'ի նմանէ։ Օ՝ հետ նոցա գայր Լ՝բեսէ դողալով և սրտաբեկ. կամէր իսկ, և ոչ իշխէր զարտասուալից աչս իւր 'ի վեր ամբառնալ։ Յայնժամ Լ՝բիստոմաքէայ կալեալ զձեռանէ նորա, ասէ՝ ցՊիսոն եղբայր իւր. Օ՝ իարդ պատմել կարիցեմք զվիշտս, զոր մինչ չեիրն աստ կրեցաք. արդ այժմ դարձ քո և յաղթութիւնք տան մեզ ոգի առնուլ։ Լ՝սէ առաջ, զի դուստրն իմ՝ բռնադատեալ 'ի նոր հարսանիս 'ի թշուառութիւն իւր և իմ, 'ի

[1] Պլուտ. 'ի Դիոն, հտ. 1. տեն. էջ 563։ էջ 980։ Դիոդոր. 'ի Լեպ.

հասարակաց խնդութեան՝ գտանի նա 'ի սուգ։ Ի՞նչ արդեօք ակնարկիցես 'ի հարկն դժնդակ, յոր արկ զնա անգթութիւն բռնաւորին. իցէ՞ զի ողջունեսցէ նա զքեզ իբրև զքեռի իւր թէ իբրև զփեսայ։ Այլ ոչ կարացեալ Պիոնի ժոյժ ունել արտասուաց, գիրկս արկ հարսին իւրում գորովագին. և մատուցեալ նմա անդրէն զորդեակն իւր, հրաւիրեաց զնա 'ի բնակակցութիւն յանսխառնակ օթևանին՝ զոր ընտրեալ էր իւր. զի ոչ կամէր բնակել յաղքունիս[1]։

Ա՛ 'ի գովասանութիւն Պիոնի, այլ 'ի տեղեկութիւն պատերազմաց ինչ նորա զայսոսիկ փոքր 'ի շատէ կամեցայ պատմել. և թերևս կարեկցութիւն ընդ նա, աւելի քան զդէպն յամենայն զիս 'ի բանս, այլ չկարեմ զկայ առնուլ՝ մինչև 'ի ծայր ասպարիզին հասուցեալ զայրն, որ յամենայն դէպս և 'ի հանգամանս այնպէս անենման եղև այլոց՝ որպէս համանման միշտ իւր, և որոց կեանք յաձախեն զգեղեցկագոյն շուք 'ի վէպս առաքինութեան։

Օ բազմապատիկ յաղթանակն կանգնեալ, խորհեցաւ ապա վարձատրել հրապարակաւ և առանձինն զօգնականս նահատակութեանց իւրոց, և զքաղաքացիս՝ որոց զբարձումն բռնաւորութեան փութացուցեալ էր։ Օ կէսս 'ի նոցանէ փառաց իւրոց, զայլս մեծութեանցն հաղորդս ա-

1 Պլուտ. 'ի Դիոն, հա. 1. էջ 980։

բար. անպաճոյճ՝ 'ի կեանս, համեստ 'ի զգեստս, պարկեշտ 'ի կերակուրս, և յամենայն ինչ օրինաւոր. զի ոչ ուրեք բերեր յանձին մեծութիւնս, բայց յառատաձեռնել։ Մինչդեռ զարմանային ընդ նա, ոչ Սիկիլիա միայն՝ այլ և Կարքեդոն և Լիլիբայ համայն, և մինչ Պղատոն գրեր առնա՝ թէ 'ի քեզ ակնկառոյց կայ աշխարհ[1], նա դառնայր հայեր 'ի նուազունս ոմանս խմաստունս, որոց ոչ զքաջութիւնս նորա համարեալ ինչ և ոչ զյաղթութիւնս՝ դէտակն ունէին յաջողութեան բախտի նորա առ 'ի մատուցանել նմա ըստ յարգ կամ զանարգանս[2]։

Վասնզի յաւուրս նորա խմաստասէրք հոգ 'ի մտի եդեալ՝ խորհէին յուղղութիւն ազգի մարդկան, հաստատեալ 'ի Սիկիլիանալս հանդէս առնել խորհրդոյն։ Եւ մին իրի ձեռն արկին 'ի սկզբանէ կրթել զկրտսերն Դիոնեսիոս, այլ նա պատրեաց զայս նոյն։ Դիոն ապա արծարծեցոյց զայն, և բազումք յաշակերտաց Պղատոնի զՀետ նորա եղին 'ի պատերազմ[3]։ Ի խորհուրդս նոցա յաւելեալ զիւրն և զկորնթացուոյ ոմանց՝ զորս ձգեալ էր խնամով 'ի Սիրակուսա, կազմէր զօրինակ հասարակապետութեան՝ միաբանելով 'ի նմա զամենայն իշխանութիւնս և զամենեցուն խնդիր օգտի։ Լաւագոյն թուէր նմա խառն իմն կարգ

[1] Պղատ. Թուղթ 4. հա. 1. էջ 981։
[2] Պլուտ. 'ի Դիոն, հա.
[3] Նոյն անդ. էջ 967։
3. էջ 320։

տեսչութեան, յորում դատ աւադանոյն կալցի 'ի կրօն հաւատարութեան զիշխանութիւն թագաւորին և ժողովրդեան. և ոչ կամիր խառնել միտ զոամիկն 'ի թուարկութիւն, այլ միայն 'ի դէպս ինչ՝ որպէս 'ի Կոստանդոս էին օրէնք[1]։

Ա. Յլ ոչ իշխէր ձեռնարկել 'ի գործ, խոչ ընդ ոսն ունելով զրեթէ անցաղթելի. զի Հերակղիդէս յետ հաշտութեանն ևս ոչ դադարէր 'ի նեղելոյ զնա հակառակութեամբքն յայսմանի և 'ի ծածուկ։ Զանգի մեծարեալ 'ի ռամիկն, ոչ կամէր յանձն առնուլ որ ինչ խոտանէին զընկերահաշտ աղաւոութիւն։ Կուսակիցք Դիոնի յորդորէին զնա ստէպ՝ բառնալ 'ի միջոց զայրն անխաղաղասէր և աղմկարար, այլ նա չհաւանէր. բայց յետոյ ուրեմն զկնաւ 'ի յոգնաթախանձ ժուութիւնոցա[2]։ Զ. ասն որոյ յարեան ընդդէմ նորա սիրակուսացիք. և թէպէտ յաջողեաց նոցա ցածուցանել զնոսա, այլ դժպոյի եղև նոցա հաւանութիւն՝ զոր հանգամանք ժամանակին թուէին անբասիր առնել ըստ քաղաքաւարութեան օրինաց. այլ և խիղճ մնաց նորա տագնապեր ընդ այն հանապազ, որ և դառնութեամբ եղից զմնայցուած կենաց նորա։

Ը. Երծաւ 'ի միջոցէ յոսոխացն, այլ միւս ևս նենգաւորագոյն և մշասակարագոյն 'ի տեղի նո-

1 Պղատ. Թուղթ 7. հա. 2 Պլուտ. անդ։ Դեպս 'ի 3. էջ 335։ Պլուտ. 'ի Դիոն, Դիոն, գլ. 6։ հա. 1. էջ 981։

բա փոխանակեաց։ Մինչ դեռ Դիոն յԱթենս էր, մի ոմն յաթենացւոց անտի Կալիպպոս ա-նուն, ընկալաւ զնա 'ի տուն իւր. և ժառանգեալ զբարեկամութիւն նորա որում չէրն արժանի[1], եկն ընդ նմա 'ի Սիկիլիա։ Լաւ 'ի բարձրագոյն աստիճանս զինուորութեան հասեալ փառաւորեաց զընտրութիւն զօրավարին, և վստահացոյց յինքն զզօրս։

Իբրև Հերակղիդէս սպանաւ, զիտաց նա զի միակ ոՀիր բաւական էր նմա առ 'ի տիրապետել Սիկիլեայ։ Մբոխն խնդրէր [առաջնորդ զոր զանձնահաՀաՀ կամս նի զգուէր. և խելեայր յոյժ, զի Դիոնի կողոպտեալ 'ի նմանէ զիշխանութիւնն յինքն զրաւեսցէ զայն, կամ տացէ 'ի ձեռս ա-ւազակացն։ Ի զիտանոց անտի հմուտք քաղաքա-վարութեան կասկածեալ՝ թէ գուցէ չկարասցէ նա մինչև 'ի սպառ զդէմ ունել հրապուրանաց թագի[2], կասկածանաքն և եթե պարտաւոր առնէին զնա։ Թագնագոյնք 'ի պելոպոնեսացի զօրակա-նէն, զոր սեր փառաց անմեկնելի ունէր 'ի նմա-նէ, անկեալ էին 'ի պատերազմունս[3]. և ամենե-քին տարտղկացեալ յանգործութենէ իւրեանց և յառաքինութեանց նորա, ցանկային ապերասան համարձակութեանն, և հերձուածոց՝ որոց զբա-

[1] Պղատ. Թուղթ 7. հա. 1. էջ 1010։
3. էջ 333 և 334։ Պլուտ. 'ի Դիոն, հա. 1. էջ 981։
[2] Պլուտ. 'ի Բրուտ. հա.
[3] Նոյն 'ի Դիոն, հա. 1. էջ 981։

զում այնչափ ժամանակս հանդէս արարեալ էր զօրութեան նոցա։

Ա. յոգիկ Կալիպպոս տեղեակ գոլով, զնեն-գութիւն 'ի նեերքոյ ոստայնանկեաց։ Պատմէր Դիոնի ստոյգ կամ ստայօղ, իբր թէ երբէք երբէք տրտունջ 'ի բերանոյ զօրականին լսելի լինէր. և հրաման էառ ձայնակից լինելոյ քրթմնջողացն, որպէս թէ առ 'ի հետազօտել զսիրտս նոցա։ Սովին հնարիւք յանկոյց յինքն զզօրս. քաջալերէր զնոսա, և յօժարագունից 'ի նոցանէ 'ի բանս իւր յայտնէր զիւր խորհուրդս։ Իսկ որ մերժէին ցասմամբ զհրապոյրս նորա և ամբաստանէին զօրավարին զնեգութիւն նորա, ոչ այլազգ լսելի լինէին քան զպատմիչս հնարից հաւատարիմ բարեկամի'։

Աղթայր և ստուարանայր գունդ համախոհիցն, և Դիոնի ոչ ինչ փոյթ էր. այլ ապա զահի հարաւ 'ի նշաւակել ամենայն ուստէք նենգութեանն, որ 'ի բազմաց հետէ խռովէր ահիւ զընտանիս նորա։ Ա. յլ նա տագնապեալ յիշատակաւ սպանութեանն Հերակղիդեայ՝ որ ոչ մեկնէր 'ի մտաց նորա, լաւ համարէր մեռանել բիւր մահուանս՝ քան հանապազ պահ ունել անձին, ոչ 'ի թշնամեաց միայն՝ այլ և 'ի մտերիմ բարեկամաց[1]։ Օ. ի ոչ խնամով առնէր նոցա ընտրութիւն[2]. և

1 Պլուտ. 'ի Դիոն, հա. 1. էջ 982։ Նեպոս 'ի Դիոն, գլ. 8։

2 Պլուտ. անդ։

3 Պլատ. Թուղթ 7. հա. 3. էջ 333։

'ի վերայ իսկ հասեալ զի բաղումք 'ի նոցանէ էին արք վասք և կաշառակուրծք, անփոյթ առնէր. զի չհամարէր յայնպան եղեռն զառաջանեալ նոցա [1], և կամ զի պարտ համարէր 'ի Ճակատագիր բախտին ապաստան լինել։ Այլ սակայն էր նա յայնժամ 'ի վտանգի, յորում և առաքինութիւն վհատեալ լքանի անիրաւութեամբ և չարութեամբ մարդկան։

Այլ երբեմն կենդանոյս և քոյր խոյզ և խնդիր առնէին ստուգել զդաւաճանութիւնն, Կալիսպոս կանխեաց էին առ նոսա արտասուօք, և առ 'ի հաւատարմութիւն անմեղութեան իւրոյ յանձն առնոյր զամենայն խիստ հարցափորձս։ Այլ պահանջէցին 'ի նմանէ զերդումն ահաւոր, որ միայն սոսկումն ածէր ապիրատիցն. և ետ զայն վաղվաղակի։ Այնմ ինչ 'ի նկուղ մերձենին Դեմետրեայ և Պերսեփոնեայ. և յետ օրինաւոր զոհիցն, արկեալ զիւրեաւ զլոզիկ միոյ յաստուածուհեացն, և ջահ վառեալ 'ի ձեռին, վկայ անմեղութեան իւրոյ կոչեաց զնոսա ահագին նզովիւք ստերդմնութեան։ Այլ ընդ կատարել հանդիսին, չոգաւ պատրաստել զլուսն առաջարկեալ խորհրդոցն [2]։

Սահմանեաց առ այն զօր Պերսեփոնեայ տօնիցն. և իրաւեկ լեալ զի Դիոն 'ի տան կայր, եհաս անդր՝ առեալ ընդ իւր զենուորս զակին-

[1] Պլատ. Թուղթ 7. հա. 3. էջ 351։

[2] Պլուտ. 'ի Դիոն, հա. 1. էջ 982։ Նեպոս 'ի Դիոն, գլ. 8։

թացիս՝։ Այնք՝ի նոցանէ շրջապատեալ զտամբն, այլք՝ի նեղբս յարձակեցան՝ի վայրապարին՝ ուր Դաւիթն ընդ Ժողովի բարեկամաց իւրոց կայր. այլ նոքա ոչ յանձն առին զվտանգ կեցուցանելոյ զնա։ Դաւաճանքն անդէնք դիմեցին՝ի վերայ նորա. և իբրև ընդ երկար խոշտանգանօք չկարէին խեղդամահ առնել զնա, և տակաւին շունչ նորա՝ի նմա կայր, դաշոյն ընդ պատուհանն՝ի նեղբս արկին որ արտաքոյ կացեալն էին, և դաւաճանքն միեցին զայն՝ի սիրտ նորա։ Յաւելուն ոմանք թէ Վալիսպեայ ձգեալ զսուսեր, ոչ սրտանդեցաւ հարկանել զվաղեմի բարեբարն։ Այս վախճան եղև Դաւթի՝ի յիսունևհինգ ամի կենաց իւրոց, չորիւք ամօք յետոյ քան զդարձ իւր՝ի Աւկիլիա։

Ընդ մեռանել նորա կերպարանափոխ եղև Սիրակուսա։ Ժողովուրդն որ սկսանէրն ատել զնա իբրև զբռնաւոր, կոծեցաւ զնա իբրև զազատարար. և հանդէս յուղարկաւորութեան ա՜ր նմա՝ի գանձուց հասարակաց, և շիրիմ՝ի բարձրագոյն տեղւոջ քաղաքին կանգնեաց նմա։

Սակայն ոչ ոք՝ի սկզբան անդ իշխեաց յառնել՝ի վերայ մեղապարտիցն. և թէպէտ աղմուկ ինչ յարեաւ, յորում և արիւնք հեղան՝

1 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 432։ 3. էջ 334։
2 Պլուտ. ՝ի Դիոն, էջ 983։ 4 Նեպոս, անդ. գլ. 10։
Նեպ. ՝ի Դիոն, գլ. 9։ * Ն. Բ. 353 ամք։
5 Պլատ. Թուղթ 7. հատ. 5 Նեպոս, անդ.։

այլ ոչ ուրուք 'ի նոցանէ[1]. և Կալիպպոս խաղաղութեամբ յարգասխս եղեռնագործութեանն վայելէր։ Յետ սակաւ ժամանակի միաբանեցին բարեկամք Դիոնի խնդրել զվրէժ նորա, այլ 'ի պարտութիւն մատնեցան։ Այլ ապա Կալիպպոս ևս պարտեալ Յապարինեայ եղբօրէ Դիոնիսեայ[2], և ատեցեալ յամենեցունց և մերժեալ, ընտիպեցաւ խոյս տալ Յոտալիանացորդաց ապիրատիցն յեցելոց 'ի նա. և կորեաւ 'ի թշուառութեան երեքտասան ամսուէ յետոյ քան զմահ Դիոնի, սպանեալ՝ որպէս ասեն՝ նովին դաշնակաւ, որով սպանաւն Դիոն[3]։

Մինչդեռ այս իրք 'ի կործանումն բռնաւորութեան գործէին 'ի Սիկիլիա, աթենացիք որ խրոխտացեալ պարծին յազատութիւն՝ պարտասէին յընդունայն Ճգունս առ 'ի նուաճել ընդ լծով զազգս՝ որք յառաջ քան զամս ինչ քակեալ էին 'ի նիզակակցութենէ նոցա[4]։ Խորհուրդ կալան առնուլ զԼիւզանդիոն. վասն այնորիկ արձակեցին անդր հարիւր և քսան նաւս պատերազմիկս, զօրավար կացուցեալ զՋիմոթէոս, զՊիւկրատ և զԲարէս։ Զու արարին նոքա Յելլեսպոնտոս, ուր և նաւատորմն թշնամեաց գրեթէ համազօր՝ եհաս ընդ հուպ։ Այլ մինչդեռ երկուստեք կազմէին 'ի պատերազմ, յարեաւ մրրիկ

[1] Պլուտ. 'ի Բրուտ. հտ. 1. էջ 1011։
[2] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 436։
[3] Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 983։
[4] Ի ԻԳ դէպս գրոցս։

սաստիկ։ Արաբս ոչ ինչ երկուցեալ, իրախուսեր դիմել 'ի վերայ Թշնամեաց. և 'ի հակառակել երկոցունց այլոց զօրավարացն խոհեմագունից և մեծագունից քան զնա, բողոքեաց առ զօրականն զհակառակութենէ նոցա, և զայն պատեհ կալաւ 'ի կորուսանել զնոսա։ Օ՛ի ամենեցունցիք յընթեռնուլ զնամականին, յորում զբոլորտէրն զնոսա 'ի մատնութիւն, բորբոքեալ ցասմամբ կուէցին զնոսա անդէն յետս, և հարց փոքՃ 'ի վերայ նոցա սահմանեցին։

Ու յաղթութիւնք Տիմոթեայ, ոչ նիզակակցութիւն վանթասնեւհինգ քաղաքացն զորս յաւել 'ի հասարակապետութիւնն, ոչ պատիւք երբեմն տուեալք նմա, ոչ հատակ ծերութեանն, և ոչ զարՃեալ արդարութիւն նորա կարացին աղատել զնա յամբարշտութենէ դատաւորացն։ Պարտաւորեալ 'ի տոյժս հարիւր քանքարաց, զորս ոչ էր բաւական Ճեռն նորա 'ի հատուցանել, խոյս ետ 'ի Արգկիս քաղաք Լիբիա [2], որտեղեալ ընդդէմ քաղաքացոյն՝ զորս յաՃախ աւարաբն մեծացուցեալ էր, և որոց ապա յետ մահուն նորա եղև զիրՁ մեծ՝ այլ անագան և անօգուտ [3]։ Բայց ուրեմն հատոյց նա զտոկոսս արհամարհանացն, որովք անգոնեէրն միշտ զԱաբրէս։ Ի միում աւուրց 'ի ժողով ընտրութեան զօրավարաց, իբրև վարՃկանք ոմանք Ճարտա-

1 Դիոդ. գիրք Ի.Զ. էջ 424։ էջ 406։
2 Եսեբի. յդ. վրէպ հրեշտ. 3 Դիոդոս 'ի Տիմոթ. գլ. 3։

բախօսք առ 'ի մերժել յընտրութենէ զՍիմի-
կրատ և զՏիմոթէոս՝ պանծացուցանէին զԲա-
բէս որպէս զկորովի նահատակ, և ասէին՝ թէ
առոյգ է նա հասակաւ, և հզօր 'ի կրել զդժնդա-
կագոյն աշխատութիւնս, և այնպիսի օր՝ որ կա-
բևոր է 'ի բանակի, Տիմոթէոս ասէ. Կարևոր է,
այո՛, առ 'ի կրել զկարասին՝։

Դատապարտութեամբն Տիմոթեայ սրտմտու-
թիւն ահեղացուց ոչ յագեցաւ. սակայն Սիմի-
կրատ ոչ զանգիտեաց ինչ այնու՝ այլ հանդարձա-
կագոյնս վասն անձին արար պատասխանի։ ԼՍ
զարմացոյց զամենեսին զինուորական ձևով բա-
նիցն 'ի յանդիմանն առնել դատաւորաց զգնացս
զօրավարին, որոյ 'ի կորուստ իւր երդուեալ էր։
Բաղարկութիւն ճառիցս, ասէ, հարկ առնէ
ինձ հարկանել անցանել ընդ գործս։ Բարեայ։
ԼՍ յառաջ ածեալ զբանն, բարբառի առ Բրիս-
տոփոն Ճարտարախօս՝ որ դատախազէրն զնմանէ
'ի կաշառակրծութիւն. հարցանէ զնա ասասրի.
Բզէ ասա, առնուիր դու յանձն գործել զմտա-
նութիւնդ զայդ։ Բրիստոփոն ասէ. Վաա, և
մի լեցի։ ԼՍ Սիմիկրատ ասէ. ԼՍ զոր Բրիս-
տոփոն ոչ գործէր, գործէր զայն Սիմիկրատ[2]։

Ի հնարս Ճարտարախօսութեան յաւել և այլ
ինչ, որոյ անկեղակարծ եւս էր յաջողութիւն։

[1] Ելեալս 'ի Տիմոթ. գլ. 4։ տեսել զհասարակապետութ.
[2] Պլուտ. առակ. հատ. 2. էջ 788։
էջ 187։ Նոյն յոլ. ծերոյ արձ.

Օ՛ի կացոյց շուրջ զատենիւն զկուսակիցս իւր զառոյգ զոբականն, և ինքն իսկ դաշոյն թերա-քամ՚ի խորշխորշանս հանդերձիցն ծածկեր՚ի տեսիլ դատաւորացն։ Ինչպարտ արձակեցաւ յա-տենէն, այլ ոչ ևս կամեցաւ սպասաւորել աշ-խարհին. և յեպերել զնա ոմանց վասն բռնու-թեամբն վարելոյ՚ի դատաստանի, ասէ. Օ բա-զում ժամանակս վասն փրկութեան հայրենեաց զինուորեալ, անմոռանալի արդեօք՝ եթէ ոչ վասն փրկութեան անձին զկն առնուի՚։

Բայց Վարէս ոչ չոգաւ՚ի Թվղանդիոն. այլ պատճառանօք իբր թէ կարձէին զօրացն համ-բարք՝, վարձկանեցաւ նոքօք յօգնականութիւն Ի՚ստաւազայնախարարի, որոյ Ի՚ստաշէայ յաբ-քայէն Պարսից ապստամբեալ՝ դեռ ևս ահա՚ի պարտութիւն մատներ առաջի հզօրագոյն զօրու-թեան նորա։ Ինդ հասանել աթենացւոց յօգ-նութիւն, կերպարանափոխ եղև պատերազմն. բանակ թագաւորին բեկաւ, և Վարէս զրեաց Ի՚թէնս՝ թէ ահա յաղթութիւն հանգոյն մարաթոնական Ձկատամարտին փառք՚ի վերայ Պարսից կանգնեցաք։ Բայց աւետիք յաղթու-թէն կարճ՚ի կարճոյ գործեցին խնդութիւն. զի աթենացիք զարհուրեալ՚ի բողբոյ և՚ի սպառ-նալեաց արքային Պարսից, կոչեցին յետս զզօրա-վարն, և փութացան առնել խաղաղութիւն. և

1 Պոլիէն. ի մարթանան, 2 Դեմոսթ. Փիլիպպ. 1. գիրք Գ. գլ. 9. յոդ. 29. էջ 50։

*աղատ կացուցին զբաղաքս՝ որոց զլուծ նոցա Թ-
Թափեալ էր։ Այս վախճան եղև* պատերազ-
մին, որ երկոցունցն եւս կողմանց յաձախեաց
աղէտս։ Զի աստի կէսք նիզակակից ազգաց
վատնեալ զզօրս և զգանձս, անկան 'ի ծառայու-
Թիւն Աւսոլեայ արքային Կարիոյ՝. և աստի
Զ.Թէնք ոչ միայն զրկեալ 'ի նպաստից նիզակա-
կցութիՀ նոցա, այլ և զերեսին քաջ զօրավարսն
կորուսին զԱբրիաս, զՏիմոԹէոս և զՄփի-
կրատ։ Եւ անդստին սկիզբն եղև այլոյ պատե-
բազմի, որ հրդեհ համաձարակ ընդ աշխարհն
բորբոքեցոյց, և աջողութեանց հանձարոյն Փի-
լիպպեայ հանդէս արար 'ի Թշուառութիւն Լա-
Լադայ։

Յամփիկտիոնեան աշխարհաժողովն, որում
անկ է յանձանձել զգանձս մեհենին Պիզոնսի
'ի Դելփիս, Թեբացիք որք միաբանութիՀ ընդ
Թեսաղացիս ուղղէին զիրս ատենին, ամբաստան
եղեն զՓովկիսացւոց, զի զրաւեալ էր նոյ զանդս
ինչ մեհենական սրբեալս աստուածոյն, և եռուն
դատապարտել զնոսա 'ի տոյժս ծանուցեալս։ Բայց
իրՀք վրէժխնդրութեան վարէին զդատախազս
յամբաստանութիւնն. զի Թեսաղացիք դեռ եւս
ամաչէին ընդ յաղԹութիւնն՝ զոր փովկիսացիք
կալան 'ի վերայ նոցա՝. և Թեբացիք 'ի վերայ

* Ա՛ռ էջնանութեամբն Եղ-
պենեայ, որ հանդիպի 356 և
355 ամին Ն. Ք։

1 Դիմոսթ. յՀ. աղատ.

հռոդ. էջ 144։

2 Դիոդոր 'ի Տիմոթ. գլ. 4։

3 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 425։

նախանձընդդէմ հակառակութեանն՝ որ միշտն խլրտէր ընդ ազգս սահմանակիցս՝ ծանրացաւումն և ս լեալ էին վասն փովկիսացւոյ ուրումն առևանկելոյ զմի 'ի կանանց Թեբացւոց, և զբողոք իւրեանց արհամարհելոյ'։

Ի նախկին վՃիռն յաւելաւ միւս այլ դատակնիք, գրաւել զանդաստանս փովկիսացւոց 'ի գանձս մեհենին Պպողոնի. և ամիրիկտիոնեանն իշխակցութեանն տուաւ իշխանութիւնն վրէժ խնդրելոյ 'ի քաղաքաց, որոց մինչև ցայնժամ ստունգանեալ էր վՃռոց առեանին։ Յետինս այս մնան առ սպարտացիսն էին սպառնալիք. զի 'ի բազում ամաց հետէ հրովարտակ ընդդէմ նոցա արարեալ, անգործ կայր[2]։

Ի կասկածէին ամենևին փովկիսացիք, թէ զայն ամենայն մօտալուտ աղէտս չարեաց 'ի վերայ իւրեանց գործոցն այնուիկ ածիցեն. այլ անդ յայտնի եղև՝ թէ ոչպէս պատերազմունք մեծամեծք 'ի դուզնաքէից երբեմն պատՃառս առնուն[3]։ Յառաջ քան զսակաւ ինչ ժամանակ երկուց ամանց 'ի փովկիսացւոց վիՃեալ ընդ միմեանս, երկաքանչիւր որդւոյ իւրում կամելով ածել կնութեան զմի յօրիորդաց ժառանգ գանձուց բազմաց, ձգեալ էին 'ի վէՃ իւրեանց զազգն համօ-

1 Պաւսան. գիրք ժ. գլ. 1. էջ 799։
2 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 425 և 430։
3 Ուրիսաոս. յղ. հաս. գիրք Ե. գլ. 4. հա. 2. էջ 390։ Դուրիս, առ Ութէն. գիրք ԺԶ. գլ. 1. էջ 560։

լէն, և երկպառակեալ զայն. որով 'ի ժողովս հաստատակաց վրէժ քինու երկաքանչիւր կողմանցն էր խորհրդական։ Ալին իրի 'ի յանձն առնուլ բազմաց 'ի փովկիսացւոց հնազանդել ամիրիկտիոնեան հրովարտակին, Փիլոմել՝ զոր մեծութիւնք և մտաց աջողութիւնք առաջնորդ հակառակ կողմանն կացուցանէին՝ ուժգին վիճեցաւ, թէ յունեգոյն և ինքնակար քան զամենայն վատութիւնս էր տեղի տալ անիրաւութեան, և զի փովկիսացւոց անկ էր իշխանութիւն ոչ միայն անդոյն մեհենականաց՝ որոց մեկութիւն յեղեռն համարէր նց, այլ և նորին իսկ գեղջական մեհենին. և զի վստահութիւն ևեթ նոցա յինքն բաւական էր առ 'ի զերծուցանելոյ իւր զնոսա 'ի թշնամանալից պատուհասէն՝ յոր ամիրիկտիոնեան ատենին զնոսա դատապարտեալ էր։

Ալ ուղխօրէն Հարտարիսօսութեամբն աղխաղխելով զհետ իւր ձգեալ զփովկիսացիս, և անպայման կալեալ 'ի նոցանէ իշխանութիւն՝ Ճեպեաց 'ի Սպարտայ։ Ալ միաբանեալ 'ի խորհուրդս իւր զԱ.քիդամոս արքայ, էառ 'ի նմանէ հնգետասան քանքար. զորս յաւելեալ 'ի հնգետասանն պատրաստեալս յիւրմէ, վարձկանեաց զջր բազում՝, կալաւ զմեհեանն, շուրջ պատեաց զայն պարսպաւ, կորզեաց եբարձ 'ի սեանցն զհրովարտակն ամօթալիս՝ զորս Ամիրիկտիոնացն տր-

[1] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 425։ Պաւսան. գիրք Ա. գլ. 2. էջ 802։

ւեալ էր ընդդէմ ազգին ամբաստանելոյ 'ի մեղեանակապտութիւն։ Նոքունայն լոկրիսացիք դիմեալ անդր 'ի պահ սրբարանին, 'ի փախուստ վարեցան. և երկիր նոցա աւար հարեալ՝ յաձախեաց զմեծութիւն յաղթականին[1]։ Նա տեւեաց պատերազմն զամս տասն, և ամիսս[2]. և որ ինչ 'ի նմա կարեւոր անցք անցին, ցուցից զկնի[*]։

ԳԼՈՒԽ ԿԱ.

Որ առ Անքարսիս և առ Փիլոտաս, յուզեորեալն նոցա ընդ Եգիպտոս և ընդ Պարս, հասեալ նամականին՝ բերելով զլոյս զիրաց Եղեգայ առ հասարակ։

ՄԻՆՉԴԵՌ էի ես Յեղեգա, լուեալ իմ յաձախ խօսելոյ բազմաց զեգիպտացւոց աշխարհէն և զՊարսից, եղև 'ի սրտի իմում շրջել ընդ երկոսին աշխարհսն։ Նա ետ ինձ Պղողոդոր յուզեկից զՓիլոտաս, և խոստացաւ գրել մեզ զամենայն որ ինչ անցք անցանիցեն մինչև 'ի դարձ մեր, զնոցն և այլք 'ի բարեկամաց մերոց խոստացան մեզ։ Օ պատձէնս նամականւոյն նոցա, է զոր ամբողջ, և է զոր ըստ մասին այսր 'ի ներքս ածից. յորոց կէսք զդէպս իրացն պարզաբար ունին, և կէսք տեսութիւնս 'ի նոսա յաւելեալ։

Ի վախձան երկրորդի ամին հարիւրորդի վե-

[1] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 426։ Պաւսան. գիրք Թ. էջ 724. գիրք Ժ. էջ 802։

[2] Եպիֆն յղ. վրէպ հրեշտ. էջ 415։ Նոյն 'ի Կաէսիփ. էջ 452։ Դիոդ. անդ, էջ 418։

[*] Ի յաջորդ գլուխդ։

ցերորդի ողնմպիադին* յուղն անկաք։ Խաղաղութիւն բազում էր յայնժամ 'ի հարաւակողմն Հռոմայ, իսկ 'ի հիւսիսի աղմուկք պատերազմին փովկիսացւոց, և ասպատակութեանցն Փիլիպպեայ արքային մակեդոնացւոց։

Փիլոմել զօրավար փովկիսացւոց ամրացեալ կայր 'ի Դեղփիս, և հրեշտակս արձակէր ընդ ամենայն կողմանս. այլ ոչ որ կասկածէր զի թեթև ինչ գժտութիւնք առեալ ձգէին զհետ զհամակործան աւերն Հռոմայ, որ յառաջ քան զամս հարիւրքսանևվեց համայն զօրութեանց պարսկայնոյ պետութեանն զդէմ կալաւ։

Փիլիպպեայ ոչ էր պարապ 'ի յաճախ պատերազմանց ընդ Թրակացիս, ընդ լիւրիկեցիս և ընդ այլ խուժադուժ ազգս։ Խորհէր նա նուաճել զքաղաքս Յունաց՝ որ յելս սահմանաց իւրոց կային, և յորոց բազմագոյնք նիզակակիցք էին կամ հարկատուք աթենացւոց։ Այս աթենացիք ցասուցեալ վասն ժառանգելոյ նորա զԱ՛ֆիպօլիս՝ որ յառաջ ընդ իշխանութեամբ իւրեանց էր, զրգռէին ընդ նմա, այլ ոչ իշխէին համարձակ յայտնել զթշնամութիւն։

* Ի դարձեալի 354 ամին Ն. Գ։

Որ ինչանոյ աւուշանուրեամբն Դիոդիմոսյ Ղրէնոյսին երրորդէ 106 ողիմպիադին.

(Ի 26 օրէ յունիսի 354 ամի յուլիան կանխամթուական շրջանին մինչև 'ի 14 յուլիսի 353 ամին Ն. Ք.:)

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈԴՈՐԱՑ

ՊԱՌԱԿՏԵԱԼ Է Լչլաղա'. կէսք եղերեն զխրատ խոյս Փիլոմելայ, այլք գովեն զայն։ Մեբացիք հանդերձ ամենայն բազմութեամբ զօրացն բիովտացւոց և լոկրիսացիք, և ազգք բնակեալք 'ի Մեսաղիա, 'ի վրէժխնդրութիւն իւրաքանչիւր թշնամանացն՝ սպառնան խնդրել զվրէժ դեղփական դիցն։ Ղթենացիք և սպարտացիք և կէսք 'ի քաղաքաց պեղոպոնեսացւոց միաբանեցին ընդ փոխկիսացիս ոխութեամբն ընդդէմ Թեբացւոց։...

Փիլոմել խոստանայր 'ի սկզբանն չարկանել ձեռն 'ի գանձս մեհենին[2]. բայց զարհուրեալ 'ի սպառազինութենէ Թեբացւոց՝ գրաւեաց անտի մնան ինչ, և յաւել նուաւ զառձիկ վարձուոր զօրացն որ ամենուստ դիմեն 'ի Դեղփիս։ Լցհար նա զհետ միմեանց զլոկրիսացիս, զբիովտացիս և զԹեսաղացիս։...

Ի բազում աւուրք էն զի բանակն փոխկիսացւոց վարեալ յանտառախիտս, պատահեաց բանակին բիովտացւոց՝ որոց բազմագոյն էր Թիւ. և

1 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 430։ 2 Նոյն անդ, էջ 429 և 431։

*կալան սոքա յաղթութիւն մեծ։ Փիլոմել վիրա-
լից հալածեալ 'ի մի 'ի բլոց անուրեք անփա-
խուստ, լաւ համարեցաւ մղիլ ընդ վախս գահա-
վէժ քան անկանել 'ի ձեռս թշնամեաց։..'*

Որ ինչ անցք առ Իշխանութեամբն Լիւդեմայ յամին ըստ Ցրիստոսի 106 ոգիմպիադին.

(Ի 14 օրէն յուլիսի 353 ամին մինչև 13 յուլիսի 352 ամին Ն. Ք։)

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՒՈՐԱՑ

Ի ՎԵՐՋՆՈՒՄ ժողովի փովկիսացւոց խոհականագոյնք կամէին ի խաղաղութիւն. բայց Մնամնքեաց ժողովեալ զկաց մնաց բանակին, հաւանեցոյց Ճարտարխօսութեամբն և համբաւով հանապազորդել 'ի պատերազմն, և տուաւ նմա իշխանութիւն նոյն՝ որ ինչ Փիլոմելայ։ Յաւելու նա արդ ժողովել զօրս՝ արծաթն և ոսկի առեալ 'ի գանձուց մեհենին հատան 'ի դրամ, և բազումք 'ի գեղեցիկ պատկերաց պղնձեաց որ էին 'ի Դեղփիս, ձուլեցան 'ի սաղաւարտս և 'ի սուսերս։..[2]

Լուր եղև դարձուցանելոյ Աղտաշիսի արքային Պարսից զզէնս իւր յԱյլադա. և ամենեցուն զսպառազինութեանցն նորա և զգանձուց Ճառս արկեալ խօսէին։ Լուայ իսկ ասելոյ բազմաց՝ թէ

[1] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 2. էջ 802։ 432։ Պաւսան. գիրք ԺԵ. գլ. [2] Դիոդ. անդ, էջ 433։

հազար և երկերիւր ուղտք ոչ բաւեսցեն 'ի կրել զոսկին ածեալ 'ի ռոճիկ զօրականին[1]։

Լսառն 'ի խուռն գումարեցաւ ժողով. և յարհաւիրս հասարակաց երկիւղին՝ կէսք ասէին կոչել 'ի պաշտպանութիւն Յլլադայ զամենայն որ 'ի նմա բնակեալ ազգս, և զարքայն իսկ մակեդոնացւոց[2]. և կանխել քան զԹագաւորն Պարսից, ածել յաշխարհն նորա պատերազմ։ Դեմոսթենէս որ պայծառացեալ դատաստանութեամբ յաստեանս՝ մտանէ 'ի ժամանակաց ինչ հետէ յիրս աշխարհիս, հակառակ եկաց խորհրդոյն. այլ հզօրագոյնս վիճեալ պնդեցաւ՝ զի հարկ է պատրաստել մեզ 'ի պահ անձանց։ Զ ամենայն ինչ խորհեցաւ նա, և կանխեաց Եցոյց՝ քանի ինչ պատերազմիկ նաւաց մեզ պէտք էին, որչափ հետևակաց և որքան հեծելոց, և զինչ գանձք կարիւորք, և ուստի մարթ էր մեզ հայթայթել զայն։ Յամենեքին ծափս հարեալ գովեցին զխորհուրդս Ճարտարախօսին։ Յիրաւի իսկ. զի եթէ Ար տաշէս արշաւէր Յլլադա, կարիւոր էին ընդդէմ նորա սպառազինութիւնքն. իսկ եթէ ոչ, ընդդէմ այժմու թշնամեացս նոցնք էին պիտանի[3]։ Այսպա գիտացաք զի թագաւորն Պարսից չխորհէր ինչ զմէնջ, և ոչ ևս մեք խորհիմք զայնմանէ։

Կարի անընդունելականք էն ինձ ծայրայեղ ան-

1 Դեմոսթ. յղ. Նաւա- մոսթ. էջ 114։
տորմ. էջ 136
2 Թուղթ Փիլ. առ Դե- հաոգ. էջ 144։
3 Դեմոսթ. յղ. ապատ.

չափութիւնքս, մերթ վշատել 'ի սպառ և մերթ վստահել անկասկած։ Այ՝ իսք մեր վեր 'ի վայր յեղաշրջեալ, 'ի քթթել ակն դառնան անդրէն 'ի նոյն։ Այ՝ արթի արդեօք իւրաքանչիւր ումեք թեթևամտել, զի զթերութեանցն իւրոց չառնու զչափ. այլ զինչ 'ի դէպ ի՞նչ ասել, ուր ազգ մի ողջոյն՝ որում չէք անցեալ և հանդերձեալ, այլ ամենայն ինչ նմա առընթեր կան, մուանայցէ զարհաւիրս իւր որպէս զցոլ փայլական և որպէս զՀայթ որոտման։...

Լաղջումք ահիւ և դողութեամբ խօսին զարքայէն Պարսից, և զմակեդոնացւոց թագաւորէն արհամարհանօք։ Այ՝ զմտաւ ածէն՝ զի սա 'ի ժամանակաց հետէ չդադարէ յասպատակելոյ 'ի սահմանս մեր, և զինուաձեալ զկղզիս մեր զՄՀբրոս և զ՝ Եվնոս՝ Էած կապեալս 'ի գերութիւն զքաղաքակիցս մեր բնակեալս 'ի նոսա. և զի զուսզումն 'ի նուաւաց մերոց յաւարի էառ 'ի Ծովեղերս Լիբիոյ, և զի դարձեալ յառաջ քան զաւուրս զայսոսիկ արշաւեալ յերկիր մեր 'ի Այ՝ արաթոն՝ կալաւ զնաւն սուրբ։ Լինդ նսխատինս ընդ այս, զոր ընկալաք 'ի տեղւոջ՝ ուր երբեմն փառայն մերոց լեալ էր տեսարան, զամօթի հարաք. այլ առ մեզ շառագունանք ամօթոյ վաղանցիկք են։

Փիլիպպոս յամենայն ժամ ամենայն ուրեք է. այն ինչ յափանց մերոց մեկնեալ, եհաս 'ի Ծո-

1 Դեմոսթ. յդ. ազատ. 2 Նոյն Փիլիպպ. 1. էջ 52։ Հոոդ. էջ 147։

վեզերեայս Թրակիոյ. նուաՃեաց անդ զԼԵԹՈՆԵ քաղաք ամուր, և կործանեալ զայն՝ զանդաստանս նորա բերրիս բաշխեաց զօրացն՝ որք փոխանակէն զանձինս 'ի վերայ նորա։

Ի պաշարել զքաղաքն անցանելով նորա ընդ գետ 'ի լոր[1], նեռ յաղեղնաւորէ կամ 'ի բաղստրէ ձգեալ՝ եհար զաջոյ ակն նորա[2]. այլ նա հանդերձ դժնդակ ցաւովքն դարձաւ անդրէն անվտանգ 'ի գետեզրն՝ ուստի մեկնեալն էր։ Կրիտոբուղ բժիշկ նորա խլեաց այնու Ճարտարութեամբ ըզսլաքն[3], զի թէպէտ և կուրացաւ ակն թագաւորին, այլ չեղև 'ի նմա տգեղութիւն*։

Եւ ոչ յարկածից ատուի դողացաւ եռանդն նորա. պաշարէ նա արդ զԱրէա ամրոց որ մեզն է անկ. և շրջուկ մեծ ընթանայ յԱԹէնս։ Ահմանեցաւ 'ի համախումբ ժողովի, զրամաժողով առնել վաթսուն քանքար, սպառազինել քառասուն նաւս պատերազմիկս, և զինուորել զամենայն արբունս 'ի քառասուն և հնգամենից և 'ի խոնարհ[4]**։ Համանակի պէտք էն 'ի պատրաստութիւն. ձմեռն 'ի վերայ կայ, և 'ի գարունն թողցի պատերազմն։

1 Կալլիսթ. առ Պլուտ. 'ի զուգակշիռան, հտ. 2. էջ 307։

2 Սորաբ. գիրք Ե. էջ 330. գիրք Ը. էջ 374։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 434։ Յուստին. գիրք Է. գլ. 6։

3 Պլին. գիրք Է. գլ. 37. հտ. 1. էջ 395։

* Կղեմենս հայկաստակ Փիլիպպեայ յետ խոցելոյ ական նորա՝ ապեզանի 'ի վերայ միոյ յաչացն ածեալ, այնպէս յանգիման եղև նմա։ (Եղիան. կենդանաբ. գիրք Թ. գլ. 7։)

4 Դեմոսթ. ողնթ. 3. էջ 35։

** Յամենան հոկտեմբերի 353 ամաւ Ն. Ք։

Մինչդեռ երկիւղ 'ի խորհրդոց արքային Պարսից և յարշաւանաց Թագաւորին մակեդոնացւոց մեզ առաջի կայր, հրեշտակք յարքայէն սպարտացւոց և 'ի բնակչաց Մեգաղուպոլսի՝ զոր նա պաշարեալ պահէ՝ հասին առ մեզ. յորդորել զմեզ Աքիլղամոս զումարել ընդ իւր, և դարձուցանել զքաղաքս Լակեդայ 'ի կարգն յորում էին նախ քան զյետին պատերազմունս։ Հատուցումն ամենայն յափշտակութեանց, և նորակերտ ամրոցաց քանդումն. Թեբացւոց դարձուցանել 'ի մեզ զՊրոպ զոր յափշտակեցին, կանգնել անդրէն զԹեսպիէս և զՊղատիէս զորս կործանեցին, և կործանել զԱքրակդիա զՄեգաղուպոլիս՝ զոր ընդդէմ հինիցն յարձակմանց սպարտացւոց կառուցին։ Լակեդաւակեցան Ճարտարախօսք և քաղաքացիք. Դեմոսթենէս[1] յանդիման արար զի այս ամենայն արդարև տկարացուցեն զոսոխս մեր զԹեբացիս, այլ և եւս զօրացուցեն զնիզակակիցս մեր զսպարտացիս, ուր ապահովութիւն մեր հաստատեալ կայ 'ի հաւասար զօրութեան երկուց պետութեանցն, զոր ամենայն հնարիւք խնդրելի է մեզ։ Լաւ ամենեքեան միաբանեցին 'ի խորհուրդ նորա։

Փոքրիկացիք ձեռն ետուն սպարտացւոց, իսկ Թեբացիք և այլք ոմանք մեգաղուպոլսեցւոց։ Դաշնակցումն խառնուրդք եղեն Ճակատուց, այլ ընդ

[1] Դեմոսթ. վասն Մեգաղուպ. էջ 154։

հուպ լեցի խաղաղութիւն՝ յետ արիւնհեղութեանց բազմաց։

Ել ինչ նուազ Ճապաղիք եղեն արեան՝ ի հիւսիսային գաւառս մեր։ Փոկիսացիք, բիսիտացիք և Թեսաղացիք մի ըստ միոջէ մերթ յաղթող և մերթ նկուն լեալ, ոչ առնէին զբաւ մարտին՝ զոր կրօնք և նախանձայուզութիւն կարի յոյժ զոր-ծէին զժնդակ։ Վասն բնի՝ ի վերայ յաւելեալ, զաղետաւոր եղից իրացն յաՃախէն կասկածանս։ Իկոտրոն՝ բռնաւոր փերեսացւոյ որ՝ ի Թեսաղիա՝ միաբանեաց ընդ փոկիկիացիս ընդդէմ Թեսաղացւոց. և սոքա օգնութիւն խնդրեցին՝ ի Փիլիպպէայ, որ ոչ յամեաց հասանել առ նոսա, այլ յետ Թեթև ինչ պատերազմաց՝ սաստկապէս յերկուս Ճակատս հարեալ, ստիպեցաւ խոյս տալ՝ ի Մակեդոնիա։ Յա մինչդեռ Թուէին՝ ի նեղանկեալ, և սկսանէին Թօթափել՝ ի նմանէ զօրքն, և ահա գտաւ նա՝ ի Թեսաղիա։ Յին նորա՝ հանգումանը ընդ նիզակակիցս իւր Թեսաղացիս՝ աւելի քան զքսանևերիս հազարս հետեւակաց, և քան զերիս հազարս հեծելոց։ Մնումնը քան հազար արամբք և երեք հազար այրուձիով ելհաս յօգնութիւն Իկոտրոնի։ Փոկիկիացիք ընդ երկար դիմնմարտեալ, ապա հարան և վարեցան՝ ի ծովեզերն, ուր՝ ի բացեայ՝ ի ցամաքէն կայր տոմիզ նաւացն ամենացւոց՝ որոց զօրավարեր Վաա-

1 Դիոդ. գիրք ԺԶ. կէ 438։

րէս։ Խազու�մք 'ի նոցանէ 'ի լոր անկեալ կորեան, և Մնոմարք զօրավար նոցա ընդ նոսա. զորոյ զդէն հրամայեաց Փիլիպպոս խնդրել և կախել զփայտէ։ Մեծ եղև յոյժ հարուած փովկիսացւոց, վեց հազարք անկան 'ի պատերազմի, և երեք հազարք գերեցան, զորս ծուլամտին հրամայեաց առնել Փիլիպպոս որպէս զսեղանակապուտս '։

Լեռնացիք միաբանեալ ընդ Փիլիպպեայ, տապալեցին զԹումբս և զամբարտակս՝ որ կային առաջի փառատրութեան նորա խտիան։ Յամանց հետէ մնայր նա տկարանալոյ Յունաց, և 'ի բարձուէ գահոյիցն որպէս 'ի դիտանոցէ լրտեսէր՝ թէ երբ գայցեն խնդրել զօգնութիւն իւր. և ահա մուծաւ նա յիրս Նէլադայ։ Սամիկն անհաս 'ի դիտաւորութիւն խորհրդոց նորա, համարի զնա վարեալ 'ի նախանձ կրօնից. և ամենայն ուրեք հոչակէ՝ իբր թէ սրբութեամբ վրէժխնդրութեանն յաղթանակիցէ, ընտրեալ 'ի դից վրէժխնդիր բագնաց նոցա։ Օ՛ի Լեռնահոգութեամբ յառաջ քան զձակատամարտն սարդիս հրամայեաց զօրացն պատկել, որպէս այն թէ յանուն դեղփական դիցն՝ որում ծառն այն նուիրեալ է՝ գնային 'ի պատերազմ[1]։

Ընդ անապակ նախանձ կրօնիցն, և ընդ պայծառ յաղթութիւնս նորա հիացեալ իմն էն Յոյնք. ամենեքին գնմանէ խօսին և զաջողու-

[1] Դիոդ. գիրք ԻԶ. էջ 435։ էջ 802։
Պաւսան. գիրք Ա. գլ. 3։ [2] Յուստին. գիրք Ը. գլ. 2։

թեանց մտայնորա և զառաքինութեանցն։ Յա-
ւելում և որ ինչ պատմեցաւ ինձ զնմանէ։

Չի՛ բանակի նորա մի՛ զինուորաց անուա-
նի՝ քաջութեամբ, այլ մոլեալ յարծաթսիրու-
թիւն՝։ Նաւել նորա հեռի ուրեք հրեշտակու-
թեամբ, նաւաբեկեալ անկանի կիսամեռ յեզը
ծովուն։ Մի՛ ոմն՝ի մակեդոնացւոց, որ մերձ՝ի
տեղի անդր մշակէր ածու փոքրիկ, իրազեկ լեալ՝
հասանէ յօգնութիւն, և դարձուցանէ զնա՝ի
կեանս. և ածեալ՝ի տուն իւր՝ հանգուցանէ
զնա յիւր մահիճն, և ամենօրեայ մի ժամանակ
խնամեալ զնա և սփոփեալ ամենայն գթութիւք և
մարդասիրութեամբ, ապա տայ նմա և զծախս
Հանապարհին դառնալոյ անդրէն առ Փիլիպպոս։
Սակ զինուորն՝ի մեկնելն իւրում ասէ. Ոչ գոյ
զչափ շնորհակալեաց իմոց, եթէ միայն լիցի ինձ
հասանել առ տէրն իմ արքայ։ Չ՝ հասեալ պատ-
մէ Փիլիպպեայ զարկածս իւր, լռեալ ամենևին
զխնամակալութէն. և խնդրէ փոխարէն զտուն մի
փոքրիկ մերձակայ՝ի ծովեզրն, ուր ալիքն ընկե-
ցին զնա. և տունն այն էր բարեբարին իւրոյ։ Ող-
գաւորն շնորհէ նմա անդրէն զխնդիրն. այլ ապա
Հնմարտութեան իրացն՝ի վերայ հասեալ նա-
մականուով տանուտեառնն՝ զոր լի աղնուականու-
թեամբ ասէն գրեալ, բրդի՝ի ցասումն. և պա-
տուէր առնէ կուսակալին՝ դարձուցանել զտունն
՝ի տանուտէրն, և շանթացեալ երկաթով դրոշմ

։ Սենեկա, յլ. բարեր. գիրք Դ. գլ. 37։

նախատանաց Հարկանել՝ ի Ձակատ զինուորին։

Բդ զգործս զայս երկնաւոր բարձրացուցա-նեն զրուատեօք. զովեմ և ես, այլ առանց զար-մանալոյ ընդ իրսն. և առաւելագոյն պատժոց արժանի համարիմ զՊիլիպպոս քան զանարգ վարձկանն։ Վասնզի թագաւոր որ անիրաւ ինչ առանց քննութեան հնարէ, յանցաւորագոյն է քան զինդրող հնարէին։ Օ՞ինչ ասա պարտ էր Փիլիպպեայ առնել յետ անուանարկ կա-ցուցանելոյ զզինուորն. բայց հրաժարել՝ ի չա-բաշուք պատուոյն յօտարին ընչից առատաձեռնե-լոյ, և խոստանալ ընդ ամենայն սահմանս տե-րութեան իւրոյ՝ մի՛ և անքննաբար ինչ ուանք հնարել։

Որ ինչ անդ առ իշխանութեամբն Աբիսոդոբեմայ յառաջնումն ամի 107 ոգեմպատին.

(Ցերբոդ օրէ յուլիսի 352 ամին մինչև՛ ի 22 յուլիսի 351 ա-մին հ. Ք։)

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՒՐԱՑ

Որպէս ուրեք յառաջին թուղթս իմ գրեցի, առ՝ ի խափանել զարշաւանս Փիլիպպեայ և արգելուլ զնոս յերկիր իւր՝ սահմանեցաւ զրամա-ժողով առնել վաթսուն քանքար, և արձակել՝ ի Թրակիա քառասուն նաւս պատերազմիկս յա-Ճախագունդ զօրօք։ Այսիք իբր մետասան անցին՝ ի պատրաստութիւն, և հինգ քանքարք գտան

ժողովեալ, և տասն նաւք սպառազինեալ՝։ Դա-
ռիդեմոս զօրավար ընտրեալ՝ մինչդեռ պատրաս-
տէր չու առնել, հնչեաց համբաւ թէ Փիլիպպոս
հիւանդացեալ կայր, մերձ 'ի մեռանել։ Զ զէնս
վաղվաղակի 'ի բաց եդաք, և Փիլիպպոս յա-
ռաջ խաղաց 'ի Թերմոպիլէ. պատրաստէր հար-
կանել զՊոլիկիս[2], և անտի մարթէր իսկ նմա
հասանել այսր։ Պէտք 'ի բարի յաջողեցին մեզ,
զի կայր մերձ առ ծովեզերքս տորմիղ նաւացն՝
որ ածէր փոլիկիսացւոց զօրս յօգնութիւն։ Դա-
սիկղէս զօրավար նոցա աճապարեաց ի ջոյց զնոսա
յերկիր, և կացոյց 'ի պահակն։ Դ Փիլիպպեայ
խափանեալ 'ի խորհրդոցն, դարձաւ անդրէն 'ի
Մակեդոնիա[3]։

Լրտեսացաք յաջողութեամբս, և նիզակա-
կիցք մեր ուրախ եղեն ընդ մեզ. և գոհութիւնք
դիցն սահմանեցան, և զօրականին ներբող[4]։ Մ-
սաղելի քաղաք, ուր 'ի քաջութիւն համարի ըղ-
կայ ուրեք առնուլ անպատերազմ, և 'ի յաղթա-
նակ՝ աննկուն մեկնել 'ի պատերազմէ։...

Դ յետ աւուրցն այնոցիկ ածան 'ի համա-
խումբ ժողով պատճառք գրգռութեանցն մերոց
ընդ արքային մակեդոնացւոց։ Պէտմոսթենէս
կացեալ 'ի բեմ[5], նկարագրեաց յայտ յանդի-

1 Դեմոսթ. ոլինթ. 3. գիրք Գ. գլ. 12։ էջ 35։
2 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 437։
3 Նոյն, էջ 436։ Դեմոսթ. Փիլիպպ. 1. էջ 49։ Ուրոս. էջ 47։
4 Դեմոսթ. յոլ. վրէպ հրեշտ. էջ 306։
5 Դեմոսթ. Փիլիպպ. 1.

ման զյուլութիւն և զթեթևամտութիւն ամենայնացուց, զանհմտութիւն և զձախողակի խորհուրդս զօրավարաց նոցա, և զփառամոլութիւն և զնարտարութիւն Փիլիպպեայ։ Լսատ ետ ըսպառազինել զտոմիղ նաւաց, և կազմել բանակ զէթ ըստ մասին ինչ 'ի քաղաքայնոց[1], ածել պատերազմ 'ի Մակեդոնիա, և մի զրաւ առնել մարտին՝ բայց միայն պայմանաւք որ իցեն մեզ յօգուտ, և կամ լեռվ յաղթութեամբ։[2] Բանզի ասէր, զի եթէ ոչ մեք կանխեսցուք յարձակել 'ի վերայ Փիլիպպեայ յերկիր իւր, գուցէ նա ինքն ընդ հուպ հասցէ այսր 'ի վերայ մեր[3]։ Լցոյց և զթիւ զօրացն որ կարևոր էին, և թէ ուստի զոռձիկ նոցա մարթէր հայթայթել։

Լուաջարկութեամբն այսուիկ ցրեսցին խորհուրդք Փիլիպպեայ, չխափանեսցի նա 'ի պատերազմէն ընդ մեզ 'ի տոյժս նիզակակցաց մերոց՝ զորոց զնաւս յափշտակէ համարձակ[4]։ Սովաւ խրախուսեսցին և աղքատք առ հարկի ապաւինեալ 'ի նա, տանին զլուծ նիզակակցութեան նորա դողութեամբ և ոխութեամբ՝ յոր ածէ զնոսա ամբարտաւանութեան փառամոլ արքային[5]։ Այս ամենայն Դեմոսթենէս հզօր և բացայայտ բանիւք առաջի արար. բռնադատեալ նա Ճարտարիօսութեամբն զլսողս նկատել 'ի նկա-

[1] Դեմոսթ. Փիլիպպ. 1. էջ 50։
[2] Նոյն անդ, էջ 49։
[3] Նոյն անդ, էջ 54։
[4] Նոյն անդ, էջ 52։
[5] Նոյն անդ, էջ 48։

բազրութիւնն զկորանս գործեցելոց վերիպակաց իւրեանց և զառաջիկայ վտանգին։

Տեսէք, ասէր, յո՛ր ժպրհութիւն զառաքաւ Փիլիպպոս[1], զի և ոչ զխաղաղութիւն կամ ըզպատերազմ յընտիր առնէ ձեզ. այլ սպառնայ, և ըմբռստս՝ որպէս 'ի համբաւոյ լսեմք՝ բարբառի. և կանխակալ աշխարհակալութեամբքն չըշատացեալ, յայլս մտաբերէ հանապազ. և մինչ զուք աստ 'ի խաղաղութեան կայք, նա պատեալ պաշարէ զձեզ շուրջանակի յամենայն կողմանց։ Այս ո՞ւմ կայք. թերևս հարկին բռնադատութեան։ Ա՛մբէ, և զինչ առաւել քան զամօթ և զնախատինս հարկեցուցող ազատ մարդկան բռնադատութիւն կայցէ։ Մինչև ցե՞րբ 'ի հրապարակս զբոյցս 'ի միմեանց հարցանիցէք. և զինչ այլ զբոյցս խնդրէք, զի ահա այր մի մակեդոնացի տիրապետեալ Յունաստան՝ խորհի նուաճել զԱթէնս։... Մին մեռեալ ասէ զՓիլիպպոս, և այլ ոմն՝ թէ ոչ, այլ հիւանդացեալ է։ Այս զի՞ փոյթ է՝ թէ դա՛ մեռեալ կամ կենդանի իցէ. ահա 'ի դմանէ ազատեալ, զայլ ոք յուլութեամբդ ձերով և վատութի՛ւն յարուցանիցէք 'ի վերայ ձեր։

Վասն է արդ ձեռն 'ի գործ առնելոյ, և դո՛ք յընդունայն խորհուրդս լինիք ժամավաճառ։ Օ՞ր ավարքդ ձեր փոխանակ կալոյ 'ի գլուխս բանակաց, հետևակեն զհետ քրմանց մեծաշուք փառաւոք՝ առ 'ի յաճախել զպայծառութիւն կրօնաս

[1] Դեմոսթ. Փիլիպպ. 1. էջ 48։

կան հանդիսից [1]։ Ի վարձկանաց այսուհետև կազմին բանակք, 'ի սինկլիտոս խուժանէն ազգաց օտարաց, 'ի վատ սրիկայից, որք զզօրավարս իւրեանց վարեալ մղէին մերթ առ նիզակակիցս ձեր՝ որոց են նոքա 'ի սոսկումն, և մերթ առ ազգս խուժադուժս՝ որք 'ի կարևոր ժամանակի բառնան 'ի ձէնջ զօգնականութիւն նոցա [2]։ Տարտամ և խառն 'ի խուռն պատրաստութիւնք ձեր [3]. և չիք կարգ և նախատեսուն յառաջարկութիւս խորհրդոց ձերոց և 'ի կատարումն նոյ։ Դէպք և պատահարք հրամայեն ձեզ, և ժամ բարեպատեհ խուսափիլ 'ի ձէնջ հանապազ։ Մթիւք դանդաղք, որք ոչ երբէք կանխեաք զՀարուածս 'ի պահ անձանց։ Հանքաւ եթէ գուժէ զՓիլիպպոս 'ի Դերսոնեսոն հասեալ, վաղվաղէք տալ հրաման հասանելոյ անդր յօգնութիւն. եթէ 'ի Թերմոպիլէ հասեալ, այլ հրաման անդր զզօրս խաղացուցանելոյ։ Յաջ և յահեակ յոր կոյս և նայն զձեզ ածիցէ արշաւէք. միշտ զՀետ նորա երթեալ, և ոչ ուրեք առ այլ ինչ հասեալ՝ քայց առ 'ի լինել ականատես յաղթութեանց նորա [4]։

Ամենաբանութիւն նորա ծայր 'ի ծայր լի է այսպիսեաւք բանիւք. և երևէին 'ի Ճառս նորա տիպք կերպարանաց բանից Թուկիդիդէսայ, զոր նախատիպ իւր ունի [5]։ Յելանեալն լուայ՝ զի բա-

1 Դեմոսթ. Փիլիպպ. 1. էջ 51։
2 Նոյն անդ. էջ 50։
3 Նոյն անդ. էջ 52։
4 Նոյն անդ. էջ 53։
5 Դիոն. ասիկ. վասն Թուկիդ. գլ. 53. հատ. 6. էջ 944։

զումք յաթենացւոց գովէին զնա յոյժ, և հարցանէին զրոյցս զՊովկիսացւոց։

Ասերևս և դու զնոյն ինձ հարցանիցես։ Յետ յաղթութեանն Փիլիպպեայ թուէին իմն վերջացեալ յամենայն օգնականութենէ, այլ գանձք որ 'ի Դեղփիս, 'ի ձեռս նոցա կան. և յաւելեալ նոցա զռոճիկ զօրականին, առ նոսա ժողովին առ հասարակ զօրք վարձկանք դիմեալք յԱլեղադա։ ՆՕակատամարտն յետին մնաց անպարտելի. 'ի բազում այլ Ճակատս յաղթեցան և յաղթեցին. աւար հարին զսահմանս լոկրիսացւոց, և երկիր նոցա աւար հարաւ 'ի թեբացւոց'։

Բարեկամք մեր որ անձկան հանապազ տեսանել զքեզ, ժողովին երբէք երբէք առ իս։ Լրիկ յերեկորին զուցատրութիւնս բանք եղեն, թէ ընդէր դուն ուրեք և ընդ ժամանակս ժամանակս կան աղք երևելիք։ Ընդերկարեցին վէճքն, և Արիստիպ ժխտէր՝ թէ բնութիւն խտրիցէ զժամանակ և զտեղի, այլ վիճեալ պնդէր՝ թէ յամենայն ժամանակի և ամենայն ուրեք հաւասար բաշխիցէ զպարգևսն։ Ընուանէին իսկ Իկուրգոս և Հոմերոս, եթէ մին 'ի ծառայական ծնեալ էր բախտի, և միւսն եթէ նախ քան զկերպարանել բարբառոյ էր ծնեալ։ Ո՞ զիտէ քանիք և յաւուրս մեր գտանիցին առ ազգս բարգաւառեալս կամ խուժադուժս Հոմե-

1 Դիոգ. գիրք ԺԲ. էջ 436։

բոսք և] իկուրդոսք , պատաղելք յանարգ պաշտամունս։ Ի՝նուԹիւն միշտ ազատ և ցանգ բերրի , խառն 'ի խուռն և անխտիր սիրէ յերկիր զհանձարս . այլ դէպք բարեպատեհք յերևան ածեն զայնս։

Որ ինչ անցք առ Իշխանութեամբն Լեսոաղեայ յերկրորդումն ամի 107 ողիմպիադին .

(Ի 22 օրէ յուլիսի 350 ամին մինչև 'ի 11 յուլիսի 350 ամին Ն . Ք ։)

ՊԱՏՃԱՌՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՒՈՐԱՑ

Ի՝ՄՏԵՄՍԻԱ դշխոյն Կարիոյ մեռաւ , կեցեալ զերկեամ մի յետ մահուն Ա՝ասսլեայ եղբօր և առն իւրոյ ' ։ Ոչ ինչ զանխուլ է 'ի քէն , զի Ա՝ասսուլ էր մի 'ի Թագաւորաց՝ զորս արքունիք Հ՝օշայ յեղս սահմանաց ինքնակալութեան իւրեանց ունին պահակապանս ընդդէմ հինից Թշնամեաց։ Ոչ ինքն դշխոյն էր խրատիչ առն իւրոյ . և պատմեն զնմանէ՝ Թէ ժողովեալ զաՃիւն ոսկերաց Թագաւորին , առ գուԹ սիրոյն խառնեաց զայն ընդ ըմպելին իւր ² . և Թէ սուգ սիրելւոյն ած զնա 'ի գերեզման։ Ոչ ինչ նուազ եռանդն էր նմա 'ի կատարումն փառասէր խորհրդոցն , յորս խրատեալ էր զայր իւր։ Ա՝ասսլ 'ի դէպս բարե-

¹ Դիոդ . գիրք ԺԶ. էջ 443։ 18։ Վաղ . Մաքա . գիրք Դ .
² Ա՝ել . Դեղ . գիրք Ժ . դլ . գլ . 6։

պատեհս յաւելեալ զնենգութիւն [1], նուաձեաց զԱիով և զՀռոդոս կղզիս և զբազում քաղաքս Յունաց. և Արտեմիսիա կալաւ զնոսա մինչև 'ի սպառ 'ի հնազանդութեան [2]։

Տեսս ինձ քանի անիրաւ են և դժնեայ օրէնքն՝ որ վարեն զաշխարհ, և որով թագաւորք յաճախեն իւրեանց իշխանութիւն և փառս։ Լսեմ Արտեմիսեայ զիտացեալ էր զնշմարիտ օգուտ առն իւրոյ, խրատէր զնա թողուլ մեծագոր պետութեանց զնենգ և զհարստահարութիւնս, և հաստատել զփառս իւր 'ի բարեբաստութիւն գաւառին իւրոյ, և սիրելի լինել ժողովրդեան՝ որ ոչ այլ ինչ խնդրէ յիշխանէն, բայց զի մի իբրև թշնամւոյ իշխեսցէ իւր։ Այլնա կամեցաւ աշխարհակալ կացուցանել զայր իւր, և երկաբանչիւր սպառեցին զարիւն և զգոյս ժողովրդոց իւրեանց [3]. և առ ինչ, բայց առ 'ի զարգարել զԱ. զիկառնաս քաղաք փոքրիկ, և պայծառացուցանել զյիշատակ զանշանի ուրուք փոխանորդի արքային Պարսից։

Արտեմիսիա զամենայն հնարս հնարեցաւ վասն անմահացուցանելոյ զառնն իւրոյ զյիշատակ։ Արծարծեցոյց պարգևաւք զՀանձարս երևելիս 'ի պանծացուցանել զարութիւնս Աւսոլեայ, և

1 Թէոպոմպ. առ Հար. պոկրատ, 'ի բառն Ἀρτεμ. Սպրաբ. գիրք ԺԴ. էջ 655։ Պիկեր. տուսկուլ. գիրք Գ. գլ. 31. հա. 2. էջ 326։

2 Դեմոսթ. յդ. ազատ. հոդ. էջ 147։ 3 Թէոպոմպ. առ Հար. պոկր. 'ի բառն Μαύσω.

յօրինեցան տաղք և ողբերգութիւնք զնմանէ. և զՀարտարախօս Աղլադայ հրաւիրեաց 'ի ներբ բողել զնա։ Բազումք 'ի նոցանէ եկին ընդ միմեանս 'ի վէգ[1], և Խոկրատ ընդ ոմանս յաշակերտաց իւրոց պայքարեցաւ։ Թէոպոմպ որ գրէ զպատմութիւն Աղլադայ, յաղթեաց վարժապետին. և ոչ ամօթ համարեցաւ պարծել 'ի յաղթութիւնն[2]։ Հարցի զնա և ասեմ. 'ի յօրինել քո զներբող առնն, որ ազգատոհմն բազումս զօշաքաղութեամբն կործանեաց[3], ոչ անկանէր ստէպ գրիչն 'ի ձեռանէ քումմէ։ Այս ասաց ցիս. Բնատանօր որպէս Հարտարախօս Հառեցի, այլուր Հառեցից որպէս պատմաբան։ Բնհա եղեռն զոր Հարտասանութիւն օրէն համարի իւր, և զոր ներբեմք նման վատութեամբ։

Բրտեմիսիա և շիրիմ ևս ետ կառուցանել առն իւրում, որ զՀարտարացն ևեթ՝ որպէս թուի յաւերժացուցել զփառս։ Ցեսի իսկ զօրինակ նորա. և է քառակուսի երկայն, չորեքարիւր մետասան ոտնաչափ շրջապատ նորա։ Զ չորեսին գէմն գլխաւորագոյն մասին շինուածոյն, որ յերեսուն և 'ի վեցից շրջապատեալ սեանց, զարդարեն չորեքին քանդակագործք Աղլադայ անուանիք, Բրիաքսիս, Սկոպաս, Լեւոքարէս և Տի-

[1] Աբլ. Գ.Լ. գիրք ժ. գլ. 18։ Պլուտ. յոլ. վարուց տասն Հարտարախօս. հա. 2. էջ 838։ Սուիդ. 'ի բառն Γοσκρ.

[2] Թէոպոմպ. առ Եւսեբ. պատրաստ. աւետ. գիրք ժ. գլ. 3. էջ 464։

[3] Թէոպոմպ. առ Հարպոկր. և Սուիդ. 'ի բառն Μαύσωλ.

մեթէոս։ Եւ 'ի վերայ նորա կանգնեսցի բուրգն, և 'ի վերայ բրգանն կառք քառաձի՝ գործ քարակռի, զոր դրօշէ Պլինիոս։ Եւ բոլանդակ ձեռակերտին հարիւր և քառասուն ոտնաչափ լիցի բարձրութիւն [1]*։

Եւ սակաւ յառաջ ածեալ է գործն. և զի Իդրիէոս յաջորդեալ Անտեմիսեայ քեռ իւրում՝ Թերահոգ 'ի ծախս գործոյն բերի, յանձն առին Հարտարքը առանց վարձուց վաստակել՝ փառս անձանց և պարտ համարեալ զկատարումն նորին [2]։ Կանգնի 'ի մէջ հրապարակին որ 'ի Աւսոլեայ կառուցեալ [3]; 'ի տեղւոջ որ անձեռագործ 'ի բնէ տեսարանաձև խոնարհեալ զառ 'ի վայր հասանէ մինչ 'ի ծով. և մտելոցն 'ի նաւահանգիստ անդր երևի ահեղ տեսիլ վայրացն։ Ստի ապարանք Թագաւորին, և անտի մերհան Սրբոյ Գանն և Հերմեայ մերձ 'ի Աղմակիս աղբիւր. և հանդէպ տարածանի 'ի շուկայն ընդ ծովեզրն, և հեռագոյն 'ի վեր կոյս ձգին աչք 'ի միջնաբերդն և 'ի մեհեան Քրիսի, ուր հսկայաձև ամբառնայ պատկեր։ Եւ շիրիմն Աւսոլեայ պատ-

1 Պլին. գիրք Լ.Զ. գլ. 4. հա. 2. էջ 728։

* Եթէ յունականք իցեն չափք՝ զոր 'ի նկարագիր շիրմիս 'ի կիրարկանէ Պլինիոս, չորեքհարիւր մետասան ոտնաչափք շրջապատին իցեն հաւասար երիքարիւրութեան դաղղական ոտից, երկոքումբք ոտնաչափօքևութիւն գրծիւք առելի։

2 Պլին. անդ։

3 Վիտրուվ. գիրք Բ. գլ. 8։

բատեալ 'ի սպառուած տեսութեան, յոր զկայ առցեն աչք՝ յետ վայրիկ մի 'ի հոյակապ շինուածսն զեգերելոյ, ի չքնաղ հրաշակերտս անելկայապէս կացցէ արձան ընդ տիեզերս '. այլաւաղ, զհոչ բարերարի ումեք մարդկան ազգի,

Իղրիէոս ընդ գահակալելն պատուէր ընկալաւ Մարտաշիսէ՝ արձակել զունդ մի յօգնականութիւն ընդդէմ Թագաւորացն Կիպրոսի ապստամբելոց։ Փոկիոն զօրավարէ զնդին ընդ Լեւազորայ, որ Թագաւորէր երբեմն 'ի կղզւոջն. և խորհին նոքա նախ զՍաղամինա պաշարել[1]։

Մարքայն Պարսից 'ի մեծամեծս եւս մնաբերէ խորհուրդս, զի պատրաստի նա յաշխարհակալութիւն Եգիպտոսի։ Ոչ ինչ երկայիմ, զի խորհիցէք յապահովութիւն անձանց։ Խնդրեաց նա 'ի մէնջ զօրս, խնդրեաց և յայլոց ազգաց Հելլադայ. այլ մեք ջառաք յանձն, հրաժարեցին և սպարտացիք։ Շատ իսկ է, զի տուաք նմա զՓոկիոն։ Մաղաքք Յունաց, բնակեալք Մարէիս, խոստացեալ են նմա վեց հազար այր. Թեբացիք մնատուցանեն հազար այր, և արգիւսցիք երեք հազար ընդ Եգիպտացոյ զօրավարի։ Սա այր քաջ, իբաց պատերազմի տեղեակ, տապալ 'ի նախանձ նմանութեան Հերակղեայ. տաւիծենի ըստ անձին, և լախտ 'ի ձեռին, այնպէս ելանէ

[1] Վիրաբ. գիրք Բ. գլ. 2. էջ 728։
8։ Պարաբ. գիրք ԺԴ. էջ 656։ [2] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 440։
Պլին. գիրք Լ.Զ. գլ. 4. հա.

'ի պատերազմ։ Լսէն իսկ Աբրահէս խնդրեաց զնա 'ի զօրավար '։

Ի ժամանակաց ինչ հետէ զզօրավարս մեր և զզօրս և զնաւաստիս վարձկանեմք թագաւորացն Պարսից, որ խնդրեն միշտ ունել զունդս յունական 'ի բանակի՝ վարձս առատապէս տալով նոցա։ Ասազում ինչ իրք յորդորեն զպետութիւնս մեր 'ի վաճառաշահս յայս. զի նուազեն այսու վարձք օտար զօրականին՝ որ անպիտան է 'ի ժամանակի խաղաղութեան և 'ի ծանրութիւն աշխարհին. զի քաղաքացիք չքաւորեալք 'ի պատերազմի, մեծանան անդրէն ընչիւք. զի պաշտպանութիւն և կամ նիզակակցութիւն մեծի թագաւորին պահի անկորուստ. և զի 'ի փոխարինաց անտի ընու նուազութիւն գանձուց աշխարհին։ Աբրահէս թէբացիք յառաջ քան զաւուրս զայսոսիկ ² ընկալան յԱբրահամ էրէք հարիւր քանքար։ Աբքայն մանկերդմնացւոց նախատեմ զմեզ, և թագաւորն Պարսից վարձկանեմ. ցայսմայր կոչանաց զառաջեալ հասաք։

¹ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 442։ ² Նոյն անդ. էջ 438։

Որ ինչ անցք առ Իշխանութեամբն Պղողդորայ յԵբրոդդոն ամի 107 ողիմպիադին.

(Ի 11 օրէ յուլիսի 350 ամի մինչև 30 օր յունիսի 349 ամին Ն. Ք։)

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ՆԻԿԵՏԱՑ

ՆՈԱՂՐ թուի ինձ երկիւղն, որով զարհուրեցուցանեն զմեզ։ Իշխանութիւն փիլիպպեայ ոչ ընդ երկար կացցէ, զի յենու 'ի ստերդմնութիւն, յանիրաւութիւն և 'ի նենգութիւն։ Պտղելի է նա նիզակակցայն, զի յաձախեաց նոցա խաբէութիւնս. ժողովրդեան և զօրականին, զի չարչարէ զնոսա արշաւանօք՝ յորս տաժանին առանց ինչ օգտի. 'ի գլխաւորաց սպայիցն, զի 'ի ձախողել մարտին պատուհասէ զնոսա, և 'ի յաջողելն ընկենու 'ի պատուոյ. այնքան մնչեալ նախանձու, զի դիւրագոյն ներել նոցա զկորակոր պարտութիւն քան զմեծապայծառ յաղթութիւն։ Յարհաւիրս մնչու կեան հանապազ, յար 'ի վտանգի զրպարտութեան արքունեաց, և բազմախելի կասկածանաց թագաւորին՝ որ զամենայն փառս Մակեդոնիոյ կամի իւր, և չէ մարթի այլում փառաւորել անդ[2]։

[1] Դեմոսթ. ողնթ. 2. էջ 22։ Պաւսան. գիրք Ը. գլ. 7. էջ 612։ Յուստին. գիրք Թ. գլ. 8։

[2] Դեմոսթ. անդ, էջ 23։ Նոյն թուղթ առ Փիլիպպ. էջ 118։

Բաղելի է աշխարհն. ոչ էս 'ի նմա հունձք, և ոչ տուրեւաւիկ վաճառաց շահաւետութիւնք. չքաւոր գոլով և տկար, տկարանայ և էս ընդարձակելոյն [1]։ Բրիածք ինչ դուշնաքեայք վեր 'ի վայր կործանեսցին զյաջողութիւն, զոր ժառանգէ Փիլիպպոս անհմտութեամբ զօրավարացն մերոց, և կաշառով զոր ոչ ամենայն ուրեք Հելլադա գաղտախութեալ [2]։

Կուսակիցք նորա պանծացուցանեն զբարեմասնութիւնս նորա. այլ էս որ ինչ 'ի քաջ ծանօթից նորա լուայ, ահաւասիկ գրեմ։

Բարեկարգութիւն կենաց բնաւ իսկ արհամարհեալ է առաջի նորա, և յոռութիւնք գրեթէ միշտ առ նմա արգոյք [3]։ Լոտեկ նա զքաղաքացիս առաքինիս, և մերժէ 'ի բաց զհանձարեղ խրատուս [4]. այնու փութով զհետ երթեալ մարդահաճոյից, որով մարդահաճութիւն զհետ երթայ այլոց թագաւորաց։ Պիւրին իցէ քեզ հաճոյ լինել նմա և գտանել զնորհս առաջի նորա, և կենակցութեան նորա արժանի լինել, եթէ իցէ քեզ առողջութիւն շուայտելոյ ընդ նմա, և աջողութիւն մնաց առ 'ի զբօսացուցանել զնա ծաղրաձութիւն։ Լրզիծանութիւն, խեղկատակութիւն, զուարճախօսութիւն, տաղք և ցուցք խենէշք, զամենայն որ գեբարգոյ կացուցանեն առ նմա։

1 Դեմոսթ. ողնթ. 2. էջ 23.
2 Նոյն յոլ. վերպ հրեշտ. էջ 334, 341։
3 Նոյն, ողնթ. 2. էջ 23։
Թէոպոմպ. առ Աթենն. գիրք Զ. էջ 260։
4 Խսոկր. թուղթ առ Փիլիպպոս. հա. 1. էջ 437։

Ի բաց առեալ զԼնտիպատրոս և զՊարմենիոն և զայլս ոմանս պիտանիս, լի են արքունիք նորա խառնաղանձ ամբոխիւ սրիկայից, երգեցկաց, քերթողաց և ծաղրածուաց[1], որք ընդ յոռին և ընդ լաւ ծափս հարկանեն գովութեամբ, յամենայն կողմանց Աղլադայ դիմեալք 'ի Անակեդոնիա։

Կալ լիաս Ճարտար հոգիոն և ծաղրածու, որ յառաջ քան զաւուրս ինչ ստրուկն էր հրապարականախատ 'ի քաղաքիս և հալածեալ առաւ 'ի բաց, այժմ մի յառաջնոցն է 'ի դրանիկս[2]։ Նովին հնարիւք և Ղազարոկդ, որ և նա գերի էր, ամբարձաւ յաւագութիւն. և կացոյց զնա Եպիսկոպոս 'ի վերայ գնդի միոյ զօրաց առ 'ի վարձ։ Եւ Աղրասիդէոս զարձեալ, խօթամնացոյնն և հանարձակ քան զամենայն շողոքորդս, դեռ ևս կալաւ իշխանութիւն 'ի Աղեսաղիա[3]։

Որքա արք զեղծմիտք և զեղծաբարոյք, կոչին յամենեցունց բարեկամք Թագաւորին և պատուհասք Անակեդոնիոյ։ Բազմութեան նոցա ոչ գոյ թիւ, և ոչ զօրութեան նոցա պայման։ Եւ շատացեալ ընդ դանձս զոր շռայլէ նոցա Թագաւորն, հարստահարեն զլաւ ոքեարն, և յարիշատակեն զինչս նոցա, կամ Ճարակ վրէժխնդրութեան իւրեանց տան զնոսա։ Ընդ նոսա ընկղմի

1 Դեմոսթ. ոլինթ. 2. էջ 23։ Թէոպոմպ. առ Ատեն. գիրք Ժ. էջ 439. և առ Պոլիբ. 'ի Ծաղկաքաղն Վալեսի, էջ 21։

2 Դեմոսթ. անդ. էջ 24։

3 Թէոպոմպ. առ Ատեն. գիրք Զ. գլ. 13. էջ 249։

'ի շուայտութիւնն՝ որ սոսկումն ածէն լսելեաց. հանէ զգիշերս 'ի խրախճանս, զրկեթէ հանապազ արբեալ, և միշտ զոգացեալ մոլեգնեալ՝ յաջ և յա-հեակ հարկանելով, և մատնեալ 'ի զեղխու-թիւնն՝ զոր ոչ է պարտ ասել՝։

Ա։ միայն 'ի նեղբս յարբունիս իւր, այլ և ա-ռաջի ազգաց անարգէ զիառս թագաւորութեան։ Յառաջ քան զաւուրս զայսոսիկ առ թեսա-զացիս հոմբաւեալս շուայտութեամբ՝ կոչունս առնելով ստէպ, զկնեհարեր ընդ նոսա, և յա-ճախեր զխրախութիւն կոչնականացն ծաղրա-ծութեամբք, և կայլեր և պարեր, և մերթ խեղկատակեալ և մերթ հոտտեալ ամենեցուն զանձն նմանեցուցաներ՝։

Կատակագուսանս այս զ[illegible] ոչ կարասցէ նուաճել. զինձ ոչ բնաւ կասկածդ այդ ի [illegible]-քարսիս։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Որ 'ի նմին աւուր ընդ առաջնում թղթոյս գրեալ։

ՉԿԱՐԵՄ փարատել 'ի մտաց զկասկած երկիւղն ընդ բախտ [illegible]։ Ի զուր այլք զբազմութիւն բնակչաց աշխարհիս պանծացուցանեն և զքաջութիւն զօրաց մերոց և զիառս կանխակալ յաղթութեանց. և 'ի զուր դարձեալ յուսա-

1 Թէոպոմպ. առ ԱԹԵՆ. 2 Նոյն անդ. գիրք Զ. գլ. գիրք Ժ. գլ. 10. էջ 439։ 17. էջ 260։

ցեալ էն՝ թէ Փիլիպպոս ոչ անդր քան զսահման զաշխարհակալութիւնս իւր մղեսցէ, և զի ցարդ ոչ յուրուք վերայ առանց պատճառանաց ինչ ամբարձ զձեռն։ Օ՛ի ես ոչ յամրութիւնս մեր, և ոչ 'ի խորհուրդս նորա կարեմ վստահել։

Զգոյշ Լաղադայ վատթարեալ էն և եղծեալ. ոչ ևս օրէնքն էն առ նոսա, ոչ ևս քաղաքացիք. ոչ ցանկութիւն փառաց, և ոչ հայրենասիրութիւն։ Զմենայն ուրեք վարձկանք փոխանակ զօրաց, և սրիկայք փոխանակ զօրավարաց։

Հաստատակամութիւնք մեր ոչ միաբանեսցեն երբեք ընդդէմ Փիլիպպոսեայ։ Կէսք 'ի նոցանէ պատաղեալ կան 'ի պատերազմ, որ զմնացուցած զօրութեան նոցա սպառէ. իսկ այլոց չիք ինչ հաստակաց, բայց միայն նախանձ և խրոխտումն՝ որ խափանէն զնոսա չմերձենալ առ միմեանս՝։ Օրինակ աթենացւոց մարթէր արդեօք յորդորել զնոսա առաւել քան զՀ օգտի իւրեանց. այլ արդ Զթէնք տոնախմբութեամբք ևեթ և տեսարանօք պայծառանան։ Լուսամանացն Փիլիպպեայ համբերեմք նովին արիութեամբ, որով հաղթն մեր ընդդէմ վտանգաց խիզախէին. և բուռն զօրութիւն Ճարտարիոսութեանն Դամոնթենեայ ոչ ընդոստուցանէ զմեզ 'ի թմբրութենէս։ Ի տեսանելն իմում զնա 'ի բեմի, թուի ինձ թէ առ շիրիմն նախնի շահատակացն մերոց պոչեցէ. Զձիւնք շիջեալք և ոսկերք ցամաքեալք,

1 Դեմոսթ. Փիլիպպ. 4. էջ 102։ Նոյն յոյ. պատկ. էջ 475։

արիք վրէժխնդիր լերուք հայրենեաց։

Լակ ընդ հակառակն Փիլիպպոս, ինքն ևեթ գիտակ խորհրդոց իւրոց, և միայնակ տնօրէն գանձուցն, Ձարտարագոյն քան զամենայն զօրավարս Լչլադայ, և քաջագոյն քան զամենայն զինուորս իւրոյ բանակին, երկնէ, պատրաստէ, գործէ իւրովի զամենայն, զառաջս առնու պատահարաց, յօգուտ 'ի կիր արկանէ զայնս ըստ կարի, և 'ի ստիպել հարկին՝ տեղի տայ նոցա[1]։ Օրք նորա քաջակիրթք են[2]. հրահանգէ զնա անդադար, և 'ի ժամանակի խաղաղութեան տայ նոցա արշաւել երեքհարիւր ասպարէզս բեռամբ զինուց և կապուսոյ[3]։ Հանապազ 'ի վերայ նոցա կայ, արագ արագ տեղափոխէ զնա ծագաց 'ի ծագս պետութեն. և զօրքն ըստ օրինակի զօրավարին ոչ ինչ խորեն ընդ ձմեռն և ընդ ամառն, ի աշխատութի և ընդ հանգիստ[4]։ Լթէ պատերազմ ածէ 'ի նեբքս 'ի Մակեդոնիա ջքաւորութիւն, հայթայթէ նա նպաստս առատութեամբ յոսկեհանաց աշխարհին, և յաւարէ թշնամեաց զորս նուաձէ, և 'ի վաճառականութենէ ազգաց որ սկսանին յաճախել 'ի նաւահանգիստս, զորս կալաւ նա 'ի Մակեդոնիա։ Յօրէ գահակալութէ իւրոյ 'ի մի ինչ ուշ ունի, այլ երկայնամտեալ՝ յամր բերի 'ի նոյն. խորհի յամենայն քայլափոխս իւր, և ոչ

1 Դեմոսթ. ողինթ. 1. էջ 1։
2 Նոյն ողինթ. 2. էջ 23։
3 Պոզիեն. 'ի մարթանան, գիրք Դ. գլ. 2. յօդ. 10։
4 Դեմոսթ. Փիլիպպ. 4. էջ 92։ Նոյն թուղթ առ Փիլիպպ. էջ 119։

զահեակ չարժէ զոսն՝ մինչև անկասկած հաստատեալ զայն։ Նոյպէ ցանկացող է փառաց, և 'ի վանդաս իսկ խնդրէ զայն, և 'ի խոսն մարտի, և ուր ծանրագոյն գնոց ստացանի՝։ Մինայն գործք նորա ուղղին ըստ ժամանակի և ըստ տեղւոյ. առ յաձախ վտարանդութիւնս թերկացւոց և լիւրիկեցւոց և այլոց խուժադուժ աղգաց դիմադրէ ձնկատամարտս և յաղթութիւնս. իսկ առ ազգս Լեհադայ՝ յարձակմունս 'ի փոքձ զօրութեանց նոցա, ջատագովութիւնս ասպատակութեանց իւրոց, հնարս պառակտելոյ զնոսա և տկարացուցանելոյ, և զարուեստ կաշառաբեկ առնելոյ առ 'ի նուաձել զնոսա[2]։

Ծաւալեցոյց 'ի նոսա զժանգս զայս, որ զցանկութիւն փառաց կաձնովին ցանքեցուցանէ[3]. ունի անդ 'ի վարձու զձարտարախօսս պետութեան, և զգլխաւորս 'ի քաղաքացոց, և քաղաքս իսկ ողջոյն։ Զի թողու և նիզակակցացն աշխարհակալել, որպէս զի եղեցին գործիք իւրոյ մեծութեանն, մինչև մատնեսցին նմին 'ի ձաքակ։ Զե վասն զի արք հանձարեղք մեծարոյ են առաջի ամենեցուն, ստէպ գրէ առ նոսա[4]. և 'ի կրել ինչ նոցա վիշտս 'ի հայրենեացն, տայ նոցա ապաւէն յարքունիս իւր[5]։

1 Դեմոսթ. ողնեթ. 2. էջ 23։ էջ 334, 341։
2 Նոյն յղ. պսակ. էջ 475 և 482։ Յուսաբն. գիրք Թ. գլ. 8։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 451։
3 Դեմոսթ. յղ. հաղոն. էջ 71։ Նոյն յղ. վերպ հրեշտ. էջ 334, 341։
4 Խոսք. Թուղթ առ Փիլիպպ։
5 Նոյն, յղ. վերպ հրեշտ. էջ 414։

Կուսակիցք նորա այնչափ բազումք էին, և 'ի դէպ Ժամանակի այնպէս օգնեալք 'ի նմանէ 'ի ծաղուկ, զի Թէպէտ և կասկածաւոր հանրաւին խոստմունք նորա և երդմունք, և բարեկամութի նորա դժնդակագոյն համարի քան զԹշնամութիւնն, ոչ ինչ երկմտեցին Թեսաղացիք անձնատուր լինել նմա. և բազումք յայլոց ազգաց խընդրեն պարապ նմանօղ լինելոյ նոցա։

Սակայն տակաւին տկար կարծի նա այնու, զի 'ի խանձարուրսն ծանեալք զզօրութիւն նորա։ Լսիցես ասելոյ բազմաց, եւս և զգօնագունիցս, իբր Թէ կասկածք զնորհրդոց Փիլիպպէայ յոյժ 'ի վեր քան զզօրութիւնս աշխարհին նորա իցեն։ Ա. յԼ զԱ՝ակեդոնիոյ աստանօր են բանք. զպետութենէ՝ որ զամն տասն յաւել անընդհատ 'ի զօրութիւն և 'ի հաստատութիւն, և զԹագաւորէ՝ որ հանձարո

խրախճանս անցուցանեն, նա 'ի հոգս աշխարհին պարապել։ Լցէ՛ թէ փոխանակ յոռութեանցըն յորս ամբաստանի, էին նմա թերութիւնք. լցէ՛ թէ չէր նմա լայնաձառալ տեսութիւն, և էր նա յամառ 'ի կարծիս, թերահոգ ընտրութիւն աւագայ իւրոց և զօրավարաց, և անզգոյշ և կարճամիտ 'ի գործս իւր։ Լցէ թերևս նմա թերութիւն, զի կարի ինն զարմանայ ընդ հանճարեղս, որպէս թէ չլցէ ինքն քան զամենեսին իսկ գերահանճար։ Հանճարաբանութիւն կախարդէ զնա, այլ ոչ տիրէ նմա։

Լաւ դարձեալ ճարտարախօսք մեր վստահացուցանեն զժողովուրդն, յեղանակելով յունին նոցա անդադար՝ թէ ոչ կացցէ իշխանութիւն խարխսեալ յանիրաւութիւն և 'ի դրժանս։ Լաւ ո՞ յերկուասցի ընդ այդ, եթէ և այլք 'ի պետութեանց չլցեն հանգոյն նմին դրժողք և անիրաւք. այլ առաքինութեանն պետութիւն էանց զնաց, և զօրութեան արդ ժամանակ է տիրապետելոյ մարդկան։

Արեցեալդ իմ Լնաքարսիս, յածել զմտաւ զանհունն ասպարէզն ընդ որ անց Փիլիպպոս 'ի սակաւ ատն, և զբազմապատիկ պատահարս որ 'ի վերայ կան, և զհանգամանս բարեպատեհս նմին՝ զորոց համառօտագիծ ետու զպատկեր, վկայեն ինձ միտք իմ, զի Փիլիպպոս ծառայեցուցեալ անշուշտ զԱլեքսանդրա։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԿԱԼԻՄԵԴՈՆԻ

Որ 'ի Նմին աւուր ընդ առաջնոց երկուց թղթոցս գրեալ։

ՄԵԾԱՐՈՑ է ինձ յոյժ Փիլիպպոս. սիրէ նա զփառս, զհանձար, զկանայս[1] և զգինի։ Յաթոռ իւրում մեծազօր քան զամենայն թագաւորս[2], իսկ յակումբս բարեկամաց՝ սիրելի քան զամենայն ոք։ Յարգէ նա զհանձար այլոց, և զարմացուցանէ զայլս իւրովն։ Քանի դիւրընտրել է բոյս բարուց նորա, և ուրպէս բարեձև տարազ. քանի կիրթ ախորժակք 'ի բանս նորա, և որպիսի շնորհ յամենայն գնացս նորա։

Աղքայրն մակեդոնացւոց հարկ է երբեմն առնել խստութիւն ընդ սպարտեալս. բայց Փիլիպպոս մարդասէր և քաղցր է և համբոյր[3] և իսկապէս բարի։ Ոչիք երկբայել ընդ այս, քանզի ցանկայ նա սիրելի լինել՝. զի ասացեալ իսկ է նորա չգիտեմ ում, թերևս ինձ իսկ, զի որ զուարթն է՝ չմարթի թէ ի՞նչ չար։

Յասումն նորա ընդ բորբոքելն և շինչանի. ազատ է 'ի մաղձոյ առանց քինու, և 'ի վեր քան զթշնամանս որպէս քան զգովութիւն։ Նարտապարախօսք մեր թշնամանալից առնեն զնա 'ի բեմն,

1 Ա թեն. գիրք ԺԳ. էջ 578։ Պլուտ. օրէնք ամուսն. հտ. 2. էջ 141։ Նոյն առակ. էջ 178։

2 Կիկեր. յզ. պատաշաճ. գիրք Ա. գլ. 26. հտ. 3. էջ 203։

3 Նոյն անդ։

4 Յուստին. գիրք Թ. գլ. 8։

է ուրեք՝ զի և 'ի հնազանդելոց իսկ նորա ոմանք ասէն նմա ոչ սիրելի բանս Հնմարտութեան. իսկ նա հնարէ ունի նոցա, առաջնոցն՝ զի ուղղէն զյուռութիւնս նորա[1], և յետնոց՝ զի ուսուցանէն նմա զպարտս իւր։ Կին ոմն յամբոխէն յանդիման լեալ նմա, աղերսէր դատ առնել իւր։ Թագաւորն ասէ. Ունիմ պարապ։ Չէ կինն ասէ. Ինդէր ապա թագաւորես։ Կարկեալ եկաց թագաւորն, և ետ ածել առաջի իւր զամենայն աղերսանս որ անտես լեալ էին։ Չէ այլ երբեմն 'ի ժամ դատաստանութեանն նիրհեալ, և ապա իբրև դատապարտէրն 'ի տուգանս զամբաստանեալն, աղաղակեաց նա անդէն. Խղճեմ։ Թագաւորն ասէ. Չէ յո՞ բողոքիցես։ Ընբաստանեալն ասէ. Ի Փիլիպպոս զգաստ բողոքեմ։ Չէ քննեաց թագաւորն անդրէն զդատաստանն, ծանեաւ զանիրաւութիւնն, և ինքնին զտոյժսն հատոյց[2]։

Կամիցիս զիտել զի յիշող է նա երախտեաց, Խարերարեաց նմա Փիլոն յառաջ քան զամն տասն, մինչդեռ պատանդ կայր 'ի Թեբէ. և յաւուրս յայսոսիկ հրեշտակս ուղարկն նմա Թեբայիք, և Փիլոն ընդ հրեշտակսն էր։ Թագաւորն կամեցաւ մեծապարգև մեծարել զնա[3], և 'ի մերժել նորա զպարգևսն, ասէ. Հիմ նախան-

[1] Պլուտ. առակ. հտ. 2. էջ 177։

[2] Նոյն անդ. էջ 178։

[3] Դիոմոսթ. յղ. վերոյ հրեշտ. էջ 314։

ձիս ընդ փառս իմ և ընդ խղճս յաղթելոց քեզ բարերարութեամբք՝։

Յառնուլ միոյ՝ի քաղաքաց և՝ի վանառել գեբոցն, մի՝ի նոցանէ յաղերս ածէր նմա զարարեկամութիւն իւր։ Ասաւորն զարմացեալ, կոչեաց զնա առ ինքն, և էր բազմեալ։ Եւ նորա մատուցեալ ասէ ցնա յունկանէ. Մի՛կ զքաղանցս քո՝ի վայր, զի անձահս բազմիս։ Եւ Թագաւորն ասէ. Զիարաւի բարեկամ իմ է դա, արձակեցէք զդա՝ի կապանաց[1]։

Հազում ինչ մարթէր ինձ յաւելուլ զհեղութենէ նորա և զլափոյից։ Յորժամ աւագանին նորա կամէր խոստութիւն առնել ընդ Դիկանովը, որ ոչն զդաղարեր՝ի նախատելոյ զտեսչութիւն նորա և զնացս, ասէ. Մի՛թէ Դիկանովը չարագոյն ոք իցէ քան զամենայն մակեդոնացիս. Թերևս իմ իսկ իցէ վնասն, զի անտես արարի զդա։ Եւ տեղեկացեալ զնմանէ գիտաց, զի վասն կարօտութեան դառնացեալ էր. և ելից զպէտս նորա։ Եւ իբրև սկսաւ Դիկանովը յետ այնորիկ գովել զբարերարն, ասէ Փիլիպպոս ցչարախօսսն. Տեսէք զի՝ի ձեռս իւր է Թագաւորի զրգռել կամ խափանել զարտաւոյն հնազանդելոց իւրոց[2]։ Եւ՝ի յորդորել զնա ոմանց՝ի հալածել զայլ ոմն, որ դառն և հանձարեղ երկիծանս ընդդէմ նորա առնէր, ասէ. Մի՛ լեցի ինձ առնել զայդ, զի այ-

1 Պլուտ. առակ. հտ. 2. էջ 178։
2 Նոյն անդ։
3 Նոյն. անդ. էջ 177։

նուէհետև ընդ ամենայն ուրեք երթեալ խօսիցի զոր ասան չարախօսք զինէն[1]։ Ի պաշարել զմի 'ի քաղաքաց, բեկաւ անբակ նորա 'ի քարէ ձգելոյ։ Այլ վերաբուժին 'ի պատելն զայն խնդրելով ինչ շնորհս[2], ասէ ցնա թագաւորն ժպտելով. Հարկ է ինձ շնորհել քեզ զայդ, զի զվողէ իմմէ ունիս*։

Արքունիքն նր ապաւէնն է հանձարոյ և օթևան զբօսանաց. մեծապայծառ են անդ խնջոյք, և զուարթ ընթրիք։ Այլ ուր այս ամենայն արդիւնք իրաց առաջի կան, ոչ ինչ փոյթ է ինձ զփառասիրութենէ նորա։ Զչուառութիւն թուեսցիքեզ ընդ այսպիսի թագաւորաւ կալ. եթէ գայցէ 'ի վերայ մեր, ելցուք ընդդէմ նորա. և եթէ յաղթիմք, լեսցի մեզ զբօսնուլ ընդ նմա 'ի ծաղր և 'ի զինեբբուս։

Ա։ ԻՆՉ ԱՆՈՅ ԱՌ ԽՂԻՄԱՈՒԹԵԱՄԲՆ ԱՅԼԻՄԱՓԷՈՅ 'Ի ԸՐԴՐՈՒՆ ԱՌ 107 ՈՂԻՄՊԻԱԴԷՆ.

(Յերեմներորդ օրէ յունիսի 349 ամին մինչև յ18 յուլիսի 348 ամին 'ն Ք։)

Ի ՇՐՋԵԼՆ մերում Այգիպտոս և 'Ի Պարսս, զրկեաք յամենայն դէպս մանրապատում զիրս ուղևորութեան մերոյ առ բարեկամս մեր Յ՝

1 Պլուտ. առակ. հտ. 2. էջ 177։

2 Նոյն անդ։

* Բնագիրն այսպէս ունի. ա Կալ քեզ զոր կամիս, զի 'ի ձեռին քո է բանալն։ Քան. զի հելլէնքառանձնէլոց որթարգմանի անբակ, Նոյն և բանալի Նշանակէ։

թէնս։ Օ պատառիկս ևեթ զայս գտի 'ի Թըղ-թեանն իմ, զրեալ առ Պողոսդոր յետ հասանելոյ մերոյ 'ի Շ ՝օշ մայրաքաղաք Պարսից։

ՀԱՏՈՒԱԾ ԹՂԹՈՑՆ ԱՆԱՌԱՐՍԵԱՑ

Պ ՆՑԱՌ մեք ել բաղում գաւառս ընդնաճաւալ պետութեանս։ Ի Պերսեպոլիս տեսաք շիրիմն փոքրեալ 'ի ժայռի բարձունս յոյժ. բայց ընդ արքունիսն հիացեալ կացաք, զի յամաց հետէ սովորեալ էին աչք մեր 'ի կերտուածս եգիպտացկանս։ Յառաջ քան զամն իբր երկերիւր, ասեն, շինեալ զայն առ Թագաւորութեամբն Դարեհի որդւոյ Ա ՝շտասպեայ 'ի Ձարտարաց եգիպտացւոյ՝ զորս Կամբիւսեայ ածեալ էր 'ի Պարսս[1]։ Պարիսպքն երեքպատիկ՝ որոց միումն վաթսուն կանգուն է բարձրութիւն, գրունք պղնձիք, սիւնք որոց ոչ գոյ թիւ, և ոմանք 'ի նոցանէ եօթանասուն ոտնաչափ 'ի բարձրութիւն, և շինուածք կձեայք լի անդրեօք և բարձր քանդակօք, և նկուղք՝ ուր անբաւ գանձք շտեմարանեալ կան, ամենայն ինչ անդ մեծագործ է և ահարկու. զի ապարանքս այս նոցն և միջնաբերդ է[2]։

Գաւառացն Պարսից և այլ ապարանք են, թէպէտ և ոչ նոցնպէս բազմափարթամք՝ այլ գեղջուն զարմանալիք, 'ի Շ ՝օշ և Յ ՝կբատան և յամենայն քաղաքս ուր բնակեն ըստ յեղանակաց տարւոյ։

1 Դիոդ. գիրք Ա. էջ 43։ 2 Նոյն. գիրք ԺԷ. էջ 544։

Այն նոցա և փակք մեծամեծք, զոր Դրախտս անուանեն[1], բաժանեալք յերկուս։ Յարգելոց որսոց՝ յորում զինեալք նետիւք և գեղարդեամբք ձխարշաւ զՀետ մտանեն երեսոց ընդ ծառատունս[2]. և 'ի ծաղկոց՝ ուր արուեստ մշակութեան պարտիզաց սպասէ զՀունս. ուր զչքնաղագեղս 'ի ծաղկանց դարմանեն և քաղեն զընտիրս 'ի պտղոց. ոչ ինչ նուազ խնամ ածեալ և գեղապանծ ծառոց, որոց կարգ կարգ գնան և հպին առ միմեանս'ի համբոյր[3]։ Այն բազումուրեք և նախարարաց և աւագ ոլերոյն զրահատք այսպիսիք[4]։

Այլ առաւել ևս զարմացաք ընդ մեծազօր խնամակալութիւն թագաւորին 'ի մշակութիւն երկրի. զի ոչ հարևանցի ինչ հրամանօք խնամ զայն, այլ խոհական տեսչութեամբ՝ որ քան զՀրովարտակս և քան զօրէնս հզօրագոյն է։ Օր 'ի մարզս իւրաքանչիւր երկուք 'ի նմանէ կան պետք. մին զօրաց, և միւսն քաղաքի։ Առաջնումն յանձն է խաղաղութիւն հասարակաց, երկրորդին արագ զարգացումն արուեստից և մշակութեան։ Այսպէս մին 'ի նոցանէ թերահոգ 'ի յանձնեալն գտանի հոգաբարձութեան, միւսումն անկ է բոլորեալ զնմանէ առ նախարար գաւառին

[1] Բրիսս. յոլ. թագ. պարս. գիրք Ա. էջ 109։
[2] Քսենոֆ. կարգագր. Կիր. գիրք Ա. էջ 11։
[3] Նոյն յիշատ. գիրք Ե.
[4] Նոյն, արշաւ. Կիր. գիրք Ա. էջ 246։ Կուրտիոս, գիրք Բ. գլ. 1։

կամ առնոյն ինքն Թագաւորն։ Որ և իւրովի իսկ ընդ ժամանակս ժամանակս շրջեալ ընդ մարդս աշխարհին, ուր ուրեք տեսանէ զանդս ծածկեալ ծառովք և հնձովք և ամենայն արդեամբք զոր բերէ երկիրն, փառաւորէ զերկոսին և ս ըզպետսն, և յաւելու ընդարձակել զգաւառնոցա։ Իսկ եթէ ուրեք տեսանէ զերկիր խոպանացեալ, բառնայ զպետսն, և այլս 'ի տեղինոցա կացուցանէ։ Օնոյն և ոստիկանք անկաշառք, յանձին բերելով զիշխանութիւն Թագաւորին, առնեն ի բաւունս 'ի գաւառս ուր ոչ հասանէ Թագաւորն։

Յեղիպտոս լուսաք մեք յաձախագոյն բանս գովութեան զԱրշամայ, զոր Թագաւորին Պարսից 'ի բազում ամաց հետէ 'ի խորհրդականութիւն իւր կացուցեալ է։ Ի նաւահանգիստս Փինիկեայ ցուցին մեզ դղեակս բազումս նորակերտս, և բազմութիւն պատերազմիկ նաւաց 'ի հանդրուանի, փայտ և սարիս նաւաց ամենայն ուստեք անդր ածեալ. և այս ամենայն ինամոցն Արշամայ արդասիք էին։ Պիտանիք 'ի քաղաքայնոց ասէին ցմեզ. Որ օտարուստ 'ի վերայ կայր կործանումն վաճառականութեան մերոյ, եթէ ոչ փառք անուանն Արշամայ կանգուն պահէին զայն։ Զի եղև 'ի ժամանակին յայնմիկ՝ զի Կիպրոս կղզի կարևոր, յետ ընդ երկար և բազմաղէտ անտէրնչութեան[1], հնազանդեալ էր Պարսից. և այն

[1] Քսենոփ. յիշատ. գիրք Ե. էջ 828։
[2] Դիոդ. գիրք Ժ.Զ. էջ 440։

և ս Նարտար քաղաքավարութիւն Աբշամայ յա-
ջողեալ։ Ի միջերկրայս աշխարհին սպայք ծերու-
նիք պատմէին մեզ արտասուօք, և ասէին. Հա-
ւատարմութեամբ ծառայեցաք Թագաւորին, և
'ի ժամանակի վարձատրութեան չյիշեցան ծա-
ռայութիւն մեր. աղերս արարաք առ Աբշամ,
թէպէտ և չմանաչէաք զնա. և պատրաստեաց մեզ
զծերութիւնս զայս բարեբաստիկ, ոչ ումեք զբա-
ւերարութիւնն յայտնեալ։ Այս մի ոմն յաւել.
Զարախօսեցին զինէն առ Աբշամ թշնամիք իմ.
և իբրև պարտ համարէր զոսատ իշխանութեան 'ի
գործ արկանել ընդ իս, 'ի վերայ հասեալ անմե-
ղութեան իմոյ, կոչեաց զնս առ ինքն. և առա-
ւել քան զնս վշտագին՝ հեծէր սրտիցանօք, և ա-
ղաչէր զնս ձեռնտու լինել 'ի հատուցումն անի-
բաւութեանն, մինչև էառ յինէն խոստումն դիմելոյ
յամենայն պէտս իմ առ ինքն. և ոչ երբէք ընդու-
նայն եղէն խնդրուածք իմ։

Ամենայն ուրեք անարեւոյթ զօրութիւն նորա
նեղգործէր. զնուազը զոհանային զնմանէ վասն
եռանդեան նախանձուն զոր արծարծանէին 'ի
նոսա, և ժողովուրդք վասն խաղաղութեանն
զոր պատրաստեալ էր նոցա, 'ի բաց տապալեալ
զխոչ և զխութ անկոխելի։ Այս համայն իսկ ա-
սել. խնամօք նորա վերականգնեալ էր ազգն 'ի
բարձրութիւն փառաց, զոր բազմաղէտ պատե-
բազմքն կորուսեալ էր 'ի մէջ օտար պէտութեց։

Աբշամ ոչ և ս է յիշխանութեան. այլ անցու-

ցանել զաւուրս իւր խաղաղութեամբ լիւրում դրախտին, հեռի 'ի Շ օշ քաղաքէ փարսախս իբր քառասուն։ Խարեկամբ նորա ոչ թողին զնա. և զորոց յարգէրն զվաստակս, յիշեն զաբերարութիւնս նորա կամ զխոստմունս։ Գիմեն առ նա ամենեքին առաւելագոյն ևս փութով քան 'ի ժամանակի իշխանութեանն։

Գէպք բարեպատեհ ածին զմեզ 'ի զուարճալի վայր բնակութեան նորա, ուր 'ի բազում ամսոց հետէ ասպնջականք զմեզ բարութեամբ, և չգիտեմ թէ կարասցուք մեկնել յակմէ ասել. զի և Յ Աթէնս, յորժամ քաղաքականութիւն և բարեձևութիւն և կիրթ ախորժակք 'ի պայծառագոյն փառսն էին, ժողով այսպիսի հաղիւ գտանէր։ Այս զբարեկենդանութիւն Յ ուրամայ պատրաստէ, և Յ ուրամ զնորայն բերկրութիւն։ Անհակցութիւն իւր ջերմ, հանգոյր և ցանկալի, արծարծեալ ստէպ զուարճախօսութիւնքն որ իբրև փայլակունք սփռին 'ի շրթանց նորա, և միշտ վայելչացեալ ընդհօք և զուարթութիւն որ հանգոյն բարեբաստութեան նոր հաղորդի 'ի ժողովանս։ Ոչիք խրոխտումն 'ի բանս նորա, և ոչ պիտակ ինչ կամ արուեստակեալ ասացուած, այլ ամենայարդար վայելչութիւն ընդ ինքնազարդ բնականութեան լծորդեալ. որպէս որ որ գերածայրեալ 'ի հնորհս հաճոյ լինելոյ ըստ լեալ, և զամենակիրթ ախորժակս պատշաճ'ից յանձին բերելով բարբառիցի։

Լսակ եթէ զնոյն գեղեցիկ կցորդութիւն տեսա-
նիցէ յումեք կամ համարիցի, ձգի 'ի հիացումն.
և սիրով և մտադիւրութեամբ ըմբռնոցս։ Զոսփս
հարկանէ գովութեամբ ընդ հանճարեղ բանս
նոցա՝ եթէ արագ 'ի վերայ ածիցեն, ընդ նոր ի-
մաստս՝ եթէ իցեն Ճշգրիտ, և ընդ վսեմ ինչ
վՃիռ՝ եթէ չիցէ առաւելագանց։

Զոդ բարեկամութեան առաւել ևս յերևան
ածէ զշնորհս նորա, որք թուին միշտ նորանոր։
Լինդ ոչ կարևոր բարեկամն այնպէսէ զիւրաբարոյ,
ոմն Աքիստոտէլ զնկարագիրն տայ։ Զի սա ա-
սէր ցիս երբեմն, թէ են այնպիսիք ոմանք տկարք
բարուք՝ զի ամենայնի հաւանին վասն չտրտմե-
ցուցանելոյ զոք. իսկ այլք այնպէս դժուարաբա-
ղոյք, զի չհաւանին իսիք՝ թէպէտ և ամենեցուն
հաճանիցէ տհաճել[1]։ Զինչ երկոցունց այսոցիկ
միջասահման, անանուն ըստ մերումն բարբառոյ,
զի կարի սակաւք բերեն զայն յանձին։ Զանգի
է սա բնաւորութիւն իմն հոգւոյ, որ առանց աբ-
դեանց մտերմութեան՝ զտեսակս նորին բերէ, յե-
զանակաւ իմն և զբերկրանս. և որ նովին Ճոխա-
ցեալն իցէ, խորշի և 'ի շողոմելոյ և 'ի թշնամա-
նելոյ զանձնասիրութիւն այլոյ. նեղէ տկարու-
թեանց, համբերէ թերութեանց, ոչ զոք ծաղր
առնէ, ոչ ումեք փութայ խրատիչ լինել. և այն-
պէս պատշաճ և բնական զիտէ յարդարել զմե-

[1] Աբիստոտ. յղ. բարոյ. գիրք Դ. գլ. 12. հա. 2. էջ 54։

ծարանան և զկարեկցութիւն՝, զի ամենեցուն թուի գտանել 'ի սիրտ նորա զգութ և զվարկ որոց ցանկան։

Այս քաղցրութիւն ձգէ զնոսա և սերտէ ընդ Աբրահամայ · բարեկամութիւն ինն հասարակաց, որ առաւել ևս այնու յինքն զսիրտս պարուրէ, զի բնաւորապէս կցորդի ընդ պայծառութիւն փառաց, և ընդ պարզութիւն համեստութեան։ Զոհպ լեալ ուրեք յիշատակել ինչ առաջի նորա 'ի մեծամեծ բարեմասնութեանց նորա, նա զթերութիւնս իւր 'ի ներքս ածէր · և այլ երբեմն զրոյցք եղեն զուղղութեանցն զոր արար առ իշխանութեամբ իւրով, և ինքն զվրիպակս իւր պատմէր։

Սիրտ նորա գիւրաշարժ՝ արծարծանի 'ի լուր առաքինութեանց, և գորովի ընդ բախտ թշուառաց՝ զորս բարերարութեամբքն իւրով ստիպէ 'ի շնորհակալութիւն, առանց պահանջելոյ զայն։ Յապարանս նորա և շուրջանակի ամենայն ուրեք զհանդէս առատ բարերարութեան նորա է տեսանել, որ կանխէ քան զպաղատանս, և առ ամենայն պէտս է բաւական։ Ընդաստանք ամայիք խոպանացեալք, արդ լի են հնձովք · և բնակիչք մերձակայ դաշտաց չքաւորք՝ բարերարեալք 'ի նմանէ, մատուցանեն նմա զհարկ սիրոյ՝ որ հաճոյագոյն է նմա քան զմեծարանս նոցա։

։ Արիստոտ · յղ · բարոյ · գլ · 14 · էջ 56։

Վերեցեալդ իմ Աչոզոդորէ, անկ է պատմութեան 'ի պատշաճ փառն կացուցանել զայր դրսնիկ աւանդապահ ամենայն շնորհաց, որ չվարձկանեալ իւր զոք 'ի մնրդահաճոյից, միւսն ևեթ ցանկացաւ՝ փառաց և բարեբաստութեան ազգին։ Որպէսի քեզ որ ինչ անդէն 'ի սկզբան եղեն 'ի մեզ առաքինութեանցն նորա ազգմունք, զրեցից քեզ թերևս յետոյ և որ այլ ինչ տիպք նկարագրին նորա։ Այսուհետ եմ զի ներեսցես ինձ զայս. քանզի ոչ է պարտ ուղևորի անպատում առնել զվանդամանս զայսոսիկ ցանկալիս. և քան զստորագրութիւն հոյակապ շինուածոց յոյժ առաւել կարևոր է առն ուրուք մեծի նկարագիր։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՂՈՒԱՑ

Որոյ ինքնին զիտես զի մերձ 'ի սահմանս Փիլիպպոսի 'ի ծովեզերեայն Լիկիա տարածանի զափամբք ծովու. քաղկիսական աշխարհն, ուր հատուածք բազումք 'ի Հունաց երբեմն բնակեցին։ Որոնոսա գլխաւորագոյն է Ալենթոս, քաղաք ամուր, Հոխ և բազմամարդ. որ և ըստ մասին կառուցեալ 'ի բլրի, ձգէ յինքն 'ի հեռուստ զաչս գեղեցկութեամբ շինուածոցն, և ընդարձակ շրջաբերութեամբն[1]։

Մնակիչք նորա բազում ուրեք հանդէս արարին քաջութեան իւրեանց։ Ի դահակալել Փի-

[1] Թուկիդ. գիրք Ա. գլ. 63։ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 412։

լիպոլեայ՝ կռէին նոքա ընդ մեզ ուխտ նիզակա-
կցութեան, և զիտաց նա խափանել զայն՝ զմեզ
խոստմամբք և զնոսա պարգևօք խաբեալ[1]։ Ինդ-
արձակեաց զսահմանս նոցա, թողեալ 'ի նո-
սա զԼնդեմն և զՊոտիդէա՝ զորս նուաճեալ
էր[2]։ Զբան առաստութեամբն նորա որսացեալք,
թողին նմա ընդ բազում՝ ամն մեծամեալ խաղա-
զութեամբ. և եթէ երբեք կասկած ինչ 'ի միտս
նոցա անկանէր, հրեշտակք 'ի նմանէ հասեալ
առ նոսա՝ ցածուցանէին անդէն զառաջամայն աղ-
մուկն 'ի ձեռն բազմութեան համախոհիցն, զորս
կանխաւ յինքն յանկուցեալ էր[3]։

Ինագան ապա բացան աչք նոցա, և խորհուրդ
կալան ապաւինել 'ի մեզ[4]։ Յս դարձեալ եղբարք
երկու արքային մահեղծնացուց անհարազատք,
որոց մարթէր զԹագաւորութեան աշխարհին
թեկն ածել, 'ի բազմ ժամկց առ նոսա ապաստա-
նեալ կային, և նոքա ոչ յանձն առնուին մնանել
զնոսա 'ի ձեռս նորա[5]։ Քաջ նորա զայս պատ-
ճառանս կալեալ առ 'ի կատարել զխորհուրդն
երկնեալ 'ի բազմամամնակաց՝ յաւելոյ 'ի սահ-
մանս իւր զքաղաքական աշխարհն, էառ անՁան
պատերազմաւ զկէս 'ի քաղաքաց աշխարհին, և
այլք ընդ հուպ անկցին ընդ ձեռամբ նմ[6]։ Ողին-

1 Դեմոսթենէս, ոսկեթ. 2. էջ 22։
2 Նոյն, Փիլիպպ. 2. էջ 66։
3 Նոյն, Փիլիպպ. 3. էջ 87 և 93։
4 Նոյն, ոսկեթ. 3. էջ 36։
5 Յուստին. գիրք Ը. գլ. 3։
Որոս. գիրք Գ. գլ. 12. էջ 172։
6 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 450։

թոս մերձ է 'ի պաշարումն. հրեշտակք անտի հասին առ մեզ խնդրել զօգնութիւն։ Դեմոնաթենէս պատասպարան եղև խնդրուածոց նոցա[1]. և յաղթեաց կալաւ խորհուրդ նորա ընդդէմ Հակառակութեան Դեմոնդեայ քաջի Ճարտարախօսի, զորմէ կասած համախոհութեան է ընդ Փիլիպպեայ[2]։

Դարձեալ չու արար երեսնիւք պատերազմիկ նաւօք, և երկոքումբիք հազարօք մեկնակազին զորօք[3]. և պատահեալ առ ծովեզերքն մերձ Յողնեթոս ջոկատի միոյ փոքու վարձկան զորաց թագաւորին, պատմեն թէ եհար զայն, և կալեալ զզօրավար նոցա՝ զոր մականուանեալ կոչեն Գ. քաղաղ, դարձաւ այսրէն առնել յաղթանակ։ Ողնեթացիք մնացին անօգնական. իսկ զօրավարն մեր յետ գոհութեան զոհիցն, ետ 'ի հրապարակի ճաշ ժողովրդեան[4]. որոյ յիսնարեալ 'ի խնդութենէ սահմանեաց նմա պսակ ոսկի։

Հասին յայսմ վայրի և այլ հրեշտակք Յողնեթոսէ. և արձակեցաք ուրեւտուն նաւս պատերազմիկս, զորեքարիւր այլազգի զօրս մեկնակազին, և հարիւր և յիսուն հեծեալս[5], ընդ Դարիդեանց զօրավարի որ ապիրատութեամբքն

1 Դեմոսթ. ողնեթ։ Պլուտ. 'ի տան Ճարտարախօսս, հմ. 2. էջ 845։

2 Սուիդ. 'ի բառն Δημάδης

3 Փիլոք. առ Դիոնիս. ա. գլխ. թուղթ առ Ամիր. գլ. 9. հմ. 6. էջ 734։

4 Թէոպոմպ. և Դուրիս առ Ատենն. գիրք ԺԲ. գլ. 8. էջ 532։

5 Փիլոք. անդ։

և եթէ 'ի վեր է քան զԲարէս։ Սա զշրջակայ երկիրն ապականեալ, եմուտ ապա 'ի քաղաքն. և զօր հանապազ հանդէս առնէ շուայտութեանն իւրոյ և զեղխութեան[1]։

Մեծպէտ և բազումք ասեն օտար համարին մեզ զպատերազմն զայս, այլ ինձ թուի՝ զի չէք ինչ կարեւորագոյն աթենացւոցս քան զպահ քաղաքին ողնութացոյց։ Օր 'ի նուաճել զայն Փիլիպպոսի, զինչ եւ արդեւլուցու զնա 'ի գալոյ Յունական. չենայ այլ ինչ 'ի միջի ընդ նա և ընդ մեզ, բայց Մեսաղեանդիզակիցնորա, Մեբէկ ասոս մեր, և Փոքկիս անբաւական անձին իսկ 'ի պահ[2]։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ՆԻԿԵՏԱՑ

Յանդգնութեան իմիք Փիլիպպէայ սպասեալ մնայի. երկնչէր նա յողնութացոյց, և զգուշութիւն զնայր ընդ նոսա. այլ յեղակարծումն հասեալ առ պարիսպս նոցա, զկայ էառ քառասուն ասպարիզաւ հեռի։ Դրքա հրեշտակս ապարին, թագաւորն զայս ետնոցա պատգամ։ Կամ ձեզ 'ի քաղաքդ, և կամ ինձ 'ի Մակեդոնիոյ պարտ է ելանել[3]։ Այսպա ուրեմն զայն մուռացեալ է նորա, զի յառաջ քան զաւուրս զայսոսիկ հասին նոքա գաւառս զտերութեան Մինտայ հօր նորա, և զի ընդ երկար ապա զդէմ կալան հա-

1 Թէոպոմպ. առ Ալթէն. գիրք Գ. էջ 436։
2 Դեմոսթ. ողնթ. 1. էջ 4։
3 Նոյն, Փիլիպպ. 3. էջ 87։

մագումար զօրութեան զինուց նորա և սպարապետս՝ զորս կոչեաց իւր 'ի Թիկունս[1]։

Լսեմք զնմանէ, ընդ հասանելն 'ի փախուստ դարձուցեալ զողջնթացիս. այլ որպէս ընդ պարիսպն ամուրս անցանել կարասցէ, որում պահ ունի բանակ միահամուռ։ 'Լախ քան զամենայն բիւր մի հեռեւակաց են նոյ և հազար հեծեալ, ամենեքին անդստին 'ի քաղկիսական աշխարհէն. դարձեալ և բազմութիւն քաջաց պատերազմողաց, որ 'ի նիզակակից ազգաց հասեալ[2]. յաւել և զզօրս Վարիդեամայ, և զերկու հազար սպառազէնն և զերեքարիւր հեծեալս առ հասարակ ութենացիս, զոր դեռ ևս յղեցաք յօգնականութիւն[3]։

Լութ ելից իրացն յառաջատեսս լեալ էր Փիլիպպեայ, ոչ ձեռնարկեր 'ի պատերազմն. այլ նա համարեցաւ հասանել հարկանել և վնասել զայն միանգամայն։ Դարձեալ և այլ հոգք տագնապեն զնա. թեսաղացիք նիզակակիցք նոր յաւելին ի հուպ 'ի թշնամին. եբարձ 'ի նոյնէ զՊագասքաղաք, արդ պահանջեն զայն. խորհեր ամրացուցանել զՎարդեսիա, խափանեն զայն. մաքսէ 'ի նաւահանգիստս նոցա և 'ի շուկայս, և ոչ յանձն առնուն տալ նմա զերաւունս իւրեանց։ Լչ իբրև բարձցի այն 'ի նմանէ, ուստի հատուցցէ զուռճիկ

[1] Քսենոփ. պատմ. Յուն. դիրք Ե. էջ 559։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 341։

[2] Դեմոսթ. յդ. վրէպ հրեշտ. էջ 335։

[3] Փիլոք. առ Դիոնիս. ազիկ. առ Ամմ. դլ. 9. հատ. 6. էջ 735։

բազմութեան վարձուոր զօրականին, յորում է ամենայն զօրութիւն իւր։ Պարձեալ և լուրիկեցիք և պէտնացիք, զժուարընդելք ծառայութեան, թօթափեսցեն արդեօք ընդ հուպ զլուծ իշխանին ստահակելոյ յաղթութեամբքն՝։

Օ՛ինչ ոչ փոխանակեաք առ՝ի յարուցանել ընդէմ նորա զողինթացիս. և ահա դեպք՝ի վերս քան զանկնկալութիւն մեր յաջողեցին. լուիցես ընդ հուպ զիշխանութիւն և զփառս Փիլիպպեայ խորտակեալ առ պատուարօքն Ողինթեայ։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՅԴՈՐԱՅ

ՓԻԼԻՊՊՈՍ համախոհս իւր արարեալ ՅԵՐԲԻԱ, գաղտ անցուցանէր անդր զօրս. և արկեալ իսկ էր յինքն զբազմագոյնս՝ի քաղաքաց։ Եւ՝ի տիրել կղզւոյն, պատրաստէր ընդ հուպ և բոլորումն տիրել ՅԱԼԱԴՅԱ։ Պլուտարքոս երեսարացի աղերս արար, և արձակեցաք զՓոկիոն փոքու գնդաւ հեծելոց և հետևակաց[2]։ Պաջայոյսք էաք՝ի նախանձայոյզս ազատութեան, և յայլազգի զօրականն՝ զոր Պլուտարքեայ վարձկանեալ էր. այլ կաշառոյն այնպէս համաստիւռ ծաւալեալ, զի ամենայն բնակիչք կղզւոյն ընդդէմ մեր յարեան, և Փոկիոն էր՝ի վտանգի, և զմնացորդ այրուձիոյն յաւելաք յղել[3]։

1 Դեմոսթենէս, ողինթ. 1. էջ 747։
1. էջ 4։
2 Պլուտ. ՝ի Փոկիոն, հտ. էջ 629։
3 Դեմոսթենէս, ՝ի Միդ.

Փոկիոն զտեղի առեալ կայր 'ի բլրի ուրեք, զոր խոխոմք խորաձորք անջրպետէին 'ի Տամինեայ դաշտէն ' ։ Թշնամիք նորա պաշարեալ զնովաւ ընդերկար, խորհեցան ապա վանել զնա 'ի տեղւոջէն ։ Փոկիոն ետես զնոսա զի գային յառաջ, և եկաց անշարժ. բայց Պլուտարքոս ընդդէմ նորա հրամանին եկ վարձկան զօրաքն 'ի դուրս, զհետ նորա ելին և հեծեալք մեր. և խառն 'ի խուռն միահամուռ յարձակեալ, վարեցան 'ի փախուստ ։ Հնդէր բանակն 'ի մենչիւն ցասման. բայց Փոկիոն խափանէր զնրաժոյս զօրականին, պատճառանօք իբր թէ ոչ բարեաց էին զուշակ զոհքն ։ Լակ իբրև 'ի բանակեալ անդր 'ի պատնէշն հասին թշնամիք, նշան ետ մարտի, և եհար զնոսա սաստկապէս, հալածականս վարեալ 'ի դաշտին ։ Դաղումն ձապաղիք եղեն անդ արեան, և յաղթութիւն կատարեալ։ Լաքինէս ձարտարախօս առաքինացեալ 'ի մարտին [2], նա զաւետիս յաղթութեանն եբեր ։

Փոկիոն հալածեաց ապա Լեբերտիոյ զՊլուտարքոս որ բռնանայրն անդ, և Լեբիոյ զամենայն պետս ինքնիշխանս՝ որ կաշառեալ էին 'ի Փիլիպպեայ ։ Լու կացոյց պահակասպան յամուրն Օարեարայ 'ի պահ ազատութեան կղզւոյն ։ և յետ ձակատամարտին, ընդ որ զարմանան հմուտք իրաց պատերազմի, եկն խառնեցաւ ընդ քաղաքացիս Լեթէնս ։

1 Պլուտ. 'ի Փոկիոն, հա. 1. էջ 747 ։

2 Եաքին. յղ. վրէպ հրեշ. էջ 422 ։

Օ իմաստութիւն նորա և զմարդասիրութիւն յերկուց ասասի 'ի միտ առցես։ Օ ի նախ քան զՀակատամարտն արգել սպայից չխափանել զոք որ դասալիքն լինել կամէր. որով ամբոխ վատացն և ապստամբաց մերժէին 'ի բաց։ Սակ յետ Ճակատամարտին յաղթութեանն հրամայեաց արձակել զամենայն գերին յոյն, զի մի գուցէ ժողովուրդն առ վրէժ քինու անզթութիւն ինչ արասցէ ընդ նոսա [1]։ . . .

Այլ բազումաւորք էին՝ զի Թէոդորոս 'ի միում ուրեք յակմբից մերոց խօսէր զաստեղաց և զշարժմանէ նոցա. և շինականագոյնս էհարց նմա Պիոգենէս, թէ քանի ժամանակք էին յիջանելոյ քո յերկնից [2]։ Այսպա Պանթիոն ընթերցաւ 'ի լուր մեր Ճառս մեծաձիգս. և Պիոգենէս մերձ առ նմա բազմեալ՝ ակնարկէր ստէպ 'ի մատեանն, և 'ի տեսանել զաւարտ ընթերցուածոյն՝ ձայն բարձեալ ասէ. Այերձ եմք 'ի ցամաք, ա բարեկամք, վայրիկ մի ևս երկայնամիտ լերուք [3]։

Յետ սակաւ միոյ եղև խնդիր՝ թէ օտարականի 'ի հասանել 'ի քաղաք ուրեք թէ մարթ իցէ գուշակել զանկիրթ դաստիարակուի բնակչացն. և Պղատոն էտ պատասխանի. Այթէ իցէն անդ պէտք բժշկի և դատաւորի [4]։

1 Պլուտ. 'ի Փոկիոն, հտ. 1. էջ 747։

2 Դիոգ. լայերտ. գիրք Զ. յոգ. 39։

3 Նոյն անդ. յոգ. 38։ Սառուգաբ. մատեան։ Γάγα։

4 Պղատ. յղ. հատ. գիրք Գ. հտ. 2. էջ 405։

Որ ինչ անդ առ Իշխանուհեամբն Թէոդիլեայ յառաջնումն ամի 108 ողբմոլեաց։

(Յուլիսասանէրոյգ օրէ յուլիսի 348 ամին մինչև յ8 յուլիսի 347 ամին Ն. Ք։)

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՐԱՑ

ՅԱՒՈՒՐՍ յայսոսիկ 'ի շրջէն մերում արտաքոյ զրան Թէպակիոյ, տեսաք հեծեալ մի զի ձիարշաւ հատանէր, և կացուցեալ զնա՝ ասէին. Դու ուստի՞ գաս, զինչ զրոյցք իցեն զպաշարմանէ Ողբնեթեայ. Նա ասէ. 'ի Պատիզէա երթեալ էի, և 'ի զարձին իմում՝ ոչ կամ տեսի զՈղբնեթոս։ Նա զայս ասացեալ, եղև աներևոյթ. և մեք մնաք անդրէն, և յետ սակաւ միոյ զոյժ աղեսոյց քաղաքին ելից զամենայն վայրս արհաւրօք։

Ողբնեթոս ոչ կամ է. ոչ զանձք նորա, ոչ զօրութիւնք, ոչ նիզակակցայ բազմութիւն, և ոչ յուրբ՝ ասան հազար զօրք՝ զոր յայլ և այլ նուագս առաքեցաք նմա 'ի Թիկունս, կարացին փրկել զնա [2]։ Փիլիպպեայ ամենայն յարձակմունք 'ի դերև լինէին, և օր ըստ օրէ անկանէին 'ի զօրաց նորա բազումք [3]. այլ մասնիւք զոր Ողբնեթոս

[1] Ագաթ. առ. Փոկիոնի. էջ 1335։

[2] Դեմոսթենէս, յոլ. վրէպ հրեշտ. էջ 335։ Դիոնիս. առ. զիկ. Թուղթ առ. Ամմ. հա. 6. էջ 736։

[3] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 450։

կրէր 'ի ծոցի իւրում, Ձեսպեցուցանէին ժամ 'ի ժամ զօրհաս կոստեանս նորա։ Աշագանին ամենայն և զօրավարք կաշառաբեկ լեալ էին 'ի թագաւորէն. և գլխաւորք 'ի նոցանէ ԼուԹիկրատ և ԼասԹենէս, մատնեցին նմա զՀինդ հարիւր հեծեալս որոց հրամայէին [1]. և յետ այլոց ևս մատնուԹեանց՝ որ ոչ ինչ նուազ դժնդակք էին, մուծին զնա 'ի քաղաքն՝ որ մատնեցաւ անդէն յաւար։ Ցունք և կամարակապք և մեհեանք առ հասարակ եղեն Ձարակ հրոյ և սրոյ. որպէս զի յետ ոչ բազում ժամանակաց խնդրեսցի տեղի նորա [2]։ Լոտ Թագաւորն ածել 'ի վաՀան ըղբնակիչս նորա. և զերկոսին եղբարս իւր որ 'ի բազում ժամանակաց անդր ամրացեալ կային, ետ սպանանել [3]։

Զարհուրեալ կայ ԼՀլադա, և կասկածէ ընդ կողուստ պետութեան իւրոյ և ազատութեան [4]։ Շուրջանակի պատեալ պարսարեն լուսեաք և թընդամիք։ Զիարդ մարթի ելել զդէմ ունել զկաշառանաց, և զրպէս պարսպել յերեսաց թագաւորի՝ որ ասէն անդադար, և արդեամբք զբանսն հաստատէ, զի չիք պատուար՝ զոր ոչ զրատ մի ոսկեբարձ կործանեսցէ առեսեղ [5]։ ՀաՀոյ թուեցան աղգաց ամենեցուն մեծասաստ հրովարտակք

1 Դեմասթենէս. յոլ. վրէպ հրեշտ. էջ 335։
2 Նոյն Փիլիպպ. 3. էջ 89։ Սարար. գիրք Բ. էջ 121։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 450։
3 Պլաս. գիրք Դ. գլ. 12։ Յուսթին. գիրք Ը. գլ. 3։
4 Ագաթ. առ. Փոկիոնի. էջ 1334։
5 Պլուտ. առակ. հտ. 2. էջ 178։ Պիկիր. առ Ասարկ. գիրք Ա. թուղթ 16. հտ. 8։

քին, զոր տուաք ընդդէմ մատնչաց քաղաքին ո-
ղջնութեանց։ [1] Պարտ է և ոչ զյաղթականացն
խորել զպարծանս, զի կշտամբեալ յանդիմանէին
հատարձակ զմեղապարտիցն դրժանս։ Լուիկ-
բատ և Լասթենէս բողոք կալան զայնմանէ առ
Փիլիպպոս, և նա ետ պատասխանի. Զողջոյն,
զօրականն մակեդոնացի դեռ ևս անկիրթ է, և
զամենայն ինչ բնիկ անուամբն սովոր է կոչել [2]։

Այնուհետև ողջնութեանցիք շղթայակապ նստեալ
'ի վերայ մոխրոյ հայրենեացն իւրեանց ողբային,
կամ ջոկք ջոկք ընդ Ասպողոտայս զհետ նորոց
տերանցն 'ի քարշ ածէին [3], Փիլիպպոս ժպրհեր
զոհութիւնս երկնից մատուցանել զպարեացն զոր
գործեաց, և բազմահանդէս տօնս խաղուց 'ի
պատիւ ողնմպիականն Լրամանդայ հոչակեր [4]։
Հրաւիրեաց նա անդր զերևելագոյնս 'ի Հաբտա-
բաց և զքաջս 'ի գուսանաց, և ետ նոցա Հաշ 'ի
վախճան չարաշուք տօնիցն։ Լնդ յարբեցութեն
յաղթութեանն և 'ի խրախճանս կոչնոցն փութայր
թագաւորն կանխել քան զիրեն կոչնականաց, կամ
ըստ ըղձից նոցա առատաձեռնել պարգևս և խոստ-
մունս։ Սատիրոս գուսան, գերազանց 'ի կա-
տակերգութեան, կայր անդ լուռ և տխուր։
Զգայ զայն Փիլիպպոս. և յանդիմանեալ զնա,
ասէ. Լա՛ ընդէր լուռ և էթ կաս, երկեայիցես ընդ

[1] Դեմոսթ. Փիլիպպ. 3. էջ 89։
[2] Պլուտ. առակ. հտ. 2. էջ 178։
[3] Դեմոսթենէս, յոլ. վերոյ հրեշտ. էջ 341։
[4] Նոյն անդ, էջ 322։ Եսքին. յոլ. վերոյ հրեշտ. էջ 420։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 451։

առատութիւն իմ և ընդ վարկ, կամ թէ չկարօտանայցեմ իւիք։ Այլ նա ասէ. Մի ինչ խնդիր է ինձ 'ի քէն, աղքայ. և այն 'ի կամս քո, այլ կասկածեմ թէ չընորհիցես։ Թագաւորն ասէ. Այսպա, և արարից զամենայն, մի երկմտիցես։

Այլ նա ասէ. Կարևոր կցորդութիւն էր ինձ ասպնջականութեան և բարեկամութեան ընդ Այպողոփանեայ պիւթնացւոյ. այլ նա սպանաւ տարապարտուց, և եթող երկուս դստերս՝ որ չև ևս հասեալ են 'ի չափ։ Զգգականք նոցա վասն ապահովութեան ածին զնոսա յՍղինթոս. և արդ օրիորդքն 'ի կապանս են և ընդ ձեռամբ քով։ Օ ազատութիւն նոցա աղերսեմ. և ոչ այլ ինչ փոյթ է ինձ, բայց ընդ ամբծութիւն նոցա։ Հաստատեալ եմ պատրաստել նոցա օժիտ, և հարսնացուցանել զնոսա, զի մի անարժան ինչ հօրն իւրեանց և բարեկամի իմոյ գործեսցեն։ Հնչեաց բազմականն դրուատեօք, որոց արժանի էր Սատիրոս. և Փիլիպպեայ առաւել քան զամենեսին 'ի գութ խանդաղատեալ, հրամայեաց տալ նմա վաղվաղակի զերկոսին օրիորդսն գերեալս։ Այլ այնու ևս առաւել զարմանալի է գթութիւնս այս, զի ամբաստանութիւն էր զԱյպողոփանեայ՝ իբր թէ նորա ընդ այլ համախոհս զրկեալ էր 'ի թագաւորութենէ և 'ի կենաց զԱզեքսանդր զեղբայր Փիլիպպեայ։

Ոչ ինչ զպատերազմն փոմկիսացւոց յաւելում. զի թէպէտ և հանապազորդ, այլ ոչ ինչ

'ի նմա պատմին լեալ անցք նշանաւորք։ Ցացեն երկիրք, զի մի որպէս ողնեթականին լցին եղբ պատերազմին։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ՆԻԿԵՏԱՑ

Ոչ կասկածէի զաղէտս ողնեթացւոց, զի անակնկալ էր ինձ կուրութիւն նոցա։ Այթէ անդէն 'ի սկզբան բարձեալ էր նոցա 'ի միջոյ զհամախոհս Փիլիպպեայ, չհասանէր նոյն կորուստ։ Օրբաւալ այրուձիոյ նոցա էր Պպողնիդէս, քաջ պատերազմողն և լաւ քաղաքացի. սա յանկարծ աքսորեցաւ՝, համախոհին Փիլիպպեայ բանարկելով զնմանէ։ Ասթենէս փոխանակեալ 'ի տեղի նորա, և զօրավարակից նմին Աբթիկրատ, ընկալան 'ի Մակեդոնիոյ փայտս 'ի շինուած և նախիրս արջառոց և այլ մեծութիւնս՝ զորս չէր հնար նոցա ժառանգել, և յայսմանէ եղև միաբանութիւն նոցա ընդ Փիլիպպեայ, այլ ողնեթացիք ոչ 'ի միտ առին զայն։ Այլ 'ի պաշարման քաղաքին համախոհութիւն զօրավարացն ընդ թագաւորին նշանակեալ, դեռ ևս կացին նոքա 'ի կուրութեանն։ Համբաւէր ամենայն ուրեք, զի նա զքաղկիսական աշխարհն կարասւոյ քան թէ զնուազ զօրութեամբ կալաւ. և այս ևս չեղև ողնեթացւոց 'ի խրատ՝։

[1] Դեմոսթ. Փիլիպպ. 3. էջ 93 և 94։

[2] Նոյն յոլ. վերակ հրեշտ. էջ 335։

Բայց օրինակ Լաթիկրատեայ և Լասթենեայ լիցի յայտմէտեմ յահարկութիւն վատաց, որ 'ի հանպարտն ինչ մտաբերիցին զրժանս։ Զարամանք կորեան թշուառականքն. քանզի Փիլիպպոս որ զործի 'ի ձեռն առեալ զմանուիչ՝ ապա անդամանէ զնոսա, մատնեաց զնոսա 'ի թշնամանս զօրական նին՝ որ յօշոտեցին զնոսա։

Բ. ուստն Ողինթեայ փոխանակ վհատութեան յաւել մեզ խրախոյս։ Զարտարախօսք մեր լուցին 'ի մեզ եւանդն, և արձակեցաք հրեշտակս բազում՝ խնդրել զթշնամիս Փիլիպպոսեայ, և հրաւիրել զնա յաշխարհաժողովն ուր խորհուրդ պատերազմին սահմանեսցի. և ժողովն խմբեսցի աստ։ Լաքինեաս չոգաւ առ արիադայիս, որք յանձն առին զուսմարել 'ի նիզակակցութիւնն. և այլք ևս յազգաց սկսան խլրտել. ընդ հուպ ամենայն Լլլադայ զինուորեսցի։

Ա. ևս ակն ածէ հասարակապետութիւնս. բայց 'ի հրովարտակացն զորս տուաք ընդդէմ մատնչացն Ողինթեայ, ասպնջականեցաք ևս հրապարակաւ զնակիչս նորա զերծեալս 'ի բոցոյ և 'ի գերութենէ[1]։ Չայսքան հանդարտակ թշնամանաց 'ի միտ արդեօք առցէ Փիլիպպոս, զի ոչ ևս 'ի միջի մերում զգաղտագողն ասպատակութեանց, և զբողոքոյ և զպատգամաւորութեանց և զխորհրդոց խաղաղութեան են բանք։

[1] Դեմոսթ. Ի-Ֆ. Էրսոն. էջ 230։ հրեշտ. էջ 404։ Նոյն 'ի Պսե. [2] Նոյն յդ. վրէպ հրեշտ. սիփ. էջ. 437։ Դիոդ. գիրք էջ 295։ Եպբին. յդ. վրէպ ժ.Զ. էջ 450։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՒԹԻՒՆԱՑ

Ի Հնգետասաներորդ աւուր ամսեան Թարգելիոնի * ։

Ա ՀՏԱԿԻՑ մեզ եղերութք , զի յանկարծամահ եղև Պղատոն . յեօթներորդ աւուր ամսեանս ** , յաւուր ծննդեան իւրոյ ' , բարձաւ նա 'ի մէջ ։ Ակարաց հրաժարել 'ի կոչնոց ուստեք հարսանեաց[2] , էի և ես անդ առնմամբ բազմեալ . ոչ ինչ եկեր բայց ձիթապտուղս քանի մի ըստ յաճախս սովորութեանն իւրում։ Բազուելքան յամենայն ժամանակս սիրելի էր նա , և առողջութիւն նորա քաջայոյս առնէր զմեզ . և մինչ ուրախ լինէի ես ընդ նմա վասն բարեկենդանութեանն , և ահա խօթացեալ անզգայեալ անկաւ 'ի վերայ բազկաց իմոց ։ Ոչ ինչ օգնեցին գեղք , և բարձեալ տարաք զնա 'ի տուն իւր ։ Յեսաք 'ի վերայ սեղանոյ նորա զվերջին տողս հասարակապետութեան Ճառին զեռ այն ինչ աւարտեալ[3] , և զուղղագրութիւնն

* Ի 25 աւուր մայիսի 347 ամին Ն . Ք ։

** Ց 17 աւուր մայիսի 347 ամին Ն . Ք ։ Ա.Լ. ոչ իբր հաւասի զԹուականս զայս ժամանակագրեմ՝ զի որպէս յայտ է , երկրանն են ժամանակագիրք զրբե և զաբբոյ մահուան Պղատոնի . այլ Թուի ամենոց ինչ ևԷթ գոլ ընդ հաշիւ երկաբանութեանցն խորք 'ի միջի ։ (Տես Տոռուել , յդ. զՄՂ. Ճառ. 10 . էջ 609 . և 'ի Ճառն Ք.որ. սենեայ յեռեալ 'ի ծագեալ՝ որոյ մակագիր է Symbolae litterariae հտ . 6 . էջ 80 ։

1 Դիոգ . լայերտ . 'ի Պղատ . գիրք Գ . յօդ . 2 ։ Սենեկա , Թուղթ 58 ։

2 Հերմիպ . առ Դիոգ . լայերտ . անդ ։

3 Սիկերը . յդ . Տերուիմ , գլ . 5 . հտ . 3 . էջ 298 ։

'ի նմա ուրեք ուրեք արարեալ 'ի նմանէ, և թա-
ցաք զայն արտաստուօք։ Սուգ հաստարակաց, և
ողբք բարեկամացն ուղեկից եղեն 'ի գերեզման
անդր՝ ուր թաղեցաւ մերձ ՅԱկադեմիա, վախ-
ճանեալ ամաց ութսուն և միոյ[1]։

Զամենայն ստացուածս իւր բովանդակեալ 'ի
կտակի իւրում[2], և էն այսոքիկ. ամարաստան
տունք երկու, մնասք արծաթոյ երեք, ստրուկք
չորք, անօթք արծաթիք երկու, մին հարիւր
վեթսունևհինգ դրամակշիռ և միւսն քառա-
սունևհինգ, մնատանի ոսկի, և գինդ մի դարձեալ
ոսկի՝ զոր 'ի մանկութեանն կրեր յունական[3]։
Յայտ առնէ դարձեալ, զի չարտրի ինչ ումիք[4],
և թողու զմի յամարանոցացն 'ի ժառանգութիւն
որդւոյ Աստիմասայ եղբօր իւրոյ, և Աբսեմեայ
հնարէ ազատութիւն՝ որոյ գութ և խնամք ար-
ժանի էին վարձուցն։ Պատուիրէ դարձեալ և
վասն յուղարկաւորութեան իւրոյ և գերեզմանի[5],
և զԱպելսիպսոս քեռորդի իւր ընդ այլս ոմանս
կացուցանէ կատարիչ կտակի իւրոյ և փոխանորդ
իւր ՅԱկադեմիա։

Ի թաղեանն նորա զտաւ նամականի զիմաս-
տասիրական խնդրոց. և ասէր իսկ ինքն ստէպ՝
թէ 'ի Սիկիլիա ընդ արքային սիրակուսացւոց

1 Դիոգ. լայերա. գիրք ԿԷ 271։
Գ. յօգ. 41։
2 Սէքս. Եմպիրիկ. ընդ. դէմ քերակ. գիրք Ա. գլ. 12.
3 Դիոգ. լայերա. անդ։
4 Դիսակոր. առ. Ատենէ. գիրք ԺԱ. գլ. 15. էջ 507։

կրտսերոյն Պիտնիսեայ բանք լեալ նմա զառաջնոյ պատՃառէն և զչարեայն արարեալ, և Թագաւորին 'ի լուեալսն 'ի նմանէ յաւելեալ մնացեալ Թիւնս ինչ յիւրմէ և առ 'ի յայլոց խմաստասիրաց, յերիւրեալ էր զիրս ինչ՝ յորում զոգիտութիւն իւր նշաւակէր[1]։

Յետ սակաւ ժամանակի զէնի դարձին Պղատոնիա, ռաքեաց առ նա Թագաւորն զԼրբիդեմոս խմաստասէր, հայցելով լուծանել զտարակուսանս ինչ որ տաղնապէին զմիտս նորա։ ԼՒ Պղատոն 'ի պատասխանին իւր, զոր արդ իսկ եղև ինձ ընԹեռնուլ, չէրեսկ համարձակ ասել ինչ զառաջնոյ պատՃառէն[2], զանգիտելով Թէ գուցէ մոլորիցի 'ի ԹղԹին։ ԼՒ առաւել զարմանք Թուեցան ինձ որ ինչ զՀետ այնորիկ յաւելու, զոր ասաս համառօտեմ։

Հարցանէս ինձ զաւակդ Պիտնիսեայ, Թէ չարիքս որ Թշուառացուցանէն զաշխարհ ուստի իցեն։ Լրբեմն 'ի պարտիզին քում՝ ընդ հովանեաւ սարդէնեացդ՝ ասէիր ցիս զիտել զայդ. և ես քեզ ասէի՝ Թէ չեղև ինձ գտանել զոք խելամուտ գաղտնեացդ, Թէպէտ և յամենայն կեանս իմ հետազօտեալ։ Ամուի ինձ զի 'ի նշոյլ ինչ սկզբնածագ զիտութեան՝ վերստին եռանդն 'ի քեզ արծարծեալ է 'ի խնդիր այսոցիկ. այլ զի չէն քո հաստատուն խմաստք, միտք քո ան-

[1] Պղատ. Թուղթ 7. հա. 3. էջ 341։
[2] Նոյն, Թուղթ 2. էջ 312։
[3] Նոյն անդ, էջ 313։

սանձ և անառաջնորդ ընթանան զՀետ ցնորիչ։
Լաւ ոչ քեզ միայն պատահէ այդ, այլ և ամենեցուն որք լուան զվարդապետութիւն իմ՝ վաքանեցան 'ի սկզբան միտք, է որ առաւել և է որ նուազ։ Լ.յլ քոյդ այսպէս լուծցին վարանք։ Լ.ըբիդեմոս ածէ քեզ զառաջին զիմ պատասխանի. խոկասջիր 'ի դմա, և բաղդատեսջիր զայդ ընդ բանս այլոց խնամատարիցս. և եթէ այլ ինչ յաւելցին քեզ վարանք, յղեսջիր դարձեալ առ իս զԼ.ըբիդեմոս. և յառաջ քան զերկրորդ կամ զերրորդ դարձն, փարատեսցին երկբայք մտաց քոց։

Լ.այց զգոյշ լեր չխօսել զայդցանէ առաջի բազմաց. զի որ կիսոց զարմանս գործէն և հիացումն, այլոց արհամարհանաց և ծաղու իրք թուին։ Վարդապետութիւն իմ արկեալ 'ի յայդ և 'ի քնին, գտանի որպէս ոսկի զուտ 'ի բովս։ Տեսի արս հանճարեղս, որ զերեսուն ամ խոկացեալ 'ի նմա՝ յետոյ ապա խոստովան եղէն, զի որ ընդ այնքան ժամանակս անստոյգն թուէր նոցա և մթին՝ ստոյգ այնուհետև և պայծառ տեսանէին զայն։ Լ.յլ ես դարձեալ ասեմ քեզ, զբարձրապատում իրացս բերան 'ի բերան և եթէ պարտ է խօսել. ոչ ետու, և ոչ տաց երբէք զստոյգ խնամատս մտաց իմոց 'ի գիր. Վոկրատայն և եթէ հրատարակեցի։ Ողջ լեր, և հլու խրատուց իմոց. այրեսջիր զգիրս իմ զայս, յետ ստէպ վերծանելոյ։

Լ՝ամբէ, և վրդէ՞ն 'ի գիրս Պղատոնի ստոյգ ի-մաստք մնայ նորա զայսրեանցն արարչէ, և համա-րիցի պարտ ծածկել զայն որ զՔրիստի ըմբռնեցոյց զիմաստուն հրաշազան ճարտարաբանութեամբն պարզաբանել։ Դու ինքնին գիտես, զի Սոկրատ անդանօր ոչ ինչ վարդապետէ, այլ լսէ միայն. և ո՞ր այն իցէ ապա վարդապետութիւնն գաղտնա-ծածուկ, զորմէ խօսի Պղատոն. ոյց յաշակեր-տացն իւրոց աւանդեաց զայն. խօսեցար ինչ ընդ քեզ զայնմանէ։ Հնորիմ՞'ի խառն 'ի խուռն գու-շակութիւնս։ . . .

Մա՞հ Պղատոնի միւս ևս զՀետ իւր ածեալ ձգէ կորուստ, ընդ որ վիշտ մեծ է ինձ. զի Լքիս-տոտէլ մեկնի 'ի մէնջ։ Դժկամակութիւնք ինչ եղեն պատճառք այսմ, զորս 'ի դարձին քում պատմեցից։ Լոյս տայ նա առ Հերմիաս նեղբի-նի, զոր Թագաւորն Պարսից կացոյց իշխան քա-ղաքին Լտարնեայ 'ի Սիւսիա՝։ Ոչանր է ինձ զրկել 'ի բարեկամութենէ նորա և յիմաստու-թենէ և 'ի խօսից. զի թէպէտ և խոստացար ինձ դառնալ այսրէն միւսանգամ, այլ խտիր մեծ է ընդ վայելը և ընդ ակնկալութիւն։ Լ՝ալ, ինքն իսկ յեղանակեր զՊինդարայն, զի յոյս չէ այլ ինչ՝ բայց երազ յարթմի[2]. և ես գովէի յայս-ժամ զսահմանն, այլ արդ սուտ է ինձ այն։

1 Դիոգ. լայերտ. յԱրիս-տոտ. գիրք Ե. յօդ. 9։ Դիո-նիս. ալիկ. Թուղթ առ Ամմ. գլ. 5. հա. 6. էջ 728։

2 Դիոգ. լայերտ. անդ. յօդ. 18։ Պասք. Ճառ. 10. էջ 581։

Օ լիզջ է մտաց խնց, զի ոչ 'ի զրի արարի զՀանձարեղ խնաստն նորա։ Այս ինքն 'ի խօսելն երբեմն զբարեկամութենէ, վայելուչս յանկարծ գոչեաց. Ո՛ բարեկամք, չիք որ բարեկամ[1]։ Այլ 'ի հարցանել ոմանց՝ Թէ առ ինչ է պիտանացու խնաստասիրութիւն, ասէ. Ա՛ռ 'ի գործել աղաստ-ութիւն զոր ինչ հրամայեն օրէնքք[2]։ Այլ երեկ դարձեալ 'ի տան խնամ հարցին ցնա ոմանք, Թէ ընդէր ախորժելի են երեսք գեղանւոց. և նա ա-սէ. Ինդիր զաչացուի[3]։ Ա՛յլ քո կենակից լեալ է ընդ նմա, և գիտես քաջ զի Թէպէտ և գի-տուն է նա քան զամենայն մարդիկ, այլ հանձար գերազանցէ արդեօք 'ի նմա քան զգիտութիւնն։

Որ ինչ անդ առ Էլիանոս-Ռէամբն Լեոնդիոսոսէայ Յերէրոդոս ամ 108 ողիմպիադին։

(Յուլիսի օրէ յուլիսի 347 ամին մինչև 'ի 27 յունիսի 346 ամին Ն. Ք.)

ՊԱՏՃԷՆ ԹԼԹՈՑՆ ԿԱԼԻՄԵՊՈՆԻ

Փիլիպպեաց *իրազեկ լեալ որ 'ի կաՃառս մեր յաՃախէ ծաղր*[*], *յղեաց առ մեզ քանքար մի.*

1 Փաւստ. առ Դիոգ. լայ-երտ. գիրք Ե. յօդ. 21։

2 Դիոգ. լայերտ. անդ, յօդ. 20։

3 Նոյն անդ։

* ԿաՃառքս այսոքիկ խը-բէին 'ի վաթսնից հանձարեղ արանց, որոց կիրթ ախոր-ժակք էին. և ժողովէին նոքա ընդ ժամանակս ժամանակս, տալ վՃիռս զծաղղական իրաց որ ածէին յառաւեան նոցա։ Զայսմանէ ասացի վերագոյն 'ի քանեերորդ գլուխ գրոցս։

և խնդրէ զրեալ առ ինքն զվՃիռս համախմբու-
թեանց մերոց 'ի նուագս իւրաքանչիւր ՝։ Հաճոյ
թուեցաւ Ժողովոյս մերոյ առնել զինդիր նորս.
և խորհրդակից եղէ ես յղել նմա զնկարագիր ո-
մանց 'ի մերոց աւագացս և զօրավարաց . և հա-
ւաքեցի առ Ժամայն փոքր 'ի շատէ զտիպոնկարա-
զրին նՃ, զոս այսր ամիսփեմ՝ եթէ յիշել կա-
բացից ։

Դեմանդէս[2] պայծառացաւ առ Ժամանակ մի
'ի թիավարս պատերազմիկնաւաց[3], և էր նա կո-
ղովի 'ի ձգել թիակս, որպէս արդ 'ի Ճառս արկա-
նել։ Յառաջնումն արուեստին ստացաւ զպար-
ծանս, յաւելեալ զՀելլէն բարբառոյ Ճոխու-
թիւն առակաւն՝ 'ի Ռիաֆէ 'ի Բէնմ . որ յայնմ
հետէ նշանակէ զյանկարծ վերելս յաւագու-
թիւն ։

Բազում է նորա հանՃար, և մանաւանդ 'ի
քաջ ծաղրածութիւն[4]. թէպէտ և ընդ խու-
ժան մարդահաՃոյից կեայ։ Ճածին 'ի բերանս
բազմաց հանՃարաբանութիւնք նորա[5]*։ Ոչ
զինչ և խօսի, թուին ազդեցութիւնք 'ի նմա
լեալ. տիպք իրացն և բացատրութիւն 'ի մի քրթ-

1 Ա թեն. գիրք ԺԳ. գլ. 1. էջ 614։
2 Փարրիկ. մատենագիր. Յուն. հտ. 4. էջ 418։
3 Կուինտիլ. գիրք Բ. գլ. 17. էջ 128։ Սուիդ. 'ի բառն Δημάδ. Սէքս. Եմպիրիկ. ընդդէմ քերականաց. գիրք Բ. էջ 291։
4 Երազմ. առածք. 4. էջ 670։
5 Կիկերո. Ճարտ. գլ. 26. հտ. 1. էջ 441։
6 Դիոմեդ. փաղեր. յՊ. պերՃնոյսու։
* Յեսիկոյս մատենիս 'ի տեղեկութիւնս. Թիւ. ԺԷ։

թել ական յանդիման լինին նմա. նմին իրի և ոչ վասատակի նա 'ի զրել զնաւն[1], և 'ի խորհել իսկ զուն ուրեք։ Ի հանախումբ ժողովի զյե-զակարծ իրաց յուզեալ ինդիր, ուր և Ղեմոս-թենէս չիշխէ լուծանել զլուութիւն, կոչի Ղե-մոդէս. և այնպէս Հարտարախօսէ անդ, զի ոչ որ երկբայի զեր 'ի վերոյ ամենեցուն զասել զնա առենաբանիցն մերոց[2]։ Եւ ոչ 'ի մասինս ևեթ յայսմիկ գերազանցեալ, այլ իշխէ նա ձայնա-տուր լինել աթենացւոց ամենեցուն 'ի պայքար յաձախագոյն արքեցութեան, և թագաւորաց ամենայն երկրի 'ի յագեցուցանել զարծաթ-քաղցութիւն իւր[3]։ Ղիւրապատրաստ է 'ի վա-ճառաշահ. և անձնավաճառ ևս լինի տարեւոր ժամանակաւ որոց գնէին զնա կամիցին։ Եւ ասէր իսկ ումեմն, զի յորժամ օժիտ դատերն իւրոց հասցէ նմա պատրաստել, յօտար պեստ-թեանց հայթայթեսցէ զծախսն[4]։

Փիլոկրատ ստորև է քան զնա Հարտարախօսու-թեամբ, այլ հանդոյն նմին հեշտասէր[5], և գե-րազանցեալ շուայտութեամբ։ Ամենայն ինչ ան-տես լինի առ նոսաւ 'ի սեղանի, թուի ոչ մի որ՝ այլ բազմապատիկ գոլ. յիրաւի քերթողն Եւ-

1 Կիկերո. յղ. Երևելի Հարտ. գլ. 9. հա. 1. էջ 343։ Կուինտիլ. գիրք Ժ. գլ. 17. էջ 129։

2 Թէոփր. առ Պլուտ. 'ի Դեմոսթ. հա. 1. էջ 850։

3 Պլուտ. 'ի Փոկիոն, հա. 1. էջ 755։

4 Նոյն անդ։ Նոյն առակ. հա. 2. էջ 188։

5 Դեմոսթենէս, յղ. վերոգ հրեշտ. էջ 329։ Էրբին. յղ. վերոգ հրեշտ. էջ 403։

բուղոս 'ի միումբ ուրեք 'ի տաղիցն ասաց, զի կրկին կոչնականք են մեզ անյաղթելիք, Փիլոկրատ և Փիլոկրատ[1]։ Դարձեալ մի է սա յարանցն, յորոց 'ի ձակատս որպէս 'ի վերայ դրանց ապարանից թուի դրոշմեալ ստուարատառ. Վրէյէլ կամ Վճառէլ[2]։

Իսկ Դեմոսթենէս ոչ այսպիսի. այլ ցուցանէ նախանձ սաստիկ 'ի վերայ հայրենեաց, զի առանց այսր կերպարանաց չյաջողէ նմա սայթաքեցուցանել զոսոխսն, և ածել զիւրև զամբոխին։ Թէպետև յայնժամ մնան լիցի նա մեզ, յորժամ չկարասցէ խափանել զմտանութիւն այլոց[3]։

Նիմամ լեալ 'ի մանկութենէ, ոչ ուսաւ զարուեստս ախորժելիս՝ որովք մարթէրն բարեքեալ զդժբախտութիւնսն բազմապատիկս։ Այլ թէ կարէի նկարագրել զնախկին երևումն նորա 'ի բեմի։ Դարեսջիր 'ի մտի զայր մի խոժոռ և տխուր, քերելով զգլուխն, և զթիկունսն ընդոստ ընդոստ 'ի վեր ձգելով, ձայն ելանելոյ նուրբ և նուազ[4], շունչ կարձոգի, ոլորակք հերձոտիչք զցուցս լսելեաց, արտասանութիւն խժական, և խժգժագոյն ևս տիպք բանից, և տունք անսպառք՝ անեզրականք՝ անիմանալիք և աղխաղխեալք դպրոցա-

1 Եւբուղ. առ Ամենն. գիրք Ա. գլ. 7. էջ 8։
2 Դեմոսթ. անդ. էջ 310։ Նոյն յոլ. պասկ. էջ 476։
3 Դենարք. ընդդէմ Դեմոսթ. էջ 90։ Պլուտ. 'ի Դեմոսթ. հտ. 1. էջ 857։
4 Եպիփ. անդ. էջ 420։

կան շարաբանութեամբք։ Պարտոյց նա զմեզ, և մեք զնա. 'ի շչիւն և յայսն կատականաց լեալ ամենեցուն, խոյս ետ առ ժամանակ մի. և 'ի վերքան զպայման մարդոյ յարկածս իւր վարեցաւ։ Ոչիչն անլուր զկէսս 'ի թերութեանցն ելից, և զօր հանապազ յաձախէ զնշոյլս փառաց իւրոց։ Անդրագնի ստանայ զայն. հարկ է նմա խորհել ընդ երկար զառաջարկութենէ իրացն, և այսր անդր զմիտսն շրջշրջել՝ առ 'ի տալ նմա յառաջ ածել ինչ[1]։

Սոփոք նորա կոչէն զձառս նորա ձիթահոտս. և կիրթք ախորժակօք գուեհիկս իմն զձևս նորա հատարին[2], և ստգտանեն զխիստ բացատրութիւնս նորա և զանհեթեթ այլաբանութիւնս[3]։ Սակ ինձ ծաղրածութիւնք նորա թուին ցուրտք, և ծաղրելի զարդասիրութիւն նորա, զի և կարի քնքշագոյնք 'ի կանանց ոչ այնպէս գեղեցիկս խնդրեն զգենուլ. և այս ձիգն ընդ գժնէութեան բարուց նորա ներհական իմն գործէ տեսիլ նորանշան[4]։

Ակնկայեմ ուղղութեան նորա. զի հարցփորձ ինչ քննութեան դատաստանի՝ երկոցունց և կողմանցն եկաց ջատագով[5]։ Այսմանէ ընդ միում ումեք 'ի բարեկամաց նորա խօսէի, որ էր

1 Պլուտ. 'ի Դեմոսթ. հա. գլ. 34։
1. էջ 849։
2 'Նոյն անդ, էջ 851։
3 Եպիֆ. 'ի Կաուսիփ. էջ 439։ Գինգին. յգ. վանմ.
4 Պլուտ. անդ, էջ 847։
5 'Նոյն, 'ի տան Ճարտարբարեխօսս, հա. 2. էջ 847։

այր հանձարեղ, և ասէ ցիս ժպտելով. Դէռ և ս կարի խակ էր յայնժամ։

Բաղք նորա թէպէտ և ոչ ամբիծք, այլ չէն ինչ անձաՀք։ Այսի զնմանէ՝ թէ այց առնիցէ կանանց ոչ պարկեշտից, և թէ հանգոյն նոցին երբէք երբէք պՀնիցի, և 'ի մանկութեան իւրում զտարեւոր շահ վաստակոց դատասացութեան իւրոյ 'ի միում ուրեք ժամանդրութեան ծաղխեալ՝. այլ այս ամենայն չէ ինչ։ Յաւելուն զի և զկին իւր վանձառեաց երբեմն Կնոսիոնի պատանւոյ[2], և այս նկատելի է. այլ այսոքիկ առանին նորա իրք, և չէ ինձ անկ օտարատեսուչ լինել։

Ի յետնում սպանդարամետական տօնին[3] պարգևլուխ եկաց մանկտւոյ ցեղին իւրոյ գուսպարելոց 'ի կաքաւ։ Այս 'ի ժամ հանդիսին Մինդիաս, այր մեծատուն և քաջ ծաղրածու, մատոյց նմա մրցանակ ուժգին՝ ածեալ 'ի ծնօտ նորա ապտակ յանդիման անհամար բազմութեան տեսողաց։ Ողոքք կալաւ Դեմոսթենէս յատենի, և հանՀոյ եղև երկաքանչիւրոցն վՀիռ դատաստանին. քանզի Մինդիաս տուժեցաւ տուգանս արծաթոյ, և Դեմոսթենէս ընկալաւ զարծաթն. և գիտեն արդ ամենեքին, զի երեք հազար դրամակշիռք են գինք ապտակելոյ զպարգևլուխ[4]։

[1] Ա Թեն. գիրք ԺԳ. գլ. 7. էջ 593։

[2] Նոպին. յղ. վրէպ հրեշտ. էջ 419։

[3] Դեմոսթ. 'ի Միդ. էջ 603։

[4] Նոպին. 'ի պատեսիք. էջ 436։ Պլուտ. 'ի սասն Ճարտարախօսս, հտ. 2. էջ 844։

Յետ ոչ բազում աւուրց ամբաստանեաց զոր յաղգականաց իւրոց՝ իբր թէ հաստոյր ընկալեալ 'ի նմանէ հարուած, և ցուցանէր 'ի գլուխ իւր վէրս՝ զորմէ գոյր կասկած թէ իւրովի զայն արարեալ էր[1]։ Այլ 'ի խնդրել նորա տոյժս փոխարէն հարուածոյն և զտոկոսիս, և զտուժիցն, լուր եղև՝ զի Ռեմոսթենի գլուխն ի՞նչ կալուած քաջաբեր[2]։

Անձնասիրութիւն նորա ծաղու արժանի է, և ոչ ինչ դժպհի, զի մերկապարանոց է։ Յեռանդն էի ընդ նմա 'ի փողոցի, և կին մի ջրկիր տեսեալ զնա եցոյց մատնանիշ այլում ումեք կնոջ և ասէ. կա՛ց հայեա՛ց, Ռեմոսթենէս է դա[3]։ Այլ իմ չլսելոյ արարեալ զայն, նա ինքն ազգ առնէր ինձ լսել։

Այսքինէս 'ի մանկութենէ վարժեցաւ 'ի հրապարակախօս լինել։ Այր նորա վաղ եմոյծ զնա 'ի ժողովս. շրջէր նա ընդ մօր իւրում 'ի տունս, ընծայեցուցանել զսինկքոր խուժանն 'ի խորհուրդս Սպանդարամետին։ Արևէր նա 'ի փողոցս պարագլուխ աստուածապարարկացն, սամիթ և կաղամախս ածեալ 'ի գլուխ իւր պսակ. և կատարէր ընդ նոսա, բայց վայելչագոյն, զամենայն այլանդակութիւն անհեթեթ պաշտամանն։ Արգէր, կայթէր, գոչէր, և օձս 'ի ձեռին տատա-

1 Եպքին. յղ. վրէպ հրեշա. էջ 410։ Նոյն 'ի Կառեսիփ. էջ 435։

2 Նոյն 'ի Կառեսիփ. էջ 462։

3 Կիկէր. տուսկուլ. գիրք Ե. գլ. 36. հա. 2. էջ 391։ Պլին. գիրք Թ։ Եղիան. զան. պատմ. գիրք Թ. գլ. 17։

ներ ընդ օդս, և խուժանն բարեբաներ զնա, և պառաւունք տային նմա կարկանդակս[1]։

Ապծարծեցաւ յաջողութեամբն փառասիրութիւն նորա, և խառնեցաւ ընդ կատակագուսանս՝ զերրորդական յանձն առեալ դէմս։ Դայց թէպէտ և քաղցրաձայն էր, ամբոխին եթեր ընդ նմա հակառակութիւն անողոքելի[2], մինչև թողուլ նմա զարուեստս, և լինել դիւանադպիր 'ի խոնարհագոյն ատենի. ուստի ապա ամբարձաւ 'ի յանձանձանս իրաց պետութեան։

Յայնմ հետէ բարեկարգ և հաստատ վարք կեանս։ Ի ժողովս բերէ հանձար, կիրթ ախորժակս, բարեձեւութիւն և ակնածութիւն։ Դարտասանութիւն նորա գերազանցէ քաջ ընտրութեամբ բառից, յօրդութեամբ և պայծառութեամբ իմաստից, և բազմահնչեալ դիրութեամբն՝ որ բնութեան քան արուեստին են արդասիք։ Օրաւոր են ճառք նորա, այլ ոչ որչափ Դեմոսթենեայն. սասանեցուցանէն նախ զլսելիս, և ապա ՀԷտ իւրեանց առեալ ձգեն[3]. զայսոսիկ գէթ այսպէս լեմ՝ 'ի գիտողաց արուեստին։ Դմանչէ նա ընդ առաջին կեանս իւր, և ինքնին անխորհրդաբար յուշ ածէ զայն այլոց։ Ի զգնալ նորա 'ի հրապարակի չափելով զքայլսն, զտոտրոտսն քաշէլով, բարձր 'ի գլուխ և թռալիր[4],

1 Դեմոսթ. յղ. պսակ. էջ 516։

2 Նոյն անդ։ Նոյն յղ. վրէպ հրեշտ. էջ 346։

3 Դիոնիս. աղիկ. յղ. գին. Նախնի մատ. հատ. 5. էջ 434։

4 Դեմոսթենէս. յղ. վրէպ հրեշտ. էջ 343։

շուրջանակի յամենայն կողմանց լսելի լինի. Ոչ սա է տրուպ դպիր կրտսերագոյն ատենին, որդի Տրամեայ և Գղաւակոթեայ, որ երբեմն ստահակն կոչէր[1]։ Ոչ սա է որ 'ի վարժարանին զամենուս մաշէր՝ մինչ մեք ուսանէաքն, և 'ի սպանդարան մետական տօնին՝ կանչիւք զփողոցս ընդ լոյր, գոչելով Լ՚ուլոյ Սաբոյէ*։

Ոչ ինչ զանխուլ է նախանձն որ ընդ սա և ընդ Գեմոթենէս, այլ յառաջածանութեան ինքեանց. զի որք նմին էին հետամուտ իրաց՝ 'ի քթիթական գուշակին զիրեարս։ Եվ կարաւ ոչիցի արդեաք Լ՚ուքինէս, չգիտեմ. այլ որ այնպէս սիրելին է, չիցէ անողոքելի։ Պարտ է և ոչ զայն անցիչատակ առնել, զի է նա քաջասիրտ յոյժ, և 'ի բազում պատերազմունս առաքինացեալ, որում և Վոկիոն վկայէ քաջութեանն[2]։

Ոչ ոք ծաղրագոյն քան զՎոկիոն։ Ոչ ևս կարաց նա 'ի միտ առնուլ, զի 'ի դարուս և 'ի քաղաքիս յայսմիկ կեաց։ Ոչ քաւորէ, և ոչ նուաստութիւն համարի զայն. բարերարել, և ոչ պանծայ ընդ այն. խորհրդակցի, զիտելով զի ոչ լսելի լիցին խորհուրդք իւր։ Ոչ ոչոյ թիւնք մնացեն նմա առանց փառասիրութեան, և սպասաւորել աշխարհին ոչ 'ի շահ ինչ իւրոյ օգտին։ Ի բանակի՝ հրահանգաց ևեթ զօրականին միտ դնել

[1] Գեմոթեն, յդ. պսակ. էջ 494։

* Բառք ազնաստրոյգք, որ ընդ կարգ տային առ Սպան. գարամեան Գիմոնիս։

[2] Էպքին. յդ. վեկպ հրեշտ. էջ 122։

և հարկանելոյ զԹշնամին, և 'ի բեմն՝ ոչ յաղա-
զակէ ամբոխին սասանի, և ոչ 'ի կայթից զրուա-
տեաց նորա ամբարշաւանէ։ Ի միում ուրեք 'ի
Ճառիցն առաջի առնէր օրինակ մնարտի, և խա-
փանեաց ոմն զբանս նորա թշնամանօք[1]։ Ընդեաց
Փոկիոն, և 'ի վախճանել միւսոյն զթշնամանսն՝
նա անխռովաբար յառաջ ածեալ զբանսն, ասէ.
Ի՞սացի զայրութիւնն և զկեռևակաց, մնայ արդ
ասել և որ այլն ևս։ Ի՞ւ այլ երբեմն 'ի ծափս
հարկանել ատենին, և ես գտայ առ նմա. և
դարձաւ յիս և ասէ. Պուցէ թէ անձանՃն ինչ
բարբառեցայ[2]։

Ոչ ծաղրանքք ընդ ծաղրաբանութիւնսն, այլ
քաջ հնարեցաք խնդրել զվրէժ արհամարհա-
նաց նորա։ Վասնզի սա միայն մնայ մեզ 'ի զօրա-
վարաց, և ոչ երբէք վարիմք սուաւ. սա անկա-
շառելի և թերևս գիտնագոյն քան զամենայն
Ճարտարախօսս մեր է, և չլսեմք սմա։ Ի՞սպաքէն
չկարացուք շրջել զնա 'ի մտաց. բայց օն և օն
արացեն դիք, զի և ոչ ինքն շրջել կարացէ զմեզ
'ի մերոցս, և ոչ ասասցի երբէք՝ թէ Փոկիոն
հինաւուրց առաքինութեամբք պար առեալ, և
կարկատուն իմն վաղեմի բարուքն յաջողեցաւ
յուղղութիւն ածել զսիրելին քան զամենայն
ազգս տիեզերաց։

Տէս զԲարէս, որպէս օրինակաւն իւրով ու-

1 Պուտ. օրէնքք 'ի վարչու- 2 Ասցն 'ի Փոկիոն, հա. 1.
թիւն հաս. հա. 2. էջ 810։ էջ 745։

սուցանէ մանկտուոյն մերում շահավաճառ առնել համարձակ կաշառանօք[1]. սա ապիրատագոյն է և անհմտագոյն քան զամենայն զօրավարս մեր, և քան զամենեսին առաւել մեծարեալ[2]։ Ընդ թևովք Դեմոսթենեայ և այլոց ոմանց ճարտարախօսաց պատսպարեալ կայ, և խնջոյս գործէ ժողովրդեան։ Լթէ նաւատորմ սպառազինել առաջի կայցէ, Արէս անդ զօրավար կայ, և ըստ հաճոյս իւր իշխէ այնմ։ Զրամն է նմա խաղալոց յայս կոյս, նա յայն կոյս խաղայ. փոխանակ պահ ունելոյ կալուածոց մերոց՝ ինքն ևս յաւելու 'ի հէնն, և ընդ նոսա 'ի միասին հարբատահարէ զբնակիչս կղզեաց, և գերէ զամենայն նաւս՝ որոց և հանդիպի։ Սակաւ ինչ ամն կորոյս 'ի նաւաց մերոց աւելի քան զհարիւր, և վատնեաց հազար և հինգհարիւր քանքարս յարշաւանս. 'ի պէտս ոմն, բայց իւր և գլխաւորաց իւրոց սպայիցն։ Լուրեք՝ զի և ոչ արժան համարի տալ մեզ զրոյցս, թէպէտ և ընդդէմ կամաց իւրոց իրազեկ լինիմք. և յառաջ քան զաւուրս զայսոսիկ հարկ եղև մեզ արձակել նաւ մի սուրհանդակ, հետազօտել ծովէ 'ի ծով, և գիտել զինչ անցք ընդ նաւատորմն և ընդ զօրավար նորա անցեալ իցեն[3]։

1 Աբիատոս. Ճարտ. գիրք Ա. գլ. 15. հա. 2. էջ 544։
2 Թէոպոմպ. առ Աթէն. գիրք ԺԲ. գլ. 8. էջ 532։
3 Եպքին. յղ. վրէպ հրէշտ. էջ 406։ Դեմոսթ. յողնեթ. 3. էջ 38։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ՆԻԿԵՏԱՑ

ՓՈՎԿԻՍԱՑԻՔ պարտասեալք 'ի պատերազմէն որում իբր 'ի տասն ամաց հետէ ժուժկալեն, ինդրեցին 'ի մէնջ օգնութիւն, խոստացեալ մեզ զԹրոնիսն և զԼիկիա և զԼակեդոս քաղաքս ամուրս 'ի մուտս պահակին Թէոդոսիոպոլեայ։ Պրոքսենոս զօրավար նաւատորմին մերոյ որ մերձ անդր կայր, յառաջ մնտեաւ ընդունել 'ի նոցանէ զամուրսն, և նստուցեալ 'ի նոսա զօրս 'ի պահ. հարկ ելցի այնուհետեւ Փիլիպպեայ հրաժարել 'ի խորհրդոց նուաճելոց զպահակն։

Խորհուրդ կալաք սպառազինել միւս եւս տորմիղ յիսուն նաւաց. ընտիր մանկտին մեր կազմ կայ 'ի չու, զինուորեցաք զամենեսին յերեմնամենից և 'ի խոնարհ. և լուեալք զի Թագաւորն սպարտացւոց Լաբիդամոս յանձն առնու գումարել զամենայն զօրութիւնս աշխարհին իւրոյ ընդ փովկիսացիս՝։ Պատերազմ անհրաժարելի 'ի վերայ կայ, և կործանումն Փիլիպպեայ անհրաժեշտ։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՆԻՈՐԱՑ

ՍԻՐԵԼԱՑՈՑՆՔ 'ի տիվնաց աԹէնացւոցս նախանձին ընդ գովութիւնն, զոր ընծայեաս տիկ-

՝ Եպֆին. յԼ. վրկպ հրեշտ. եջ 416։

նոջ և քեռ Բրշամայ. և հմուտք 'ի քաղաքավարաց մերոց հանձար իմն հանդոյն նորայոյն կարևոր համարին մեզ աստանօր ընդդէմ Փիլիպպեայ։

Հնդէր քաղաքս 'ի շաւիղն գնուց, և զոյց ինչ սորա զհնընկեց արար զամենեսին։ Ի պարարման քաղաքին ողնութացուց պատմեն յայսմնեալ նորա բաղում անգամ զնդես իւր բարեկամութեամբ կալոյ ընդ մեզ։ Ի լուր համբաւոյս, զոր ամբոխն ցնծութեամբ լուաւ, խորհուրդ կալաք խօսել ընդ նմա 'ի խաղաղութիւն՝ զոր այլ և այլ խոչք խափանեցին։ Կալաւ նա զՀղինթոս, և մինչ դարձեալ սպառազինեալք 'ի պատերազմ, երկուքն 'ի գուսանաց մերոց Բրիստոդեմ և Դիոստղոմէոս սիրելիք թագաւորին դարձ արարեալ 'ի նմանէ՝ վկայեցին զի 'ի նոյն յառաջին խորհրդոն կայր[3], և դարձեալ արդ խորհիմք 'ի խաղաղութիւն։

Բրձակեցաք 'ի Մակեդոնիա պատգամաւորս տուն երևելիս հանձարով, զԼտեսիսն, զԲրիստոդեմ, զԷՅատրոկղէս, զԼիմն և զԼաւսիկղէոս, որ օգնական իւրեանց կալան զԴերկեղոս, ըզՓրինն, զՓիլոկրատ, զԼսբինէս և զԴեմոսթենէս։ Ի սոսա յաւելցի և Բգղայոկրէտն յանձանձիչ իրաց նիզակակցացն մերոց։ Սոցա յանձն է խորհել ընդ Փիլիպպեայ 'ի կարևոր պայմանս խաղաղութեանն, և ստիպել զնա՝ զի

1 Եպիսն. յդ. վրէպ հրեշտ. էջ 397։

2 Նախագրգ. Ճառին յդ. վրէպ հրեշտ. էջ 291։ Դեմոսթ. յդ. վրէպ հրեշտ. էջ 292։

3 Եպիսն. անդ. էջ 398։ Նախագրգ. անդ. էջ 291։

արձակեսցէ այսր հրեշտակս լիով իշխանութիւն, կռել սատ զդաշինսն։

Ոչ կարեմ կալ 'ի վերայ խորհրդոցս մերոց, Ի տարտամ ինչ թերեալս և 'ի նենգաւոր բանս բարեկամութեան Փիլիպպեայ դադարեալք անդէն 'ի սպառազինութենէ՝ անելոյսք իմանասնոց թերահաւատելոց ընդ բանս նորա, և առանց մնալոյ դարձի հրեշտակացն՝ զորս արձակեցաք առ ազգս Գալատայ առ 'ի գումարել զնոսա ընդդէմ հասարակաց թշնամւոյն. և յառաջմամբոյց լինիմք 'ի դաշինս, որովք կարասցէ նա զեղծանել 'ի յանձն առնուլն զնոսա, և 'ի մերժելն՝ յամօթ առնել զմեզ։ Ա՛ռ 'ի յանկուցանել 'ի մեզ զբարեկամութիւն նորա, հարկ է զի հրեշտակք մեր գտցեն զնորս առաջի նորա։ Զ՚ քանզի Քրիստոդեմայ դերասանի խոստացեալ էր հասանել 'ի տեսարանս՝ զոր ոմանք 'ի քաղաքաց պատրաստէին ածել 'ի հանդէս, զնան արդ հրեշտակք յերեսաց աւագանւոյն պաղատել ձեռնամած առ բնակիչս քաղաքացն՝ զի մի դատապարտեսցեն զՔրիստոդեմ 'ի տուգանս, զի կարօտի նմա աշխարհս 'ի Մակեդոնիա։ Դեմոսթենէս զվճիռս զայս էտ առնել, այն որ 'ի հրապարակախօս ձնաւս իւր յոխորտագոյնս և այնպիսի արհամարհանաք թշնամանէրն զՓիլիպպոս '։

' Եպիֆն. յղ. վեպ հրեշ. էջ 398։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԿԱԼԻՄԵԴԵԱՑ

Վ ԱՂ. քան զոր կարծէաքն անճապարեալ հրեշտակացն մերոց՝, ահաւասիկ զարձան։ Իսա. բանք Թուէն ընդ միմեանս, բայց Դեմոսթենէս չէ ինչ հաճ ընդ պատգամաւորակիցս իւր, և նոքա զնմանէ ժժգոհք էին։ Դրեցից քեզ զերս ինչ հրեշտակութեան նոցա զեռ և յականջալուր եկեալ. զի երէկ լուայ զայն յընթրիս, ուր էին զլխաւորքն 'ի նոցանէ Կտեսիփոն, Լաքինէս, Բրիստոդեմ և Փիլոկրատ։

Դ.սին զայն զիտասջիր՝ զի բաղում ինչ վիշտս կրեալ է նոցա զանապարհայն յանբարհաւանութենէ Դեմոսթենեայ՝, այլ ամենայնի համ բերեալ։ Բ.յսքան զիւրատարք էն 'ի քաղաքաժողով միաբանութեան արք անտանելիք։ Բ.դաւել և տագնապեալ նոցա վասն աջողութեան մնաց Փիլիպպեայ և զերազոր կամացն, և քաջ զիտելով զտկարութիւն իւրեանց քան զնա 'ի խորագիտութիւն, բաշխեն հանապազօր յիւրեանս զբանս պատգամացն։ Յօրինի կարգ ձա. կատամարտին, և սահմանի երիցագունիցն հասակաւ նախաձեռն առնել 'ի պայքար։ Դեմոսթենեայ քանզի հուսկ կրտերագոյնն էր, յետոյ քան զամենեսին հարկ էր եղանել 'ի ձակատ.

1 Դեմոսթենէս, յդ. վրէպ հրեշտ. էջ 318։

2 Եսքին. յդ. վրէպ հրեշտ. էջ 398։

և խոստանայ բանալ զաղբիւրս անսպառելիս Հար-
տասանութեան իւրոյ, և յաւելու՝ թէ մի ինչ
զանգիտիցէք 'ի Փիլիպպեայ, այսպէս զբերան
նորա կարեցիցէ՝, զի ստիպեացի տալ 'ի ձեռս մեր
զ'մեկնիչս։

Իբրև յանգիման լինին թագաւորին, Կոտ-
սիփան և այլք 'ի սուղ ինչ բանս տան զպատ-
գամն. Յաբինէս Հոխ և երկայն բանիւք։ Իսկ
Դեմոսթենէս ... լուիցես արդ զիրսն։ Յոտն
կայ ահաբեկ. ոչ ևս էր անդ բեմն աթենական,
ոչ ևս ամբոխ գործաւորաց ունկնդիրք. այլ Փի-
լիպպոս պար առեալ յաւագանւոյն, բաղմագոյնք
'ի նոցանէ ալք հանձարեղք։ Ընդ ընդ այլ
էին և Պիւթոն բիւզանդացի պանծացեալն 'ի
քաջ մատենագիրս, և Լեսոսթենէս տարագրեալն
'ի մէջ, որ ընդ քաջագոյն Հարտարախօսս Յաս-
դայ 'ի համարի է։ Ամենեցուն լուեալ յառա-
ջագոյն զխոստմունս Դեմոսթենեայ, մնային ար-
դեանց իրացն մեծաւ ակնկալութեամբ՝ որ այն
իսկ լուսն առնէր սրտաբեկութեանն նորա[2]։ Կա-
կազէ գոգութեամբ անիմանալի ինչ յառաջա-
բան առնելով Հռետորն, և զգացեալ զայն՝ աղմ-
կի, կորուսանէ զկարգ բանիցն, և լռէ։ Դաջա-
լերել կամի զնա թագաւորն, այլ 'ի զուր. զի վաղա-
գոյն ևս յերկրորդումն նուազի ընդ յառնելն ան-
կանի։ Յա վայրիկ մի հրձռուեալ աւագանւոյն

[1] Եսբին. յղ. վրէպ հրեշտ. էջ 398։
[2] Նոյն անդ, էջ 400։

ընդ կորանն նորա, ապա քարոզն ազգ առնէ պատ-
գամաւորաց մերոց մեկնել 'ի բաց'։

Իսկ Ղեմոսթենէս փոխանակ ինքնին իսկ նախ
ծիծաղելոյ ընդ դէպսն, ընդդէմ դառնայ Լաբի-
նեայ՝ զառն կշտամբելով զնա վասն կարի հա-
մարձակախօսութեանն ընդ թագաւորին, և ա-
ծելոյ այնուիկ 'ի վերայ աշխարհին 'ի վեր քան
զկար նորա պատերազմ։ Լաբի 'ի սկսանել Լաբի-
նեայ զանձն արդարացուցանել, հասանէ անդրէն
կոչ յանդիման լինելոյ արքայի. և իբրև բազմին,
ասէ Փիլիպպոս մի ըստ միոջէ զինդիրս նոցա, և
պատասխանէ բողոքոյ նոցա։ Լաբ մանաւանդ 'ի
պատասխանի Ճառիցն Լաբինեայ զկայ առեալ,
յաճախ առ նա ինքն զբանն դարձուցանէ։ Լաբ
սպա զիջուցեալ զասասն, մեղմով և հեզութ
յայտ առնէ զեղծս իւր 'ի խաղաղութիւն։

Յայնմ վայրի Ղեմոսթենէս տագնապեալ իբ-
րև զդրանիկ որում հասանիցէ մերժումն յարքայէ,
հնարի դառնալ ընդարձակս առաջի թագաւո-
րին. այլ նա ոչ ինչ խօսի ընդ նմա, և ոչ յերեսս նո-
րա հայի։ Լաբ Ղեմոսթենէս մեկնի զայրացմամբ,
յեղակարծ տեսարանս զհետ բերելով։ Օր էր
նա որպէս մանուկ զգուանաց ծնողացն ստահա-
կեալ, և յանկարծ յաջողութեամբ ընկերացն
ընկճեալ։ Օ աւուրս բազումս տուէ մրրիկն. այլ
նորա գիտացեալ զի ոչ յաջողելին էլք սրտմտու-
թեանն, խնդրէ ընդելանել դարձեալ յայլ

։ Եպին. յդ. վերպ հրեշտ. էջ 401։

պատգամաւորս։ Այս էին յայնժամ 'ի Հանապարհի 'ի դառնալ այսրէն։ Զնոսա զնոսա իւրաքանչիւր առանձինն, և խոստանայ պատսպարան լինել նոցա առաջի ժողովրդեան. ումեմն ասելով թէ դարձուցից զքեզ յառաջին մեծութիւնդ, և այլում՝ թէ տայ կացուցանել զքեզ զօրավար։ Այս զամենայն մեքենայս իւր ուղղեալ ընդդէմ Աքինեայ, ստուարացուցանէ զպարծանս ոսոխին 'ի յագուրդ նախանձուն իւրոյ։ Այս հարկ է թէ կարի կուտականք էին գովութիւնք նորա, զի Աքինէս տաղտկացեալ բողոք ունի զայնցանէ։

Յերեկոյի ուրեմն 'ի Թեսաղիա, յորում 'ի քաղաքայ՝ ոչ գիտեմ, անդ նախ ծաղրաբանեալ Դեմոսթենեայ զարկածից հրեշտակութիւնք իւրոյ, յաւելու՝ թէ չէք ընդ արեգակամբ Հարտարախօս քաջ որպէս զՓիլիպպոս։ Այս Աքինեայ պատասխանեալ ասէ. Ուռաւել ևս ընդ այն զարմանամ, թէ քանի քաջ Համառօտեաց զամենայն զՀառս մեր։ Այս Կտեսիփոն յաւելու. Ոչ եմ հասակաւ, այլ չէք իմ տեսեալ զոք իբրև զնա զուարթ և սիրելի։ Յայնժամ Դեմոսթենեայ ծափս հարեալ դրուատեօք, ասէ. Վաղ է, այլ չիշխիցէք դուք արդեօք զդոյն վկայութիւն տալ առաջի ժողովրդեան։ Լակ նորա ասէն. Այս ընդդէմ ոչ։ Լակ նա անդրէն երկբայի, և նորա դարձեալ զբանսն հաստատէն. նա խոստումն 'ի նոցանէ խնդրէ, և նորա խոստանան[1]։

[1] Եպիֆ. յղ. վեպ հրեշ. 402։

Զգիտեմք թէ յինչ'ի կիր արկանիցէ զայն, տեսցուք զելս իրացն յառաջնում ժողովն։ Լմենայն կաճառս մեր հանդերձի գնալ անդր, զի այս ամ աներկբայապէս տեսարան ինչ ծաղրական մեզ ընծայեսցէն։ Լթէ 'ի Մակեդոնիա կամիցի Դեմոսթենէս հանդէս առնել զառանցանացն, ոչ նեբեցից նմա 'ի սպառ։ Զգծուութիւն նորա, որով վարեցաւ յատենի աւագանոյն, յաճախէ ինձ կասկածանս. զի վասն Փիլիպպեայ 'ի ձեռս հրեշտակացն աւանդելոյ զնամականին, գովեաց զՀասարակապետութիւնն՝ որ յանձն արար զերս աշխարհին հրեշտակաց այնպիսեաց՝ երևելեաց ճարտարիսօսութեամբ և ուղղութեամբ. և յորդորեաց զնա պսակ 'ի ձիթենւոյ հրամայել նոցա, և 'ի վաղիւ անդր հրաւիրել զնոսա յընթրիս 'ի նահապետանոցն։ Լբ հաճոյ թուեցան աւագանւոյն խորհուրդք նորա '։

Ամոլում կնքել զգիրս յետ ժողովոյն։

Լրդ իսկ երանեմ անտի. Դեմոսթենէս սքանչացոյց անդ զամենեսին։ Հրեշտակք իւրաքանչիւր պատմեցին կարգաւ զայլ և այլ իրս պատգամաւորութեանն. և Լաքինէս յաւել սուղ ինչ զճարտարիսօսութենէ Փիլիպպեայ և զքաջ մտառութենէ նորա, և Կտեսիփոն զվայելչութենէ կերպարանաց նորա և զգեղոյ մտացն և զզուարթութենէն՝ զաւժակ 'ի ձեռին ունելով։ Լբ գովեցան բանք նոցա կայթիւք ցնծութեան։ Յայն-

։ Նոբին. յղ. վերոյ հրեշտ. էջ 402։

ժամ Պետմոսթենեայ խոժոռագոյն քան զօրէն հանապազօր եղեալ 'ի բեմ, և քերելով հարուստ մի վայրկեան զգլուխն՝ որով ամենայն Ճառք նոր սկսանին, ասէ. Զարմանամ ընդ այնոսիկ որք խօսինն և որք լսեն. յայսքան կարևոր իրս իբր դուշնաքէիցդ այդոցիկ մարթիցն միտ դնել. այլ ես զհատնար հրեշտակութեանս մերոյ տաց։ Ինթերցցի հրամարտակ ժողովրդեանն՝ յորմէ պատգամաւորեցաք, և նամականին՝ զոր թագաւորն առանդեաց մեզ։ Լա իբրև ընթերցան, ասէ. Հաւասիկ հրահանգք մեր, և կատարեցաք զդրաս. ահա և պատասխանի թագաւորին. չմնայ արդ այլ ինչ, բայց խորհուրդ 'ի մէջ առնուլ'։

Լա շնչիւն իմն ընթանայր յատենին. կէսք ասէին. Վանի՛ Ճշգրիտ, քանի՛ Ճարտար խօսեցար։ Ա՛յլք ասէին. Լի նախանձու և չարութիւն բարբառեցար։ Լակ ես ծիծաղէի ընդ տագնապեալ կերպարանս Կտեսիփոնի և Լաքինեայ։ Արինեալ անդրէն Պետմոսթենեայ առանց թողլոյ նոցա ոչի առնուլ, ասէ. Լուայք զներբող Ճարտարիսուսութեան և զուշիմութեան Փիլիպպեայ. ամ՛ որ նորին իշխանութեամբն Ճոխացեալ, նոցին արժանի զտանէր զոլեստից։ Պանծացուցին առաջի ձեր և զայլ բարեմտութիւնս նորա. այլ չէ նա գեղեցիկ քան զգուանն Ա՛քիստոդեմ, և ոչ արբեցող քան զՓիլոկրատ։ Լաքինեայս առաց թո-

։ ԵպՓն. յղ. վերպ հրեշ. էջ 403։

զուլ լինձ, զէթ ըստ մասին, զՆառս իրաւանց Աստիպոլեայ. բայց Նաբինէս ոչ թողցէ երբէք, ոչ ձեզ և ոչ լինձ, պարապ խօսելոյ։ Անաւանդ զի մնասիք իսկ էն այդոքիկ. այլ կարեւոր լինձ թուի առաջի առնել հրովարտակ։ Վարոզ զօրու 'ի Փիլիպպէայ հասեալ կայ, հուլ ընդ հուլ հասցէն և պատգամաւորք։ Արդ խնդիր լինչ է լինձ 'ի ձէնջ, զի տացի նոցա բանիցն տեղի, և նահապետաք ժողով կոչեսցէն զաւուրս երիս անընդմէջ, խորհել 'ի խաղաղութիւն և 'ի դաշինս։ Արիւս ես խնդիր է լինձ, զի տացի գովութիւն պատգամաւորացն՝ եթէ իցէն արժանի, և հրաւիրեսցին նոքա առ վաղիւ յընթրիս 'ի նահապետանցն'։ Հաւանեցաւ առեանն զրեթէ առ հասարակ, և Ձարտարախօսն դարձեալ յաղթող հանդիսացաւ։

Լինձ մեծարոյ է յոյժ Պետմոնթենէս. այլ աջողութիւնք մնաց չէն բաւական, պարտ է և ոչ ծաղրելի լինել։ Ընդ արս երևելիս և ընդ կաՁառ մերոյ ժողովոյս է դաշն ինչ լուելեայն. մեք զհարկ մեծարանաց հատուցանեմք նոցա, և նոքա զզառանցանս իւրեանց մեզ։

ՊԱՏՃԱՌՆ ԹԴԹՈՑՆ ԱՊՈՂՈՒԹԻՒՆ

Յղեմ քեզ զօրագիր անցիցն որ 'ի ժողովս մեր անցին, մինչև սահմանեցաւ խաղաղութիւն։

Յաւուր Ը ելոյթերորդի ամսեան, որ օր Աստղե-

1 Նաբին. յլ. վերագ հրեշտ. էջ 403։

պէս։ Յոդովիցեան նահապետք, և ըստ վՀնոյ Ժողովրդեան սահմանեցին Ժողովս երկու համախումբս 'ի խորհուրդ խաղաղութեան. և զումարեսցին Ժողովքն յուեթևատասներորդ և յիններևտասներորդ աւուր ամենամ[1]։ Յաւուր ԺԲ՝ ելեփէբողէոնի ամսեան, որ օր առաջին էր սպանդաբաղեպական պօնէին[**]։ Ընտիպատրոս և Պարմենիոն և Լուբիլբոս հասին, առաքեալք 'ի Փիլիպպեայ կուել դաշինս, և առնուլ երդումն 'ի հաւատարմութիւն նոցին[2]։

Ընտիպատրոս Ճարտարագոյն է 'ի քաղաքավարս Լալադայ յետ Փիլիպպեայ, ժիր և անխոնջ, և հասանէ 'ի խնամն զրեթէ ամենայն իրաց աշխարհին. որպէս զի թագաւորին ասել յաՀախ. Հանգիցուք և զլուսցուք, Ընտիպատրոս հսկէ ընդ մեր[3]։

Պարմենիոն սիրելի թագաւորին, և առաւել զօրացն[4], բազմապատիկ արութեամբքն լեալ նշանաւոր, գերագոյն 'ի զօրավարս Լալադայ գտանէր՝ եթէ չէր Փիլիպպոս։ Յերկոցունց 'ի սոցանէ 'ի միտ առցես զՀանՀար և զքաջութիւն Լուբիլբեայ, որ նոցա պատգամաւորակից կարգեցաւ։

* Ուեթ ամսոյս հանդիպի յուեթ մարտի 346 ամին Ն. Ք։

1 Եսբին. յՁ. վրէպ հրեշտ. էջ 403 և 404։ Նոյն 'ի կանոնսիք. էջ 438։

** Ց 12 մարտի 346 ամին Ն. Ք։

2 Նախագր. Ճառին յՁ. վրէպ հրեշտ. առ Դեմոսթ. էջ 291։ Դեմոսթ. յՁ. վրէպ հրեշտ. էջ 304։

3 Պլուտ. առակ. հտ. 2. էջ 179։

4 Կոմինա. Կուրտ. գիրք Դ. գլ. 13։

Յաւուր ծէ ելեբէբողէոնի ամսեան*։ Հրեշտակք Փիլիպպեայ գրեթէ յամենայն տեսարանս տունեցան կան 'ի գնին։ Դեմոսթենէս հաւանեցոյց աւագանւոյն սահմանել նոցա տեղի ընդ պատուականացոյս[1], և ետ պատրաստել նոցա բաղմոց և օթոց ծիրանի. և ընդ այդն էած գնոսա անձամբ 'ի խաղետն, և բազմեցոյց գնոսա առ իւր։ Բաղումք զայսմանէ քրթմնջեն, նուաստութիւն զմեծարանս համարեալ[2]. իբր թէ չկարացեալ նորա 'ի Մակեդոնիա հնարչև գտանել առաջի Փիլիպպեայ, աստանօր արդ արժանի այնմ հնարի ցուցանել զանձն։

Յաւուր ծը ելեբէբողէոնի ամսեան**։ Դումբրեցան ժողովուրդն. այլ մինչև զվճիռս նորա զրեալ, պարտ համարիմ յիշեցուցանել քեզ ըզկարևոր մասունս խորհրդոցն։

Յառանգութիւն Մնիիպօլեայ քաղաքի է սկզբնապատճառ զրգռութեանս մերոյ ընդ Փիլիպպեայ[3]. զի սա անկ է մեզ, և ինքն բռնակալէ զայն, և մեք պահանջեմք զմերն։

Օ էն էառ 'ի վերայ ունկնց 'ի նիզակակցաց մերոց, և մեզ 'ի նախատինս էր և 'ի վտանգ թողուլ զնոսա անօգնական. ընդ որս են և քաղաքք՝ որ 'ի Թրակեանն Պերսոն և 'ի Փոլկիս։ Օ էն

* Ի 15 մարտի 346 ամին Ն. Ք։

1 Էսքին. յղ. վրէպ հրեշտ. էջ 403 և 412։ Դեմոսթ. յղ. պատակ. էջ 477։

2 Էսքինի կատ. փրփ. էջ 440։

** Ց 18 մարտի 346 ամին Ն. Ք։

3 Էսքին. յղ. վրէպ հրեշտ. էջ 406։

զառաջինն Կոտիւս արքայ Եբարձ 'ի մէնջ՝, այլ Կերսոբլեպտ որդի նորա յետ առնոց ինչ դարձոյց անդրէն՝։ բայց չէ ևս ժառանգեմք զայնս։ Չէ օգուտ մեծ է մեզ ունել զայնոսիկ, վասն անկասկած նաւարկութեան ընդ Չլեսպոնտ, և 'ի շահաւետութիւն վաճառականութեան ընդ Չբքինեանն Պոնտոս։ Իսկ քաղաքացն որ 'ի Փռիկիս՝ պարարիմք 'ի Թիկուս կալ, զի նորա խոտանեն զպահակն Ամբոնիլեայ, և են պատուար Պոտիկեայ ընդ ցամաք՝ որպէս քաղաքք Ամրակիոյ ընդ ծով՝։

Ի հրաժարել պատգամաւորացն մերոց 'ի Թագաւորէն, դէմ եղեալ զնայրնա 'ի Ամրակիա. այլ խոստացաւ նոյ չյարձակել 'ի վերայ Կերսոբլեպտեայ մինչև խօսք խաղաղութեան էին 'ի միջի։ Իսկ զիռովկիսացւոց չեմք ինչ անկասկած. հրեշտակք նորա ասացին՝ թէ չառնուն յանձն յաւելուլ զնոսա յուխտ խաղաղութեան. այլ կուսակիցք նորա պնդեն՝ զի առ 'ի չգրգռելոյ զթշնամիս նոցա զԹեբայիս և զԹեսաղացիս, չիսմի յայտնել հանրձակ բարեկամութիւն ընդ նոսա՝։

Կամի 'ի բաց առնուլ յուխտէն խաղաղուն և զընակիչս Ամրայ քաղաքի՝ որ 'ի Ամեսաղիա, զնի-

1 Դեմոսթ. ընդդէմ Ա. ՐԻՍՈՍԿՐ. էջ 742։ Դիոդ. դիրք ԺԴ. էջ 434։

2 Դեմոսթ. յՍ. վերկ հր. ՐԻՍ. էջ 305։ Եսքին. յՍ. վերկ հրէս. էջ 406։

3 Դեմոսթ. անդ, էջ 321։

4 Նոյն անդ, 344։

զակակիցս մեր, զորս պարարեալ պահէ արդ՝ խնդրել զվրէժ արշաւանաց նոցա 'ի Փարսաղիա յերկիր Նիզակակցաց իւրոց[1]։

Լռեմ զայլ ևս մնասունս խորհրդոցն զանկարելուս։

Ի սերկեւանս Ժողովի ընթերցաւ նախ հրովարտակն, զոր զորձակալաց Նիզակակից ազգաց նահոգ զգուշութեամբ յղեալ էր առ մեզ[2]. և իմաստք 'ի նմա այս էին. Ի խորհել աթենացւոց ընդ Փիլիպպեայ 'ի խաղաղութիւն՝ սահմանեն Նիզակակիցք նոցա ազգք, զի 'ի դառնալ հրեշտակացն արձակելոց Յ՚Աթենայ առ ազգս Նիզակաց, և 'ի տալ համար յանդիմանն աթենացւոց և Նիզակակցաց նոցա, գումարեսցեն նահապետք կրկին Ժողովս 'ի խորհուրդ խաղաղութեան. և զի ազգք Նիզակակիցք անդստին կանխաւ յանձն առնուն զամենայն սահմանս Ժողովոցն այնոցիկ. և զի այլոց ազգաց ևս, որ կամիցին յաւելուլ յուխտ խաղաղութեանն, տացի Լեռամեայ ժամանակ խորհելոյ։

Ի կատարել ընթերցուածոյն Փիլոկրատ առաջի արար հրովարտակ, յորում մի և այս պայմանն էր՝ 'ի բաց հանել յուխտէն խաղաղութեան զաղացիս և զփովկիխացիս։ Ժողովուրդն զամենայն հարաւ[3], զրգռեցան ոգիք, և Ճարտարա-

1 Դեմոսթ. յդ. վերպ հրեշտ. էջ 299։ Ուլպիան. յդ. վերպ հրեշտ. էջ 356։

2 Նոպին. յդ. վերպ հրեշտ. էջ 404։ Նոյն 'ի Կոնտոփ. էջ 438։

3 Դեմոսթ. անդ. էջ 296։

խօսք ոմանք մերժէին 'ի բաց զամենայն հնարս հաշտութեան, և յորդորէին զմեզ հայել յա-խոյեանս յաղթութեանցն մերոց և 'ի շիրիմն հաղց։ Պատասխանի արար նոցա Լաքինէս, և ասէ. 'Լմանօղք լիցուք պաշտպանելոյ նախնեացն մերոց զՀայրենիս յերեսաց պարսկախումբ ան-համար զօրացն, այլ ոչ ձախողակի խորհրդովք արձակելոյ նոցա զօրս 'ի Սիկիլիա յօգնութիւն նիզակակցաց իւրեանց լեռնտացւոց 'ի տոյժս հայրենեաց'։ Լա վախճանեաց զբանս իւր 'ի յորդոր խաղաղութեան. միաբանեցին և այլք 'ի Ճարտարախօսաց, և յաղթեաց կալաւ խորհուրդ նոցա։

Մ'ինչդեռ պայմանք խաղաղութեանն քննէին, ածաւնամակոսի զօրավարին մերոյ Պոմպէոսեանց։ Յանձն էր նմա առնուլ զամուրս ինչ մերձ 'ի պա-հակն Թերմոպիլեայ, զորս փովկիսացիք թողու-ին 'ի մեզ։ Լայլ յայնմ վայրի հերձուածք 'ի նոսա լեալ, հզօրագոյն կողմանն ոչ յանձն առեալ տալ նմա զամուրսն. և զայս ինչ յայտ առնէր 'ի թուղթսն[2]։

Լաղեցաք զկուրութիւն փովկիսացւոց, այլ ոչ թողաք զնոսա 'ի ձեռանէ. զի 'ի հրովարտա-կէն զոր Փիլոկրատ առաջի արար, բարձաք զպայմանն որ 'ի բաց հանէր զնոսա յուխտէն, և յաւելաք՝ զի ամենացիք յանուն իւրեանց և

[1] Դիոդոր. յՍ. վերպ հը-բեր. էջ 296 և 342։ Եպիֆ. յՍ. վերպ հրեշտ. էջ 406։
[2] Եպիֆ. անդ, էջ 416։

նիզակակցացն ամենեցուն կռեն զուխտ խաղաղու-
թեան[1]։

Յարձակել ժողովրդն ասէին ամենեքեան՝ թէ
ընդ հուպ զաղաբէացեն ամենայն հակառակու-
թիւնք ընդ մեզ և ընդ Փիլիպպոս, այլ չյաջո-
ղեսցի մեզ արդեօք դնել ընդ նմա ուխտ նիզա-
կակցութեան, մինչև խորհրդակցեալ ընդ պատ-
գամաւորս որ հանդերձեալ էին գալ յազգաց Յե-
լադայ[2]։

Յաւուր թէ ելանէր ոմանք[*] Դեմոսթե-
նեայ զօրացեալ յատենին, եցոյց զի 'ի զուր է
պայմանել զիրս առանց միաբանութեան պատ-
գամաւորացն մակեդոնացւոց, և զի չէ օրէն յա-
փշտակել զուխտ խաղաղութե՛ն, զի զայս ձև բանի
'ի կիր էարկ. և զի չէ պարտ մնալ գանդաղելոց
ազգաց Յունադայ, այլ թողուլ իւրաքանչիւր խոր-
հել սահմանին 'ի խաղաղութիւն կամ՝ 'ի պատե-
բազմ։ Այն անդ և հրեշտակք մակեդոնացւոց,
և Ներկայացորս միաբանեաց 'ի խորհուրդ Դե-
մոսթենեայ, որ առ նա ինքն խօսէր[3]։ Զեղև
պարապ քաջ կշռութեան իրացն. զի սահմանեալ
էր յառաջագոյն՝ իւրաքանչիւր ումեք 'ի քաղա-
քացոց յառաջնումն ժողովի ասել որ ինչ հաճոյ
թուէրն ինքեան, և 'ի վաղիւ անդր առնուլ վե-
րակացուաց զվարկս նոցա. որք և ժողովեցին զգ-

[1] Դեմոսթ. յգ. վերպ հը-
բեշտ. էջ 317։
[2] Եպրին 'ի Կաուսիմ. էջ 439։
[*] Ց 319 մարտ 346 ամն
Ն. Գ.։
[3] Եպրին. անդ։

քուեայս։ ԼՀ արդ զուիստ խաղաղութեան և զնիզակակցութեան կռուանք միահաղոյն՝։

ԼՀ այսոքիկ են կարևորագոյն պայմանք ուխտին. Թողուանք Փիլիպպեայ զԼՄիխալիս որ մեզն է անկ[2], այլ փոխարէն խոստանայ նա մեզ զԼՀ-բիա կղզի՝ յորոյ վերայ է ինչ նորա իշխանութիւն, կամ զԼՐոմպ քաղաք՝ զոր թեաւցիք բարձին՝ ի մէնք[3]։ Լոյ յոյս զի և զԼՐերսոն Թոյլակիոյ թողցէ մեզ[4]։ Օ ամենայն նիզակակիցս մեր յաւելաք յուիսին, յապահովեալ այսուիկ զթագաւորն Թրակիոյ և զաղացիս և զիսվկիսացիս։ Լոստանամք Փիլիպպեայ ժառանգութիւն անկասկած ամենայնի՝ որ ինչ է նորա արդ, և որ յաիշտակել ինչ՝ ի նմանէ իշխիցէ, ընդ թշնամիս մեր համարեսցի[5]։

Լոցաց այսքան կարևորաց պարտ էր սահմանել յաշխարհաժողով Լյլադայ[6], զոր մարթէր մեզ գումարել, և նիզակակցաց իսկ մերոց ցանկալի էր այն[7]. այլ յանկարծակի այնպէս վաղվաղեալ իրացն, զի վեր՝ ի վերոյ ամենայն ինչ վճարեալ սահմանեցաւ։ Փիլիպպեայ գրեալ էր առ մեզ և խոստացեալ՝ յայտնագոյն և ծանուցանել մեզ որ ինչ քաղաքս յանձն առնոյր տալ՝ ի դուռս՝ ի

1 Եսբին. յղ. վրէպ հրեշտ. էջ 405։

2 Դեմոսթ. յղ. խաղաղ. էջ 63։ Թուղթ Փիլիպպ. առ Դեմոսթ. էջ 117։

3 Դեմոսթ. յղ. վրէպ հրեշտ. էջ 297։ Նոյն յղ. խաղաղ. էջ 61։

4 Նոյն յղ. վրէպ հրեշտ. էջ 305։

5 Նոյն անդ. էջ 315։

6 Եսբին.՝ի Կաեսարիա. էջ 437։

7 Նոյն անդ. էջ 438։

միաբանեալ մերում ընդ նմա[1]։ Այս խոստումն տարտամ խոտորեցոյց զսիրտ ժողովրդեանն, և իրՁեռք ընորհս գտանելոյ առաջի նորա հրապուրեցին զՁարտարապետս։ Թէպէտ և պատգամաւորաց նորա ոչ ինչ խոստացեալ էր մեզ[2], փութացաք մեք տալ նոցա երդումն, և ընտրել հրեշտակս՝ զի երթիցեն վաղագոյն առնուլ երդումն 'ի նմանէ[3]։

Ցասն այր ընտրեցան 'ի հրեշտակութիւն, թող զնիզակակից ազգաց պատգամաւորսն[4]։ Ոմանք 'ի նոցանէ 'ի նախընթաց պատգամաւորաց անտի էին, որպէս Դեմոսթենէս և Լաքինէս։ Մի և այս ընդ այլ հրահանգս տուաւ նոցա, զի յուխտ խաղաղութեանն ընկալցին և ամենայն ազգք նիզակակիցք աթենացւոց և Փիլիպպէսոյ. և զի հրեշտակքն երթեալ յանդիմանն լիցին թագաւորին՝ առնուլ 'ի նմանէ հաստատութիւն. և զի զգոյշ լիցին մի ինչ առանձինն խօսել ընդ նմա, և խնդրեսցին գերերդաշ աթենացւոց որ էին առ նմա 'ի կապանս. և զի 'ի մի մի 'ի քաղաքաց որ նիզակակիցք էն նմա, երդմնի արասցեն զնշխանս. և զի դարձեալ օրէն իցէ հրեշտակացն լսել առաջանցն հանդամանաց առնել որ ինչ թուեսցի նոցա յօգուտ պետութեան[5]։ Յանձն էղև աւագանւոյն վաղ վաղել զչու նոցա[6]։

1 Դեմոսթ. յղ. վերպ հրբեշտ. էջ 300։
2 Նոյն անդ. էջ 304։
3 Նոյն յղ. պսակ. էջ 477։
4 Էսքին. 'ի Կաեսիփ էջ 410։
5 Դեմոսթ. յղ. վերպ հրբեշտ. էջ 337։ Էսքին. անդ.։
6 Դեմոսթ. անդ. էջ 347։

Յաւուր իԷ ելափերիոդիոն ամսեան *։ Պործակալք կամ փոխանորդք ունոյց 'ի նիզակակցացն մերոց եւ ասուն այսօր երդումն հրեշտակացն Փիլիպպեայ։

Յաւուր Ձ մոանիչիոն ամսեան **։ Փիլիպպեայ յօգուտ է յապաղել զհաստատութիւն ուխտին, իսկ մեզ վաղվաղել զայն. զի մեր դեռ ևս անկաղմեն սպառազինութիւնք, իսկ նորա ՀԷր երբէք այսքան երագեալ 'ի պատրաստութիւն։ Օ՛ի յուսայ նա, և ոչ վայրապար, պահել անկորուստ զաշխարհակալութիւնն զորս արարեալ իցէ ցարդ։ Դեմոսթենեայ 'ի վերայ կացեալ խորհրդոց նորա, եւ հրովարտակ առնել աւագանւոյն՝ յորոց մի և ինքն յաւագայ անտի է, վաղագոյն հրեշտակացն մերոց յուղղ անկանել՝. և ոչ ևս յապաղեսցեն։

Յաւուր ԺԵ ԹարԳեղիոն ամսեան ***։ Զև ևս Փիլիպպոս կնքեաց զյեկակար ուխտին, և հրեշտակք մեր ոչ ևս փութան հասանել առ նա. սոքա 'ի Մակեդոնիա կան, և նա 'ի Թրակիա։ Բանալի դրժեալ խոստմանն չմոռանէրոց 'ի սահմանս Կերսոբլեպտեայ, նուաճեաց զկէս աշխարհին նորա, և զմիւս կէսն պատրաստի նուաճել. որով զօրութիւնք նորա և գանձք յաճախեն յոյժ։ Օ՛ի ճոխ է աշխարհն և բազմամարդ, և 'ի մաքսից

* Ի 25 մարտի 346 ամին Ն. Ք։ Եպիսն. յդ. վրէպ հրեշտ. էջ 488։ Նոյն 'ի Կանոնի. էջ 439։

** Յաւուրն եմ աւուր ապրիլի 346 ամին Ն. Ք։

1 Դեմոսթ. յդ. վրէպ հրեշտ. էջ 316 և 317։

*** Ց 13 մայիսի 346 ամին Ն. Ք։

անտի գանձին ամի ամի արքային Թրակացւոց 'ի նաւահանգիստս ' Երկերիւք քանքարք ։ Պիւրին էր առնուլ զառաջս աշխարհակալութեան նորա. զի մարթէր հրեշտակայն մերոց հասանել Յէ-լեսպոնտ 'ի սակաւ քան զտասն կամ մանաւանդ քան զերիս կամ զչորս աւուրս [2] ։ Պատանէին անդ զՓիլիպպոս, և յընտիր առնէին նմա կամ յանձն առնուլ զսպայմանս խաղաղութեան, և կամ մերժել զայնս ։ Եթէ յանձն առնոյր, պարտ էր նմա ինայել 'ի ժառանգութիւնս նիզակակցաց մերոց, որով և 'ի սահմանս արքային Թրակացւոց. իսկ եթէ մերժէր, զբրբ մեր գումարեալ ընդ փալ-կիսացիս՝ խափանէին զնա 'ի Թերմոպիլէ [3] . և տորմիղք նաւաց մերոց իշխանք ծովու՝ արգելուին զարշաւանս նաւատորմին նորա Պտտիկէ. փա-կէաք զնաւահանգիստս մեր առաջի նորա, և հարկ լինէր նմա յանձն առնուլ որ ինչ պահանջէաքն, և մի ծարել զերաւունս մեր՝ քան կորուսանել զշահավանճառ աշխարհին ։

Այս այսպէս խորհէր Լեմոթենէս, և կամէր ուղևորել ընդ ծով. իսկ Լաքինէս և Փիլոկրատ և այլ պատգամաւորք լաւագոյն համարեցան գնալ ընդ ցամաք. և յաճախ օթևանաւք յաւուրս քսանևերիս հասին 'ի Պելլա մայրաքաղաք մակեդոնացւոց [4] ։ Պարթէր նոցա անդէն հասա-

1 Դեմոսթ. յԱրիստոկր. էջ 743 ։
2 Նոյն, յդ. պսակ. էջ 477 ։
3 Նոյն, յդ. վրէպ հրեշտ. էջ 316 ։
4 Նոյն անդ, էջ 317 ։

նել՝ի բանակն Փիլիպպեայ, և կամ գոնեա շրջել առ նիզակակիցս նորա, և երդմնի առնել զնոսա. այլ նոքա սպառեալ մնացին խաղաղութեամբ՝ի քաղաքի անդ մինչև՝ի կատարումն արշաւանաց թագաւորին։

Լա՛ւ՝ի գառնալն իւրում՝ համարեցաւ զնոր աշխարհակալութիւնն ընդ ժառանգութիւնս իւր՝ զոր՝ի պայմանս ուխտին թողաք նմա։ Լա՛ւ եթէ բողոքք ունիմք զդժանաց ուխտին չյարիչտակելոյ զերկիր Կերսոբլեպտեայ, ասասցէ ցմեզ՝ թէ յառնուէն զայնոսիկ չև ևս հասեալ էին առ նա պատգամաւորք մեր, և չև էր նորա հաստատեալ զսպայմանս ուխտին՝ որ կարձէին զնա յաշխարհակալութենէ՝։

Յայմ վայրի թեբացիք խնդրեցին՝ի նմանէ օգնութիւն ընդդէմ փոքկիսացւոց. իսկ նորա յղեալ զոր՝ի թիկունս [2], զայն ժամ պատեհ կալաւ գումարելոյ՝ի մայրաքաղաքն անդր հրեշտակս՝ի գլխաւոր քաղաքաց Հելլադայ, իբր թէ՝ի պատճառս զրաւ առնելոյ մարտին փոքկիսացւոց ընդ թեբացիս, այլ՝ի ներքոյ հնարս խորամանկելով անպոծ առնելոյ զաղգս Հելլադայ, մինչև կատարեացին առաջարկութիւք խորհրդոյ իւրոյ։

Յ---ր ծէ սէիրոֆորիոն ամէնն [3]։ Հասին արդ ուրեմն պատգամաւորք մեր. և տացին առ

[1] Դեմոսթ. յդ. վերպ հր. բերչ. էջ 318։

[2] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 455։

Եսքին. յդ. վերպ հրեշտ. էջ 411։

[3] 69 յունիսի 346 ամին։ Ռ.

վաղիւ զՀամար հրեշտակութեան իւրեանց յաստեղս աւագանւոյն, և 'ի միւս վաղիւն 'ի ժողով ժողովրդեան՝։

Յաւուր ծՁ սէրոֆորիանի ամսեան *։ Դժնդակագոյն ապիրատութեան գամանին գործմանեայք լեալ պատգամաւորքն մեր, եթէ հաւատարիմք իցեն բանք Դեմոսթենեայ. զի կաշառաբեկս ամբաստանել զնոսա 'ի Փիլիպպէայ լեալ, և մատնիչս Հայրենեաց և նիզակակցաց։ Դեմոսթենեայ ստիպեալ է զնոսա թախանձանօք զնալ յանդիման լինել թագաւորին, իսկ նոցա յամառեալ սնդեալ՝ մնալ անդէն 'ի Պելլա զաւուրս քսանեւեօթն, և յետ յիսուն աւուրց մեկնելոց իւրեանց ստի հանդիպեալ էն թագաւորին *։

Թագաւորն գայ գամանէ 'ի մայրաքաղաքին ըստ հրեշտակս գլխաւոր քաղաքաց Լլլադայ՝ խոսվեալս ընդ արդ ևս կալեալ յաղթութիւնս նորա, և առաւել ևս ընդ այն՝ զի խորհի նա յառաջ խաղալ անդադար 'ի Թերմոպիլէ [3]։ Օ անխուլ էր 'ի բնաւից զիտաւորութիւն խորհրդոց նորա, և խնդրեին հասու լինել այնմ։ Դրանիկք թագաւորին ասէին ցպատգամաւորս մեր՝ թէ քաղաքք Լփովթիոյ կանգնեսցին անդրէն, և անտի վտանգ է քաղաքին Թեբացւոց։ Հրեշտակք ըստ պարտացւոց հաստատեալ զՀամբաւն, և միաբա-

1 Դեմոսթ. յդ. վերպ հրեշտ. էջ 296 և 302։
2 Դեմոսթ. անդ. էջ 317։
3 Երբին. յդ. վերպ հրեշտ.
* 'ի 11 յունիսի 346 ամին էջ 416։
Ն. Ֆ։

նեալ ընդ հրեշտակս մեր՝ Թափանձէին զՓիլիպպոս կատարել զայն։ Իսկ Թեսաղացիք 'ի վերայ իւրեանց զդէմարշաւանին ասէին ուղղեալ։

Այնչդեռ նոքա ընդ երկիւղ և ընդ յոյս վաստակէին, Փիլիպպոս առ 'ի յինքն ձգել զնոսա՝ մերթ պարգևս տայր նոցա 'ի բբ Թէ 'ի մեծամանս ևեթ, և մերթ զգուէր զնոսա իբր Թէ առսեր բարեկամութեան։ Կասկած է զԼաքինեայ և զՓիլոկրատեայ, Թէ յողոք հրապուրանացն ըմբռնեալ լցեն։

Լուսաս օր յանդիման լինելոյ նոցա յատենի, և սպասէր նմա ատեանն, զի էր նա տակաւին յանկողնի։ Լաբ 'ի քրթմնջել պատգամաւորացն, ասէ Պարմենիոն. Այ՝ի զարմանայք եթէ հնձէ Փիլիպպոս մինչ դուքդ արթուն կայք, զի յորժամ նա հսկէրն՝ դուք 'ի քուն կայիք[2]։ Այնուգան ասա հասանէ Թագաւորն. և իւրաքանչիւր ոք մի ըստ միոջէ տան զպատգամն[3]։ Լաքինէս Ճառս մեծամիտս յօրինեայ զառաջարկութեանէ Թագաւորին դադարեցուցանելոյ զպատերազմն փովկիսացւոց, և աղաչեաց զնա վասն քաղաքացն Լոփովտիոյ՝ դարձուցանել զնոսա յաղատութիւն 'ի զնալն 'ի Դեզիիս, և հրաման տալ կանդնելոյ զկործանեալսն 'ի Թեբացւոց. դարձեալ մի անխորհրդ զԹշուառ բնակիչսՓովկեայ մատանել 'ի ձեռս

1 Դեմոսթ. յՊ. վերկ հր. էջ 170։
բեշտ. էջ 318։
2 Պլուտ. առակ. հտ. 2. էջ 412։
3 Լաքին. յՊ. վերկ հրեշտ.

նոցա, այլ զսեղանակապուտս 'ի նոցանէ և զքան-
քարազերծս մերկեալս Աղողանի տալ 'ի դատա-
ստան ամիսիկոտիանեան ազգացն՝ որոց անկ է յա-
մենայն ժամանակի դատել զսոցին սակի ոճիրս։
Փիլիպպոս ոչ ինչ այսմ ամենայնի յայտնի պա-
տասխանեաց. և 'ի հրաժեշտի կացուցեալ զայլ
պատգամաւորս, յուղի անկան ընդ մերսն գնալ
'ի Ամասալիա. և 'ի միումուրեք յօթեւանաց 'ի
Փերկս քաղաք, անդ կնքեաց զյետկար ուխտին
խաղաղութեան, և երդուաւ կալ 'ի պայմանս
դաշանցն[1]։ Ոչ էառնա յանձն խառնել 'ի պայ-
մանս ուխտին զփովկիսացիս, վասն չդրժելոց
երդմանն զոր տուեալ էր Թեսաղացւոց և Թե-
բացւոց[2]. այլ արար նոցա խոստմունս, և եւ
Թուղթ 'ի ձեռս նոցա։ Եւ հրաժարեալ 'ի նմա-
նէ հրեշտակացն մերոց, և զօրքն Թագաւորին
յառաջ խաղացին 'ի Ամերմպիլէ։

Դումարեցաւ յայսմ առաւօտու աւագանին,
և էր խորհրդարանն լի բազմութեամբ[5]։ Ընդ
Դեմոսթենէսս էառ ցուցանել, զի պատգամաւ-
որակիցք իւր ոչ ըստ առելոց հրահանգացն զոր-
ծեցին, և զի համախոհք են ընդ Փիլիպպեայ,
և զի միայն հնարք են մեզ ելից վասնզիս՝ հա-
սանել յօգնութիւն փովկիսացւոց, և ունել ըզ-
պահակն Ամերմպիլէայ[4]։

1 Էսքին. յղ. վերպ հրեշտ. էջ 317։
2 Դեմոսթ. յղ. վերպ հրեշտ. էջ 300 և 343։ ՌՐ
պիան. էջ 357։
3 Դեմոսթ. անդ, էջ 296։
4 Դիոդ. Փիլիպպ. 2. էջ 67։

Լաւ ոչ թուղթ թագաւորին կարայ հանդարտել զնոսա. և այս բանք են թղթոյն. Արդուսպատգամաւորաց ձերոց, և տեսջիք 'ի յետկար ուխտիս զանուանս նիզակակցացն իմոց որ գտան առ իս, և զայլոցն տակաւ յղեցից առ ձեզ զերդմունս[1]։ Լաւ յաւելու ստորև. Արքեր պատգամաւորացն ձերոց գնալ առնուլ 'ի նոցանէ երդումն, այլ ես կարայ գնոսա առ իս, զի օգնականութեան նոցա պէտք էին ինձ առ 'ի հաշտեցուցանել զաղացիս ընդ բնակիչս Փարսաղեոյ[2]։

Իսկ զիմաստասացոց ոչ ինչ ասէ 'ի թղթին, և ոչ յաւելու հաստատել զայսոսն զոր ետուն մեզ, և յոր ինքն իսկ յուսացոյց զմեզ 'ի կնքել մեր զիաղաղութիւն։ Զի 'ի ձեռն պատգամաւորաց իւրոց խոստացաւ գրել ինչ յայտնագոյն որ ինչ փոխարէնս մատուցանելոց էր 'ի յանձն առնուլ մերում լինել ընդ իւր նիզակակից. այլ 'ի վերջին թղթի իւրում հարևանցի ինչ ևեթ ասէ, թէ չգիտեմ զինչ առնել ձեզ փոխարէնս[3]։ Լաւագոյնն ծանրացաստուն լեալ, եւ հրամարտակ ըստ խրատուն Դեմոսթենեայ։ Զեթող առնել դրուատիս պատգամաւորացն, և ոչ 'ի ձաշ հրաւիրեաց զնոսա 'ի նահապետանոցն, որպիսի ինչ խստութիւն չէր երբեք արարեալ ի հրեշտակս[4]. որով զրգռեսցի ամբոխն ընդդէմ Լաքինեայ և համախոհիցն նորա աներկբայապէս։

[1] Եաքին. յդ. վերպ հրեշտ. բերշ. էջ 299։
էջ 415։
[2] Դեմոսթ. յդ. վերպ հը.
[3] Նոյն անդ. էջ 300։
[4] Նոյն անդ. էջ 298։

ՊԱՏՃԷՆ ԹԳԹՈՑՆ ԿԱՅԻՄԵԴՈՆԻ.

Յաւուր ծէ սկիզբոյնի ամենայն * ։ Որ մեծի-մասն Պարզագոյրայ կամ. յայց եկի նոսա, և նա զբերբ առ քեզ. իսկ իմ առեալ 'ի ձեռանէ նորա զգրիչն, շարայարեմ զառ 'ի նմանէ սկսեալ օրա-գրութիւնն ։

Որպէս 'ի միտ առեալ եմ արդ զնկարագիր մե-բոյս Դեմոսթենեայ ։ Այնթէ զիարձ ինչ ինդրեսս զկորովի և զվեհ հանձարդ նորա, կացո զնա 'ի բեմ. բայց եթէ յարբունիս Մակեդոնիոյ ածես զնա, գտանի տարտամ, անշնորհ և դժոխալուր ։ Դա ինքն նախ, 'ի յանդիման լինել հրեշտակացն մերոց առաջի Փիլիպպեայ, առեալ է խօսել. թշնամանեալ է նախ զընկերսն, և ասա զսպա-սաւորութիւնն մատուցեալս թագաւորին պան-ծացուցեալ, զծանրատաղտուկ ընթերցուած հրո-վարտակացն զոր առ 'ի վաղվաղել զիաղաղու-թիւնն էր ածեալ, զհոգ և զնեամն իւր յաս-պընջականել զհրեշտակս Մակեդոնացւոց, 'ի պատրաստել նոցա բարձս շքեղս 'ի տեսարանի և զայգս երիս ընտիր ջուրց 'ի չու նոցա, և 'ի գնալ ընդ նոսա յուզարկ հեծեալ 'ի ձի, զայս ամենայն 'ի հեռուստ նախանձոտացն առնելով հրապարակաւ՝ վասն հաճոյ աւեթ լինելոյ թա-

* Յ12 յունիսի 346 ամին ։ Դեմոսթ. յդ. վերպ հը-Ն. Գ. ։ բեր. էջ 302 ։

զաւորին։ Բնկերքը նորա զառնթի հարեալ՝ ծածկէն զերեսս, նա ոչ դադարէ. Լռեմ, ասէ, ըղձեղոյ քումմէ, զի այս տիկնայ են պարծանք. զքաջ մտաւութենէդ, զի Ճարտարախօսի է այդ աջողութիւն. և զքաջընթացութենէ քումմէ, զի և այս սնդգի է։ Լաւ զի երկարեմ, այնչափ ինչ և այնպիսի խօսի բանս, զի ամենայն ատեանն զբրբիջ բարձեալ ծիծաղին՝։

Միւս և տեսարան յանդիմանն առնեմ քեզ։ Լայժմ մեկնեալ գամ՝ի հանմխաւմբ ժողովոյ. երկիւղ էր անդ խռովութեան իրիք կամ բանա կռուութիւն՝ի նեբրս անկանելոյ. զի հրեշտակք մեր այլաբանս՝ի միմեանց տան զպատգամն Փիլիպպեայ, որ կարևորագոյն գործն էր հրեշտակութեան նոցա։ Լաբինէս առաջի առնէ մեզ խոստմունս անհամարս յերեսաց Թագաւորին՝, ինչ ինչ յայտնաբանեալ, զայլս խորագիտաբար կիսաբանութեամբ պատրուակեալ, որպէս զմեր իմ՝ որ ծածկագետ և խորհրդակիր Թագաւորի։ Լաւ իբրև նա զարմացուցեալ հանձարովն զատեանն՝ էջ՝ի բերանն, եղ անդր Դեմոսթենէս. և զամենայն բանս նորա եղջ։ Լաբինէս և Փիլոկրատ առ ընթեր նորա կացեալ յաջմէ և յահեկէ, խափանէին ստէպ զբանս նորա աղաղակաւ կամ կատականօք. և ամբոխն ևս կցորդէր նոցին։ Յաւել Դեմոսթենէս. Վանդի չկամիք

՝ Եաբին. յդ. վերպ հրեշտ. էջ 412։

՝ Դեմոսթ. յդ. վերպ հրեշտ. էջ 297։

թէ եղծիչ զայս ձեր, վկայեմ աստիկ զի ընդունայն են խոստմունքն, և 'ի բաց կամ։ Լսքինէս ասէ. Մի այդպէս փութով, անտա վայրիկ մի ևս. զէթ խոստումն տուր՝ զի մի ապա զվաստակս ընկերաց քոց քեզ զրաւեսցես։ Լաւ Դեմոթէոնէս երդիծական ծաղու ետ պատասխանի. Մի ինչ զանգիտեր, չարարից ձեզ զանիրաւութիւնդ զայդ։ Յայնժամ Փիլիպրատայ 'ի վերայ ածեալ, ասէ. Մի զարմանայք, ո՛ աթենացիք, զի չեմ ես համախոհ ընդ Դեմոսթենեայ. քանզի նա ջուր ևեթ ըմպէ, իսկ ես գինի անապակ։ Լաւ ամենայն ատեանն թաղանայր 'ի ծաղուէ, և Փիլիպրատ կալաւ զյաղթութիւն։

Օ՜էր կատակերգութեանս այսորիկ զրեսցէ քեզ Գլոդոդոր. զի ատեանս մեր այսուհետև տեսարան է ծաղրածութեան, և Հարտարախօսք մեր կատակագուսանք՝ որ Հառիւքն իւրեանց կամ գնացիւք կատակեն։ Լայլ զաղատութիւն իւրեանց կարի իմն զայս նուազ ասի Հանարձակեալ նշ. ինձ այս անգիտելի է, բայց տեսանեմ յայտնապէս՝ զի Փիլիպպեայ ծաղր արարեալ է գնոքօք, և ծիծաղի արդ զժողովրդեանքս. և խնամութիւն իսկ այն է՝ խաղ առնել զժողովրդեամբ և զորովք իշխեն նմա։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՐԱՑ.

Լ՝ՐՈՒՄՆ առնեմ պատմութեանն, զոր զրեաց քեզ Կալիմն զոն բախածն այն։ Ասաղուրդն

զարհուրեալ էր 'ի լուր հասանելոյ Փիլիպպեայ 'ի Մակեդոնիէ [1]. զի եթէ միաբանեալ ընդ թշնամիս մեր Թեբացիս հարկանէր զնիզակիցս մեր փովկիսացիս, որ յոյս այնուհետև մնայր պետութեանն։ Այլ Աքիլլեսն քաջայոյս արար զնա 'ի բարոյ միտս Թագաւորին և 'ի փրկութիւն Փովկեայ։ Յաւել և ասէ. Յերկուս կամ յերիս աւուրս, ոչ չու արարեալ և ոչ զէն առեալ, լուիցուք զպաշարումն քաղաքին Թեբացւոց և զազատութիւն Ախովտիոյ, և զկանգնել քաղաքացն Պղատեայ և Մակեդեայ՝ զորս կործանեցին Թեբացիք։ Մեղանակատութիւն մեհենին Աստղենի դատեսցի յատենի Աֆիփկտիոնայ, և ոչ ևս ոճիր ոմանց 'ի վերայ ամենայն ազգին փովկիսացւոց անկցի։ Զամբ 'ի դուրս զՄիփպօլիս, այլ փոխարինեսցի տոյժս մեր [2]։

Ի լուր բանիցս այսոցիկ ժողովուրդն յարբեցութիւն յուսոց և խնդութեան ընկղմեալ, ոչ ևս լուաւ Դեմոսթենեայ. և ըստ առաջարկութեանն Փիլոկրատայ առանց ինչ ընդ բանս ածելոյ արար հրովարտակ, յորում էն գովութիւնք Փիլիպպեայ, ուրոյ անպատճառելի նիզակակցութեան ը պայազատս նորա, և այլ ևս պայմանք բազումք. և կարևորագոյն 'ի նոսա այն՝ զի եթէ փովկիսացիք ոչ թողուցուն զմեհեանն

1 Դեմոսթ. յՈլ. վերակ հր. 478։ Նոյն յՈլ. վերակ հրեշտ. էջ 300։ էջ 297։ Նոյն. յՈլ. խաղաղ. էջ 60։
2 Նոյն. յՈլ. պատկ. էջ

Պետրոսեայ յԱնտիոքիոն, խոստացուցին աթեռնացիք զզօրս իւրեանց 'ի վերայ նոցա[1]։

Իբրև հաստատեցաւ խորհուրդս այս, ընտրեցան անդրէն պատգամաւորք՝ գնալ առ Փիլիպպոս, և խնդրել զկատարումն խոստմանցն։ Պետրոսթենէս հրաժարեաց 'ի պատգամաւորութենէն, Լաքինէս զխօթութիւն պատճառեցաւ. և կացուցեալ անդէն փոխանակ նոցա Յոհփանոս և Պերկիղոս, մեկնեցան վաղվաղակի ընդ այլն[2]։ Ասէ՝ եւ զաւուրքն ինչ, և գիտացուք յոյր վերայ մտրիկն իցէ անկեալ, բարեկամանց մերոց թէ թշնամեաց, փողկիսացուցց թէ թերացուցց։

Յաւուր իշ սէրոֆորիանի ամսեան*։ Ընդ վճարեալ է զՊոմկեայ և զընտակչաց նորա։ Յողով համախումբ գումարեցաւ այսօր 'ի Պիրէն վասն սպառազինութեան[3]։ Պերկիղոս մի 'ի պատգամաւորաց մերոց, յանկարծ 'ի մէջ երևեցաւ, բերելով զրոյց՝ զոր լուեալ է 'ի Աղկիս քաղաք Յոբիա, զի յառաջ քան զաւուրս ինչ փոկկիսացիք անճնատուր լեալ են Փիլիպպեայ, և նա հանդերձեալ է մատնել զնոսա 'ի ձեռս թերացւոց։ Ակարեմ զրով յանդիման առնել քեզ զտրտմութիւնն, զվհատութիւն և զարհաւիրս յոր ընկղմեալ կան ամենեքին։

1 Դեմոսթ. յդ. վրէպ հրբ. էջ 301։

2 Նոյն անդ, էջ 312։ Եսքին. յդ. վրէպ հրիշ. էջ 417։

* Ի 23 յունիսի 346 ամին Ն. Փ։

3 Դեմոսթ. անդ, էջ 302 և 312։

Յ՝սուր էր սէրոֆորէոնի ամենեան*։ Ի վարանս կամք, և խելամտութիւն տկարութեանս մերոյ անհանդուրժելի առնէ զայն։ Օ՛ օրավարք խորհրդակցութեամբ աւագանւոյն կոչեցին ժողով մտաւոր. և սահմանեցաւ 'ի ժողովի անդ մեկնել 'ի բացավայրէ կանանց և մանկանց հանդերձ կսիւք և ընչիւք իւրեանց, բնակելոցն այսր քան զասպարէզս հարիւր և քսան՝ պատրաստարել 'ի քաղաք այսր ՅԱԹԵՆս և 'ի Պիրէոն, իսկ որոց անդր ևս բնակեալք՝ ամրանալ ՅԱՐևեսիս, 'ի Փիղէ, ՅԱՓիդնաս, 'ի Հռամնան և 'ի Սունիոն. զբաացուցանել զպարիսպս քաղաքիս և զայլոց ամուր ամուր քաղաքաց, և մատուցանել զոհս Հերակղեայ, որպէս է մեր սովորութիւն 'ի վերուստ հաստատեալ։

Յ՝սուր էսէրոֆորէոնի ամենեան**։ Պրեմքեզ ըզ հանգամանսինչ թշուառութիւն փոլկիսացւոյ։ Յ՝ինչ դեռ Լաքինէս և Փիլոկրատ Խոսաբար զնստամանան առաջի դնէին մեզ յերեսաց Փիլիպպեայ, նա անպեալ էր ընդ Ամերմպիլէ[2]։ Բայց թէպէտև կասկածէին փոլկիսացիք զնորհրդոյն նորա, այլ վարանեալ ընդ յոյս և ընդ երկիւղ՝ ոչ 'ի դէպ համարեցան ունել զկարևոր տեղին, այլ զամուրս ևեթ որ 'ի մուտս պահակին էին։ Ամա-

* Ի 26 յունիսի 346 ամին Ն. Ռ։

** Ց 12 յունիսի 346 ամին Ն. Ռ։

1 Դեմոսթ. յղ. վրէպ հրբ. շա. էջ 302։ Նոյն յղ. պսակ. էջ 478։

2 Դեմոսթ. յղ. պսակ. էջ 478։

գաւառն ինդրէր իրաւախոհ լինել ընդ նոսա, նո-
քա Թերահաւատէին ընդ խորհուրդս նորա, և
զմերսն հեռացուցէին։ Այլ վաղ ընդ փոյթ 'ի
ձեռն պատգամաւորացն՝ զոր յառաջ քան զա-
ւուրս զայսոսիկ առաքեցին առ մեզ՝ գիտացեալ
որ ինչ անցք անցեալ էին 'ի ժողովն մերում, որ
'ի վերջաբանեալորդ աւուր ամենանս գումարեալ*,
եղին 'ի մտի զի Փիլիպպեայ միաբանեալ ընդ
մեզ՝ ընդ Թերացիս ևԵԹ զչարիցի, և ոչ փոյթ
կալան զգուշանալ անձանց'։ Պաղէկ զօրավար
նոցա ետ նման զԱրիկէա և զամուրս՝ որ շուրջ
զպահակաւն Փերմոպիլեայ կան. և հրաման
եղև նման մեկնել 'ի Պովկեայ ուԹ հազար ա-
բամբքն որոց առաջնորդէր[2]։ Օրուր առեալ
սպարտացւոց՝ որք առաջնորդուԹեամբն Ամբի-
դամնայ գային յօգնուԹիւն փովկիացւոց, դար-
ձան խաղաղուԹիւն 'ի Պեղոպոնես[3]. և Փիլիպ-
պոս համարձակ անջան, առանց և ոչ զոք 'ի զօ-
բացն կորուսանելոյ, զբռամբ ած զբախտ ժողովրդ-
եանն՝ որ 'ի տան ամաց հետէ զդէմ ունէր յարձ-
ակմանց Թերացւոց և Թեսաղացւոց, որ 'ի կո-
ղուստ նորա ձգնէին։ Այլ արդ կորուստ նորա
սահմանեալ իցէ. Փիլիպպեայ խոստացեալ է
զայն նիզակակցաց իւրոց, պարտի նոցա զայն, և
իւր իսկ գլխովին պարտ համարի զայն։ Պիմ 'ի

* 342 յունիսի 346 ամին
Ն. Ք։

1 Դեմոսթ. յղ. վրէպ հրեշտ.
էջ 305։

2 Եպբին. յղ. վրէպ հրեշտ.
էջ 417։ Դիոդ. գիրք ԺԶ.
էջ 455։

3 Դեմոսթ. անդ։

վերայ փովկիսացւոց իբրև 'ի վրէժխնդրութիւն սեղանակապտութեան. և եթէ արասցէ ընդ նոսա անզթութիւն, ապաքէն 'ի սակաւուց ոմանց խմասանոց ամենայն ուրեք դատապարտեսցի, այլ յամբոխէն ամենայն ուրեք մեծարեսցի։

Որպէս պատրեաց նա զմեզ, կամ մանաւանդ որպէս կամակար 'ի նմանէ պատրեցաք։ Այլ ապաքէն 'ի թարթափեցուցանել նորա ընդ երկար զհրեշտակս մեր 'ի Պեղլա՝ յայտնի իսկ էր, զի խորհէր խաղաղութեամբ վնասել զարշաւանս իւր 'ի Թովակիա. և յորժամ զայլս 'ի հրեշտակաց արձակեալ՝ զմերսն կալաւ առ իւր, ոչ յայտնի եղեն հնարք նորա կատարելոյ զսպառազինութիւնս իւր, և զմերսն խափանելոյ. և 'ի դարձուցանել նորա զհրեշտակս մեր լի խոստմամբք, և նամականի թափուր յամենայն խոստմանցն տալով ընդ նոսա, ոչ արդեօք նշաւակէին խորհուրդք նորա՝ զի չկամէր և ոչ մի ինչ պարտ յանձն առնուլ։

Ղեղև ինձ յուշ զրել քեզ յառաջագոյն, զի 'ի թղթի անդ յորդորեր զմեզ ելանել զօրաք, և զրաւ առնել ընդ իւր պատերազմին փովկիսացւոց՝. քանզի գիտէր զի յետ նուաճելոյ իւրոյ ըզ-Փովկիս՝ ապա թուղթն այն հասանէր առ մեզ։

Լաւդ այժմ չմնայ մեզ հնար, բայց ներումն թագաւորին և գթութիւն։ Գթութիւն...

։ Դեմոսթ. յդ. վրէպ հրեշտ. էջ 301։ Եսքին. յդ. վրէպ հրեշտ. էջ 416։

լուարձաք ոգիք Թէոմիստոկղի և Արիստիդեայ։ . . . Մինչդեռ ուխտ նիզակակցութեան դնէաք ընդ նմա և փութայաք խօսել 'ի խաղաղութիւն, 'ի ժամանակի յորում զայլս յազգաց հրաւիրէաք 'ի զէն, զժառանգութիւնս մեր և զնիզակակիցս միանգամայն կորուսաք[1]։ Այլ արդ յո՞ դիմել ի-ցէ. ամենայն հիւսիսակողմն Աղլադայ միաբա-նեալ է ընդ Փիլիպպեայ. 'ի Պեղոպոնէս՝ Աղիս և Արկադիա և Արգոսիս լի են կուսակցօք նորա[2]. ոչ նոքա և ոչ այլ ևս 'ի կողմանն յայնոսիկ բնակեալ ազգք ներեսցեն զնիզակակցութիւն մեր ընդ սպարտացիս[3]։ Այլ սոքա հակառակ եռան-դեան նախանձուն Արբիդամայ արքային իւրեանց, լաւ համարին զխաղաղութիւն քան զպատերազմ։ Իսկ առանին յակնարկել իմում 'ի ծովամարտ զօրութիւն մեր և 'ի բանակս երկրախումբ զօրաց և 'ի գանձ, տեսանեմ զաւերակս պետութեանն երբեմն ահաւորի։

Ոտղոք աշխարհական ընդդէմ պատգամաւո-րացն մերոց յարեաւ. եթէ արդարև մատն եղէն մեզ, կարի յոյժ մեղապարտք գտանին. իսկ ե-թէ անպարտք իցեն, կարի աւաղելիք։ Հարցի զԱքինէս՝ թէ ընդէր զկայ առեալ յամեցին 'ի Մակեդոնիա. և պատասխանի ետ ինձ, զի չէր մեզ հրամանն անտի և անդր գնալոյ[4]։ Արկնեալ

1 Դեմոսթ. յղ. վրէպ հրչ. էջ 315։
2 Նոյն անդ. էջ 334։
3 Նոյն. յղ. խաղաղ. էջ 62։
4 Եսքին. յղ. վրէպ հրչ. էջ 410։

անդրէն ասեմ. Լսնդէր մնասի յուսով խաբեցեր զմեզ։ Լաւ նա ասէ. Պատմեցի ոչպէս և որ ինչ լուայն և տեսի[1]։ Սորա լուեալ զյաղթութիւնս Փիլիպպեայ, փութացաւ հասանել խառնել ընդ հրեշտակս զայս երրորդ անգամ արձակեալս 'ի մէնջ առ թագաւորն, ընդ որս աւուրքք ինչ յառաջ չէաւ յանձն պատգամաւորել[2]։

Որ ինչ անցք առ Իշխանութիւնս Աբրիաայ յերրորդումն ամ 108 ողբմոդէն։

(Ի 27 օրէ յունիսի 346 ամին մինչև 'ի 15 յուլիսի 345 ամին Ն. Ք։)

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՅՆ ԱՊՈՂՈՂՈՐԱՑ.

Յառաջ է Դեպտիկոնի ամենան*։ Պետք և զ ընդրէի մեզ ազատութիւն, չև և Փիլիպպեայ դարձուցեալ զքէնս իւր 'ի վերայ մեր. ցայժմ 'ի պատերազմն փոկիսացւոց պատաղեալ կայր, և ընդ հուսկ իրք կարևորք ձգեսցեն զնա յետս 'ի Մակեդոնիա։

Լսնդ հասանելն 'ի Պեղիպս՝ զումարեաց զՄ. փիկտիոնս 'ի ժողով, դատել հրչակաւ զսեղանակապուտս՝ որոց ձեռս 'ի մեհեանն և 'ի զանձս

[1] Եպիֆ. յԼ. վեպ հրեշտ. էջ 407։

[2] Դեմոսթ. յԼ. վեպ հրեշտ. էջ 312։

* Յառաջնում աւուր Օգոստոսի 346 ամին Ն. Ք։

նորին սուրբս արկեալ էր։ Այսր օրինի էին իրքն, հրովարտակաւ սահմանեալ 'ի մէջ 'ի վերտա-սանելորդի աւուր ամենան սկիզբոխորհանի *. բայց քանզի թերացիք և թերսաղացիք բազմու-թեամբ թուոցն 'ի կամ իւրեանց զլՀիոս ա-տենին ձգէին, հարկ էր քինու և անպթութեան իսանել 'ի զատաստանն [1]։ Բաշխորդք սեղանա-կապտութեանն մնանին յանէծս հասարակաց, և ամենեցուն ամենայն ուրեք օրէն է թշնամա-նել զնոսա [2]։ Այ աղգս գործակից չարեաց նո-ցին զատեալ վասն պաշտպանելոյ իւրոյ յան-ցաւորացն, ոչ ևս այսուհետև կարասցէ յամենի-տիմնեան ժողովին կրկնակ արկանել թիւս, այլ 'ի թագաւորս մակեդոնացւոց անցցեն իրաւունքն 'ի մինչենտաւոր ժառանգութիւն։ Այաց յերկից քաղաքաց զորոց ամուրս ևեթ սահմանեն քակել, այլք առ հասարակ կործանեսցին և դարձցին 'ի գիւղս՝ յիսնիւ չափ թողեալ 'ի նոսա մնակս հեռի 'ի միմեանց [3]։ Պոլկիասցիք խափանեալք 'ի մնտու-ցանելոյ զոհս 'ի մեհենին, և 'ի հաղորդս լինելոյ անդ պաշտամանց դից, գործեսցեն զերկիր իւ-րեանց, և ամի ամի վաթսուն քանքար տացեն 'ի գանձս մեհենին՝ մինչև 'ի հատուցումն ոսկւոյն և արծաթոյ, զոր բարձին անտի։ Այ բաց տացեն ըզ-

* Ց 12 յունիսի 346 ամին Ն. Ք։

1 Դեմոսթ. յդ. վրէպ հը-րեշտ. էջ 301։

2 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 435։

3 Նոյն անդ։ Պաւսան. գիրք Ի. գլ. 3. էջ 804։

զէնս իւրեանց և զերիվարս, և մի և ես լցի նոցա վարել նոքօք մինչև զյաւիտեանս։ Սահմանի դարձեալ Փիլիպպէայ ընդ բիովտացիս և ընդ Թեսաղացիս կալ՝ ի վերայ պիւԹեան խաղուց փոխանակ կորնԹացւոց, զորոց էր ամբաստանութիւն՝ որպէս Թէ օգնական լեալ նոցա փովկիսացւոց։ Այն և այլ սահմանք ամենին վասն հաստատելոյ միաբանութիւն ընդ աղգս Յունաց, և զշուք պաշտաման՝ ի մեհենի Ապողոնի՝։

Ինակիչք Յոտայ լերին՝ ի Թեսաղիա խորհուրդ անողորմ կալեալ ըստ օրինացն սահմանելոյ ընդդէմ սեղանակատից, խրատ տան կորուսանել զփովկիսացւոցն Ձեռ ամբարիշտ, գահավիժելով զմանկունս նոցա՝ ի ժայռէ բարձուէ։ Ա. ԱՅԼ Յաքինեայ պատսպարան եղեալ նոցա համարձակութեամբ, զյոյս այնքանեաց տառապելոց աղգատոհմիցն փրկէ[2]։

Կէսք ասեն՝ Փիլիպպէայ զՀրովարտակն անողորմ խստութեամբ ածեալ՝ ի կատարումն[3], իսկ այլք՝ մարդասիրագոյն զնա քան զԹեբացիս և զԹեսաղացիս ցուցեալ։ Արաղաքք քսանեւերկու պարսպաւորք էին՝ ի Փովկիս, զարդք աշխարհին՝, և արդ բաղմագոյնք՝ ի նոցանէ կոյտս մնիսրոյ և

[1] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 455։ Պաւսան. գիրք Ժ. գլ. 3. էջ 804։

[2] Եւսեբն. յՁ. վեպ հրեշտ. էջ 417։

[3] Յուստին. գիրք Ը. գլ. 5։ Ոլոս. գիրք Գ. գլ. 12։

[4] Դեմոսթ. յդ. վեպ հրեշտ. էջ 312։

մնացորդս աւերակաց ընծայէն 'ի տեսիլ'։ Զկնք 'ի դաշտս անդ տեսանել զոք, բայց միայն ծերս, կանայս, մանկունս, հիւանդս, որոց տկար և դողդողոտ ձեռք հազիւ յերկրէ անտի հայթայթէն խոշոր ինչ պարէնս։ Որդիք նոցա և արք և հարք բարձան 'ի նոցանէ. զի կէսք 'ի վաճառս ածեալ՝ հեծէն 'ի կապանս գերութեան, այլք տարագիրք կամ փախստեայք՝ չգտանեն ուրեք Յունաստան ապաստան։ Լա՛ զի զոմանս 'ի նոցանէ ժողովեցաք, յանցաւորք դատիւք 'ի Թեսաղացւոց[1]։ Լրեմ յաջողութիւն իսկ ըստ բախտի եղեալ նոցա՝ դարձցին 'ի հայրենիսն, քանի ժամանակաց լիցեն պէտք առ 'ի հատուցանել 'ի գանձս մեհենին Դեղփեայ զոսկին և զարծաթն՝ զոր զօրավարքն նոցա աւար հարին 'ի պատերազմին։ Օ՛ի զգումամբ գանձուցն սաեն լինել աւելի քան զբիւր քանքարաց[2]։

Լա՛ յետ ժողովոյն մնացոյց Փիլիպպոս զոհս 'ի գոհութիւն դից. և արար կոչունս բազմապայծառս, ուր էին երկերիւր կոչնականք, ընդ նոսա և հրեշտակք ազգաց Յունադայ և մերքս. և հնչէր տաճարն անընդհատ յօրհնութիւնս դից և 'ի յաղթական նուագս 'ի պատիւ թագաւորին[3]։

Յառաջնորդս տարուր պէնէխոնէ ամսեան[4]։ Փիլ-

1 Դեմոսթ. յղ. վերպ հրբ. էջ 303 և 344։
2 Նոյն, յղ. խաղաղ. էջ 62։
3 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 453։
4 Դեմոսթ. յղ. վերպ հրբ. էջ 313։ Եսքին. յղ. վերպ հրբ. էջ 421։
* Ց 3 հոկտեմբերի 346 ամին։ Ն. Դ.

լիպպոս մինչև դարձեալ յաշխարհ իւր, եղից զդաշինսն զոր եդեալ էր ընդ Թեբացիս և ընդ Թեսաղացիս։ Զանգի Թեբացւոց ետ զՀրքոմենն, զՎորոնեա և այլ քաղաքս 'ի Լիմոսխա, զորս կործանեցին նոքա. իսկ Թեսաղացւոց ըզԼիկեա, և զամուրս որ են 'ի մուտս Թերմոպիլեայ, զորս փոկիսացւոց յափշտակեալ էր 'ի լոկրեցւոց։ Այլ Թէպէտ և Թեսաղացիք իշխեն պահակին, այլ զպահ նորա չհաւատայ երբէք 'ի նոսա Փիլիպպոս, վասն կարի դիւրախաբ գոլոյ նոցա։ Իսկ ինքն յուշ նպատակի արշաւանացն եհաս, անցանել անխոչընդոտ ընդ Թերմոպիլէ՝ յորժամ հաճոյ Թուեսցի իւր[1], ժառանգել ըզփառս զրաւ առնելոյ մեհենական մարտին, զվերակացութիւն պիւթեան խաղուցն, և կարևորագոյն՝ զամենայն զիրաւունս մտից և Թուարկութեան յամփիկտիոնեան ժողովին։

Այս քանզի պատիւս այս զօրութիւն մեծ յաւելու նմա յիրս Աղազայ, ցանկայ անկասելի ունել զայն։ Այլ այժմ Թեբացիք ևեթ և Թեսաղացիք ետուն նմա զայն. այլ առ օրինաւոր ժառանգութիւն իրաւանցն՝ հարկ է ամենայն աղգաց միաբանելոց յուխտ նիզակակցութեանն հաստատել զայն։ Հրեշտակք 'ի նմանէ և 'ի Թեսաղացւոց յառաջ քան զաւուրս զայսոսիկ հասին առ մեզ խնդրել 'ի մէնջ զհաստատու-

[1] Դեմոսթ. յՀ. խաղաղ. էջ 62։

թիւն [1], այլ չէղեն լսելի [2], թէպէտ և Դեմոս-թենէս խրատ տայր լսել նոցա։ Բայանդ երկնչէր թէ գուցէ մերժելով նոցա զաղերսն՝ զրգռեսցին ազգք ամիիկամոնեանք, և Յոտիկէ լցցի երկրորդ Փովկիա [3]։

Բնդ այսպէս ծանր թուի մեզ խաղաղութիւն, զի ոչ առելի ինչ քան զայս դժկամակս ցանկալի էր մեզ գործել Փիլիպպէայ։ Յթէ նա զայրացեալ է ի հակառակութիւն մեր, և մեզ անկ է ընդ գնացս նորա զայրանալ. զի մեր զամենայն ինչ յանձն առեալ, նա 'ի պայման քաղաքացն ևեթ Լիտրա-կիայ որ մեզ անկ էին՝ զիջաւ [4]։ Յրկուստեք կամք 'ի կասկածանս. այսոցիկ զհետ եկեսցէն զրգռութիւնք և դարձեալ վերստին միաբանութիւնք, մինչև յաջորդեսցէ դժնդակ պատերազմ։

Օրմնացիս արդեօք ընդ յանդգնութիւն մեր. ժողովուրդն 'ի հեռանալ 'ի մենջ Փիլիպպէայ՝ ոչ ևս երկնչի 'ի նմանէ, որ մինչդեռ մերձ 'ի սահմանս մեր էր՝ առելի քան զդէպն երկեաք 'ի նմանէ։ Յթէ քաջ կշռեսցուք զօրինակ զորձոյ պատերազմին փովկիսացւոց և զկատարածի այնորիկ, և զանզգուշաբանութիւն նորա 'ի բաշխս առաբին, և համայն ասացեալ՝ զամենայն գնացս Փիլիպպէայ, սարա է մեզ խրախուսել յայժմուս, և զարհուրել ընդ հանդերձեալսն որ չի-

1 Դեմոսթ. յղ. վերպ հրբաչ. էջ 310։
2 Նոյն, Փիլիպպ. 1. էջ 62։
3 Նոյն, յղ. խաղաղ։
4 Նոյն, յղ. վերպ հրեշտ. էջ 305։

ցեն Թերևս հեռի։ Այլ յաշխարհակալաց փու-
թան նուաճել զաշխարհս՝ անտես արարեալ զբը-
նակիչսն, և ոչ ժողովուրդս իւրեանց յաւելուն՝
այլ զերիս պատրաստս յապստամբութիւն. իսկ
Փիլիպպոս յառաջ քան զՅունաստան զՅոյնս
հնարի նուաճել։ Զոն զորձէ ձգել զմեզ առ
ինքն, յինքն յանկուցանել զմեզ, ընդելացուցա-
նել 'ի կապանս, և Թերևս յորդորել իսկ զմեզ
'ի խնդրել զայնս, և տակաւ յամր և յուշիկ լե-
նել զատաւոր մեր և պաշտպան և տէր։

Ինքեմ զգիրս, յաւելեալ երկու ինչ որ պատ-
մեցան ինձ զնմանէ։ Մինչդեռ էր նա 'ի Զեղ-
փիս, զիտաց զի Աբկաղիոն աբայեցի՝ այր հան-
ճարեղ և արագ 'ի պատասխանիս՝ ատեայր զնա
և խորհէր յերեսաց նորա։ Ի միում աւուրց հան-
դիպեալ նմա յանկարծ ուրեք, ասէ քաղցրու-
թեամբ. Մինչև ցէրբ ոչ դադարիցես խուսել
յերեսաց իմոց։ Նա նա ասէ. Մինչև հասից 'ի
տեղի, ուր ոչ ծանիցի անուն քո։ Ոչ ծաղեցաւ
թագաւորն, և զգուանաբ հաւանեցոյց զնա զալ
ընդ իւր յԵլեթրիս[1]։

Այնքան մեծանձն է Փիլիպպոս, զի մնայի
ախտանաղց ինչ նորա զփոքրոգութիւն. և ոչ
'ի դերև եղ ակնկալութիւն իմ. զի արդեալ նա
չվարել կառս 'ի սահմանս տերութեան իւրոյ[2]։

[1] Թեոփր. առ Ալեքս. գիրք Զ. գլ. 13. էջ 249։
[2] Պիկեր. յՆակատապէ. գլ. 3։ Վալ. Մաքս. գիրք Ա. գլ. 8։ Եղեան. զան. պատմ. գիրք Գ. գլ. 45։

Լա՛ զիտիցես ընդէր. զի հարցու�՝ ասաց նմա՝ թէ 'ի կառաց լեցի նմա կորնչել*։

Ուր ինչ անդ առ Իշխանութեամբն Յոբոզեայ 'ի Երբրոդոն ամի 108 ոգեմոլութեն։

(Ի 15 օրէ յուլիսի 345 ամին մինչև 'ի 4 յուլիսի 344 ամին 'ն. Ք։)

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՐԴՈՒԹԻՒՆ.

Յ ՈՒՐԲ սակաւք են, զի Տիմոնիդէս լեկաղաւ ցի եհաս, այն զոր ծանեալն Մկադեմիա, և որ յառաջ քան զամն երեքտասան երթեալ ընդ Դիոնի 'ի Սիկիլիա՝ պատերազմակից եղև միշտ ընդ նմա։ Օրէս այնր պատերազմին վիպագրեսա արդ մանրապատում՝։

Յամենաթշուառ աղէտս եթող նա զՍիկիլիա, զերբեանն քաջ բարգաւաճեալ կղզին։ Թուի թեն թատր զնա կացուցեալ բախտին, 'ի տեսիլ ածեալ անդ 'ի սուղ ինչ ամն զամենայն յեղափոխութիւնս իրաց մարդկան։ Արևեցոյց անդ նախ երկուս բռնաւորս, որք հարստահարեցին զնա զամ իբր յիսուն. յարոյց ընդդէմ երկրորդ-

* Որք զանազս յայլոց լեալ զերս զայս պատմին վիպագիրք, յաւելուն թէ յերբախակալ սուսերին՝ որով սպանաւն Փիլպպոս՝ քանդակեալ կային կառք։

։ Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 967, 971 և 972։

դին զԼովսանքեան նորա, և ընդդէմ Լովսանի զԱ-
լիպպոս բարեկամ նորա, և ընդդէմ վատ եղուա-
կին զԱպպարինոս՝ որ զերկեամ մի յետոյ բըռ-
նամահ սպանաւ[1]։ Օ հետ այսորիկ արագ արագ
յաջորդեցոյց տեսաս, ոչ իբրև զառաջինսն հզօրս,
այլ հանգոյն նոցին անապարոյնս[2]։

Այս ամենայն հրաբուղխ ժայթքմանց բռնա-
ւորութեան, և ահագին սասանութեանցն՝ որ
կարապետեալ և որ կցորդեալ և որ զհետ այնո-
ցիկ եկին, նկատին անդ՝ որպէս յԱտնա լերին՝
հետք սոսկալիք։ Այն տեսարանք և ի գլխաւոր
քաղաքս Սիկիլիոյ հանապազ նորոգին. բազմա-
գոյնք ի նոցանէ խղեցին զկասպանս՝ որ կաշկան-
դէին զնոսա ընդ մայրաքաղաքին, և անձնատուր
եղեն առաջնորդաց՝ որք ծառայեցուցին զնոսա
փոխանակ խոստացեալ ազատութեան։ Այսպէս
տիրապետեաց ի Մեսանա, Մամերկոս ի Կա-
տանա, Լիկետաս ի Լեոնտին, Դիսկոս ի Սի-
ռակուսա, Լեպտինոս յԱպոլոնիա[3], և այլք ի
քաղաքաց հեծեն ընդ լծով Դիկոդեմեայ և Ա-
պոլոնիադեայ և այլոց[4]։ Այս ամենայն վըր-
դովմունք առեալ ձգեցին ընդ իւրեանս հեղեղս
արեանց, անհաշտ թշնամութիւնս, և ոճիրս
դժնդակս։

1 Պղատ. Թուղթ 8. հա. 3. էջ 356։ Պոլիբն. ի մար-
թական. գիրք Ե. գլ. 4։ Դիոդ. գիրք ԺԶ. Թէոպ. առ
Ամթեն. գիրք Ժ. գլ. 436։

2 Պլուտ. ի Տիմոլ. հա. 1. էջ 236։

3 Նոյն անդ. էջ 247։

4 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 472։

Կարբեդոնացիք, որոց քաղաքք բազումք էին 'ի Սիկիլիա, ընդարձակէին զսահմանս իւրեանց՝ զօր հանապազ ասպատակեալ շուրջ զքաղաքօք Յունաց. և բնակիչք քաղաքացն կան անդադար յարձիրս յարտաքին և յառտնին պատերազմաց, անպատսպարք 'ի հինից խուժանց, 'ի հարստահարութենէ բռնաւորին սիրակուսացուց, յանօրէնութենէ բռնակալացն իւրեանց, 'ի մոլեգնութենէ խմբից պառակտելոց՝ որ զաւորեարն ևս ընդդէմ միմեանց զինուորեաց։

Ինապատացեալ ամայացաւ Սիկիլիա 'ի բազում այսպէս նեղութեանց, և եղև գերեզման միմեանց։ Շէնք և աւանք անհետ եղեն '. խոպանացան անդաստանք, և քաղաքք կիսակործանք պակուցեալ կան 'ի սպառնանկատ տեսիլ միջնաբերդիցն [1], յորս ամրանան բռնաւորք իւրեանց՝ պարառեալ 'ի դահճաց։

Տեսանես, ո՞նաբարսիս, զի չէք ինչ դժնդակագոյն՝ քան ազգի ապաբարոյի 'ի խորտակումն չըղթայիցն ձեռն արկանել։ Յոյնք բնակեալք 'ի Սիկիլիա զերծեալք էին յոյժ՝ անզօրք 'ի պահել զազատութիւն իւրեանց, և վէսք՝ դժոխարբերք ծառայութեան։ Հերձուածք նոցա և պատերազմունք յառաջ եկին յայլանդակ կցորդութենէ սիրոյ ինքնիշխանութեան ընդ առաւելազանց ախորժակս բերկրութեանց։ Այս 'ի բազում ձըլ-

1 Պլուտ. 'ի Տիմոլ. հա. 1. Ա.Ջ. էջ 473։
էջ 236 և 247։ Դիոդ. գիրք 2 Դիոդոս. 'ի Տիմոլ. գլ. 3։

գունն թշուառացան քան զամենայն մարդիկ, և եղեն վատք քան զամենայն ստրուկս։

Տիմոթիոսէ մեկնի արդ աստի, ընկալեալ նա-մնականի 'ի Աիրակուսայ։ Դիոնեսիոս վերստին ունի զաթոռն, ընկեցեալ անտի զԱիսէոս զեղ-բայրն իւր համահայրն և ոչ համամայրն։ Աիսէոս յամաց հետէ գահակալեալ, 'ի բռնաւորութիւն նախորդացն իւրոց համարձակ եղև յառաջադէմ։ Աբ մատնեալ յիւրոցն [2], և ընկեցեալ 'ի խաւար-չային բանտի՝ դատապարտեալ 'ի մահ, մերձ 'ի կատարած կենացն եկեաց 'ի հանապազորդ արբե-ցութեան [3]։ և վախճանեաց զկեանս իւր հանգոյն եղբօր իւրոյ Պապարինեայ՝ որ յառաջ քան զնա թագաւորեացն, և հանգոյն կենացն Պղոնը-կրատեայ՝ միւսոյ եղբօրն իւրոյ [4]։

Դիոնեսեայ ահեղ վրէժինդրութիւնք կան 'ի վերայ ժողովրդեան. զի կապտեցին զնա 'ի գերա-գոյն իշխանութենէ, և ընդ բազումս նախատ և արհամարհ շրջեցաւ Յոտալիա [5]։ Աբկիւղ է 'ի գոռոզ յանդգնութենէ բարուց նորա, և եր-կիւղ դարձեալ 'ի հոգւոյ վայրենացելոյ ջարա-կրութեամբն։ Ընդաւասիկ միւս այլ կնձիոն մեծի ողբերգութեան, զոր բախտն 'ի տեսիլ ածէ 'ի Սիկիլիա։

1 Պղուտ. 'ի Տիմոլ. հտ. 1. գ. էջ 437։ էջ 236։
2 Յուստին. գիրք ԻԱ. գիրք Բ. գլ. 41։ գլ. 3։
3 Թէոպ. առ Ամենն. գիրք 3. էջ 334։
4 Եղիսա. զան. պատմ.
5 Պղատ. Թուղթ 7. հտ.

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՒԹԻՒՆՑ.

Օ՛ՐՈՑՑՍ արդ ևս ընկալաք 'ի Վիկիլեոյ։ Զ՚Յովհաննէսիոս կարծէր զանձն բարեբաստ 'ի գահու, զոր բազում անգամ յարիւն ընտանեացն շաղախեաց. այլ արդ եհաս ժամն դժնդակ, յորում զարանէր նմա բախտն։ Վասն նորա և զատելք և կրտսեր որդի նորա սպանան միանգամայն յամի և չարաչար կոտանեաք։ Օ՛ի 'ի մեկնելն իւրում յԱտալիոյ գնալ 'ի Վիկիլիա՝ եթող զնոսա 'ի մայրաքաղաքն լոկրիսացւոց եպիզեփիւռականաց. որք ընդ մեկնել նորա 'ի բաց, պատեալ պաշարեցին զնոսա 'ի միջնաբերդին։ Այլ կալեալ զայն, մերկացուցին զնոսա և մատնեցին 'ի պղծութիւն սինքքոր խուժանին. որում չեղև բաւական 'ի յաղուրդ մոլեգնութեանն սոսկալի անօրէնութիւնն, այլ և չարամահ սպան զնոսա՝ հերիւնս ընդ եղնդունս նոցա միեալ. և փչրեաց զոսկերս նոցա յանկանի, և զմարմինս նոցա յօշեալ՝ կէս 'ի հուր և կէս 'ի ծով ամոց, բռնադատեալ նախ զամենայն քաղաքացիս Ճաշակել անտի[1]։

Ամբաստանութիւն էր զ՚Յովհաննէսեայ՝ դեղով կարձեալ զՀայրն 'ի կենաց համախոհութեամբ ընդ բժիշկս[2], և սպանեալ զոմանս յեղբարցն և

1 Կղեմաք. առ Ալթեն. գիրք ԺԲ. էջ 541։ Պլուտ. 'ի Տիմոլ. հա. 1. էջ 242։ Սարաք. գիրք Զ. էջ 260։ Ն. զիան. զան. պատմ. գիրք Թ. գլ. 8։

2 Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 960։

յազգականաց՝ յորոց կասկածէր ինչ վտանգ իշ-
խանութեանն[1]։ Յետոյ ապա եղև դահիճ և
կնոջն և որդւոց իւրոց։ Յանկզիտանալ ժողո-
վրդոց յայսպիսի նորանշան անկթութիւնս,
պարտ է անդուստ 'ի վերուստ հետազօտել զըս-
կզբնապատճառս չարեացն։ Հայեաց՝ 'ի լուրիսացիս.
կէին նոքա խաղաղութիւն ընդ օրինօք, որ հաստա-
տուն ունէին 'ի քաղաքին նոցա զկարգ և զվայելչու-
թիւն[2]։ Դիոնեսիոս հալածեալ 'ի Սիրակուսայ,
խնդրեաց առ նոսա ապաստան. նոքա ընկալան
զնա մեծարանօք, զի և ուխտ նիզակակցութեան
էր նոցա ընդ նմա, և զի մայր նորա առ նոսա
ծնեալ էր։ Հարք նոցա 'ի ներել ընդդէմ օրի-
նաց խնամտուն քաղաքավարութեան[3], սոսկա-
կանի ուժեք ազգատոհմի տալ դշխոյ Սիկիլեայ,
ոչ կասկածեցին՝ զի Սիկիլիա հատուցանելոց էր
նոցա բռնաւոր զոմն։ Դիոնեսիոս օգնականու-
թեամբ ազգականաց իւրոց և զօրաց կալաւ զմի-
նաբերդն, գրաւեաց զինչս Ճնխից քաղաքացոց՝
զամենեսին գրեթէ առ հասարակ հրամայեալ
խողխողել, և զկանայս և զդստերս նոցա մատ-
նեաց յեւ անարժան նշաւակութիւնս, և 'ի սա-
կաւ ինչ ամն եղծ անմորոգելի զօրէնս, զբարս,
զհանգիստ և զբարեկենդանութիւն ազգին։

1 Յուստին. գիրք ԻԱ. գլ. 2։
1։ Եղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 12։
2 Պորոբ. գիրք Զ. էջ 259։
3 Ա.բիստոտ. յղ. հատ. գիրք Ե. գլ. 7. հատ. 2. էջ 396։

'Լմին իրի և աղգն յայնքան թշնամանացն վայրենացաւ '։

Ալ ելեալ ահագինք որ հասին արդ Վիսմեսեայ, ելին արհաւրօք զամենայն պետութիւնն։ Ապաքէն յաւելու նա 'ի հայրենի անգթութիւնս, և կատարի 'ի նա գուշակութիւնն զոր յաւուրս յայսոսիկ լուայ 'ի սիկիլիացւոյ ումեմնէ։

Զի յորժամ ժողովուրդն ամենայն անիծանէր զՎիսմեսիոս հայր նորա, ազգ եղև նմա զի կին ոմն սիրակուսացի զօրհանապազ ընդ առաւօտս պաղատէր ուռ զիս՝ զի մի տացեն նմա տեսանել զարև յետ մահուան թագաւորին։ Զոյժ ընդ այն զարմացեալ թագաւորն, ետ ածել զնա առ ինքն, և եհարց զնա վասն որոյ իւրաց այնպէս փափաքէրն կենաց իւրոց։ Զոյ կինն ասէ. Ապացից քեզ։ Յառաջ քան զամն բազումն մինչդեռ տղայն էի, ամենեքին բողոք բարձեալ տրտնջէին զթագաւորէն, և ես ընդ նոս ցանկայի նմա մահու։ Ապանաւ նա, և յայծորդեաց նմա այլ թագաւոր. և բռնակալեալ զմիջնաբերդն, ցանկալի արար զնախորդ իւր։ Պաղատեաք առ զիս ազատել զմեզ 'ի ձեռաց նորա. և լսելի եղեն աղօթք մեր, և դու կացեր մեզ թագաւոր, և անցուցեր զերկաբանիւրովքն յաձախութիւն չարեացդ զոր արարեր ընդ մեզ։ Զոր քան-

1 Յուսոմն. գիրք ԻԱ գլ. 2 և 3։ Կղէարք. առ ԱԹԷՆ. գիրք ԺԲ. էջ 541։ Եղիան. զան. պատմ. գիրք Թ. գլ. 8։ Սարար. գիրք Զ. էջ 259։

զի գիտեմ զի յաջորդն քո անապորոյն և քան զքեզ լինելոց է, վասն այսորիկ երկայնաւուրս զօրհանապազ մաղթեմ քեզ 'ի դիցն։ Յաւ թագաւորն պակուցեալ ընդ հանմոնձակուն կնոջն՝ բարերարեաց նոցա, խնայեալ 'ի կեանս նորա՝։

Որ ինչ անցք առ էշխանուրեամբն Էշխոկեայ յաջորդնուն ամի 109 ողիմպիադին,

(Ի 4 օրէ յուլիսի 344 ամին մինչև 'ի 23 յուլիսի 343 ամին՝։ Փ։)

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՐԱՑ։

Լիսագանորք մակեդոնացւոց ատենն զլիւրիկեցիս, զի 'ի բազում պատերազմունս հարան 'ի նոցանէ. բայց Փիլիպպոս ոչ զոք 'ի ժողովրդոց ատեայ, զի չերկնչի յումեքէ, այլ հնարի նուաճել զամենեսին։

Հաս եթէ կարես զհետ արագընթաց յաջաղթաղացութեան վերջին մարտի նորա։ Զոզովէ զօր բազում, անկանի 'ի վերայ լիւրիկեցւոց, նուաճէ քաղաքս յորովս, առնու աւար ամբաւ, դառնայ 'ի Մակեդոնիա, մնանէ 'ի Մեսաղիա՝ ուր կուսակիցք նորա կոչէին զնա, ազատէ զնա 'ի ձեռաց ընդակալացն առ հասարակ փոքրիկանց՝ որք հարստահարէին զնա, բաժանէ զաշխարհն

1 Վաղ. Մաքս. գիրք Զ. գլ. 2։

'ի չորս մարզս, և մարզպետս 'ի նոսա կացուցանէ զորս և կամի զանձնանուէրս 'ի կամն իւր, և զբնակիչս աշխարհին հարստէ այլ ևս կապանօք ընդ ինքեան, առնէ հաստատութիւն մաքսիցն զոր 'ի նաւահանգիստս նոցա առնոյր, և դառնայ խաղաղութեամբ յաթոռ իւր[1]։

Իսկ զհետ այսոցիկ զինչ. մինչ խուժադուժք մտնչէն առ կատաղութեան 'ի ձգել ածել զշրջթայսն զորս արկ նա զնոքօք, Հոյնք անմտութեամբ դիմեն ընդ առաջ ծառայութեան։ Համարին զՊիլիպոս թշնամի բռնաւորութեանն, բարեկամ իւրեանց և բարերար և փրկիչ[2]։ Իսկոյն 'ի խնդիր լինին նիզակակցութեանն նորա, այլք զթեւարկութիւն նորա աղերսեն. և արդ իսկ զպաշտպանութիւն մեսենիացւոց և զարգիացւոց Հոխաբար յանձն առնու. ձեռնտու լիցի նոցա զօրօք և արծաթով, և սպառնայ սպարտացւոց մտանել 'ի Պեղոպոնես՝ եթէ իշխիցեն յարձակել 'ի վերայ նոցա[3]։ Պատմութենէս երթեալ 'ի Մեսենիա և յԱրգոսիս, զուր ջանացաւ խելամուտ առնել զազգն յօգուտ իւրեանց։...

1 Դեմոսթ. Փիլիպպ. 2. էջ 66։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 479։
2 Դեմոսթ. յՊ. պսակ. էջ 463։
3 Նոյն Փիլիպպ. 2. էջ 65։

ՆՈՐԻՆ ԴԱՐՁԵԱԼ.

Հրեշտակք 'ի Փիլիպպեայ հասին առ մեզ՝ բողոք ունել, իբր թէ զըպարտութեամբ վասն ուխտի խաղաղութեանն զոր արար՝ ամբաստանեցեալք զնա։ Այսուհետ թէ զպարտս ինչ ուխտի իցէ նորա յանձին կալեալ, և կամ խոստացեալ ինչ, և ձայն տայ մեզ՝ թէ կարիցեմք սուտ յանդիմանել զնա[1]։ Այսպա ուրեմն հրեշտակք մեր անարժանք դատեցին զմեզ. պարտ է նոցա կիր վասն անձանց առնել պատասխանի, և կամ կրել պատուհաս։ Օ սոյն իսկ Դեմոսթենէս առաջի արար[2]. և ոչ յամեսցէ նոցա պատուհաս։

Ոչ բազում ինչ աւուրք են՝ զի Պերիդէս Հարտարախօս ամբաստան եղև զՓիլոկրատայ, և նշանաւոր զանարժան հնարս նորա։ Արտմոնեցան ամենեքին 'ի վերայ ամբաստանելոյն, իսկ նա անխռով կայր, և սպասէր մոլեգնութեան ամբոխին ցածնելոյ։ Այլ ոմն յամբոխէն ասէ ցնա. Տուր վասն անձին քո պատասխանի։ Այլ նա ասէ. Ձև էս է ժամանակ։— Այլ ոմ կաս։— Կամ մեամ դատապարտելոյ ժողովրդեան զայլ ոք 'ի Հարտարախօսաց[3]։ Այլ յանդիմանեալ կա շառաբեկութիւն նորա, զի առեալ էր նորա

[1] Լիքան. Նախադր. 'ի Փիլիպպ. էջ 67։
[2] Դեմոսթ. Փիլիպպ. 2. էջ 63։
[3] Արիստոտ. Հարտ. գիրք Բ. գլ. 3. հտ. 2. էջ 551։

պարգևս մեծամեծս 'ի Փիլիպպէայ [1], փախըստեամբ զերծաւ 'ի պատուհասէն։

ԳԼԽՈՑՆ ԹՂԹՈՑՆ ԿԱԼԻՄԵԴՈՆԻ.

Դ ՈՒՏՈՑԵՍ ապաքէն զի դիք յաւուրս հարցն մերոց, յառաջ քան զտասն կամ զերկոտասան դարս, առ 'ի հանդչել յերանութենէ իւրեանց՝ զայնն երբէք երբէք զբօսնուլ 'ի վերայ երկրի ընդ դստերս մարդկան։ Այլ կարծիցէս թէ յետոյ տաղտկացեալ ելցէ նոցա 'ի կցորդութենէ անտի. խաբիս։

Ոչ բազում ժամանակ է զի տեսի ըմբիշ զոմն Աստաղոս անուն [2], ծնեալ 'ի Մագնեսիա քաղաք առ Մէանդր գետով 'ի Փռիւգիա։ Դառնայր նա յողիմպիական խաղոց, ոչ ինչ այլ բարձեալ բերելով՝ բայց խոցուածս կարեվէրս։ Այլ 'ի զարմանալ իմում ընդ պարտութիւն նորա, քանզի թուէր ինձ զօրութիւն նորա անպարտելի, հայր նորա որ էրն ընդ նմա՝ ասէ ցիս. Ա՛ն ապերախտութեան իւրոյ պարտեցաւ. զի 'ի տալ գրել զանուն իւր 'ի դպրութեան՝ չյայտնեաց զՀշմարիտն իւր հայր. և հայրն վրէժխնդիր եղև, զրկեալ զդա 'ի յաղթութենէ։ — Ասեմ. Ապա ուրեմն ոչ է դա որդի քո։ Ասէ. Ոչ, այլ Մէանդրի, նա է հայր դորա։ Ասեմ. Դետոյ ուրեմն

[1] Դեմոսթ. յղ. վրէպ հրբէշա. էջ 310 և 311։

[2] Եպիֆն. թուղթ 10. էջ 211։

ից է դա որդի։ Ասէ. Եւ կարի իսկ քաջ. կին իմ ասաց ցիս զայդ, և ՝ամ Մագնեսիա վկայէ։... Ասեմ. Ունիմ ինչ ասել առ այդ։

Եւ պատմեցի բաղմաց 'ի բարեկամաց իմոց զնորանշան վէպքս, և նոքա յաւելին պատմել ինձ զԱրիոնէ երաժշտէ եպիդամնացւոյ՝ որ զմի յորդւոցն իւրոց 'ի Հերակղեայ ասէ ծնեալ։... Եւ երիկունն ծիծաղէաք 'ի միասին ընդ Կիմոնի ընդ ծանծաղամտութիւն մարդկանն։...

Սիրեցեալդ իմ Ասնաքարսիս, յորժամ լսիցես բարգաւաճեալ գիտութեամբ զժամանակս ինչ, իմա զի 'ի քաղաքս ուրեք առաւել քան յայլս բարգաւաճէ գիտութիւն, և զի ուր բարգաւաճէն՝ աւագագոյնք եւեթ 'ի քաղաքայնոց գիտնագոյնք են քան զոր երբեմն։ Իսկ ամբոխն, եւ և աթենական, այնչափ առաւել նանրահաւատ կրօնիցն պատկառ կայ՝ որչափ եւս առաւել ոք գուն գործիցէ յունայնութեանց անտի զնա 'ի բաց դարձուցանել։...

Մի ինչ ընդ այն երկբայիցիս, երկու ինչ ապըստամբք 'ի հնարից իմաստասիրութեան կրին ախտք 'ի մարդիկ՝ սիրելիք նոցա, պատրանք և տարփանք։...

Տեսցես և դու զնա 'ի դառնալն քում այսրէն, և վկայեսցես զի ընդ ամենայն Ասիա չիք հանգոյն գեղեցկութեանն Գրինեայ՝ որ զպարարութիւն այնքանեաց շնորհաց բարձեալ բերիցէ։ Պրաքսիտեղէս յիմարեալ իմն է 'ի սէր նորա.

Պրաքսիտեղէս քաջ դատաւորն գեղջ, նա վկայէ զի չէք հանդոյն ինչ այնմ տեսեալ նորա ամենևին գեղեցիկ։ Լա՛ւ ինդրել Փրինեայ զգեղեցկագոյնն 'ի ձեռակերտից Ճարտարին, նա ասէ ցնա. Ցաց զայն մտադիւր՝ եթէ դու ինքնին ընտրեացես զայն։ Լ.յլ թող մարթէր յայնքանեաց հրաշակերտից ընտրել զմին։ Մինչդեռ Փրինէ տարակուսեալ կայր, մի ոմն 'ի ստրկաց՝ խրատեալ 'ի ծածուկ՝ եհաս գուժկան առ տէր իւր, թէ հրդեհ 'ի գործարանն անկաւ, և բազմագոյնք 'ի ձեռակերտաց նորա եղծան, և այլքն ևս եղծանէին։ Լա՛ւ գոչեաց Պրաքսիտեղէս. Լաւա՛ղ, եղուկ եմ ես՝ եթէ և Պայն իմ և Լրոն այրեցան։ Յայնժամ Փրինէ ժպտելով ասէ. Մի՛ ինչ զանգիտեր, առ 'ի չխաղալոյ և եթէ յընտրութեանս իմում[1] հնարեցայ զգուժկանդ սուտ։ Լա՛ւ էառ զԼրեայն պատկեր, զոր խորհի կանգնել 'ի Թէսպիէս քաղաք ծննդեան իւրոյ[2]։ Լա՛ւ թեսպացիք խորհին կանգնել նմա պատկեր 'ի բակ մեհենին Պէղիեայ առ դրօշելովն Փիլիպպեայ[3]։ Պ.այեալ իսկ զաշխարհաւանդիին առ աշխարհակալին կացուցանել։

Դերեմ Փրինեայ զի զտարփաւորս իւր զեղծուցանէ, այլ ընդերեմ զի ապա արձակէ զնոսա 'ի բաց[5]։ Զրէնք մեր ներողք անտես առնէին

1 Պաւսան. գիրք Ա. գլ. 20. էջ 46։
2 Ատէն. գիրք ԺԲ. էջ 590։
3 Տիտկղ. առ Ատէն. գիրք ԺԳ. գլ. 3. էջ 567։

զդրժանս նորա բաղումն և զեղծագործութիւն, բայց կասկած եղև զնմանէ զի և զիորհրդատուն նիցն Լևևեայ պղծեալ էր զսրբութիւնս ըստ օրինակին Մելխիսեդեայ։ Մինչաստանեցւոյն նա յատեան Լոլիէոյ, և յանդիմանն եղև առենին։ և զդատաւորացն մի ըստ միոջէ թանայը զձեռս արտասուօք 'ի մտանել նոցա անդր։ Լութիաս դատախազ նորա եցոյց զնա մահապարտ։ Ի պերիդէս, Ճարտարախօս անուանի, ջատագով եկաց նմա։ Այս 'ի սկզբանէ և այսր գերեալ 'ի սէր նորա, և տեսեալ զի Ճարտարիսօսութիւն ինչ ոչ օգնէր, մնաբերեաց անդէն 'ի կիրս՝ որով ախտանայրն։ Յառաջ մատոյց զվիրինէ, և Եհերձ զքօղս՝ որ ծածկէին զկուրծս նորա, և խօսեցաւ զօրութեամբ զի ամպարշտութիւն էր դատապարտել 'ի մահ զքրմուհին Աստղիկն։ Դատաւորքն զարհուրեալք՝ երկիւղածութեամբ, և մանաւանդ շլացեալք 'ի գեղոյն որ զաչս նոցա զօշոտէր, անպարտ արձակեցին զվիրինէ։

Ի սակաւ ժամանակք են՝ զի 'ի ռոճիկ օտար զօրականին հատուցանեմք աւելի քան զՀազար քանքար։ Լորուսաք քաղաքս Եօթանասուն և հինգ՝ որ էին ընդ մերով իշխանութեամբ, այլ թերևս ըստ թուոյ նոցին նուաճեցաք զեղեցկու-

1 Պոսիդիպ. առ ԱԹԵՆ. տարախոս, հտ. 2. էջ 849։ էջ 591։
2 ԱԹԵՆ. գիրք ԺԳ. էջ 590։ Պլուտ. 'ի տան Ճար-
3 Խոսկր. արիսպ. հտ. 1. էջ 315։

թիւնս ցանկալիս. որք յաւելցեն արդեաք զբեր-
կրանս ակմբիւ մերոց, այլ յաճախեսցեն և
զծաղր։ Զ՝արտարախօսք մեր և իմաստասէրք և
կարի 'ի սակ զգօն աւագորեալն զտարփանս յան-
ձին բերէ՝։ Զրիտրդես մեր գեղաւորք կրթին 'ի
վարժս չափական մակացութեանց[2]։ Գնաթենէ
առանց այնր զարդու սիրելի է. Գ՝ինիդոս տար-
փածու նորա յառաջ քան զաւուրս զայսոսիկ
կատակերգեաց 'ի տեսարանի, և ձախողակի եղք
իրացն առանց խորամանկութեան հակառակոր-
դաց պատահեցին։ Ա՝յրիկ մի յետոյ հասի 'ի
տուն սիրուհւոյն, և եկն նա անդր թախծեալ.
և 'ի մտանելն իւրում, աղաչէր զնա լուանալ զոտս
իւր*։ Ասակ նա ասէ. Ոչն ինչ պէտք լուանալոյ
ոտից քոց, զի 'ի վերայ ուսոց բարձեալ հանար
արտաքս[3]։ Ա՝յն ինքն 'ի ձաշել երբեմն առ սի-
րուհւոյն՝ եհարց, թէ որպէս զգինին զովացու-
ցաներ. և նա ասէ. Ա՝ջուցանեմ զայն 'ի ջրհորն,
ուր զնախերգանս թատերերգութեանց քոց արա-
կի։

Ա՝ինչև աւարտեալ զգիրս, յաւելից զդա-
տաստանն զոր դատեցաւ Փիլիպպոս։ Ա՝ջեն ա-
ռաջի նորա երկուս չարագործս մահապարտս.
այլ նորա ոչ կամեցեալ հեղուլ զարիւն, տարագրէ
զմին 'ի սահմանաց իւրոց, և զմիւսն դատապար-

1 ԱԹԵՆ. գիրք ԺԴ. էջ 588։ բոկ չջնեին։
2 Նոյն անդ, էջ 583։ 3 ԱԹԵՆ. անդ։
* Բազումք յաթենացւոց

տէ 'ի հաստատել զտարագրեանն՝ մինչև վարեսցէ զնա անդրէն 'ի Մակեդոնիա[1]։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ ԱՊՈՂՈՒՈՐԱՑ.

Իսոկրատ եցոյց ինձ զթուղթ իւր, զոր գրէ առ Փիլիպպոս[2]. հինաւուրց ոք գրանիկ չգիտէ այնպէս ձարտար փաղաքշել զթագաւոր։ Դէրեալ ինդրէ նախ յանդգնութեանն, որով իշխէ խորհուրդ տալնա. այլ հարկ 'ի վերայ կայ ինձ, ասէ, առնել զայս, և օգուտ Աթենայ և բոլոր իսկ Յունադայ ստիպէ զիս, և մեծ ինչ և կարևոր առաջի կայ, հոգ արքային մակեդոնացւոց 'ի պահպանութիւն անձին։ Մինեքին եպերէն գրեզ, զի արկանես զանձն 'ի վտանգ առաւել քան զսինքոր զօրականն. գեղեցիկ է մեռանել 'ի վերայ հայրենեաց և 'ի վերայ որդւոց և ծնողաց, այլ չիք ինչ առաւել գործելի քան չմնայել 'ի կեանս՝ յոր հաստատեալ կայ բախտ աշխարհի միոյ, և մթացուցանել չարաշուք յանդգնութեամբ զպայծառութիւն բազում այնչափ արութեանց։ Այս ածէ յօրինակ զթագաւորս սպարտացւոց, զորովք 'ի խռան մարտի պար առեալ բազմութիւն քաջաց պատերազմողաց՝ պահ ունին կենաց նոցա. և զԱսեքսէս արքայ Պարսից, որ և 'ի պարտեալն կեցոյց զընիկ աշխարհն՝ ինայ-

[1] Պլուտ. առակ. հտ. 2. էջ 178։

[2] Իսոկր. Թուղթ առ Փիլիպպ. 2. հտ. 1. էջ 442։

եալ 'ի կեանս իւր. զզօրավարս դարձեալ բա-
զումս, որոց ոչ խնայելով յանձինս՝ ձգեցին
զՀետ զկորուստ զօրաց իւրեանց[1]։

Յանկայ անկեղծ բարեկամութեան հաստա-
տելոյ ընդ նա և ընդ ամենացիս, և զումարելոյ
նոցա զզօրութիւնս իւրեանց 'ի միասին ընդդէմ
Պարսից։ Մեծարանս 'ի դիմաց հաստատակամե-
տութեան ընծայէ նմա, և զմեզանս յանձն առ-
նու, յաւելեալ՝ զի և դիք ոչ էին անստգտանելի[2]։

Աստանօր զկայ առնուն. և չէն ինչ զարմանք
զի այր մի ինքնուն և աւելի ևս ամաց քծնիցի,
որ յամենայն իսկ կեանս իւրքծնէրն։ Այլ վեր-
նէ ինձ ընդ այն, զի բազումք յամենացւոց 'ի նոյն
միտս և 'ի նմին խորհրդի կան. և ասասի 'ի միտ
առցես, զի յորմէ հետէ մեկնեցար ասասի փոփ-
խումն մեծ եղև խորհրդոց մերոց։

ԳԼՈՒԽ ԿԲ.

Յաղագս ազգի ազգի կարգաց տեսչութեան՝ Արիստոտելի
և այլոց իմաստասիրաց բանք։

Ղ ԱՄԱԿԱՆՆԻՆ զորոց ասասի 'ի վերջէ եղի զպատ-
ճէն, հասին 'ի ձեռս մեր 'ի Օմիւռնա, 'ի դատ-
նաղն մերում յաշխարհէն Պարսից։ Ընդ 'ի
Օմիւռնա լուաք, զի Արիստոտել յետ կալոյ

1 Խորհ. Թուղթ առ Փի-
լիպպ. 2. հտ. 1. էջ 445։ 2 Նոյն անդ, հտ. 1. էջ 450։

զերկեամն առ Հերմիասայ վերակացուի Բոսոր-
նեայ քաղաքի, անցեալ էր ի Մոնիկենէ մայրա-
քաղաքէ Լեսբեայ[1]։

Բ. Մերձաւորութեան տեղւոյն, և զի ի բազ-
մաց հետէ չէր զմիմանս տեսեալ, խորհուրդ
կալաք յեղակարծումայց առնել նմա. և ցնծա-
ցաւ նա ընդ մեծարանս սիրոյ զոր արարաք նմա։
Պատրաստէր նա գնալ ի Մակեդոնիա, զիջեալ
ի յոգնութենէնձ աղերսանս Փիլիպպեայ, ի
դաստիարակել զորդի նորա Բզէքանդրէ։ Լաւ
սէր ցմեզ. Արդուսանեմ զազատութիւն, այլ սա
աւասիկ հարկ առնէ ինձ։ Լաւ եցոյց մեզ զդիր
թագաւորին, որ ունէր օրինակ զայս[2]. Դիք է-
տուն ինձ որդի, և զոհանամ զնոցանէ ոչ վասն
պարգևին՝ որչափ զի յաւուրս քո պարգևեցին
ինձ զայն։ Յուսամ զի խնամք քո և խնամատու-
թիւն կացուսցեն զնա արժանի ինձ և թագաւո-
րութեանս խնամ։

Լաւ անցուցանէաք զաւուրս ցերեկ ընդ Լրիս-
տոտելի, և պատմեցաք նմա զամենայն իրս ու-
զևորութեան մերոյ, և մնագիւրութեամբ եւս
լսէր ի պատմել խնամ զդէպս զայսոսիկ։ Լաք
մեք, ասեմ, ի Փիւնիկէ. և հրաւիրեցաք ընդ
ումանս յաւագանւոյն Պարսից ձնշել առ նախա-
լարի գաւառին. և ամենայն զոյցք մեր, ըստ

[1] Դիոգ. լայերտ. գիրք Ե. յօդ. 3 և 9։ Դիոնիս. ասիկ. Թուղթ առ Ամմ. գլ. 5. հտ. 6. էջ 728։

[2] Աշ. Դեպ. գիրք Թ. գլ. 3։

սովորութեան, էին զարբայից արքայէն։ Զու ինքնին գիտես, զի սատ իշխանութեան նորա ոչ մեծարի հեռի 'ի մայրաքաղաքէն։ Խազում ինչ զամբարտաւանութենէ նորա և զբռնակալութենէ խօսեցան. և նախարարն ասէ. Արքայէն Թագաւորք այլացեղիկս ինն 'ի մարդկանէ զանձինս կարծեն։ Այլ յետ աւուրց ինչ էաք ընդ իշխանս սմանս՝ որք 'ի ձեռանէ նախարարին 'ի գաւառի անդ կային, և նոքա զառ 'ի նմանէ կրեալ անիրաւութիւնսն պատմէին մեզ. և մի ոմն 'ի նոցանէ 'ի վերայ էած, թէ Թուի նախարարացս այսոցիկ ոչ համարնակիցս մարդկան համարել զանձինս։ Հարցի զստորեկս նոցա. և նոքա առ հասարակ զբախտէն իւրեանց բողոք կալեալ, միաբանեցին՝ թէ տեսաք իւրեանց գերաբուսս զինքեանս 'ի վեր քան զընութիւն հնազանդելոցն իւրեանց կարծէին[3]։ Իսկ մեք 'ի միտ առնուաք ընդ Պղատոնի, զի յոլովագունից 'ի մարդկանէ՝ թէպէտ ստրուկք իցեն և թէ բռնաւորք՝ դժուարին է անիրաւութիւն, ոչ զի ատելութեան է արժանի՝ այլ վասն ահարկութեանն[3]։

Ի Հ օշ ընդ պարսկի ումեմն խօսելով, ասէաք թէ թշուառ է պայման միահեծան տեարց, զի 'ի ձեռին նոցա է զկա մեծեղեռն գործել չա-

1 Լիբ. յղ. տիեզեր. առ. Արիստոտ. գլ. 6. հատ. 1. էջ 611։ Եղեան. զան. պատմ. գիրք Ը. գլ. 15. գիրք Թ. գլ. 41։ Կուինտ. Կուրտ. գիրք Է. գլ. 8։

2 Փիլիմ. առ. Սատ. Հաս. 60. էջ 384։

3 Պղատ. յղ. հաս. գիրք Ա. հատ. 2. էջ 344։

բիս, և աւաղեաք՝ զաշխարհ նորա զի 'ի գերու-
թիւնն յայն անկեալ գնի՝, և յանդիմանն առ-
նեաք նմա զաղատութիւնն յոր վայելէ Յլա-
դա. և նա ժպտելով ասէ. Ոչցիք զոք ընդ բա-
զում գաւառս մեր, և զիմաստ թուեցան ձեզ։ Ա-
սեմ. Կարի բարգաւաճք զի բազմամարդք էն, և
շահաւետագոյն անդ վաճառականութիւն, եր-
կրագործութիւն յարգեալ և մեծապէս 'ի թա-
գաւորէն պաշտպանեալ[2]. ձեռակերտք յաձա-
խեալ, անդորր խաղաղաւէտ, բայց միայն ուրեք
ուրեք հարստահարութիւն 'ի մարզպետաց։

Պարսիկն ասէ. Ոչպա ուրեմն մի հաւատայք
ճանապարհութեան մատենագրացն ձերոց։ Ծա-
նօթ է ինձ Յլադա, զորմէ ասէքդ. եղեալ եմ
անդ զամն բազում, և ուսեալ զկարգս տեսչու-
թեան նորա, և տեսեալ զաղմուկս պառակտմանն
բնակչաց նորա։ Յուցէք ինձ ոչ զաղգ մի ասեմ
ողջոյն՝ այլ քաղաք մի, յորում չգործիցին հանա-
պազ 'ի նմա անդթութիւնք միահեծան պետու-
թեան կամ մանաւանդ վրդովմունք անիշխանու-
թեան։ Հանճարեղք էն օրէնք ձեր, այլ ոչ ա-
ւելի քան զմերսն պահին. զի էն և մեզ օրէնք
բազմահանճարք, այլ վասն ծոխութեան և ըն-
դարձակութեան աշխարհիս անզօրք։ Լթէ թա-
գաւորն պատկառ կայցէ օրինաց, մեք զբարեխ
մեր ոչ փոխանակեմք ընդ ձերումդ. իսկ եթէ

[1] Պղատ. յղ. օր. գիրք Գ. հա. 2. էջ 698։

[2] Քսենոփ. յիշատ. գիրք Ե. էջ 828։

անօրինիցկ, զԷթ սիրոիկ ժողովուրդն յուսալ՝ զի աւազանին ԼԷթ լիցի շանթահար, և զի դարձցին շանթիքն անդրէն յումեմէ արձակեցանն։ Պարզ իսկ ասացից. Է երբէք՝ զի 'ի զեղծմանէ իշխանութեան հասանէ և մեզ թշուառութիւն, այլ դուք զեղծմանէ ազատութեան միշտ իսկ զտանիք թշուառք։

Ի բանից աստի տակաւ զրգռեալ՝ սկսաւ Ա. բիստոսէլ Ճառել մեզ զայլ և այլ կարգաց տեսչութեան, յորս պարապեալ էր յորմէ հետէ մեկնեցաքն 'ի նմանէ։ Յողովէր նա զորէնս և զսահմանադրութիւնս զրեթէ զամենայն ազգացն Յունաց և զանյունաց՝, զորս և եցոյց մեզ ածելաս 'ի կարգ, և յաւելեալ տեսութիս 'ի նոս 'ի Ճառս աւելի քան զՀարիւր և յիսուն՝ ըստ թուոյ սահմանադրութեանցն[2]*. և յուսայր ածել զիսմբագիրն 'ի կատարումն։ Ի նմա էն և սահմանադրութիւնք աթենացւոցն և սպարտացւոց, թեսաղացւոց, արկադացւոց, սիրակուսեցւոց, մնոսիլիացւոց; և բնակչաց իսկ կղզեկիցն Խթակայ[3]։

Ա. յսմ ամենադրաւ քաղուածոյ և ԼԷթ մարթէր զվաստակաւորին յաւերժացուցանել զփառս. այլ նա համարէր զայն խարխիս պատուականաս-

1 Կնկէր. յդ. կատար. գիրք Ե. գլ. 4. հա. 2. էջ 200։
2 Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 27։
* Դիոգենէս լայերտացի հաբիւր յիսուն և ութ Ճառս զայսմանէ ասէ գրեալ Արիստոտէլի. իսկ Աբմենիոս 'ի պատմութեան կենացն Արիստոտէլի ածէ զթիւ նոցին յերկերիւր յիսունն հինգ։
3 Փաբրիկ. մատենագիր. յուն. հա. 2. էջ 197։

զունի արձանին, զոր 'ի վերայ նորա խորհէր կանգնել։ Աքրիմնք իրացն հաւաքեալ կային առաջի, 'ի դէմն ածելով այլակերպութիւնս և ներհակս ընդոստուցիչս մտաց. այլ առ 'ի յառաջ բերել անտի խրատս պիտանիս ազգի մարդկան՝ պարտ էր լուսին առնել առաջարկութեանն, 'ի խորհուրդս անդր օրինացն խելամուտ լինել, և զարգասիս նոցա հետազօտել. քննել զնոսա 'ի փորձ բազմահոլով դարուց, և զպատճառս հաստատութեան և կործանման պետութեանց. ցուցանել զդեղ ախտից որ յարակիցք են սահմանադրութեանց, և որ եկամուտ իսանգարելոց նոցին պատճառք. և համայն ասացեալ, զնել առաջի օրէնսդրաց ամենեցուն մտաբեան լուսաւոր, որով կարասցին ընտրել զկարգ տեսչութեան՝ յարմարագոյն բարուց ազգաց իւրաքանչիւր և իրաց ժամանակին և տեղւոյ[1]։

Աղդ էր մտաբեանս այս մեծ մերձ 'ի կատարումն[2] 'ի հասանելս մերում 'ի Ամիտիլենէ, և յետ երից ամաց 'ի լոյս ընծայեցաւ[3]։ Աքիստոտել էտ մեզ զայն յընթերցումն և 'ի ծաղկաքաղ, զոր աւասիկ զոդեմ* աստ, յերկուս բաժանեալ մասունս։

[1] Արիստոտ. յղ. յիշատ. գիրք Ժ. հա. 2. էջ 144։

[2] Նոյն, յղ. հաս. գիրք Ը. հա. 2. էջ 296։

[3] Նոյն անդ, գիրք Ե. գլ. 10. էջ 404։

* Յետակոյս մատեանս 'ի տեղեկութիւնսն. թիւ ԺԸ։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Յաղագս ազգի ազգի կարգաց տեսչութեան։

Ղ,ԱԽ քան զամենայն երկուս ազգս տեսչութիւն զանազանելի է. որ զօգուտ հասարակաց յամենայնի խնդրէն, և որ առ ոչ ինչ զհասարակաց համարին զօգուտ՝։ Զնդ առաջինն դասեսցուք զմիապետութիւն օրինաւոր, զազնուապետութիւն, և զընտրհաշտութիւն տիրապէս ասացեալ։ Զի մարթ է սահմանաւորութեան գոլ դերազանց, թէպէտ և՝ ի միոյ ուրուք և թէ՝ ի բազմաց ձեռս իշխանութիւնն իցէ, և թէպէտ բնաւ իսկ ժողովուրդն իշխիցէ[2]։

Յերկրորդումն դասու էն բռնաւորութիւն, սակաւապետութիւն և ռամկապետութիւն, որ երից առաջնոց կարգացն էն զեղծմունք։ Զանազի թագաւորութիւն օրինաւոր զառաջանի՝ ի բռնաւորութիւն կամ յինքնիշխանութիւն, յորժամ թագաւորն զիւրն յամենայնի խնդրելով՝ ոչ ևս՝ ի չափու ունի զիշխանութիւն իւր[3]։ Զնուազապետութիւն զառաջանի՝ ի սակաւուց պետութիւն, յորժամ զերազոյն իշխանութիւն ոչ ևս է՝ ի ձեռս ընտրելոց քաղաքացւոց առաքինեաց, այլ նուաստ

1 Արիստոտ. յՊ. հատ. գիրք Գ. գլ. 6. հա. 2. էջ 345։

2 Նոյն անդ, գլ. 7. էջ 346։

3 Նոյն հատ. գիրք Ա. գլ. 8. էջ 530։

զունք ոմանք փարթամութեամբն և եթե երևելիք ունին զնշխանութիւնն։ Այլ ընկերհաշտութիւն զառաջանի 'ի ռամկապետութիւն, յորժամ մեր բոլոր հզօրագոյնս իշխեմ 'ի խորհուրդս հասարակաց[1]։

Այլ քանզի թագաւորն և բռնաւոր անիտիր կոչին միապետք, և մարթի երկաքանչիւրոցն իշխանութեան գոլ ամենազօր, երկու իրօք զնոսա 'ի միմեանց զանազանեմք*. զմին առեալ յօրինակէ 'ի կիր արկանելոյ նոցա զնշխանութիւնն, և զմիւսն 'ի հանգամանաց հնազանդութեան իշխեցեալոյն։ Արդ վասն առաջնոյն ասացաք իսկ, զի թագաւոր զամենայն ինչ յօգուտ ժողովրդեանն գործէ, իսկ բռնաւոր յիւրն. վասն երկրորդին ասեմք, զի և կարի իսկ ամենիշխան տերութիւն օրինաւոր է, եթէ ժողովուրդն կամ ցուցանէ զայն կամ հնազանդի այնմ կամնկար[2]։

Ուստ այսոցիկ նախազեկոյց հմտութեանց՝ հնգեակ ազգս թագաւորութեան 'ի պատմութիւնս ազգաց գտանեմք։

Արաջին՝ որպէս յաւուրս դիւցազանցն յաՀնախս է տեսանել, զի թագաւորին անկ էր զօրավարել, և 'ի զօրավարելն՝ պատուհաս և մահ 'ի վերայ յանցաւորացն ածել, կալ 'ի վերայ զոհից, առնել դատաստան իւրաքանչիւրոց, և առանդել զիշ-

1 Արիստոտ. յՂ. հաս. գիրք Գ. հա. 2. գլ. 7. էջ 346։
* Յեսկոյս մատենիս 'ի տեղեկութիւնն. թիւ յԹ։
2 Արիստոտ. անդ, գլ. 14. էջ 357. գիրք Դ. գլ. 10. էջ 374։

խանութիւն իւր զաւակի իւրում։ Չրկրորդ՝ որպէս 'ի յերկարել հերձուածոց ստիպէին կա-
ցուցանել քաղաքացիք, աւանդելով զիշխանու-
թիւն իւրեանց 'ի ձեռս միոյ ուրուք մինչև
ցկեանս կամ առ ժամանակ մի։ Չորրորդ՝ որպէս
առ խուժադուժ ազգս Պարսից. զի թագաւորն անդ
ամենիշխան ունի զօրութիւն ժառանգեալ 'ի
հարցն, առանց բողոքք ունելոյ հնազանդելոցն
զայնմանէ։ Չորրորդ՝ որպէս սպարապետացուցն, որ
համեմատագոյն էս թուի օրինաց. զի զօրավարել
եւ թագ անկ է նոցա եւ գործ պաշտաման դիցն։ Չ-
հինգերորդ՝ զոր թագաւորութիւն կոչեմ կամ
միապետութիւն օրինաւոր, յորում թագաւորն
իշխէ յաշխարհին իւրում, որպէս տանուտէր
յիւրում տան[1]։

Օ այսմանէ միայն առաջի կոյց ինձ խօսել։
Օ առաջնոյն ինչ ոչ ձառեմ, զի զրեթէ ամենայն
ուրեք 'ի բազում ժամանակաց հետէ խափանեալ
է. և ոչ զերկրորդէն, զի առժամանակեայ եւեթ
էր այն իշխանութիւն. և ոչ զարձեալ զերրորդէն,
զի ասիացւոց պատկանի՝ որ ընտելագոյնք են ծա-
ռայութեան քան զՀոյնս և զեւրոպացիս[2]։ Չ-
զսպարապետականէն էս լռեմ, քանզի կարի անձուկ
է, և ինքնին միայնակ ոչ կացուցանէ կարգ տես-
չութեան՝ այլ մասն ինչ է նորին։

1 Արիստոտ. յդ. հաս. 2 Նոյն անդ. գիրք Գ. գլ. գիրք Ա. գլ. 12. էջ 310. 14 էջ 356։ գիրք Գ. գլ. 14. էջ 356։

Այսպա թագաւորութիւն տիրապէս իսմնամ զայն, զի թագաւորն գերագոյն իշխանութեամբ՝ հսկեսցէ՝ ի վերայ ամենայն մնստանց տեսչութեան և՝ ի խաղաղութիւն աշխարհին։ Այսմ անկ է հոգ կատարման օրինաց. և քանզի՝ ի պահպանութիւն նոցին ընդդէմ՝ օրինազանցից կարեւոր են նմա զօրք, և մարթ է նմա զեղծանել զօրօքն, լեցի կանոն հանրական՝ ունել նմա զօրութիւն բաւական սանձահարելոյ զիւրաքանչիւրսն, և մի երբէք նուաձելոյ զազգն[2]։

Լեցի նմա իշխանութիւն սահմանելոյ զդատաստանս, զորս օրինացն լեցէ գուշակեալ[3]։ Իսկ հոգ դատելոյ և պատուհասելոյ զյանցաւորս՝ աւազանացն լեցի յանձն։ Թագաւորին ոչ կարելով տեսանել և ուղղել անձամբ զամենայն, կացուցցէ իւր ատեան՝ որ խորհրդակից լեցին նմա, և զամենայն ինչ թեթև ինքեանք յանձանձեսցեն[4]։

Հարկք՝ ի ժամանակի ևեթ պատերազմի և յայլ կարեւոր պէտս աշխարհին պահանջեսցին։ Մի լեցի երբէք թագաւորի ոտնհար լինել՝ ի վերայ թշուառութեան ժողովրդոց՝ շռայլելով զինչս նոցա օտարաց և խեղկատակաց և բոզից[5]։ Դարձեալ զմտաւ ածեալ թէ որպիսի ինչ է իշխանութիւնն զոր Ժառանգէ, լեցի դիւրամատոյց հնազանդելոյ իւրոց[6], և կեցցէ՝ ի միջի նոցա որ-

[1] Արիստոտ. յՀ. հաս. գիրք Գ. գլ. 14. էջ 357։
[2] Նոյն անդ. էջ 359։
[3] Նոյն անդ. գլ. 11. էջ 351։
[4] Նոյն անդ. գլ. 16. էջ 361։
[5] Նոյն անդ. գիրք Ե. գլ. 11. էջ 409։
[6] Նոյն անդ. էջ 410։

պէս Հայր յորդիս [1]։ Պարտ է նմա առաւելագոյն խնամ ունել պիտոյից նոցա քան իւրոցն [2]. Ամենայն փառաց նորա մի զերկիւղ, այլ մեծարանս ազգեսցէ 'ի նոսա [3]. պատիւ իւր լցցի յորդոց ամենայն գործոց իւրոց [4], և տիրասիրութիւն ժողովրդեանն լցցի նմա 'ի վարձ [5]։ Պարտ է նմա ընտրել և փոխարինել զվաստակս, և զի ընդ իշխանութեամբ իւրով մեծատունն վայելեալ 'ի ժառանգութիւնս իւր, և աղքատն պաշտպանեալ 'ի հնարից մեծատան, ուսցին մեծարգել զանձինս, և սիրել զպետութիւնն՝ զմի 'ի գեղեցիկ սահմանադրութեանց հաստատելոյ առ մարդիկ [6]։

Այլ քանզի գերազանցութիւն նորա 'ի լաւութենէ և էութեան թագաւորի է, հարկ է և անհերկեւանութեան և ազատութեան հնազանդելոցն հաստատել 'ի նոսա. նմին իրի 'ի քաղաքս Աշլադաց, քաղաքապետս ամենեցուն հաւասար զմիմեանս ունելով, և զի ամենեցուն մարթի հաղորդել գերագոյն իշխանութեան, յաճախեն գժպատեհութիւնք քան զօգուտս կարգի տեսչութեան՝ որում մարթի է մերթ զբարեբաստութիւն և մերթ զթշուառութիւն ժողովրդեան յարդարել *։

1 Արիստոտ. յզ. հատ. գիրք Ա. գլ. 12. էջ 310։
2 Նոյն անդ. գիրք Ե. գլ. 11. էջ 410։
3 Նոյն անդ. էջ 409։
4 Նոյն անդ. գլ. 10. էջ 403։
5 Նոյն անդ. գիրք Ա. գլ. 12. էջ 310։
6 Նոյն անդ. գլ. 10. էջ 403. գլ. 11. էջ 410. գիրք Գ. գլ. 14. էջ 356։
* Արիստոտելի գրեթէ չէք ինչ ասացեալ զմիահնդան պետութեանցդ՝ որ յաւուրս իսկ

թագաւորութիւն, քանզի խաբսխեալ կայ 'ի վստահութիւն հնազանդելոյն, կրծանի անդէն յատելի լինել թագաւորին ինքնիշխանութեամբ, կամ յարհամարհ զանձն կացուցանել յոռութեամբք։

Զնդ բռնաւորաւ ամենայն զօրութիւնք ազգին ընդդէմ իւր դառնան, պատերազմ մշանջենաւոր մղէ պետութիւնն ընդ ժողովրդեան, պատար հարկանէ զօրէնս, զենչս և զպատիւ նորա, և 'ի խորս թշուառութեան լքեալ թողու զնա։ Թագաւոր 'ի փառս և ի թագաւորութեանն և յօգուտ ժողովրդեան ուշ ունի, իսկ բռնաւոր 'ի յափշտակել և ի զամենայն մեծութիւնս աշխարհին, և 'ի բերկրանս պղծութեան իւրոյ զայնոսիկ 'ի կիր արկանել[2]։ Փոխանակիս արքայ սիրակուսացոյց այնպես զհարկս բազմացոյց, զի 'ի հինգ ամն մեծութիւնք ամենեցուն 'ի գանձս իւր ժողովէին[3]։ Եւ քանզի բռնաւոր ահարկութեամբն և ի իշխէ, հարկ է զի յապահովութիւն և ի իւր ուշ կացցի[4]։ Վասն որոյ թիկնապահք թագաւորի են գունդ քաղաքայնոց նա-

նորա կային, որպէս Պարսիցն և Եգիպտացւոց։ և ոչ զմեկնագունացուցն պետութենէն զբաստանի ասացեալ ինչ նորա, որ շմարթէրն անծանօթ գոլ 'ի նմանէ։ այլ զայնպիսեաց և ի Հաւէ թագաւորութենէնց՝ որ 'ի քաղաքս ուրեք Նշդադայ երբեմն կացին, անմեմանք այժմս փոպետութենէնցս։ (Տես Մանթէսպիէս Հոգի օրինաց գիրք Ա։ գլ։ 9։ հա։ 1։ էջ 224։)

1 Արիստոտ։ յդ։ հատ։ գիրք Ե։ գլ։ 10։ էջ 406։ և գլ։ 11։ էջ 408։

2 Նոյն անդ։ էջ 403։

3 Նոյն անդ։ գլ։ 11։ էջ 407։

4 Նոյն Հատ։ գիրք Ա։ գլ։ 8։ էջ 530։

խանձառորայ յօգուտ աշխարհին, իսկ բռնաւորի այլազգիք՝ որ արբանեկէն մոլեգնութեան նորա և անձնահաճ կամաց[1]։

Պետութիւն այսպիսի, եթէ պետութիւն զնա արժան իցէ կոչել, զկարի իսկ յուսեղծնից կարգաց տեսչութեան յինքն բովանդակէ զարիս. և չէ մնրթ ունել նմա հաստատութիւն, բայց բռնագոյն կամ՝ անարժանագոյն հնարիւք. ապա հարկ է, զի դարանեալ 'ի նմա կացցեն ամենայն պատճառք կործանման։

Բռնաւորութիւն հաստատուն պահի, ուր բռնաւորն փութայ 'ի կործանել զքաղաքացիս ամբարձեալս գեր 'ի վերոյ քան զայլս[2], ուր չնեղի զզարգացումն գիտութեանց որ կրթեն զմիտս ժողովրդեան, և խափանէ զկոչումս հասարակաց և զժողովս՝ առ 'ի չհամախմբելոյ նոցա. ուր ըստ օրինակի թագաւորացն սիրակուսացուց պաշարել զնոսա լրտեսօք՝ որք հանապազ յարհաւիրս և 'ի տագնապի ունին զնոսա, և հնարի ձարտարութեամբ արկանել աղմուկս 'ի տունս, և հերձուածս յայլ և այլ կարգս աշխարհին և կասկածանս 'ի կարևորագոյն բարեկամս. յորժամ՝ ժողովուրդն պարտասեալ 'ի լեկանաց, ընկճեալ 'ի հարկաց, ընդ-բարձ ածեալ 'ի պատերազմունս զդրեալս մեքենաւորութեամբ, և զառածեալ անկեալ 'ի

1 Արիստոտ. յդ. հաս. 407։ Եւրիպ. 'ի յաւել. տող գիրք Ե. գլ. 10. էջ 403։ 445։
2 Նոյն անդ. գլ. 11. էջ

բաց յամենայն մեծախոհութիւնէ և յաղնուական իմաստից, վերջանայ յարիութենէ և 'ի հնարից թօթափելոյ զլուծն որ նուաճէ զնա. և ուր զգահոյիւք նորա շուրջ կան մարգահաճոյք՝ և բռնաւորք 'ի ձեռանէ, այնչափ առաւել պիտանիք զոռոզին՝ որչափ անխափանք յամենայն և 'ի խղճէ։

Բայց է և դիպողագոյն հնար հաստատութեան իշխանութեանն[2], հանդերձ ամենայն սաստիւք զօրութեանն զանձն ներքոյ արկանել կարգաց որ ամենեին զաստկութիւն նորա, և երևելի առաջի ժողովրդեան 'ի դէմն հօր՝ որոյ է նա ժառանգութիւն, քան 'ի կերպարանս գազանի վայրենոյ՝[3] որոյ իցէ նա ձարակ։

Բանզի կարևոր է հնազանդելոց զնել 'ի մտի՝ զի ինչք իւրեանց նուիրին յօգուտ աշխարհին և ոչ 'ի նորայն, պարտ է նմա յաձախութիւն ջանիցն ցուցանել զանձն ձարտար 'ի գիտութիւն առաջնորդութեան[4]։ Զգուտ մեծ է ունել նմա զհանդամանս՝ որ ազդեն ակնածութիւն, և զկերպարանս առաքինութեանց՝ որ ձգեն 'ի սէր։ Լաւ է նմա և նախանձայոյզ կրօնից երևել, առանց նուաստութեան. զի ժողովուրդն հանրեսցի զնա երկիւղած 'ի դից, և մի իշխեսցէ ձգել զձեռն ընդդէմ թագաւորի՝ որում Տնօրէն պաշտպանեն[5]։

[1] Արիստոտ. յդ. հաս. գիրք Ե. գլ. 11. էջ 407։
[2] Նոյն անդ. էջ 408։
[3] Նոյն անդ. գիրք Գ. գլ. 16. էջ 360։
[4] Նոյն անդ. գիրք Ե. գլ. 11. էջ 409։
[5] Նոյն անդ.

Օ գոյշ լեցի մի զոք 'ի ժողովրդենէ տաքառնալ 'ի բարձր աւագութիւն, որով մարթի նմա զեղծանել. եւ առաւել չթնտանել զոք, և մի նախատինս ածել ազգատոհմից։ Յամբոխել բրառնաւորաց որք զեղծանելով իշխանութեամբն իւրեանց կործանեցան յաթոռոց, բազումք կորեան առ 'ի տալ զվրէժ առանձին թնտանեաց՝ որոց լեալ էին միասապարտք, և կամ զձեռս միասապարտին զօրացուցեալ'։

Օ գուշութեամբքս այսոքիւք եկաց բռնաւորութիւն 'ի Ալիկիոն ընդ դար մի ողջոյն, և 'ի Կոմնեթոս ընդ ամն սակաւ ինչ ընդհատ քան զդար[2]։ Օ և որք իշխէին 'ի նոսա՝ մեծարոյ կամ սիրելի եղեն ժողովրդեան, կէսք պատերազմական աջողութեամբքն, այլք հանգիստ բարուքն, և կէսք երբէք երբէք պատկառ կալով օրինաց։ Այլ այլ ամենայն ուրեք բռնաւորութիւն ըստ առաւել կամ ըստ նուազ զգուշութեանն 'ի թաքուցանել զանձն՝ գտաւ երկարատև կամ կարճատև։ Այերթ զամբոխն զայրագնեալ արարնա զէնընկէց, և մերթ խղեալ զկապանս գերեւաց՝ կոչեաց զնոսա յօգնութիւն իւր[3]. այլ հարկ է անհրաժեշտ՝ այսպիսում այլանդակ պետութեան եթէ վաղ և թէ անագան առնուլ վախճան. զի տաւելութիւն կամ արհամարհանք[4], զորս յինքն

1 Արիստոտ. յդ. հատ. գիրք Ե. գլ. 10. էջ 403։
2 Նոյն անդ. գլ. 12. էջ 411։
3 Նոյն անդ. գլ. 11. էջ 410։
4 Նոյն անդ. գլ. 10. էջ 406։

ձգէ, վաղ կամ անագան լսցին վրէժխնդիր փա-
ռաց ազգացն թշնամանելոց։

Ի բառնալ բռնաւորութեան իբրև դարձաւ
իշխանութիւն 'ի ժողովուրդն՝ ուստի առեալ էր
ակիզն, կէսք խորհեցան վարել զայն ազգովին,
այլք առանձել զայն 'ի ձեռս ընտրելոց քաղաքայ-
նոց։ Ընդ խրախուսեցին խումբք երկու հզօրք,
աւագանւոյն և ռամկին, երկոքին ևս սանձա-
հարեալք յառաջագոյն 'ի մոյ ուրուք իշխանու-
թենէն, և ապա ձգնեալք 'ի կործանել զմիմեանս
քան 'ի կշիռ հաւասարութեան կալ։ Հերձուածք
նոցա գրեթէ ամենայն ուրեք յեղափոխեցին ըն-
նախնի սահմանադրութիւնս, յաւելեալ և այ-
լոց պատճառաց 'ի փոփոխումն նոցին. որպէս թե-
լութիւնք 'ի փոլձոյ իրացն յայտնեալք յայլ և
այլ կարգս օրինադրութեանց, զեղծմունք յա-
բակիցք 'ի գործ կարի իսկ օրինաւոր իշխանու-
թեան, և փոփոխմունք ազգաց ըստ զօրութեան,
ըստ բարուց և ըստ հանմտութեան ընդ այլ
ազգս։ Օրի առ Յոյս որք առ հասարակ վա-
ռեալ բորբոքին սիրով ազատութեան, ոչ գոցես
ազգս երկու կամ քաղաքս՝ թէպէտ և կարի մեր-
ձաւորս միմեանց՝ որոց ամենևին նոյն օրէնք իցեն
և մի կարգ տեսչութեան, այլ ուրեք զաւագա-
նին և ուրեք զամիսն բռնացեալ։

Պատն որոյ և բազում ազգս ազնուապետու-
թեան զանազանելի է. զկնոս առաւել կամ
նուազ մերձաւորագոյն 'ի կատարելութիւն կար-

զիս այսորիկ անաչառութեան, և զկիսս առաւել կամ նուազ միտեալ 'ի սակաւապետութիւն՝ որ զերծումն նորին է։

Զմնաւապետութիւն տիրապէս այն է, ուր իշխանութիւն է 'ի ձեռս ընտրելոց աւագաց գիտնոց և առաքինեաց[1]։ Զառաքինութիւն իսկ ինձ ասասանօր զքաղաքականն, որ ոչ այլ ինչ է՝ բայց նախանձ հաստատակաց բարւոյն և հայրենասիրութիւն[2]. և ուր ամենայն պատիւ առաքինութեանս այսմիկ ընծայիցի, նա ուղղէ զպետութիւնն[3]։

Զբ 'ի քաջ հաստատութիւն սահմանադրութեանս այսորիկ, պարտ է այնպէս յարմարել զայն, զի զլեսուրբ 'ի քաղաքացոց գտցեն 'ի նմա զբարեմասնութիւնս սակաւապետութեան, և ժողովուրդն զառակապետութեան[4]։ Երկուց օրինաց մարթ է զերկոսին զայսոսիկ ներգործել արդասիս. միոյն՝ որ անդստին 'ի դիտաւորութենէ կարգիս յառաջ գայ՝ օրինադրելով տալ զաւագութիւնս արանց արժանեաց, առանց խրատելոց զբանս նոցա[5]. իսկ միւսոյն պահանջելով յաւագանւոյն 'ի հասարակաց ատենի զհամար անատեսութեան գանձուն, որպէս զի մի որ զոչա-

[1] Արիստոտ. յդ. հաս. գիրք Դ. գլ. 7. էջ 371. գլ. 15. էջ 382։

[2] Նոյն անդ. գիրք Գ. գլ. 7. էջ 371։

[3] Նոյն անդ. գիրք Դ. գլ. 8. էջ 372։

[4] Նոյն անդ. գիրք Ե. գլ. 7. էջ 396։

[5] Նոյն անդ. գիրք Դ. գլ. 9. էջ 373։

քաղութեամբ մեծասցի յաւագութենէն[1]։ Զ. ռաջնումն մարթ է քաղաքացնոց ամենեցուն հասանել 'ի բարձրագոյն աւագութիւնս. իսկ երկրորդաւն հրաժարեսցէ ռամիկն յիշխանութենէն, որ վասն շահաւետութեանն ևեթ է ցանկալի[2]։

Զ. վասն զի յերկարատև իշխանութենէ վըտանգ է առաքինութեան տկարանալոյ կամ գըրգռելոյ զնախանձ, 'ի բազում ազնուապետութիւնս սահմանեալ ժամանակ է աւագութեանց, և յընդմիջել տարւոյն՝ փոխի աւագանին[3]։ Զ. որպէս կարևոր է յատեանս ուրեք յերևելեաց 'ի քաղաքացնոց կացուցանել դատաւորս, պարտ է և յայլս ատենից գէթ զոմանս յամենայն կարգաց աշխարհին ընտրել։

Ընկ է կարգիս այսմիկ պետութեան կացուցանել խնամակալս դաստիարակութիւն մանկըտւոյ և համեստութեան կանանց։ Զանգի այս խնամակալութիւն 'ի ռամկապետութեան և 'ի սակաւապետութեան ոչ ինչ օգնէ. զի յառաջնումն կամի խուժանն վայելել 'ի համարձակ ազատութեան, իսկ յերկրորդումն՝ աւագանին ինքնին յօրինակ ապականութեան և համարձակութեան զանձն ընծայէ ռամկին[4]։

Ոչիք կարգ տեսչութեան յորում լաւք 'ի քա-

[1] Արիստոտ. յղ. հատ. գիրք Ե. գլ. 8. էջ 399։
[2] Նոյն անդ։
[3] Նոյն անդ. էջ 398։
[4] Արիստոտ. յղ. հատ. գիրք Դ. գլ. 15. էջ 383։

զաբայնոց ոչ խտրեցին[1]. և եթէ երբէք ուրեք դէպ տայցէ, հարկ է այլ օրէնս և այլ կարգս հաստատել։ Զ'ի դատել զաղգի ազգի ազնուապետութեանց, շատ է յուղղիչ անդր նոցա մնասել, զի յայն հաստատի բարեկարգութիւն տեսչութեան. արդ ընիկ ազնուապետութեանն ուղղիչ է քաղաքական առաքինութիւն, և կամ նախանձ բարւոյն հասարակաց։ Ի՞ստ չափոյ որով յարդի ազնուապետութիւնս նախանձս այս ներգործէ յընտրութեան դատաւորաց, ըստ այնմ իմասցիս զգերազանցութիւն կարգի պետութեանն։ Օ՛ի ահա սպարտականն կարգ մեծաւորագոյն է 'ի Հնմարիսն ազնուապետութիւն քան զկարքեդոնականն, թէպէտ և բազում իւիք համանմանք են իրերաց[2]։ Ի Սպարտա հայրենասէրք և նախանձաւորք բարեաց ժողովրդեան ընտրին յաւագութիւն. իսկ 'ի Կարքեդոն պարտ է ընտրելոյն և Հոխս զոլ[3]. նմին իրի կարքեդոնականն կարգ տեսչութեան միտէ 'ի սակաւապետութիւն։

Ազնուապետութիւն ածէ վասանգ, ուր առաքանչոյն և ռամկին ոչ 'ի նոյն խնդիր օգտի միաբանեալ՝ երկաբանչիւր այլում իմիք մեծագունեմ յոյժ 'ի խնդիր լինին օգտի, յարիշտակերոյ զիշխանութիւն միմեանց[4]. ուր ներեն օրէնք անցաւնել տակաւ ամենայն զանձուց ընդ ձեռս իւրա-

1 Արիստոտ. յգ. հատ. գիրք Դ. գլ. 7. էջ 371։
2 Նոյն անդ, գիրք Բ. գլ. 11. էջ 334։
3 Նոյն անդ, գիրք Դ. գլ. 7. էջ 371։
4 Նոյն անդ, գիրք Ե. գլ. 7. էջ 396։

քանչիւրոց ոմանց. ուր անտես առնին 'ի սկզբան նոցաձեւութիւնք հակառակք սահմանադրութեանն աշխարհին. ուր աւագանին նախանձոտ կամ թերահոգ հալածէ զերկեալս 'ի քաղաքացոց կամ մերժէ զնոսա յաւագութենէ և կամ թողու զօրանալ նոցա և ծառայեցուցանել զՀայրենիսն[1]։

Յշնուագետութիւն թերակատար այնչափ բազում իրօք հաւատարի սակաւագետութեան, զի 'ի ձառել մանրամասնաբար զպատճառաց կոծմանին և հաստատութեան նոցա՝ հարկ է միանգամայն նկատել զերկաբանչիւրն։

Ի սակաւագետութեան նուազունք ոմանք ձոիք իշխեն[2]։ Եւ քանզի կարեւոր պայմանն կարգիս է՝ ընտրութեամբ կացուցանել զԷթզլխաւորս յաւագանւոյն[3], և զի ըստ հասից՝ այսինքն է ըստ մեծութեանց առնի ընտրութիւնն, ապա մեծութիւնք նախադասին անդ քան զամենայն, և կացուցանեն խտիր մեծ 'ի քաղաքացիս[4], և արծաթասիրութիւն ուղղիչ է պետութեանն[5]։

Խաղումք յոյժ 'ի քաղաքաց կամակար զայս կարգ տեսչութեան ընտրեցին. և սպարտացիք հնարին մուծանել զայն յաղագս նուվիրն նախանձու, որով աթենացիք խնդրեն հաստատել առ

[1] Արիստոտ. յդ. հաս. գիրք Ե. գլ. 8. էջ 396։

[2] Նոյն անդ, գիրք Գ. գլ. 7. էջ 346. գիրք Դ. գլ. 4. էջ 366. գլ. 15. էջ 382։

[3] Նոյն անդ, գիրք Գ. գլ. 15. էջ 384։ Նոյն, Ճարտ. էջ 614։

[4] Նոյն, յդ. հաս. գիրք Ե. գլ. 1. էջ 385։

[5] Նոյն անդ, գիրք Դ. գլ. 8. էջ 372։

նոսա ռամկապետութիւն։ Այլ ամենայն ուրեք զանազանի ոչ միայն ըստ հասիցն որ պահանջին առ 'ի բարձրագոյն աւագութիւնս հասանելոյ, այլև ըստ զանազանաբար ընտրութեանն, և ըստ առաւել կամ նուազ զօրութեան իշխանութեանն։ Զարձեալ և ամենայն ուրեք սակաւք ոմանք քաղաքացիք որք իշխեին, Ճգնին 'ի հաստատութիւն իւրեանց ընդդէմ բազմութեան քաղաքայնոց որք հնազանդին։

Այսուհանդ 'ի պետութեանց հնարս 'ի կիր արկանին՝ տալ քաղաքայնոց ազատութիւն մնանելոյ 'ի համախումբ ժողովս ազգին, զատութեանց թեկին ածելոյ, թուարկութեան յաստեանս դատաստանի, զկնս առանին ունելոյ և յաճախելոյ զզօրութիւն իւրեանց 'ի հրահանգս կրթարանին[1]։ Այլ որ յայդքատաց որ զսրբիմբք զանց առնիցէ, չիք ինչ նմա պատուհաս. իսկ մեծատունք որ անփոյթ առնիցեն, անկանին 'ի տուգանս[2]։ Զատութիւնն հնորհեալ առաջնոց, իբր թէ 'ի պատճառս բազում աշխատութեանց նոցա և պիտոյից, հեռացուցանէ զնոսա 'ի տեսչութենէ իրաց. և սովորին համարել այնու զխորհուրդս հասարակաց, զկոգս դատաստանաց և զայլ յանձանձանս իրաց աշխարհին որպէս բեռն տաժանակիր՝ մեծատանց ևեթ կրելի և նոցին պարտ։

1 Տրիատատ. յԳ. հատ. դիրք Դ. գլ. 5. էջ 369։
2 Նոյն անդ. գլ. 13. էջ 378։
3 Նոյն անդ. գլ. 9. էջ 373։

Ա՛ռ 'ի կացուցանել սակաւապետութիւն որքան հնար է բարեկարգ, պարտ է զի հասն անկաւոր դասու աւագանւոյն չիցէ բազում յոյժ. զի որչափ բազմագոյնք լիցեն 'ի դասն յայն, այնչափ առաւել յուսալի է՝ զի օրէնք իշխիցեն և ոչ մարդիկ[1]։

Ոչ է պարտ աւագութեանց բազմաց միանգամայն 'ի մի ժողովել ազգատոհմ, զի մի՛ կարի հզօրասցի ազգատոհմն այն։ Ի քաղաքս ուրեք որդի 'ի հօրէ արտաքսի, և եղբայր յանդրանիկ եղբօրէ[2]։

Ոչ է պարտ զրկել ումեք զհարազատ ժառանգս իւր, և ոչ երկուց ժառանգութեանց 'ի մի ոք ժողովել, որպէս զի մի՛ լիցի 'ի քաղաքացիս անհաւասարութիւն յոյժ բախտի[3]։

Պարտ է պետութեան յանձին ունել զինամակալութիւն ռամկին, և առաւել քան մեծատանց՝ նոցին թշնամանացն լինել վրէժինդիր, և զգուշանալ՝ զի մի՛ յօրինաց ինչ և մի՛ 'ի զօրութենէ խափանեսցի ապրուստ նորա կամ բախտ։ Ոչ ինչ փոյթ լիցի նմա զաւագութեանց որ ածեն զփառս և զԹ սպասաւորելոյ հայրենեաց, այլ մտադիր թողցէ զայնոսիկ այլոց, եթէ միայն ոչ զրկեսցի ինքն յարդեանց աշխատութեան իւրոյ[4]։

1 Արիստոտ. յղ. հաս. գիրք Դ. գլ. 9. էջ 371։
2 Նոյն անդ. գիրք Ե. գլ. 6. էջ 393։
3 Նոյն անդ. գլ. 8. էջ 614։
4 Նոյն անդ։ Նոյն Ճարտ. հա. 2. էջ 614։

Բա՛ի յարեցուցանել զնա և ա՛ն քան զեա՛ ի պե-
տութիւնն, պարտ է մատուցանել նմա զթեթև
ինչ գործս աշխարհին շահաւէտս[1], և զյոյս հա-
սանելոյ վաստակօք ի կարևոր իշխանութիւնս,
որպէս օրէնքն են ի Պասիլիս[2]։

Օրէնքն որ ի բազումս ի սակաւապետու-
թեանց արգելուն զաւագանին ի վաճառակա-
նութենէ[3], գործեն օգուտս կրկին մեծամեծս.
զի ոչ ներեն նոցա նուիրել շահուն իւրեանց զժա-
մանակն զոր պարտին աշխարհին, և խափանեն
զնոսա ի գրաւելոյ յիւրեանս զամենայն վաճառս՝
որ այլոց վաճառականաց ածէ կործանումն։

Յառատաձեռնել աւագանւոյն ընդ հակառակս
միմեանց ի պայծառութիւն մայրաքաղաքին, ի
տօնախմբութիւնս, ի տեսարանս, և ի ճաշս
հասարակաց, բարեխոսանձ հակառակութեամբն
նոցա յաճախեն զանձք աշխարհին։ Նոյն և
զանչափութիւն մեծութեանց իւրաքանչիւրոց ո-
մանց ի պատշաճ չափսն ածէ, և ոմանին դիւրա-
բար տանի իշխանութեան՝ որում այնպիսի բա-
ղերարութիւնքն կցորդին. ոչ և այնուհետև
զշուք աւագութեանցն նկատեալ, այլ որ զհետ
նոցա գնան զպարտսն ծանունս, և զարդիւնս

1 Արիստոտ. յոլ. հաս. գիրք Զ. գլ. 6. էջ 420։
2 Նոյն անդ, գլ. 7. էջ 421։
3 Նոյն անդ, գիրք Ե. գլ. 12. էջ 412. գլ. 8. էջ 399։

* Այլ և ի վէհէժ չէ օրէն ազնուականաց վաճառաշահ։ (Ամիջոյ, պատմ. պետ. Վենետ. էջ 24։ Մոնթէսքիէօ, հոգի օրինաց, գիրք Ե. գլ. 8։)

օգտիցն զոր 'ի նոցունց ժողովէ[1]։

Իսկ եթէ հասն անկաւոր քաղաքացնոց ընտրելեաց յաւագութիւն բազում յոյժ ի՝ցէ, կալի սակաւաւորք ընտրեալքն գտանիցին. և որք դաւով կամ աջողութեամբ մնացն հասցեն յաւագութիւն, գուն գործեսցեն նովին հնարիւք մշանջենաւորել 'ի նոյն, և տակաւ ընդարձակեսցեն զիշխանութիւն իւրեանց՝ իւրովի ընտրել իւրեանց իշխանակիցս, թողուլ որդւոց իւրեանց զիշխանութիւնն[2], խափանել զամենայն կարգս, և իշխել համարձակ զկամս իւրեանց կացուցանել օրէնս։ Որով կարգ տեսչութեանն 'ի խորս ապականութեան մղեալ զառաջանիցի, և անդէն 'ի սակաւապետութեան կացցեն պետքնուազունք, որպէս պատահեացն Լդղիս[3]*։

Ոտնաւորութիւն սակաւուց ոմանց քաղաքացնոց ոչ ընդ երկար քան զմիոյ ուրուք կացցէ. վատթարեսցի նա ծայրայեղ իշխանութեամբն։ Զ՝ոմանք մերժեալք յիշխանութենէ գումարեսցին ընդ ռամիկն առ 'ի կործանել զայն. այսպէս 'ի Աթենիդոս սակաւապետութիւն փոխեցաւ յանկարծ 'ի ռամկապետութիւն[4]։

Նոյն յեղափոխութիւն պատահէ 'ի միաբանել Ճոխից հարատահարել զայլս 'ի քաղաքացնոցն

1 Արիստոտ. յղ. հաս. գիրք Զ. գլ. 7. էջ 421։
2 Նոյն անդ, գիրք Դ. գլ. 14. էջ 380։
3 Նոյն անդ, գիրք Ե. գլ. 6. էջ 394։
* Տես յերեսունեվեցերորդ գլուխ գրոցս։
4 Արիստոտ. անդ, էջ 393։

իբրև զստրուկս [1]։ Ի տեղիս տեղիս իշխեն նոքա երդնուլ այսպիսի ինչ խուժադուժ և մոլեկան երդումն, առնել ընդ ժողովրդեան յոր ինչ և ձեռնհաս իցէ չարիս [2]։ Բայց զի վասնզ է 'ի ժողովրդենէ, թէպէտ և ինքն առ ոտս այլոց խոնարհեացի, և թէ այլք առ ոտս նորա խոնարհեացին, ոչ է պարտ 'ի նա միայն ապաստան առնել զիշխանութիւն դատելոյ և յաւագութիւն յառաջ մատուցանելոյ։ Զի 'ի ստիպել ՀՈՒԽԻՆ խոնարհել մուրանալ զընտրութիւն նորա, զիցէ նա 'ի մոռ զիւրաբար զբռամբ արկանել զիշխանութիւնն զոր մատուցանէ այլոց [3]։

Լաւ բարուց իսկ մարթ է յեղաշրջել զկարգ պետութեան, 'ի ռամկականն փոխելով զոչ այնպիսին, և ընդ ռամկականին փոխանակելով զսակաւուցն [4]։ Լաւ թէպէտ փոփոխութիւնքս այսոքիկ վեր 'ի վայր առնեն զսահմանադրութիւն, այլ մարթի չլինել նոցա ինչասակար, զի յամն գործին և կամնակարութեամբ ամենայն դասուց աշխարհին։ Բայց չիք ինչ կարևոր որպէս խափանել անդէն 'ի սկզբան ընդարձակութիւնս, որ սատակապէս 'ի դիմի հարկանին սահմանադրութեանն։ Զանազի 'ի պետութեան՝ որում՝ անկ է ունել 'ի կշռի զկամն երկոցունց հզօր դասուց քաղաքացոց, դոյն ինչ յաղթութիւն կանգ-

1 Արիստոտ. յՊ. հաս. գիրք Ե. գլ. 6. էջ 395։
2 Նոյն անդ, գլ. 9. էջ 401։
3 Նոյն անդ, էջ 394։
4 Նոյն անդ, գիրք Դ. գլ. 8. էջ 370։

նեալ ընդդէմ օրինացն սահմանելոց՝ պատրաստէ նման կործանումն։ Ի Ֆուրիոն ոչ ներէին օրէնք ամբառնալ անդրէն 'ի նոյն աւագութիւն զինուորական միոչեւ հնգից ամաց 'ի վերայ անցեալ։ Անկտին ածեալ զիւրև զզօրականն, և զժողովուրդն հաւանեցուցեալ, ետ խափանել զօրէնսն հակառակ կամաց աւագանւոյն. և յանդգնագոյնս ապա լեալ ձեռնարկէց, փոխեաց զգգօն և զբարեկարգ պետութիւն ժողովրդեանն 'ի բռնաւորութիւն սոսկալի[1]։

Լսխանձայոյզք ռամկին իշխանութեան զառանցեալք, համարին թէ չիցէ ուրեք ազատութիւն արտաքոյ ռամկապետութեա[2]. զի ազատութիւն է ուղղիչ կարգիս այսորիկ, և սա տայ քաղաքացեաց իւրաքանչիւր յօժարութիւն հնազանդելոյ, և զօրութիւն հրամայելոյ. առնէ զիւրաքանչիւր ոք 'ի նոցանէ տէր անձին, հաւասար այլոց, և ցանկալի պետութեանն որոյ է մասն։

Այս կարևոր է կարգիս այսմիկ տեսչութեան, զի յամենայն աւագութիւնս, և կամ գէթ 'ի բազմագոյնս 'ի նոցանէ, ամենայն ոք 'ի քաղաքացեաց հասանել կարասցէ վիճակաւ[3]. զի աւագութիւնք բաց 'ի զինուորականացն, դուն ուրեք տացին այնոցիկ՝ որ միանգամ յառաջագոյն 'ի նոյն աւագութիւնս կացեալ իցեն. զի ամենայն

[1] Արիստոտ. յղ. հաս. 2. էջ 414։
գիրք Ե. գլ. 7. էջ 397։
[2] Նոյն անդ. գիրք Զ. գլ. 9. էջ 373։
[3] Նոյն անդ. գիրք Դ. գլ.

քաղաքացիք մնցեն փոխանակաւ յատեանս դաս-
տաստանաց. զի կացցէ ատեան աւագանւոյ,
պատրաստել զերս՝ որ 'ի համախումբ 'ի զերա-
գոյն ժողով ազգին սահմանելոց իցեն, ուր ամե-
նայն քաղաքայնոց օրէնն իցէ մնանել. և զի հա-
նապազորդելոցն 'ի ժողով անդր և յաւագանին և
յատեանս դատաստանաց՝ սահմանեսցին վարձք

Հանգոյն աղնուապետութեան և այս կարգ
նոցին յեղափոխութեանց կայ 'ի ներքոյ։ Պարե-
կարգ է 'ի տեղիս, ուր առ 'ի հեռացուցանել զան-
իմաստ և զանհանդարտ խուժանն՝ խնդրի դոյն
ինչ հաս առ իրաւունս յանձանձանաց իրաց աշ-
խարհին[2]. և ուր հանձարեղ կարգօք աւագագոյն
դաս քաղաքայնոցն չիցէ նշաւակ ատելութեան և
նախանձու նուաստագոյն դասուցն[3]. և յամե-
նայն տեղիս, ուր և յաղմուկս խռովութեանց
զօրացուցանեն օրէնքք զբարբառ, և ըստ լինին։
Այլ ուր սինքքոր խուժանին բազում է զօրու-
թիւն 'ի խորհուրդս հասարակաց, անդ բռնաւո-
րական է ռամկապետութիւն[4]։

Ինանաւոյց ռամկին բազում եղեն պատճառք։
Բազին՝ խափանումն օրինացն, որ ըստ հասից
իւրաքանչիւր սահմանելին ամբառնալ յաւագու-
թիւնս. որով յետին քաղաքացոյն տուաւ ազա-

1 Արիստոտ. յԳ. հաս. գլուխ Դ. գլ. 14. էջ 380։
2 Նոյն անդ, գլուխ Դ. գլ. 4. էջ 368. գլ. 9. էջ 373. գլուխ Զ. գլ. 2. էջ 414։
3 Նոյն անդ, գլուխ Ե. գլ. 9. էջ 401. գլուխ Զ. գլ. 5. էջ 419։
4 Նոյն անդ, գլ. 11. էջ 405։

տութիւն խառնելոյ 'ի յանձանձանս իրաց աշխարհին։ Արկրորդ՝ վարձքն սահմանեալ աղքատաց միայն և ոչ ձոխից, վասն թուարկութեանն 'ի համախումբ ժողովս կամ յատեանս դատաստանաց՝, որ և կարի դոյզն ինչ էր և ոչ բաւական յորդորելոյ 'ի փոյթ հանապազորդութեան զձոխս, այլ բաւական 'ի ընուլ զխափանած վաստակոց աղքատացն։ Որով ամբոխս գործաւորացն և վարձկանացն խռնեալ 'ի վեհավայր ատեանս՝ ուր հայրենեացն օգտի խնդիրք են, բառնան զաղաղակ իշխանական։ Այլ երրորդ պատճառ՝ զօրութիւն ձարտարախօսացն 'ի վերայ ռամկին։

Զանգի ռամիկն յառաջագոյն վարեալ մղէր 'ի զինուորականաց, որ երբէք երբէք վստահութեամբն նորա զեղծեալ՝ արկին զնա ընդ լծով՝։ Այլ վասն զի ձակատագրեալ է 'ի ծառայութիւն, ամբարձան 'ի յետին ժամանակս արք փառամոլք՝ որք զաջողութիւնս մտաց իւրեանց՝ 'ի կիր արկանեն 'ի գգուել զկիրս նր և զախտս, յարբեցուցանել զնա կարծեօք իշխանութեան և փառաց, 'ի գրգռել զատելութիւն նորա ընդդէմ մեծատանց, 'ի յաձախել զարհամարհանս նորա առ կարգ, և զցանկութիւն ինքնիշխան ազատութեան։ Կանգնեն յաղթանակ ձարտարախօսութեամբն, որ ոչ առ այլ ինչ յաւուրս մեր թուի բարգաւա-

1 Արիստոտ. յղ. հաս. գիրք Դ. գլ. 13. էջ 378։ 2 Նոյն անդ, գիրք Ե. գլ. 8. էջ 392։

ՀՏեալ՝, բայց առ 'ի կանգնել անդէն յաղա-
տութեան ինքնիշխանութիւն։ Ընկերհաշտու-
թիւնք ուղղեալք իմաստութեամբ ոչ անձնասան
լինին յարս յայսոսիկ միասակարս. այլ ամենայն
ուրեք ուր սոքա լեալն լինին, գահավիժեալ մղի
պետութիւնն 'ի վիհ ապականութեան, և ժողո-
վուրդն բերէ յանձին զախտս մղեկանս և զվայ-
ելենութիւն բռնաւորաց[2]։

Ամենայն ազգի ազգի կարգք պետութեանց
մերոց զրեթէ առ հասարակ բերեն յիւրեանս
բազմատպտիկ բողբոջս ապականութեան։ Օր
որովհետև բազմազոյնք 'ի հասարակապետու-
թեանցն Յունաց յանձուկ քաղաքորսի կամ
յանկեան ուրեք ամփոփին, հերձուածք իւրա-
քանչիւրոց ոմանց 'ի նոսա փոխին 'ի հերձուածս աշ-
խարհական. և ազէտք անզբաւական մնարտի,
նախանձընդդէմ հակառակութիւն հնացեալ և
զօրհանապազ նորածնեալ յայլ և այլ դասս քաղա-
քայնոց, և արկածք անակնկալք արագ արագ 'ի
վերայ հասեալք, կարեն 'ի միում վայրկեան ժա-
մանակի խախտել կամ կործանել զսահմանա-
զրութիւն։ Ի Թեբէ պարտութեամբ Հնկա-
տամարտի միոյ ռամկապետութիւն եղծաւ,[3] և
Ի Աքակլիա, 'ի Կումն և 'ի Մեգարա զարձիւ
գլխաւորաց քաղաքայնոց՝ զորս Ժողովրդեանն

1 Արիստոտ. յղ. հատ. գիրք Ե. գլ. 5. էջ 392։
2 Նոյն անդ, գիրք Դ. գլ.
4. էջ 369։
3 Նոյն անդ, գիրք Ե. գլ.
3. էջ 388։

սքսորեալ էր, առ 'ի գրաւել զինչս նոցա 'ի զանձ աշխարհին[1]։ Ի Արկադիոսա փոխեցաւ կարգ տեսչութեանն՝ վասն կնոջ միոյ տարփանաց[2], Ի Բերտրիա՝ վասն թշնամանաց միոյ ուրուք 'ի քաղաքացոցն[3], և Ի Պիդաւրոս՝ վասն տուգանաց ինչ արկելոց 'ի վերայ այլոց ուրուք քաղաքացւոյ։ Եւ բազում այլ ևս աղմուկք խռովութեանց, ոչ 'ի ծանրագոյն ինչ քան զայսոսիկ իրաց պատճառս առեալ, ընդարձակեցան տակաւ, և յարուցին բազմաղէտ պատերազմունս։

Մինչդեռ 'ի նեղութիւնս յայսոսիկ հեծէ ընդարձակագոյն մասն Լաղադայ, ազգք երեք՝ կրետացիք, սպարտացիք և կարքեդոնացիք 'ի բազում դարուց հետէ վայելեն խաղաղութեամբ 'ի կարգ իմն տեսչութեան, որ ամենեան այլոցն առ հատարակ՝ զամենեցուն յինքն բովանդակէ յոլովութիւնս։ Վասնզի կրետացւոց ուշ 'ի կուրծս անկեալ 'ի վաղ ժամանակաց՝ ռամկին իշխանութեամբ բարեխառնել զաւագացն[4], և սպարտացիք և կարքեդոնացիք՝ նոցին արդեօք նախանձաւորք՝ զթագաւորութիւն ընդ ազնուապետութեան և ընդ ռամկապետութեան խառնեցին[5]։

Ըստանօր Աբիստոտել ստորագրէ կարգ 'ի

1 Արիստոտ. յզ. հաս. գիրք Ե. գլ. 5. էջ 392։
2 Նոյն անդ. գլ. 4. էջ 390։
3 Նոյն անդ. գլ. 6. էջ 395։
4 Նոյն անդ. գիրք Թ. գլ. 6. էջ 332։
5 Նոյն անդ. գլ. 9. էջ 328. գլ. 11. էջ 334։

կարձոյ զկարգս ուղղեալս Լ[1]ջադա, 'ի Լ[2]ակեդեմն և 'ի Կարբեդոն. որ ինչ զկարքեդոնացւոցն ասէ, ահաւասիկ ածեմ այսր՝ յաւելեալ տիպս ինչ աղօտս 'ի գծագիրս նորա։

Ի Կարքեդոն գեղագոյն իշխանութիւնն յերկոսին թագաւորս[3] և յաւագանին և 'ի ժողովուռամիին բաժանեալ է[4]։ Թագաւորքն երկոքին ոչ որպէս առ սպարտացիս անդստին յերկուց ևեթ ցեղից ընտրին[5], այլ ամի ամի յայլ և այլազգատոհմից. և խնդրին 'ի նոսա ազնուականութիւն, մեծութիւնք և առաքինութիւն։

Աւագանին բազմութիւ է յոյժ. և թագաւորաց անկ է զումարել զնոսա 'ի ժողով[6], յորում հնարեանք բազմին գահերեց. և լինին անդ խորհուրդք պատերազմի և խաղաղութեան և կարևորագոյն իրաց աշխարհին։ Աստեան հարիւրոց և չորից արանց նախանձախնդիր է օգտի ժողովրդեան։ Յամենեցուն 'ի մի խորհուրդ միաբանել, մարթ է սահմանել իրացս՝ առանց ածելոյ յաստեան ժողովրդեան. իսկ 'ի միաբանելն, անդ սահմանին իրքն։

Ի համախումբ ժողովի թագաւորք և աւագա-

[1] Լատին մատենագիրքն Սոփեան զերկոսին զասս իշխանապետս կոչեն, որ բնիկ յոյս ջորջումն նոցա է. իսկ հելլենք թագաւորս զնոսա անուանեն։

[2] Աբիսաոս. յԶ. հատ. գիրք Բ. գլ. 11. էջ 334։ Պղտիր. գիրք Զ. էջ 493։

[3] Ստրաբոն. յԱնիբաղ. գլ. 7։

[4] Աբիսաոս. անդ։

[5] Լ. գիրք Լ. գլ. 7։

[6] Աբիսաոս. անդ։

նին յայտ առնեն վասն որոյ իրաց միաբանեցին կամ հերձան 'ի կարծիս. և մարթ է յետին քաղաքացւոյն հակառակ ամբառնալ վնռոյ նոցա, կամ կարծեաց տարախոհիցն. և ժողովուրդն տայ զվճիռն[1]։

Սմենայն իշխանութիւք, թագաւորացն և աւագանւոյն և դատաւորաց և զօրավարաց կամ կուսակալաց, ընտրութիւն սահմանին. և ամենեցուն պայմանք են իշխանութեանց յօրինեալ։ Զ զօրավարին և է թանպայման է իշխանութիւն[2]. ամենիշխան է նա 'ի գլուխ բանակին, այլ 'ի դառնալն իւրում պարտ է նմա տալ զհամար գործոց իւրոց յատենի հարիւր որերոյ, որոյ խիստ են դատաստանք[3]։

Սովին հանձարեղ և իմաստուն գործակցութեամբ այլ և այլ իշխանութեանցս, ազգն այն բազմաժողով, մեծազօր, ժիր, վրէժխնդիր ազատութեան, և խրոխտ մեծափարթամ ձոխութեամբքն, զդէմ կալաւ մինչև 'ի սպառ ձգանց բռնաւորութեան, և 'ի բազում յոյժ ժամանակաց և այսր վայելէ 'ի խաղաղութիւն՝ հազիւ առ սուղ ինչ 'ի վաղանցուկ մրրկաց աղմկեալ, որ ոչ կարացին կործանել զնախնի սահմանադրութիւն նորա[4]։

Բայց հանդերձ գերազանցութեամբն և թե-

1 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 11. էջ 334։
2 Խոսկր. 'ի Նիկոկղ. հա. 1. էջ 96։
3 Դիոդ. գիրք Ի. էջ 753։
Յուստին. գիրք ԺԹ. գլ. 2։
4 Արիստոտ. անդ։

բութիւնք էն նորա. և մի 'ի թերութեանցն այն է՝ համարել 'ի փառս զբաղում իշխանութեանց 'ի մի ոք գումարումն[1]. զի այսպէս ապա լաւ ի-ցէ յաձախել զպարտս քան ընել, և հասանել բազում աւագութեանց համարեսցի 'ի վաստակս և յարժանաւորութիւն։ Դարձեալ և այն իսկ թերութիւն է՝ հաւասար առաքինութեան մե-ծարել զձոխութիւն յընտրութեան աւագա-նոյն[2]։ Օ՛ի ուր մեծութիւնք համարին ընդ պայ-մանս ամբառնալոյ յաւագութիւն՝ չինդրին ընդ հուպ այլ պայմանք բաց յայնմանէ, և քաղաքայ-նոցն ամենայն ցանկութիւն 'ի մեթերս ընչից սահ-մանի, և կարգ իշխանութեանն մղեալ զառա-ծանի 'ի սակաւապետութիւն[3]։

Ա՛ռ 'ի կշիռ հաւասարութեան պահել զայն, հարկ համարեցաւ 'ի Կարքեդոն շնորհս ինչ սահ-մանել ժողովրդեան, և երբէք երբէք զգլխաւորս 'ի նոցանէ արձակել 'ի քաղաքս ուրեք 'ի գործ ար-քունի, որովք յաջողէ նոցա մեծանալ։ Սովին հնարիւք եկաց ցարդ հասարակապետութիւն 'ի Կարքեդոն. այլ զի սա ոչ սահմանադրութեանն է մատն, և բերէ իսկ յինքեան զարանեալ զյո-ռութիւն, բախտին ևեթ համարելի է արդասիս զյաջողութիւնն։ Այլ ևեթ երբէք ռամիկն մե-

1 Արիստոտ. յզ. հաս. գիրք Բ. գլ. 11. էջ 335։
* Ոչ է օրէն ազնուականաց 'ի վ. Հ. Ժ, ասէ Ամլոյ. բերել յանձին բազում իշխանութիւնս միանգամայն, թէպէտ և փոքունք իցեն։ (Ամլոյ պատմ. պետ. վ. Հենետ. էջ 25։)
2 Արիստոտ. անդ. էջ 334։
3 Նոյն անդ. էջ 335։

ծացեալ և զօրացեալ՝ ոչ ևս 'ի նոյն խնդիր օգտի ընդ այլ քաղաքացիս միաբանիցի, ոչ բաւեցեն այժմուս օրէնք զգէմ ունել գոռոզութեանն նորա, և եղծցի սահմանադրութիւն՝ *։

Յայսմ ամենայնի դիւրաւ է 'ի միտ առնուլ, թէ յինչ պարտ է ուշ ունել իշխանի 'ի վարել զիշխանութիւնն, և կամ թէ այսպէս հաճոյ ումեք թուեսցի ասել՝ զինչ է 'ի սահմանադրութիւնս իւրաքանչիւր ուղղիչ կարգի պետութեանն։ Ի միապետութեան է վայելուչն և պատշաճն. զի պարտ է թագաւորին ցանկալ փառաց թագաւորութեանն, և ստանալ զայն պատշաճ հնարիւք։ Ի բռնաւորութեան է անելի կեանութիւն բռնաւորի. զի ահարկութեամբ ևեթ ժառանգէ նա զաթոռն[2]։ Յազնուապետութեան առաքինութիւն. զի իշխանք 'ի նմա հայրենասիրութիւնք ևեթ փառաւորին։ Ի սակաւապետութեան մեծութիւնք. զի 'ի մեծատանց ևեթ ընտրին յանձանձիչք իրաց աշխարհին[3]։ Ի ռամկապետութեան ազատութիւն քաղաքայ-

1 Արիստոտ. յզ. հաս. գիրք Բ. գլ. 11. էջ 335։

* Ոչ յամենայն լուծն գուշակութեանն Արիստոտելի. զի յաւուրս Երկրորդի կարքեդոնական պատերազմին, իբր հարիւր ամաւ յետոյ քան զնմանատեսին, հռոմարկապետութիւն Կարքեդոնի մերձ էր 'ի կործանումն. և զլնաւոր պատճառս կործանմանն Պոլիբիոս համարի զիշխանութիւնն՝ զոր ռամկին յինքն գրաւեալ էր։ (Պոլիբ. գիրք Զ. էջ 493։)

2 Արիստ. Ճարտ. գիրք Ա. գլ. 8. հտ. 2. էջ 530։

3 Նոյն. յզ. հաս. գիրք Դ. գլ. 8. էջ 372։

նոց իւրաքանչիւր. այլ ազատութիւնս այս զրե-
թէ ամենայն ուրեք փոխի յապերասան համար-
ձակութի և չկարէ կալ՝ բայց միայն 'ի կարգ տես-
չութեանն, զորոյ երկրորդ մասն հանիւսօտու-
թեանս այսորիկ ընծայեսցէ հարևանցի զկեր-
պարան։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս գերագոյն կարգի տեսչութեան։

Այնմ զառաջնորդ ոք զաղթականաց առաջի
կայր ինձ ուսուցանել, անդուստ 'ի վերուստ 'ի
նախակրթական վարժիցն առնել սկիզբն։

Այնոյն միաբանութիւն է ժողով ազգա-
տոհմից համախմբելոց 'ի յարդարել զհասարա-
կաց բարեկենդանութիւն։ Արդ եթէ սակաւք
իցեն համախմբեալքն՝ իբր կարասցեն զդէմ ու-
նել հինից արտաքնոց. իսկ եթէ բազումք, որ-
պիսի ինչ օրինաց մարթ իցէ նոցա կալ 'ի խաղա-
ղութեան։ Որ 'ի խնդրելոյ կանգնել տերութիւն՝
այլ քաղաք, ոչ բազմութեամբ բնակչացն՝ այլ
լուութեամբ քաղաքացնոցն հզօր։ Յորչափ կարգք
կամ օրէնք զորեն յամենայն մնասունս մարմնոյն,
մի ամիտիսցես զայն. այլ իբրև հնազանդեալքն
ոչ ևս առաջի աչաց կամ ընդ ձեռամբ հրամայո-

։ Արիստոտ. յղ. հաս. գիրք Ա. գլ. 1. էջ 296. գիրք Գ. գլ. 9. էջ 349։

զայն կան, զիտեա զի զնման ինչ իշխանութեանն կորոյս պետութիւնն, և աշխարհն զնման ինչ զօրութեան իւրոյ[1]։

Մայրաքաղաք ծովեզերեայ կառուցես[2], ոչ յոյժ մեծ և ոչ կարի փոքրիկ. վայր նորա դիպող, օդք անապականք, ջուրք ստուծիչք, օգնեսցեն առ հասարակ'ի պահպանութիւն կենաց բնակչացն[3]։ Արկիրն շուրջանակի բաւական իցէ'ի բերս պիտոյից, զժուարամատոյց թշնամեաց, և յերթևեկ զօրաց քոց դիւրին[4]։ Մինչեաբերդ'ի բարձու լեցի նմա, եթէ միապետական հաճոյ թուի կարգ. իսկ եթէ ազնուապետական, ամրոցք'ի տեղիս տեղիս պատսպարան լեցին նմա յերեսաց մոլեգնութեան խուժանին։ Մի'ի քան զպատնէշն աւելի լեցի նմա ամրութիւն, եթէ ռամկապետութիւն'ի նմա հաստատեալ իցէ[5]. պարիսպք ամուրք իցեն նմա՝ բաւականք զդէմ ունելոց նորահնար մենաբեւեայիցն, որ'ի ժամանակաց ինչ հետէ վարին'ի պաշարել զքաղաքս. կէսք'ի փողոցաց նորա լայնք իցեն և ուղիղք, և կէսք անձուկք և կամակորք. առաջինքն'ի զարդ, յետինքն'ի փախուստ'ի յեղակարծ յարձակմանց[6]։

Կառուսցես նաւահանգիստ'ի բացեայ՝ երկայնաձիգ ոլմովք ընդ քաղաքն կցորդեալ, որ-

[1] Արիստոտ. յզ. հաս. գիրք Է. գլ. 4. էջ 430։
[2] Նոյն անդ. գլ. 5. էջ 431։
[3] Նոյն անդ. գլ. 11. էջ 438։
[4] Նոյն անդ. գլ. 5. էջ 431։
[5] Նոյն անդ. գլ. 11. էջ 438։
[6] Նոյն անդ.

պիսիք բազում ուրեք են յԱղլաղայ. զի 'ի պա-
տերազմի դիւրաւ կարասցես հասանել յօգնու-
թիւն նիզակակցաց քոց, և 'ի խաղաղութեան՝
բնակեցուսցես անդ զամբոխ նաւաստեաց օտա-
րաց և գաւառայնոց, որոց համարձակութիւն և
ազահութիւն զեղծուցանիցեն զբարս քաղաքայնոց
'ի բնակակիցս լինել ընդ նմա։ Այլ շահավաճառ
քո սահմանեսցի 'ի փոխանակել զաւելորդս և եթ
բերոց երկրի քո ընդ կարեւորս որ պակասեն
քեզ, և նաւաստականութիւն քո յահարկու-
թիւն և եթ մերձակայ ազգաց, և զի յօգնութիւն
կարդասցեն զքեզ՝։

Ի բնակել գաղթականիդ՝ օրինաց պէտք են
նոցա. և տացես նոցա օրէնս հիմնականս 'ի սահ-
մանադրութիւն, և քաղաքականս առ 'ի հաս-
տատել 'ի նոսա անշարժ զխաղաղութիւն։

Ուսցիս զազգի ազգի կարգս պետութեանց,
որ յօրէնադրաց մերոց սահմանեալս, և որ մնա-
ծեալ յիմաստասիրաց։ Այնք 'ի կարգաց աստի
կարի անկատարք են, և կէսք բազում իրաց կա-
րօտք 'ի կատարումն։ Այնքաներեանց համեմա-
տել զդիտաւորութիւն առաջնոցն ընդ արդիւնս
իրացն, և արիագոյն ևս խրախուսեսջիր զդէմ
ունել հրապուրանաց յետնոցն։ Այնմ զօրու-
թեամբ հանձարոյ երկնեսցես 'ի մտի սահմանա-
դրութիւն ամենակատար, զերազանի հին հա-
ւանեսջիր բանի՝ զի անհնարին է այսմ յարդիւնս

՝ Արիստոտ. յՂ. հատ. գիրք Է. գլ. 6. էջ 432։

գալ. և կամ թէ գալի էս իցէ յարդիւնս, գուցէ ոչ ամենայն ազգաց պատկանիցի՝։

Ինարելազոյն կարգ տեսչութիւն իւրաքանչիւր ումեք յազգաց այն է, որ համեմատի բարուց նոցա և կարօտութեան, և նահանգին յորում բնակին, և բաղում մյլ էս սեփականեալ նոցին հանգամանաց։

Բազում և պէսպէս իրօք զանազանեաց բնութիւնն զազգս սփռեալս ընդ երեսս երկրի։ Հիւսիսաբնակք և եւրոպացիք կորովիք են, այլ վերջացեալք՝ ի գիտութենէ և՝ ի ճարտարութենէ. որով հարկ է՝ զի իցեն ազատք և անընդելք ջոյ օրինաց և անբաւականք իշխելոյ մերձակայ ազգաց։ Արիացիք զամենայն աջողութիւնս մտաց և զճարտարութիւնս արուեստից ժառանգեն, այլ ծայրագոյն վատութեամբն դատապարտին՝ ի ծառայութիւն։ Իսկ Յոյնք՝ ի մէջ երկաքանչիւրոցն բնակեալք, ճոխացեալք ամենայն բարեմասնութեամբք յոր նոքա պանծան, այնպէս զքաջութիւն ընդ գիտութեան կցորդեալ և զնախանձ օրինաց ընդ սիրոյ ազատութեան միաւորեալ յանձինս ձգեալ բերին, զի մարթի է նոցա նուաճել և վարել զտիեզերս։ Այլ՝ ի նմին իսկ՝ ի միում դաւառի քանի խառնութեամբ երանելոց ոչ այլակերպել բնութիւն զերևելագոյն զայսոսիկ նկարագիրս։ Օր և յազգս Յունաց կէսք հանճարո

զմիմեանսիր. Են այլք որք 'ի կրկին հաւատարու-
թեան զպայծառ առաքինութիւնքս բերին'։

Որպէսզի հետազօտելով զբարս մարդկանն
որոց առաջնորդէ, խելամուտ լիցի թէ իցէ ընկալեալ նոցա 'ի բնութենէ և կամ թէ մարթիցի նոցա 'ի հրահանգաց իւրոց ընդունել զիտութիւն բառական առ 'ի միտ առնուլ զպատուական ութիւն առաքինութեան, և զօրութիւն և եռանդն առ 'ի նախամեծար առնել զայն քան զամենայն. և ըստ մեծութեան առաջարկութեանն առաւել ևս պարտ է նմա խոկալ ուսանել և երկբայել. զի և վայրացն ինչ հանգամանք բառականք են երբեմն 'ի սահմանել զերկմիտ խորհուրդս նորա։ Զի զոր օրինակ եթէ երկիրն՝ յոր գաղթական նորա գնայ բնակել, քաջագէպ իցէ 'ի մշակութիւն, և խոշոր անկոխելիք առաջի կայցեն հաստատելոյ այլ ինչ կարգ տեսչութեան, մի երկմտեացի հաստատել ընկերհաղտութիւն։ Զգի երկրագործ քան զամենայն ազգս գեր 'ի վերոյ է. ոչ լքեալ թողցէ նա զվաստակս իւր՝ որոց պարտ է նմա առընթեր կալ, և ոչ գայցէ 'ի հլսապարակ պարապել 'ի վէճս՝ զոր մնուցանէ դատարկութիւն, և թեկն ածել զփառաց՝ զո-

1 Հիպպոկր. յդ. օգոց, յօդ. 39. հա. 1. էջ 350։ Արիստոտ. յդ. հաս. գիրք Ի. գլ. 7. էջ 433։ Պղատ. յդ. հաս. գիրք Դ. էջ 435։ Անոնիմ. առ. Փոտայ, էջ 1320։

2 Արիստոտ. յդ. հաս. գիրք Դ. գլ. 6. էջ 370. գիրք Զ. գլ. 4. էջ 416։

բոյ չէ ինչնեմն փոյթ[1]։ Լոյս աւագանին առաւել մեծարեալ, ոչ ևս կայցէ նշաւակ անձնահաճ կամաց յանդուգն և անյագ խուժանի գործաւորաց և վարձկանաց։

Պարձեալ և սակաւապետութեան 'ի ձահ է հաստատել 'ի տեղիս, ուր կարևոր է և հնարաւոր ունել հեծեալս բազմագունդ։ Օր ի որով հետև հզօրագոյն պատսպարան պետութեանն է անդ այրուձին, հարկ է բազմաց 'ի քաղաքացոց ունել երիվար, և բաւական լինել 'ի ծախսն՝ կարևորս հեծելազին. որով խուժն փարթամացն զօրանայ 'ի վերայ չքաւորաց[2]։

Այնչափ յառաջ ևս մատուցեալ 'ի քնին առցուք որ ինչ իրաւունք իցեն քաղաքացոյ, և որ ինչ հանգամանք 'ի նմա խնդրին։

Ի տեղիս ուրեք բաւական է առ 'ի ժառանգել զքաղաքացոյ կարգ՝ քաղաքացոյ հօր և մօր լինել որդի, այլուր 'ի վերուստ ևս 'ի հայրենի իրաւանցն խնդրի ժառանգութիւն. այլ ըստ այսմ՝ առաջինք յանիրաւի զտանին համարեալ քաղաքացիք. զի եթէ նոցա չէին իրաւունք քաղաքացոյ, որպէս որդւոց իւրեանց թողին զայն 'ի ժառանգութիւն[3]։

Ոչ շրջապատ քաղաքի և ոչ սահմանք պետութեան տան բնակչաց զպարծանս զայս. զի եթէ

[1] Արիստոտ. յղ. հաս. դեբք Զ. գլ. 4. էջ 417։
[2] Նոյն անդ. գլ. 7. էջ 420։
[3] Նոյն անդ. գեբք Գ. գլ. 2. էջ 340։

այսպէս էր՝ հանդիսատպատիւ աւագանւոյն ըստրուկք գտանէին[1]։ Արդ եթէ ստրուկք զքաղաքացւոյ ունել կարդ ոչ կարէն, չկարացէն և ամենեքին որ 'ի ծառայութեան նմանեաց իւրեանց կան, կամ որք 'ի ձեռակերտս պարապէն 'ի սպասաւորութիւն հասարակաց[2]։ Արպաքէն քաղաքացիք համարին նոքա առ բաղումն 'ի հասարակապետութեանց, և մանաւանդ 'ի ծայրագոյն ռամկապետութեան. այլ 'ի բարեկարգ պետութեան ոչ է պարտ տալ նոցա զգեղեցիկ պարծանսն։

Որ իցէ ապա Ճշմարիտ քաղաքացին, այն որ ազատ յամենայն զբաղանաց՝ միումն ուշ ունի 'ի սպաս հայրենեացն, և ձեռնհաս 'ի յանձանձանս իրաց աշխարհին և յաւագութիւնս և 'ի պատիւս, և միանգամայն ասացեալ՝ 'ի գերագոյն իշխանութիւն։

Զատն որոյ և ոչ մանկանց և ծերոց զառամելոց պատկանի տիրապէս անուանս այս, և ոչ ձեռագիտաց կամ մշակաց և կամ ազատելոց ստրկաց 'ի Ճահ պատահէ[3]։ Զմին իրի և չիք ուրեք քաղաքացի, բայց 'ի հասարակապետութեան[4]. թէպէտ և հաղորդականք են անդ քաղաքացւոյ իրաւունք և այնոցիկ, որոց մարթ է չտալ զայնս ըստ մերոց կանոնաց։

1 Արիստոտ. յԺ. հաս. գիրք Գ. գլ. 1։
2 Նոյն անդ, գլ. 5. էջ 343։
3 Նոյն անդ, գիրք Գ. գլ. 4 Ե. գիրք Է. գլ. 9. էջ 435։
4 Նոյն անդ, գիրք Գ. գլ. 1. էջ 339։

Մինայն վաստակ որ խափանէ զպարապու�մն յօգուտ Հայրենեաց, յոր միայն պարտ է ուշ ունել, արգելեալ լինի քաղաքացոյ 'ի քաղաքիդ։ Չէ մի ումեք զմեծարանաց անունդ տացես, բայց միայն որոց 'ի մանկութենէ զենուորին 'ի վերայ Հայրենեաց, և յաւագոյթ հասակին խորհրդականութեամբ օգնեն նմա[1]։

Յսու օրինակաւ քաղաքացիք քո լիցին տիրապէս մասունք քաղաքին. կարևորագոյն յաճախմանութիւն նոցա լիցի հասանել յաւագութիւնս, դատել զդատաստան իւրաքանչիւրոց, և թուարկութիւն յատեան աւագանւոյն կամ 'ի ժողովս հասարակաց[2]։ Չէ յառաջմանութիւն նոցա այս յենուցու 'ի հիմունս օրինաց. զի օրէնք են դաշն հաստատութեան իրաւանց քաղաքացոյց[3]։ Բ. Առաջին պարտ նոցա լիցի բաւականութիւն 'ի հրամայել և 'ի հնազանդել[4]. և լցցեն զայն ստիպեալք 'ի սահմանադրութենէ, զի սա միայնոյ է տալ զառաքինութիւնս անկաւորս քաղաքացւոյ կամ զհայրենասիրութիւն։

Գ. Յոքիկ տան մեզ 'ի միտ առնուլ զկարգ հաւասարութեանն, զոր պարտ է օրէնադրին 'ի քաղաք անդր մուծանել։

Լակ 'ի սակաւապետութեան չէք և ոչ մի ինչ հաւասարութիւն. այլ ընդ հակառակն զանա-

[1] Արիստոտ. յդ. հաս. գիրք Է. գլ. 9. էջ 435։
[2] Նոյն անդ. գիրք Գ. գլ. 1. էջ 339։
[3] Նոյն անդ. գլ. 9. էջ 348։
[4] Նոյն անդ. գլ. 4. էջ 342։

զանութեամբ բախտի զանազանին անդ քաղաքացիք 'ի միմեանց, նմին իրի և առագութիւնք և պատիւք համարին մեծութեանց անկաւորք[1]։ Ի ռամկապետութեան հաւասարս միմեանց համարին զանձինս քաղաքացիք, զի ազատք են առ հասարակ։ Այլ քանզի ազատութիւն նոցա անուն ունայն է՝ անկցորդ 'ի ճշմարտութենէ իրաց, հաւասարութիւնն զոր վեր 'ի վերոյ բերեն յանձինս՝ տապալէ զամենայն կարգ հպատակութեան։ Ոչ՝ յոտի յաճախեն անդադար 'ի նոսա աղմուկք. 'ի սակաւապետութեան՝ զի խուժանն զրկանս իւր համարի զանհաւասարութիւն[2], և 'ի ռամկապետութեան՝ զի դժպհի է մեծատանց հաւասարութիւնն նուաստացուցիչ նոցա։

Ի նախամանութիւնս որ հաստատեն կամ եղծանեն զհաւասարութիւն 'ի քաղաքացիս, են երեք ինչ նկատելի. ազատութիւն, առաքինութիւն և մեծութիւնք։ Ռեմ զազնուականութիւն, որ բովանդակի 'ի սոսա այնու՝ զի է յայծորդութիւն մեծութեանց կամ առաքինութեան 'ի միում ուրեք ազգատոհմի[3]։

Ոչիք ինչ հակառակ համարձակութեան որպէս զազատութիւն. յամենայն կարգս պետութեան իւրաքանչիւր ոք է և պարտի գոլ հպատակ. բայց

1 Ընթատոս. յԼ. հաս. գիրք Գ. գլ. 9. էջ 348. գիրք Ե. գլ. 1. էջ 385։
2 Նոյն անդ, գիրք Ե. գլ.
3. էջ 389։
3 Նոյն անդ, գիրք Դ. գլ. 8. էջ 373։

միայն զի ուրեք հպատակեն մարդկան, և այլուր
օրինաց։ Վասնզի ազատութիւն ոչ այն է՝ զի ա-
բասցէ զոք զամենայն որ ինչ և կամի, որպէս վի-
ճեալ սնդին ռամկապետականք ոմանք՝, այլ այն՝
զի ոչ այլ ինչ արասցէ զոր քան զոր կամին օրէնք՝
ազատութեան իւրաքանչիւր ուրուք պահապանք։
Այնուհետև երկաքանչիւր իսկ կարգք քաղա-
քացեաց առ հասարակ լեցին ազատք։

Զանց այլ ևս երկարելոյ՝ որ յաղագս առաքի-
նութեան զանս, յաւելից՝ զի որովհետև մար-
թի քաղաքացեաց հասանել՝ ի գերագոյն իշխա-
նութիւն՝ ամենեցուն փոյթ լեցի պատկառ կալ
առաքինութեան, և՝ ի նոյն նախանձ հայրենա-
սիրութեան վառիլ։ Այլ դարձեալ ըստ չափոյ ա-
ռաքինութեանն, լեցին առաւել կամ նուազ ա-
զատք։

Իսկ յաղագս մեծութեանց, յորոմք քան թէ
սակաւք յիմաստասիրաց չկարացեալ խուսափել
՝ի դիւրապատիր խաբէութենէն, ուշ կալան՝ ի
զեղծումն որ սաստկագոյն՝ ի դիմի հպկանի
ախորժակաց նոցա և կրից, և կարծեցին զի՝ ի
խղել զայն արմատաբի՝ ինքնին ամենայն կարգք
պետութեանն ուղղեսցին։ Հնոց ոմանց օրէնս-
դրաց՝ ի ձեռնարկելն յուղղութիւն ածել զազգս,
՝ի դէպ թուեցաւ անդէն՝ ի սկզբան հաւասարա-
բաժին առնել զինչս յամենայն քաղաքացիս։ Այմին
իրի և ոմանք յարդի օրէնսդրաց, ընդ որս և Փա-

՝ Արիստոտ. յՀ. հաս. գիրք Ն. գլ. 9. էջ 402։

զնաս քաղկեդոնացի, եղին զանխոխսելի հաւատարութիւն ընչից հիմն սահմանադրութեան իւրեանց։ Եկեաք պատուիրեն՝ մեծատանց ընդ չքաւորս եւեթ խնամեցեալ, և դատերաց նոցա բերել օժիտս, իսկ սոցայոցն ոչ եւս. այլք զի մի օրինն ելցի ուժեաք յանձխսել զնչա քան զօրինադրեալն չափ։ Լ.ԼՀ'ի սահմանել զչափ ընչից աղգատոհմից, հարկ էր և զթիւ որդւոց նոցա սահմանել։ Ել օրէնքն արգելականք 'ի կշիռ հաւասարութեան ունին զբախտս իւրաքանչիւրոց, այլ պարտ է հաստատել 'ի նոսա ըստ կարի զանտեսութիւն իւրաքանչիւր օգտին, և այնպէս զկարգ իրացն ուղղել՝ զի լաւք չկամիցին յանձխսել զընտացուածս իւրեանց, և չարք չկարասցին '։

Լ.յետհետև մարթ է քաղաքայնոց քոց զանազանել 'ի միմեանց մեծութեամբք. այլ զի զանազանութիւնս այս ոչ ինչ խտիր 'ի ներքս ածէ 'ի բաշխս աւագութեանց և պատուոյ, ոչ բարձցէ զհաւասարութիւնն որ կարևոր է 'ի նոսա։ Հաւասարք իցեն, զի օրէնքն եւեթ իշխեսցին նոցա, և ամենեցուն անխտիր յանձն լիցի գերապանծ հոգ նպաստամատոյց ընկերս 'ի խաղաղութիւն և 'ի բարեկենդանութիւն հայրենեաց։

Դու ինքնին տեսանես, զի կարգ տեսչութեանն՝ զերոց տամ քեզ զկերպարան, հանգոյն ինն է ռամկապետութեան, այլ են ինչ 'ի նմա

1 Արիստոտ. յՊ. հաս. 2 Նոյն անդ. գիրք Գ. գլ. գիրք Բ. գլ. 7. էջ 323 և 324։ 4. էջ 341. գլ. 9. էջ 349։

որովք կցորդի և ընդ սակաւապետութեան։ Վանդի խառն իմն լիցի սա, և այնպէս յօրինեալ, զի դժուարին իցէ կոչել նմա անուն. այլ ռամկապետականք և սակաւապետականք գտցեն 'ի նմա զարգասիս պետութեանն զոր նախամեծար առնեն, առանց դժպատեհութեանց նորա՝ յորմէ սարտնուն [1]։

Խառնուածս այս գեղեցիկ յայտնագոյն ևս յերևան գայցէ 'ի բաշխս երից իշխանութեանցն, յորս հաստատի կարգ հասարակապետութեան։ Ռաջինն որ է օրինադրական, 'ի համախումբ ժողով ազգին կացցէ. երկրորդն որ 'ի կատարումն օրինացն պատկանի, աւագանւոյն լիցի անկ. իսկ երրորդն՝ իշխանութիւն դատելոյ, յանձն լիցի ատենից արդարութեան [2]։

Ա. Խաղաղութիւն և պատերազմ, ուխտք նիզակակցութեան, օրէնք, ընտրութիւն աւագանւոյ, պատուհաս քրէական յանցանաց, պահանջել զհամար 'ի վերակացուաց գործոց կարևորաց, այս ամենայն 'ի դատաստան ժողովրդեան լիցի ապաստան. զի դժուարախաբ է, յորժամ չիցէ յուզեալ 'ի հերձուածոց։ Ռզատ են յայսոսիկ դատաստանք նորա, և ոչ զեղծեալք զօշաքաղութեամբ, զի անհնար է կաշառել զազգ մի ողջոյն. խոհականք են, զի ռամկին զարմանալի իմն հանձար է ընտրելոյ զարս իմաստունս և առաջ-

[1] Արիստոտ. յղ. հաս. գիրք Դ. գլ. 9. էջ 373։ [2] Նոյն անդ. գլ. 14. էջ 379։

քինիս, և գիւրութիւն զարմանալի 'ի միաբանել զկարծիս նոցա, 'ի գնալ զհետ այնոցիկ, և յուղղել իսկ զայնոսիկ[1]։

Այլ ձիոք համախուռմբ ժողովոյ աղգին լցին անեղծք, բայց միայն 'ի պատժականացն. զի 'ի դատաստանս յանցաւորաց եթէ ժողովին անպարտ զամբաստանեալն արձակիցէ՝ վճարեսցի դատն. իսկ 'ի դատապարտելն գնա, հաստատեսցի վճիռն կամ եղծցի յատեանս արդարութեան[2]։

Ա. 'ի բաց կացուցանել 'ի հասարակաց ժողովոյ զսինլքոր խուժանն չքաւոր և անարուեստ, որ զքաղաքացւոյ ունելով կարգ՝ կարասցէ մնանել անդր, հարկ լցի ապաստանել 'ի հաս կամ յերևելի պայման մեծութեանց իւրաքանչիւրոց։

Ի սակաւապետութեան բազում յոյժ խնդրի հաս, մինչև փարթամագունիցն ևեթ մնանել 'ի համախուռմբ ժողով աղգին։ Ի ռամկապետութիւնս ուրեք չիք բնաւ. և յայլս 'ի նոցանէ այնչափ դոյզն ինչ, զի գրեթէ ոչ որ արտաքսի 'ի ժողովոյն։ Ահմանեսցեն դու հաս այնպիսի, զի առաւելագոյն և ողջախոհագոյն մասին քաղաքնոց լցի իշխանութիւն թուարկութեան 'ի խորհուրդս հասարակաց[3]։

Ի քանզի հասք չեն միշտ համաչափ՝ այլ

1 Արիստոտ. յդ. հաս. գիրք Գ. գլ. 11. էջ 350 և գիրք Դ. գլ. 15. էջ 356. գիրք Դ. գլ. 14. էջ 381։

2 Նոյն անդ, գիրք Դ. գլ. 14. էջ 381։

3 Նոյն անդ, գլ. 9. էջ 373։

փոփոխին ըստ գնոց պարէնից, և փոփոխմունքս այսոքիկ բաւական եղեն երբեմն 'ի յեղափոխել զկարգ պետութեան, տեսջիր երբէք երբէք նորոգել զայնս, և համեմատել ըստ պիտոյից ժամանակին ընդ գոյս իւրաքանչիւրոց, և ընդ առաջարկեալ ուշ նպատակիդ [1]։

Բ. Օվ՛ինաս համախումբ ժողովոյ ազգին պարտ է կատարել աւագանւոյն, որոց ընտրութիւն, թիւ, գործ և ժամանակ իշխանութեան համեմատեսցի ընդարձակութեան հասարակապետութեան և կարգի տեսչութեանն։ Այսմանէ, որպէս գրեթէ և զայլ ամենայն իրաց զորոց Ճառեցաքս, խնդիրս բաղումս մարթ է առնել [2]. այլ մեր թողեալ զամենայն, զերկուց կարևորաց ասասցուք, որ են ընտրութիւն և թիւ աւագանւոյն։ Որ 'ի յէական պայմանաց սակաւապետութեան է՝ ընտրութեամբ ըստ հասից սահմանել զաւագանին, իսկ ռամկապետութեան՝ վիճակաւ սահմանել զնոսա անխտիր, առանց հայելոյ 'ի գոյս [3]։ Յառաջնոյն կալցիս զընտրութիւնն, զի այսու օրինակաւ առաւել յաջողեսցի քեզ ունել աւագանի գիտուն և առաքինի. և ըստ օրինակի երկրորդին՝ մի ըստ հասից արասցես զընտրութիւնն, զի չիք առ քեզ վտանգ՝ թէ անենչան և ապիկար մարդիկ ամբարձցին յաւա-

[1] Արիստոտ. յղ. հաս. գիրք Ե. գլ. 6. էջ 395. գլ. 8. էջ 398։

[2] Նոյն անդ. գիրք Դ. գլ. 15. էջ 381։

[3] Նոյն անդ. գլ. 9. էջ 373։

դութիւն։ Իսկ յաղագս թուոյ առագանուցոյն, լաւագոյն է յաճախել զերեխանութիւնսն՝ քան ընդարձակել զսահմանս իւրաքանչիւրոցն[1]։

Գ. Նոյն խառնուած կարգաց պահեսցի և յատեանս դատաստանաց։ Ի սակաւապետութեան տուժին մեծատունքն՝ հրաժարեալք յատենակալութենէ, և աղքատաց հանապազորդելոց յատեանս չիք ինչ վարձ. իսկ ի ռամկապետութեան հակառակն սորին գործի։ Պտու ստիպեսցես ըզփարթամն ի հանապազորդել, տոյժս ի վերայ արկեալ հրաժարելոց. իսկ զչքաւորս ազատ ապրասցես յատենակալութիւն[2]։

Այսու օրինակաւ զերկոսին ևս դասս քաղաքացոյց յորդորեալ ի խնդիր օգտի պետութեան, Ջանասցիս ասա բառնալ ի սրտէ նոցա զնախանձ ընդդէմ դժնդակ հակառակութիւնն՝ որ զբազումն ի հասարակապետութեանց Յունաց կոծանեաց։ Որ և այս ևս մի ի կարևոր մասանց օրինադրութեանս մերոյ է։

Ամի խնդրեսցես հաճել զպահանջմունս, յորոց ոչ երբէք դադարեսցեն փառամոլութիւն և ախտք երկաքանչիւրոց խմբիցն։ Չիք սոյն հնար դադարեցուցանելոյ զայս, բայց նախասահմանել առնել զկամս միջակայնոց*, և զբարացուցանել

[1] Արիստոտ. յդ. հաս. գիրք Գ. գլ. 15. էջ 382։

[2] Նոյն անդ. գլ. 9. էջ 373։

* Միջակայնոցք խնդանայ Արիստոտել զայնոսիկ, որ ոչ փարթամք և ոչ չքաւորք են. հասանի մասն ոչիւր զասացեալս նորա զայսմանէ ընդ քանս Պլատոնայ՝ ի սկիզբն վարուց Սոլոնի։

զնա որչափ հնար է՝. զի 'ի խմբի աստ առաւել քան յայլն լիցի քեզ գտանել զանեղծութիւն բարուց և զլաւութիւն։ Հաճ և հաւան է նա ընդ բախտ իւր, և ոչ կրէ և ոչ կրեալ տայ այլոց զարհամարհանս զոռոզութեան՝ զոր մեծութիւք ազդէն 'ի սիրտ, և ոչ զմխիթանս՝ զոր ծնանի կարօտութիւն։ Ի քաղաքս մեծամեծս, վասն բազմանդամից գոլոյ 'ի նոսա միջակայնոց, նուազ քան 'ի փոքունս յուզին խռովութիւնք. և ռամկապետութիւն, վասն զի մեծարէ զնոսա, երկապատէ և քան զսակաւապետութիւն՝ որ ոչ ինչ ակն ածէ 'ի նոցանէ[1]։

Ռաւելագոյն մասն գաղթականիդ քո լիցի խումբս այս պատուական, և ամենայն աւագութեանց ընդունականս օրէնք քո կացուցեն զնոսա, և իմաստուն կարգօք պահեսցես հաստատուն 'ի նոսա զիրգս և զսեր չափոյից, և տացես իշխելնոցա 'ի հրապարակի։ Օրութիւն նոցա պահեսցէ զպետութիւնն 'ի խորամանկ զոռոզութենէ մեծատանց՝ որ անընդելք են հնազանդութեան, և 'ի յանդուգն զոռոզութենէ աղքատաց՝ որ անկարողքն են 'ի հրամայել։ Որով ըստուարագոյն մասն ազգին սերտեալ ընդ պետութեան, ոգւովք չափ զուն գործեսցէ 'ի հաստատութիւն նորա. որ է հիմն և հաստատագոյն

[1] Արիստոտ. յղ. հաս. Եւրիպիդ. 'ի յաւել. տող 238։ Գիրք Դ. գլ. 11. էջ 376։ [2] Արիստոտ., անդ, էջ 376։

փորձ բարոք սահմանադրութեան՝։

Յամենայն հասարակապետութիւնս քաղաքացի կարի յոյժ զօրացեալ, ինասապարտ գտանի։ Լաթէ ոչ զօրեսցեն օրէնք քո խափանել զնա բաքանչիւր որ՝ ի խակելոյ մեծութիւնս անչափ, և՝ ի յաձախելոյ զնրև կուսակիցս յահարկութիւն, ՝ի խեցեկոյտ վՃիռս կամ՝ յաքսոր ելը ապաստան, և կալցես զնա՝ ի բացեայ զանքանի մի։

Խեցեկոյտն վՃիռ դեղ է սաստիկ, և թերևս անիրաւ խակ՝ ի կարի յոյժ յաձախեն՝ ի վրէժխնդրութիւն իւրաքանչիւրոց. այլ երաւացի ցուցեալ մեծամեծ օրինակօք և վկայութեամբք, և միակ հնար փրկութեան աշխարհին՝ ի դէպս յայսոսիկ։ Կայց եթէ յարիցէ որ՝ որ գերազանց առաքինութեամբքն և եթէ յինքն պարուրեսցէ ըզսիրտս, ապաքէն արդարացի և ս է փոխանակ տարբագրելոց զայնպիսին՝ կացուցանել զնա յաթոռ[2]։

Կաղաքացիք, որպէս յառաջ ասացի, լցցին քեզ մանկտին՝ որ զօրութեամբ սպասաւորեսցեն հայրենեաց, և ծերակոյտն՝ որ յետ օգնելոյ բազկաւ, ուղղէ խորհրդականութեամբ զՀայրենեսին։

Ի յետնոցս յայսցանէ կացուցցես զքուրմս. զի ոչ է արժան եթէ ձեռք՝ ի նիւթական և՝ ի ծառայական վաստակս սովորեալք՝ մատուցցեն զից զպաշտօն ազգի ազատի[3]։

1 Ալիսատոս. յՀ. հաս. գլուխ Դ. գլ. 12. էջ 377. գլուխ Ե. գլ. 9. էջ 400։ 13. էջ 354. գլ. 17. էջ 361։

2 Նոյն անդ, գլուխ Դ. գլ.

3 Նոյն անդ, գլուխ Ի. գլ. 9. էջ 436։

Սահմանեսցես Ճաշ հասարակաց. զի չիք ինչ դիպողագոյն 'ի պահել զմիաբանութիւն 'ի քաղաքացիս [1]։

Օ զիՃակս բաժանեսցես յերկուս. զկէս 'ի տպաս աշխարհին, և զմիւս կէսն 'ի պէտս իւրաքանչիւրոց։ Բազմինն նուիրեսցի 'ի պաշտամունս կրօնից և 'ի Ճաշ հասարակաց, իսկ զերկրորդն ժառանգեսցեն այնոքիկ միայն՝ զորս 'ի կարգ քաղաքացւոց դասեցի. և զերկաքանչիւրն մնակեսցեն ստրուկք գերեալք յայլ և այլ ազգաց [2]։

Յարմարեալ զկարգ պետութեան, կազմեսցես ապա զյօրինուած քաղաքական օրինաց՝ պատկանելով բոլորին 'ի հիմնական օրէնսն, և ամրագոյնս զնոսա սնդելով։

Մի 'ի կարևորաց լեցին օրէնք ամուսնութեանն։ Ամուսնաց մի անհամեմատս գոլ միմեանց տիրոջք [3]. զի աստի առաւելապէս ծնանին դժտութիւնք և դառնութիւնք 'ի մէջ նոցա։ Մի գեռահասակս յոյժ լինել նոցա, և մի անցեալս հասակաւ. զի աստի առաւելապէս քաջատոհմութիւն ազգի մարդկան ժանտանայ։ Ամուսնացեալքդ զուարթատենամենիւք ամուսնացին, և ուստերքդ զերեսուն և եօթնամենիւք [4]։ Ի յեղյեղակս ձմերայնոյ հարսանիք նոցա կատարեսցին [5] *։ Օրէն լեցի արկանել

[1] Արիստոտ. յդ. հաս. գիրք Է. գլ. 70. էջ 436։
[2] Նոյն անդ. էջ 437։
[3] Նոյն անդ. գլ. 16. էջ 445։
[4] Նոյն անդ. էջ 446։
[5] Նոյն անդ.
* Վարգենեան 'ի Ճառն զոր յամին 1772 խօսեցաւ 'ի լուր

'ի բաց զտղայս՝ որ տկար կազմածոյ 'ի ծնէ վի-
ճակիցին, և որոց խեղութիւն ինչ երևելի իցէ։
Լինէ սարսռուցու յայտմանէ բնութիւն աղջկին,
թիւ մանկանց աղգատոհմից իւրաքանչիւր սահ-
մանեսցիր. և եթէ ոչ կայցէն ամուսինք յօրէնսն,
անցուսցէ մայրն զտղային դեռ ևս անմկար։ Խա-
փանեսցիր խստիւ զշնութիւն, և պատուհասք
սատակագոյնք շինցուսցեն զփառս անարգողաց զե-
ղեցիկ զուգութեանն։

Լոյս ապա ընդարձակէ Լուսիստոտել զանս իւր
յաղագս դատիարակութեան քաղաքացւոց, ա-
ռեալ զնա 'ի խանձարրոց, և ածեալ ընդ ամե-
նայն հատակս կենաց, ընդ այլ և այլ գործս հա-
սարակապետութեան, և ընդ ամենայն յե-
զանակս կցորդութեան նորա ընդ այլս։ Ա՛ռա-
ք և զգիտութեանց՝ յորս պարտ է մտաց նո-
ցա կրթել, և զառաքինութեանց՝ որոց պարտ
է 'ի հոգւոջ նորա տարրանալ. և մի ըստ միոջէ
'ի կարգ արկեալ զպարտս նորա, ցուցանէ նմա
կարգաւ և զօրէնս՝ որ 'ի կատարումն այնոցիկ
տիպէն զնա*։

կաՀառայն գիտութեանց 'ի Հայաստան, եցոյց չորեքտասանա-մեայ փորձիւք, զի առաւել քան յամենայն ամիսատարւոյն սեպհականութիւն ինքն ծնունդք։ (Լուսագիր Գաղղիոյ 1772. Օ. գլուխ. 28։)

1 Լուսիստոտ. յԼ. հատ. գիրք Ի. գլ. 16. էջ 447։

* Ճառս այս մանրապատում է 'ի միջի, այլ յառաջնոց գլխոց ուղիղորդ գրոցն հասարակապետութեան մարդեկ գուշակել զկարգն, զոր Ա-րիստոտել 'ի լուսին մատանին երևի կալեալ։

Մ.ՀԱՒԱՍԻԿ առաջի արարի ինչ ինչ 'ի մտաածութեանցն Քրիստոսելի յաղագս գերագունին 'ի կարգս առաջնորդականս։ Ալ երագոյն և ըզ-Պղատոնին 'ի նեբրս ածի զիմաստս *, և զսահմանադրութիւնն Իկուրգեայ ** և զՍողոնի ***։ Լաւ այլք ևս 'ի մատենագրաց յօրէնադրաց յիմաստասիրաց, 'ի Հարտասանից և 'ի քերթողաց յայտ արարին զիմաստս իւրեանց զկարևոր խընդրոյս. այլ ո՞ կարասցէ առանց ծանրատաղտուկ ճանձրութեան բացատրել զազգի ազգի կարգս տեսչութեան զոր յօրինին, և զազամխուսն վՃիռս զոր տան, և զինդիրս զոր յուզին։ Զ՝ատ լոյսի մեզ աստանօր համառօտել զիմաստս յոր ամենեքին միաբանին, և կամ՝ որ նորաձևութեամբն արժանի գրոցս յիշատակի են։

Ոչ Քրիստոսել միայն գովէ զՊատաւորութիւն, այլ և բազմազոյնք յիմաստասիրաց խոստովանեցան զգերազանցութիւն կարգիս այսրիկ, կէսք ըստ քաղաքաժողով միաբանութեան նկատեալ զայն, և կէսք ըստ հանրախարհական կարգի տիեզերացս։

Առաջինք այսպէս իմաստասիրին. Գ՝ուղեցկագոյն 'ի սահմանադրութիւնս այն է, ուր միոյ ուրուք կալեալ զիշխանութիւն՝ վարեսցէ ըստ օրինաց սահմանելոց իմաստութեամբ՝, ուր իշ-

* Ի ԼԳ. գլուխ գրոցս։ և 'ի գլուխն ԺԵ։
** Ի ԼԺ. գլուխ գրոցս։ ։ Պղատ. 'ի քաղաքավար.
*** Ի Նախաշաւիղ գրոցս, հտ. 2. էջ 314 և 302։

խանն գեր 'ի վերոյ հնազանդելոյն կացեալ գի-
տութեամբք և առաքինութեամբք և զօրու-
թեամբ [1], զկոչ 'ի մտի՝ զի և ինքն հանգոյն օ-
րինաց 'ի բարեբաստութիւն և եթ ժողովրդեան
տահմանեալ է [2]. ուր կարգ պետութեանն ահար-
կու և մեծարոյ է նեղբոյ և արտաքոյ, ոչ միայն
անյեղ լի խնամտիւք, գաղանութեամբ խորհը-
դոց և արագութեամբ գործոյն [3], այլ և ուղղու-
թեամբ և հաւատարմութեամբ. որպէս զի վստա-
հել ամենեցուն 'ի բանս թագաւորի առաւել
քան յերդմունս այլոց [4]։

Խակ յետինք յաւելուն. Լ. մենայն ինչ յէիցս
ածէ զմեզ 'ի միութիւն. էն գերաբուն վարէ
զտիեզերս [5], և զունդք երկնաձեմք 'ի մէն մի
հոգւոյ վարին. պարտ է ասպա և պետութեանց
երկրի ուղղել 'ի մէն միոյ իշխեցողէ, որ բազմիցն
յաթոռ առ 'ի պահել յերկրի իւրում զյարմա-
րական բարեկարգութիւնն որ է ընդ տիեզերս։
Լ. յլ առ 'ի վիճակին իւրում գող վայելուչ, պարտ
է նման բերել յանձին զտիպս աստուածպետակա-
նին առաքինութեամբ՝ որոյ է պատկեր [6], և վարել
զժողովուրդն ծնեալսէր յանձանձանօք հօր, հսկող
ինամօք հովուի, և անաչառ ուղղութեամբ օրինաց [7]։

1 Խակ. 'ի Դիոկոկ. հտ. 1. էջ 56։
2 Ալբիդ. առ Սարաբ. Ճառ. 44. էջ 314։
3 Դեմոսթ. յոլ. վերոյ հը-
րեշտ. էջ 321։ Խակ. անդ.
էջ 93։
4 Խակ. անդ. էջ 63։
5 Եկփանտ. առ Սարաբ. Ճառ. 46. էջ 333։
6 Նոյն անդ. էջ 333 և 334։
7 Նոյն անդ. էջ 334։

Բ. յսոքիկ են փոքր 'ի շատն պարտք թագաւորի սահմանեալք 'ի Յունաց. և քանզի զբեթէ ամենայն ուրեք տեսին նոքա վերջացեալ յայսցանէ զթագաւորս, ոչ ևս իբրև այլ ինչ զնարդ պետութեանս այսորիկ նկատեն՝ բայց որպէս նաւաստիպ կարևոր օրէնսդրի, առ 'ի միաբանել 'ի մի կամն հաստարակաց զևրաքանչիւրոցն ամենեցուն [1]։ Լ. Զբեթէ կարգք պետութեանց 'ի պայմանս իւրեանց կային, ասէ Պղատոն, 'ի միապետութեան պարտ էր խնդրել զբարեբաստութիւն. այլ զի եղծեալ են առ հաստարակ, պարտ է յընկերհաշտութեան կալ [2]։

Որպիսի ինչ սահմանադրութիւն ունէաւորագոյն էին ասպա ազգի, որ ոգւով չափ վերժիրընդիրն է ազատութեան. բայց խառն տեսչութիւն, յորում էին թագաւորութիւն, ազնուապետութիւն և ռամկապետութիւն կցորդեալք օրինաք՝ որք 'ի կրնս հաւասարութեան ունիցին զպետութիւնն 'ի միտեղ նոքա 'ի մի 'ի կարգաց [3]։ Լ. զի 'ի բազում ազգի ազգի յեղանակս մնացեալ է զխառնուածս զայս կազմել, ասի անպարոյր զանազանութիւնքն մնին 'ի սահմանադրութիւս ժողովրդոց և 'ի կարծիս իմաստասիրաց։

Բ. յլ ամենեքին միաբանին՝ զի հարկ է սահ-

1 Պղատ. 'ի քաղաքավար. հտ. 2. էջ 301։ Խպտգ. առ Ասոր. Հառ. 41. էջ 251։
2 Պղատ. անդ. էջ 303։
3 Արիստ. առ Ասոր. Հառ. 41. էջ 268։ Խպտգ. անդ.՝ էջ 251։ Պղատ. յդ. օր. գիրք Գ. հտ. 2. էջ 693։ Արիստ. յդ. հատ. գիրք Ի. գլ. 6. էջ 321։

մանել օրէնս բարիս, և զի ամենեցուն պարտ է հնազանդել օրինաց, և զի չէ հնար չկրել նոցա երբեմն փոփոխմունս։

Օրի որովհետև ոչ է կար մարդոյ մնհկանացուի յեղյեղուկ կամքն պահել զկարգ, օրինաց պետք են 'ի միապետութեան [1]. և առանց այսր սանձից ամենայն պետութիւն փոխի 'ի բռնաւորութիւն։

Դեղեցիկ զոխպս նկարագրին եւ, որ զօրէնս հոգի առաց պետութեան. զի յեղծանել օրինաց, զտանի պետութիւնն զի անկենդան [2]։

Պարտ է օրինաց լինել պարզ, ճիշդ, հանրական, յարմար ըստ տեղեաց [3], և ամենևին ձեռնտու առաքինութեան [4]։ Պարտ է նմա նուազագոյն ինչ, որքան է հնար, թողուլ 'ի վճիռ դատաւորաց [5]։ Օրէնք խիստք լիցին, այլ դատաւորք մի երբէք խիստք [6]. զի լաւ է յանձն առնուլ զվնասագ արձակելոյ զվնասապարտն, քան դատապարտելոյ զանմեղն [7]։ Օրի յառաջնումն սիալ և ևեթ դատաստանի գործի, յերկրորդումն ամնարշտութիւն [8]։

Լոգեն աղգք որք 'ի խաղաղութեան կորուսին

1 Արիստ. առ. Պատք. Հատ. 41. էջ 268։ Քանոնք. յի. շատ. գիրք Դ. էջ 813։

2 Դեմոսթ. առ. Պատք. Հատ. 41. էջ 270։

3 Արիստ. անդ։

4 Դեմոսթ. թուղթ. էջ 198։ Նոյն 'ի Տիմ. էջ 784։ Պատք. էջ 270։

5 Արիստոտ. Հաղատ. գիրք Ա. գլ. 1. հատ. 2. էջ 513։

6 Խիստ առ. Պատք. Հատ. 46. էջ 328։

7 Անտիք. առ. Պատք. էջ 308։

զգահերիցութիւնն՝ զոր ստացեալ էր նոցա յաղթութեամբքն։ Այլ պատճառք՝ թերութիւն օրինացն, որ ընդդէմ աշխատութեանց եւ թմրտի կրթեցին զնոսա, իսկ ընդդէմ գրգռանաց հանգստեան ոչ եւ։ Երէնադրի առաւել քան 'ի ժամանակս պատերազմի որ անցանէ, պարտ է ուշ ունել յառաքինութիւնս՝ որ կրթեն ըզհանդարտ քաղաքացին չկասկածել 'ի պատերազմէ, և չզեղծանել խաղաղութեամբ[1]։

Յանձնութիւն օրինաց յաշխարհի ուրեք՝ ցոյց է ապականութեան նորա և վատթարելոյ. զի բարեբաստիկ է միաբանութիւն, ուր չիցեն պէտք օրինաց[2]։

Կարեւոր համարին ոմանք 'ի սկիզբն բազմադունից յօրինաց բացայայտել զպատճառս նոցա և զզօրութիւն. քանզի ասեն՝ թէ չիք ինչ օգտակարագոյն քան խելամուտ առնել զհնազանդեալս, և մինչև սպառնալեօքն երկեցուցեալ զնոսա՝ համոզելով նուաճել[3]։

Պարձեալ և այլք զօրաւորագոյն քան զամենայն պատիժս պատուհասից համարին զնախատինս։ Զի ուր արծաթով քաւին յանցանք, սովորին մարդիկ մեծ համարել յոյժ զարծաթ, և թեթև ինչ զյանցանս[4]։

[1] Արիստոտ. յղ. հատ. գիրք Է. գլ. 14. էջ 444։
[2] Արգեսիզ. առ Պոսոբ. ճառ 41. էջ 248։ Խոսկր. արիսպ. հա. 1. էջ 331։
[3] Պղատ. յղ. օր. գիրք Դ. հա. 2. էջ 719։
[4] Աբքիդ. առ Պոսոբ. ճառ 41. էջ 269։

Որչափ գերազանց են օրէնքք, այնչափ առաւել է ինքնակար հեստել նոցա։ Լաւագոյն են յոռի օրէնքք եթէ պահիցին, քան զօրէնս գերազանցս որ ստունգանիցին[1]։

Ոչիք ինչ բազմավտանգ քան զյաճախ փոփոխումն օրինաց։ Ուր լոկրիսացիս բնակեալս յԻտալիա[2], որ ոք եղծումն կամ փոփոխումն օրինաց ինչ առաջարկիցէ, պարտ է նմա խեղդ 'ի պարանոց գալ յատեան. զի 'ի չլինել առաջարկութեանն ընդունելի, խեղդամահ առնեն զնա*։ Ուր նոսին լոկրիսացիս ոչ է օրէն կամակորել վըտարանդի մեկնութեամբք զօրէնս. եթէ երկբայելիք իցեն օրէնքն, և դատախազն կամ ամբաստանեալն չիցէ հաւան ըստ մեկնութիւնն տրւեալ 'ի դատաւորէն, օրէն է նմա բողոք ունել յատենի՝ որ 'ի հազար դատաւորաց գումարեալ։ Յանդիման լինին անդ, խեղդ ըստ անձին, մեկնիչ օրինացն և որ բողոքէն. և որ յերկոցունցն կամակոր թուիցի իմաստ, մահու պատուհասի[3]։ Ըստ այսմ և այլք յօրէնսդրաց յայտ առնեն, զի ամենայն զգուշութեամբ և յանհրաժարելի եթէ հարկս ձեռնարկելի է 'ի փոփոխումն օրինաց։

Այլ՞ որ այն իցէ հաստատուն հիմն խաղաղու-

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 37։ Արիստոտ. յԳ. հատ. գիրք Դ. գլ. 8. էջ 372։
2 Զալեւկ. առ Ստոբ. Խոտ. 42. էջ 280։ Դեմոսթ. 'ի Տիմոկր. էջ 794։
* Յեռակոյս մատենիս 'ի ամբաստանութիւնն. թիւ Ի։
3 Պոլիբ. գիրք ԺԲ. էջ 661։

թեան և բարեբաստութեան ազգաց։ Ել օրէնք՝ որ ուղղեն զկարգ պետութեան նոցա, և ընդարձակեն զիշխանութիւն նոցա. այլ վարժք՝ որ կրթեն զքաղաքացիս, և ժրացուցանեն զոգիս նոցա։ Ել օրէնք՝ որ վարձատրեն և պատուհասեն, այլ դատաստան հասարակաց՝ ուր ստոյգ բաժին առնիցէ յարգանաց և անարգանաց՝։ Ի՞հաւասիկ վՀիւ միաբարբառ ամենայն օրէնսդրաց և իմաստասիրաց, և Յունաց առ հասարակ, թէ արդեօք և ամենայն ազգաց։ Որ ուշիւք յազգի ազգի կարգս տեսչութեան հայիցի՝ զիսկն նոցա հետազօտելով և զբարեմասնութիւնս և զյոռութիւնս, յետ բազում քննութեանց գտանէ՝ զի զանազանութիւն բարուց բաւական է յեղծանել զամենակատարն սահմանադրութիւն պետութեանն, և յուղղել զենաւ անկատարն։

Օրէնք ապիկարք են ինքնին, և 'ի սովորութենէ ևեթ առնուն զօրութիւն. քանզի սովորութիւն այնչափ 'ի վերայ է քան զօրէնս, որչափ առաքինութիւն քան զլաւութիւն բարուց. և նոյն զարձեալ սովորութիւն նախամեծար առնէ զՀամեստն քան զարդար, և զարդարն քան զօգտակար. և նոյն նահանջէ զքաղաքացին ահիւ անուանարկութեան, զոր օրէնք ահիւ պատուհասից ևեթ զարհուրեցուցանեն՝։

1 Պղատ. յղ. որ. գիրք Գ. հա. 2. էջ 697։ Խոսկր. ա. բիսպ. հա. 1. էջ 331։

2 Խոսրով. առ Սոսր. էջ 249։

Ընդ իշխանութեամբ սովորութեան՝ իմաստս մեծախոհս յանձին բերիցեն հոգիք, և անվստահութիւն ընդ գիտութիւնս իւրեանց, և զպարկեշտութիւն և զպարզմտութիւն՝ ի գործս։ Պատկառանք իմն ազդեսցեն՝ ի նա մեծարանս սուրբս առ դիս, առ օրէնս, առ աւագանին, առ հայրենի իշխանութիւնն, առ խոհականութիւն ծերունեաց, և առ անձինս իսկ առաւել քան առ այլս[1]։

Ոչ ասի՝ ի միտ առնուլ է, զի յամենայն կարգս պետութեանց հարկ է անհրաժեշտ՝ պարապել՝ ի դաստիարակութիւն մանկուց[2] որպէս՝ ի կարևորագոյն գործ, կրթել զնոսա յիմաստս և՝ ի սէր օրինադրութեան աշխարհին,՝ ի պարզութիւն վաղ ժամանակաց. և համայն ասացեալ, ՝ի խրատս՝ որոց պարտ է մինչև՝ ի սպառ ուղղել զառաքինութիւնս նոցա, զկարծիս, զմիտս և զբարս։ Ամբ միանգամ յառաջնորդականն մնասխոհ եղեն արուեստ, ամենեքին առ հասարակ՝ ի կրթութիւն մանկուց զբախտ պետութեանն ասացին յեցեալ[3]. ապա ուրեմն ըստ նոցա տեսութեանն՝ ի դէպ է հաստատել զվճիռս զայս աներկբայելի, զի դաստիարակութեան և օրինաց և բարուց ոչ է պարտ հակառակել միմեանց[4]։

1 Դեմոկր. առ Սոսր. Ճառ. 44. էջ 310։

2 Պլատ. յԵրթիւրբ. հա. 1. էջ 2։ Արիստոտ. յՊ. Պ. գիրք Ը. գլ. 1. հա. 2. էջ 449։

3 Դիոտոգենն. առ Սոսր. էջ 251։

4 Խպպոդ. առ Սոսր. էջ 249։

և զայս դարձեալ ոչ ինչ նուազ բացայայտ, զի յամենայն պետութիւնս բարք ժողովրդեան կերպարանակիցք են բարուց իշխանացն[1]։

Օալեւկոս և Պարոնդաս ոչ միայն զյոլովագոյնս յօրինաց իւրեանց յանեղծութիւն բարուց սահմանեցին, այլ առաջինն առ լոկրիսացիս բնակեալս Յատալիա[*], և երկրորդն առ այլ և այլ ազգս բնակիչս Սիկիլիոյ, 'ի սկիզբն մատենից օրինացն իւրեանց[2] կարգեցին վճիռս, որք են իբր հիմունք բարոյականին։ Յորոց զոմանս ասծից այսր 'ի ներքս առ 'ի լրումն տեղեկութեան՝ թէ յո՞ր գէմս նախնիք նկատէին զօրէնսդրութիւն։

Պաղաբայնոց ամենեցուն, ասէ Օալեւկոս[3], պարտ է դաւանել զգոյութիւն դից։ Կարգ և գեղեցկութիւն էիցս դիւրաւ զնոսա խելամուտ արասցեն, զի ոչ դիպաց են արդասիք և ոչ ձեռակերտ մարդկան տիեզերքս։ Պարտ է պաշտել զդիս, զի 'ի նոցանէ են ՀՅմարիտ բարիք։ Պարտ է մարդոյ սրբել զանձն և յարդարել, զի աստուածութիւնն ոչ պատուի պաշտամամբ չարին. ոչ պատարագք բազմահանդէսք և ոչ շքեղ տեսարանք որովք տօնք նոցա զարդարին, հաշտ առ-

[1] Խոսկր. առ Նիկոկղ. հա. 1. էջ 68։ Եպիֆն. 'ի Տիմ. էջ 290։

[*] Ըստ Տիմէի Զալեւկոս չէա լոկրիսացւոց օրէնս. (Սիկկեր. յղ. օր. գիրք Բ. գլ. 6. հա. 3. էջ 141։ Նոյն առ Ատոմկ. գիրք Զ. Թուղթ. 1. հա. 8. էջ 26.) այլ Տիմէոս հակառակի ասասանար ամենայն նախնի մատենագրաց։

[2] Սիկկեր. յղ. օր. գիրք Բ. գլ. 6. հա. 3. էջ 141։

[3] Զալեւկ. առ Պատր. Հատ. 42. էջ 279. և առ Դիոդ. գիրք Ժ.Բ. էջ 84։

նեն վնասս։ Այլ բարեգործութիւնք և եթէ հաճոյ են նոցա, և առաքինութիւն անյողդողդ յիմաստս և յարգասիս, և հաստատութիւն մտաց 'ի նախասահմանս առնել զարդարութիւն և զբաւորութիւն քան զանիրաւութիւն և զանախատինս։

Չթէ 'ի բնակիչս քաղաքիս գտցի որ այր կամ կին կամ քաղաքացի կամ օտար՝ որում չիցեն աղտոտ ժելի ճշմարտութիւնքս այսոքիկ, այլ 'ի չարն բնաւորաբար բերիցի, դիտասցէ զի չիք զերծանել յանցաւորի 'ի վրէժխնդրութենէ դից. և կալցին հանապազ առաջի աչաց զվայրկեանն՝ որ զրաւ արասցէ կենաց նոցա, և յորում յիշեսցեն բազում թախծութեամբ և խղճիւ զչարիսն գործեցեալս, և զբարիս՝ զոր ապաստ արարին։

Ասա սմին օրինակի և ամենայն քաղաքացի յամենայն գործս իւր զժամ վախճանին 'ի մտի կալցի. և 'ի ձգել զնա դիւի չարի 'ի յանցանս, դիմեսցէ 'ի մեհեանս առ ոտս բազմաց և յամենայն տեղիս սուրբս՝ խնդրել օգնութիւն 'ի դից. և ապաւինեսցի առ լաւ որեալն, որ խրախուսեսցեն զտկարութիւն նորա նկարագրութեամբ վարձուցն՝ որ մնան առաքինութեան, և չարեացն՝ որ զհետ գան անիրաւութեան։

Պատուեա զծնողս քո և զորդիս և զիշխանս. սիրեա զհայրենիս քո, և մի այլում ցանկար. զի այդ ցանկութիւն սկիզբն է մատնութեան։ Մի չարախօսեր զումեքէ. պահպանեա օրինացն անկ է հսկել 'ի վերայ յանցաւորաց, այլ մինչև

ձեռնարկեալ 'ի պատուհաս՝ պարտ է նոցա խրատուք ջանալ յուղղութիւն ածել զյանցաւորս։

Պատաւորք 'ի դատաստանի մի զբարեկամութիւն և մի զատելութիւն իւրեանց ընդ դատեալն յիշեսցեն։ Պերեայ օրէն է հնազանդել առ ահի. այլ ազատաց վասն արդարութեան եւեթ պարտ է հնազանդել։

Ի սկիզբն առաջարկութեանց քոց և գործոց, ասէ Պարոնդաս[1], խնդրեա օգնականութիւն 'ի դից՝ յորոց են ամենայն տուրք. և վասն լսելի լինելոյ, 'ի բաց կաց 'ի չարէ. զի չէք միաբանութիւն ասատուծոյ ընդ անիրաւի։

Ընդ իշխանս և ընդ սոսկական քաղաքացիս նոյն գութ գործելոյ կալցի, որ ինչ ընդ հարս և ընդ որդիս։

Փոխանակեա զկեանս քո 'ի վերայ Հայրենեաց, և յուշ լիցի քեզ՝ զի լաւ է մեռանել փառօք քան կեալ նախատանօք։

Ամուսինք հաւատարիմ կացցեն 'ի խոստմանն, զոր ետուն միմեանց։

Մի զվախճանեալս արտասուօք և տարապայմանն սգով պատուեր, այլ յիշատակաւ առաքինութեանց նոցա, և նուէրս ամի ամի 'ի վերայ գերեզմանաց նոցա մատուցանելով։

Անկանին լուիցէ խրատու ծերոց. և ծերք ջանասցին բարւոք կենցաղավարութեամբն ձգել

[1] Պարոնդ. առ Սաար. Ճառ. 42. էջ 289։

յիւրեանս մեծարանս։ Զի եթէ սոքա զպատ-
կառանս 'ի բաց մերկանայցեն, մուծցեն յաշ-
խարհն զարհամարհութիւն ամենայն, և զա-
մենայն որ զհետ այնորիկ գնան յոռութիւնս։
Զգայլերն 'ի չարահաճութենէ և 'ի ստու-
թենէ. սիրեա զառաքինութիւն, և յանձնեա
առ որս կրթին 'ի նոցն. և նկրտեաց 'ի ծայր կա-
տարելութեան, զոլով ճշմարտապէս լաւ։ Հա-
սիր 'ի թիկունս զրկելոյ քաղաքացւոյն. սփոփեա
զթշուառութիւն աղքատին, որ առանց անգոր-
ծութեան ցանկանիցի։ Արհամարհեա զգերեալս
'ի ծառայութիւն մեծութենից, և դատապար-
տեա 'ի նախատինս՝ որ հոյակապ քան զշինուածս
հասարակաց կառուսցէ իւր ապարանս։ Պար-
կեշտս խօսեաց. նահանջեա զբարկութիւն, և
մի անիծաներ զանիրաւեալս իսկ քեզ՝։

Կացցեն միշտ պատուէրքս այսոքիկ առաջի ա-
չաց քաղաքացոց ամենեցուն. և յաւուրս տօնից
ընթերցցին բարձրաձայն 'ի ժամ ճաշու, որպէս
զի տպաւորագոյն 'ի միտս նոցա դրոշմեսցին։

1 Դեմոսթ. յոլ. վերպ հրեշտ. էջ 321 և 327։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ա. Զյանիանի գծին։ (էջ 11։)

ՅԱՐԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ զոյս Գուբման եգիտ ի Լակոնիա[1], գոն երկուք ոմանք գրոշմեալք եօթն գաւուք յառաջ քան զԹուականութիւն փրկչին, թերեւս և հնագոյնք իսկ ի վերջ կոյս ուԹերորդին արձանագրեալք։ Ընդ ընդ անուան հրեշտակին կամ պարագլխի հանդիսին հրեշտակութեան, որ կոչէր Պրեսբեւս, յաւելուն և անուանք դատաւորաց բաղմաց և պատանեաց և օրիորդաց՝ որք նշանաւոր գոան ի պարս անդ. և ի միում յարձանագրութենէ անսի յորջորջին Նոբա Ցանհաձա։ Յաղկագք, որ ըստ Հիսիւքոսի 2 նշանակէր առապարացիս զարս մանկաւոյ։ Արդ ենձ Թուեցաւ Թէ անդանօր գյակինեմեան հանդիսեն իցեն բանք։ Ցկատեսցի և այն, զի ի միում ի պարուց դատերացն գոանի և անուն ի իկորիայ դատեր Դեւբսիգամայ կամ Զեւբսիգամայ աքբային սպարտացւոց, որ եկայ ամաք իբր եօթն հարիւրամբ ն. Ք։

Բ. Զայլոայլ գիտոց, յորոց ի՝ՀՈՂին բանի։
սպարտացւոց։ (էջ 12։)

ՅՈՑԹ դժուարին է, և գուցէ անհնարին իսկ, տալ ստոյգ գիտութիւն զկազմութենէն սպարտական բանակին։ Զի մանր յաՃախ փոփոխեալ կարգացն, նախնի մասանեագիրքք առանց մանրապատում առնելոց զայնցանէ, զգործս ևեթ պատմեն. և ապա յարգեանցն իւրաքանչիւրոց կանոնք սովորականք առան։

Սպարտացւոց զբաղում խումբք էին, զոյս Ցոյնն մՕքաι կամ μοῖρα, այսինքն մասունս կամ բաժինս կոչէ, և խումբք իւրաքանչիւր բաժանէին դարձեալ ի λόχος, ի πεντηκοσύς և ի ἐνωμοτία։ Ինձ ի էջս Թուեցաւ փոխանակ առաջնոյն գնել գունդ, փոխանակ երկրորդին գումարտակ, փոխանակ երրորդին լիմնեակ, և փոխանակ չորրորդին դաս, ոչ ինչ հայեցեալ ի ՃՇգդ Թարգմանութիւն բառիցն։

1 Գուբման. սարգար. մանանագ. արքունի։ 2 Հիսիւք. ի Ցանհ։

Զ զրաշմունս զայսոսիկ գնդաց յայանապէս բացատրէ Քսենոփոն [1], որ եկաց ժամանակիցս իրաց ուղղորդութեանն Ա. նապարտեայ։ «Գնդաց իւրաքանչիւր, ասէ, զրաւորք են մարտպետան, չորք պէսք գումարտակացն, ուստ յիսնեկացն, և վեշտասան դասուցն»։ Ապա գունդք իւրաքանչիւր ի չորից գումարտակաց բովանդակէին, և գումարտակք յերկուց յիսնեկաց, և յիսնեակք յերկուց դասուց։ Ի հաւասարի Քսենոփոն ասայ մեզ ասասեալ զսովորական կարգն, որում և Թուկիդիդէս երաշխաւորէ յասելն։ «Թագաւորն հրամայ ասյ մարտպետաց, մարտպետք գումարտակաց, սորա յիսնապետաց, յիսնապետք դասապետաց, և սորա իւրաքանչիւր դասուց»[2]։

Էր զի փոխանակ խաղացուցանելոյ զգունդս, զրաշտաղոյ առնէին գումարտակս ինչ[3]։ Յառաջնում Ռակատամարտին Մանտինեայ, յորում սպարտացիք կային զյաղթութիւնն 418 ամաւ ՝Ն. Ք. բանակ նոցա ընդ առաջնորդութեամբ Ագիսայ արքայի յեօթն գումարտակս բաժանեալ էր։ Իւրաքանչիւր ի գումարտակաց, ասէ Թուկիդիդէս[4], էին չորք յիսնեակք. և յիսնեկաց իւրաքանչիւր քառեակ դասք։ Արդ սոա գումարտակացն կազմած այլ է յաւանդելոյն ի Քսենոփոնէ, զի այլ են և իրացն հանդամանք։ Քանզի Քսենոփոն զսովորական կազմած գնդին ասանդէ, համագումար ի միասին զմասունն առեալ. իսկ Թուկիդիդէս զդէպս ինչ առանձինն, յորում գումարտակք բաժանեալ էին ի գնդէն։

Իսկ զգնդացն Թիւ կէսք համարին վեց, այլք հինգ. զցուցակս Լուսիմաքեանս առաջնոյ կարծեացն ասասիկ զգեմ, յաւելլով յեսոյ և զերկրորդին ցոյցս։

Ա. Յերբիս արձանագրութիւնսն Մեսենիոյ և Լակոնիոյ [5], զորս ածէ Ֆուրմոն, գրչագիալ կան անուանք Թագաւորացն սպարտացւոց և դասաւորաց և պարեսաց և զրաշտաց և զայլ և այլ կարգաց ասագանուցն։ Արդ գնդապետք վեց են ի նոսա։ Եւ վասն զի արձանագրութիւնքս այսոքիսկ համարիսին ուստ գաղաք Ն. Ք. և ոչ ինչ աւելի քան զամն 130 կրասեբագոյնք քան զ Լիկուրգոս, ի դէպ է կարծել՝ օրէնսդրին սպարտացւոց ի վերնակ գումարս բաժանեալ զսպարտացիս։ Այլ այսմ խոչ մեծ ընդ առաջ ելանել, զի նոսա քան զվեց

[1] Քսենոփ. լդ. հաս. սպարտ. էջ 686։

[2] Թուկիդ. գիրք Է. գլ. 66։

[3] Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Դ. էջ 518։

[4] Թուկիդ. անդ. գլ. 68։

[5] Յիշատ. բանաս. կանանցոյն, հա. 15. էջ 395։

գնդապետս յարձանագրութիւնս անդ գրոշմեալ կան վեց գումարտակաց։ որով ոչ միայն սարքն քան զգումարտակս գոնեն գնդապետք, այլ և համանմիւք երկրպանիւք։ որ ոչ էր այնպէս յաւուրս Թուրկիզեանց և Քանենոփանի։

Բ. Քանենոփան ասէ՝ Լիկուրգեայ զՏեմեղլաջին և զՏեսակաղաջր սպառազէն բաժանեալ ի վեց գունդս 1. արդ այս ի Ճահ պատահէ։ ահա ասացելոց արձանագրութեանցս։

Գ. Նոյն ինքն գրաբեալ Քանենոփան ասէ, թէ Կղեմբրոս սպրայ չորիւք գնդաց արձակեցաւ ի Փռվկիս 2. արդ եթէ հնգեակ միայն գունդք էին, միակ գունդ միայր ի Սպարտա։ Յետ սակաւ ժամանակի մղեցաւ Ճակատամարտն ի Լեւկտրա, և բեկան զբիւր Կղեմբրոսեայ։ և Քանենոփան յաւելու թէ զրաժ ոգով եղեն գրաբեալ սպարտացիք, մանաւանդ յերկուց գնդացն մնացելոց ի Սպարտա։ Ապա ուրեմն վեց գունդք էին միահամուռ։

Դամ է արդ աւանդել զպատճառս, որովք մարթի է միով պակաս զգունդս կարծել։

Ա. Հաբրոկրատս ասէ՝ Արիստոտելի հնգեակ համարեալ զգունդս, եթէ չգուցէ թէ վերոյգրեալ ի սպարտրն Մոսաբայ, որ ունի բեմՕ 3։ Արդ թէպէտ և բառս այս չիք ի տպագրեալն Պլանուվայ, և կէսք ի գրչագիր օրինակաց Հաբրոկրատայ մատնեին թուական տառաւ նշանակեն վեց 4, բայց տառս այս այնքան ունի նմանութիւն ընդ թուագրին որ նշանակէ զՏինգ, զի գիւրին է այլ ընդ այլոց առնուլ զնոսա։ Երկոքեանքդ վերկայութեամբք Հիսիքրատի երեի վերոյգրեալ գրչաց գոլ անդ։ զի ուրեք ասէ՝ թէ բան Արիստոտելի գունդ կոչէր առ սպարտացիս 5. և այլուրք յաւելու գրաբեալ յԱրիստոտելէ, թէ հինգ գումարտակք էին սպարտացւոց 6, առանց թուագրի ամենեքին զՏինգն գրելով։ Ապա բան Հիսիքրատի հնգեակ զգունդս սպարտացւոց վարկանեէր Արիստոտել։

Դ. Դիոդորոս սիկիլիացի ասէ 7, Ագեսիպոլիսի զորավարեալ ութհարիւր հազար արանց յորում էին հինգ գունդք, կամ հինգ գունդքն սպարտականք։ Արդ միայ գիտել թէ աստանօր յաւելի իցէ յոգի թէ ի բաց թողի։ Հանդերձեալ այսպէս յիւրում տպագրին ածէ զբանն. ὧν ἦσαν οἱ Λακεδαι-

1 Քանենոփ. պատմ. տպարտ. էջ 686։

2 Նոյն պատմ. Յուն. գիրք Զ. էջ 579։

3 Հաբրակր. ի բառն Մնբ.

4 Մեսբս. առաջին. ընթերցգիրք Ա. գլ. 16։

5 Հիսիքր. ի բառն Μόρα։

6 Նոյն ի Λόχος։

7 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 350։

բաν։

μόνοι (կամ Λακεδαιμονίων) πέντε μοῖραι։ Պետոյ աշխատութիւն յանձն առեալ ըստ ազգաչանաց իմոց, խնդիր արար ի գրչագիր օրինակս մատենագրանին արքունի. և յերկուասան օրինակացն որ անդ՝ հինգ եթե ունին զինդրեալ հատուածն, և զյոգն οἱ յարակից անուան Լակեդեմոնացւոց յուզականն կամ ի սեռական հոլով։ Ապա միաբանին ընդ ապագրին Հռոդոմանայ, և գոյզն ինչ և անխորշելի փոփոխմամբ ասն զընթերցուածն յերիւրեալ ի Մեօրախոսէ. αἱ Λακεδαιμονίων πέντε μοῖραι հինգ գունդքն հարկանին։ Եւ ուղղագրութեամբս այսուիկ քաջ միաբանի Դիոդոր ընդ Արիստոտելի։

Գ. Հնգեակ ցեղք էին սպարտացւոց, որպէս և ի բնագրիս յիշատակեցի. արդ ի գէպ է՝ զի և ի հինգ գունդս զինուորեին, յիւրաքանչիւր ցեղից առնելով զանուանակոչութիւնն։ Զի ահա Երոդոտ յայտնապէս ասէ՝ թէ ի Պլատեայ Ճակատամարտին էր գունդ մի պիտանեանց 1. և յայտ է զի պիտանեանք էին մի ի ցեղից սպարտացւոց։

Բայց քանզի այսոքիկ հաւանելի ցոյցք են, և վկայութիւն Քսենոփոնի պարզ, ասելի է ընդ Մեօրախոսի 2 թէ յոյն վիպագիրն համարի ընդ գունդս և զսկիրտացիս բնակեալս ի Սկիրիտ գաւառ փոքրիկ ի մէջ սահմանաց Արկադիոյ և Լակոնիոյ 3։ Ի բազում ժամանակաց սպարտացիք ունէին զգաւառն. բայց ապա Եպամինոնդաս առեալ զայն ի նոցանէ, խառնեաց ընդ Արկադիա։ Վասն այսորիկ ի մատենագրաց, որ յետոյ կացին, կէսք համարին զսկիրտացիս զինուորս սպարտացւոց 4, այլք համարին զնոսա ընդ գունդս արկադացւոց 5։

Մինչ գեռ ընդ սպարտացւովք կային, գրեթէ միշտ գնային ընդ նոսա ի պատերազմ, և էր զի բազմութիւն նոցա հասանէր մինչև ցվեցհարիւր այր 6։ Ի միում ուրեք Ճակատամարտի ի ձախում թեւի զկայ առեալ, չխառնեցան երբէք ընդ այլ գունդս 7։ Էր զի ի պահեստի կային, տակաւ ի թիկունս հասանել զօրաց՝ որք ընկրկէին 8։ Գիշերապահք ի նոցանէ կային, և հսկողութեամբ նոցա խափանէր զօրականն մեկնել ի փաղանգէն, նորին ինքեան Լիկուրգեայ զհոգս զայս ի նոս-

1 Երոդոտ. գիրք Թ. գլ 53։
2 Մեօրա. առաքել. ընթերց. գիրք Ա. գլ. 16։
3 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 607։
4 Պարսպ. Թուկիդ. գիրք Է. գլ. 67։
5 Հիսիւք. ի բառն Σκιρίτ.
6 Թուկիդ. գիրք Ե. գլ. 68։
7 Նոյն անդ. գլ. 67։
8 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 350։

սա ապաստան արարեալ 1։ Զայս ուրեմն գոյր զինուորութիւնս այս յաւուրց օրէնդրին, ապա վեցեակ խումբս զբաց հաստատեաց նա, հինգ զբեկի գունդսն՝ յորս զինուորէին ապարատացեալ, և միւս ևս զսկիբայուցն՝ յորում ոչ զբին ապարատացեալ, և զանազանեալ յոյժ ի բեկի գնդացն, բայց մարեալք յանուն նոցա յորջորջել որպէս մասն զինուորական կարգաւորութեանն՝ զոր սահմանեաց Լիկուրգոս։

Եթէ արդարև սկիզբացեալ հեծելատարս պատերազմին, որպէս Քսենոփոն վարեալի 2, ոչ ինչ զարմանք են զի նոցն ինքն վեցեակ գունդս տասիկ սահմանեալ Լիկուրգեայ հեծելոց և ապառազին հետևակաց 3։ Զի տեսլի է, թէ էին հոգեակ գունդք ապառազին հետևակաց ապարատացուց, և միւս ևս հեծելագունդ սկիզբացուց։

Ի տեղեկութենէ ասելի յայտ է, զի որք միանգամ ի նոսա նեաց այլ ընդ այլոց առնուն զգունդս ընդ գումարտակաց, յանդգնութիւն և կամ խուսանավոր առնելով զբաւա՝ զնոսն փոխանակ բոլորին գենէ։ Մեբօսիս բարձհշեաւն ոչ ինչ խաբբ ընդ երկոսին խումբս զբացն համարի գոլ. այլ սակաւք էին և սկզբաւ ի հաստատութիւն կարգեաց նորա վկայութիւնք, և արդարեալ իրաց անժխտելիք հակառակ կան նմա։ Զի եթէ բան Մեբօրիսի հինգ գունդք էին միայն, պարտ էր և գումարտակաց գոլ հնգեակ և ոչ աւելի. այլ որպէս ի վերս այրս տեսաք, Ագիսայ արքայի էին եօթն գումարտակք ի բանս կին 4. և այլ երբեմն ընդ ձեռամբ Աբքիդամայ արքայի էին երկուասան գումարտակք 5։

Զոր օրինակ գունդք խրաքանչիւր յանուն ցեղին յորջորջէին, ի գէպ է կարծել՝ զի և գումարտակաց խրաքանչիւր գնդացն էին անուանք առանձինն. և որպէս ասացեալ Հիսիքիոս, ապարատացեալ զի ի գումարտակաց խրատեցոյ կոչէին Լեոտոյս 6։ Զայսմ ի միտ առնուլ՝ զի Կրատանք, զորս Պաւսանիասն 7 մասն ասէ գոլ պիտանեանց, էին մի ի գումարտակաց՝ յորոց կազմեր գունդ պիտանեան ցեղին. և վասն այն թերևս Թուկիդիդէս ապրանեան զի էին ի բանից Երոդոտեայ։ Քանզի Երոդոտ ասէ՝ թէ ի Հակառատարքին Պլատեայ Ա-

1 Քսենոփ. յդ. հատ. ապարատ. էջ 687։

2 Նոյն, ի կարգադր. Կիւր. գիրք Դ. էջ 91։

3 Նոյն, յդ. հատ. ապարատ. էջ 686։

4 Թուկիդ. գիրք Ը. գլ. 68։

5 Քսենոփ. պատմ. Յունն. գիրք Է. էջ 636։

6 Հիսիքիոս. ի բառն Ἐπόλ.

7 Պաւսան. գիրք Գ. գլ. 14. էջ 240։

մոխրաւոր զ՝ սափրէր պիտանէանց գումարտակին 1. իսկ Թուկիդիդէս խօսի այնպիսւոյ զրայոյ ոչ երբէք լեալ առէ՝ ի Լակեդեմոն 2. զի գունդ արդեաք պիտանէանց կուչլի էր գնաւոր և ոչ գումարտակ։

Իսկ թէ ի քանի զինուորաց գունդն կազմէր, Եփորոս 3 և Դիոդոր սիկիլիացի 4 ի հինգ հարիւրոց ասեն, Կալիսթենէս յեօթնհարիւրոց, Պոլիբիոս յինգհարիւրոց 5. և այլք, է որ յերկոց, է որ ի հնգից, և է որ յեօթանց հարիւրոց ասեն կազմել գնդէն 6։

Զանազանութեան քանիցս պատճառք, որպէս ինձ թուի, ոչ է ի ժամանակս ժամանակս փոփոխել կազմութեն գնդին, այլ զի ըստ առաջնոյն պիտոյից առաւել կամ նուազ լինէին զրաժ՝ զրովք։ Քանզի տպարտացիք առ հասարակ գրեալ էին ի զինուորութիւն ի գունդս եւրոպանեցիք։ և ի ժամանակի զրաժ՝ զրովքդ ազգ առնէին պարէաք ի ձայն քարոզի, գալ յանգիման լինել ի զինուորութիւն ի յարբունս հասելոյ՝ այս է ի քառասնեկից մինչև ցյայսմանի ինչ հասակ 7։ Զայս յայտնապէս է տեսանել ի պատերազմին Լեւկտրայ։ քանզի Կղեոմբրոտեայ արքայի էին անդ գունդք չորք, հանգիսիր եւրոպանցիքս մարտպետացքն, յորս էին զինուորեալ քաղաքացիք ի քառասնեկից մինչև ցերեսուն և հնգամեանս 8։ Եւ ի պարտել Հակատատեսացին հրաման եւուն պարէաք՝ զրաժ՝ զրովք առնել վերսին, և զինուորեցան անդստին ի նոցանց դիպաց յերեսուն և ի հնգամենից մինչև ցքառասնամեայս։ և յերկուցն ևս գնդից մեռեալոց ի Սպարտա՝ զինուորեցան ի քառասնեկից մինչև ցքառասնամեայս։ Այսպէս յայտ է՝ զի ոչ միշտ համարէն թաղային գունդք ի պատերազմ՝ այլ բազմ՝ այն էր՝ զի հաստատեալ ի նոցանէ առաւել կամ նուազ ամբոխիս։

Չկան արդ առ մեզ, ոչ Եփորոսի մատեանն՝ որ ի հինգ հարիւրոց ասէին գունդն՝ զոր կազմեալ, և ոչ Կալիսթենէսին՝ որ յեօթն հարիւրոց, և ոչ գաղթեալ հաստատեալ Պոլիբիայ՝ յորում ցինն հարիւր հաստատեալ զմիւսն։ սակայն իշեմ ասել՝ զի թիւ համարոյ զրաժ՝ զրովքն պարտեալ ի նոցանէ,

1 Երոդոտ. գիրք Թ. գլ. 53։
2 Թուկիդ. գիրք Ա. գլ. 20։
3 Պլուտ. ի Պելոպիդ. հատ. 1. էջ 286։
4 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 350։
5 Պլաւ. անդ։
6 Սաուդաբ. մատեան ի բառն Μόρα. Ուլպիան. ի Դեմոսթ.։
7 Քսենոֆ. յՀելլատ. հատ. ապարտ. էջ 685։
8 Նոյն, պատմ. Յաւտ. էջ 579։

էր բան իւրաքանչիւրոց ոմանց զրաժշդոզոց, և զի Դիոգոր սիկիլիացի ոչ Հշդրատաբանէ ուր ասէն խառն ի խառնէ՝ թէ գումնդք իւրաքանչիւր ի հինգ հարիւրոց արանց էին կազմեալ 1։

Ոչ աւելի ինչ ծանօթ էն մեզ թիւք զինուորացն, յորոց կազմին ստորագրանեալ մասունք գնդացն։ Ջանիւք սպարապետացոյ Թազուցանելոյց զկազմութիւնս իւրեանց, որպէս ազգ առնէ, Թուկիդիդէս 2, անծանօթ մնայ թիւ զրաց նոցա ի Հակատամարտին Մանտինեայ։ այլ մարթէր վերս ի վերոյ ինչ զնոցին առնուլ զրան բան այսմ հաշուի։ Էին ընդ ձեռամբ Ագեսայ արքայի եօթն գումարակք։ մէն մի ի գումարակաց կազմէր ի չորից յիսնեկաց, և յիսնեակ իւրաքանչիւր ի չորից գաստց։ և գաստց իւրաքանչիւր լայնութիւն էր չորից արանց, և խորութիւն ութից՝ բան յաշխարհս սովորութեան։

Ի բանից ասսի գուշակէ մեկնիչն, զի ի պատերազմի անդ գասք իւրաքանչիւր կազմէին յերեսուն եկերից արանց, յեսնեակք իւրաքանչիւր ի հարիւր քսանեւութից, և գումարակք ի հինգ հարիւր երկուտասանից։ Արդ և մեք զմեր յաւելցուք, զի եթէ գումարակացն թիւ զինուորաց նոցն էր միշտ, ոչ էր պարտ վիպագրին ի հաշիւս ապաստանել, զի ըստ թիւս գումարակացն անէթ սպարապացոյց բաւական էր ասել։

Եւ ոչ գաստցն կազմութիւն սահմանեալ ինչ էր։ զի ի պատերազմին զոր ի վեր այսր յիշատակեցաք, էին գասք իւրաքանչիւր յերեսուն եկերից արանց կազմեալ գրեթէ առհասարակ, իսկ ի Լեւկտրայ պատերազմին՝ յերեսուն և ի վեցից։ և Սուիդաս նուազէ զմիս նոցա մինչև ցքսան և հինգ այր 3։

Գ. Զգեստ՝ մարդ գանչուն, զոր Լիսանդր էհոյծ ի Սպարտա։ (էջ 45։)

Ըստ Դիոգորի սիկիլիացւոյ 4, Լիսանդր յառնուլ զՍեստոս քաղաք Հելեսպոնտ՝ յղեաց ի Սպարտա ի ձեռն Գիլիպպոսի ասար բաղում, և հաղար և հինգ հարիւր քանքար արծաթեղոյ։ Եւ յետ առման քանքարին սեմենացւոյ ի գառնալն իւրում ի Սպարտա, առանձեաց առագաստայն ընդ այլ ցանկալի իրս չորեքքարիւր ութսուն քանքար, յաւելեալ առնեմս յարծաթեղոյն զոր կրասերն գերբոս եառ նեմս 5։ Արդ զկը

1 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 350։ բան Ἐνωμοτ.
2 Թուկիդ. գիրք Ե. գլ. 68։
3 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 596։ Սուիդ. ի էջ 462։
4 Դիոդ. գիրք ԺԳ. էջ 225։
5 Քսենոփ. անդ. գիրք Բ.

չիւս զայսոսիկ արծաթոյց այլ և այլս ի միմեանց հատուածս, գումար գումար արծաթոյն զոր ած Լիւսանդր ի պատերազմն՝ հազար ինն հարիւր և ութսուն քանիսք։

Դ. Զխոյանանելոյ մարդասէր զոհի։ (էջ 65։)

Զմարդասէրն զոհս ասացի խարանեալ Արկադիա ջրիւք դարուք Ն. Ռ։ Այլ թերևս առաջիկէ՛ ինձ զի զքան Պորփիւրի, որ վեցհարիւր ամաց յետոյ եկաց, և ասէ՝ թէ էին սակաւին յաւուրս իւր մարդազեղն զոհք Արկադիա և ի Կարքեդոն 1։ Սա ինքն բազում ինչ մատերապատում հանդիսանս ածէ ի դիս իւր ի Հռոմէ ուստէք թէոփրաստայ, որ չէք ի միջի։ Այլ զի և ինչ ինչ յաւելու ի քանս թէոփրաստայ, որպէս ինքն իսկ ազգ առնէ, անգիտելի է՝ թէ զոյր յերկոցունցն իցէ քանս այս, որ և հակառակի նորին իսկ Պորփիւրի այլուր ասացեալ բանիցն։ Զի Խիկերատայ ասէ 2 խարանեալ զմարդազոհս ի Կարքեդոն։ և ոչ ինչ է փոյթ խնդրել՝ թէ արդեաք Գեղոն փոխանակ Խիկերատայ պարտ իցէ ընթերցուածն գտանել։ Լուսնթիւն այլոց մատենագրաց հաւատարիմ ևս թուի ինձ վկայութիւն յերիս յայսմիկ։ մանաւանդ Պաւսանիայն, որոյ զկրօնական իրս ամենայն ուրեք մանրապատում առնելով՝ որպէս զկարեւոր զայս լուեր, և չկիշէր զայն ի պատմելն զ Լիկայոնի արքային արկածոյց զալիակերպու թիւնն ի գայլ՝ վասն զոհելոյ զմի որ ի տղայոց 3։ Ազգաբէն Պղատոն ասէ 4, թէ տակաւին զոհէքս այսոքիկ կային առ ոմանս յազգաց, այլ ոչ ինչ զազգացն Յունաց յաւելու։

Ե. Զբնակեալ զնա ի Խոշ յԱՌԵՆ։ (էջ 169։)

Յունարէն պէտքսոյնեանական մարմին բաժք ելն և մոխ էին երբեմնեն վեց քանիսք 5, որ են ինն ևեսուն բիւրք ջրիւք հազար և ջրիւքհարիւրք գաղղիական լիբրայք։ Յաւելեալ և զբաժս կալուածոց ի վարձուրաց, գումարին քան բիւրք լիբրայք։ Յորմէ ի միա առնուլ է, զի վաճառականութիւնն ամենայնոց ընդ օտարս հասանէր ամի ամի ի հազար բիւրք լիբրայս։

1 Պորփիւրի յոգ. Ժուժկալ. էջ 600։
գիրք Բ. յոգ. 27. էջ 150։
2 Նոյն անդ, յոգ. 36. էջ 202։
3 Պաւսան, գիրք Ը. գլ. 2. էջ 17։
4 Պղատ. յոգ. օր. գիրք Զ.
հա. 2. էջ 782։
5 Ագիոն. յոգ. խորհրդ.

Զ. Զհոլիոյ զոր Բենիամին առնէր ի նիզակիւ զգեցոյ։ (էջ 171։)

Ի ՀՈՐԵՔՕՐԻՍ վասնասուն քանքարացն, զորս ամի ամի առնուին յաղագս նիզակակցելոց ընդ Նոսա ընդդէմ Պարսից, և գանձէին ի միջնաբերդն, գումարեցան ի տուզ Ժամանակի բիւր քանքարք ըստ խոկրատայ 1, կամ ինն հազար եօթն հարիւր ըստ Թուկիդիդեայ 2։ Պերիկղեայ յաւուրս տեսչութեան իւրոյ գանձեալ էր անդր ութ հազար 3, այլ երեք հազար և եօթն հարիւր քանքարս ծախեաց նա ի պայծառութիւն քաղաքին և ի պատրաստութիւն պատերազմի պատգեայ։ որով ոչինչ աւելի էր գումարն քան զվեց հազար ի սկսանել պեղոպոնէսական մարտին 4։ Դադարեաց մարտն առ Ժամանակ մի, զշենս ի բաց գնելով տիճնացւոց և սպարտացւոց։ և վասն զի յաւելեալ էին յայնժամ սակաւ հարեւց ի հազար երկերիւր կամ երեքարիւր քանքար, ընդ եօթն ամս ենթադրութեամբ մարտին գանձեցան եօթն հազար քանքարք 5։

Ի. Յաղագս սահմանի մարդոյ։ (էջ 185։)

ՊՈՐՓՈՒՐ ի Նախաշաւիղ Ճառից վարդապետութեան Նեմանամոյ սահմանեալ զմարդս՝ կենդանի բանաւոր և մահկանացու 6։ Ա՛Յլ չգտանեմք զսահմանս զայս ի գիրս Արիստոտելի, որ հասին առ մեզ. թերևս ի կորուսեալ մատեանն սահմանիցն այսպէս, կամ թէ բնաւ իսկ ուրեք չիցէ Նոքա զը սահմանս զայս ի կիր արկեալ։ Չի Նա այլ ինն սահման յաՃախագոյնս ի կիր արկանէ, որով Պլատոն և այլք յիմաստասիրաց վարէին, թուելով զյատկութիւնս ինչ մարդոյ ելրեկելիս։ Ա՛Յլ զի և Նոքա զանազանութիւն ինչ իրական գնէին ընդ բանաւոր և ընդ անբան կենդանիս 7, ընդէր էր Նոցա առ հասարակ չասահմանել զիսրեր զանազանութեան մարդոյ ի զօրութիւն բանականութենէն։ Զտարակուսանս զայս Քանոցայց լուծանել։

Կենդանի ստուգաբանի ի յոյնն, որպէս և ի հայուսն ուղղագրեանս 8. ասա կենդանի բանաւոր նշանակէ ուղղագրեալ։

1 Խոկր. յՊ. խաղաղ. հա. 1. էջ 395։
2 Թուկիդ. գիրք. Բ. գլ. 13։
3 Խոկր. անդ, էջ 424։
4 Նոյն անդ։
5 Անդրկ. յՊ. խաղաղ. էջ 24։ Պլատ. յԱրիստոտ. հա. 1. էջ 333։
6 Պորփիւր, Ներբած. ի գործս Արիստոտ. հա. 1. էջ 7։
7 Արիստոտ. յՊ. կենդան. գիրք Գ. գլ. 11. հա. 1. էջ 659։
8 Պլատ. ի Տիմ. հա. 3. էջ 77։

նաց՝ խմացութեամբ և բանիւ Հոխացեալ։ Արդ թէպէտ և սահմանս այս 'ի զէպ գայ մարդոյ, այլ ըստ գերազանցութեան պատկանի առաւուծոյ. նմին իրի պիւթագորեանք և զաստուածս ընդ մարդկան գասեցին ընդ բանաւոր կենդանիս, այսինքն է ընդ էակս՝ որ կեան և ունակ են բանի 1։ Հարկ էր ապա խնդրել այլ իմն խաիր զանազանութեան մարդոյ 'ի գերբաբուն էէն և յամենայն էից խմացականաց երկնայնոց։

Պարտ է սահմանին տալ բացայայտ զկերպարանս իրին սահմանելոյ. և վասն զի հոգեղինացն բնութիւն անծանօթ է մեզ, խմաստասէրք 'ի գաստակարգել զմարդ ընդ էակս՝ յերևելի հանգամանս նորա առաւել կառեան։ Կենդանի ասացին զմարդ, զի կենաքն ընդհատ է յանշունչ իրաց. յաւելին ապա տակաւ զբառքս երկրորդ՝ առ 'ի զանազանել զնա յօդականաց և 'ի ջրականաց, երկոքին՝ առ 'ի զանազանել 'ի չորքոտանեաց և 'ի զեռնոց այլովքն հանդերձ, և երիքորդ որպէս զի մի ընդ հաւս չփոթեսցի։ Այլ իրրև Դիոգինէս ծաղրածութեամբն, որ ամենեցուն է յայտ, եցոյց զի սահմանն այն հաւուց ևս և որ և պէտ թռչնոյ փետելոյ 'ի գէպ գայր, հնարեցան յաւելուլ 'ի սահման անդր և այլ իմն յատկութիւն 'ի ձեռոյ եղընդանցն՝ կոչելով զնա անմազ 2։ Իսկ յաւուրս Պորփիւրի, առ 'ի խորշել յանպատահից ասելոյ, սահմանէին զմարդ՝ կենդանի բանաւոր և մահկանացու 3. այլ ապա 'ի բաց թողաւ մակդիրն մահկանացու, զի ըստ խմաստիցն՝ զոր ասայ մեզ արդ բառս ենդանի՝ բնաւ ամենայն կենդանիք են մահկանացու։

ԺԲ. Վասն որ ինչ ի երանելիս երկրորդ ;ԱՌԻՆՔ ԳԱՅԻՆ անդր։ (էջ 272։)

ԴԵՄՈՍԹԵՆԷՍ 4 պատմէ զամենացուոյ ուսմունսն՝ որում անուն էր Փենիպպոս, զի զբերս անգոյ իւրոց զգարի և զգինի՝ որչափ 'ի բնագրին մերում ասացաքս՝ վաճառեաց ուսմանան գրատակշռաց զկեղմ գաբուոյ, և զմար գինեւոյ երկոտասան գրատակշռաց։ Այլ քանզի ստորև գտանեալ ասէ 5 զի եռապատիկ սովորականին էին գինքս այս՝ թէբևս առ սովոյ, ապա յաւուրս նորա սովորականք գինք գաբուոյ էին վեց գրատակշիռ առ կեղմ մի, իսկ գինեւոյն չորք առ մար։ Որով հա-

1 Արիստոտ. առ Յամբղիկ. յդ. վերուց Պիւթագ. գլ. 6. էջ 23։

2 Դիոգ. Լայերտ. գիրք Զ. յօդ. 40։

3 Պորփիւր Նեբրած. 'ի գործս Արիստոտ. հատ. 1. էջ 7։

4 Դեմոսթ. 'ի Փենիպ. էջ 1025։

5 Նոյն անդ, էջ 1027։

զոյ կեցմ գալուց բերբեր վեց հազար գրամանչիւռ, և ում հարիւր մար գինուց երկք հազար երկերիւր գրամանչիւռ. որ միահատուռ գուռնարին ինն հազար երկերիւր գրամանչիւռ, կամ ում հազար երկերիւր և ութսուն լիցոյ գաղրիական։

Լիւն Փենիպուսայ գարձեալ և գրասար բնանիարձք, որ ած էին հանապազորդ ի քաղաքն փայտ և սուսգնս ազգի [1], և անսի գայր նոնս օր բան օրէ երկոտասան գրամանչիւռ։ Ա՛յլ զի աւուրք ածին, անհարմարութիւնք օդոց, և վասնակք կարարեալ խարանեալին սակաւ զգոյն ինչ շատն, համարեցուցք երկերիւր աւուրս ի սարաւոյ անիրապան, և գասանեմք եկա անսի Փենիպուսայ ամի ամի երիս հազար ջրեաքհարիւր գրամանչիւռ, կամ երիս հազար հարիւր և վեցսուն լիցոյ գաղրիական։ Զոր ի վերայ յաւելեալ ութհազար երկերիւր և ութսուն լիցոյիցն, միահատուռ Ժողովին ասան հազար ջրեաքհարիւր քառասուն լիցոյք ի բերոյ երկրի որոյ փոքր ինչ աւելի քան զփաքսան մի և կէս էր ՅՇՍԱՍԱՍ։

ԺԳ. Զ՚ՀՐԷ ԴԷՐ--ՈՅ։ (ԿԼ 275։)

Ի ԲԱՆԻԷՆ Քանենփանի, զոր ածի ի բնագրիս, Թուի թէ նա զիշխանն մեզուաց հանարի էգ։ Բայց բնագնեաց այլ և այլ եղին յեաց կարծեք։ կիսացն էգս համարելով զանձնացն մեզուս, և արաւ զքաւս, իսկ այլոց զհանասանն կարծ ելով։ Աբրահամեալ յերկրպանչիւրացն ևս հրաժարեալ կարծեաց համարի ի մեզուանոցս եւրաքանչիւր գան մի թագաւորաց, և իւրոմի սերել նոցա։ բայց խոսասանի յանեն առ. մեռն զընանիարեա բառականս առ ի սահմանել ինչ հաւասարաս զիրացն 2։ Ա՛յլ բան զենուեմ անցն որ յեաց եղեն, գարձեալ հասասարեցան կարծիքն զոր ի բնագրիս բնծայեմ Քանենփանի։

ԺԴ. Զ՚ԷՐԻՆԷՈՅ։ (ԿԼ 283։)

Ի ԲԱՆԻԷՆ ինչ Նարեի մատենագրաց մարմ է գուշակել, զի անդաստին ի Ժամանակէն զոմմի խոսմս ծանամ էին սերբ առ. Յոյնս, և ընդ վարանդաց ի նոցանէ գասէին։ Ա՛յլ զի յոյանի ինչ ոչ ասեն, շատ համարիմ նշանակել ինդրոցաց զարդ զի քնիչաւ որոց զարամանեմ ասացեալ է։ (Յուլ. Սկալիգ. ի Թեսարս. բուսարան. գիրք Ի. գլ. 3. էջ 741։ Բոդ. առ Սասակիլ. ի գլ. 4. Նարեի գրոց, էջ 782. այլուրեքն հանդերձ։)

1 Դեմոսթ. ի Փենիպ. գիրք Ե. գլ. 21. հա. 1 էջ 852։ էջ 1023։ Ղսոյն, յոյ. ծնանդ. կենդան.

2 Աբրահամ. յոյ. կենդան. գիրք Գ. գլ. 10. էջ 1110։

ԺԵ. Զ-ԿՈՓԻՍ ԳԻՇԵՐԱՑԻՆ։ (ԿԼ 303։)

Մ ԵԿՈՒԶՔ Պղատոնի նախնիք և արդիք այլազգ ի միմեանց իմնական զանազանական հոգւոյս բնութիւն։ Կէսք համարին, զի ըստ Պղատոնի ի յաւիտենից գոյր ի համապարփակ անշարժութեան զբնութիւն իմն կենդանի, հոգի Թանձր, որ խառն ի խուռն շարժեալ յաւելիր զնիւթն՝ յորմի զանազանէին. ըստ այսմ հոգի սիրելիացս բաղկանայր յաստուածէղէն գոյութենէ, ի նիւթոյ, և ի յոգութենէն պատճառէ՝ որ յայսակիցն էր միշտ ընդ նիւթոյ։ Ի մանէ թէ ասացուածքէն բնութենն, և յոյլն իմիտէ՝ որ յաստուածոյ զանազանեալ և իջորդեալ ընդ նիւթոյ։ 1։

Իսկ այլք առ ի բառնալ ի Պղատոնէ զսոգիսա երկուց սկզբանց յաւիտենականաց գնելոյ՝ արարիչ բարւոյ և արարեալ չարի, համարին զնաւն ի խուռն շարժումն ի համապարփակ վէնն ոչ յանիւաս ինչ հոգւոյ ներգործեալ ըստ իմնաստութեան, այլ որ անանիւաստն էր ի նիւթոյն։ Որոց ընդդէմ էրանեկ ասել նորա յայտնապէս ի Փէդրայն արամնեսուսէնէ և ի գիրս օրինացն, թէ առ ամենայն ինչ շարժումն սկիզբ ունի հոգւոյ՝ որ զոյն ներգործիցէ։ այլ պատասխանեն՝ շարժումն անդ զյարմարութիւն իմնեալ և զարգասաւոր։ և քանզի ի համապարփակ անդ ունելն շարժումն խառն ի խուռն էր և անարգասաւոր, ապա ոչ իմնական ինչ ներգործէր զոյն։ Ըստ այսմ Պղատոն ինքն իւրոց բանիցն ոչ հակառակեալ գոսանի 2։ Որ տեղեկագոյն կամիցին լինել, գայցեն զայսմանէ Հառեալ բազմաց՝ ընդ որս և նշանակելոցս սուտ։ Քուռ. վերի։ ԺԼ. 4։ յօգ։ 13։ Մոշեմ. անդ։ Պրուքք։ պատմ. իմնաստ։ հտ։ 1։ էջ 685 և 704։

ԺԶ. ԺՈՄԱՆԱՅ ԱՐԼԱՆԱՑՈՅ ԴԻՈՆԻ ՀՈՍԱՓԷՍ։ (ԿԼ 313։)

ՅԱՒԵԼՈՒՍ ասասիսոր ի լուսն տեղեկութեանցն՝ զոր վերագոյն յերեսներորդ երրորդ գլուխ գրոցս յաղագս ուղղութեանցն Պղատոնի ետուս։

Ըստ աւանդելոյ Պրուտարքեայ, մինչդեռ հանդերձեր Դիոն մեկնել ի Զակինթեայ՝ ահա խառատման լուանին տագնապեցան զոքն։ Եւ յաւելու, զի էին յայնժամ ի խոր ամարայնի, և զի յերկոտասան աւուրս Հնաս Դիոն ի Ծովեղերս Սիկիլիոյ, և զի յառաջն երեքտասանեորորդն ի պատաւել զՊաքիսեայ հրամանգանաւն՝ պատասխանեաց նմա մրրիկ

1 Մոշեմ. ի Քուտվերթ, հտ։ 1։ գլ. 4։ յօգ։ 13։

2 Պրուքք։ պատմ. իմնաստ։ հտ։ 1։ էջ 688։

սատակի, զի սատեկասուն Սայլին յերան էր՝ ասէ Նոյն ինքն մատենագիրն 1։ Արդ յայս է, զի ի Ժամանակին յայնմիկի Սայլն սկսանէր երևել ի Սիկիլիա ի մէջ կոյս մերոյս սեպ. ամսեքերի. ապա ըստ Պլուտարքեան՝ Ժամանակ մեկնելոյ Դիոնի ի Զակինթեայ հանդիպի ի մէջ օգոստոսի։

Դարձեալ և Դիոդոր սիկիլեացի 2 զարշաւանն Դիոնի ածէ ի Ժամանակս իշխանութեան Ագաթոկղի, որ եկաց իշխան ի սկիզբն չորրորդ ամի հարիւրորդի յունիերորդի օղմպիադին, այս ինքն է ի 27 յունիսի 357 ամին Ն. Ք. 3։

Արդ ըստ հաշուին, զոր նշորհեաց ինձ Լատան, 357 ամսեան Ն. Ք. յունիերորդ աւուր օգոստոսն դասանի լեալ խաւարումն լուսնի երևելի ի Զակինթոս. ապա Նոյն այն է ի Պլուտարքեայ յիշատակեալն, և սակաւք իսկ են ի Ժամանակագրութեան հանդոյն ամին հաւասարք։ Պարտ հանարիմ և ոչ զայն անկիշատակ առնել, զի Բենկիկ զմիջոց խաւարման ինիերորդ աւուր օգոստոսի սահմանէ քառորդիս միով յառաջ քան զեօթներորդ ժամ երեկոյին։ Ցնս ի Ժամանակագրութեան խաւարմանց ի 42 հատոր գրոց յիշատակի բանասիրաց կանգնոյն. էջ 130։

Ի՛Ն. Զ՚Ի՛Ն յաւուրսն Դիոնոսի Ճարտարապետի։
(էջ 408։)

ԴԵՄԵԴԻՍ այր հանճարիզ, և մի ի քաջաց Ճարտարապետացն ամենեցուց, Ժամանակակից եկաց Դիոնոսի։ Պատմին Նորա պատասխանիք բազումք գիպոզք և կորովիք 4. այլ ի հանճարաւորութիւնս Նորա սակաւք են մեզ ցանկալիք։ Որպէս այն զի ամենայնիք վաղայարոյցք լինէին ընդ այսն ի հաւասիսն, և Դեմադէս զգիտն՝ որ հրաւիրէին զնոսա ի ժողովս կոչէր Ապոլոնիոս Հաւասիոս (Ռոդեցի) 5։ Արդ զի այս բանս ուրեմն այս ոչ գտանի թուեցաւ ամենեցուց, կարծելի է զի և ոչ գիտանոցդէր արիգոնն կոչել զժամացոյց արեգակնային՝ թուէր նոցա անհանոյ, որպէս Մոմ այլաբանեաց 6։

1 Պլուտ. ի Դիոն, հատ. 1. էջ 968։

2 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 413։

3 Ռօրմինի, տարեգր. սատիկ. հատ. 4. էջ 20։ Տոմուել յՊ. Շքան. էջ 719։

4 Դեմեդ. Փարիզ. յՊ. պերճանոսս. գլ. 299։

5 Ռաթեն. գիրք Ը. գլ. 21. էջ 99։

6 Գիրք Գ. առակ 2։

ԺԸ. Ի ՄԷՋ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ԵՒ ՀԱՅԵՐԻՆ ։
(ԿԷ 480 ։)

ԱՐԻՍՏՈՏԷԼ գրեթէ զնոյն կարգ ի գիրս յայս կարաւ , որ ինչ ի գիրսն զկենդանեաց ։ Դասս հասարակաբար կարգեալ խնամս , ապա ի ներքոյ ածէ զայլ և այլ կարգս տեսութեան , զբաղկացու մասուանս նոցին , զպատճառս սկզբանաւոր նոցա , և զՏնօրս հասատատութեան , այլովքն հանդերձ ։ Եւ ապա ի բնին տաւնս զայս ասէնայն , և բազդատեալ զասհմանագրութիւնս ընդ միմեանս՝ յուսցանէ որով իւրք նմանք են իրեարաց և որով անմեմանք , և՝ զամենայն տեսութիւնս իւր՝ արդեամբք իրայն հատատատ ։ Այս ի պահել զկարգ նորա՝ պարտ էր ըստ գրոց և ըստ գիտոց հատատատել զմատանան , որ ինչինին իսկ համառատութեան է . այլ իմ՝ ոչ զկիրպարանս եւեթ վարգապետութեան մատենագրին կամելով տալ , ՝ջանացայ կարի յոյժ տարժ անատարարդոյն աշխատութեամբ գնել մերձ առ միմեանս որ ինչ զարդի ազգի կարգաց տեսչութեան , և որ ինչ զատագունէն ի կարգաց անտի , յան և ցիր ի մատանինն յորինել բանս ։ Մինս ևս ինչ յորդորեաց զիս յայս , զի թէպէտ և մատեանն հասարակապետութեան ի բազում գիրս արդ բաժանեալ է , այլ նեարսուն քննասանք ոչ ի մատենագրէն զբաժանումն զայն համարին արարեալ , այլ ընդ օրինակացուցն յետոյ վերս ի վայր փոփոխեալ զկարգ գրոցն 2 ։

ԺԹ. ԹԷ ԷՒԷՐ ԽՈՒԷՐ ԸՆԴ ՅՈՐԻՆՈՏ ԲԱՓՈՒՐԻ ԵՒ ԲԱՆՈՒՐԻ ԻՍՅՆ ։ (ԿԷ 482 ։)

ԶՆՈՏ խուրբ գնէ Մեկնութիւն ընդ Թագաւոր և ընդ բանաւոր , որ ինչ Արիստոտէլ ։ Թագաւոր , ասէ , այն է՝ որ բան օրինաց վարէ զիշխանութիւն ։ իսկ բանաւոր , որ բան հանգոյս իւր վարէ զիշխանութիւն՝ գժպշի ժողովգեան , և ոչ բան օրինաց 3 ։ Դացեն ինդրոցք զայսանեն տեսութիւնս ի գիրսն Պղատոնի 4 , Արիստոտելոյ 5 , և այլոց ։

1 Արիստոտ. յզ. հատ. գիրք Դ. ԿԷ 813 ։
Դ. գլ. 4. հտ. 2. ԿԷ 366 ։ 4 Պղատ. ի քաղաքավար.
2 Փարրկի. մատենագաբ. հտ. 2. ԿԷ 276 ։
յատ. հտ. 2. ԿԷ 157 ։ 5 Արիստոտ. առ. Պատ.
3 Մեկնութ. Յիշատ. գիրք Ճառ. 48. ԿԷ 344 ։

Ի · Ի Փ ԻՆ, յօրինեալ ընդ բնաբանաց բնաքնեալց յԻՊՍԱԼԻԱ։
(ԿԼ 533։)

ԴԵՄՈՍԹԵՆԷՍ 1 վկայէ, զի ընդ ամս երկերիւր մինչ եւեթ իրեք յօրինեաց նոցա եղև փոփոխումն։ Օրէնք էին առ նոսա, զի որ զանն ուրուք հանէր՝ ակն ընդ ական պարտ էր նմա տուժել։ Արդ լսիրեալցուց ուրումն ապառնացեալ միականուց՝ հանել զակն նորա, բազում կարաւ սա, և եցոյց՝ զի ի գաղտապարտել ասօրին ի հատուցումն սահմանեալ յօրինեաց, թեթեւագոյն լինէր նորայն թշուառութիւն քան զերեսն առանց համեմատութեան · և սահմանեցաւ, զի ի գէպս անգ երկոքին ևս աչք յանցաւորին խլեսցին։

1 Դեմոսթ · ի Տիմոկր · էջ 795։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՀ
Ա. Մասիսյան անվան

Էջ.	Տող.	Վրիպակ	Ուղիղ
12	12	Ի քանամամնիկ	Ի քանամամնիկ
13	12	բանակաց մերոց	բանակաց իւրեանց
20	8	խաղացուցանեն	խաղացուցանեին
197	11	շարաբանութիւն	շարաբանութիւնն
—	15	առաքենութիւն	առաքենութիւն
230	15	արկանելի	արկանել
236	5	կապէեալ	կապեալ
237	13	ընդ բարուց	ըստ բարուց
151	25	յանցանք	յանցանքն
277	6	բաղում	բաղումք
280	12	ընդ	ըստ
292	8	ընդ համարձակ	համարձակ
306	12	արձանագրեն	արձանագրեն
323	8	ռոՀնկ	ռոՀնկին
351	14	գողացաւ	թողացաւ
362	14	Մաւսուլ	Մաւսոլ
376	15	նոցա	նորա
411	22	հարցփորձ	ի հարցփորձ
495	10	հնաղագինն	հնաղանգինն
499	5	իցէ	իցեն
421	22	քաղաքնոց	քաղաքայնոց
426	10	քաքաքացւոց	քաղաքացւոց